


ՏՈՆԱԳԻՐ

ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԼԵՒՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
75-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ





Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

FESTSCHRIFT
IN HONOR OF
LEVON TER-PETROSSIAN'S
75th ANNIVERSARY

Yerevan 2021

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ЮБИЛЕЙНЫЙ СБОРНИК
В ЧЕСТЬ 75-ЛЕТИЯ
ЛЕВОНА ТЕР-ПЕТРОСЯНА

Ереван 2021

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏՈՆԱԳԻՐ
ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ԼԵԻՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
75-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Երևան 2021

ՀՏԴ 082.2
ԳՄԴ 94
Տ 506

Տպագրվում է Մետրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վահան Տեր-Ղևոնդյան,
Էռնա Մանես Ծիրիկյան, Կարեն Մաթեոսյան,
Գեորգ Տեր-Վարդանեան, Վահե Թորոսյան, Աշոտ Սարգսյան,
Անահիտ Ավագյան, Էսթեր Պետրոսյան, Սոնա Բալոյան

Տ 506 ՏՈՆԱԳԻՐ: Գիտական ժողովածու Լեոն Տեր-Պետրոսյանի 75-ամյակի
առթիվ.- Եր.: «Մատենադարան» հրատ., 2021.- 480 էջ:

Գրքում ամփոփված են Լեոն Տեր-Պետրոսյանի 75-ամյակի առիթով եւ նրա
պատվին գրված հայերեն, անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն
հոդվածներ, որոնց հեղինակներն ամենատարբեր երկրներից են՝ Հայաստան,
ԱՄՆ, Անգլիա, Ավստրիա, Իսրայել, Իտալիա, Ծվեյցարիա, Ռուսաստան, Ֆրան-
սիա. բոլոր հեղինակները Լեոն Տեր-Պետրոսյանի հետ կապված են տասնամ-
յակների գիտական-ստեղծագործական եւ անձնական-ընկերական առնչություն-
ներով:

Հոդվածները վերաբերում են գերազանցապես միջնադարի Հայոց պատ-
մությանը, պատմագրությանը, մատենագրությանը եւ բանասիրական տարբեր
խնդիրների, նաեւ՝ հայ-ասորական գրական-ձեռագրական աղերսներին: Սկզբում
գետեղված է նաեւ հոբելյարի մանրամասն կենսամատենագիտությունը:

Գիրքը հասցեագրվում է հայկական միջնադարի մասնագետներին, ասորա-
գետներին, արեւելագետներին եւ ընդհանրապես գիտական հանրությանը:

ՀՏԴ 082.2
ԳՄԴ 94

ISBN 978-9939-9257-0-7

© Մաշտոցյան Մատենադարան, 2021

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ
TABLE OF CONTENTS

Վահան Տեր-Ղևոնդյան

Երկու խոսք7

Լեւոն Տեր-Պետրոսյանի կենսամատենագիտությունը 15

Fr. Charles Renoux

Mémoire ... Maténadaran ... 6885 38

Ժիրայր Լիպարիտեան

Ընթերցողի նշումներ՝ Լեւոն Տեր-Պետրոսեանի «Խաչակիրները եւ հայերը» գործի Բ. հատորի կապակցութեամբ 41

Ազատ Բոզոյան

Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգն ու Չաքարյանների հովանու ներքո ԺԳ դարի սկզբին տեղի ունեցած ժողովները..... 55

Չոհրաբ Գեւորգյան

Համակեցությունը, բարոյականությունը եւ առեւտուրը Կիլիկյան Հայաստանի առօրեականության դրվագներում 84

Gérard Dédéyan

Louis IX, «Saint Roi», «Le Royaume d’Arménie et le Royaume de France..... 100

Հ. Լեւոն Չէքիեան

Ընդհանրականի եւ տեղական/մասնաւորի տրամատւթիւնը հայ եկեղեցւոյ Աստուածաբանական զգայնութեան եւ ընկալման մէջ 111

Կարեն Մաթեւոսյան

ԺԳ դարի վիմագրական որոշ տվյալներն անեցիների մասին..... 129

Ժան-Պիեռ Մահե

Նշան եւ սրբապատկեր. խոհեր անձեռագործ պատկերի մասին..... 144

P. Dr. Abel H. Manoukian

Die Einflüsse der katholischen Lehre auf das Glaubensgut der Armenischen Apostolischen Kirche im Spätmittelalter (vom 14. bis zum 15. Jh.) 150

Елена Н. Мещерская

Некоторые особенности апокрифического «Апокалипсиса» в сирийском сочинении «Исход Марии» 177

Claude Mutafian

La Cilicie arménienne après l’Arménie cilicienne (1375-1909)..... 201

Ալեքսան Յակոբեան

Ե դարի հայոց քրիստոնեական առաքելությունները
Հիւսիսային Կովկաս (Մաշտոց եւ աշակերտներ) 220

Էռնա Մանեա Շիրինյան

«Չվարթնոց» անվանման շուրջ 228

Չարուհի Պողոսյան

Վարդան Արեւելցու «Հիշատակարանը» մոնոլոգների մասին եւ դրա աղբյուրները 261

Erich Renhart

Die syrische Handschrift Nr. 9 des Mesrop Maschtots Instituts: Matenadaran, Yerevan 297

Աշոտ Սարգսյան

Թագավորության եւ թագավորական իշխանության օրինակարգության Մովսես
Խորենացու ընկալումը 314

Michael E. Stone

Hidden in Crannies in Noah’s Ark 344

Theo Maarten van Lint

On Poetry, Poetics, and the Gift of a Crosier: an 11th Century Letter by Grigor
Pahlawuni Magistros to Catholicos Petros Getadarj 358

Ярослав Васильков

Мгер и Колесо судьбы в пещере Ванской скалы: параллели в мировом
фольклоре и литературах Нового времени..... 383

Abraham Terian

For the Love of the Church: Contextualizing the Scholarship of Catholicos
Garegin Hovsēp’ian 403

Գեորգ Տէր-Վարդանեան

Յակոբ Սսեցու ժամանակագրությունը եւ նրա պատմագիտական արժէքը..... 414

Bernard Outtier

Un manuscrit arménien d’œuvres attribuées à saint Ephrem le Syrien et son modèle 432

Peter Cowe

The Four Premodern Armenian Paradigms of Engagement with Natural Philosophy 446

Alessandro Orengo

Visions and Dreams among 5th-century Armenians..... 467

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՒՈՆԴՅԱՆ

*Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի տնօրեն*

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկա հատորի գաղափարը ծնվեց Մաշտոցյան Մատենադարանում, որտեղ երկար տարիներ աշխատել է հայագետ-արեւելագետ, բանասիրական գիտությունների դոկտոր եւ Հայաստանի Հանրապետության հիմնադիր նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Վերջին երեսնամյակի ընթացքում նա չի դադարեցրել գիտական ուսումնասիրությունները, պահպանել է սերտ կապը հարազատ հաստատության հետ: Նրա գիտական-հետազոտական հայտնաբերումներն ու բանաձեւումները այսօր էլ անկյունաքարային նշանակություն ունեն հայագետների, ասորագետների համար: Մատենադարանում, ինչպես իր նախկին գործընկերները, այնպես էլ երիտասարդ գիտաշխատողները, նրան ընդունում են յուրահատուկ շքերթությամբ, նաեւ՝ հիացմունքով ու ակնածանքով:

Տեր-Պետրոսյանի 75-ամյա հոբելյանը լավագույն առիթն է արժեւորելու նրա գործը թե՛ պետական-քաղաքական եւ թե՛, մանավանդ, գիտական ասպարեզում: Այսպես ծագեց Տոնագրի գաղափարը: Նման պարագաների համար Եվրոպայում գործածվում է Festschrift եզրը, որի փոխարեն կազմվեց նրա հայկական համարժեքը՝ Տոնագիր: Հատորն ընդգրկում է Հայաստանի եւ արտասահմանի առաջատար հետազոտողների, հայագետ-արեւելագետների ավելի քան երկու տասնյակ հոդվածներ, որոնք գիտական-հետազոտական կարեւոր արժեք ներկայացնելուց զատ, միտված են հարգանքի տուրք մատուցելու Լեւոն Տեր-Պետրոսյան գիտնականին եւ մտավորականին, ընդգծելու նրա բացառիկ անհատականությունը:

Լույս ընծայվող ժողովածուի մեջ զետեղված է նաեւ հեղինակի մատենագիտությունը՝ գիտական եւ քաղաքական-հրապարակախոսական գործեր, շուրջ 30 մենագրություն եւ մեծաթիվ հոդվածներ, գրախոսություններ, խմբագրած գրքեր, ինչպես նաեւ անտիպներ՝ բազմաճյուղ ու բազմաժանր մի ժառանգություն:

Նշանակալից է Լեւոն Տեր-Պետրոսյանի ներդրումը ասորագիտության, հայ-ասորական գրական-մշակութային կապերի ուսումնասիրման ասպարեզում: Բավական է նշել, որ նրա թե՛ թեկնածուական եւ թե՛ դոկտորական ատենախոսությունները վերաբերում են այդ բնագավառին եւ դրանց հրապարակա-

յին պաշտպանությունները մեծ հաջողությամբ կայացել են Սանկտ Պետերբուրգում, քաղաք, որն արդեն շուրջ երկու հարյուրամյակ համարվում է դասական արևելագիտության համաշխարհային խոշորագույն կենտրոններից մեկը:

Հեղինակի «Հայ-ասորական գրական կապերը IV–V դարերում. ասորական գրականության դերը հայ հին մատենագրության ձևավորման մեջ» դոկտորական թեզը, որը, ցավոք, առայսօր չի տպագրվել հեղինակի զբաղվածության պատճառով (2015-ին լույս է տեսել աշխատանքի ոռուերեն սեղմագիրը), առանձնակի կարեւորություն ունի վաղքրիստոնեական ժամանակաշրջանում Մերձավոր Արեւելքի ժողովուրդների քաղաքական եւ մշակութային կապերի լուսաբանման, Քրիստոնյա Արեւելքի պատմության ուսումնասիրման համար: Հետազոտության մեջ քննության է առնվում ասորերենից հայերեն թարգմանությամբ մեզ հասած մեծաքանակ եւ հարուստ գրականությունը: Հատկապես հետաքրքրական է թեզի երրորդ գլուխը, որում վեր է հանվում հայերեն թարգմանություններում ասորաբանությունների եւ ասորերենին հատուկ լեզվական կառույցների առկայությունը, ինչպես նաեւ, քննության է առնվում ասորերենի ազդեցությունը գրաբարի վրա: Վերջին խնդրին՝ Ասորաբան հայերենին է նվիրված հեղինակի մեկ այլ, անտիպ մենագրություն: Թեզում առաջ է քաշվում մի յուրօրինակ համակարգ, որի միջոցով հնարավոր է դասակարգել հայ գրականության Ոսկեդարի գրավոր հուշարձանները: Միջնադարագետները մեկ անգամ չէ, որ հետաքրքրություն են ցուցաբերել հատկապես այս աշխատության նկատմամբ՝ ընդգծելով հեղինակի վերհանած հայեցակարգերի եւ մեթոդաբանության կիրառման կարեւորությունը:

Սկսած դեռ քրիստոնեության տարածումից, հայոց գրերի գյուտից ու Սուրբ Գրքի թարգմանությունից մինչեւ փառահեղ Ոսկեդար եւ գրականության հետագա զարգացման ընթացք, հայ մշակույթը հենվել ու սնվել է երկու մեծ քաղաքակրթություններից՝ ասորական ու հունական (բյուզանդական), ընդ որում, վաղագույն շերտը հենց ասորականն է: Գրերի գյուտից անմիջապես հետո թարգմանական աննախադեպ հզոր շարժումը, հենվելով արդեն իսկ հարյուրամյա բանավոր թարգմանական ավանդույթի վրա, կարճ ժամանակում՝ մի քանի տասնամյակի ընթացքում, ոչ միայն քրիստոնեական, այլեւ ողջ համաշխարհային գիտելիքի լավագույն նմուշները փոխանցեց ու ներմուծեց հայ իրականություն՝ մեր ազգային մշակույթը բարձրացնելով այդ պահին հնարավոր ամենաբարձր մակարդակի: Անշուշտ, շատ արագ զարգացավ նաեւ ինքնուրույն գրականությունը, որը գիրկընդխառն ընթանալով թարգմանականի հետ, կերտեց նախ անկրկնելի Ոսկեդարը, ապա եւ վայրիվերումներով իր զարգացումն ապրեց մինչեւ մեր օրերը: Այս մասին ինքը հեղինակը շատ դիպուկ բնորոշում է տալիս. «պատմամշակութային տեսակետից թարգմանական եւ ինք-

նորույն երկերի զանազանումը սուկ պայմանական նշանակություն ունի, քանի որ թե՛ բովանդակությամբ, թե՛ ձեռի առումով դրանք ներկայացնում են միասնական գրական իրողության հավասարաթեք կողմերը»:

Կասկածից վեր է, որ հայ մատենագրության ու հատկապես գրական-աստվածաբանական բնույթի երկերի ուսումնասիրողն առաջին հերթին պետք է դիմի ասորերեն եւ հունարեն երկերին, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել հայերեն թարգմանական գործերի բնագրերի հետազոտությունը, համեմատական-քննական տեքստերի պատրաստումը, տարբերությունների համեմատական քննությունը, տարրնթերցումները եւ բազմաթիվ այլ բանասիրական-բնագրագիտական հարցեր: Այս բնագավառում հանգուցային դեր ունի բանասեր հայագետ-ասորագետը, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է վաղքրիստոնեական շրջանին, երբ մեծաքանակ թարգմանություններ են արվել ոչ միայն բուն ասորական երկերից, այլեւ նախապես հունարեն ստեղծված երկերի ասորական տարբերակներից:

Եթե Երվանդ Տեր-Մինասյանը (1879-1974)՝ հայ ասորագիտության նահապետը, հայտնի է որպես հայ-ասորական եկեղեցական հարաբերությունների փայլուն գիտակ, իսկ Հայկ Մելքոնյանը (1923-1983) որպես հայ-ասորական քաղաքական-տնտեսական բազմաշերտ հարաբերությունները լուսաբանող նշանավոր պատմաբան-աղբյուրագետ, ապա Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդես եկավ որպես հմուտ բանասեր, հայ-ասորական գրական-մշակութային կապերի մասնագետ՝ այդ ասպարեզում դառնալով անգերազանցելի:

Նրա «Հայ հին թարգմանական գրականություն» գիրքը նվիրված է V-XVIII դարերում ասորերենից, հունարենից, լատիներենից, վրացերենից, արաբերենից եւ այլ լեզուներից հայերեն թարգմանությունների՝ սկսած անմիջապես գրերի գյուտից: Տեր-Պետրոսյանի այս աշխատությունը փայլուն կերպով երեւան է հանում թարգմանական գրականության կարեւորագույն ասպեկտները, անդրադարձ է կատարվում թարգմանական գործի զարգացման օրինաչափություններին եւ ժամանակաշրջաններին, թարգմանիչներին եւ նրանց երկերին, ընդգծվում է հայերենով պահպանված թարգմանական հուշարձանների կարեւորությունը համաշխարհային գիտական մտքի համար:

Բացի աղբյուրագիտական փայլուն աշխատանք լինելուց, գիրքը այսօր նաեւ ուղեցույց է դարձել թարգմանական գործով զբաղվողների, թարգմանության պատմությունը եւ տեսությունները ուսումնասիրողների համար եւ որպես ձեռնարկ ընդգրկված է համալսարանական ծրագրերում:

Լեւոն Տեր-Պետրոսյանը մեծ հեղինակություն է նաեւ կիլիկիագիտության ասպարեզում: Հետազոտությունների այս ոլորտը անշուշտ սերտորեն առնչվում է ասորագիտության հետ, բայց երկու ասպարեզների միջեւ մի քանի դարի տարբերություն կա: Խոսքը IV-V դարերից XII-XIV դարերին անցումի մասին

է, որը եւս պատահական չէ ընտրված: Հայ-ասորական սերտ կապերի նոր փուլի համար մեծ դեր են խաղացել միաժամանակ ընթացող երկու երեւույթ՝ հայերի զանգվածային գաղթը Կիլիկիա, Կապադովկիա, Եփրատացիք, Արեւելյան Միջերկրականի ավազան (հիմնականում՝ Մեծ Ասորիք) եւ այստեղ նոր հայաշխարհի ձեւավորումը եւ, սրան զուգահեռ, ասորական մշակույթի նոր վերելքը XII-XIV դարերում:

Կիլիկյան Հայաստանին ուսումնասիրողը մոտեցել է ամենատարբեր տեսանկյուններից՝ աղբյուրագիտություն, քաղաքական պատմություն, պատմաքաղաքագիտական քննություն, հայ-ասորական, հայ-լատին կապեր, մատենագրական-թարգմանական-լեզվական առնչություններ: Ընդ 20 տարվա մեջ Տեր-Պետրոսյանի հրատարակած կիլիկիագիտական ժառանգությունը չի կարող շրջանցել Հայոց պատմության ու մշակույթի այդ փուլը ուսումնասիրող որեւէ մասնագետ: Հատկապես հիշատակության են արժանի «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին» մատենաշարով լույս տեսած «Անանուն Եղեսացու Ժամանակագրությունը», երկհատոր հիմնարար «Խաչակիրները եւ հայերը», ինչպես նաեւ նույն թեմայով մի շարք արժեքավոր հոդվածներ: Ասորական մշակութային նոր վերածննդի մաս կազմող երեք անգերազանցելի պատմիչներից (Անանուն Եղեսացի, Միքայել Ասորի, Բար Հեբրեոս) մեկի երկի հատվածական թարգմանությունը՝ իր գիտական ապարատով, առատ նյութ է հաղորդում Կիլիկյան Հայաստանի մասին, ընդ որում, երբեմն այդ տեղեկությունները եզակի են ու բացառիկ:

Հայագիտության մեջ նորարարական խոսք ու թարմ շունչ բերեց «Խաչակիրները եւ հայերը» աշխատությունը: Նախ, հայերի եւ խաչակիրների հարաբերությունների մասին ուսումնասիրողներն անդրադարձել էին կամ Կիլիկյան Հայաստանի պատմության ընդհանրական շարադրանքի մեջ, կամ առանձին հոդվածներով: Մինչդեռ Միջերկրականի ափերին ձեւավորված հայկական պետության համար բլուզանդական, լատին, սելջուկյան, արաբական, մոնղոլական ամենատարբեր միավորների խճանկարում արտաքին հարաբերությունները ունեին կենսական նշանակություն: Պատահական չէ, որ մեր միջնադարյան պատմության ողջ ընթացքում դիվանագիտությունը երբեք այդքան մեծ նշանակություն չի ունեցել, որքան կիլիկյան շրջանում: Ուստի, Տեր-Պետրոսյանի ուսումնասիրությունը լրացնում է հայոց թագավորության պատմության մի մեծ բաց, եւ այլ (Կիլիկիա-Բյուզանդիա, Կիլիկիա-արաբական երկրներ, Կիլիկիա-մոնղոլներ եւ այլն) հետազոտությունների հետ միասին ամբողջացնում 300-ամյա պետության բարդ հարաբերությունների ներքին ծալքերը:

Նորույթներից մեկն այն էր, որ առաջին հատորում, բացի խաչակրաց արշավանքների եւ Արեւելքում հիմնված լատին պետությունների մասին քննա-

կան ակնարկից, մեծ տեղ էր հատկացված XX դարի չորս ականավոր բյուզանդագետ-արեւելագետների ուսումնասիրություններին, որոնց մենագրություններից Կիլիկիա-խաչակիրներ հարաբերություններին վերաբերող մասերը բարձրարժեք թարգմանությամբ մատուցված էին հայ ընթերցողին:

Հարկ է նշել, որ մեր ժողովրդի հազարամյա պատմության մեջ կան փուլեր, երբ հայտնվել ենք տվյալ պահին համաշխարհային պատմության կարեւորագույն իրադարձությունների կիզակետում: Ահա այդպիսի մի շրջան է Կիլիկյան Հայաստանի պատմությունը, եւ դրանով է բացատրվում XIX -XX դարերի խոշորագույն պատմաբանների ցուցաբերած առանձնահատուկ հետաքրքրությունն այս նյութի հանդեպ:

Տեր-Պետրոսյանի կատարած բուն հետազոտական աշխատանքն ամփոփված է երկրորդ հատորում, որը նա անվանել է պատմա-քաղաքագիտական հետազոտություն: Հետազոտության առանցքը կամ ելակետը իշխանության օրինակարգության հետ կապված հարցերի ուսումնասիրումն է, ուստի եւ՝ այն վերնագրված է «Գահաժառանգության իրավունքը եւ իշխանության «լեգիտիմությունը» Կիլիկյան Հայաստանում»: Իրադարձությունների ընկալման այս «բանալիով» նորովի է բացվում ու ներկայանում Կիլիկյան հայկական պետության՝ շատ դրվագներով քաղաքական առումով այսօր էլ ուսանելի պատմությունը: Արձանագրվում է երկրի քաղաքական ընտրանու պետական մտածողությունը, իրատես քաղաքական միտքը, երբ իշխանները, թագավորները խուսանավելով, պալքարելով, տարբեր դաշինքների մեջ մտնելով, դիվանագիտական զանազան հնարքներ բանեցնելով, կարողացան բարդ աշխարհաքաղաքական շրջապատում ապահովել Մեծ Հայքից դուրս գոյացած հայկական այս պետության հարատևումը շուրջ 300 տարի: Սա մեր իրականության մեջ պատմության մասն մեթոդով հետազոտման իր տեսակի մեջ առաջին փորձն է՝ ակնկալելի, որ կիրառվի նաեւ Հայոց պատմության այլ դարաշրջանների ու փուլերի նկատմամբ:

Եթե IV-V դարերին վերաբերող գործերում Լեոն Տեր-Պետրոսյանը հմուտ աղբյուրագետ-բանասեր է, ապա XII-XIV դարերին անդրադառնալիս, դրան գումարվում են պետական գործչի իր փորձով ու զգացողությամբ հարստացած՝ պատմական քաղաքագետի ոչ պակաս խոր մասնագիտական որակները:

Մի պահ փորձում ես երեւակայել, թե որքան հարուստ կլինէր այդ ժառանգությունը՝ հատկապես միջնադարագիտական հետազոտություններով ու թարգմանություններով, եթե հոբելյարը երբեւէ «չշեղվեր» իր գիտական ուղուց: Բայց դա կնշանակեր զրկել Հայաստանը վերջին երեսնամյակին իր հավասարը չունեցող խիզախ առաջնորդից, խոհուն պետական այրից, իրապաշտ քաղաքական գործչից: Ավելին, հենց շնորհիվ Լեոն Տեր-Պետրոսյանի քաղաքական գործունեության, այսօր հիշյալ մատենագիտության մեջ հայագիտական-

ասորագիտական բանասիրական բնույթի հետազոտությունների, աղբյուրագիտական ու բնագրագիտական արժեքավոր աշխատությունների, պատմագիտական գործերի ու բարձրարժեք թարգմանությունների կողքին, ունենք նաև հարուստ քաղաքագիտական ժառանգություն՝ ամփոփված գրքերի, ժողովածուների, հարցազրույցների ու էլույթների մեջ: Այս վերջինի նշանակությունը դուրս է գալիս մեկ գործչի քաղաքական տեսակետների շարադրանքի սահմաններից, այն ունի համազգային-պատմական նշանակություն:

Բանն այն է, որ 1980-ականների վերջին, հայ իրականության մեջ, առանձին դրսևորումները չհաշված, կար երկու հիմնական քաղաքական ուղղություն՝ կոմունիստականը եւ «ազգային-ավանդականը»: Այս երկուսն արդեն այնքան երկար էին իշխում Հայաստանում եւ սփյուռքում, որ կարծես բացառում էին մի երրորդ կամ չորրորդ ուղղության ծնունդը: Բնական էր համարվում, որ մեկի թուլանալը հանգեցնելու է մյուսի ուժեղացմանը, մեկի իշխանությունից հեռանալը նշանավորելու է մյուսի անցնելը իշխանության գլուխ: Եվ ահա, 1980-ականների վերջին, երբ կոմունիստական ուղղությունը հիմնավորապես վարկաբեկված ու հեղինակագրկված էր, եւ թվում էր թե միակ ու անմրցակից ուժը «ազգային-ավանդականն» է, անսպասելիորեն ծնվեց մի նոր ուղղություն, նոր մոտեցում, նոր գաղափարախոսություն, որը պայմանականորեն կարող ենք կոչել «ազգային-իրատեսական»: Մի ուղղություն, որ 1988-1990 թվականների ընթացքում ծրագրային փաստաթղթերի, հոդվածների, հարցազրույցների ու էլույթների տեսքով ձեւավորվեց մի շարք գործիչների մասնակցությամբ: Բայց նրանց մեջ գաղափարների թարմությամբ ու հստակությամբ, կուռ շարադրանքով, գեղեցիկ ու հատու լեզվով աչքի էր ընկնում Լեւոն Տեր-Պետրոսյանը: Եթե սկզբնական շրջանում նա մի խումբ գաղափարախոսներից մեկն էր, ապա հետագայում եւ մինչեւ օրս, նա այդ ուղղության գլխավոր ներկայացուցիչն է, որ միշտ պահել է սկզբունքայնությունը, տուրք չի տվել իրավիճակային թելադրանքներին կամ պատեհապաշտ քամիներին: Ծատերի համար 1980-ականների վերջին այս նոր քաղաքական հոսանքի հաղթարշավը անսպասելի էր, ոմանց համար՝ բացարձակ անընդունելի:

Քաղաքական այս ուղեգիծը շուրջ մեկ տասնամյակ (1988-1998թթ.) տիրապետող էր հայ իրականության մեջ: Այն դրված էր Ղարաբաղյան շարժման, իսկ 1990-1998 թթ. Հայաստանի Հանրապետության գործնական քաղաքականության հիմքում: Դրա շնորհիվ է, որ հնարավոր դարձավ առանց մեծ ցնցումների հաղթահարել անցումային բարդ շրջանը, Ղարաբաղյան պատերազմում արձանագրել ուսումնական հաղթանակներ, դիվանագիտական հաջողություններ, կառուցել հայկական պետականությունը: Ըիշտ է՝ 1998-ից որպես գործնական քաղաքականության հիմք՝ «ազգային-իրատեսականը» տեղի տվեց «ազգային-ավանդականին», բայց դրանից նրա պատմական նշանակությունը

չնվազեց: Նախ, ի տարբերություն մյուս երկուսի, «ազգային-իրատեսական»ը Արեւմտյան Եվրոպայից կամ Ռուսաստանից չէր ներմուծված, այն զուտ տեղական, հայաստանյան ծնունդ էր եւ, որ ամենակարեւորն էր, ժամանակը՝ ամենաարդար դատավորը, անցած 30 տարվա ընթացքում տարբեր առիթներով ապացուցել է քաղաքական սկզբունքների այդ համակարգի արդյունավետությունը եւ գոյության իրավունքը: Բավական է հիշատակել Լեւոն Տեր-Պետրոսյանի կանխատեսումները Հայաստանի արտաքին հարաբերությունների ոլորտում՝ հայ-թուրքական եւ հատկապես Արցախյան հարցի վերաբերյալ, որոնք, ցավոք, հաշվի չառնվեցին հետագա իշխող ուժերի կողմից:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե մեթոդների կամ սկզբունքների որեւէ ընդհանրություն չի կարող լինել վաղ միջնադարի պատմամշակութային իրողությունները հետազոտող, մեզանից մեկուկես հազարամյակով հեռու երեւոյթների խորքերն ուսումնասիրող գիտնականի եւ այսօրվա քաղաքական գործչի, ժամանակակից Հայաստանի Հանրապետության նախագահի միջեւ: Իրականում այդ ընդհանրությունները ոչ միայն կան, այլեւ բախտորոշ նշանակություն ունեն:

Գաղտնիք չէ, որ փոքրաթիվ ու հին ժողովուրդներն ունեն իրենց բարդույթները, որոնց մեջ ամենատարածվածը բացառիկության ձգտումն է, որը կարծես ինքնահաստատման մի ձեւ է: Այն, ի վերջո հանգեցնում է ազգային սնապարծության՝ դուրս մղելով ճշմարիտ հայրենասիրությունը:

Լեւոն Տեր-Պետրոսյանի գործունեությունը թե՛ որպես գիտնական եւ թե՛ որպես քաղաքական-պետական գործիչ, մերժումն ու հերքումն է այդ բարդույթի: Նրա ողջ գիտական ժառանգությունը հիմնված է այն գիտակցության վրա, որ հետազոտողի հայրենասիրությունը գիտական բարեխղճությունն ու մասնագիտական արհեստավարժությունն է՝ ազնվությունն ու շիտակությունը: Հենց այս պատճառով էլ նրա ուսումնասիրությունները շատ բարձր են գնահատված աշխարհի առաջատար գիտնականների կողմից:

Նույն այդ սկզբունքներին Տեր-Պետրոսյանը հավատարիմ մնաց, երբ մտավ քաղաքական ասպարեզ, ամեն ինչից վեր դասեց իրատեսական քաղաքականությունը, երբեք տուրք չտվեց ամբոխահանությանը: Նրա ելույթներում ու քաղաքագիտական գրվածքներում դուք չեք գտնի թեկուզ մեկ նախադասություն, որ գրված լինի ականջահանո լինելու մարմաջով: Եվ այնպես, ինչպես միջազգային խստապահանջ գիտական հանրությունն ընդունեց նրան որպես հետազոտող գիտնական, նույն ձեւով ճանաչվեց եւ հարգվեց որպես քաղաքական գործիչ, հանրապետության ղեկավար ու պետական այր՝ աշխարհի խոշորագույն քաղաքական դեմքերի կողմից:

Լեւոն Տեր-Պետրոսյանը, առաջին հերթին որպես անհատականություն, վաղուց արդեն ընդունված եւ լիարժեք անդամն է մեր դարաշրջանի «մեծերի

ակումբի» եւ առանձնապէս նշանակություն չունի տվյալ պահին նա վարում է Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը, թե իր հերթական գիտական հետազոտության վրա է աշխատում:

Մաշտոցյան Մատենադարանի ողջ աշխատակազմի անունից մեկ անգամ եւս շնորհավորում եմ բազմավաստակ գիտնականին ու իմաստուն քաղաքական գործչին՝ մաղթելով Մուսա լեռան նման անասան առողջություն, Այրարատյան աշխարհի արեւշատություն եւ անշուշտ՝ բոլոր գեղեցիկ ծրագրերի իրականացում:

Տոնագրի մեջ ընդգրկված են հայագիտական հոդվածներ տարբեր լեզուներով՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, հեղինակների նախըտրած հղումների համակարգով (հայերենի դեպքում՝ նաեւ ուղղագրությամբ) և տառադարձումներով: Միաժամանակ, բոլոր հոդվածները, բացի բնագրի լեզվով ներկայացված ամփոփումից, ունեն նաև դրա հայերեն տարբերակը:

Կենսամատենագիտությանը եւ հուշագրական նյութերին հաջորդող հոդվածները ներկայացված են ըստ հեղինակների ազգանունների հայերենի այբբենական հերթականության:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արեւելագետ, բանասեր, պատմաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ծնվել է 1945 թ. հունվարի 9-ին Սիրիայի Հալեպ քաղաքում: 1946-ին՝ մանուկ հասակում, ընտանիքի հետ ներգաղթել է Հայաստան՝ հաստատվելով նախ Կիրովական, իսկ 1947-ից՝ Երեւան քաղաքում:

ՆԱԽՆԻՆԵՐԸ – Տեր-Պետրոսյան ընտանիքը սերում է Կիլիկիո կաթողիկոս Հովհաննես Հաճընցու (1705–1721 թթ.) կոնդակով 1720 թվականին Սսից Մուսա լեռ ուղարկված Պետրոս քահանայից: Վերջինիս հետնորդները, ժամանակի ընթացքում բազմանալով, ճյուղավորվել են Մուսա լեռում հայտնի երեք մեծ գերդաստանի՝ բուն Տեր-Պետրոսյաններ, Աբաջյաններ եւ Բոյաջյաններ: Հորից որդի փոխանցվող քահանաների շարքը Տեր-Պետրոսյան գերդաստանում ընդհատվել է 1850-ական թվականներին: Նրանցից մեկը Կիլիկիո տարածաշրջանում հոչակվել է Անթաքալը (Անտիոքացի) Տեր-Պետրոս մականվամբ:

Հորական պապը՝ Պետրոս Տեր-Պետրոսյանը (1870–1937), որին հաղթանդամ կազմվածքի պատճառով «Բարաքաթ (օրհնյալ)» էին անվանում, 1895 թվականին, հայտնի հեղափոխական Աղասի Թուրսարգիսյանի ազդեցությամբ, անդամագրվել է Հնչակյան կուսակցությանը, մասնակցել Զեյթունի 1896 թ. ապստամբության շրջանում Կիլիկիայի տարբեր վայրերում (Հաճըն, Մարաշ, Մուսա լեռ եւ այլն) ծագած ազատագրական շարժումներին, ինչից հետո վեց ամիս պահվել է թուրքական բանտերում: 1915 թվականին մասնակցել է Մուսա լեռան հերոսամարտին:

Մորական պապը՝ Պետրոս Ղարիբյան (մահ. 1951 թ. Իջեւանի շրջանի Խաշթառակ գյուղում), Դաշնակցական կուսակցության համակիր, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, վերադառնալով Արգենտինայից, նույնպես մասնակցել է այդ հերոսամարտին:

Հորեղբայրը՝ Լեւոն Տեր-Պետրոսյան, ուսուցիչ, 1912 թվականին սպանվել է օսմանյան բանակում:

ԸՆՏԱՆԻՔԸ – Հայրը՝ Հակոբ Տեր-Պետրոսյան (1908–1994), Մուսա լեռան հերոսամարտի ժամանակ, 7-ամյա հասակում, 11-ամյա եղբոր՝ Կարապետի հետ, ուտելիք եւ ջուր է կրել դիրքեր: Պատանեկության տարիներին եղել է Հնչակյան կուսակցության անդամ, իսկ հետագայում դարձել Սիրիա-լիբանանյան կոմունիստական կուսակցության հիմնադիրներից եւ քաղբյուրոյի մշտական անդամներից մեկը: Ծառայած լինելով ֆրանսիական բանակի՝ Սիրիայում տեղակայված ստորաբաժանումներում՝ կուսակցական շրջանակներում հայտ-

նի է եղել Սուրբա (ֆրանսերեն՝ զինվոր) մականվամբ: Բազմիցս դատվել, բանտարկվել է և քստրվել է ֆրանսիական գաղութային իշխանությունների կողմից: 1936 թվականին կամավորագրվել է Իսպանիայում մարտնչող ինտերնացիոնալ բանակին, բայց Բելջիումում ձերբակալվել է ֆրանսիական ժանդարների կողմից և քստրվել իր ծննդավայր՝ Իսկենդերունի սանջակ: Նույն թվականին, իր կուսակցական ընկերոջ՝ Ջորջ Կարապետյանի հետ, Իսկենդերունի բանտից փախցրել է Պաղեստին է անցկացրել Մերձավոր Արևելքում Կոմինտերնի հայտնի ներկայացուցիչ Նախման Լիտվինսկուն է և նրա կնոջը: 1939-ին գլխավորել է Ալեքսանդրեթի գավառը Թուրքիային հանձնելու ծրագրի դեմ ուղղված հայկական շարժումը: 1940–1941 թթ., Սիրիա-լիբանանում հաստատված Վիշիտական ռեժիմի օրոք, ղեկավարել է Հալեպ քաղաքի ընդհատակյա դիմադրական շարժումը: Հայաստան փոխադրվելուց հետո երկար տարիներ աշխատել է Երեւանի Մյասնիկյանի անվան կահույքի գործարանում՝ սկզբում որպես վարպետ-կահույքագործ, այնուհետեւ՝ Արհկոմի նախագահ և Կուսկոմիտեի քարտուղար: 1965 թվականից անցել է հանգստյան՝ ստանալով հանրապետական կարգի անհատական թոշակ:

Մայրը՝ Ազատուհի Տեր-Պետրոսյան, օրիորդական ազգանունը՝ Ղարիբյան (1915–2003), տնային տնտեսուհի, ծնվել է Մուսա լեռան հերոսամարտի օրերին, թուրքական բանակի գնդակոծությունների տակ, լեռան քարանձավներից մեկում:

Եղբայրները՝ Թելման Տեր-Պետրոսյան (1937–1997), Անդրկովկասի ամենամեծ արդյունաբերական ձեռնարկություններից մեկի՝ «Հրազդանմեքենա» արտադրական միավորման գլխավոր տնօրեն (1985–1997 թթ.), ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր (1995–1997 թթ.):

Պետրոս Տեր-Պետրոսյան (1941–2014), տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երեւանի ճարտարապետաշինարարական համալսարանի ամբիոնի վարիչ:

Կամո Տեր-Պետրոսյան (ծնվ. 1946 թ.), բժիշկ, սրտաբան, «Կարագյուզյան բարեգործական հիմնադրամի» ծրագրով Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում ստեղծված մանկական առողջապահական ցանցի կազմակերպիչ:

Քույրը՝ Իսկուհի Տեր-Պետրոսյան–Սեմիրջյան (1950–2015), թուրքագետ, մանկավարժ, տարրական դասարանների երկարամյա ուսուցիչ:

Կինը՝ Լյուդմիլա Տեր-Պետրոսյան, օրիորդական ազգանունը՝ Պլեսկովսկայա (ծնվ. 1947 թ.), գերմանագետ, հեռուստալրագրող, Լեւոնգրադի Գերցենի անվան մանկավարժական ինստիտուտի շրջանավարտ: Կնոջ հայրը՝ Ֆրանս Աբրամովիչ Պլեսկովսկի (1913–1978), Սովետական բանակի կադրային սպա, Ֆիննական և Հայրենական մեծ պատերազմների մասնակից: Կնոջ մայրը՝

Բրախա Լեյբովնա Կուրտաչ (1912–1994), բժիշկ, վերապրել է Լենինգրադի բլոկադան: Կոնչ եղբայրը՝ Ալեքսանդրը (ծնվ. 1941 թ.), մահացել է բլոկադայի ժամանակ:

Որդին՝ Դավիթ Տեր-Պետրոսյան (ծնվ. 1975 թ.), տնտեսագետ, գործարար: **Նրա կինը՝ Աննա Ավանեսյան** (ծնվ. 1984 թ.):

Թոռները՝ Լեոն (ծնվ. 1997 թ.), Հակոբ (ծնվ. 2003 թ.), Լուսիա (ծնվ. 2004 թ.), Արեգ (ծնվ. 2018 թ.) Տեր-Պետրոսյաններ:

ԿԻԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆ – 1953–1960 թթ. սովորել է Երեւանի № 43 յոթնամյա դպրոցում:

1960–1963 թթ.՝ Երեւանի № 17 միջնակարգ դպրոցում:

1963–1968 թթ.՝ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արեւելագիտության բաժնի ուսանող:

1969–1972 թթ.՝ ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Արեւելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժնամունքի ասպիրանտ՝ աշխարհագրական արեւելագետ-պատմաբաններ Ն. Վ. Պիգուլենկայայի եւ Ա. Գ. Լունդինի ղեկավարությամբ: Ասպիրանտական շրջանում նրա դասընկերներն են եղել Ի. Մ. Ստեբլին-Կամենսկին (1995–2005 թթ.՝ Սանկտ-Պետերբուրգի համալսարանի Արեւելագիտության ֆակուլտետի դեկան, հետագայում՝ Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս), Մ. Բ. Պիտորովսկին (ներկայումս՝ Սանկտ-Պետերբուրգի «Էրմիտաժի» տնօրեն, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ) եւ Ե. Ն. Մեշչերսկայան (ներկայումս՝ Սանկտ-Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր):

1972 թ. Լենինգրադի համալսարանում պաշտպանել է «Մարութա Նփրկերտցու ժողովածուն որպես պատմա-մատենագրական հուշարձան» թեկնածուական թեզը. Գիտխորհրդի նախագահ՝ լեզվաբան-իրանագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, համալսարանի Արեւելագիտության ֆակուլտետի դեկան, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ (հետագայում ակադեմիկոս) Մ. Ն. Բոգոլյուբով. ընդդիմախոսներ՝ աստրագետ-հայագետ, պատմական գիտությունների դոկտոր, հետագայում Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյան եւ երբայագետ-արամեագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Մ. Գլուսկինա:

1972–1978 թթ. աշխատել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող:

1978–1985 թթ. վարել է Մաշտոցի անվան մատենադարանի գիտնական-քարտուղարի պաշտոնը, միաժամանակ լինելով «Բանբեր Մատենադարանի»

հանդեսի խմբագրական մարմնի անդամ եւ պատասխանատու քարտուղար: 1985-ից՝ նույն հաստատության ավագ գիտաշխատող (2001-ից՝ հասարակական կարգով):

1982–1988 թթ. համատեղության կարգով «Հայ եկեղեցական մատենագրություն» առարկան է դասավանդել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանում: Նրա աշակերտների թվում են Հայոց եկեղեցու բազմաթիվ բարձրատիճան հոգեւորականներ՝ Պարգեւ, Եզրաս, Միքայել, Աբրահամ, Նաթան, Վազգեն, Սեպուհ, Ասողիկ, Նավասարդ սրբազանները եւ այլք:

1987 թ. Լեւոնգրադի համալսարանում պաշտպանել է «Հայ-ասորական գրական կապերը IV–V դարերում» դոկտորական թեզը. Գիտխորհրդի նախագահ՝ ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ (հետագայում ակադեմիկոս) Մ. Ն. Բոգոլյուբով. ընդդիմախոսներ՝ իրանագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ն. Բուդիրեւ, եբրայագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Կ. Բ. Ստարկովա, բյուզանդագետ-հայագետ, պատմական գիտությունների դոկտոր Կ. Ն. Յուզբաշյան:

Լ. Տեր-Պետրոսյանը անդամ է ԽՍՀՄ Արեւելագետների ընկերակցության (1985 թ.), Հայաստանի գրողների միության (1988 թ.), ֆրանսիական Ասիական ընկերության (1989 թ.), Վենետիկի Մխիթարյան ակադեմիայի (1991 թ.), պատվավոր դոկտոր (doctor honoris causa) Լա Վեռնի (1990 թ.), Ստրասբուրգի (1992 թ.), Սոֆիայի (1994 թ.) եւ Սորբոնի (1996 թ.) համալսարանների:

Տիրապետում է հայերենին եւ ռուսերենին, ինչպէս նաեւ գիտահետազոտական աշխատանքի համար միանգամայն բավարար մակարդակով օգտվում է ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, արաբերեն, ասորերեն, արամեերեն, հին հունարեն, լատիներեն եւ հին եբրայերեն լեզուներից:

Հեղինակ է 30-ից ավելի գրքերի, շուրջ 80 գիտական հոդվածների եւ բազմալեզու մամուլում սփռված քաղաքական բնույթի հազարավոր հրապարակումների (ճառեր, էլույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, մամլո ասուլիսներ եւ այլն):

Գիտության բնագավառում իր ուսուցիչներն է համարում Ն. Վ. Պիգուլեւկայային, Ի. Մ. Դյակոնովին, Ա. Գ. Լունդինին, Ա. Վ. Պալկովային, Լեոն Խաչիկյանին, Գագիկ Սարգսյանին, Էդվարդ Աթայանին, Հակոբ Անայանին, Ռաֆայել Իշխանյանին, Կարեն Յուզբաշյանին եւ Պողոս Խաչատրյանին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԻԹՅՈՒՆԸ – Քաղաքական ակտիվությունն սկսել է 1960-ական թվականներին ծագած ուսանողական խմորումների ժամանակ:

1965–1968 թթ. յուրաքանչյուր ապրիլի 24-ի նախորդ գիշեր, համակուրսեցիներ Երջանիկ Աբգարյանի, Անդրանիկ Ալաջաշյանի եւ Գեղամ Քյուրումյանի հետ, հայդաստական բնույթի թողուցիկներ է փակցրել Երեւանի կենտրոնի

շենքերի պատերին: Նույն տարիներին Տեր-Պետրոսյանն իր դպրոցական դասընկերոջ՝ Վրեժ Համբարձումյանի (1945-1975) միջոցով, կապեր է հաստատել Մոսկվայի հայ ուսանողների հայրենասիրական մի խմբակի հետ: Համբարձումյանն, իր այլախոհական գործունեության պատճառով, մեկ-երկու տարի անց հեռացվել է նախ Մոսկվայի, ապա՝ Երեւանի պետական համալսարանից: Հետագայում, ի հիշատակ Վրեժ Համբարձումյանի, Երեւանի No. 17 դպրոցը կոչվել է նրա անվամբ:

1966 թ. ապրիլի 24-ին Կոմիտասի պանթեոնում կայացած ցույցին մասնակցության համար, իր ընկերներ Լեւոն Անանիկյանի, Ռուբեն Սաքապետոյանի, Տիգրան Գամաղելյանի, Գեղամ Քյուրումյանի, Էդվարդ Բաղդասարյանի, Սամվել Մուրադյանի, Մարգարիտ Թախթաջյանի եւ Արմինե Փափազյանի հետ, ձերբակալվել եւ դատապարտվել է 10-օրյա կալանքի, 6 օր անցկացնելով Երեւանի բանտում, որտեղ 30-ից ավելի նրա խցակիցների թվում են եղել հետագայում հայտնի այլախոհներ դարձած Հակվազ Խաչատրյանը, Ծահեն Հարությունյանը եւ Ստեփան Զատիկյանը:

1967 թ. ապրիլի 24-ին, Երեւանի պետական համալսարանի «Հայ մշակույթի ակումբի» անդամների կազմում, առաջին չարտոնված պսակն է դրել Եղեռնի հուշարձանին:

1978–1987 թթ. անդամակցել է ազգային խնդիրներով մտահոգված մտավորականների մի ոչ ֆորմալ ընկերական ակումբի, որի մյուս անդամներն էին՝ ֆիզիկոսներ Արա Կոզմանյանը, Հայկ Մինասյանը, Արա Կեչյանցը, Սիմոն Ծահագիզյանը, Կենսաբան Կարեն Ծահինյանը, բանաստեղծ-արվեստաբան Ռուբեն Անդալադյանը, արտելագետներ Նիկոլայ Գետրոզյանը, Երջանիկ Արզարյանը եւ Ժոզեֆ Ավետիսյանը: Ակումբի քննարկումների առարկան են եղել հայոց լեզվի պահպանման, դպրոցական կրթության, Ցեղասպանության միջազգային ճանաչման, Լեռնային Ղարաբաղի ճակատագրի եւ Հայաստանի ապագայի խնդիրները: Հատկանշական է, որ այդ ժամանակ Հայաստանում, իրարից անկախ, գործում էին համախոհ մտավորականների տասնյակ այդպիսի ոչ ֆորմալ ակումբներ:

1987 թ. աշնանը կազմակերպել է Հայաստանի եւ Ղարաբաղի վերամիավորման հարցով ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին հասցեագրված պահանջագրի ստորագրահավաքը Մատենադարանի աշխատակիցների շրջանում:

1988 թ. փետրվարի 22-ին, Ազատության հրապարակի հարթակից ընթերցել է Ղարաբաղի հարցի արդարացի լուծման վերաբերյալ Մատենադարանի՝ ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին ուղղված պահանջագիր-ճամակը:

1988 թ. փետրվարի վերջին ընտրվել է Մատենադարանի «Ղարաբաղ» կոմիտեի նախագահ եւ այդ հանգամանքով մասնակցել հանրապետական «Ղարաբաղ» կոմիտեի՝ մարտի 5-ին՝ Գորողների միության դահլիճում, եւ մարտի 19-ին՝ Կինոյի տանը կայացած համագումարներին:

1988 թ. մարտին, մի խումբ ընկերներով, ստորագրահավաք է կազմակերպել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների շրջանում՝ արտահերթ ճիստ գումարելու եւ Լեւոնային Ղարաբաղի մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշմանը դրական պատասխան տալու պահանջով: Ստորագրահավաքին, որի արդյունքում հավաքվեց 110 պատգամավորի ստորագրություն, ակտիվորեն մասնակցել են՝ Սիմոն Ծահաղիզյանը, Էդվարդ Բաղդասարյանը, Հրաչ Թամրազյանը, Գալուստ Գամազյանը, Գրիգոր Պողպատյանը, Արա Կոզմանյանը, Կարեն Ծահինյանը, Մանուշակ Պետրոսյանը, Երջանիկ Աբգարյանը, Ռուբեն Անդալադյանը, Ժոզեֆ Ավետիսյանը, Աշոտ Սարգսյանը, Նիկոլայ Գետրոզյանը, Արշակ Բանուչյանը, Արշակ Ղազարյանը, Խաչիկ Ստամբուլցյանը, Սելյան Մաթեոսյանը, Արտաշես Առաքելյանը, Ադասար Հովհաննիսյանը, Սամվել Լաճիկյանը, Արտուշ Պապոյանը, Աշոտ Ղարիբյանը, Հայկ Մինասյանը, Ալեքսանդր Թամանյանը եւ այլք:

1988 թ. մարտ–մայիս ամիսներին սերտորեն համագործակցել է Հայաստանի մտավորականության ավագանու՝ Վիկտոր Համբարձումյանի, Սիլվա Կապուտիկյանի, Սոս Սարգսյանի, Սարգիս Մուրադյանի, Զորի Բալայանի, Սերո Խանգադյանի, Հրաչիկ Սիմոնյանի, Մարո Մարգարյանի, Սեդա Վերմիշեւայի հետ՝ նրանց օգնելով Ղարաբաղյան խնդրին եւ սոււմգայիթյան ջարդերին վերաբերող փաստաթղթերի պատրաստման եւ տարածման գործում:

1988 թ. մայիսին ընդգրկվել է Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի կազմում, որի մյուս անդամներն էին՝ Վազգեն Մանուկյանը, Բաբկեն Արարքցյանը, Ռաֆայել Ղազարյանը, Վանո Սիրադեղյանը, Աշոտ Մանուչարյանը, Համբարձում Գալստյանը, Ալեքսան Հակոբյանը, Դավիթ Վարդանյանը, Սամվել Գետրոզյանը եւ Սամսոն Ղազարյանը: Ելույթներով եւ ծրագրային քաղաքական վերլուծություններով հանդես է եկել տարվա ընթացքում կոմիտեի կազմակերպած բոլոր զանգվածային հանրահավաքներում, հեղինակն է կոմիտեի եւ Հայոց համագոյային շարժման անունով տարածված 100-ից ավելի թոռուցիկների, պատգամավորական պատվիրանների եւ հասարակական պահանջագրերի:

1988 թ. սեպտեմբերին «Ղարաբաղ կոմիտեն», նկատի ունենալով ձերբակալվելու հավանականությունը, պայքարն ընդհատակում շարունակելու համար, ստեղծեց մի զուգահեռ գաղտնի կոմիտե հետեւյալ կազմով՝ Երջանիկ Աբ-

գարյան, Դավիթ Ծահնագարյան, Ավետիք Իշխանյան, Արշակ Սադոյան, Ալբերտ Բաղդասարյան, որոնց հաջորդ տարվա մարտին միացան նաև Վիտյա Ալվազյանը, Սմբատ Հակոբյանը եւ Ստեփան Ղարազեբակյանը (Մարգարյան):

1988 թ. դեկտեմբերի 10-ին, չորս ընկերների՝ Վազգեն Մանուկյանի, Բաբկեն Արարքցյանի, Սասնվել Գետրոզյանի եւ Ալեքսան Հակոբյանի հետ ձերբակալվել է տխրահռչակ գեներալ Մակաշովի կողմից, Հայաստանում գտնվող Միխայիլ Գորբաչովի հրամանով: Դրան նախորդել էր Ղարաբաղի «Կոունկ» կազմակերպության անդամ Արկադի Մանուչարովի ձերբակալությունը: 1988 թ. դեկտեմբերի 10-ից մինչև 1989-ի հունվարի 9-ը ընկած ժամանակամիջոցում ձերբակալվել են Ղարաբաղ կոմիտեի մյուս անդամներ Վանո Սիրադեղյանը, Սամսոն Ղազարյանը, Ռաֆայել Ղազարյանը, Աշոտ Մանուչարյանը, Համբարձում Գալստյանը, Դավիթ Վարդանյանը, ինչպես նաև Ղարաբաղյան շարժման հիմնադիր Իգոր Մուրադյանը եւ «Գթություն» բարեգործական հիմնադրամի նախագահ Խաչիկ Ստամբուլցյանը: 1989 թ. հունվարի 9-10-ին բոլոր ձերբակալվածները տեղափոխվել են Մոսկվա եւ նախնական կալանքի տակ պահվել «Մատրոսակայա տիշինա» եւ «Բուտիրյան» բանտերում: Երեսնամյա հայտարարված Արտակարգ դրության ընթացքում պարետային ժամի խախտման մեղադրանքով մեկամսյա կալանքի են ենթարկվել նաև Ղարաբաղյան շարժման շուրջ 600 ակտիվիստներ, այդ թվում հայտնի դեմքերից՝ Երջանիկ Աբգարյանը, Վազգեն Սարգսյանը, Դավիթ Ծահնագարյանը, Արշակ Սադոյանը, Ալբերտ Բաղդասարյանը, Ծահեն Պետրոսյանը, Ավետիք Իշխանյանը, Վիտյա Ալվազյանը եւ Սմբատ Հակոբյանը:

1989 թ. մայիսի 30-ին, վեցամսյա բանտարկությունից հետո, միջազգային հանրության, ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերի եւ Հայաստանի բնակչության բողոքի հզոր ալիքի ճնշման տակ, բոլոր քաղբանտարկյալներն ազատ են արձակվել:

1989 թ. հուլիսին Լ. Տեր-Պետրոսյանը, ֆրանսիական կառավարության օժանդակությամբ, լուրջ վիրահատության է ենթարկվել եւ չորս ամիս ապաքինվել Փարիզում:

1989 թ. օգոստոսին, իր բացակայությամբ, ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1989 թ. դեկտեմբերին, հաջորդելով Վազգեն Մանուկյանին, ընտրվել է Հայոց համազգային շարժման նախագահ՝ այդ պաշտոնը վարելով մինչև 1990 թ. օգոստոսի կեսը:

1990 թ. հունվարին դարձել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության անդամ:

1990 թ. մայիսին կրկին ընտրվել է Գերագույն խորհրդի պատգամավոր:

1990 թ. օգոստոսի 4-ին ընտրվել է Գերագույն խորհրդի նախագահ՝

քվեարկությունների չորս փուլից հետո, քվեների 140–76 հարաբերակցությամբ հաղթելով կոմկուսի թեկնածու Վլադիմիր Մովսիսյանին:

1991 թ. հոկտեմբերի 16-ին ձայների գերակշիռ մեծամասնությամբ (83,4%) ընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահ:

1991–1995 թթ., Բաբկեն Արարքցյանի հետ, գլխավորել է Գերագույն խորհրդի Սահմանադրական հանձնաժողովը, որի մշակած Սահմանադրության նախագիծը, Գերագույն խորհրդի հավանությանն արժանանալուց հետո, 1995 թ. հուլիսի 5-ին ընդունվել է համաժողովրդական հանրաքվեի միջոցով:

1996 թ. սեպտեմբերի 22-ի նախագահական վիճահարույց, բայց միջազգային դիտորդական առաքելությունների կողմից օրինական ճանաչված ընտրությունների արդյունքում, քվեների 51. 75%-ով վերընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնում:

1996 թ. դեկտեմբերի 3-ին, Լիսաբոնում գումարված ԵԱՀԿ գազաթնաժողովի ընթացքում, վետո է դրել Լեոնային Ղարաբաղի կարգավիճակը կանխորոշող բանաձեռի վրա:

1998 թ. փետրվարի 3-ին, ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանի, Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի եւ Անվտանգության ու ներքին գործերի նախարար Սերժ Սարգսյանի հետ ունեցած սկզբունքային տարաձայնությունների պատճառով եւ երկիրը ներքաղաքական ցնցումներից զերծ պահելու նկատառումով, հրաժարվել է ՀՀ նախագահի պաշտոնից: Նրա հետ մեկտեղ, նույն պատճառներով, իրենց պաշտոններից կամավոր կերպով հրաժարվեցին նաեւ հանրապետության բազմաթիվ այլ ղեկավարներ եւ պատասխանատու աշխատողներ. Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, փոխնախագահներ Արա Սահակյանը եւ Կարապետ Ռուբինյանը, խորհրդարանական մշտական հանձնաժողովների նախագահներ Սամվել Գետրոջյանը, Վիգեն Խաչատրյանը եւ Տեր-Հուսիկ Լազարյանը, Արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Արզումանյանը, Տարածքային կառավարման նախարար Գալուստ Գամազյանը, Երեւանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանը, Կենտրոնական բանկի նախագահ Բագրատ Ասատրյանը, Արմավիրի մարզպետ Սեդրակ Հովհաննիսյանը, «Հայաստան» հիմնադրամի տնօրեն Մանուշակ Պետրոսյանը, Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Վահան Փափազյանը, Հանրապետության նախագահի խորհրդականներ Վահագն Խաչատրյանը, Նիկոլ Ծաֆալդյանը, Կարեն Ծաֆինյանը, Նախագահի աշխատակազմի ղեկավար Ավետիս Ավագյանը, մամլո քարտուղար Լեւոն Զուրաբյանը, կադրերի բաժնի վարիչ Ժողեֆ Ավետիսյանը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար Աշոտ Անտինյանը, «Ռեսպուբլիկա Արմենիա» պաշտոնաթերթի խմբագիր Արմեն Խանբաբյանը, Երեւանի քաղաքապետարանի բարձրաստիճան աշխատակիցներ Սամսոն Ղազարյանը եւ Վարդան Հարությունյանը:

1998–2007 թվականներին զբաղվել է գիտական աշխատանքով եւ հրատարակել մի քանի ծավալուն գրքեր, այդ թվում՝ «Խաչակիրները եւ հայերը» երկհատորյակը:

2007 թ. աշնանը մի շարք քաղաքական ուժերի եւ հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրվել է ՀՀ նախագահի թեկնածու:

2008 թ. փետրվարի 19-ին կայացած ընտրություններում պաշտոնական տվյալներով ստացել է 21. 51%, իսկ նրա հիմնական մրցակից Սերժ Սարգսյանը՝ 52. 82% ձայն: Հայաստանում ԱՄՆ դեսպանատան տվյալներով, սակայն, Տեր-Պետրոսյանն իրականում ստացել է 30–35% ձայն, ինչը նշանակում է, որ պետք է նշանակվեր ընտրությունների երկրորդ փուլ, որում, նույն աղբյուրի համաձայն, Տեր-Պետրոսյանը հաստատաբար հաղթանակ կտաներ (Wikileaks 08YEREVAN204. 10. 03. 2008):

2008 թ. մարտի 1-ի լուսաբացին, համաժողովրդական բողոքի տասնօրյա խաղաղ, շարունակական հանրահավաքներն ու նստացույցը իշխանությունների կողմից բռնի ուժով ցրելուց հետո, Տեր-Պետրոսյանը ապօրինի կերպով ենթարկվել է մոտ մեկամյա փաստացի տնային կալանքի, ինչն արձանագրված է միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձեւերում:

2008 թ. մարտի 1-ի երեկոյան ոստիկանությունը, վերին իշխանությունների հրահանգով, հրազեն է կիրառել Սյանգիկյանի հրապարակի հարակից տարածքում առաջացած տարերային ցույցի մասնակիցների դեմ, ինչի հետեւանքով զոհվել է տասը եւ վիրավորվել մի քանի տասնյակ մարդ: Դրանից հետո, Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով, ապօրինաբար, Արտակարգ դրություն է հայտարարվել Երեւան քաղաքում, կալանավորվել են Տեր-Պետրոսյանի հարյուրավոր աջակիցներ, որոնցից 90-ը դատապարտվել են տարբեր ժամկետների բանտարկության:

2008 թ. մայիս–հունիսին, հակառակ այդ սանձարձակ քաղաքական հաշվեհարդարին, նրա գլխավորած շարժումը, նախկին շարքերի եւ ասպարեզ իջած նոր ուժերի շնորհիվ, լիովին վերականգնվել է եւ աստիճանաբար լայն թափ հավաքել:

2008 թ. օգոստոսի 1-ին նրա նախաձեռնությամբ հիմնադրվել է 18 քաղաքական կուսակցություններ եւ հասարակական կազմակերպություններ ընդգրկող «Հայ Ազգային Կոնգրես» դաշինքը, որի հռչակագիրը հրապարակավ ստորագրվել է նույն օրը, Մատենադարանի հրապարակում կայացած բազմամարդ հանրահավաքում:

2008–2011 թթ. «Հայ Ազգային Կոնգրես» դաշինքի կազմակերպած բողոքի զանգվածային ցույցերի, պիկետների, հանրահավաքների, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների ճնշման արդյունքում, բոլոր քաղաքական բանտարկյալներն ազատ են արձակվել:

2012 թ. մայիսի 6-ի Ազգային ժողովի ընտրություններում, գլխավորելով «Հայ Ազգային Կոնգրես» դաշինքի ցուցակը, Տեր-Պետրոսյանն ընտրվել է պատգամավոր, բայց հրաժարվել է իր մանդատից:

2013 թ. ապրիլի 13-ին ընտրվել է «Հայոց համազգային շարժման» իրավահաջորդը հանդիսացող «Հայ Ազգային Կոնգրես» կուսակցության նախագահ:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ – Բանակում չի ծառայել: Ավարտելով Երեւանի պետական համալսարանի ռազմագիտության ամբիոնի քառամյա դասընթացները՝ ստացել է ռազմական թարգմանչի մասնագիտացում: Հետագայում՝ Լեւոնյանը, Երեւանում, Կիրովականում եւ Կրասնոդարում մասնակցելով պահեստազորի չորս հավաքների, արժանացել է դեսանտային զորքերի ավագ-լեյտենանտի կոչման:

ԱՅԼ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐ – Պատանեկության տարիներին խաղացել է Հայաստանի ժողովրդական դերասաններ Պերմ Գետրոգյանի, Արշավիր Ղազարյանի եւ վաստակավոր դերասան Պարզանուշ Պարոնյանի ղեկավարած սիրողական թատրոններում: Ուսանողական շրջանում զբաղվել է սուսերամարտով (մարզիչ՝ Լեւոն Ստեփանյան) եւ շախմատով: Երկու սպորտաձեռից էլ լրացրել է առաջին կարգային նորման: Ընդգրկվել է Երեւանի պետական համալսարանի սուսերամարտի հավաքականի կազմում: Վերջին 15 տարիներին նրա սիրելի զբաղմունքն այգեգործությունն է:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵԻՆԵՐ – Ոչ մի պետական պարգևի չի արժանացել, որեւէ շքանշան կամ մեդալ չի ստացել:

ԻՐ ՄՍՍԻՆ. - Jean Gueyras, «Le Monde», 22. 10. 1988. — Սարգսյան Աշոտ, «Երեկոյան Երեւան» օրաթերթ, 24. 08. 1989 թ.: — Sophie Shihab, «Le Monde», 05. 08. 1990. — Bernard Cohen, «Le Monde», 06. 08. 1990. — Валерий Айдинян, Виген Саркисян, еженедельник «Союз», Москва, № 37, сентябрь 1990. — Ulrich Schulze, «Frankfurter Allgemeine Zeitung», 14. 09. 1990. — Гевоорк Мартиросян, «Огонек», № 49, декабрь 1990. — Francis X. Clines, «The New York Times», 13. 01. 1991. — Francis X. Clines, «The New York Times», 15. 04. 1991. — Meg Bortin, «International Herald Tribune», 25–26. 05. 1991. — Rouben Shugarian, «Armenian International Magazine», Aug. /Sept., 1991. — John Thor-Dahlburg, «Los Angeles Times», 03. 09. 1991. — Гагик Карапетян, «Столица», № 21(27), Москва, 1991. — Виген Саркисян, еженедельник «Союз», Москва, № 44, октябрь 1991. — Daniel Sneider, «The Christian Science Monitor», 24. 10. 1991. — Лиана Минасян, «Собрание Независимой газеты», № 1 (13), 1992. — Кто есть кто в России и в Ближнем Зарубежье: Справочник, Москва, 1993, с. 639–640. — Виталий Портников, «Независимая газета», 28. 01. 1994. — Annika Savill, «The Independent», 11. 02. 1994. — A Tribute to Honor Levon Ter-

Petrossian, Washington, 1995, 35 p. — Դավթյան Վարդգես, Առասպելի եւ իրականի սահմանագծին. Լեւոն Տեր-Պետրոսյան՝ քաղաքացին եւ քաղաքագետը, Երեւան, «Նաիրի», 1996, 166 էջ: - Բաղդասարյան Արթուր, Լեւոն Տեր-Պետրոսյան՝ դիմանկարի փորձ, Երեւան, 1996, 232 էջ: - «Պայքար» ամսագիր. Տեր-Պետրոսյանին նվիրված բացառիկ համար, Երեւան, 1996, № 7–8, 80 էջ: — Виктор Топоров, «Независимая газета», 28. 02. 1998. — Gerard J. Libaridian, *The Challenge of Statehood: Armenian Political Thinking Since Independence*, Watertown, Massachusetts, 1999, 162p. (հայերեն հրատարակությունը՝ Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Երեւան, Նաիրի, 1999, 204 էջ) — В. П. Ступишин, *Моя миссия в Армению (1992–1994)*. Воспоминания первого посла России, Москва, 2001, с. 26–30. — Клавдия Столбова, «Евразия сегодня», Москва, № 9, октябрь 2002. — «Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 4, Երեւան, 2003, էջ 734–735: — Васильков Я. В., Сорокина М. Ю., *Люди и судьбы: Библиографический словарь востоковедов – жертв политического террора в советский период (1917–1991)*, Санкт-Петербург, 2003. — «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988–1994)» հանրագիտարան, Երեւան, 2004, էջ 630–631: — Fredo Arias King, *Transiciones: La Experiencia de Europa del Este*, Buenos Aires, 2005, p. 170–172, 362–363. — Սարգսյան Աշոտ, «Լեւոն Տեր-Պետրոսյան, Ընտրանի», Երեւան, 2006, էջ 665–709: — Сергей Маркедонов, *Politicon. ru*, 05. 12. 2007. — Armine Ishkanian, *pendemocracy. net*, 04. 03. 2008. — Սարգսյան Աշոտ, «Լեւոն Տեր-Պետրոսյան, Վերադարձ», Երեւան, 2009, էջ 5–15: - Սարգսյան Աշոտ, «Լեւոն Տեր-Պետրոսյան, Հայ-թուրքական հարաբերություններ», Երեւան, 2009, էջ 5–11: — Давид Петросян, «Ноев Ковчег», Москва, № 2–3, февраль 2015. — Սարգսյան Աշոտ, Ավագյան Ավետիս, Լեւոն Տեր-Պետրոսյանի 70-ամյա հոբելյանը, «Պատմա-բանասիրական հանդես», 2015, № 1, էջ 246–283: — Taline Papazian, *L’Arménie à l’épreuve du feu. Forger l’État à travers la guerre*, Éditions Karthala, Paris, 2016, p. 282–284. — Արցախյան հիմնահարց. Արձագանքներ Լեւոն Տեր-Պետրոսյանի 2016 թ. դեկտեմբերի 17-ի ելույթի վերաբերյալ, Երեւան, Անտարես, 2017, 344 էջ: — Левон Тер-Петросян в российской прессе, составитель Давид Петросян, Москва, Фонд Либеральная Миссия, 2018, 408 с. — Arman Grigoryan, «Nationalities Papers», Vol. 46, No 5 (October, 2018), pp. 844–860. — Arsen Gasparyan (2019): *Understanding the Nagorno-Karabakh conflict: domestic politics and Twenty-Five years of Fruitless negotiations 1994–2018*, *Caucasus Survey*, doi. org/10. 1080/23761199. 2019. 1674114. — Գիտնականը եւ նախագահը. Լեւոն Տեր-Պետրոսյանի 75-ամյակի առթիվ, Երեւան, Անտարես, 2019, 632 էջ: Տե՛ս նաեւ levonpresident.am, anc.am, wikipedia.org կայքերը եւ այլն:

ԼԵԻՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐՔԵՐ

1. Արրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելիցը» (բնագրագիտական հետազոտություն), Երևան, 1976, 204 էջ:

[Գրախոսություններ], Հ. Մելքոնյան, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 5, էջ 109–110, Michel van Esbroeck. Abraham le Confesseur (Ve s.) traducteur des passions des martyrs perses, à propos d'un livre récent. – «Analecta Bollandiana», t. 95, Bruxelles, 1977, pp. 169–179.

2. Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն. թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ, «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին 12. Ասորական աղբյուրներ Բ», Երևան, 1982, 266 էջ:

[Գրախոսություններ], Հ. Մելքոնյան, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, № 6, էջ 96–98, G. Dédéyan. «Revue des Études Arméniennes», N. S., t. XVII, Paris, 1983, pp. 658–662.

3. Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, 1984, 60 էջ:

[Գրախոսություն, Կարեն Յուզբաշյան, «Հայրենիքի ձայն», 23. 10. 1985 թ.:

4. Древнеармянская переводная литература. Ереван, 1984, 52 с.

5. La littérature arménienne ancienne de traduction, trad. franç. par Aïda Tcharkhtchyan, Erevan, 1984, 48 p.

6. Textes Arméniens relatifs à S. Éphrem, édités par Lévon Ter-Pétrossian, «Corpus Scriptorum Christianorum Orientalium», vol. 473: Scriptores Armeniaci, tomus 15, Lovanii, in Aedibus E. Peeters, 1985, XX+ 123 p.

7. Textes Arméniens relatifs à S. Éphrem, trad. franç. par Bernard Outtier, «Corpus Scriptorum Christianorum Orientalium», vol. 474: Scriptores Armeniaci, tomus 16, Lovanii, in Aedibus E. Peeters, 1985.

8. Ասորիների դերը Հայկական Կիլիկիո մշակութային կյանքում ԺԲ–ԺԳ դարերում, Հայագիտական մատենաշար «Բազմավեպ», թիվ 28, Վենետիկ – Ս. Ղազար, 1989, 89 էջ (ֆրանսերեն ամփոփում էջ 81–86):

[Գրախոսություն, Yildiz Devenci Bozkus, «Akademik bakiş dergisi», Sayı: 39 Kasım – Aralık 2013, s. 1–14.

9. Ancient Armenian Translations («Հայ հին թարգմանական գրականություն» գրքի անգլերեն եւ արեւմտահայերեն թարգմանությունները. անգլերենի

թարգմանիչ՝ Գրիգոր վրդ. Մագուստյան, արեւմտահայերենի թարգմանիչ՝ Նուպար Կուպեյան), St. Vartan Press, New York City, 1992, 112 p.

[Գրախոսություն]. Haig Der-Houssikian. «International Journal of Middle East Studies», vol. 26, No 3, 1994, pp. 546–547.

10. Դասեր հայ եկեղեցական մատենագրությունից. Ե. դար (Վարդապետություն սրբոյն Գրիգորի, Յանախապատում ճառք, Հովհան Մանդակունուն վերագրվող ճառերը, Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի»), հրատարակիչ Եզնիկ Արքեպիսկոպոս Պետրոսյան, Սոֆի, 1993, 80 էջ:

11. Դավթի Սաղմոսների գիրքը. թարգմանություն գրաբարից, «Աստվածաշունչ մատյան Հին եւ Նոր Կտակարանների. արեւելահայերեն նոր թարգմանություն», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 735–832:

12. The Armenian-Syriac cultural relations (Արրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելիցը» հետազոտության արաբերեն թարգմանությունը), translated by Boghos Sarajian, Sidawi Printing House, Damascus – Syria, 1997, 253 p.

13. Խաչակիրները եւ հայերը, հ. Ա. Ուսումնասիրություն եւ թարգմանություններ, «Հայկական մատենաշար Գալուստ Կյուպենկյան հիմնարկության», Երեւան, 2005, 552 էջ:

[Գրախոսություններ]. Թորոս Թորանյան. «Արարատ» շաբաթաթերթ, Բեյրութ, № 23–29, 12. 2005 թ., Արման Կարապետյան, «Հայկական ժամանակ», 22. 04. 2006 թ., Ազատ Բոզոյան, «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 04. 06. 2006 թ., Ազատ Բոզոյան, ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդես», 2006, № 1, էջ 309–313, Գ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, № 3, էջ 245–248:

14. Խաչակիրները եւ հայերը, հ. Բ. Պատմա-քաղաքագիտական հետազոտություն – Գահաժառանգության իրավունքը եւ իշխանության «վեգիտիմությունը» Կիլիկյան Հայաստանում, «Հայկական մատենաշար Գալուստ Կյուպենկյան հիմնարկության», Երեւան, 2007, 672 էջ:

[Գրախոսություններ], Ազատ Բոզոյան. ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդես», 2007, № 3, էջ 220–230, Միքայել Հայրապետյան, «Հայկական ժամանակ», 30. 08. 2007 թ.:

15. Ancient Armenian Translations, translated from Armenian by professor of Hokkaido University Toda Satoshi, Tokyo, 2013, 25 p. («Հայ հին թարգմանական գրականություն» գրքի հայերենից կատարված ճապոներեն թարգմանությունը):

16. Сиро-армянские литературные связи в IV–V вв. – Материалы защиты докторской диссертации, составитель Аветис Авакян, Санкт-Петербург — Ереван, 2015.

17. Խաչակիրները եւ հայերը, հ. Ա., 2-րդ հրատարակություն, Երևան, Անտարես, 2015, 551 էջ:

18. XII–XIII. Yüzyilda Kilikia Ermenilerin Rolü, çeviri: Yildiz Devenci Bozkus – Vartanuş Çerme, Istanbul, 2018 («Ասորիների դերը Հայկական Կիլիկիո մշակութային կյանքում ԺԲ–ԺԳ դարերում» գրքի թուրքերեն թարգմանությունը): [Գրախոսություն], Sevan Degirmenciyan, «Agos», Istanbul, Ocak, 2019, s. 14–15.

19. Ազաթանգեղազիտական պրպտումներ, Երևան, Անտարես, 2019, 230 էջ:

ՀՈԳՎԱԾՆԵՐ

20. Արրահամ Խոստովանողը եւ իր գրական ժառանգությունը, «Էջմիածին», 1971, № 3, էջ 56–63:

21. Место жития Милеса в сборнике Маруты Майферкатского. – «VII годичная научная сессия Ленинградского отделения Института востоковедения Академии наук СССР (краткие сообщения)». М. –Л., 1971, с. 38–40.

22. Житие Милеса и его переводы. – «Вестник общественных наук» АН АрмССР, 1971, № 10, с. 45–53.

23. Сборник Маруты Майферкатского как историко-литературный памятник (проблемы источниковедения), Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук. Л., 1972.

24. Два сирийских агиографических памятника, известных по армянскому переводу (мартирий Йаздандухт и мартирий Бардишо), «Палестинский сборник», вып. 25 (88). Л., 1974, с. 144–151.

25. Միջին հայերենի հնչյունաբանությունը ըստ ասորական աղբյուրների, ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 3, էջ 139–154:

26. Սաղմոսների հայերեն թարգմանությունը եւ նրա նախօրինակը, «Էջմիածին», 1975, № 1, էջ 41–51, № 4, էջ 37–45, № 6, էջ 58–64, № 9, էջ 49–57, 1976, № 8/9, էջ 22–24:

27. О значении предисловия к сборнику Маруты Майферкатского, «Древний Восток», № 2. Ереван, 1976, с. 238–250, резюме на английском, с. 310.

28. Ներսես Շնորհալու «Ողբ Եղեւիոյ»-ն եւ ժամանակի ասորական գրականությունը, «Ներսես Շնորհալի. Հոդվածների ժողովածու», Երևան, 1977, էջ 201–211:

29. О значении древнеармянских переводов сочинений Ефрема Сирина, «Конференция по истории средневековой письменности и книги. Тезисы докладов». Ереван, 1977, с. 93–94.

30. К вопросу о датировке «Истории Тарона» (по поводу книги К. В. Айвазяна), «Вестник Ереванского университета», 1977, № 3, с. 143–159. Резюме на французском — Patrick Donabédian. «Revue des Études Arméniennes», N. S. 14, Paris, 1980, pp. 481–482.

31. Характерные черты начального периода армяно-сирийских литературных отношений. «Тезисы докладов III всесоюзной конференции семитологов, посвященной памяти акад. Г. В. Церетели». Тбилиси, 1977, с. 98–99.

32. Կցուրդք Ս. Եփրեմի Խորին Ասորւոյ (քննադրական ճշգրտումներ), «Հանդես Ամսօրյա», № 92, Վիեննա, 1978, էջ 15–48:

33. «История Тарона» в свете «критики» К. В. Айвазяна, «Литературная Армения», 1978, № 2, с. 102–108. Резюме на французском — Patrick Donabédian. «Revue des Études Arméniennes», N. S. 14, Paris, 1980, pp. 481–482.

34. Յակոբայ Սրճեցւոյ «Լարք սրբոյն Դանիելի Գալաշացւոյ», «Էջմիածին», 1979, № 3, էջ 22–40:

35. L'attribution du recueil des passions des martyrs perses à Maroutha de Maupherqat, «Analecta Bollandiana», t. 97, Bruxelles, 1979, pp. 129–130.

36. Հայերը միջնադարյան Մծբինում եւ Մեծ Հայքի հարավային նահանգներում, ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 3, էջ 80–92:

37. Հայ-ասորական հարաբերությունների մեծագույն հետազոտողը [Երվանդ Տեր-Մինասյանի (1879–1974) ծննդյան 100-ամյակի առթիվ], «Էջմիածին», 1980, № 2–3, էջ 64–69:

38. Մաշտոցյան ավանդները եւ հայոց առաքելությունը Հոնաց աշխարհում, ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 1, էջ 107–119:

39. Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի հայերեն թարգմանության նախօրինակի հարցի շուրջը, «Էջմիածին», 1981, № 11–12, էջ 42–48:

40. Փորձ հայ հին եւ միջնադարյան թարգմանական գրականության պարբերացման, «Էջմիածին», 1982, № 4, էջ 45–52:

41. Եւսեբիոս Եմեսացու «Ութամատյանի մեկնությունը» եւ թարգմանության տեսության հարցերը V դարի հայ մատենագրության մեջ, ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 4, էջ 56–68:

42. Լրջմիտ պատմաբանը եւ հմայիչ մարդը՝ Հայկ Մելքոնյան, «Էջմիածին», 1983, № 1, էջ 57–60:

43. Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության նախօրինակը, ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 2–3, էջ 264–278:

44. Սուրբ Գրիգորի վարդապետության արձագանքը (°) խաչքարային արվեստի խորհրդապաշտության մեջ, «Էջմիածին», 1984, № 4, էջ 47–51:

45. Դանիելի մարգարեության Թ գլխի ասորերենից կատարված դասական հայերեն թարգմանությունը, «Բանբեր Մատենադարանի», № 14, Երևան, 1984, էջ 187–194:

46. La plus ancienne traduction arménienne des Chroniques: Étude préliminaire, «Revue des Études Arméniennes», N. S. 18, Paris, 1984, pp. 215–225.

47. «Հայ հնագույն թարգմանական հուշարձաններ» մատենաշարի ներածություն. «Գիրք Ծննդոց», քննական բնագիր, աշխատասիրությամբ Ա. Ս. Չեյթունյանի, Երևան, 1985, էջ 5–78:

[Գրախոսություն], Jean-Pierre Mahé, «Revue des Études Arméniennes», N. S. 20, Paris, 1986–1987, pp. 593–594.

48. «Գրիգոր Լուսավորչի վարդապետության» ասորական աղբյուրները, «Բանբեր Մատենադարանի», № 15, Երևան, 1986, էջ 95–109:

49. Сиро-армянские литературные связи в IV–V вв. (Роль сирийской культуры в формировании древнеармянской словесности), Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук. Л., 1986, 34 с. [Գրախոսություն], Աշոտ Սարգսյան, iLur. am, 08. 09. 2015 թ.:

50. Греческие и сирийские литературные памятники, сохранившиеся в древних армянских переводах. В кн.: Армянская и русская средневековые литературы. Ереван, 1986, с. 57–75.

51. К методологии изучения классических армянских переводов с сирийского, «Тезисы докладов Международной конференции по средневековой армянской литературе». Ереван, 1986, с. 202–203.

52. Ասորիների դերը Հայկական Կիլիկիո մշակութային կյանքում ԺԲ–ԺԳ դարերում, «Բազմավեպ», Վենետիկ, 1987, էջ 122–161:

53. Սուրբ Հերակլիդիոս Կիպրացու վարքի հայերեն թարգմանությունը, «Էջմիածին», 1987, № 9–10, էջ 102–104:

54. Ագաթանգեղոսի ասորական խմբագրությունը, «Էջմիածին», 1987, № 11–12, էջ 83–89, 1988, № 5–6, էջ 44–54, 1989, № 4–6, էջ 90–99:

55. Ասորական աղբյուրները ԺԲ–ԺԴ դարերի հայ-ասորական հարաբերությունների մասին, «Բազմավեպ», Վենետիկ, 1988, էջ 112–154 (էջ 149–154, ֆրանսերեն ամփոփում):

56. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյա հորեյանի առթիվ, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 5 հոկտեմբերի 1991 թ., վերահրատարակված՝ Լեւոն Տեր-Պետրոսյան. Ընտրանի, Երևան, 2006, էջ 235–239:

57. Լեւոն Խաչիկյանի «Եղիշեի Արարածոց մեկնությունը» գրքի առաջաբանը, Երևան, 1992, էջ 7–18:

58. Préface du livre «Claude Mutafian, Le royaume arménien de Cilicie. XIIe–XIVe siècle», Paris, 1993, p. 8–11.

59. Եփրեմ Ասորու «Հորի մեկնությունը» Եզնիկ Կողբացու աղբյուրներից, «Բանբեր Մատենադարանի», № 16, Երեւան, 1994, էջ 7–15:

60. «Հայ հնագույն թարգմանությունների մատենաշարը», «Պայքար» ամսագիր, Երեւան, 1996, № 7–8, էջ 6–21. Արտատպված «Հայ հնագույն թարգմանական հուշարձաններ» մատենաշարի՝ Լ. Տեր-Պետրոսյանի հեղինակած ներածությունից. «Գիրք Ծննդոց», քննական բնագիր, աշխատասիրությամբ Ա. Ս. Չեյթունյանի, Երեւան, 1985, էջ 29–78:

61. Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմամշակութային արժեքը եւ գիտական նշանակությունը, «Աստվածաշնչական Հայաստան. միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու», Երեւան, 2005, էջ 454–460: Արտատպված «Հայ հնագույն թարգմանական հուշարձաններ» մատենաշարի՝ Լ. Տեր-Պետրոսյանի հեղինակած ներածությունից. «Գիրք Ծննդոց», քննական բնագիր, աշխատասիրությամբ Ա. Ս. Չեյթունյանի, Երեւան, 1985, էջ 29–40:

62. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 50-ամյա հոբելյանի առթիվ, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 26 մայիսի 1994, վերահրատարակված՝ Լեւոն Տեր-Պետրոսյան. Ընտրանի, 2006, էջ 411–416:

63. Երեւանի պետական համալսարանի 75-ամյա հոբելյանի առթիվ, «Հայաստանի Հանրապետություն», 12 հոկտեմբերի 1994, վերահրատարակված՝ Լեւոն Տեր-Պետրոսյան. Ընտրանի, 2006, էջ 439–443:

64. Առաջաբան Պողոս Խաչատրյանի «Հայ հին գրականութեան մատենագիտութիւն» գրքի, Երեւան, 2016, էջ VII–IX:

65. Autour de la question de l'archétype arménien du Résumé syriaque de l'Agathange (տպագրության ընթացքի մեջ):

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

66. Памятники армянской агиографии, вып. I, перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян. Ереван, 1973, 328 с., «Палестинский сборник», вып. 25 (88). Л., 1974, с. 183–185.

67. Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, № 8. Ասորական աղբյուրներ – Ա, թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, Երեւան 1976, 478 էջ (Иноязычные источники об Армении и армянах, т. 8. Сирийские источники, вып. 1, перевод с оригинала, предисловие и примечания Г. Г. Мелконяна). Ереван, 1976, 478 с., «Византийский временник», т. 39. М., 1978, с. 259–260.

68. GUY LAFONTAINE. La version arménienne des œuvres d'Aphraate le Syrien, «Corpus Scriptorum Christianorum Orientalium» 382, Arm. 7 (texte), 383, Arm. 8 (traduction), Louvain, 1977 (ԳԻ ԼԱՖՈՆՏԵՆ. Ափրահատ Ասորու երկն-

րի հայերեն թարգմանությունը, 2 հատորով, Լուվեն, 1977), ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 2, էջ 242–244:

69. LOUIS LELOIR. Paterica armeniaca a P. P. Mechitaristis edita (1855) nunc latine reddita, «Corpus Scriptorum Christianorum Orientalium», t. I (vol. 353 Subs. 42), 1974; t. II (vol. 361 Subs. 43), 1975; t. III (vol. 371 Subs. 47), 1976, t. IV (vol. 379 Subs. 51), Louvain, 1976 (ԼՈՒԻ ԼԸԼՈՒՐ. Հայոց «Վարք Հարանցի» լատիներեն թարգմանությունն ըստ Մխիթարյան Հայրերի 1855 թ. հրատարակության, հ. 1–4, Լուվեն, 1974–1976), ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 1, էջ 255–257:

70. Moses Khorenatsci, History of the Armenians. Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson. Harvard University Press, Cambridge, Massachusetts, London, England, 1978 (Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց, անգլերեն թարգմանություն և ծանոթագրություններ Ռոբերտ Ռոմսոնի, Հարվարդի համալսարանի հրատարակչություն, 1978), ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 1, էջ 268–270:

71. Prof. Thomson's Edition of Khorenatsi Reviewed in Armenia. – «Armenian Mirror-Spectator», Boston, 21 Febr. 1981 (նախորդ գրախոսության անգլերեն թարգմանությունն է):

72. IRÉNÉE DE LYON. Nouveaux fragments arméniens de l'Adversus Haereses et de l'Epideixis. Introduction, traduction latine et notes par Charles Renoux. «F. Graffin, Patrologia Orientalis», t. XXXIX, fasc. 1, No 178, Brepols, Turnhout/Belgique, 1978 (ԻՐԵՆԵՈՍ ԼՈՒԳՆՈՆԱՅԻ. Հայերեն նոր հատվածներ «Ընդդեմ հերձուածոց» և «Տոյցք» երկերից, ներածություն, լատիներեն թարգմանություն և ծանոթագրություններ Շարլ Ռենուի, Տյուրինհաուս-Բելգիա, 1978), ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 300–301:

73. PHILON D'ALEXANDRIE, Quaestiones et Solutiones in Genesim, I et II, e versione armeniaca. Introduction, traduction et notes par Charles Mercier, «Les œuvres de Philon d'Alexandrie, publiées sous le patronage de l'Université de Lyon. 34A», Paris, 1979 (ՓԻԼՈՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅԻ. Մեկնություն Ծննդոց, ներածություն, թարգմանություն և ծանոթագրություններ Շարլ Մերսիերի, Փարիզ, 1979), ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 302–303:

74. FOLKER SIEGERT. Drei hellenistisch-jüdische Predigten. Ps-Philon: «Über Jona», «Über Simson» und «Über die Gottesbezeichnung, wohlthätig verzehrendes Feuer», I, Übersetzung aus dem Armenischen und sprachliche Erläuterungen (Wissenschaftliche Untersuchungen zum Neuen Testament. 20), Tübingen, 1980 (ՖՈԼԿԵՐ ՉԻԳԵՐՏ. Կեղծ-Փիլոնի երեք հունաեբրայական քարոզները, թարգմ. հայերենից և լեզվական բացատրություններ, Տյուբինգեն, 1980), ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 303–304:

75. GERARD GARITTE, Scripta disiecta (1941–1977), t. I–II (Publications de

l'Institut Orientaliste de Louvain, 21–22), Louvain, 1980, XXIX + 817 p. (ԺԵՐԱԲ ԳԱՐԻՏ. Սփռյալ երկեր (1941–1977), հ. I–II, Լուվեն, 1980, XXIX + 817 էջ), ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1, էջ 196–199:

76. CLAUDE E. COX. The Armenian Translation of Deuteronomy (University of Pennsylvania. Armenian Texts and Studies, 2), Scholars Press, Chico, California, 1981, XXIV + 415 p. (ԿԼՈՒԵ Ե. ԿՈՔՍ. Երկրորդ Օրինաց գրքի հայերեն թարգմանությունը (Պենսիլվանիայի համալսարան. Հայկական բնագրեր եւ ուսումնասիրություններ, 2), Չիկո, Կալիֆոռնիա, 1981, XXIV + 415 էջ), ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1, էջ 199–202:

77. GABRIELE WINKLER. Das Armenische Initiationsrituale: Entwicklungsgeschichtliche und liturgievergleichende Untersuchung der Quellen des 3. bis 10. Jahrhunderts (Orientalia Christiana Analecta, 217), Roma, 1982, 476 S. (ԳԱԲ-ՐԻԵԼԵ ՎԻՆԿԼԵՐ. Մկրտության հայկական արարողությունը, III–X դարերի աղբյուրների քննությունը պատմական զարգացման եւ համեմատական ծիսագիտության տեսանկյունով, Հռոմ, 1982, 476 էջ), ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1, էջ 203–205:

78. Հայ միջնադարյան գրականության ժանրեր (Жанры армянской средневековой литературы): Երևան, 1984, «Литературная Армения», 1985, № 8, с. 99–104.

79. HÉSYCHIUS DE JÉRUSALEM. Homélie sur Job. Version arménienne. Edition, introduction et notes par Charles Renoux, traduction par Charles Mercier et Charles Renoux. – In: F. Graffin, Patrologia Orientalis, t. 42, fasc. 1–2, № 190–191, Brepols, Turnhout/Belgique, 1983, 612 p. (ԻՍԻԺԻՈՍ ԵՐՈՒՄԱԳԵՄԱՑԻ. Մեկնություն Հորի. հայերեն թարգմանություն), ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 4, էջ 210–214:

80. CHARLES RENOUX. La Chaîne arménienne sur les Epîtres Catholiques. I. La Chaîne sur l'Épître de Jacques. In: F. Graffin, Patrologia Orientalis, t. 43, fasc. 1, № 193, Brepols, Turnhout/Belgique, 1985, 160 p. (ՇԱՌԼ ՌԸՆՈՒԷ. Կաթողիկյա թղթերի մեկնության հայերեն քաղվածուն), ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 4, էջ 214–217:

81. CLAUDE E. COX, Hexaplaric Materials Preserved in the Armenian Version. – Society of Biblical Literature. Septuagint and Cognate Studies Series, 21. – Scholars Press, Atlanta, Georgia, 1986, XV + 236 p. (ԿԼՈՒԵ Ե. ԿՈՔՍ. Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ պահպանված Վեցիցյան նյութերը), ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 4, էջ 217–220:

82. Е. Н. Мещерская. Легенда об Авгаре – раннесирийский литературный памятник (Исторические корни в эволюции апокрифической легенды). М., 1984, 250 с., «Палестинский сборник», вып. 29 (92). Л., 1987, с. 179–182.

83. BAYARSAIKHAN DASHDONDOG, The Mongols and the Armenians,

Brill, Leiden–Boston, 2011, XVIII + 267p. «Բանբեր Երեւանի Համալսարանի Հայագիտություն», № 3 (21), Երեւան, 2016, էջ 69–80:

ԽՄԲԱԳՐԱԾ ԳՐՔԵՐ

84. Ներսես Շնորհալի, Հողվածների ժողովածու, Երեւան, 1977:

85. Զ. Ս. Տեր-Դավթյան, XI–XV դարերի հայ վարքագրությունը, Երեւան, 1980:

86. Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցարեայ Արարչութեան, աշխատասիրությամբ Կիմ Սուրադյանի, Երեւան, 1984:

87. Գիրք Ծննդոց, քննական բնագիր, աշխատասիրությամբ Ա. Ս. Չեյթունյանի, Երեւան, 1985:

88. Փ. Փ. Անթապյան, Վարդան Արեւելցի. կյանքն ու գործունեությունը, գիրք Ա, Երեւան, 1987:

89. Փ. Փ. Անթապյան, Վարդան Արեւելցի. կյանքն ու գործունեությունը, գիրք Բ, Երեւան, 1989:

90. Е. Н. Мешерская, Деяния Иуды Фомы (культурно-историческая обусловленность раннесирийской легенды), Москва, «Наука», Главная редакция восточной литературы, 1990, 243 с.

91. Լեոն Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնությունը», Երեւան, 1992:

92. Երեմիայի մարգարեությունը, թարգմանություն գրաբարից Պօղոս Խաչատրեանի, «Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանների. արեւելահայերէն նոր թարգմանություն», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 1154–1257:

ԱՆՏԻՊՆԵՐ

(Ամբողջական կամ կիսավարտ մենագրություններ, հողվածներ, զեկուցումներ, որոնք մեքենագիր եւ ձեռագիր վիճակում պահպանվում են ՀՀ Առաջին նախագահի արխիվում)

93. Հայ-ասորական գրական կապերը IV–V դարերում. Ասորական գրականության դերը հայ հին մատենագրության ձեւավորման մեջ, դոկտորական թեզ, 467 էջ:

94. Ասորաբան հայերեն. Ասորերենի ազդեցությունը դասական հայերենի վրա, մենագրություն, 300 էջ:

95. Հայ-ասորական մատենագիտություն, 200 էջ:

96. Եւսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության» հնագույն հայերեն թարգմանությունը:

97. Անդրեաս Բյուզանդացու ինքնության եւ նրա «Կանոն երկերիւրեակի» աշխատության հայերեն թարգմանության հանգամանքների շուրջ:

98. Իզնատիոս Անտիոքացու «Թղթերի» հայերեն թարգմանության նախօրինակի հարցի շուրջ:

99. Ասորերենից հայերենի թարգմանված հունական պարականոն գրքերը:

100. Ենթադրաբար ասորերենից հայերենի թարգմանված երկու հունական գրական հուշարձանների մասին. ա. Նիկիայի տիեզերածոհովի մասնակիցների ցանկը, բ. Հովհան Ոսկեբերանի «Յովհաննու աւետարանի մեկնութիւնը»:

101. Ափրահատ Ասորու (Չգաւն Պարսիկ) ճառախոսական ժողովածուի հայերեն թարգմանության լեզվական եւ բնագրագիտական բնութագիրը:

102. Չենոբ Ամդեցու ճառերի հայերեն թարգմանությունը:

103. Եփրեմ Ասորու երկերի հայերեն թարգմանությունները. բնագրագիտական եւ մատենագիտական տեսություն:

104. Եփրեմ Ասորու «Հաւատոյ գրքի» հայերեն թարգմանությունը, առաջաբան եւ բնագիր, հեղինակակցությամբ ֆրանսիացի հայագետ Բեռնար Ուտիեի:

105. Եփրեմ Ասորու «Եզեկիելի մեկնության» հայերեն թարգմանություն, առաջաբան եւ բնագիր:

106. Ասորական պարականոն գրքերի դասական հայերեն թարգմանությունները:

107. Սելեւկյան թվականության գործածությունը հայ մատենագրության մեջ:

108. Հայ-ասորական հարաբերությունների գնահատականը միջնադարում:

109. Աբրահամ Կիդունացու ասորական վարքի հայերեն թարգմանություն, առաջաբան եւ քննական բնագիր:

110. Ճոխաթի (Գավիկաթի) ասորական վանքի դերը Կիլիկիո Հայոց թագավորության եւ Հակոբիկյան եկեղեցու հարաբերություններում:

111. Այառնիի կազմության մի բաղադրյալ եղանակ ասորերենից կատարված հայերեն թարգմանություններում:

112. Հայ թարգմանական գրականության գիտական եւ փիլիսոփայական հուշարձանների ուսումնասիրությունը խորհրդային տարիներին (զեկուցում):

113. «Հայ եկեղեցական մատենագրություն» առարկայի դասավանդման մեթոդաբանության շուրջ:

114. Հայաստանը եւ Ասորիքը III–XIV դարերում:

115. Проявления «тенденциозности» в армянских переводах V века (доклад).

116. Характерные черты начального периода армяно-сирийских литературных отношений (доклад).

117. О значении древнеармянских переводов сочинений Ефрема Сирина (доклад).

118. Մատենադարանի ասորական ձեռագրեր, համառոտ ցուցակ հայերեն եւ ռուսերեն լեզուներով:

119. Դիտարկումներ Մատենադարանի ձեռագրերի Մայր ցուցակի մասին:

120. Փիրոսենոս Մարբուզացուն վերագրվող «Վասն Եփեսոսի ժողովոյն» աշխատությունը:

121. Ներսես Լամբրոնացու «Պատարագի մեկնությունը» որպես Հայոց եկեղեցու բարեկարգության ծրագիր եւ Կիլիկիայի պատմության օժանդակ աղբյուր:

122. Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» VII դ. ասորի մատենագիր Հակոբ Եղեսացու «Ժամանակագրության» աղբյուր (°):

123. Միքայել Ասորու «Հայոց պատմությունը», թարգմանություն ասորերենից, ուսումնասիրություն եւ ծանոթագրություններ (տպագրության ընթացքի մեջ):

Բ. ԲԱՂԱՔԱԿԱՆ-ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒՄՅԱՆ ԳՐԱՆՈՒՅՆՈՒՄ

(Բազմալեզու մամուլում սիմված հազարավոր հրատարակումներից ցանկում ընդգրկված են միայն ժողովածուներով եւ առանձին գրքույկներով ներկայացված նյութերը)

124. Սթափության կոչնակը. Լեւոն Չորմիսյանի «Կուսակցութիւնները, Երեւան, 1995» գրքի առաջաբանը, էջ 3–5:

125. Ընտրական ծրագիր, Երեւան, 1996, 16 էջ:

126. Պատերա՛զմ, թե իսդադություն, «Պահպանողական Շեմ մատենաշար – 4», Երեւան, 2001, 36 էջ:

127. Ապագան բախում է դուռը, «Պահպանողական Շեմ մատենաշար – 10», Երեւան, 2002, 40 էջ:

128. Ընտրանի. Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ. 1983–1998 թթ. (Selected speeches, articles, interviews), Երեւան, 2006, 728 էջ:

[Գրախոսություն], Մինաս Գոնայան, «Նոր Օր» շաբաթաթերթ, Լուս Անշէլեւ, Կալիֆորնիա, հունիս 2007 թ.:

129. Ավագակապետության անատոմիան եւ մեխանիկան, «Արմատ» կենտրոն, Երեւան, 2007, 42 էջ:

130. Анатомия «Бандократии», Ереван, 2007, 28 с.

131. The anatomy of «Bandocracy». Engl. transl. by Alexander Arzoumanian and Melissa Brown, Yerevan, 2007, 26 p.

132. Բարեկամական գրույց, Երեւան, 2007, 32 էջ:

133. Дружеская беседа, Ереван, 2007, 25 с.
134. A friendly Talk. Engl. transl. by Alexander Arzoumanian and Melissa Brown, Yerevan, 2007, 23 p.
135. Պատմություն, գաղափարախոսություն, տիպարանություն, Երևան, 2007, 42 էջ:
136. История, идеология, типология, Ереван, 2007, 32 с.
137. History, Ideology, Typology. Engl. transl. by Alexander Arzoumanian and Melissa Brown. Yerevan, 2007, 30 p.
138. Նախընտրական ծրագիր կամ հանդարտ խոհեր, Երևան, 2008, 32 էջ:
139. Предвыборная программа или неспешные раздумья, Ереван, 2008, 32 с.
140. Ելույթ Համաժողովրդական շարժման կոնգրեսում, Երևան, 2008, 34 էջ:
141. Վերադարձ. Ելույթներ, հարցազրույցներ, մամլո ասուլիսներ. 2007–2009 թթ. (Speeches, interviews, press conferences), Երևան, 2009, 380 էջ:
142. Հայ-թուրքական հարաբերություններ (Armenian-Turkish Relations), Երևան, 2009, 96 էջ:
143. Հայոց ցեղասպանությունը. հայացք պետականության դիտակետից, Երևան, 2015, 160 էջ:
144. Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն, Երևան, Անտարես, 2016, 96 էջ:
145. Արցախյան հիմնահարց. Արձագանքներ Լևոն Տեր-Պետրոսյանի 2016 թ. դեկտեմբերի 17-ի ելույթի վերաբերյալ, Երևան, Անտարես, 2017, 344 էջ:
146. Armenia's Future, Relations with Turkey, and the Karabagh Conflict, Edited by Arman Grigoryan, Palgrave–Macmillan, USA, 2017, VIII + 174p.
- [Գրախոսություն], Tigrane Yégavian, Arménie : le testament d'un ancien président, «Institut de Veille et d'Etude des Relations Internationales et Stratégiques (IVERIS)», Paris, 28. 12. 2019.
- [Գրախոսություն,. Gülperi Güngör, «Center for Eurasian Studies (AVİM)», Ankara, 11. 02. 2020.
147. Левон Тер-Петросян в российской прессе, составитель Давид Петросян, Москва, Фонд Либеральная Миссия, 2018, 408 с.
148. Մարտում. Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ. 2009–2018 թթ. (Speeches, articles, interviews (տպագրության ընթացքի մեջ):

FR. CHARLES RENOUX

MÉMOIRE ... MATÉNADARAN ... 6885

Travailler au Maténadaran dans les années encore sombres de 1980 et suivantes ne présentait aucune difficulté pour un étranger. L'atmosphère y était empreinte, certes, d'une prudence de parole, mais la convivialité qui était manifestée en ce lieu éminent du savoir arménien montrait que la surveillance policière, sans doute existante, n'avait pas abîmé l'humanité des personnes. Le lieu de travail bruissait de contacts rapides entre lecteurs, mais toujours chaleureux, sous votre regard bienveillant de responsable de salle, cher Monsieur Lévon Ter-Pétrossian. La serviabilité que vous mettiez à signer les nombreuses demandes de manuscrits que je vous ai soumises n'a jamais manifesté la moindre lassitude. Grâce à vous, il m'a été possible durant ces années de consulter des centaines de manuscrits, *djachots*, *machtots* et *charaknots* qui ont contribué à élargir mes connaissances sur l'histoire des textes liturgiques arméniens hérités de la prière jérusalémite des IV^e -V^e siècles.

De nombreuses fois dans ces années vous avez signé la demande adressée à vous-même et à votre collègue, le Conservateur des manuscrits, du codex 6885 du XIII^e siècle, probablement copié en Cappadoce, et l'un des deux seuls *charaknots parakanon* connus qui avait attiré mon attention. Sa copie manuelle, entreprise alors que vous présidiez la salle de travail du Maténadaran, a été achevée plus agréablement par la suite sur ordinateur. Par deux fois, j'ai eu l'occasion de présenter cet hymnaire ancien tout à fait unique et probablement utilisé dans une église chalcédonienne de Cappadoce. Les deux travaux publiés sur ce document visaient alors à le faire connaître par une traduction française de deux sections complètes, mais prises au hasard : le canon de la fête de la Présentation du Seigneur¹, et celui du Grand vendredi, le Vendredi saint²; le début lacunaire de ce document est malheureusement resté sur ordinateur.

¹ Ch. RENOUX, « L'Hymnaire Parakanon Érévan 6885 : le canon de la fête de la Présentation du Seigneur », dans *Mélanges Jean-Pierre Mahé*, ed. par A. Mardirossian, A. Ouzounian et C. Zuckerman (*Travaux et Mémoires* 18), Paris 2014, pages 575-588.

² S. JANERAS, *Les Hymnes du Grand Vendredi*, dans *Bollettino della Badia Greca di Grottaferrata*, volume 11, 2014, pages 169-178.

Le manuscrit privé de ses premières pages n'a pas de titre. Les strophes du début évoquent en désordre la Naissance du Christ et son Baptême. Il semble donc qu'il s'agisse de textes pour la fête de l'Épiphanie, célébrée à la fois comme Nativité du Christ et Baptême au Jourdain, caractéristique des lectionnaires liturgiques de type hiérosolymitain postérieurs à 450, comme le manifestent la version géorgienne du *Lectionnaire de Jérusalem* (cf. M. TARCHNISCHVILI, *Le Grand Lectionnaire de l'Église de Jérusalem*, V^e-VIII^e siècles, Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 188-189, Louvain, 1959, n° 85 et 86), et aussi les lectionnaires arméniens tardifs (cf. Ch. RENOUX, *Le Lectionnaire de Jérusalem en Arménie : Le Čašoc' I*. Introduction et liste des manuscrits, *Patrologia Orientalis*, t. 44, Turnhout, 1989).

Aussi, à l'occasion de votre soixante-quinzième année, je suis heureux de vous en envoyer la première strophe, en souvenir de tant de relations amicales que j'ai eues avec vous et de la reconnaissance que je vous dois.

Fr. Ch. Renoux³

| | |
|--|---|
| (f° 1r) ⁴ յորժամ զԱստուած | (1)... lorsqu'enceinte Tu portais |
| յորութեամբ կրեցեր յարգանդի ի | Dieu en |
| քում, բնութիւնս մեր | ton sein ⁵ , notre nature dans la |
| Երեքսրբեմիւն զովցաւ | gloire faisait |
| փառաւորութեամբ, | l'objet de louange avec la Trinité ⁶ , |
| միաւորութեամբ առ Աստուած | du fait |

³ La numérotation des notes est restée en l'état où elle se trouve actuellement sur ordinateur.

⁴ Le manuscrit, privé de ses premiers folios, n'a pas de titre. Les strophes du début évoquent en désordre la naissance du Christ et son baptême. Il semble donc qu'il s'agisse de textes pour la fête de l'Épiphanie, célébrée à la fois comme Nativité du Christ et Baptême au Jourdain, caractéristique des lectionnaires liturgiques de type hiérosolymitain postérieurs à 450, comme le manifestent la version géorgienne du *Lectionnaire de Jérusalem* (cf. M. TARCHNISCHVILI, *Le Grand Lectionnaire de l'Église de Jérusalem*, V^e-VIII^e siècle, Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 188-189, Louvain, 1959, n° 85 et 86), et aussi les lectionnaires arméniens tardifs (cf. Ch. RENOUX, *Le Lectionnaire de Jérusalem en Arménie : Le Čašoc' I*. Introduction et liste des manuscrits, *Patrologia Orientalis*, t. 44, Turnhout, 1989).

⁵ Cf. Lc 1, 42.

⁶ Cette strophe et les suivantes font pressentir leur destination, une fête de Noël-Épiphanie-Baptême du Christ qui montre donc une évolution de l'objet primitif de la célébration du 6 janvier en Arménie, seulement Nativité du Christ.

Բանն. Վասն որոյ
ճշմարտապէս, գովենք զքեզ
Աստուածածին. եւ զառեալն ի
քէն մարմին երկրպագենք
որպէս... նմա զքեզ հայցենք ի
բարեխաւսութիւն կեցուցանել
զանձնս մեր :

de son union avec Dieu le Verbe⁷.
C'est
pourquoi, en toute vérité, nous te
louons, ô
Mère de Dieu, et nous adorons
Celui qui de
toi a pris chair⁸, de même que ...⁹
Nous te demandons
d'intercéder auprès de Lui¹⁰
pour qu'il sauve nos âmes.

⁷ La théologie de Chalcédoine de cet hymnaire affleure en cette première strophe : par la Vierge Marie, « la personne du Christ est le mode suprême et indépassable d'union entre Dieu et l'homme » (cf. A. GRILLMEIER, *Le Christ dans la tradition chrétienne. De l'âge apostolique au concile de Chalcédoine*, 2e édition, Paris, 2003, p. 1032) ; cette orientation sera confirmée par la présence, dans les folios suivants, des termes eux-mêmes de la définition christologique du concile de 451.

⁸ Cf. Jn 1, 14 : « Et Verbum caro factum est. »

⁹ Plusieurs lettres du manuscrit sont complètement effacées.

¹⁰ Le rôle d'intercession de Marie, sans cesse rappelé dans l'hymnodie ancienne, est l'un des premiers thèmes du culte de la Mère de Dieu (cf. R. LAURENTIN, 1967, p. 52-66).

ԺԻՐԱՅԻ ԼԻՊԱՐԻՏԵԱՆ

Միջիգանի համալսարանի Պատվավոր պրոֆեսոր

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՆՇՈՒՄՆԵՐ՝ ԼԵԻՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ «ԽԱՉԱԿԻՐՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ» ԳՈՐԾԻ Բ. ՀԱՏՈՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

(Երբ պետական գործիչը կը վերադառնայ պատմաբանի իր արհեստին)

*Բանալի բառեր՝ Ազգային շահ, Բիզանդիոն, դաշինքներ, դիւանագիտություն, Ժա-
նանգականություն, իշխանափոխություն, օրինակարգություն, Իս-
լամ, Լեւոն Տէր Պետրոսեան, Խաչակիրներ, Խաչակիր պետու-
թիւններ, Կիլիկիա, Կիլիկեան իշխաններ, իշխանութիւններ, թագա-
տրներ, միջազգային իրաւունք, յետադարձ քաղաքագիտություն.
պատմություն, պետական շահ, տարածքային ամբողջականու-
թիւն:*

Պատմութիւնն ու քաղաքականութիւնը իրար կը հանդիպին ու իրար կը խաչաձեւեն բազմաթիւ ձեւերով եւ տարբեր մակարդակներու վրայ: Երբեմն պատմութիւնն է, որ քաղաքականութեան անհետքերութիւնը կը յայտնաբերէ: Երբեմն ալ քաղաքականութիւնն է, որ ընդունուած պատմութեան սնանկութիւնը կը մերկացնէ: Կը պատահի նաեւ, որ այդ երկու բնագաւառները իրար կ'օժանդակեն, կը լրացնեն կամ կը լուսաւորեն:

Դրական փոխազդեցութիւնը կը պատահի, երբ պետական գործիչը լաւ ծանօթ է պատմութեան եւ ճիշդ դասերն է քաղած պատմութենէն, երբ ան պատմութիւնը օգտագործած չէ այնպէս, ինչպէս կատուն կ'օգտագործէ աղ-բամանը՝ մէջէն վերցնելով միայն այն, ինչ իրեն պէտք է այդ օրուան համար. նման գործարքով պետական գործիչը ցոյց կուտայ իր արդէն իսկ հաւատացածի ճշմարտութիւնը: Դրական փոխազդեցութիւնը կը պատահի նաեւ, երբ պետական գործիչը կը դառնայ պատմաբան ու այդ աչքով կը վերլուծէ քաղաքա-կանութիւնը՝ տեսած ու ապրած ըլլալով քաղաքականութեան խոհանոցը:

Ի՞նչ կը պատահի այդ փոխարարբերութեան, երբ որոշ ժամանակի մը հա-մար պատմաբանը կը դառնայ պետական գործիչ ու պատմութեան կառուցման իր մասնակցութիւնը բերելէ յետոյ կը վերադառնայ գիտական դաշտ ու կրկին կը դառնայ պատմաբան:

Այդ հազուագիտ դէմքերէն մէկն էր Երրորդ Հանրապետութեան հիմնադիր նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Այլ տեղ պիտի անդրադառնամ այդ հոլովոյթի առաջին փուլին՝ պատմաբանէն պետական գործիչ փոխանցում երեւոյթին: Տէր-Պետրոսեանին անձնապէս հանդիպելէս առաջ իրեն ծանօթացած եմ Ղարաբաղ Կոմիտէի գործունէութեան ընթացքին իր ելոյթներուն ընդմէջէն, ուր պատմութիւնը յստակօրէն իր տրամաբանութեան ու դիրքորոշումներու եմթահողի կարեւոր բաղադրիչներէն մէկն էր: Յետագային, եօթ տարի որպէս իր հետ մօտիկ աշխատողներէն մէկը, տեսայ, թէ ինչպէս իրեն համար պատմութիւնը այն անծայրածիր դաշտն էր, որմէ դասեր քաղելով ան իր փորձառութիւնը կը բազմապատկեր եւ կը փորձարկէր իր դատողութիւններն ու որոշումները:

Այդ էր պատճառը, որ տարիներ յետոյ կրնամ ըսել, որ կարելի եղաւ խուսափիլ ճակատագրական սխալներէ, որոնք այլապէս այնքան բնական ու ակնկալելի պիտի ըլլային, սխալներ, որոնք մեր պատմութեան մէջ նախապէս կատարուած էին ու առաջին հաշտացքով կրնային դիւրութեամբ կրկնուիլ: Տեսայ, թէ մեր պետական, նոյնիսկ եկեղեցական ու կուսակցութիւններու պատմութեան մէջ համաժողովրդական ազատ քուէարկութեամբ ընտրուած առաջին ղեկավարի համար իր պաշտօնի պատասխանատուութիւնը աւելի ծանր կը կշռէր, քան փառքն ու իշխանութիւնը, եւ ան պատմութեան էութիւնը կը քաղէր ամէն օր որպէս իր դատողութեան հիմքերէն մէկը: Ինչպէս նշեցի արդէն, այս մասին մանրամասնօրէն՝ այլ տեղ:

Անցնինք երկրորդ փուլին, երբ նախագահ Տէր-Պետրոսեան վերադարձաւ քաղաքացիի իր կարգավիճակին ու կրկին հագաւ պատմաբանի իր վերարկուն:

Ի՞նչն էր տարբեր իր պատմագրութեան մէջ:

Պետական գործիչէն պատմաբանի աշխատանքին վերադառնալու հետեւանքներու հարցը ինձ հետաքրքրեց, երբ 1997-ի սեպտեմբերին նախագահ Տէր-Պետրոսեանի խորհրդականի իմ պաշտօնէս հրաժարեցայ եւ փորձեցի վերադառնալ պատմաբանի իմ նախկին մասնագիտութեանս: Այս հարցին պատասխանելու առաջին փորձերս ներկայացուցի 2011-ին՝ Միշիկընի Համալսարան պաշտօնավարութեանս աւարտին, հրապարակային դասախօսութեան մը կերպարանքով:¹ Այն ժամանակ զոնէ եզրակացութիւնս այնքան ալ քաջալերական չէր: Եօթ տարի դիւանագիտութեան ու պետական գործերու մէջ մխրճուելէ ետք դժուարութիւն ունէի պատմութիւն գրելու. պատմութիւն գրելու օգտակարութեան մասի՛ն իսկ լուրջ վերապահութիւններ ունէի: Կը փորձէի այդ եօթ տա-

¹ Այդ դասախօսութեանս գրառումը պիտի հրատարակուի այլ տեղ:

րիներու ընթացքը մարտել: Պատմութիւն կը դասաւանդէի, ներառեալ հայ ժողովուրդի պատմութիւն, եւ այլեւս վստահ չէի, որ իմ դասաւանդածը յատկանշող «այս դէպքը կամ այս երեւոյթն է կարեւորը», « այսպէս եղաւ, այս պատճառով եղաւ» ներում:

Նաեւ խորը հիասթափութիւն կ'ապրէի, երբ կը տեսնէի, թէ ինչպէս արդէն տասնամեակ մը չանցած՝ պատմաբաններ ու այլ գրչակներ կը գրէին 1990-ական թուականներու «պատմութիւնը» կամ պատմութեան էջեր՝ առանց ծանօթացած ըլլալու անհրաժեշտ փաստաթուղթերուն կամ առանց խօսած ըլլալու դերակատարներուն հետ, եւ այդ արտադրութիւնները կ'ընդունուէին որպէս լուրջ պատմագրութիւն: Եզրակացութիւնս այդ օրերուն հետեւեալն էր. փոխանակ պատմութիւն գրելու ատելի լաւ կ'ըլլար վերադառնալ երիտասարդութեան տարիներու մանր զբաղմունքներէս մէկուն՝ բանաստեղծութիւն գրելու: Թերեւս, կը մտածէի, լաւ դարբնուած քերթուած մը ատելի առարկայականութիւն ու իմաստութիւն կը պարունակէր, քան պատմութեան վերաբերող ամբողջ հատոր մը, եթէ հատորը պարզապէս հեղինակի մը փափաքած անցեալի պատկերացումը կը ներկայացներ: Յաճախ կը վերադառնայի Չարեանցի «Պատմութեան քառուղիներով» գործին: Վերջը, բարեբախտաբար, մեր գրականութիւնը խնայեցի այդ փորձութենէս:

Մի քանի տարի առաջ իր հետ պատմագիտական հարցի մը մասին խօսակցութենէ ետք որոշեցի նորէն կարդալ Լեւոն Տէր-Պետրոսեանի «Խաչակիրները եւ հայերը» գործի երկրորդ հատորը²:

Այդ գործին ծանօթացած էի հատորի լոյս տեսնելու տարին՝ 2007-ին: Այդ ժամանակ իսկ մտածեցի, որ այդ գործը գլուխ գործոց մըն է, մեր արդի պատմագրութեան բարձրագոյն մակարդակի աշխատանք մը, որ պէտք է թարգմանուի անգլերէնի եւ այլ լեզուներու: Սակայն ու՞ր գտնել թարգմանիչ մը, որ ծանօթ ըլլայ այնտեղ օգտագործուած աղբիւրներու հին ու նոր բազմաթիւ լեզուներուն: Միեւնոյն ժամանակ գիտէի, որ ծանր զբաղուածութեան ու մտքիս մէջ հարցերը չլուծած պայմաններու տակ չէի կարողացած իսկապէս «կարդալ» այդ գործը: Կը յիշէի, սակայն, որ բացի իր գիտական մակարդակէն ու պատմութեան համար իր արժէքէն, այդ գործը այլ աշխատանքներէ կը տարբերուէր պատմական նոյնպէս բարձր արժէք ունեցող իր անմիջականութեամբ, կենդանի ոճով, փաստարկներու եւ բառամթերքի այժմէականութեամբ:

Ուրեմն որոշեցի վերադառնալ այդ գործին ու հարց տալ: Ինչպէ՞ս պատմութիւն կը գրէր ատելի քան տասը տարի քաղաքական ու պետական գործիչ եղած եւ ամենէն պատասխանատու պաշտօնները վարած նախկին պատմաբանը:

² Լ. Տէր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, պատմա-քաղաքագիտական հետազոտություն, Երևան, 2007: Տեքստային քաղվածքներին կից տրված են այս հրատարակության էջերը:

Այս անգամ իսկապէս կարդացի այդ հատորը:

Այստեղ կը փափաքիմ փոխանցել այդ երկրորդ ընթերցման ընթացքին գրաւոր ճշումներէս մասնիկներ: Չեմ գիտեր՝ ճեղհնակը ո՞ր չափով պիտի համաձայնի այստեղ արտայայտուած ճշումներու հետ: Փաստօրէն այս մասին չեմ խօսած իրեն հետ: Սակայն անգամ մը, որ պատմաբանը իր գործը կը հրատարակէ, ընթերցողի իրաւունքն է ի՞ր ընկալման կապակցութեամբ տպաւորութիւններն ու դիտողութիւնները արձանագրել:

Ստորեւ կը ներկայացնեմ ընթերցմանս ընթացքին եւ ընթերցումէս վերջ ինձի համար ըրած մի քանի գրառումներու ատելի կազմակերպուած ու խմբագրուած տարբերակը:

Ա) Ուսումնասիրութեան շրջան եւ թեմա

Հետաքրքրական է, նախ, ուսումնասիրութեան համար ճեղհնակի ընտրած վայրն ու ժամանակաշրջանը՝ Հայկական Կիլիկիան եւ այդ պետականութեան շուրջ 300 տարիները՝ ԺԱ-էն մինչեւ ԺԴ դարերը: Որպէս պատմաբան՝ Տէր-Պետրոսեանը հմտութիւն ունի ե՛ւ հին ու միջին դարերու, ե՛ւ նոր ու ժամանակակից պատմութիւններու մասին գրելու: Ինչո՞ւ Հայկական Կիլիկիան եւ իր շրջապատը:

Համեմատաբար փոքր տարածաշրջանի մէջ մի քանի փոքր պետութիւններ, որոնցմէ մէկն է Կիլիկիան եւ որոնք իրար միջեւ լուրջ հարցեր ունին: Առաւել, այդ պետութիւնները ունին իրենցմէ ատելի մեծ տարողութիւն ունեցող դաշնակից եւ թշնամի պետութիւններ: Այսինքն՝ տարբեր չափերու «գերտերութիւններ», որոնք այդպէս ալ կ'անուանուին հատորին մէջ:

Յետոյ կայ այդ ուսումնասիրութեան թեման: Այսինքն, որո՞նք էին այն օրէնքները, որոնցմով Կիլիկիոյ իշխաններն ու թագակիրները պետք էր իրար յաջորդէին եւ այդ փոխանցումները իրականութեան մէջ ո՞ր չափով կը համապատասխանէին օրէնքներու տառին եւ ոգիին: Ո՞ր չափով օրինակարգ (Legitime) են եղած այդ փոխանցումները, ըստ այդ ժամանակի տրամաբանութեան: Ինչպէ՞ս եւ ո՞ր օրէնքներով կը փոխանցուի իշխանութիւնը մէկ ղեկավարէն միւսին:

Դրուած խնդրի պարագաները ինձի անխուսափելիօրէն կը յիշեցնեն տարբեր ժամանակներու՝ ներառեալ 1990-ական թուականներու Հարաւային Կովկասը: Իսկ խնդիրը ինքը կը յուշէ Երրորդ Հանրապետութեան առաջին նախագահէն երկրորդին իշխանութեան փոխանցման պարագաներու եւ երկրորդ նախագահի օրինակարգութեան հարցը: Այդ օրինակարգութիւնը այնքան կարե-

ւոր էր հրաժարական տուած առաջին նախագահի համար, որ պետութեան շահին համար ան փորձեց օրինակարգութեան ձեւ տալ այդ փոխանցման: Ան մասնակցեցաւ երկրորդ նախագահի երդման արարողութեան, թէեւ այդ երդուող նոր նախագահն էր, որ առաջինին այլ ընտրանք չէր թողած իրեն քան հրաժարական տալ, եւ երբ լուրջ կասկած կար, որ այդ երկրորդը երկրի Սահմանադրութեան համաձայն իրաւունք ունէր այդ պաշտօնը ստանձնելու:

Բ) Փոքր պետութիւններու քաղաքականութիւնը

Այդ փոքր պետութիւններու մասին հեղինակը կը գրէ.

«Փոքր պետութիւնները զրկուած էին նաեւ կայուն եւ կանխատեսելի քաղաքական գործունեւորից օգտվելու հնարավորութիւնից, քանի որ երեկվա քաղաքացիները սյուս օրը կարող էր դառնալ թշնամի, կամ հակառակը» (էջ 25-26):

Այս տողերը ինձի յիշեցուցին կարեւոր, բայց քիչ ծանօթ խօսակցութիւն մը:

1995-ին էր, երբ Ամերիկեան Գոնկրէսը Իրանի եւ Լիպիայի նկատմամբ պատժամիջոցներ կիրառող օրէնք էր ընդունած (Iran Libya Sanctions Act): Ամերիկեան բարձր մակարդակի պատուիրակութիւն մը ժամանեց Երեւան եւ հանդիպեցաւ նախագահ Տէր-Պետրոսեանին հետ՝ անոր համոզելու համար, որ մենք ալ մասնակցինք այդ պատժամիջոցներու կիրառման, այլապէս Հայաստանն ալ կրնայ պատժուիլ՝ Իրանի հետ գործարքներու մէջ մտած ըլլալու համար: Տէր-Պետրոսեանի պատասխանը՝

«Դուք, ԱՄՆ-ն ու Իրանը, մեծ պետութիւններ էք. մենք՝ փոքր: Այսօր թշնամի էք, վաղը կրնաք հաշտուիլ եւ իրար ներել: Իրանը մեզ չի ներեր, եթէ մենք իր դէմ գնանք»:

Կար նաեւ Երրորդ Հանրապետութեան առաջին տարիներու փորձը, որ աւելի անմիջական կը դարձնէր այդ իրականութիւնը: Մեր բարեկամները լաճախ մեր թշնամիներու հետ էին, իսկ մեր թշնամիները երբեմն բարեացակամ՝ կենսական քայլեր կ'առնէին ի նպաստ մեզ: Այդ շարժականութիւնը (dynamics) կը շարունակուի մինչեւ այսօր:

Գ) Միջազգային իրաւունք

Այդ ժամանակաշրջանի միջազգային իրաւունքի մասին Տէր-Պետրոսեան կը գրէ.

«... միջազգային իրավունք» եզրույթը մենք գործածում ենք պայմանականորեն, քանի որ այդ իրավունքը միջնադարում սահմանվում էր ոչ թէ Ազգերի Լիգայի, ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի տիպի կազմակերպությունների կողմից, այլ մեծ պետությունների անհատական ջանքերով: Յուրաքանչյուր գերտերություն

ինքնուրույնաբար հոչակում էր սեփական քաղաքական դավանանքը (դոկտրինան) եւ դրա հիման վրա որոշում իր եւ մնացյալ աշխարհի հարաբերությունների կանոնները: Այլ կերպ ասած, թեւեւ անցյալում եւս, ինչպես մեր օրերում, միջազգային իրաւունքը սահմանվում էր գերտերությունների կողմից, բայց դա տեղի էր ունենում ոչ թէ համապատասխան կազմակերպությունների մակարդակով, այլ կայսրությունների որդեգրած եսակենտրոն հայեցակարգերի հոչակման միջոցով, փոյթ չէ, թէ դրանք ի բնէ կհակասեին միմյանց եւ ազգերի համակեցությունը կարգաւորելու փոխարեւ, աշխարհը կը վերածեին անհաշտ թշնամանքի թատերաբեմի» (էջ, 5-6):

Սովետ Միութեան փլուզումէն յետոյ «միջազգային իրաւունքը» պահ մը խաղաղ, Աերդաշնակ ու կայուն աշխարհի մը կարելիութիւնը ստեղծեց: Սակայն Ասիական համակարգը նոր համակարգով մը չփոխարինուեցաւ: Երկբեւեռութեան փոխարէն սկսաւ գործել բազմաբեւեռութիւնը, որն արդէն սկսած էր համապատասխանել հեղինակի Ակարագրած իրավիճակին: Այսօր արդէն այդ իրավիճակը կրնայ որպէս «քաոս» որակուիլ: Մեծ տերութիւնները կ'անտեսեն իրենց իսկ ստեղծած միջազգային ու տարածաշրջանային կազմակերպութիւններն ու միջազգային իրաւունքը: Իւրաքանչիւրը կը ստեղծէ այլոց հետ վարուելու ի'ր օրէնքը:

Դ) Քաղաքական գործօններ

«Քաղաքական գործոններն, ըստ այդմ, բազմանշանակ էին՝ միաժամանակ պարունակելով թե՛ դրական, թե՛ բացասական տարրեր: Այսպէս, օրինակ, իտալական առեստրային հանրապետությունները մի կողմից՝ մեծապէս Ապաստեցին խաչակրաց պետությունների ստեղծմանը, տնտեսապէս զարգացմանն ու Եւրոպայի հետ մշտական հաղորդակցության ապահովմանը, մյուս կողմից, սակայն, իրենց ձեռքբերած հսկայական արտոնություններով, հարատեւ մրցակցութեամբ, վեճերով ու կոիվներով, ընդհուպ մինչեւ քաղաքացիական պատերազմների հրահրումով, թուլացրին այդ պետությունները: Նույնը վերաբերում է ռազմա-կրոնական միաբանություններին... » (էջ 26):

Մեր ժամանակներու գերտերութիւններու երկակի դերը ո՞րքանով կը տարբերի ուսումնասիրուած ժամանակաշրջանի այս Ակարագրութենէն:

Ե) Փոքր ու մեծ պետութիւններու հարց

Էջ 95-99-ի մէջ հեղինակը կը քննարկէ մեծ ու փոքր պետութիւններու յարաբերութիւններն ու փոքրերու կարծեցեալ կախուածութիւնը մեծերէն: Ան

կ'ընդգծէ այլ պատմաբանի մը նրբամիտ դիտողութիւնը, ըստ որում պարզապէս որովհետեւ Աննա Կոմնենայի Բիւզանդիոնը իրաւական տեսակետով Կիլիկիան վասալ, ճորտական կը նկատէր, չի նշանակէր, որ Լեոնն ու Ռուբէնը իրենք իրենց այդպէս կը նկատէին, կամ թէ իսկապէս այդպէս էր կեանքի մէջ: Հեղինակը նկատի ունի 1108 թուականին Կիլիկիա/Բիւզանդական Կայսրութիւն յարաբերութիւններու իրադրութիւնը:

Իսկ ես՝ ընթերցողս, կը մտածեմ, արդէօ՞ք սա այնքան տարբեր է Լեոնային Ղարաբաղ/Ազրայէճան յարաբերութենէն: Այսինքն, թերեւս պետք է հարց տալ՝ իրական կեանքի մէջ ի՞նչ դեր պետք է վերագրել իրաւականին, եթէ իրական յարաբերութիւնը կրնայ այդ պայմաններուն մէջ առաւելագոյնն էր, որ կարելի էր ձեռք ձգել: Խօսքը կրնայ վերաբերիլ նոյնիսկ Հայաստան-Ռուսաստան յարաբերութիւններուն: Կախումա՞ծութեան, ինչպէս անկախութեան, իրաւականը կրնայ շատ խաբուսիկ ըլլալ:

2) Իշխանաւորի հարց

Էջ 59-62-ի մէջ հեղինակը կը մեկնաբանէ իր աղբիւրներէն Յովհաննէս Երզնկացիի գործը.

«Սակայն Երզնկացու մոտ առկա են նաւ միջնադարի կենսափորձից բխող պատմական բնույթի ուշագրաւ դիտարկումներ, որոնք զգալիորեն մեծացնում են նրա աշխատության արժեքը: Երկրի կառավարումը, ըստ նրա, նույնպիսի արվեստ, այսինքն՝ մասնագիտություն է, ինչպիսիք են մնացյալ բոլոր մասնագիտությունները... Երզնկացու կողմից հստակորեն ձեւակերպված են նաեւ օրենքի գերակայության եւ իրավական պետության գաղափարը: ... Թագավորի պարտականությունն է վճռականորեն պայքարել արտաքին թշնամիների եւ իշխանության հակառակորդների դեմ... Դրա հետ մեկտեղ նա պետք է ճկուն քաղաքականություն վարի եւ կարողանա ճիշտ ընտրել պատերազմի թէ խաղաղության ժամանակը՝ երկրի փրկության համար չխորշելով անգամ որոշ զիջումներից: ... Թագավորը պարտավոր է գիտակցել նաեւ, որ Աստծու կողմից սահմանված մարդկային անինքնաբավության պատճառով ի վիճակի չէ միայնակ կառավարել երկիրը, ուստի նա պետք է իրեն շրջապատի իմաստուն խորհրդականներով եւ չկարծի, թե ուղղություն տվողի կարիք չունի: ... Այսպիսով, Վահրամ Բարունու եւ Հովհաննէս Երզնկացու քննության ենթարկված աշխատություններում մենք գործ ունենք իշխանության «լեգիտիմության» եւ արքայական գաղափարախոսության բավականին մշակված մի հայեցակարգի հետ, որն արտացոլում է ինչպէս այդ հարցի ընդհանուր քրիստոնէական ըմբռնումը, այնպէս էլ հեղինակների իրավագիտակցության եւ կենսափորձի

վրա հիմնված պատկերացումները: Ձևայած այդ նշանակալի հանգամանքին, նրանց երկերը մինչ այժմ նշված տեսանկյունից չեն գնահատվել» (շեշտադրումը իմն է):

Հետաքրքիր է, թե ինչո՞ւ այլ պատմաբաններ Յովհաննէս Երզնկացիի գործը այդ տեսանկյունէն չեն գնահատած: ԺԳ դարու այդ փիլիսոփայ մատենագիր պատմաբանի գործը այնքան օգտագործուած ու ուսումնասիրուած է: Կրնա՞յ ըլլալ, որ Տէր-Պետրոսեանի փորձառութիւնը զինք աւելի զգայուն դարձուց Երզնկացիի գործի այն հանգամանքին, որու նկատմամբ ինք զգայուն էր դարձած:

Է) Չիջումներու հարց

Տէր-Պետրոսեանը մեծ ուշադրութիւն կը դարձնէ Կիլիկիոյ իշխանաւորներու՝ այլ պետութեանց հետ ստորագրած բազմաթիւ դաշինքներուն: Երբեմն նոյնիսկ ամենէն մանրակրկիտ պեղումնային ջանքերով վերակառուցած է դաշինքի մը պայմանները, երբ այդ պայմանները մատենագիրներու կողմէ յստակօրէն չեն ձեւակերպուած: Իսկ դաշինքներու գնահատականի մէջ ան յատուկ ուշադրութիւն կը դարձնէ այն «զիջումներուն» վրայ, զորս հայ իշխանաւորները կատարած են որպէսզի ապահովեն այն, ինչ կարելի է եւ անհրաժեշտ՝ պետութեան շահերու տեսակէտէն: Այսինքն ան տեսած ու գնահատած է այդ իշխանաւորներու փրակմաթիւզմը, իրենց որոշումները իրականութեան վրայ հիմնելու կարողութիւնը, փոխանակ երազային տեսլականներով առաջնորդուելով՝ շատ աւելին կորսնցնելու:

Այդ հիման վրայ է, որ Տէր-Պետրոսեանը կը լուսաբանէ հետեւեալ դաշինքներու էութիւնն ու արժէքը.

Կիլիկիա եւ Անտիոք, 1194 (էջ 173-176)

Կիլիկիա եւ Մոնկոլ Կայսրութիւն 1252 (էջ 301)

Կիլիկիա եւ Եգիպտոս, 1285 (էջ 331)

Կիլիկիա եւ Եգիպտոս, 1337 (էջ 407)

Այդ գնահատականներն, ըստ էութեան, նոյնը կրնային ըլլալ, եթէ այս հատորը գրուած ըլլար նախ քան հեղինակի քաղաքական դաշտ մտնելը: Սակայն այդ շեշտաւորումներով, բառամթերքով, մանրամասնութեամբ, արժեւորման համակարգով եւ մանաւանդ այդ կենդանի ոճով նկարագրութիւնները հաւանաբար կը պարտի իր անձնական փորձառութեան ու մանաւանդ՝ Ղարաբաղի հարցի լուծման կապակցութեամբ իր պայքարներուն եւ, ի վերջոյ, իր հրաժարականի առկայութեան:

Ը) Ինչո՞ւ այնքան դիմացան

Իր «Առաջաբանին» մէջ, ուր կը գերկայացնէ հատորի գլխաւոր թեզերը, Տէր-Պետրոսեանը կարեւոր տեղ կու տայ Միջին Արեւելքի այդ փոքր պետութիւններու երկարակեցութեան գաղտնիքին: Ինչո՞ւ մի քանի դար դիմացան անոնք: Հեղինակը այդ «Առաջաբանի» 29 էջերէն ութը (27-34) կը յատկացնէ այդ պարզ, սակայն հազուադէպօրէն հարցուած հարցումին:

Այդ հարցումին ան կը պատասխանէ մշտնջենաբար արտաքին եւ ներքին վեց գործօններ՝ ստորեւ ամփոփուած երեքի մէջ .

ա. Գերտէրութիւններու հակասութիւններն ու փոքր տէրութիւններու ուժերու հաւասարակշռութիւնը

բ. Խաղաղութեան տարիները շատ անելի տեսական էին, քան պատերազմի տարիները

գ. Փոքր տէրութիւններու ներքին կայունութիւնը, ժողովրդագրական ու դաւանական միատարրութիւնը, պետական համակարգի ամրութիւնը, բարձր մշակոյթ ստեղծելու կարողութիւնը, միջնադարին անյարիր թուացող այնպիսի վերացական գաղափարի առկայութիւնը, որպիսին ազգային գիտակցութիւնն էր, յստակ կանոնակարգուած գահաժառանգութեան իրաւունքի առկայութիւնն ու իշխանութեան օրինական փոխանցման ապահովումը, իշխանութեան օրինակարգութիւնը՝ «լեգիտիմութիւնը»:

Առաջին դիտողութիւն: Անկախութենէն անմիջապէս առաջ ու առաջին մի քանի տարիներուն բոլորիս մտքին մէջ կար Առաջին Հանրապետութեան օրինակը: Այդ մէկը երեք տարի չդիմացաւ: Իսկ յետ-Սովետական խառն տարածաշրջանի մը եւ անորոշ աշխարհի պայմաններուն մէջ դժուար էր այնքան ալ վստահ ըլլալ, որ Երրորդը անելի պիտի դիմանար: Կարելի էր միայն զգօն, զգոյշ ու զգաստ խօսիլ ու վարուիլ, լաւ մտածել, ճիշդ դատողութիւն գործադրել, եւ մանաւանդ պատմութենէն քաղել ճիշդ դասերը:

Հարցումը, ամենայն դէպս, ինքզինք կը պարտադրէր:

Նաեւ, որպէս ընթերցող ես ինձի հարց կու տամ. այդ գործօններէն ո՞րն է, որուն հետ հեղինակը առընչակցութիւն չունեցաւ իր տասնամեակ մը տեւող քաղաքական ու պետական գործունէութեան ընթացքին: Ո՞ր գործօններն էին, որոնք դեր չկատարեցին այդ ծանր տարիներուն պետութեան յաջողութիւններուն ու դժուարութիւններուն մէջ:

Թ) Ազգային գաղափարախօսութիւն եւ դաւանանութիւն

Կիլիկիոյ պատմութեան մէջ շատ ծանօթ է Մլէն Իշխանի պարագան, որ ընդհանրապէս ներկայացուած ու ընդունուած է որպէս շատ ժխտական կեր-

պար: Ան կը յիշեցնէ նաեւ մեր պատմութեան մէջ մի քանի այլ նման անհատականութիւններ, որոնց մասին մեր մատենագիրներն ու շատ մը պատմաբանները լաւ բան չունին ըսելիք, որովհետեւ անոնք «դաւանանաձ» են հայ «ազգային արժէքներուն» ու կրօնին: Տէր-Պետրոսեան ըսելիք ունի այդ մասին: Նկատի ունենալով խնդրի այժմէականութիւնը՝ օգտակար կը նկատեմ ներկայացնել երկար այս մէջբերումը.

«Մլեհի նկատմամբ աղբյուրների համարչա միահամուռ ժխտական վերաբերմունքը եւ նրա սպանության պատճառների որոնումը զբաղեցրել են շատ հետազոտողների միտքը: Ըստ Ռ. Գրուսեի՝ Մլեհն սպանվել էր «հայ ժողովրդի զգացումները վիրաւորած լինելու» կամ «գայթակղեցուցիչ իսլամասիրության եւ քրիստոնեության դեմ գործած դավաճանության համար»: Մ. Զուլայանի կարծիքով՝ Մլեհի սպանության պատճառը «հայ իշխանների եւ բարձր հոգեւորականության» դժգոհությունն էր «Հալեպի սուլթանի հետ նրա համագործակցության քաղաքականությունից»: Կ. Մութաֆյանը այդ ոճրագործությունը բացատրում է նրանով, որ Մլեհի երկաթյա բռունցքը եւ անհանդուրժողականությունը նրանից վանել էին ազգաբնակչության զգալի մասին»: Եւ վերջապէս Բակուրյանի տեսակետով՝ նրա «սպանումը, որ կատարուած է հայ իշխաններու ձեռք, հաւանաբար կուսակցական վրէժխնդրութեանց հետեւանքն էր»: Հարկ ենք համարում հատուկ կանգ առնել Ռ. Գրուսեի տեսակետի վրա, քանի որ այն հադիսանում է առավել տարածված մտայնության արտահայտություն: Մեր կարծիքով Մլեհի «իսլամասիրության եւ քրիստոնեության դեմ գործած դավաճանության» կամ «հայ ժողովրդի զգացումները վիրավորած լինելու» մասին խոսք անգամ չի կարող լինել, քանի որ հայ իշխանի վարքագիծը թելադրված էր զուտ քաղաքական պրագմատիզմով, եւ այդ քաղաքականությունը, ինչպէս ինքը Գրուսեն էլ խոստովանում է, «հաջողությամբ էր պսակվել»: Մլեհի «իսլամասիրությունը» հաստատող որեւէ փաստ գոյություն չունի, իսկ նրա կողմից վերը հիշված Մեծաքարի վանքի հիմնադրումը ճիշդ հակառակն է ապացուցում: Ինչ վերաբերում է «քրիստոնեության դեմ գործած դավաճանությանը», որի տակ Ռ. Գրուսեն նկատի ունի Մլեհի եւ Նուրեդդինի միջեւ կնքված դաշինքը, ապա դա էլ մտնում էր ժամանակի քաղաքական խաղի կանոնների մէջ եւ որեւէ արտառոց բան չէր պարունակում: Մլեհից թե՛ առաջ, թե՛ հետո բազմաթիվ քրիստոնյա տիրակալներ՝ բյուզանդական կայսրեր, Երուսաղեմի եւ Կիպրոսի թագավորներ, Անտիոքի պրինցներ, Եդեսիայի եւ Տրիպոլիի կոմսեր, Հյուսիսային Ասորիքի հայ իշխաններ, ժամանակ առ ժամանակ դաշնակցել են մահմեդականների հետ, եւ դա դիտվել է որպէս իրենց երկրների գործնական շահերից բխող սովորական քաղաքական վարքագիծ ... » (էջ 146-148):

Այս տողերը կարդալով ինչպէ՞ս չմտաբերել իր՝ Տէր-Պետրոսեանի դէմ շարտուած ամբաստանութիւնները՝ իբրեւ «սպազգային» մօտեցում ունեցող գործիչ եւ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու ու Լեռնային Ղարաբաղի հարցերով մեր «աւանդական արժէքներուն» կամ «ազգային շահերուն» դաւանանող ղեկավար:

Նշումներու շարքը կարելի է երկարել: Ազգային շահերու, կրօնական համերաշխութեան եւ այլ նիւթերու մասին հատորը ունի բազմաթիւ հետաքրքրական դիտողութիւններ: Առ այժմ կը գոհանամ այսքանով:

Պատմութիւնը իր ամբողջ հարստութեամբ, կենսունակութեամբ, բարդութիւններով ու ներքին հակասութիւններով ներկայացնելը բաւականին դժուար գործ է: Հին պատմութիւնը ունի իր դժուարութիւնները, նորը՝ իրը:

Կայ մէկ դժուարութիւն, սակայն, որ կը վերաբերի բոլոր շրջաններուն ու նիւթերուն: Այդ ալ պատմագրի կարողութիւնն է նախ «նոյնանալու» պատմութիւնը կերտող իր ուսումնասիրած մարդոց հետ, որպէսզի կարողանայ «ներս»էն պատկերացնել անոնց մտածելակերպն ու գործելակերպը եւ յետոյ դուրս գալ այդ պատեանէն, «հեռուէն» դիտել ու դատողութիւն ընել այդ բոլորին մասին:

(Այս ընթացքը պէտք չէ հաւասարեցնել մէկ այլ, ոչ արդիւնաւէտ մօտեցման: Կան պատմաբաններ, որոնք անցեալը կը յարմարեցնեն իրենց արդէն ունեցած պատկերացումներուն ու քաղաքականութեան, փոխանակ սկիզբը իրենք հաւասարելու պատմութիւնը կերտողներու հետ:)

Այդ առաջին հանգրուանը՝ նոյնացումը, ճիշդ կատարելու համար լաւագոյն ձեւերէն է ընտրել ժամանակաշրջան մը եւ տարածաշրջան մը, որ պատմաբանը կրնայ ընկալել որպէս իրը, որոս խնդիրները իրեն հարազատ են: Բացի իր զուտ գիտական մեթոտի բարձր արժանիքներէն՝ Տէր-Պետրոսեանի այս գործը մեր նորագոյն պատմագրութեան լաւագոյն նմոյշներէն է, որովհետեւ հեղինակը ընտրած է թեմա մը, ուր կրնայ իր փորձառութիւնը օգտագործել:

Այդ հանգրուանին մէջ կարելոր կը դառնան հետեւեալ հարցումները. ի՞նչ հարցումներու կը փորձէ պատասխանել պատմաբանը, ի՞նչ երեւոյթներու վրայ կը դնէ շեշտը, ի՞նչ կը տեսնէ, որ նախապէս չէր տեսած կամ ուրիշներ չեն տեսած, ո՞ր երեւոյթները կամ գործօնները կարելոր կը նկատէ, զորս առաջ կրնար անկարելոր նկատել, ի՞նչ սահմանումներ, ներըմբռնումներ, մեկնաբանութիւններ կ'առաջադրէ, զորս նախապէս կարող էին չներկայանալ իր մտքին մէջ: Այսինքն մտային ու մտաւորական ի՞նչ զգայնութիւն ձեռք բերած կ'ըլլայ պատմաբանը, երբ կ'ուսումնասիրէ թեմա մը, որ իրեն արդէն մաս կը կազմէ:

Այս մտորումները անխուսափելի էին, երբ կը կարդայի ազգային եւ պետական շահի, զիջումներու ու «դաւանանութեան», քաղաքական կամ կրօնական

գաղափարախօսութիւններու, միջազգային իրաւունքի, ռեալփոլիթիքի, տարածքային ամբողջականութեան, իշխանաւորի տեսակի, մեծ ու փոքր պետութիւններու յարաբերութիւններու, իշխանութեան եւ իշխանութեան փոխանցման օրինակարգութեան մասին:

Թերեւս Լեւոն Տէր-Պետրոսեանն ալ դժուարութիւն ունէր գրելու պատմութիւն մը, որ անկախ ըլլար իր փորձառութենէն: Ինչպէ՞ս էր պէտք պատմութիւն գրել, որ մէկ կողմէն օգտուէր իր փորձառութենէն առանց, սակայն, միւս կողմէն զո՞ր դառնալու եմթականայական դատողութիւններու: Ի վերջոյ այս պատմաբանը պատմութիւն կերտած ու տակաւին կերտելիք մարդ էր երբ 2007-ին սոյն հատորը լոյս տեսաւ, որմէ տարի մը չանցած վերադարձաւ քաղաքական դաշտ:

Պատմաբանի եւ պետական գործիչի միջեւ լարման լուծումը Տէր-Պետրոսեանը կարծէք կը դիրացնէ օգտագործելով «յետադարձ քաղաքագիտութեան» (retrospective politology) ընծայած տեսանկիւնն ու բառամթերքը:³

Փաստօրէն հեղինակը ընթերցողին կը զգուշացնէ այս մասին գրքի «Առաջաբանի» առաջին նախադասութեամբ իսկ.

«XI-XIV դդ. Մերձավոր արեւելլան իրադարձութիւնները հետահայաց քաղաքագիտութեան տեսակետից դիտարկելիս՝ Կիլիկյան Հայաստանի եւ Արեւելքում հիմնված խաչակրաց պետությունների պատմության ընդհանրություններն աչքի է զարնում առաջին իսկ հայացքից» (Էջ 5):

Այնպէս կը թուի, որ յետահայեաց քաղաքագիտութիւնը ընդհանրութիւններ կրնայ գտնել ոչ միայն Կիլիկեան Հայաստանի ու Խաչակիրներու հիմնած պետութիւններուն միջեւ, այլ նաեւ այդ պետութիւններու ու ներկային միջեւ: Պատմութիւնը չի կրկնուիր, անշուշտ, սակայն պատմութեան «գործառոյթներ»

³ «Յետահայաց քաղաքագիտութիւնը» անցեալը ճանչնալու քիչ ծանօթ մեթոտ է: Այլերտ Ղազարեանը հետեւեալ բացատրութիւնը կու տայ այդ մասին. «Ռետրոսպեկտիվ մեթոդի էությունն այն է, որ զարգացման ավելի բարձր աստիճանի միջոցով գնահատվում է նախորդ աստիճանը: Յուրաքանչյուր նախորդ փուլ կարելի է հասկանալ ավելի բարձր փուլերի հետ ունեցած կապի միջոցով: Այս գործընթացի հիմքում ընկած է համաշխարհային պատմության միասնականության գաղափարը: Ռետրոսպեկտիվ մեթոդը կիրառելի է ոչ միայն առանձին երեւույթների, այլև ամբողջական դարաշրջանների ուսումնասիրության դեպքում: Ինչպէս ասում են՝ մարդու անատոմիան բանալի է կապիկի անատոմիան հասկանալու համար: Ռետրոսպեկտիվ մեթոդի կիրառման դժվարությունն այն է, որ տարբեր ժամանակաշրջանի օբյեկտները, երեւույթները, գործընթացները գնահատելիս, համեմատելիս պէտք է հաշվի առնվեն նաեւ ամեն մի ժամանակաշրջանի յուրահատկությունները»: (Պատմության առարկան, գործառութիւններ եւ հիմնական մեթոդները, «Բանբեր Երեւանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2017, № 3 (24), էջ 45-57:

րու» էութիւնը կրնայ կրկնուիլ: Պատմութեան շրջագիծի հիմնական պայմաններու կրկնութիւնը կրնայ երեւոյթներու, վերաբերմունքի, խնդիրներու լուծումներու մնանութիւններ յառաջացնել: Այս ձեւով է, որ պատմութիւնը ունի ներուժը՝ մեզի բաներ սորվեցնելու: Այս պարագային հեղինակի փորձառութիւնն է, որ կարելի կը դարձնէ պատմութեան ճիշդ ընկալումը:

Թերեւս, այս բոլորը ինծի այդպէս կը թուին:

Թերեւս, այդ բոլորը պատահականութեան արդիւնք է, վստահ չեմ կրնար ըլլալ: Թերեւս, հեղինակը այդ հարցադրումներուն ու պատասխաններուն պիտի հասներ, եւ անսովոր չափի աշխոյժ ոճով ու շեշտաւորումներով գրէր՝ նոյնիսկ եթէ այդ գործը գրած ըլլար իր քաղաքական դաշտ մտնելէն առաջ: Ամենայն դէպս չեմ կրնար երեւակայել, որ պատմաբանը ինքը առ նուազն չգիտակցէր այդ փոխազդեցութեան:

Սակայն, ինչպէս նախապէս նշեցի, ընթերցողը իրաւունք ունի իր ձեւով ընկալելու հեղինակի ներկայացուցած անցեալի պատկերացումներու ընթացքը: Իսկ այս ընթերցողի ընկալմամբ Տէր-Պետրոսեանի «Խաչակիրները եւ հայերը» գործի Բ. հատորը, բացի պատմագիտութեան համար իր ամենէն բարձր արժէքէն, կը ներկայանայ նաեւ որպէս դասընթացք մը. ինչպէ՞ս լուծել քաղաքականութեան ու պատմութեան բարդ յարաբերութիւնը՝ ի նպաստ երկուքի օգտին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Յօդուածը սկսնարկ մը կը նետէ քաղաքականութեան եւ պատմութեան բարդ յարաբերութեան վրայ, այն հազուագիւտ պարագաներուն, ուր պատմաբանը կը դառնայ քաղաքական ու պետական գործիչ եւ անկէ ետք կը վերադառնայ պատմաբանի իր աշխատանքին: Որո՞նք են մնան գիտնականի համար մարտահրաւերները: Պատմաբանը ինչպէ՞ս պիտի օգտագործէ պատմութեան գործօն մասնակցութեան իր փորձառութիւնը՝ որպէս պատմաբանի առաւելութիւն: Յօդուածի հեղինակը մնան եւ այլ հարցումներ կը բարձրացնէ զանոնք կիրառելով Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի 2007 թուականին հրատարակած «Խաչակիրները եւ հայերը» գործի Բ. հատորին: Այս հատորին մէջ Տէր-Պետրոսեանը կը վերականգնէ այն օրէնքները, որոնք կը ճշդէին Կիլիկիոյ մէջ իշխանութեան ժառանգութեան պայմանները եւ կը վերլուծէ այդ օրէնքներու տառի եւ ոգիի կիրառման աստիճանները: Հեղինակը կը նշէ բազմաթիւ պարագաներ, խնդիրներու մօտեցումներ, ինչպէս նաեւ աղբիւրներու ընկալումներ, որոնք կրնային ուշադրութենէ վրիպիլ կամ անտեսուիլ եթէ պատմաբանը քաղաքականութեան այդ փորձառութիւնը ունեցած չըլլար: Պատմաբանը, այս իմաստով, օգտուած է «յետադարձ քաղաքագիտութեան» ընծայած տեսանկիւնէն:

GERARD LIBARIDIAN

Professor Emeritus

University of Michigan

**A READER'S REMARKS ON THE SECOND VOLUME OF LEVON TER-
PETROSSIAN'S "THE CRUSADERS AND ARMENIANS"**

(When the Statesman Returns to His Craft as a Historian)

Keywords: Byzantium, Christianity, Cilicia. Cilician princes, kings, queens, diplomacy, history, international law, Islam, legitimacy of power, Levon Ter-Petrossian, national interest, politics, retrospective politology, succession, territorial integrity, treaties.

The article looks at the complex relationship between politics and history from the angle of the rare case of a historian who becomes a political leader and statesman and then returns to the writing of history. What are the challenges facing such a professional? How has the historian used his active experience in making history, to his advantage as a historian? The author raises these and other questions as it applies to the work produced in 2007 by the historian and first President of Armenia Levon Ter-Petrossian, the second volume of the “The Crusaders and the Armenians,” (in Armenian). In this work, the historian reconstructs the rules and laws of the succession of rulers of the Cilician Armenian state, and analyzes the degree to which these were actually followed in their letter and spirit. The author indicates many areas where the active political and diplomatic life of the historian has sensitized him to a number of issues, aspects of problems and to the reading and interpretation of sources that he might have missed or neglected otherwise. He has, in this case, benefited from the “retrospective politology” approach to the past.

ԱՋԱՏ ԲՈՂՈՅԱՆ

ՀՀ ԳԱՆ Արևելյագիտության ինստիտուտ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՈՒ ՉԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ ԺԳ ԳԱՐԻ ՍԿՉԲԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Եկեղեցու նվիրապետական համակարգ, Կիլիկիայի թագավորություն, Հայոց կաթողիկոսություն, Վրաստան, ԺԲ դ. եկեղեցական փոխհարաբերություններ, հայագիտություն, վրացագիտություն:

Հայոց եկեղեցին եւ նրա նվիրապետական կառույցը. Ամենայն Հայոց կաթողիկոսության նվիրապետական կառույցի սահմանները ԺԲ դարի ընթացքում արդեն տարածվում էին Բյուզանդիայի արեւմտյան սահմաններից մինչեւ Կասպից ծով, Վրաստանից մինչեւ Եթովպիա. այսպէս կարելի է հասկանալ՝ մյուս սկզբնաղբյուրների հետ բաղդատելով նաեւ Ներսէս Դ Ծնորհալու հետեւյալ տեղեկությունը. «... որք յարեւելս՝ ի սեփական աշխարհս Հայաստանեայց բնակեալք, եւ որք յարեւմտեան կողմանս սահեալք մտէհոյութեամբ, եւ որք ի Միջերկրայս...»¹: Հայոց եկեղեցու ազդեցության ոլորտի աշխարհագրական լայն ընդգրկումը Փոքր Ասիայում եւ դրա արեւելքում, արդեն արձանագրված է ԺԲ դ. Բ կեսի խաչակրաց պատմիչ Վիլհելմ Սուրացու աշխատության մեջ, ուր խոսելով շուրջ կես դար առաջ տեղի ունեցած դեպքերի մասին, կաթողիկոսին խաչակրաց պատմիչն անվանում է հայերի գլխավոր քահանայապետ, որի իշխանությունը տարածվում էր Կասպադովկիայի, Մեդիայի, Պարսկաստանի եւ երկու Հայաստանների վրա²: Ստեփանոս Օրբելյանն էլ ԺԴ դարի սկզբում այսպէս է դիմում Գրիգոր Է Անավարզեցի կաթողիկոսին. «... հայր հանուրց սեռից Հայկայ եւ կաթողիկոս տիեզերական ի դրանէ Հոնաց եւ Լփնաց, ի ծովէ Կասպից եւ ի լեռնէ Կովկասեաց մինչ ի սահմանս եգիպտական եւ ի ծովն արեւմտային, ուր գիշերն ագանի ակն տու[ու]նջեմային»³: Միեւնույն ժամանակ կենտրոնախույս քաղաքական նկրտումներին հարմարված Հայոց եկեղեցու տարբեր գործիչներ էլ, նոր կաթողիկոսական աթոռներ էին ստեղծել Հոնիում, Մարաշում, Աղթամարում եւ նույնիսկ Եգիպտոսում: ԺԲ դարի 30-ա-

¹ ԹԸ 1871, էջ 1, հմմտ. Բոզոյան 2000, էջ 82-84:

² «Cui synodo interfuit maximus Armeniorum pontifex, immo omnium episcoporum Capadocie, Medie, Persidis et utriusque Armenie princeps et doctor eximius, qui Catholicus dicitur», տե՛ս Guillaume de Tyr 1986, p. 699. 18. 1815-17:

³ Ստեփաննոս 1861, էջ 330:

կան թթ. ապրած պատմիչ Մատթեոս Ուոհայեցու տեղեկությամբ Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռների վրա ժամանակ առ ժամանակ կարելի էր հաշվել չորսից ավելի կաթողիկոս⁴: Այդ աթոռները կարելու էր էին կատարում Կիլիկիայի եւ Վրաց թագավորությունների, խաչակրաց պետությունների, Իկոնիայի սուլթանության, ինչպես նաեւ Դանիշմանյան, Ծափի Արմենների, Դվինի եւ Ծաքիի Ծաղաղյան, Այլուբյան եւ Ատրպատականի էլկտուզյան ամիրայությունների հայկական ազգաբնակչության հոգեւոր-եկեղեցական կյանքում: Հակաթոռ կաթողիկոսությունների վերացման կամ Հայոց եկեղեցու հետ վերամիավորման համար սկսված պայքարում կարելու էր կատարեցին Բարսեղ Ա (1105-1113) եւ Գրիգոր Գ (1113-1166) հայրապետները, մանավանդ անձնախաղէպ էր Կարմիր վանքում 1113/4 թ. տեղի ունեցած ժողովը⁵, որի բացառիկության մասին «Ընդհանրական թղթում» ակնարկում է Ներսես Ծնորհալին⁶:

Հայոց եկեղեցում հակաթոռ կաթողիկոսական աթոռների բազմացման միտումը, որը նկատելի է ԺԱ դարի վերջին եւ ԺԲ դարի սկզբին, նոր տարածում է ստանում Լեւոն Բ Ռուբինյան իշխանի (1187-1198), այնուհետեւ՝ թագավորի (1198-1219) իշխանության տարիներին: Այսպես օրինակ, սկսած 1193 թ., երբ մահացավ Գրիգոր Տղա կաթողիկոսը, վիմագիր արձանագրություններում իրեն Հայոց կաթողիկոս է անվանում Անիի արքեպիսկոպոս Բարսեղը⁷, որի թեկնածությունը կաթողիկոսական գահին տիրելու համար, ըստ Ներսես Լամբրոնացու, առաջարկել են Արեւելից կողմանց վարդապետները Գրիգոր Ե Քարավեժի (1193-1194) ողբերգական մահվան ժամանակներից⁸: Եթե ԺԱ դարի վերջի եւ ԺԲ դարի սկզբին առաջացող կաթողիկոսական աթոռները ձեւավորվում էին տարբեր հայկական քաղաքական ուժերի թելադրանքով, ապա ԺԲ դարի վերջին կաթողիկոսական իշխանության գործերին միջամտելու գործընթացը հայկական էկումենետւմ փորձում է ամբողջովին իր ձեռքը վերցնել Կիլիկիայի հայկական թագավորությունը, որին հիշյալ դեպքում հակադրվում են Հյուսիս-արեւելից կողմանց Հայոց եկեղեցու հոգեւորականները: Միակ բացառությունը Սեբաստիա քաղաքում Անանիա հակաթոռ կաթողիկոսի օժտման էր⁹, որն էլ, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր հզորացող Իկոնիայի սուլթանության քաղաքական նկրտումներով: Կիրակոս Գանձակեցին անդրադառնալով ԺԳ դարասկզբին, Գրիգոր Ապիրատի մահից հետո Հայոց կաթողիկոսական աթոռի մասնատվածության խնդրին, ամփոփում է. «... բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի յերիս՝ մի բունն, զոր էառն Յովհաննէս, որ

⁴ **Մատթեոս 1898**, էջ 205-206, 210-211, 215-216, 220-222, 228-230:

⁵ **Օրմանեան 1912**, սյուն 1352-1354:

⁶ **ԹԸ 1871**, էջ 2 :

⁷ **Մաթեոսյան 1997**, էջ 66-68:

⁸ **RHC d. a.**, t. I, p. 594:

⁹ **Պէրպլերեան 1964**, էջ 286-289, թ. 11-12, էջ 360-363, հմմտ. **Berbérian 1966**, p. 233-243:

ի Հռոմկլայն, եւ միւսն ի Սեւաստ, գոր ապատամբեցաւ Անանիա, եւ միւս եւս ի կղզւոջն, որ կոչի Աղթամար, Դաւիթ անուն»¹⁰:

Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգի հիմնական կաթողիկոսական աթոռները. Մատթեոս Ուոհայեցին խոսելով ԺԱ դարավերջի Հայոց եկեղեցու վիճակի մասին գրում է. «... ի չորս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի (Լուսաւորչի -Ա. Բ.). զի ահա Տէր Վահրամ յԵգիպտոս, եւ Տէր Թեոդորոս ի Հոնին, եւ Տէր Պաղոս ի Մարաշ քաղաքն. եւ սոքա իւրաքանչիւր ոք առնէին ձեռնադրութիւնս եւ արձանէին եպիսկոպոսունս եւ տային արհմութիւնս սուրբ ձիթոյն, եւ ի նոցանէ արհմէին քահանայք, եւ լինէր պատարագ եւ մկրտութիւն եւ պսակն կուսանաց: Եւ էր այս ամենայն սուգ մեծ ի վերայ Եկեղեցւոյն Աստուածոյ, վասն զի մի փարախն ոչխարաց ընդ չորս հաւտապետութիւնս բաժանեցաւ, եւ գայլք եղեն պահապանք հաւտին «Բրիստոսի»¹¹: Հետագայում, պատմությունը որոշ սրբագրությունների ենթարկեց կաթողիկոսական աթոռների այս ցանկը: Բարսեղ Ա-ը գահընկեց արեց Հոնիի կաթողիկոս Տէր Թեոդորոսին¹², 1093 թ. մահացավ մինչ այդ կաթողիկոսական իշխանությունից հրաժարված, Մարաշի Տէր Պողոսը¹³: 1113 թ. նոր կաթողիկոսական աթոռ հայտարարվեց Աղթամարը, որի պատմությունը շարունակվեց մինչեւ Ի դարասկզբի ողբերգական իրադարձությունները, իսկ Եգիպտոսի տեղական աթոռի մասին ԺԲ դարում եւ դրանից հետո հայ պատմագրության մեջ այլեւս տեղեկություններ չեն պահպանվել: Այդ իսկ պատճառով անդրադառնանք հիմնական եկեղեցական կենտրոններին, որոնք ԺԲ դարի սկզբից նշանակալի դեր են կատարել ազգային եկեղեցու նվիրապետական կառույցում:

Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը. Խաչիկ Բ-ը գահը ժառանգելով Բյուզանդիա արքայից Պետրոս Գետադարձից, ժամանակավորապես հաստատվեց Սեբաստիայում՝ Արծրունիների կալվածքում, իսկ վերջինիս մահից հետո՝ Գագիկ Կարսեցի թագավորի միջնորդությամբ եւ Բյուզանդական կայսրության թուլիտվությամբ, կաթողիկոսական գահ բարձրացավ Գրիգոր Բ Վկայասերը, որն սկզբում հաստատվեց Ծամնդավում, ապա՝ Կարմիր վանքում: Նրանից հետո, շուրջ մեկ դար, Ամենայն Հայոց կաթողիկոսական գահին էին բազմում իր տոհմի՝ Պահլավունի ազնվական տան ներկայացուցիչներ: Սկսած Գրիգոր Գ-ի ժամանակներից, շուրջ 150 տարի Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի նստավայր դարձավ Եփրատի ափին գտնվող Հռոմկլա ամրոցը: Կաթողիկոսարանը Մերձավոր Արեւելքում ձեռք բերեց հսկայական եկեղեցաքաղաքական հեղինակություն, ստեղծեց եպիսկոպոսական աթոռների մի խիտ ցանց, որի գլխին էր կանգնած Հռոմկլայում նստող Ամենայն Հայոց կաթողիկոսը:

¹⁰ Կիրակոս 1961, էջ 149:

¹¹ Մատթեոս 1898, էջ 229-230:

¹² Նույն տեղում, էջ 240-241:

¹³ Նույն տեղում, էջ 244:

Մահմեդական տերություններն այս շրջանից սկսեցին Հռոմկլայում նստող Ամենայն Հայոց կաթողիկոսին անվանել Հայոց խալիֆ¹⁴: Սկսած Բարսեղ Ա-ից, Հայոց կաթողիկոսը փորձում էր միասնական դարձնել այս հոգեւոր աթոռը Մերձավոր Արեւելքում ցրված ողջ հայ ազգաբնակչության համար: Բարսեղ Ա-ը կարողացավ խնդիրը լուծել մասամբ, կաթողիկոսական իշխանությունից զրկելով Հոնիի Թեոդորոս եւ Մարաշի Պողոս գահակալներին, որոնք աթոռ էին բարձրացվել դեռեւս Ֆիլարետ Վարաժնունու իշխանության տարիներին: Այս քայլով Բարսեղ Ա-ը Կարմիր վանքի կաթողիկոսարանում կարողացավ միավորել երեք կաթողիկոսական ճյուղերի՝ Պահլավունի (Գրիգոր Բ), Պետրոս Գետադարձի (Թեոդորոս) եւ Վարագավանքի առաջնորդության (Պողոս) ժառանգորդների սրբությունները, դրանք դարձնելով համահայկական¹⁵: Դրա շնորհիվ ամրապնդվեցին Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի դիրքերը, ավելացնելով Ամենայն Հայոց հայրապետի պահպանության ներքո գտնվող սրբազան մասունքների թիվը: Այնուամենայնիվ, հիշատակված դեպքերը դեռեւս մասնակի քայլեր էին Հայոց կաթողիկոսի իշխանությունը ողջ հայկական ազգաբնակչության կողմից ճանաչել տալու ճանապարհին: ԺԲ դարի ընթացքում, ինչպես տեսնում ենք Մատթեոս Ուոհայեցու շարադրանքից, Հայոց կաթողիկոսական իշխանություններ կային Հռոմկլայում, Աղվանքում, Եգիպտոսում, Աղթամարում: Սկսած Գրիգոր Գ-ից Ամենայն Հայոց կաթողիկոսությունն ակտիվ քաղաքականություն սկսեց վարել, որի հիմնական նպատակներից մեկն էլ միմյանց թշնամացած հայկական իշխանությունների հաշտեցումն էր, միասնական պետական համակարգում կիլիկյան իշխանական տների քաղաքական միավորումը: Հաշտարար դատավորի այս գործառույթը, պարզվեց, կարելի է ավելի արդյունավետ կատարել հեռվից. այդ իսկ պատճառով կաթողիկոսական աթոռը 1148/9 թ., ավելի քան մեկ հարյուրամյակ հաստատվեց կաթողիկոսների սեփական ամրոց Հռոմկլայում, որը ենթակա չէր Հայոց իշխանական տներից որեւէ մեկին: ԺԲ-ԺԳ դարերի ընթացքում Ամենայն Հայոց կաթողիկոսությունը եւ եկեղեցին հսկայական դեր կատարեցին թե՛ Կիլիկիայի հայկական պետության կայացման, եւ թե՛ Վրաց պետության կառուցվածքում գտնվող Զաքարյան իշխանության ամրապնդման գործում: Եթե Կիլիկիայի տարածքում Հայոց կաթողիկոսներն հնարավորություն ունեին միջամտել գործերին ուղղակի, ապա Զաքարյաններին հպատակ իշխանական տարածքներում Հռոմկլայի ազդեցությունը նվազագույն էր: Միայն հատուկ դեպքերում էին տեղի եպիսկոպոսները դիմում Ամենայն Հայոց կաթողիկոսական իշխանության միջամտությանը:

¹⁴ Տիտղոս, որի արձագանքը հասնում է մինչեւ ԺԸ դար. **տե՛ս Ա. Բողոքան 2000**, էջ 83-85, **Դանիելյան 2016**, էջ 200-285, **Կոստիկեան 2019**, էջ 122- 132: Ղաթի մատենագիր Իբն Աբի ալ-Ֆադայիի կողմից Ամենայն Հայոց կաթողիկոսին տրված այս տիտղոսի օգտագործման մասին տե՛ս **Cecere, 2020**, էջ 209-256 :

¹⁵ **Օրմանեան 1912**, սյուն 1311-1313, 1314-1316:

Բ. Աղվանից կաթողիկոսությունը. Նվիրապետական այս աթոռը հիմնադրվել է Դ - Ե դարերում, այն՝ Վրաց եւ Հայոց կաթողիկոսությունների հետ մասն էր կազմում Տիեզերական եկեղեցու: Է դարից հետո, երբ Վրաց կաթողիկոսական աթոռը բաժանվեց Այսրկովկասի հակաքաղկեդոնական «կռալիցիայից» եւ անբաժանելի մաս դարձավ օրթոդոքս եկեղեցու բյուզանդական թեւի, Հայոց եւ Աղվանից կաթողիկոսությունները հետագա նվիրապետական գործունեությունը շարունակեցին միեւնույն եկեղեցական նվիրապետության շրջանակներում, ուր դարերի ընթացքում Հայոց կաթողիկոսությունը ձեռք էր բերել հավասարների մեջ առաջինի կարգավիճակ: Այս իրավիճակը շարունակվեց մինչեւ Բագրատունյաց թագավորության կործանումը¹⁶: Վավերագրերով եւ սկզբնաղբյուրային վկայություններով ապացուցված է, որ ԺԱ դարի ընթացքում Աղվանից կաթողիկոսությունը սերտանել է Հայոց եկեղեցու ստեղծած նվիրապետական համակարգի մեջ. իբրեւ Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցի անդամ՝ շարունակելով կարեւոր դերակատարություն ունենալ Հյուսիս-արեւելյան Հայաստանի եւ անդրկուրյան Կովկասի եկեղեցաքաղաքական կյանքում: Բագրատունիների կործանումից հետո, Կյուրիկյան իշխանապետության տարածքում կարեւոր նշանակություն ստացավ Աղվանից կաթողիկոսությունը, որը դիտվում էր այդ պետական միավորման տարածքում ամենաբարձր հոգեւոր իշխանություն: ԺԱ-ԺԲ դարերում, երբ Կյուրիկյանները ստանձնեցին Հայոց թագավորության շարունակողի կարգավիճակ, փորձ կատարվեց նվիրապետական համակարգում ընդգծել Աղվանից կաթողիկոսի ինքնավար կարգավիճակը: Ի դեպ, Մատթեոս Ուոհայեցին Կյուրիկյանների անվանում է Աղվանից թագավորներ¹⁷, թեպետ հայտնի է, որ Տաշիր-Ձորագետը մինչ այդ երբեք չի մտել Աղվանից նվիրապետական աթոռին ենթակա տարածքների մեջ: Անի մայրաքաղաքից Հայոց կաթողիկոսարանը դուրս բերելուց հետո, Աղվանից կաթողիկոսի ձայնը մի կարճ ժամանակ կարեւոր նշանակություն ստացավ Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում: Այս երեւույթը հաստատագրվեց Լոռեում՝ Կյուրիկյանների մայրաքաղաքում, Բարսեղ Ա-ի օծումով, որի ժամանակ Աղվանից կաթողիկոսի ձեռամբ կատարվեց վերջինիս գահակալությունը, ի հարկեւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի համաձայնությամբ: Այս գործառույթով հայկական էլկումենտում բավական բարձրացավ թե՛ Կյուրիկյանների, եւ թե՛ Աղվանից կաթողիկոսի հեղինակությունը: Վրաստանում թագավորական իշխանության հզորացմամբ եւ Կյուրիկյանների թուլացմամբ, ԺԲ դարի սկզբներից հետո գիտես երկրորդական պլան

¹⁶ **Bozoyan 2016**, p. 404-405.

¹⁷ Կյուրիկյաններն այս տիտղոսով հայտնի են նաեւ ԺԲ - ԺԳ դարերի մի շարք պատմագրական երկերում. տե՛ս **Մատթեոս 1898**, էջ 80, 145, հմմտ. **Մաթեոսյան 1982**, էջ 100-104:

մղվեց Աղվանից կաթողիկոսների իշխանությունը տարածաշրջանում: Բարսեղ Ա կաթողիկոսն իր հետագա գործունեությամբ փորձեց կրկին, Ամենայն Հայոց կաթողիկոսարանի կողմը իջեցնել Հայոց եկեղեցու Ավիրապետական համակարգում կշեռքի մտարը, իր իշխանությունը հաստատել տալով սելջուկ սուլթան Մելիք Ծահից ստացած հրովարտական: Աղվանից կաթողիկոսությունը ԺԲ-ԺԳ դդ. գրեթե բոլոր սկզբնաղբյուրներում դիտվում է Ամենայն Հայոց կաթողիկոսության ստեղծած Ավիրապետական կառույցի անքակտելի մաս: Մեզ հետաքրքրող դարաշրջանում Աղվանից կաթողիկոսը Հովհաննեսն էր, որին Կիրակոս Գանձակեցին գահակալ է համարում մոտավորապես 1196-1236 թթ.¹⁸: Հովհաննեսի սկզբնական նստավայրն է եղել Չարեք բերդի մոտակայքում գտնվող քարայրը, որը ժառանգել էր Ասխորդ՝ Բեժգեն եւ Ստեփաննոս կաթողիկոսներից¹⁹: Այլազգիների կողմից հալածվելով, Հովհաննեսն ապաստանել էր Չաքարե եւ Իվանե իշխանների տարածքում, իսկ վերջինս նրան բնակեցրել էր Միափոր գավառի Խամշի վանքում²⁰:

Գ. Աղթամարի կաթողիկոսությունը. Հայոց եկեղեցու Ավիրապետական կառույցը նոր ցնցման ենթարկվեց 1113 թ.: Բարսեղ Ա-ի կողմից ձեռնադրված 13-ամյա կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու դեմ ապստամբելով, Աղթամարում հակաթոռ կաթողիկոս հռչակվեց Խեղենեկ Արծրունու որդի Դավիթ եպիսկոպոսը, իմք դնելով մի նոր, հայրապետական աթոռի²¹: Խեղենեկյան-Արծրունիների իշխանական տոհմը²² Աղթամար կղզու եւ Ամյուկ անառիկ ամրոցի վրա պահպանեց իր ավատական իշխանությունը մինչեւ ԺԷ դարի սկիզբը, ամուսնական կապ հաստատելով Սեֆեդիյան-Արծրունիների ճյուղի հետ²³, ամեն անգամ իրենց հարազատների միջավայրից օժել տալով նաեւ Աղթամարի կաթողիկոսական աթոռի նոր գահակալներին: Թեպետ Հայոց եկեղեցու Ավիրապետական կառույցը 1114 թ. Սել լեռան Կարմիր վանքում տեղի ունեցած ժողովում մերժեց ստեղծված հակաթոռ Աղթամարի կաթողիկոսական

¹⁸ Կիրակոս 1961, էջ 291:

¹⁹ Նույն տեղում, էջ 178:

²⁰ Նույն տեղում, էջ 182:

²¹ Ալինեան 1920, էջ 34-35: Վարդան Արեւելցին խոսելով այս իրադարձության մասին, հիշատակում է, որ Դավիթին կաթողիկոս են ձեռնադրել հինգ եպիսկոպոսներ, պատճառաբանելով որ Վահանիկին եւս Գագիկի որդի Աբուսահիլ օրոք ձեռնադրել են Ձորո վանքում, ուր գտնվում են Ս. Գրիգորի պատարագի սեղանը, գավազանը, մաշկեղեն գոտին, Ս. Հռիփսիմեի հողաթափը, արյունոտ պերճոգոտը (ժապավեն) եւ շղարշ-դաստառակը: Հիշատակված մասունքները հին ժամանակներից ի վեր պահպանվել են Արծրունիների թագավորության եւ հոգեւոր իշխանության կենտրոն Աղթամարում, որը տեղի ազգաբնակչությունն արժանի էր համարում դարձնել պատրիարքական նստավայր, տե՛ս Վարդան 1861, էջ 153:

²² ՀԺՊ, էջ 482-483:

²³ Ալինեան 1920, էջ 42 եւ շար.:

աթողը²⁴, այնուամենայնիվ, այն իր մեկուսացված կարգավիճակը պահպանեց մինչև ԺԵ դար, իսկ հետագայում՝ իբրև առանձին նվիրապետական աթոռ ճանաչվեց Վաղարշապատ տեղափոխված կաթողիկոսների կողմից²⁵: Մինչև 1207 թ. Աղթամարի կաթողիկոսական աթոռը գտնվում էր Ծափի Արմենների իշխանության տարածքում²⁶, որը դրանից հետո անցավ Այլուբյաններին, ապա՝ մոնղոլներին: Թեպետ այս աթոռը ԺԲ դ. չէր ճանաչվում Ամենայն հայոց կաթողիկոսարանի կողմից, այնուամենայնիվ հայտնի է, որ 1178 թ. Ծափի Արմենների իշխանության տարածքներում գտնվող Բզնունիքի, Մանազկերտի եւ Տարոնի եպիսկոպոսական աթոռները, որոնք ամրագրված էին Աղթամարի կաթողիկոսական գահին, մասնակցել են Հռոմկլայի եկեղեցական ժողովին: Միաժամանակ պարզված չէ եպիսկոպոսական այն աթոռների թիվը, որոնք տարբեր ժամանակներում ենթարկվել են Աղթամարի գահակալներին: Աղթամարի կաթողիկոսարանը ԺԲ-ԺԳ դարերում չէր ճանաչում Ամենայն Հայոց կաթողիկոսի գերագույն իշխանությունը, այնուամենայնիվ՝ առօրյա գործունեության ընթացքում համալրվում էր նաև Հռոմկլային մոտ կանգնած կամ նրանց դպրոցներում կրթություն ստացած կադրերով²⁷: Ծափի Արմենների պետության սահմաններից դուրս բնակվող հայ ազգաբնակչությանը կաթողիկոսական այս աթոռի ինքնազիխությունն (ավտոկեֆալություն) ընդունելի չէր: Այնուամենայնիվ, ըստ Ստեփանոս Օրբելյանի, Աղթամարի հետ ժամանակ առ ժամանակ համագործակցում էին Սյունիքի որոշ եպիսկոպոսական թեմեր, որոնց առաջնորդները ձեռնադրություն էին ստանում Աղթամարի Ս. Խաչում²⁸: Կիրակոսը ոգեւորությամբ է խոսում Վասպուրական աշխարհի սրբանուն հոգեւորականների մասին²⁹: Այնուամենայնիվ, Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում միակ հակաթոռ կաթողիկոսական աթոռը մնացել էր Աղթամարը, որը միայն ԺԵ դարի կեսերից հետո է մեծ եռանդով ձեռնամուխ եղել համահայկական խնդիրների լուծմանը³⁰:

Լեւոն Ա-ը եւ Հռոմկլայի կաթողիկոսարանի գործերը. Լեւոն Բ իշխանապետի կառավարման տարիներին, մանավանդ նրա թագավոր օծվելուց հետո, վերջինս տարբեր դրդապատճառներով մի քանի անգամ փորձեց միջամտել Հռոմկլայի կաթողիկոսարանի գործերին, նաև բռնի կերպով կաթողիկոսներին Հռոմկլայից Սիս կամ Տարսոն բերելով, փորձեց պետության քաղաքական

²⁴ **Օրմանեան 1912**, սյուն 1352-1354:

²⁵ **Ալինեան 1920**, էջ 71 եւ շար.:

²⁶ Ծափի Արմենների պետության սահմանների մասին տե՛ս **ՀԺՊ**, էջ 487-490, **Hewsen, 2001**, p. 129, maps 108, 110:

²⁷ Ներսես Լամբրոնացւ վկայությունը «առ Լեւոն» թղթում. **RHC d. a.**, t. I, p. 592:

²⁸ **Ստեփաննոս 1861**, էջ 251, հմմտ. **Ստեփաննոս 1986**, էջ 285:

²⁹ **Կիրակոս 1961**, էջ 183-185:

³⁰ **ՀՊ**, էջ 588-596:

շահերի համար օգտագործել բարձրագույն հոգեւոր իշխանությունը: Թագավորը մնան գործելակերպ էր ցուցադրում մաւր ասորի եկեղեցու նկատմամբ³¹, փորձում էր իր քաղաքական ծրագրերում օգտագործել Անտիոքի եւ Կիլիկիայի հույն³² եւ լատին պատրիարքություններն ու զանազան եպիսկոպոսական աթոռները: Այդ մասին առաջին ահագանգը տալիս է ԺԲ դարի վերջի ժամանակագիր Միքայել Ասորին, որը պատմում է Գրիգոր Ե Քարավեժ (†1193) կաթողիկոսի ընտրության եւ մահվան պարագաների մասին³³: Այս կաթողիկոսի ընտրության եւ ձերբակալման հանգամանքների մասին տեղեկանում ենք մաւր Ներսես Լամբրոնացու «Առ Լեւոն» թղթից (գրված՝ 1193/4 թ.)³⁴: Վերջին վավերագրից գիտենք մաւր, որ Գրիգոր Ե Ապիրատի հետ միաժամանակ, կաթողիկոսական իշխանության հավակնորդներից է եղել մաւր Բարսեղ Անիի արքեպիսկոպոսը: Պիտի ենթադրել, որ Անիի Բարսեղ արքեպիսկոպոսի, իբրեւ կաթողիկոսական գահի հավակնորդի եւ ժառանգորդի գաղափարն ամենայն հավանականությամբ հարազատ է եղել Կյուրիկյանների տարածքներին տեղ դարձած Զաքարյաններին, ինչպէս մաւր Անի քաղաքի հոգեւոր գործերում կարեւոր դերակատարություն ունեցող Ապիրատյանների կամ Հասանյանների իշխանական ընտանիքին, որոնք եւս իրենց համարում էին Պահլավունիների հետնորդներ³⁵: Ըստ Ներսես Լամբրոնացու՝ այս գաղափարների կողմնակից էին Հյուսիսարեւելյան Հայաստանի վարդապետները, որոնց Տարսուհի եպիսկոպոսն անվանում է Ձորագետցիներ: Ներսես Լամբրոնացին չի մոռանում մաւր Լեւոնին հիշեցնել, Քարավեժի ընտրության օրերին Հոռմկլաւում տիրող իրավիճակը. «Գիտէաք, եւ մեք զի մարդիկ էին մեռեալ ի Կլայն, եւ արծաթ էիք առեալ անտի եւ ոսկի...»³⁶: Լեւոն թագավորի կողմից կաթողիկոսական աթոռի նկատմամբ ոտնձգությունները շարունակվեցին մաւր ԺԳ դարի առաջին տասնամյակներին: Յետումնց անապատի վանահայր եւ Սսի արքեպիսկոպոս Հովհաննէսը, որը նպաստել էր Լեւոն Ա-ին Գրիգոր Ե Քարավեժի զահագրկման գործում³⁷, Լեւոն Ա-ի հովանավորությամբ 1203 թ. կաթողիկոս օծվեց՝ Հովհաննէս Զ Սսեցի (Մեծաբարո) անունով: Հայրապետական գահի համար պայքարում նրա հակառակորդն էր Սեբաստիայի եպիսկոպոս Անանիան, որին սատար էր կանգնել Իկոնիայի սուլթանությունը: 1203 թ. ստանալով Ռուկն աղ-

³¹ **Տեր-Պետրոսյան 1989**, էջ 8-9:

³² Անտիոքի մեկկիտ աթոռի Հայաստանի պատմության ԺԿ -ԺԳ դդ. խաղացած դերի մասին տե՛ս **Ղազարյան 2020**, էջ 400-404:

³³ **M. S. t. III**, p. 411-412, 413:

³⁴ **RHC d. a.**, t. I, p. 589:

³⁵ **Մաթեւոսյան 1997**, էջ 58-70:

³⁶ **RHC d. a.**, t. I, p. 589:

³⁷ **Կիրակոս 1961**, էջ 148:

Դին սուլթանի օժանդակությունը, Անանիան Սեբաստիայում օժտվում է հակաթոռ կաթողիկոս³⁸: Ծուռով, 1204/5 թ. Լեւոն Ա-ը գծտվում է նաև Հովհաննես Սսեցու հետ եւ փորձում նրան վճռել հայրապետական աթոռից³⁹: Այս բախումն ունեւր ամենայն հավանականությամբ նաև լուրջ քաղաքական պատճառներ, քանի որ դրանից առաջ Լեւոն Ա-ը հաշվեհարդար էր տեսել կաթողիկոսի փեսայի՝ Հեռի սեբաստոսի եւ նրա ընտանիքի հետ: Նրանց պաշտպանությամբ հանդես եկած կաթողիկոսը, օգնության էր կանչել Իկոնիայի սուլթանությամբ: Այս դեպքերից հետո, Հովհաննես Զ Մեծաբարոն ստիպված էր քաշվել Հոռմկլա, իսկ Կիլիկիայի իշխանության տարածքում Լեւոն Ա թագավորը կաթողիկոս օժել տվեց Արքակաղնի առաջնորդ, Մամեստիայի արքեպիսկոպոս Դավթիմ⁴⁰: Հիշատակված թվականից հետո էլ, հավանաբար, Դավիթ կաթողիկոսի ընտրությունից առաջ, Զաքարե ամիրսպասալարը Մխիթար Գոշի խորհրդով, դիմում է Կիլիկիայի Հայոց թագավորին եւ Հովհաննես Զ կաթողիկոսին, խնդրելով թույլ տալ օգտագործել շարժական սեղան եւ օգտվել համապատասխան եկեղեցական բարեհորոգումներից⁴¹: Լեւոն Ա-ը եւ Դավիթ Արքակաղնեցին Սիւ նայրաքաղաքում, ամենայն հավանականությամբ, 1204/5⁴² եւ 1207/8⁴³ թթ. միջակայքում գումարած իրենց ժողովում⁴⁴ հաստատում են ութ կետանոց մի կանոնախումբ եւ ուղարկում են Զաքարիային, իսկ Հովհաննես Զ Մեծաբարոն Լոռե է առաքում «եպիսկոպոս մի Մինաս անուն, եւ սարկաւագս եւ դպիրս, եւ քահանայս գեղեցկաձայնս, ասացողս պատարագին», ինչպես նաև. «վրան մի գմբեթարդ եկեղեցաձեւ եւ կազմողս եւ յօրինողս նմին, եւ սեղան մարմարեայ, եւ այլ սպաս պատարագաց»⁴⁵: 1211 թ. Դավիթ Արքակաղնեցու մահից հետո, Հովհաննես Զ Մեծաբարոն կրկին վերականգնեց իր իշխանության ամբողջականությունը Ամենայն Հայոց կաթողիկոսական գահի վրա,

³⁸ **Պերպերեան 1964**, էջ 286-289, թ. 11-12, էջ 360-363, հմմտ. **Berbérian 1966**, p. 233-243:

³⁹ **Կիրակոս 1961**, էջ 157-158, **Վարդան 1861**, էջ 182, հմմտ. **Օրմանեան 1912**, սյուն 1567-1568:

⁴⁰ **Սմբատ 1956**, էջ 215, հմմտ. **Մաթեւոսյան 2011**, էջ 49, տե՛ս **Օրմանեան 1912**, սյուն 1568-1570:

⁴¹ **Կիրակոս 1961**, էջ 167 – 168:

⁴² Այս իրադարձությունը մենք հակված ենք թվագրել Հեռի սեբաստոսի ապստամբության ժամանակներով:

⁴³ 1208 թվականն է առաջարկում Մաղաքիա արքեպիսկոպոսը. տե՛ս **Օրմանեան 1912**, սյուն 1576:

⁴⁴ Դ. Գեւորգյանը, հետևելով Վարդան Արեւելցուն, հակված է այս ժողովը թվագրել 1198 թ. (տե՛ս **Գեւորգյան, 2018**, էջ 221): Հեղինակը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ըստ Կիրակոսի մանրամասն նկարագրության, ժողովի իրավիրողն է Դավիթ Արքակաղնեցի կաթողիկոսը (**Կիրակոս 1961**, էջ 169): Բիչ անց նույն հեղինակն այդ իրադարձությունը կապում է հայ պատմագրության մեջ խաչակիրների կողմից Կ. Պոլսի գրավման սխալ թվագրման հետ եւ հետևեւցնում, որ Դավիթ Արքակաղնեցին իբրև թե գահ է բարձրացել 1207 թ. (տե՛ս **Գեւորգյան 2018**, էջ 222-223):

⁴⁵ **Կիրակոս 1961**, էջ 169-170:

ամենայն հավանականությամբ հաշտվելով Լեւոն Ա-ի հետ⁴⁶: Ահա Հովհաննէս Զ Սսեցու եւ Դավիթ Արքակաղնեցու հակամարտության տարիներին էլ տեղի են ունեցել Հյուսիս-արեւելյան Հայաստանում Զաքարե ամիրսպասալարի նախաձեռնած եկեղեցական ժողովները:

Հյուսիսարեւելյան Հայաստանը Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում. ԺԲ-ից մինչեւ ԺԳ դ. առաջին կեսը Վրաստանը Այսրկովկասի ամենահզոր թագավորությունն էր եւ փորձում էր իր սահմաններն ընդլայնել Կարինի Սալդուխյան, Դվինի եւ Գանձակի Ծաղաղյան, Ծահի Արմենների, Գանձակի եւ Առանի Էլկտուզյան ամիրայությունների հաշվին⁴⁷: Վրացական պետության զինուժը դեպի իրենց ավատական տարածքներն ուղղորդելու գործում կարելոր դեր էին կատարում Բարձր Հայքի, Տայքի, Գուգարքի, Վանանդի, Ծիրակի, Զավախքի, Այրարատի, Ուտիք-Արցախի, Սյունիքի դեռեւս իրենց հողերի վրա մնացած հայկական իշխանական տները, որոնք ԺԲ դարի վերջից համագործակցում էին վրացական արքունիքում հաջողությունների հասած Զաքարյան եւ այլ իշխանական տների հետ: Վրաստանի հարավային սահմաններում եւ դրանց մոտակայքում էին գտնվում Աղվանից կաթողիկոսարանն իր ողջ կառույցով, Հայոց եկեղեցու ավելի քան մեկ տասնյակի հասանող արքեպիսկոպոսական (Կարին, Անի, Տփլիս, Դվին եւն.) եւ եպիսկոպոսական աթոռներով (Կարս, Կեչառիս, Բջնի եւն.), վանքերով (Հաղբատ, Սանահին, Մարմաշեն, Հին եւ Նոր Գետիկ, Բոբայր, Թեղենիք, Դադիվանք եւն.) ու եկեղեցիներով, որոնք կարելոր դեր ունեին ազգային եկեղեցու նվիրապետական համակարգում եւ ամրագրված են ԺԲ դարի գրավոր եւ վիմագիր վավերագրերում⁴⁸: Այս տարածաշրջանի վարդապետների դերը բացառիկ էր Այսրկովկասի հոգեւորմշակութային կյանքում: Այդ մասին են վկայում Ներսէս Դ Ընորհալի, Գրիգոր Դ Տղա կաթողիկոսների նամակները, ուղղված հենց այս տարածաշրջանի հոգեւորականներին: Վրաց պետության ներկայացուցիչ Զաքարյանները ստիպված էին հաշվի առնել այդ հսկայական ուժի առկայությունը տարածաշրջանում, վրաց արքունիքում իրենց տեղն ապահովելու համար նրանք միջնորդի դեր պիտի խաղային երկու եկեղեցիների նվիրապետական կառույցների միջեւ: Զաքարյանները, Վաչուտյանները, Սադունյանները, Օրբելյանները, Պոռչյանները, Խաղբակյանները եւ տարածաշրջանի մյուս ավատատերերն իրենք էին

⁴⁶ **Սմբատ 1956**, էջ 217, **Մաթեւոսյան 2011**, էջ 49: **Մամուլէ Անեցի եւ շարունակողներ**, էջ 237, հմմտ. **Օրմանեան 1912**, այուն 1584-1585: Դրագարկի առաջնորդ Հեթում-Հեղիի միջնորդությամբ հաշտվելով Հովհաննէս կաթողիկոսի հետ, Լեւոն Ա-ը ամենայն հավանականությամբ պայման է դրել նրա առջեւ, կաթողիկոսական նստավայր դարձնել Դրագարկի վանքը, որը գտնվում էր Կիլիկիայի թագավորության սահմաններում:

⁴⁷ Վրաց պետության այդ շրջանի պատմության մասին տես՝ **Մարգարյան 1980**, **Նախորջեւոն օնթորօն Նարչքեյքո**, Ծ. III, թ. 263-348:

⁴⁸ Այս տարածաշրջանում Հայոց եկեղեցու հոգեւոր գործունեության մասին տես՝ **Մելիքսեթ-Բեկ 2016**:

սեփական ավատներում կառուցվող եկեղեցիների մեկենասները, եկեղեցական հաստատությունների հիմնական նվիրատուները: Հայկական եկեղեցիների նվիրատուների շարքում հաճախ հայտնվում էին նաև քաղկեդոնական դավանանք ընդունած ավատատերերը, ինչպես օրինակ Իվանե Չաքարյանը եւ իր սերունդները, որոնք կարծես փորձում էին հավասարակշռել տարբեր դավանական ավանդություններ ունեցող եկեղեցիների դերը տարածաշրջանում, մի շարք դեպքերում քաղկեդոնականներին հանձնելով նրանց հակառակորդների կառուցած եկեղեցիները⁴⁹: Հայոց եկեղեցու նշանավոր հոգևորականներից ոմանք էլ, ինչպես օրինակ Հովհաննես Սարկավազը՝ արժանանում էին Վրաց թագավորական ընտանիքի հատուկ ուշադրությանը⁵⁰: Մեծ Հայքի հյուսիս-արեւելյան գավառները կառավարելու համար Վրաց թագավորությունն ու տարածքների ավատական վերնախավն ամեն գնով փորձում էին բավարարել եկեղեցու կարիքները: Եկեղեցին էլ իր հերթին համագործակցում էր տարածաշրջանի ավատատիրական վերնախավի եւ Վրաստանի պետական հաստատությունների հետ: Վրաց եկեղեցու հետ փոխհարաբերությունների հստակեցման միտում ունի նաև Մխիթար Գոշի ողջ գործունեությունը⁵¹:

Այնուամենայնիվ, ԺԳ դարի սկզբին Չաքարյանների եւ եկեղեցու միջև առաջացան խնդիրներ, որոնց լուծման համար կողմերից զիջումներ էր պահանջվում: ***Տարածաշրջանի եկեղեցական կազմակերպության կարևոր պահանջներից մեկը հայոց դավանանքի անաղարտ պահպանությունն էր իր ծիսակարգով եւ ավանդություններով:*** Հյուսիս-արեւելյան Հայաստանում Հայոց եկեղեցու գլխավոր նպատակներից մեկն էլ հայ ազգաբնակչության բոլոր խավերի կողմից Հայոց եկեղեցու հավատամքի եւ ծիսադավանական ավանդությունների անսակարկ կատարումն էր: Հայոց եկեղեցին իր ունեցած միջոցներով փորձում էր պայքարել վրացադավանություն ընդունած գործիչների քաղաքականության դեմ եւ կանգնեցնել վրաց պաշտոնական եկեղեցու դյուրանքի ներքո հավատափոխ լինելու գործընթացը: Մխիթար Գոշի թղթի հիմնական ասելիքներից մեկը՝ կրկնակի մկրտության սովորույթի վերացումն է, որով

⁴⁹ Մուրադյան 1977, էջ 199-213, նույնի, 2012, էջ 84-105:

⁵⁰ Մելիքսեթ-Քեկ 2016, էջ 142-147:

⁵¹ Նույն տեղում, էջ 237-245, հմմտ. Մուրադյան 2008, էջ 325-332, նույնի, 2011, 171-266: Նմանատիպ գործունեության լավագույն օրինակները Մխիթարի թուղթն է, որը ձեռագրերից մեկում ունի հետեյալ պաշտոնական վերնագիրը. / «Թուղթ հաւատոյ ընդհանրական ի դիմաց Հայաստան[եայց] եկեղեցւոյ առ ազգն Վրաց եւ առ մեծ թագուհին Թամար եւ առ այլ մեծամեծ ղեղեփայս (sic) եւ առ կաթողիկոսն եւ առաջնորդք եկեղեցւոյ վասն նախատանաց մերոյ աւանդութեանս եւ վասն ազգացն միաբանութեան, որում ի խնդիր ելեալ էին մեծ ապաստարն Չաքարէ եւ Իւանէ այթաբակն հրամանաւ թագուհւոյն եւ կամեցան մեծ ժողովք միաբանել, առ որս ըստ արժանւոյն գրէ յայն թուղթ պատասխանոյ եւ հաւանութեան մեծ եւ աշխարհայոյս վարդապետն Մխիթար, եւ մականունն Գօշ կոչեցաւ, ի Գետիկ» (տե՛ս Մուրադյան 2011, էջ 195, ծան. 1):

«քույր» եկեղեցիները ոչ միայն ստորացնում են Քրիստոսի բուն հավատքը, այլև հակառակ են գնում Մեկ եկեղեցու համաքրիստոնեական ավանդությանը⁵²:

Վրաց թագավորության տարածքում տեղի ունեցած ժողովները եւ դրանց մասնակիցները. Բագրատ Դ (1027-1072) եւ Դավիթ Դ Շինարար (1089-1125) թագավորների օրոք, բարձրացող թագավորական իշխանության պայմաններում, երբ դրվում էին հայ-վրացական ապագա ուսմանական դաշնության հիմքերը, առաջին քաջերը կատարվեցին երկու եկեղեցիների միջև Է դարից հետո առաջացած հակամարտությունը հարթելու ճանապարհին: Այնուամենայնիվ, վրաց եկեղեցին օգտվելով պետական աջակցությունից, հայ քաղկեդոնականների հետ միասին ընտրեց ծիսադավանական հակամարտությունը խորացնելու ուղին, հակաճառական երկերի իրենց գիճանոցը համալրելով հունարենից կատարված մի շարք թարգմանություններով⁵³: Սրան ի պատասխան, Հյուսիս-արեւելքի հակաքաղկեդոնական հայ վարդապետները հանդես եկան հակաճառական մոր գրվածքներով, պաշտպանելով սեփական եկեղեցու ծիսադավանաբանական ուղղությունը⁵⁴: Վրաց եկեղեցու հրավիրած պաշտոնական ժողովներից հիշատակելի են Ղրտիլայի (1046 թ.)⁵⁵ եւ Ռուխ-Ուրբնիսի (1105 թ.)⁵⁶ հավաքները, ուր քննարկվել եւ շրջանառության մեջ են դրվել վրաց Ավիրապետության ծեսի ու հոգեւոր կեցվածքի համակեղեցական կանոններ: Հայոց եկեղեցական գործիչների հետ եւս Դավիթ Դ Շինարարի կառավարման վերջին տարիներին (1123-1125 թթ.)⁵⁷, ինչպես նաեւ ԺԳ դարի սկզբին՝ Թամա-

⁵² **Մուրադյան 2011**, էջ 196, սյուն 2, 254, սյուն 2262 սյուն 2:

⁵³ Վրաց մատենագրության մեջ ԺԱ-ԺԲ դարերում գրված հակահայկական հակաճառական գրվածքներին վերջերս անդրադարձել եւ հայերեն է թարգմանել Պ. Մուրադյանը (տե՛ս **Մուրադյան 2011**, էջ 37-170):

⁵⁴ Դարաշրջանի հայկական հակաճառական գրականության հուշարձանների մասին տե՛ս **Մուրադյան 2011**, էջ 15-36, 171-274: Կուզենայի մասնագետների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ ի տարբերություն հայկականի, վրաց միջնադարյան պատմագրությունն ու հակաճառական գրականությունը լի է Հայոց եկեղեցին ու հավատամքը ստորացնող պատմություններով եւ արտահայտություններով: Նայիր թեկուզ Մխիթար Գոշի թղթում այդ երեւույթի դեմ բողոքող հետեւյալ հատվածը. **Մուրադյան, 2011**, էջ 247, սյուն 1:

⁵⁵ **Մուրադյան 2011**, էջ 42: Այս ժողովին մասնակցած Մարմաշենի Սոսթենես վարդապետն հիշատակվում է ինչպես վրաց մատենագրական հուշարձաններում (տե՛ս **Մուրադյան 2011**, էջ 37 - 51) եւ Գրիգոր Մագիստրոսի թղթերում (ՄՀ, հ. ԺԶ, 277-278, 328), այնպես էլ հայերեն վիմագիր վավերագրերում (**Օրբելի 1914**, Կ. 442, 444)

⁵⁶ Հայագիտական աշխատանքներում միչև այժմ շրջանառության մեջ է դրվում 1103 թ. (տե՛ս **Մուրադյան 2011**, էջ 34, 53, **Գեւորգյան 2018**, էջ 218): Այս ժողովը եւ նրա հրավիրման թվականը Է. Գաբիճաշվիլին կապում է Դավիթ Շինարարի կողմից Կախեթ-Հերթի գրավման եւ այդ տարիքները Վրաց թագավորության սահմանների մեջ ներգրավելու իրադարձությունների հետ: Այդ մասին տե՛ս **ՅձծոձՅՅՅՅՅՅ 1978**, թ. 14-19:

⁵⁷ Այս վիճաբանությունների մասին տե՛ս **Մելիքսեթ-Բեկ 2016**, էջ 142-147, հմմտ. **Գեւորգյան 1918**, էջ 219:

րի (1184 - 1213) իշխանության տարիներին, տեղի են ունեցել համատեղ եկեղեցական ժողովներ վրաց թագավորների մասնակցությամբ, որոնց ընթացքում քննարկվել են երկու կողմերին հուզող ծիսադավանաբանական խնդիրներ:

ԺԱ - ԺԳ դարերի ընթացքում Վրաց բանակում երկարատեւ պատերազմների մասնակցող հայկական ստորաբաժանումներում զգացին, որ վրաց զինվորականները հնարավորություն ունեն պատերազմական ռազմարշավների ընթացքում եւ մանավանդ ճակատամարտերից առաջ մասնակցել պատարագին եւ հաղորդվել, իսկ հայոց եկեղեցու հոգեւորականներն ավանդական կանոնագրքի համաձայն իրավունք չունեին շարժական բեմի վրա պատարագ մատուցելու⁵⁸: Հայոց եկեղեցու ծիսակարգում տոների մեծամասնությունը ըստ կանոնակարգի չունեն իր օրացուցային օրը, քանի որ դրանց հիմնական մասը շարժական էր եւ նույն քրիստոնեական տոնը նշվում էր հայոց եւ վրաց եկեղեցիներում տարբեր օրերի: Այս տարբերությունը եկեղեցական հողի վրա բախումների պատճառ էին դարձել Հայոց եւ Վրաց եկեղեցիների հավատացյալների միջավայրում⁵⁹: Բանակի հայոց զորամասերի հրամանատարությունը, մանավանդ Ջաքարե ամիրապասալարը փորձեց վերացնել այդ հակասությունները, քանի որ նախատինքն էր արժանանում վրաց եկեղեցու սպասավորների կողմից: Տարածաշրջանի հայ հոգեւորականությունը մեծ քարեփոխումներն համարում էր զիջում վրաց եկեղեցուն, քանի որ ճշմարիտ էր համարում Հայոց եկեղեցու դարավոր ավանդությունը: Ըստ Կիրակոսի, խնդիրը լուծելու համար Ջաքարեն դիմում է իր խոստովանահայր Մխիթար Գոշին, որն էլ խնդիրը վերջնականապես լուծելու համար առաջարկում է դիմել Ամենայն Հայոց կաթողիկոսին եւ Կիլիկիայում նորերս թագադրված Լեւոն Ա արքային, որոնց որոշումը կարող էր բեկումնային լինել ողջ հայ հոգեւորականության համար: Այդ բարենորոգումները սատարող Ջաքարե ամիրապասալարի եւ նրան մոտ կանգնած հոգեւորականության հիմնական կուլանն այն էր, որ դեռեւս Տրդատ Մեծի եւ Վարդանանց պատերազմների դարաշրջանում հայ հոգեւորականները բանակում, շարժական սեղանի վրա կատարում էին թե՛ մկրտություն, եւ թե՛ հաղորդություն⁶⁰: Բարենորոգումներին հակառակորդ հայ հոգեւորականներն,

⁵⁸ Այս դրույթը ամրագրված է Հովհաննես Օճնեցու կանոնախմբի ԺԲ հոդվածում. «Ոչ է արժան սեղանն, յորոյ վերայ պատարագն Քրիստոսի մատչի, փայտեղէն կանգնել եւ շարժուն, այլ քարեղէն եւ անշարժ հիմնացուցանել: Իսկ եթէ որ հակառակեցիցի, եւ ոչ արասցէ ըստ հրամանիս մերում եւ ըստ աւանդութեան կաթողիկէ եկեղեցւոյ՝ եպիսկոպոսն լուծեալ եղիցի ի պատուոյն, եւ սեղանն արհամարհեալ եւ անգործ մնասցէ» (տե՛ս **Կանոնագիրք Ա**, էջ 520-521):

⁵⁹ Հայոց եկեղեցում օգտագործվող անշարժ տոմարը եւ սրբերի հարգման տոնացույցը հաճախ չէր համապատասխանում թե՛ քաղկեդոնական, եւ թե՛ ո՛չ քաղկեդոնական եկեղեցիների օրացույցների հետ, տե՛ս **Grumel 1958**, p. 320-343:

⁶⁰ **Կիրակոս 1961**, էջ 167:

արդարացիորեն, դրանք համարում էին զիջում վրաց եկեղեցուն⁶¹ և քայլ՝ դեպի Քաղկեդոնի դավանանքի ընդունում:

Լոռեի ժողովի մասնակիցները, թվականն ու պարագաները. Լոռեի ժողովին մասնակցած հոգևոր գործիչների մասին խոսելիս Կիրակոս Գանձակեցին հենվելով Վանական վարդապետի Պատմության վրա, հետևյալ հերթականությամբ է ներկայացնում ժողովին մասնակցած տարածաշրջանի եպիսկոպոսների ցանկը. «...գեպիսկոպոսն Հաղբատայ զԳրիգորես, զիրեանց ազգական, և գեպիսկոպոսն Անույ, և գեպիսկոպոսն Բջնոյ, և գԴունայ, և զԿարուց», շեշտելով Հաղբատի եպիսկոպոս Գրիգորի հեղինակության ընդունումը Զաքարյանների և հիշյալ աթոռների կողմից⁶²: Նկատելի է, որ Անին վրաց թագավորության իշխանության տակ անցնելուց հետո (1199 թ.)⁶³, կտրուկ նվազել է այդ քաղաքի եպիսկոպոսական իշխանության նշանակությունը և բարձրացել է Հաղբատի եպիսկոպոսի դերը տարածաշրջանում: Այդ է վկայում նաև նվիրապետական աթոռների ցանկի մույն խնդրին վերաբերող երկրորդ հիշատակությունը, ուր հավելված են առաջին վկայությունում չհիշատակված մի շարք եպիսկոպոսների անուններ: Հատկանշական է նաև, որ այստեղ երկրորդից երրորդ տեղ է փոխադրվել Անիի եպիսկոպոսի հիշատակությունը. «**Գրիգորես** եպիսկոպոս Հաղբատայ, **Վրթանես** Բջնոյ և Դունայ, **Սարգիս** աթոռակալ Անույ, **Յովհաննես** Կարուց...»⁶⁴: Եթե համենատեմք այս ցանկերը շուրջ 30 տարի առաջ տեղի ունեցած Հոռնկլայի 1178 թ. ժողովի կաթողիկոսի նամակը ստորագրած հոգևորականների ցանկի հետ, կնկատենք, որ Լոռեի ժողով հրավիրվածներից որեւէ մեկը արքեպիսկոպոսական աստիճան չուներ: Այն դեպքում, երբ Անիի, Տփլիսի-Հաղբատի, Դվինի աթոռակալները Հոռնկլայի ժողովի փաստաթղթերում անվանված են արքեպիսկոպոսներ⁶⁵, որոնցից մի քանիսի իշխանության ներքո էլ, ենթադրվում է, պիտի գործելին այլ եպիսկոպոսական աթոռներ: Հիշարժան է նաև այն փաստը, որ Հաղբատի եպիսկոպոս Գրիգորը, հիշատակված հոգևորականների զլխավորը՝ Զաքարյանների ազգականն է, ինչն էլ ցույց է տալիս, թե ինչ նշանակություն էին վերագրում այս աթոռին Զաքարյանները, գերադասելով Հաղբատի եպիսկոպոսությունն Անիի աթոռից: Ամենայն հավանականությամբ, իր նախորդ Բարսեղի⁶⁶ նման Հաղբատի աթոռակալը նաև Վրաստանի մայրաքաղաք Տփլիսի եպիսկոպոսն էր:

⁶¹ Հայոց Կանոնագրքը շարժական սեղանի վրա կատարված պատարագը դիտում էր կանոնակարգին դեմ և սպառնում էր այն կիրառող եպիսկոպոսին՝ լուծարում (տե՛ս **Կանոնագիրք Ա**, էջ 520-521):

⁶² **Կիրակոս 1961**, էջ 171:

⁶³ **Նախնային լեզուների համալիր**, Թ. III, թ. 325:

⁶⁴ **Կիրակոս 1961**, էջ 172:

⁶⁵ Հմմտ. **Բողոյան 1995 ա**, էջ 88, 190-191:

⁶⁶ Այս Բարսեղի մասին տե՛ս **Դիվան IX**, էջ 129, 144, 159:

Լիովին տրամաբանական է Մաղաքիա արք. Օրմանյանի այն ենթադրությունը, որ ժողովի հրավիրման պահին Անիի արքեպիսկոպոս Բարսեղը, որը Շիրակում գտնված երեք վիմագիր արձանագրություններում (1161⁶⁷, 1193, 1195) անվանված է հայրապետ կամ Հայոց կաթողիկոս. «...մեռած ենթադրել, թեպետ ստույգ յիշատակութիւն մը չենք գտներ»⁶⁷: Կիրակոսի վերոբերյալ հատվածներից պետք է եզրակացնել նաև, որ Բարսեղ Անիի եպիսկոպոսի՝ «Հայոց կաթողիկոս» անվանումը չի անցել աթոռի հաջորդ գահակալ Սարգսին:

ԺԳ - ԺԴ դարերի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, Գրիգոր Է Անավարզեցուն ուղղված իր թղթում՝ խոսելով Չաքարե ամիրսպասալարի եւ Իվանե աթաբեկի ժամանակներում տեղի ունեցած ժողովների մասին, գրում է. «Իսկ յատուրս վերջին՝ ի ժամանակս Չաքարիայի սպասալարի եւ Իվանեի աթաբեկին Վրաց, դարձեալ ժողով սուրբ հարցն եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից ի Գետականն մերձ Սեւան կղզւոյն եւ միանգամ յԱնի՝ եւ չարաչար նզովիք բարձին եւ հեռացուցին զամենայն համախոհսն Վրաց եւ Հոռոմոց»⁶⁸: Ինչպես տեսնում ենք, այստեղ Սյունյաց պատմիչը ոչինչ չի ասում Լոռեում տեղի ունեցած ժողովի մասին, դրա փոխարեն հիշատակելով Գետականում տեղի ունեցած ժողովը⁶⁹: Դ. Գեորգյանը հետևելով լեզվաբան Ա. Աբրահամյանի ենթադրությանը⁷⁰, կարծում է, թե խոսքը վերաբերում է մի բնակավայրի, որն իբրև թե կարելի է տեղադրել «Հրազդան գետի ափին՝ Գոմաձորի մոտ, որը այժմ գտնվում է Սեւան քաղաքի տարածքում»⁷¹: Կարծում են, խոսքն այստեղ վերաբերում է Նոր Գետիկին, ուր իր վանքն էր կառուցել Մխիթար Գոշը: Ըստ Կիրակոսի, Լոռեի ժողովի հրավիրմանը իր բացառիկ մասնակցությունն է ունեցել Նոր Գետիկի վանահայրը, Լոռեի ձախողված ժողովից հետո, նրա դուռն են բախել հակառակորդ կողմերը եւ նրա հետ բանակցություններ վարել: Այնպես որ, այդ հավաքները ժամանակակիցների մոտ կարող էին պատրանք

⁶⁷ **Օրմանեան 1912**, սյուն 1578: Այս խնդրի, եւ Բարսեղ Անեցու անվան հիշատակումով հայտնի վիմագիր արձանագրությունների մասին տե՛ս **Մաթեոսյան 1997**, էջ 63-70:

⁶⁸ **Ստեփանոս 1861**, էջ 333:

⁶⁹ Ստեփանոս Օրբելյանի Ժամանակագրության մեջ հիշատակված ժողովը թվագրվում է Հայոց ՌԿԱ (1212) թվականով, գրելով. «Յայսմ ամի Չաքարե եւ Իւանե կամեցան միաբանել զՀայս եւ զՎիրս եւ ժողովք արարին ի Գետակն բագում հարանց եւ վարդապետաց, ընդ որս էին աշխարհալոյս եւ աստուածագրեաց վարդապետքն՝ Գոշ Մխիթարն, Մոնօսիկն եւ Տուրքիկն: Եւ ոչ կարացին միաբանել, այլ +հաստատուն մնացին Հայք յուղղափառ հաւատս, որ եւ խորխոսացեալ Չաքարե վարդապետացն, նզովեցաւ ի նոցանէ եւ զնաց յԱրտաւէլ եւ կոտորեաց...» (**Մանր ժամանակագրություններ**, հտ. I, էջ 38):

⁷⁰ **Ստեփանոս 1986**, էջ 531, ծան. 1534:

⁷¹ **Գեորգյան 2018**, էջ 225: Տեղանունների քառահատոր բառարանի հեղինակները եւս չեն կողմնորոշվել, եւ նույնանուն բնակավայրերը, չբերելով սկզբնաղբյուրների վկայությունները, տեղադրում են կամ Սյունիքի Գեղարքունիք (տե՛ս Գետական, <<**ՇՏԲ**, հ. 1, էջ 842, սյուն 3) գավառում, կամ էլ Սեւանի ավազանում, Իջեւանի, Վայոց ձորի, Գուգարքի Չորոփոր եւ այլ շրջաններում (տե՛ս Գետիկ, <<**ՇՏԲ**, հ. 1, էջ 847, սյուն 2 – էջ 848, սյուն 3):

ասեղծել, թե ժողով է տեղի ունեցել նաեւ Նոր Գետիկում, ինչն էլ արտացոլվել է, մեր կարծիքով, ամենայն հավանականությամբ, Ստեփանոս Օրբելյանի թղթում եւ Ժամանակագրության մեջ:

Թվարկելով Լոռեի ժողովին մասնակցած վարդապետների եւ վանահայրերի ցանկը, Կիրակոսն անում է մի ճշտում, որը վրիպել է Մաղաքիա արքեպիսկոպոսի ուշադրությունից: Գանձակեցին շեշտում է, որ Լոռեի ժողովին հրավիրվել է ոչ թե Սանահնի վանահայր Գրիգոր Տուտեորդին (ըստ Օրմանյանի Հաղբատի առաջնորդ), որն արդեն մահացած է եղել, այլ նրա հաջորդ՝ Յովհաննեսին⁷²: Այնուամենայնիվ, սկսած Ս. Զալալյանցից, Հովհաննես Մեծաքարոյի բանազնաց Մինաս եպիսկոպոսին ծեծող Գրիգոր Հաղբատի եպիսկոպոսին, որը Զաքարյանների ազգականն էր, Մ. Չամչյանցը, Մ. Օրմանյանը, Հր. Աճառյանը թյուրիմացությամբ նույնացնում են Տուտեորդու հետ⁷³:

Կիրակոս Գանձակեցին Լոռու ժողովին հրավիրված հոգևորականներից հիշատակում է Գետկավանքի շինող Մխիթար Գոշին, Հաղբատից՝ Իգնատիոսին, Վարդանին եւ Դավիթ Քոբայրեցուն, Սանահնի վանահայր Հովհաննեսին, Կեչառուքից՝ Գրիգոր Մոնոնիկին, Թեղեմիսից՝ Տուրքիկին, Հավուց Թառից՝ Եղիային, Գրիգոր Դվնեցուն, Սեւանից՝ Սարգսին: Ամենայն հավանականությամբ, Լոռեի ժողովի կապակցությամբ հիշատակված եպիսկոպոսներն ու մենակյացները Զաքարյան իշխանական տանը պատկանող ավատական տիրույթում ծառայության մեջ եղած բարձրագույն հոգևորականության սերուցքն է: Պետք է ուշադրություն դարձնել, որ թվարկվածների մեջ չեն հիշատակվում Սյունիքի Օրբելյանների եւ Արցախի իշխանական տների, ինչպես նաեւ Աղվանքի կաթողիկոսության ներկայացուցիչները: Այս դիտարկումից էլ կարելի է բխեցնել հետևյալ հարցադրումը. ի՞նչ կարգավիճակ ունեին Վրաց պետության կազմում Զաքարյանների հովանավորության ներքո գտնվող հիշատակված ավատական իշխանությունները: **Իմ կարծիքով՝ Զաքարյանների եւ նրանց հարակից տիրույթների կարգավիճակը Վրաց թագավորության սահմաններում, հայ ժամանակակից պատմագրական երկերում դեռևս լիովին յուսաբանված չէ**⁷⁴:

Լոռեի ժողովի մասին բավական մանրամասն պատմող Կիրակոս Գանձակեցին չի թվագրում այդ իրադարձությունը⁷⁵: Այնուամենայնիվ, կան մի քանի չափորոշիչներ, որոնցով հնարավոր է ճշտել Լոռեի ժողովի հրավիրման

⁷² Կիրակոս 1961, էջ 171:

⁷³ Բողոյեան 1995 թ, էջ 55-62:

⁷⁴ Նման փորձ վերջերս կատարել են Հ. Մարգարյանն ու Գ. Կիրակոսյանը (տե՛ս ՀՊ, հ. II, էջ 219-239 եւ էջ 551-575), սակայն գլխավոր եզրակացությունները դեռևս ի մի բերված չեն:

⁷⁵ Ըստ Դ. Գեւորգյանի՝ Լոռեի ժողովը հրավիրվել է 1208 թ. (այստեղ հեղինակն հետևում է Ի. Ղարիբյանի մենագրությանը, որը ցավոք, իմ ձեռքի տակ չէ, տե՛ս Ի. Ղարիբյան,

թվականը: Բացի վերելում հիշատակվածներից (Անիի աթոռակալ Բարսեղ Անեցու եւ Գրիգոր Տուսետորդու բացակայությունն այդ հավաքին), կարելու է նաեւ Կիրակոսի այն տեղեկությունը, ըստ որի Չաքարեւն նամակ է ուղարկել ինչպէս Հայոց կաթողիկոս Հովհաննէս Զ Մեծաբարոյին, որն այդ պահին ապստամբ էր, այնպէս էլ Կիլիկիայի թագավոր Լեւոնին եւ նրա պետության կողմից ընդունելի Դավիթ Արքակաղնեցուն. «Այս գրէ թուղթ եւ առաքէ դեսպանս առ կաթողիկոսն Հայոց, Յովհաննէս անուն, որ ընդ այն ժամանակս ապստամբ էր ի թագաւորէն Լեւոնէ ի Հոռնկլայն եւ ծանուցանէ նմա զխնդիրն: Եւ նա նստուցեալ էր զտէր Դաւիթ կաթողիկոս փոխանակ Յովհաննէսի, որ ապստամբն էր յաշխարհէն Կիլիկեցոց, ի վանքն, որ կոչի Արքակաղին»⁷⁶:

Կիրակոսի սննդակից Վարդան Արեւելցին Կիլիկիա ուղարկած Չաքարեւի դեսպանագնացութեան մասին գրում է. «Բայց Իւանէ խաբեալ ի թագուհոյն Թամարայ՝ տկարացաւ ի հաւատոյն եւ//Էջ 182) անյաջողեալ նմա՝ ըմբռնեցաւ գերի Խլաթ, եւ եղբօրն արիական անուամբ ազատեցաւ դարձեալ՝ տալով ի կնութիւն զդուստր Մելիք Աշրափուն՝ տեսոն Խլաթայ: Իսկ Չաքարէ՝ աւագ եղբայրն, մնաց յաւագ եւ ի սեպհական հաւատն. սակայն կամեցաւ զտօն Տիրամօրն եւ զխաչին⁷⁷ ի պատկեր աւուրն⁷⁸ տօնել, եւ զգրագալոյցսն չլուծանել, եւ կրօնաւորաց՝ միս չուտել, եւ կենդանեաց պատարագ մատուցանել, եւ վրանաւ պատարագել ի բացեալ դպրօք եւ սարկաւագօք: Վասն որոյ առաքեաց առ Լեւոն, որ այն ինչ օժեալ էր թագաւոր ի Փռանկաց եւ ի Յունաց՝ առաքելով նմա թագ ի վեց հարիւր քառասուն եւ վեց թուին»⁷⁹: Վարդանի բերած թվականը՝ Հայոց 647 (1197/8), Լեւոնի թագադրման թվականն է եւ կապ չունի Լոռէի ժողովի հետ:

Սմբատի Տարեգրքի ընդարձակ տարբերակից հայտնի է, որ Հովհաննէս կաթողիկոսն ապստամբել է Լեւոն արքայի դէմ, չհանդուրժելով վերջինիս կողմից Նորբերդի իշխան՝ իր փեսա Հեոի սեբաստոսի եւ նրա որդիների (Կոստանց Կումարտիաս, Զոպին, Պաղտին) բանտարկելությունը⁸⁰: Նորբերդ ամրոցի պաշարումն ու տերերի «լաղազս պատճառի ինչ» ձերբակալումը, հավանաբար կապված էր լատինների կողմից Կոստանդնուպոլսի գրավման հետ, քանի որ պատմիչը հենց այդ իրադարձության արձանագրումից հետո է անդրադառնում Հեոիի ձերբակալությանը: Այս իշխանի սեբաստոս տիտղոսը հուշում է, որ նա սերտ կապեր պիտի ունենար բյուզանդական իշխանությունների հետ: Այնուամենայնիվ Սմբատը սխալմամբ Կոստանդնուպոլսի գրավումն էլ

Լոռե բերդաքաղաքը եւ նրա պեղումները, Երեւան, 2009, էջ 39, հմմտ. **Գեորգյան 2018**, էջ 223):

⁷⁶ **Կիրակոս 1961**, էջ 168:

⁷⁷ **Այլ օր.** զխաչն:

⁷⁸ **Այլ օր.** աւուր:

⁷⁹ **Վարդան 1861**, էջ 181-182:

⁸⁰ **Սմբատ 1956**, էջ 215:

խաչակիրների կողմից թվագրում է ոչ թե 1204, այլ 1207 թվականով (Հայոց՝ ՈԾԶ): Կարծում ենք, հենց Կ. Պոլսի առման ճշգրիտ 1204/5 թվականն էլ Նորբերդի պաշարման եւ Հեռիի ձերբակալման թվականն է⁸¹: Նշանակում է, որ Լոռեի ժողովի նախապատրաստական աշխատանքները սկսվել են 1204 - 1207 թթ. միջև, Սսի ժողովից եւ Հոռնկլայի կաթողիկոսից բերված վավերագրի հասնելուց հետո, եւ ոչ թե հատկապես 1204 կամ 1205 թվականին ինչպես ենթադրվում է վրաց պատմագրության մեջ⁸²:

Եկեղեցական հակամարտության հետեւանքով՝ Կիլիկիայի թագավորը, եպիսկոպոսներն ու իշխանները, որոնցից էլ հավանաբար կազմված էր երկրի կառավարման խորհուրդը 1204/5 թ.⁸³ էլ նոր կաթողիկոս է օծում. «...եղին հակառակ մնա զարքեպիսկոպոսն Մսասյ եւ առաջնորդ Արքակաղնույն զտէր Դավիթ կաթողիկոս Հայոց»⁸⁴: Հովհաննէս Չ կաթողիկոսը կարողանում է դիմագրավել Լեւոն Ա թագավորին, փակվելով Հոռնկլա ամրոցում. ըստ ընդարձակ խմբագրության Սմբատի՝ օգնության համար նույնիսկ դիմում է Իկոնիայի սուլթան Քել խոսրովին, որն էլ 1208 թ. գրավում է Բերդուս ամրոցը, գերելով իշխան Գրիգորին⁸⁵, որը, հավանաբար, մասնակցություն էր ունեցել Նոր Բերդի իշխան Հեռիի ձերբակալմանը: Ժողովի հրավիրման թվականի ճշգրտմանը կարող է օգնել նաեւ Զաքարիայի եւ վրացական զորքերի կողմից Կարս քաղաքի գրավման փաստը, որն էլ, ըստ Ստեփանոս Օրբելյան ժամանակագրի, տեղի է ունեցել 1206/7 թ.⁸⁶: Իմ կարծիքով, քաղաքի գրավումով է բացատրվում Կարսի եպիսկոպոսի անվան հիշատակությունը Կիրակոսի կողմից Լոռեի եւ Անիի ժողովներին հրավիրված եւ մասնակցած հոգեւորականների թվում:

⁸¹ Հետեւելով Սմբատին, 1207 թ. Հեռիի եւ նրա որդիների ձերբակալության եւ Դավիթ Արքակաղնեցու օժան թվական են համարում ինչպես Հեթում թագավորը (տե՛ս Մ.Ժ., հ. I, էջ 78), այնպես էլ Հեթում Կոռիկոսցին (**Մաթեւոսյան 2011**, էջ 49):

⁸² ԺԳ դարի Բ կեսի մատենագիր Մխիթար Այրիվանեցու պատմագրական երկում Լոռեում տեղի ունեցած ժողովի մասին պատմվում է Հայոց ՈԾ (=1191/2) թ. դեպքերի շարադրանքում, գրելով. «Եղև ժողով ի Լօռի վասն վրանաւ պատարագի եւ ոչ հանեցան» (**Մխիթար 1867**, էջ 80, հմմտ. **Mkhithar 1869**, p. 104-105): Ֆրանսիացի կովկասագետ Մ. Բրոսսեն Լոռեի ժողովը թվագրում է 1204 թ., որն էլ անցել է վրաց ժամանակակից պատմագրություն: Տե՛ս **Меликсет-Бек, 2010**, с. 99 ; **ՁԵՍԵՂՅԱԾԵՂ 1982**, թ. 90:

⁸³ Ազդված Սմբատի Կ. Պոլսի առման թյուր (1207) թվագրությունից, Դավիթ կաթողիկոսի օժան այս թվականը կրկնում են ե՛լ Հեթում թագավորը, ե՛լ Հեթում Կոռիկոսցին:

⁸⁴ **Սմբատ 1956**, էջ 215, հմմտ. **Մաթեւոսյան 2011**, էջ 49, Մ.Ժ., հ. I, էջ 78:

⁸⁵ **Սմբատ 1956**, էջ 216, հմմտ. նաեւ Հեթում Կոռիկոսցու եւ Հեթում թագավորի Ժամանակագրությունների հետ: Իկոնիայի սուլթանության այս ռազմարշավին անդրադառնում են նաեւ մուսուլման կատմիչները. տե՛ս **Տեր-Ղևոնդյան 1994**, էջ 122-123, հմմտ. **Шукуров. 2016**, էջ 93-94:

⁸⁶ Ստեփանոս Օրբելյանի Ժամանակագրության մեջ դեպքը թվագրված է Հայոց Մեծ թվականի ՈԾԵ (655=1206/7) Քրիստոսի Ծննդյան 1208, Լեւոն առաջինի թագավորության Ժ (1198+10=1208) եւ Հովհաննէս Չ կաթողիկոսի գահակալման Ե (1203+5=1208) տարիներով (**Մ.Ժ.**, հ. I, էջ 37, հմմտ. **Սամուէլ Անեցի եւ Ծարունակողներ**, էջ 236):

Ահա այս իրադարձություններին տեղյակ Չաքարե ամիրապասալարն էլ շուրջ 1204 թ. ուղարկում է իր դեսպանագնացներին Հովհաննես Ջ կաթողիկոսի եւ Լեւոն Ա թագավորի մոտ, խնդրելով նրանց թույլ տալ Հայոց եկեղեցուն կատարել որոշ ծիսատոնական բարեփոխումներ, որոնք անհրաժեշտ էին Մեծ Հայքի Հյուսիսարեւելյան գավառների հայ ազգաբնակչության համար: Չաքարիայի դիմումին շատ արագ արձագանքում են թե՛ Հովհաննես Ջ Մեծաբարո հայրապետը, եւ թե՛ Լեւոն Ա թագավորն ու Դավիթ կաթողիկոսը: Լեւոն թագավորը ժողով է հրավիրում Սիս քաղաքում, ուր Կիլիկիայի հոգեւորականներն ընդառաջ գնալով Չաքարիա ամիրապասալարին, ութ կանոններից բաղկացած մի փաստաթուղթ են ձեւակերպում⁸⁷:

Հետաքրքիր է, որ բերված կետերի մեջ հիշատակում անգամ չկա գլխավոր խնդրի, որը Կիրակոսը ձեւակերպել է իբրեւ վրացիների կողմից հայերին ուղղված գլխավոր պահանջ. «Եւ նախատէին վիրք զՀայք՝ ոչ ունել եկեղեցի ի ճանապարհի եւ անհաղորդ մնալ անցա, եւ ոչ տօնել զտօնս վկայիցն Աստուածոյ յիրաքանչիւր աւուր կատարման»⁸⁸: Հատկանշական է, որ հիշված «նախատիւնքի» միայն երկրորդ՝ տոներին վերաբերող մասն է ներառնված Ստում հաստատված ութ կանոնների երկրորդ կետում: Թե՛ Մխիթար Գոշը, ով Չաքարեի խոստովանահայրն էր, եւ թե՛ այլ վարդապետներ ամիրապասալարին հավատացնում էին, որ միշտ Հայոց թագավորները եւ իշխանները, ինչպէս Տրդատը եւ Վարդանանց վկաները, ունեցել են շարժական սեղան, սակայն ժամանակի ընթացքում այդ ավանդությունը մոռացության է մատնվել: Այդ իսկ պատճառով Մխիթար Գոշը խորհուրդ է տալիս Չաքարեին դիմել Հայոց կաթողիկոսին եւ թագավորին⁸⁹: Մխիթար Գոշի անան առաջարկի հիմնական գաղափարն այն էր, որպէսզի եկեղեցական խնդիրների լուծումը բարձրացվի Վրաստանի եւ Հայաստանի (տվյալ դեպքում՝ Կիլիկյան) միջեւ փոխհարաբերությունների միջպետական մակարդակի, ինչն էլ մեր կարծիքով պաշտպանություն է գտել ինչպէս Լեւոն Ա արքայի եւ Դավիթ Արքակաղնեցի կաթողիկոսի, այնպէ՛ս էլ Հովհաննես Ա Մեծաբարո կաթողիկոսի արագ արձագանքներում: Իսկ Չաքարեի կողմից, կարծում են, այդ քայլը հետապնդել է միջազգային առումով սեփական իշխանության լեգիտիմացման նպատակ:

Ընդառաջ գնալով Չաքարե ամիրապասալարին, Հովհաննես Ջ Մեծաբարո կաթողիկոսն Հռոմկլայից Լոռե է ուղարկում «...վրան մի գմբեթարդ եկեղեցաձեւ եւ կազմողս եւ յօրինողս նմին, եւ սեղան մարմարեայ, եւ այլ սպաս պատարագաց, եւ եպիսկոպոս մի, Մինաս անուն, եւ սարկաւագս եւ դպիրս, եւ քահանայս գեղեցկաձայնս, ասացողս պատարագին»⁹⁰: Հիշյալ դեսպանության

⁸⁷ Կիրակոս 1961, էջ 169-170:

⁸⁸ Նույն տեղում, էջ 167:

⁸⁹ Կիրակոս 1961, էջ 167-168:

⁹⁰ Նույն տեղում, էջ 170:

հետ Հովհաննես կաթողիկոսն ուղարկում է մաւռ գրավոր հրահանգներ եւ մասնակներ: Հիշատակված ութ կետից բաղկացած կանոնական որոշումների հետ, Լեւոն Ա թագավորն ու Դավիթ կաթողիկոսն ուղարկում են իրենց դեսպաններին եւ հրամանաբերներին⁹¹: Ստանալով թագավորի եւ կաթողիկոսների օրհնությունը, Ջաքարեն հրամայում է իր ազգական, Հաղբատի եպիսկոպոս Գրիգորին ժողով հրավիրել Լոռե քաղաքում⁹²: Ժողովն անմիաբանություն է դրսեւորում, մասնակիցներից շատերը լքում են ժողովատեղը: Ըստ Կիրակոսի, ժողովականները երկու մասի են բաժանվում եւ ժողովական փաստաթուղթը չի ընդունվում⁹³: Իր իշխանության տակ գտնվող հոգեւորականներին Ջաքարեն ստիպում է Աստվածածնի Վերափոխումը եւ Սուրբ Խաչի վերացումը տոնել նշանակված ամսաթվերին, եւ ոչ թե հին սովորությամբ՝ մոտակա կիրակին⁹⁴: Սա այնքան է սրում ատելությունը կողմերի միջեւ, որ սկսում են միմյանց սրով ահաբեկել: Հովհաննես կաթողիկոսի դեսպան Մինաս եպիսկոպոսին Ջաքարե ամիրսպասալարն ուղարկում է Հաղբատ, որ պարտադրի վանքի կրոնավորներին ընդունել բարենորոգումները: Հաղբատի եպիսկոպոս Գրիգորի ուղարկած մարդիկ դաժան ծեծի են ենթարկում կաթողիկոսական մկրակ Մինաս եպիսկոպոսին: Այս դեպքն այնքան է բարկացնում Ջաքարեին, որ նա սպառնում է Գրիգորին պատժել: Վերջինս փախչում է Սխիթար Գոշի մոտ, խնդրելով նրա հովանավորությունը, սակայն որոշ ժամանակ անց, Կեչառիսում Ջաքարեն Գրիգորին ձերբակալում եւ նրա փոխարեն Հաղբատի եպիսկոպոս է նշանակում մինչ այդ Խաչեն փախած Հովհաննեսին⁹⁵, որին Կիրակոսն անվանում է Հաղբատի հոչակավոր գավթի կառուցող⁹⁶: Լոռեի ժողովից հետո, եկեղեցում սկսված այս շփոթը Կիրակոսը կապում է մահմեդականների բազմադարյան տիրապետության հետեւանքների հետ, իր կողմից թվարկելով Հայոց եկեղեցու ավանդության մի քանի կետեր, որոնք անհրաժեշտ էր համարում բարենորոգման համար. 1. տոները չէին կատարում իրենց ամսաթվին, 2. տոնի պատճառով պահքը չէին լուծում, 3. պատարագը մատուցում էին միայն քահանաներով, առանց դպրի եւ սարկավագի, 4. խորհրդի (նկատի ունի պատարագը) ժամանակ եկեղեցու դռները բաց չէին թողնում, վախենալով մահմեդականների թշնամական գործողություններից⁹⁷: Նմանատիպ եւ բարենորոգման

⁹¹ Նույն տեղում, էջ 171:

⁹² Նույն տեղում, էջ 173:

⁹³ Նույն տեղում, էջ 172:

⁹⁴ Նշանակում է, թե Ժողովը տեղի է ունեցել ամենայն հավանականությամբ 1208 թ. օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներին, քանի որ Աստվածածնի վերափոխման տոնն անշարժ տոմարով տոնվել է օգոստոսի 15-ին, իսկ Խաչվերացը՝ սեպտեմբերի 14-ին:

⁹⁵ Կիրակոս 1961, էջ 173-174:

⁹⁶ Նույն տեղում, էջ 174:

⁹⁷ Ըստ Վարդանի, Ջաքարե ամիրսպասալարի Հայոց եկեղեցու բարենորոգման կարող խնդիրներն հետեւյալներն էին. «...գոտն Տիրամօրն եւ զխաչին ի պատկեր աւուրն տօնել,

կարոտ մի շարք խնդիրներ էլ հիշատակում է Ներսես Լամբրոնացին «առ Լեւոն» հոշակավոր թղթում դեռեւս 1194 թ., ի հարկե, ելնելով կիլիկյան իրականությունից⁹⁸:

Անիի ժողովի պարագաները. Լոռու ժողովի տապալումից հետո, Չաքարեն հրամայում է ժողովի հավաքվել Թիրակի Անի մայրաքաղաքում, ուր հավաքվում են նախորդ ժողովի մասնակիցները «եւ եւս յուրվք»⁹⁹: Ժողովի հրավիրման թվականը Գանձակեցին կրկին չի հայտնում, սակայն տեղեկացնում է. «Եւ էր ատուրքն ձմեռնային, եւ տօն Ծննդեան եւ Յայտնութեան Յիսուսի Քրիստոսի մերձեալ»¹⁰⁰: Նկատի ունենալով այս տեղեկությունը, ժողովի հրավիրման թվական, իմ կարծիքով, կարելի է համարել 1208 թ. հունվար ամիսը: Նշանակում է, որ Անիի ժողովից հետո Մխիթար Գոշն ապրել է շուրջ հինգ տարի, քանի որ Ստեփանոս Օրբելյանի Ժամանակագրության մեջ նրա մահը թվագրվում է հայոց ՈՄԲ (=1213/4) թվականով¹⁰¹: Այնուամենայնիվ ըստ Կիրակոսի, Մխիթար Գոշը մերժում է Չաքարի սպասալարին՝ հիվանդության եւ ծերունական անկարողության պատճառով մասնակցել Անիի ժողովին: Թեպետ Նոր Գետիկի վանահայրը նախօրոք նամակով տեղեկացնում է, որ համաձայն կլիմի ժողովում ընդունված բոլոր որոշումներին, սակայն մասնակիցների պնդմամբ նրան Ս. Ծննդյան եւ Հայտնության (հունվարի 6) տոնի նախօրեին ստիպմամբ Անի են բերում: Մինչ այդ, ժողովականների մի մասը համաձայնում է ընդունել բարենորոգումները, մյուս մասը՝ դրանք կրկին մերժում է: Ժողովական հոգեւորականների մեծ մասը սեփական աթոռից զրկվելու վախից է համաձայնում բարենորոգումներին, իսկ բարենորոգումների հակառակորդ վանահայրերն ու վարդապետները բանտարգելված Չաքարե սպասալարի կողմից, սպասում էին, որ իրենց արքայելու են երկրից:

Ըստ Կիրակոսի՝ Չաքարեի հրամանով, քաղաքի դարպասի մոտ, իշխաններից մեկը բռնելով քաղաք մտնող վարդապետի ձիու սանձերը, ստիպմամբ նրան տանում է գորավարի արքունիք: Մխիթար Գոշը տեղեկանալով Անիի ժողովում տեղի ունեցածի մասին, մեղադրում է գորավարին բռնություն գործադրելու մեջ: Ապա դիմում է ժողովականներին. «Դուք հոգայք վասն ազգիս, զի մի՛ այդպիսի սովորութեամբ խառնեցին ընդ Վիրս, եւ եւս հոգամ վասն գորավարիս, զի մի՛ լիցի սա վրացի, իբրեւ եղբայր իւր, որում սպասեն Վիրք: Արդ՝ թէ այսպէս է, ապա զի՞ մեղադրէք ինձ, զի հրաման ունի ի կաթողիկոսէն եւ ի թագաւորէն Լեւոնէ առնել զայս. եւ մեք թէ կամիմք եւ թէ ոչ, սա ոչ դադարէ

եւ զճրագալոյցսն չյուժանել, եւ կրօնաւորաց՝ միս չուտել, եւ կենդանեաց պատարագ մատուցանել, եւ վրանաւ պատարագել ի բացեայ, դպրօք եւ սարկաւագաւք» (տե՛ս **Վարդան 1861**, էջ 182):

⁹⁸ **RHC d. a.**, t. I, p. 579-603:

⁹⁹ **Կիրակոս 1961**, էջ 174:

¹⁰⁰ **Նույն տեղում**, էջ 175:

¹⁰¹ **Մ. Ճ.**, h. I, էջ 38:

զայս առնելոյ: Արդ դուք դարձչիք յիրաքանչիւր բնակութիւնս եւ մեք աղաչեսցուք զսա ոչ հանել զձեզ յեկեղեցեաց ձերոց եւ ի տեղեաց. եւ մեք զպաշտօնն, զոր մինչեւ ցայսօր պաշտեալ եմք, զնոյն պաշտեսցուք»¹⁰²: Կիրակոսի մեջբերած՝ Մխիթար Գոշի այս խոսքը շատ մասն է երկու տասնյակ էջ առաջ նույն պատմիչի իսկ մեջբերած մեկ այլ խոստումի. Լեւոն արքան էլ լատինների կողմից ուղարկված թագն ընդունելուց առաջ, 1198 թ. խոստանում է ընդունել նրանց ծիսական պայմանները, այսպես հանգստացնելով կաթողիկոսին եւ եպիսկոպոսներին. «Դուք մի՛ ինչ հոգայք վասն այդորիկ, ես հաճեցից զմիտս նոցա առ անգամ մի կեղծարորութեամբ»¹⁰³: Այնուամենայնիվ, ինչպես վկայում է Կիրակոսը, հոգեւորականներից որեւէ մեկը չաքտորվեց, ե՛ւ Զաքարեան ե՛ւ Իվանեն ամեն ինչ արեցին, որ նրանք վերադառնան իրենց ծառայության վարերը, իսկ ծեսը Հայոց եկեղեցուն շարունակվեց կատարվել առանց փոփոխության, ավանդական ձեւով¹⁰⁴:

Տփխիսի(°) ժողովը. Ամենայն հավանականությամբ Անիի եւ Լոռեի հիշատակված ժողովների հրավիրման ժամանակներին՝ 1205 – 1207 թթ. է վերաբերում, նաեւ Քարթլիս Տիսլիբեբայի մաս կազմող «Թագակիրների պատմությունն եւ գովասանք» վրացերեն երկի տեղեկությունը: Վրաց հեղինակը պատմում է, որ Զաքարիա ամիրսպասալարի դավանանքը թույլ չէր տալիս նրան հաղորդվել վրաց հոգեւորականի կողմից, չնայած վրաց արքունիքում զբաղեցրած նրա բարձր պաշտոնին: Հայոց եւ Վրաց եկեղեցիների միջեւ փոխհարաբերությունները տանելի դարձնելու միտումով, Զաքարիան Վրաց կաթողիկոս Հովհանի (1205/6 - 1210) իշխանության տարիներին բանալիճելու համար արքունիք է հրավիրում Հայոց կաթողիկոսին եւ բարձրագույն հոգեւորականության ներկայացուցիչներին (...*ზაქარია წარავლინა კაცი კათალიკოსისა მიმართ მათისა, თანა-და ეპისკოპოსთა, ყოველთა ვარდაპეტთა და მეცნიერთა...*)¹⁰⁵: Ամենայն հավանականությամբ խոսքը վերաբերում է 1204/5 թ. Հոռմկլա եւ Սիս ուղարկված դեսպանագնացությանը, որին անդրադարձանք վերելում: Սակայն քիչ անց վրաց Անանուն պատմիչը տեղեկացնում է, որ արքունիքում հրավիրված ժողովին ներկայացել է Վանի կաթողիկոսն իր վարդապետներով (մոջօձա կათալօკօսօ **զանօս** და ყოველნი ვარდაპეტნი)¹⁰⁶: Այս վկայությունը, իրավամբ, կասկածելի է թվացել ֆրանսիացի գիտնական, ոռուսական ակադեմիայի անդամ Մ. Բրոսեին, քանի որ ըստ նրա՝ Ամենայն Հայոց կաթո-

¹⁰² Կիրակոս 1961, էջ 177:

¹⁰³ Նույն տեղում, էջ 157: Դավանական գիջման այս դրվագը առկա է թե՛ հայկական եւ թե՛ լատին մատենագրական երկերում, տե՛ս **Mutafian 2021**, chapitre 7 (համընկած է հրատարակության):

¹⁰⁴ Կիրակոս 1961, էջ 177-178:

¹⁰⁵ Տե՛ս յ. Գ., Ծ. II, p. 82, հմմտ. **Մելիքսեթ-Բեկ, 1936**, էջ 17, **Թորոսյան 1992**, էջ 420:

¹⁰⁶ Տե՛ս յ. Գ., Ծ. II, p. 83 ; հմմտ. **Մելիքսեթ-Բեկ, 1936**, էջ 17, **Թորոսյան 1992**, էջ 421:

ղիկոսի պաշտոնական նստավայրը եղել է Հոռնկլայում, իսկ Աղթամարի կաթողիկոսությունը միջնադարյան հեղինակների կողմից երբեք չի անվանվել Վանի կաթողիկոսություն¹⁰⁷: Վերջինիս կասկածի մասին տեղյակ է եղել Լ. Մելիքսեթ-Բեկը, սակայն պնդում է, որ Վանի կաթողիկոսը «Կիրակոսի հիշատակած Դավիթ Աղթամարցին պիտի լինի»¹⁰⁸: «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունն» երկի բնագիրը հայերեն փոխադրած Խ. Թորոսյանը, մերժելով Լ. Մելիքսեթ-Բեկի տեսակետը, անհավանական է համարել այս տեղեկությունը, եւ վրացերեն բնագիրը սրբագրել «կաթողիկոսի ավվանիսա» (= კათოლიკოსი ალვანოს) բառակապակցությամբ¹⁰⁹: Վրացերեն բնագրի այս սրբագրությունը կարծում են կոռեկտ չէ, քանի որ վրաց մատենագրության մեջ Աղվանքը¹¹⁰ հայտնի է *ალბანეთი (+სა)* ձևով եւ դժվար թե վրացերեն երկի ընդօրինակողներից որեւէ մեկը դրանից կարողանար դուրս բերել *ვანოს* տառակապակցությունը: Բացի այդ, Աղվանքի կաթողիկոսը թեպետ այդ ժամանակ, հավանաբար, գտնվում էր Զաքարյանների տիրույթում, չէր կարող փոխարինել Հայոց կաթողիկոսին: Այդ է վկայում նաեւ այն հանգամանքը, որ ո՛չ Լոռեի, ոչ էլ Անիի ժողովների նկարագրություններում Կիրակոսը եւ Ստեփանոս Օրբելյանը Աղվանքի կաթողիկոսի անունն իսկ չեն հիշատակում: Աղթամարի հակաթոռ կաթողիկոսներին բազմիցս անդրադարձած Կիրակոսը չի հիշատակում նաեւ Աղթամարի Դավիթ կաթողիկոսի անունն այս կապակցությամբ:

Ըստ «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունն» երկի, Վրաց արքունիքում հայոց եւ վրաց եկեղեցիների համատեղ եկեղեցական ժողով հրավիրել է Զաքարիա ամիրսպասալարը վրաց աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների համաձայնությամբ, իր վրա վերցնելով հայոց հոգեւոր դասի ներկայացուցիչների մասնակցության ապահովման գործը: Անհայտ է ժողովի հրավիրման վայրը, թեպետ Վրաց թագուհու եւ թագավորի ներկայությունը, Վրաց պատրիարքի եւ «Վրաստանի նշանավոր մարդկանց» հետ միասին, հուշում է, որ հավաքը կարող էր տեղի ունենալ հենց Տփղիսում: Տփղիսի վրաց արքունիքում տեղի ունեցած եկեղեցական այս ժողովը ղեկավարում էր վրաց կաթողիկոս Հովհանն (1205/6 - 1210), ներկա էին նաեւ Թամար թագուհին (1184-1213), նրա ամուսին Դավիթ Սոսլան արքան (1189-1207)¹¹¹ ու Վրաստանի նշանավոր մարդիկ (...*დაჯდა დედოფალი ... დავით მეფე და წარჩინებულნი*

¹⁰⁷ Brosset 1849, p. 451, n. 1.

¹⁰⁸ Մելիքսեթ-Բեկ 1936, էջ 31:

¹⁰⁹ Թորոսյան 1992, էջ 421, ծան. 280, էջ 552-554, տե՛ս հատկապես էջ 553-ը:

¹¹⁰ Վրաց միջնադարյան պատմագրության մեջ Աղվանքն ավելի շատ հայտնի է *რანო* անվամբ, որը եւս դժվար թե շփոթվեր Վան քաղաքանվան հետ:

¹¹¹ Նրա մասին տե՛ս *ჯავახიშვილი* 1965, გვ. 259 – 291:

Նայե՛ր ժողովրդիս ... ժողովրդը կատաղի է (Կարոյի 1207 թ., ինչպես ենթադրել էիք Լոռեի ժողովի թվագրման մասին խոսելիս, քանի որ ժողովին մասնակցած Դավիթ Սուլանի մահվան թվականն էլ ըստ Ի. Ջավախիշվիլու կարող է հանդիսանալ թվագրման վերջին տարեթիվ: Վրաց Անանուն պատմիչն իր երկում նպատակ է դրել ցուց տալ Վրաց եկեղեցու առավելությունը Հայոց դավանանքի նկատմամբ, ինչը քրիստոնեական հակաճառական գրականության հիմնական հատկանիշերից է եւ իր մեջ պատմական գիտելիքի առումով ոչ մի նորություն չի պարունակում:

Իմ կարծիքով, Լոռեի ժողովին ներկա Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Զ Մեծաբարոյի պատվիրակ Միմաս Եպիսկոպոսին էլ իբրեւ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամաբեր, ինչպես նաեւ Լեւոն Ա արքայի դեսպանագնացներին Ջաքարյանները կարող էին ներկայացնել Վրաց արքունիքին եկեղեցական բանակցություններ վարելու համար: Կարծում եմ, հետագա պրպտումները եւ բնագրագիտական հետազոտությունները թույլ կտան բացահայտել վրաց պատմագրության հիշյալ հուշարձանի անթեղած գաղտնիքը: Այն, որ այս հանդիպման ժամանակ առաջին անգամ Վրաց վարչակարգը թագավորների եւ կաթողիկոսի ներկայությամբ խնդիր է քննարկել Կիլիկիայի Ամենայն Հայոց թագավորի եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչների հետ, խոսում է նկարագրված դեպքերի կարեւորության մասին թե՛ Վրաստանի, եւ թե՛ Կիլիկիայի Հայոց թագավորության պատմության համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված է ԺԲ դարի վերջի եւ ԺԳ դարի սկզբի Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգը: Հեղինակը նկարագրել է եկեղեցու եւ պետության փոխհարաբերությունները Լեւոն Ա - ի իշխանության տարիներին: Քննված են Վրաց պետության սահմաններում տեղի ունեցած Հայոց եկեղեցու տեղական ժողովներին վերաբերող խնդիրներ:

¹¹² Խ. Թորոսյան, Թագակիրների, էջ 421, հմմտ. ԺԾ, Ծ. II, p. 83:

¹¹³ Թորոսյան 1992, էջ 421:

AZAT BOZOIAN

*Académie nationale des sciences de la République
d'Arménie, Institut d'Études Oriental*

**LE SYSTÈME HIÉRARCHIQUE DE L'ÉGLISE ARMÉNIENNE
ET LES SYNODES TENUES SUR LE TERRITOIRE DU ROYAUME
GÉORGIE AU DÉBUT DU XIII^e SIÈCLE**

Mots-clés : Système hiérarchique de l'Église, Royaume de Cilicie, Catholicozat arménien, Géorgie, Relations ecclésiastiques de XII^e siècle, études géorgiennes et arménologiques.

L'article présente le système hiérarchique de l'Église arménienne à la fin du XII^e et au début du XIII^e siècles. L'auteur donne la description des relations entre l'Église et l'État sous le règne de Léon I^{er}. Les réunions de l'Église arménienne à l'intérieur des frontières de l'État géorgien sont décrites.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ակինեան 1920 - Ն. Ակինեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ. պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1920 [Ազգային Մատենադարան, ԶԶ]:

Բոզոյան 1995ա – Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցութիւնների վավերագրերը (1165-1178 թթ.), Երեւան, «Գիտություն», 1995:

Բոզոյան 1995բ - Ա. Բոզոյան, Գրիգոր Տոտերոդ վարդապետին վերաբերող վկայութիւնների քննութիւն. Ծողակաթ, 1995, էջ 55-62:

Բոզոյան 2000 - Ա. Բոզոյան, «Կաթողիկոս Հայոց» տիտղոսի նորովի ընկալումը Բագրատունեաց թագավորութեան անկումից հետո. Հայաստանը եւ Բրիտանիա Արեւելքը, Երեւան 2000:

Գետրոյան 2018 – Դ. Գետրոյան, Հայ-վրացական եկեղեցական հարաբերութիւնները կարգավորելու Չաքարե ամիրապատարի փորձերը. – Պատմութիւն եւ մշակույթ, հտ. Գ, Երեւան 2018, էջ 218-227:

Դանիելյան 2016 - Գ. Դանիելյան, Հոմկլայի կաթողիկոսական աթոռի պատմութեան արաբական սկզբնաղբյուրները. – Կիլիկիան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմաբանասիրական սկզբնարկներ), հեղինակներ՝ Ա. Բոզոյան, Ռ. Ծուքուրով, Վ. Տեր-Ղեւոնդյան, Գ. Դանիելյան, Երեւան 2016, էջ 200-285:

Դիվան IX – Դիվան հայ վիմագրության, արակ IX. Լոռու մարզ / կազմեցին Ս.Գ. Բարխուդարյան, Կ.Գ., Ղաֆադարյան, Ս.Տ. Սաղսումյան, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012:

ԹԸ 1871 – Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Ծնորհալոյ, Երուսաղէմ 1871:

Թորոսյան 1992 – «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպէս Զաքարյան Հայաստանի ու Զաքարյանների պատմության սկզբնաղբյուր, բնագրի թարգմանությամբ ու մեկնաբանություններով հանդերձ, Երեւան, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 1992, էջ 420:

Կանոնագիրք Ա – Կանոնագիրք Հայոց, Ա / Աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1964 :

Կիրակոս 1961 – Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երեւան 1961:

Կոստիկյան 2019 - Բ. Կոստիկեան, Պարսից գրագրության մէջ Հայոց կաթողիկոսներին տրուած տիտղոսն ու պատուանունները, Հանդէս ամսօրեայ, 2019, 1-12, էջ 122- 132:

ՀԺՊ - Հայ ժողովրդի պատմություն, հ. III / խմբ. Առաքելյան Բ., Բաբայան Լ., Մնացականյան Ա, Տեր-Ղեւոնդյան Ա, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976:

ՀՀՇՏԲ – Թ.Խ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ.Խ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, չորս հատորով, Երեւան, Երեւանի Համալսարանի հրատարակչություն, 1986 :

ՀՊ - Հայոց պատմություն, հտ. II. Միջին դարեր, գիրք Երկրորդ (IX դարի կէս – XVII դարի առաջին կէս), Երեւան, Զանգակ, 2014 :

Ղազարյան 2020 – Գ. Ղազարյան, Անտիոքի պատրիարգության հայկական թեմերը (Ե – ԻԱ դդ.) - Արեւելյան աղբյուրագիտություն, հ. 2, Երեւան 2020, էջ 393 -426 (հրատ. ընթացքում);

Մաթեոսյան 1997 - Կ. Մաթեոսյան, Անի. եկեղեցական կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 1997:

Մաթեոսյան 2011 - Կ. Մաթեոսյան, Հէթում պատմիչ Կողիկոսցին եւ նրա ժամանակագրությունը, Երեւան 2011 :

Մաթեոսյան 1982 - Ռ. Մաթեոսյան, Տաշիր-Զորագետ (X դ. - XII դ. սկիզբ), Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982 :

Մ.Ժ. – Մանր ժամանակագրություններ XIII – XVIII դդ., հտ. I / Կազմեց՝ Վ.Ա. Հակոբյան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1951:

Մատթէոս 1898 - Մատթէոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ 1898 :

Մարգարյան 1980 – Հ.Գ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, ՀՍՍՀ ԳԱ հրակարակչություն, Երեւան 1980:

Մելիքսեթ-Բեկ-2016 - Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց Հիւսիսային կողմանց» եւ նրանց ինքնությունը. հայ-վրացական հարաբերություններ (պատմագրական հետազոտության փորձ), վրացերենից թարգմանեց Հր. Բալրամյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2016:

Մելիքսեթ-Բեկ 1936 – Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի լեվ հայերի մասին. քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթագրություններով լեվ հավելվածներով, հ. Բ (ԺԳ – ԺԸ դար), Յերեւան 1936:

Մխիթար 1867 – Մխիթարայ Այրիվանցոյ Պատմութիւն Ժամանակագրական / ի լոյս ընծայեաց Ք[երովբէ] Պ[ատկանեան], Ս. Պետերբուրգ, ի տպարանի կայսերական ճեմարանի գիտութեանց, 1867:

ՄՀ – Գրիգոր Մագիստրոս. - Մատ

Մուրադյան 2008 – Պ. Մուրադյան, Կովկասի մշակութային աշխարհը եւ Հայաստանը, պրակ Ա, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2008 :

Մուրադյան 2011 – Պ. Մուրադյան, ԺԱ-ԺԲ դարերի դավանական խնդիրները եւ Մխիթար Գոշի «սո վրացիսն» թուղթը. աղբյուրագիտական քննություն եւ բնագրեր, Ս. Էջմիածին 2011;

Մուրադյան 2012 – Պ. Մուրադեան, Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, պրակ Բ, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն», 2012:

Պերպերեան 1964 - Հ.Պերպերեան, Անանիա հակաթոռ կաթողիկոս 1201-1211 (1223 °). - Սիոն, 1964, թ. 10, էջ 286-289, թ. 11-12, էջ 360-363:

Սամուել Անեցի եւ շարունակողներ - Սամուել Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն Ադամից մինչեւ 1776 թ. / Աշխատասիրությամբ Կ. Մաթետոյանի, Երեւան, «Նաիրի», 2014 :

Սմբատ 1956 – Սմբատ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ – Ս. Ղազար 1956:

Ստեփաննոս 1861 - Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական / ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա 1861 :

Ստեփանոս 1986 - Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն / թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները Ա.Ա. Աբրահամյանի, Երեւան, «Սովետական գրող», 1986:

Վարդան 1861 - Վարդան Բարձրաբերդցի [Արեւելցի], Պատմութիւն Տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա 1861:

Տեր-Պետրոսյան 1989 - Լ. Տեր-Պետրոսյան, Ասորիների դերը հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԲ-ԺԳ դարերում, Վենետիկ, Ս. Ղազար, 1989:

Տեր-Ղեւոնդյան 1994 - Վ. Տեր-Ղեւոնդյան, Կիլիկյան Հայաստանը եւ Մերձավոր Արեւելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, Երեւան 1994:

Օրմանեան 1912 - Մ. արք. Օրմանեան, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը, յարակիչց ազգային պարագաներով պատմուած, հտ. Ա, Կ. Պոլիս, Հրատարակչություն Վ. եւ Հ. Տեր-Ներսէսեան, 1912:

Berbérian 1966 - H. Berbérian, Le Patriarcat arménien du sultanat de Roum. – REArm., N. S., t. III (1966), p. 233-243.

Bozoyan 2016 - A. Bozoyan, L'Église et l'identité arméniennes dans le Caucase et l'Empire Byzantin aux IX^e-X^e siècles. – L' Arménie et la Géorgie en dialogue avec l'Europe. Du Moyen Âge à nos jours / é d. I. Augé.

Brosset 1849 - Histoire de la Géorgie depuis l'Antiquité jusqu'au XIX^e siècle, traduite du géorgien par M. Brosset, 1^{re} Partie : Histoire ancienne, jusqu'en 1469, St.-Pétersbourg, 1849. de la Géorgie depuis l'Antiquité jusqu'au XIX^e siècle, traduite du géorgien par M. Brosset, 1^{re} Partie : Histoire ancienne, jusqu'au 1469 de J.-C., S.-Pétersbourg, 1849.

Cecere 2020 - Giuseppe Cecere, A Coptic Historian and “the Caliph of the Armenians”: Cross-cultural Dynamics and Rhetorical Strategies in al-Mufaḍḍal Ibn abī l-Faḍā'il. – Արեւելյան Աղբյուրագիտություն, հ. 2, Երեւան 2020, էջ 203-262.

Grumel 1958 – V. Grumel, La Chronologie, Patis 1958 [Traité d'études byzantines, I].

Guillaume de Tyr 1986 - Guillaume de Tyr, Chronicon / édition critique par R. B. C. Huygens, détermination des dates par H. E. Mayer et G. Rösch, Tvrnholti, Typographie Brepols editors pontifici, 1986:

Hewsen 2001 - R. Hewsen, Armenia. A Historical Atlas, Chicago and London, The University of Chicago Press, 2001.

Mkhithar 1869 – Histoire chronologique par Mkhithar d'Aïrivank, XIII^e s. / traduite de l'arménien, sur le manuscrit du Musée Asiatique par M. Brosset, St.-Pétersbourg 1869 [Mémoires l'Académie impériale des sciences de St.-Pétersburg, VIIe série. Tome XIII, № 5] .

Mutafian 2021 – Cl. Mutafian, Jérusalem et les Arméniens jusqu'à la conquête ottomane (1516), Paris 2021 (հանձնված է հրատարակության):

M. S. t. III – Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche (1166-1199) / Éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris 1905 .

РНС d. a. – Recueil des Historiens des Croisades, Documents Arméniens, tome I, Paris MDCCCLXIX .

Меликсет-Бек 2010 – Л. М. Меликсет-Бек, Источниковедческие заметки / Составитель и редактор П. М. Мурадян, Ереван, «Гитутюн», 2010.

Орбели 1914 – И. А. Орбели, Надписи Мармашена. – Памятники армянской эпиграфики, I, Издание Анийского музея древностей, Петроград 1914 [переиздание: И. А. Орбели, Избранные труды, Ереван, Издательство АН Арм. СССР, 1963, с. 440-454] .

Шукуров 2016 - Р. М. Шукуров, Образ киликийской Армении в мусульманских источниках. – Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմաբանասիրական ակնարկ) / խմբագիր՝ Ա. Բոգոյան, Երևան 2016, էջ 93-94 :

გაბიძაშვილი 1978 - ე. გაბიძაშვილი, რუის-ურბნისის კრების ძეგლის წერა (ფილოლოგიურ-ტექსტოლოგიური გამოკვლევა), თბილისი 1978;

მაისურაძე 1982 - გ. მაისურაძე, ქართველი და სომეხი ხალხების ურთიერთობა XIII-XVIII საუკუნეებში, თბილისი 1982;

საქართველოს ისტორიის ნარკვევები - საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ. III : საქართველო XI – XV საუკუნეებში / ტომის რედაქტორები ზ. ანჩაბაძე, ვ. გუჩუა, თბილისი 1979;

ჯავახიშვილი 1965 - ივ. ჯავახიშვილი, ქართველი ერის ისტორია, წიგნი მეორე, თბილისი 1965;

ქ.ც. - ქართლის ცხოვრება, ს. ყაუხჩიშვილის რედ., ტ. II, თბილისი 1959.

ՉՈՏՐԱՔ ԳԵՒՈՐԳՅԱՆ

ՀՀ ԳԱՆ Գաստնոթյան ինստիտուտ

ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՌԵՒՏՈՒՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՎԱԳՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Կիլիկյան Հայաստան, միջնադար, համակեցություն, միջնադարյան առևտուր, առօրեակալություն:

Առևտուրը երկրագնդի վրա սկիզբ առավ այն պահից, երբ մարդն ինչ-որ բան փոխանակեց մեկ այլ մարդու հետ, ըստ այդմ, միմյանց միջեւ կնքելով փոխշահավետ պայմանագիր: Անհնար է պարզել, թե դա երբ է տեղի ունեցել, սակայն շատ ավելի կարեւոր է հասկանալ, թե հազարամյակների ընթացքում մարդն ինչպես սկսեց սովորել առևտուր անել: Այլ կերպ ասած, սկսեց հասկանալ, ինչպես առնել եւ ինչպես տալ, թե ինչն է պատկանում իրեն, ինչը՝ ոչ, որն է իր տարածությունը, որը՝ ոչ:

Երկրագնդի բնակչության ավելացմանը զուգընթաց՝ մարդկանց միջեւ համակեցական տարածությունն աստիճանաբար կրճատվում էր, իսկ ռեսուրսների ու դրանց օգտագործման արդյունավետության սահմանափակությունը մարդկային հարաբերությունները դարձնում էին բովանդակալից, սակայն ավելի լարված, մրցակցային ու դրամատիկ: Մարդկային համակեցական հարթակում տարածությունը ոչ միայն ուներ ֆիզիկական բնույթ ու ճշանակություն, այլեւ դառնում էր մտածողության ձեւ եւ մշակույթ: Համատեղ ուժերով նյութական ու հոգեւոր ավելի մեծ նվաճումների հասնելու մղումը հանգեցրեց առանձին տարածքներում ճատակցության հասած բնակչության կուտակումների, այն է՝ առաջին քաղաքների առաջացմանը, որոնք էլ դարձան մարդկային քաղաքակրթական զարգացման դարբնոցները: Առևտուրը կարեւորագույն միջոց էր տարբեր իրականությունների հաղորդակցության, տեղեկատվական կապի, տարբեր մշակույթների միահյուսման գործընթացում եւ առ այսօր էլ իրականացնում է այդ առաքելությունը:

476 թ. Արեւմտահռոմեական կայսրության անկումը հատկապէս Արեւմտյան Եվրոպայում սասանեց կենտրոնաձիգ պետության «հավերժության» միֆերը: «Բոլոր ճանապարհները տանում են Հոռոմ» հայեցակարգի՝ դարերով ձեւավորված ֆիզիկական ու հոգեւոր արտահայտությունները փոփոխվում էին. փոխվում էին ճանապարհները, հողատիրության սահմանները, մարդկանց

տարածական ընկալումները: Խորհրդանշական ասած՝ հասարակական-քաղաքակրթական «փորձարկումների փորձանոթը», որի մենաշնորհը Եվրոպայում դարերով պատկանում էր Հոռոմ քաղաքին, սկսում էր տարածվել եւ ունենալ շատ «մասնաճյուղեր»՝ արագությամբ խոշորացող եվրոպական, Մերձավոր Արեւելքի, Հյուսիսայի Աֆրիկայի բազմաթիվ այլ քաղաքների միջոցով:

Վաղ միջնադարին տրված բնորոշումները շատ են, սակայն այն կարելի է բնութագրել հետեւյալ՝ «երկար երկխոսություն հողի հետ» արտահայտությամբ: Վաղ միջնադարյան ավատատիրությունը դարձավ հենց այդ՝ մարդ-բնություն, մարդ-հող երկխոսությունների մոր ձեւաչափերի խմորումների ժամանակաշրջանը: Նախկինում Հոռոմի սովերի տակ մնացած եվրոպական քաղաքային բնակավայրերը վերածվեցին «մոր Հոռոմերի»՝ ավելի ընդարձակելով մարդկային հասարակական, տնտեսական գործունեության սահմանները: Միակենտրոն համակարգն աստիճանաբար դառնում էր բազմակենտրոն, ինչը միջնադարյան միջավայրում անխուսափելիորեն փոխում էր մարդու տարածական ու ժամանակային ընկալումները: Զարգացած միջնադարն, ըստ էության, «Զարգացած» անվանվեց այն պատճառով, որ մարդկային համակեցական միջավայրում հողին ավելացան կապիտալի բազմաթիվ այլընտրանքներ, որոնք պայմանավորեցին սոցիալ-հասարակական ու տնտեսական հարաբերությունների հետագա փոխակերպումները: Այդպիսի օրինակներից է սկսած 8-րդ դարից Չինաստանից թղթի պատրաստման տեխնոլոգիաների տարածումը Մերձավոր Արեւելք եւ Եվրոպա, որը խորքային փոփոխություններ առաջացրեց մարդու կենցաղում եւ ֆինանսադրամական հարաբերություններում: Խաչակրաց արշավանքներով ուղեկցվող Զարգացած միջնադարը դարձավ փոքր ու մեծ տարածական, հաղորդակցական ու ժամանակային «վակուումների» ճեղքման ժամանակափուլ, որի կարեւորագույն գործիքներից էր առեւտուրը: Ինչպես Հոռոմեական կայսրության ժամանակներում, Խաչակրաց արշավանքներով նախանշված ժամանակաշրջանում եւս, ծովային ու ցամաքային առեւտրային ճանապարհներով միմյանց հետ վերստին սկսեցին սերտանել ոչ միայն մակրո մակարդակում՝ Եվրոպան, Ասիան ու Աֆրիկան, այլեւ հաղորդակցական տարածությունները: Նախ եւ առաջ կրճատվել էին տարածությունները այդ աշխարհամասերի ներքին՝ տարածական միկրո մակարդակներում՝ քաղաք-քաղաք, քաղաք-գյուղ, միաժամանակ, բացի ֆիզիկական հեռավորություննից՝ փոխելով մարդու ժամանակային ընկալումները եւս:

Արդեն 12-րդ դարում իտալական քաղաքներում՝ հատկապես Սիենայում եւ Ֆլորենցիայում ձեւավորվեցին բանկային համակարգեր, որոնք ինստիտուցիոնալ խորքային փոփոխություններ առաջացրեցին արեւմտաեվրոպական, միջերկրածովյան ավազանի ֆինանսական հարաբերություններում, որոնցում ներգրավված էր նաեւ Կիլիկիայի հայկական պետությունը:

«Աննայների» պատմագիտական ֆրանսիական դպրոցի ներկայացուցիչ Ժակ լը Գոֆը հմտորեն սինթեզում է միջնադարյան կյանքի հոգեւոր ու նյութական իրականությունները եւ պատկերավոր դարձնում դրանց համապատասխան տարածական ու ժամանակային ներքին կառուցվածքները¹: Եթե միջնադարյան Եվրոպայում անտառի սկիզբն ընկալվում էր որպես քաղաքակրթության սահման, որից անդին մարդկանց ընկալումներում արդեն ապրում էին բարբարոսները, օրենքից դուրս մարդիկ, ապա Հյուսիսային Աֆրիկայի ու Մերձավոր Արեւելքի անապատներում, որտեղ անտառը հազվադեպ երեւոյթ էր, հակառակը՝ մի քանի ծառից բաղկացած օազիսը քաղաքակրթական տարածությունն էր: Եթե միջնադարյան ճգնաժամը, քաղաքային կյանքում մարդկային լարված հարաբերություններից փախչողները, սիրահարները, ինչպես նաեւ ավազակները, որոնք առատորեն ներկայացված են նաեւ եվրոպական գեղարվեստական գրականության մեջ (Տրիստան եւ Իզոլդա, Ռոբին Լուդ եւ այլն), Եվրոպայում պատասպարվում էին անտառում, ապա Արեւելքում նրանք գնում էին անապատ:

Պատկերավորության համար Ժակ լը Գոֆը բերում է հատված «Տրիստան եւ Իզոլդայից»․ «Երբ Նորվեգացի ծովահենն վաճառականներից փախչող երիտասարդ Տրիստանը իջնում է Բորնուոլի ափ. նա մեծ ջանքերով բարձրացավ ժայռի վրա եւ տեսավ իր դիմաց ամալի ավազոտ հովիտ, որի վերելում ձգվում էր անվերջ անտառ: Բայց հանկարծ, անտառից հայտնվեց որսորդների մի խումբ, եւ նրան միացավ մի երիտասարդ: Հետո նրանք ճամփա ընկան, խոսելով ճանապարհին, մինչեւ վերջապես հասան մի հոլակապ ամրոց, որը շրջապատված էր մարգագետիններով, պտղատու այգիներով, ձկնաբուծարաններով ու վարելահողերով» (թարգմանությունը՝ Զ. Գ.)²:

Բացի բնական լանդշաֆտի զուտ նկարագրությունից՝ այս հատվածը պարունակում է մարդկային գործունեության եւ բնության միջեւ միջնադարյան սահմանների պատկերավորումը, այդ սահմանները գծող տվյալ ժամանակին հատուկ տարբեր բաղադրիչներ՝ մի կողմում անվերջ անտառը, իսկ մյուս կողմում՝ ամրոցներ, ձկնաբուծարաններ ու վարելահողեր:

Իսկ ինչպիսի՞ տպավորություն կունենար Հայկական լեռնաշխարհից դաշտային Կիլիկիա ժամանած մարդը, որը լեռներով ու լեռնահովիտներով կտրտված լանդշաֆտից հետո առաջին անգամ հայտնվում էր 400 մետր բացարձակ բարձրության վրա գտնվող դաշտավայրում, որից այն կողմ արդեն անձայրածիր ծովն էր: Բնական նոր միջավայրն աստիճանաբար փոխում էր մարդկանց միջեւ ձեւավորվող թե՛ տարածական համակեցական հեռավորու-

¹ Ле Гофф Ж., Цивилизация средневекового Запада, Екатеринбург, 2005, с. 159.

² Նույն տեղում, էջ 159-161:

թյունները, եւ թե՛ ժամանակային ընկալումները: Ծովը բերում էր հաղորդակցական նոր միջավայրի ձեւավորմանը, տեղեկույթի փոխանցման նոր արագությունների, երբ հայ մարդը հաղորդակցական կապի մեջ էր մտնում Միջերկրական եւ Սեւ ծովերի հարյուրավոր քաղաքների հետ: Որեւէ բնույթի գործընթաց, փոփոխություն անխուսափելիորեն դառնում էր ավելի արագ, ինչը բնականաբար ազդելու էր մարդու մտածողության ու կենսագործունեության վրա: Կիլիկիայում հաստատվում էին ոչ միայն բուն Հայաստանի բոլոր կողմերից ժամանած հայ ազնվականներ, այլեւ տարբեր խավերի բնակչություն: Որպեսզի ավելի պատկերավոր դառնա, թե ինչպես նոր միջավայրում իրենց կենսագործունեությունը հաստատեցին, օրինակ, հեռավոր Արցախից Կիլիկիա ժամանած Օշին իշխանն ու նրա հետ միասին եկածները, կարելու է ոչ միայն ուսումնասիրել իշխանի ունեցած քաղաքական հարաբերությունները, այլեւ հնարավորինս վերհանել մարդկանց առօրյայի տարբեր բաղադրիչներ՝ առեւտուր, ապրելակերպ եւ այլն: Անշուշտ, Կիլիկիո բնության ամենագրավիչ բաղադրիչը ծովն էր, որի էկզոտիկությունն ու ծովին բնորոշ անդորրը դեպի իրեն էր ձգում հայ մարդուն: Բուն Հայաստանից Կիլիկիա, հատկապես 11-րդ դարից սկսած հայերի՝ «լեռներից դեպի ծով» ընթացքը միջնադարյան ժողովրդագրական մեծ տեղաշարժերի յուրահատուկ օրինակ է: Բնական նոր միջավայրում արմատավորվելու, դրան հարազատանալու ու համակեցական նոր իրականության հասունացումն ավելի քան պատկերավոր ներկայացնում է 12-րդ դ. բանաստեղծ, երաժիշտ, աստվածաբան, քաղաքական գործիչ Ներսես Ծնորհալին (1166 թվականից Հայոց կաթողիկոս Ներսես Դ Կլայեցի) իր «Թուղթ ընդհանրական» սկզբում.

«Ընդհանուր հուսատացելոց հայկականացո սեռից, որք յարեւելս՝ ի սեփական աշխարհո Հայաստանեայցո բնակեալք, եւ որք ի յարեւմտեան կողմանսդ սահեալք մտնեալքեամբ, եւ որք ի միջերկրայս՝ ի մէջ այլալեզու ազանց տարբերեալք, եւ որք յիրաքանչիւր յեզերս աշխարհաց ըստ մեղաց մերոց ցրուեալք ի քաղաքս եւ ի դղեակս, ի գիւղս եւ յագարակս, որոց այդոցիկ ամենեցունց՝ քահանայապետաց եւ քահանայից, վանականաց եւ քաղաքայնոց, իշխանաց եւ իշխեցելոց, զինուորաց դասուց՝ ձիավարժից եւ հետեւակաց, գաւառապետաց եւ գործակալաց, տանուտէրաց եւ երկրագործաց, վաճառականաց եւ արուեստագիտաց եւ որոց միանգամ ի գանազան ճանապարհս ընթանան կենցաղոյս՝ ըստ ընտրութեան կամաց եւ յօժարութեան, արանց եւ կանանց, մանկանց եւ երիտասարդաց, կատարելոյ եւ ծերոց, որք ըստ օրինաց աշխարհի քաղաքավարեալք, եւ որք գերաշխարհիկք են վարուք, ողջո՛յն սիրոյ եւ խաղաղութեան հասցե յԱստուածընկալ եւ փրկական Սրբոյ նշանէս...»³:

³ **Ներսես Ծնորհալի**, Թուղթ ընդհանրական, աշխատասիրությանը **Է. Մ. Բաղդասարյանի**, Երեւան, 1995, էջ 53-54:

Ըստ էության, Ներսես Ծնորհալիւն տվել է Կիլիկիայի հաշկական պետության 12-րդ դ. հասարակական համապատկերը՝ հոգեւոր դասը (քահանայապետաց եւ քահանայից, վանականաց եւ քաղաքայնոց), քաղաքական միջավայրը (իշխանաց եւ իշխեցելոց), զինվորականությունը (զինուորաց դասուց՝ ձիավարժից եւ հետեւակաց), բնակչության սոցիալական տարբեր այլ շերտեր (գաւառապետաց եւ գործակալաց, տանուտէրաց եւ երկրագործաց, վաճառականաց եւ արուեստագիտաց եւ որոց միանգամ ի զանազան ճանապարհս ընթանան կենցաղոյս): Սակայն հասարակության տարբեր կողմերը ներկայացնելուց գատ, Ծնորհալիւն իր այս ուղերձում շեշտադրում է առավել կարեւորի՝ հասարակական համակեցության վրա եւ այդ համակեցության բանաձեւման ներքո ներառում հարաբերությունների տարբեր ձեւաչափեր՝ տղամարդիկ ու կանայք, ծերեր եւ երիտասարդներ, աշխարհիկ ու հոգեւոր կյանքով ապրողներ: Ընդ որում, որեւէ տարբերակում չդնելով, այլ հակառակը՝ նշելով, որ բոլորը, անկախ այն հանգամանքից, թե նրանք Կիլիկիայում հաստատվել են բուն Հայաստանից, թե շրջակա այլ երկրներից ու տարածքներից («... որք յարեւելս՝ ի սեփհական աշխարհոյ Հայաստանեացոյ բնակեալք, եւ որք ի յարեւմտեան կողմանոյ սահեալք մտնեալք, եւ որք ի միջերկրայս՝ ի մէջ այլալեզու ազանց տարբերեալք, եւ որք յիրաքանջիւր յեզերս աշխարհաց ըստ մեղաց մերոց ցրուեալք ի քաղաքս եւ ի դղեակս, ի գիւղս եւ յագարակս... »):

Ներսես Ծնորհալիւն, ուղղակի կամ անուղղակի, փաստում է արդեն 12-րդ դարի ընթացքում Կիլիկիան Հայաստանում ձեւավորված հասարակական, համակեցական արդեն ձեւավորված տեսք ունեցող պատկերի, մեկը մյուսից հստակորեն սահմանազատված բնակավայրերի տարբեր տեսակների մասին (քաղաք, դղյակ, գյուղ, ագարակ): Ի դեպ, նրա կողմից բնակավայրերի թվարկումը ոճաբանորեն մնան է «Տրիստան եւ Իզոլդայից» մեջբերված հատվածին եւ մեկնաբանությանը, որտեղ քաղաքակրթական միջավայրերի սահմանազատում անցկացնելու համար թվարկվում էին բնակավայրերի, կենսամիջավայրերի տարբեր ձեւեր:

Հասարակական հաղորդակցական ներքին միջավայրի հասունացումը եւ դրան զուգահեռ, 13-14-րդ դդ. ընթացքում միջերկրածովյան աշխարհին Կիլիկիան Հայաստանի արագ ու բազմակողմանի ներգրավումը բերելու էին արտաքին աշխարհի հետ նոր որակի հարաբերությունների, ոչ միայն միջազգային քաղաքական, առեւտրատնտեսական, այլ նաեւ մշակութային, արվեստի ու գիտության միտումների տեսանկյունից:

Հաղորդակցական ընդհանուր միջավայրի հասունացման պատկերավոր օրինակ է տալիս 14-րդ դ. ապրած, վաղ Վերածննդի դարաշրջանի հոչակավոր ներկայացուցիչ Ջովաննի Բոկաչչոն իր «Դեկամերոնում», որտեղ մի ամբողջ գլուխ նվիրել է Թեոդորոս (որին հետո Իտալիայում անվանում են Պիետրո)

անունով Կիլիկիայից մի հայ երիտասարդի կյանքի պատմությամբ: Ինչպես է նա մանուկ հասակում ջենովացի ծովահեռների կողմից Կիլիկիայի ափերից առեւանգվում, տեղափոխվում Սիցիլիա եւ վաճառվում Տրապանի քաղաքից Ամերիգո անունով մի մեծահարուստի: Թեոդորոս-Պիետրոն արդեն երիտասարդ հասակում սիրահարվում է Ամերիգոյի դստերը՝ Վիոլամտային: Վերջինս հղիանում է եւ, երբ Ամերիգոն իմանում է այդ մասին, հրամայում է մահապատժի ենթարկել հայ երիտասարդին: Սակայն դեպքերն արագ են զարգանում եւ այն պահին, երբ Թեոդորոս-Պիետրոյին տանում են մահապատիժն ի կատար ածելու, հանկարծ ճանապարհին հանդիպում են Կիլիկյան Հայաստանի արքայի պատվիրակներին, որոնց մեջ Ֆինեո անունով մի հայ, տեսնելով մեղադրյալի կրծքի վրայի խաչի պատկերով ճշանդ, ճանաչում է իր որդուն, որին տարիներ առաջ կորցրել էր: Ամերիգոն ու Ֆինեոն որոշում են ամուսնացնել Թեոդորոս-Պիետրոյին եւ Վիոլամտային: Ծառ խորհրդանշական է Բոկասչչոյի վերջաբանը, երբ նա գրում է, որ սիրահար ամուսինները գնում են Լայացցո (Այսա քաղաքը Կիլիկյան Հայաստանում) եւ մինչեւ իրենց կյանքի վերջն ապրում խաղաղ ու հաշտ⁴:

Ըստ էության, Ջովաննի Բոկասչչոն պատկերավոր է դարձրել իր ապրած ժամանակներում՝ 14-րդ դարում, Միջերկրական ծովի տարբեր հատվածների միջեւ ընթացող հաղորդակցության դիմամիկան, ինչպես են նույն սյուժեի մեջ ներառվել Սիցիլիայի իտալացին ու կիլիկեցի հայը:

Եվ այսպես, եթե Եվրոպայում ճգնավորը հեռանում էր անտառ, Արեւելքում՝ անապատ, ապա Կիլիկիայում, ըստ ամենայնի՝ լեռներ: Ինչի՞ց էր հեռանում ճգնավորը. առավել հաճախ՝ քաղաքային եռուզեռից, ինչը վկայում է քաղաքային բնակչության արագ աճի մասին: Կիլիկյան Հայաստանում միջազգային առևտրային կապերը ներառում էին միջերկրածովյան ու սեւծովյան ավազանները: Այն խթանում էր քաղաքների զարգացմանը, դրանցում բնակչության մեծ կուտակումների, ինչը կրճատում էր միջմարդկային համակեցական տարածությունը, հարաբերությունները դառնում էին ավելի բազմաշերտ ու լարված:

13-րդ դարի անմիջապես սկզբից, Լեոն I (II) Մեծագործը (1187-1198 թթ.՝ որպես իշխան, 1198-1219 թթ. որպես թագավոր) առևտրային պայմանագրեր կնքեց այդ ժամանակաշրջանի միջերկրածովյան եւ սեւծովյան ավազանների տնտեսական գլխավոր դերակատարների՝ Վենետիկի ու Ջենովայի հանրապետությունների հետ⁵: 1258 թ. մոնղոլական զորքերը նվաճում են Բաղդադը եւ

⁴ **Giovanni Boccaccio**, The Decameron, Or Ten Day's Entertainment of Boccaccio, H. G. Bohn, 1867, pp. 281-286.

⁵ **V. Langlois**, Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, Venise, 1863, p. 105-109, 126-128.

կործանում Աբբասյան խալիֆայությունը: Մոնղոլները հիմնում են Իլխանություն անվանումով պետությունը, որը ձեռակառուցում էր Մոնղոլական կայսրության կազմի մեջ, սակայն իրականում առաջնորդվում էր խաղի իր կանոններով: Այս պետության հիմքը դառնում է Իրանը, իսկ մայրաքաղաքը՝ Թավրիզը: Մինչ այդ, Բաղդադից առեւտրային ճանապարհները ճառագայթաձեւ գնում էին դեպի Միջերկրական ծովի ասորապաղեստինյան ափի խաչակրաց անվահանգիստները, որոնք դեռ Խաչակրաց առաջին արշավանքների ժամանակներից կատարում էին Արեւելք-Արեւմուտք առեւտրային փոխհոսքերի առանցքի դերը: Նվաճելով Բաղդադը եւ իրենց մայրաքաղաքը դարձնելով ավելի հյուսիսում գտնվող Թավրիզը, մոնղոլները փաստորեն շեղում էին առեւտրային այդ առանցքը դեպի հյուսիս՝ միաժամանակ քաղաքական ու տնտեսական սուր կախվածության մեջ գցելով Արեւելքի Խաչակրաց պետություններին, դրանով հանդերձ նաեւ եվրոպական տարբեր պետություններին ու Պապությանը: Աշխարհաքաղաքական այս փոփոխություններում անախադեպ դերակատարում էր ստանում Կիլիկիայի հայկական պետությունը, որը դառնալու էր Թավրիզից դեպի Միջերկրական ծով դուրս եկող առեւտրային ուղիների գլխավոր դարպասը: Տվյալ ժամանակի համաշխարհային նշանակության այս մեծ նախագծին հայկական կողմն արդեն նախապատրաստվել էր, երբ 1254 թ. Հեթում I թագավորը (1226-1269 թթ.) ժամանելով Մոնղոլական կայսրության մայրաքաղաք՝ Կարակորում, հանդիպելով մեծ խան Մանգուիին (1251-1259 թթ.) ձեռք էր բերել բազմաշերտ պայմանավորվածություններ: Հաշվի առնելով այն, որ մոնղոլների գերնպատակներից էր նյութական մեծ հարստություններ կուտակելը, Հեթումի եւ Մանգուի պայմանավորվածություններում առանցքային տեղ էր զբաղեցնելու նաեւ Արեւելք-Արեւմուտք առեւտրային հարաբերություններում Կիլիկիայի դերակատարության քննարկումը:

Ինչպե՞ս էին առեւտուր անում Կիլիկյան Հայաստանում, առեւտրային մեծ ու փոքր հարաբերություններում ինչպե՞ս էին դրսևորվում ժամանակին բնորոշ բարոյական, համակեցական ու էթիկական նորմերը: Արդյոք այդ նորմերը փաստաթղթավորված էին, մասնավորապես՝ օրինակ, արտահայտված իրավական փաստաթղթերում, տարբեր պայմանագրերում, թե առավելապես մնում էին բանավոր՝ առօրյա պայմանավորվածությունների դաշտում:

Կիլիկյան քաղաքները, հատկապես Ալսաքը, վերածվել էին կոմոպոլիտ միջավայրերի, որտեղ կողք կողքի ապրում էին հալը, հույներ, հրեան, արաբը, իտալական, ֆրանսիական ու իսպանական քաղաքներից ժամանած հազարա-

⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 367: J. Richard, La Paupauté et les missions d'Orient au moyen âge (XIII^e-XV^e siècles), Ecole Française de Rome, Paris, Rome, 1998, p. 70-81.

վոր վաճառականներ եւ այլ մասնագիտությունների տեր մարդիկ: Ջենովացիներն ու վենետիկցիներն Այասում, Սիսում, Կոռիկոսում ու Մամեստիայում ունեին իրենց թաղամասերը, որոնցում կային հանրային մշակութային տարբեր կառույցներ՝ եկեղեցիներ, համայնքի առաջնորդի՝ կոնսուլի կամ հյուպատոսի տունը, բաղնիքներ, ապրանքային պահեստներ եւ այլն⁷:

Եվ, թեեւ մինչեւ 13-րդ դ. առաջին կեսը Կիլիկյան Հայաստանն արդեն ավելի քան կես դարի առեւտրային հարաբերությունների ավանդույթներ ուներ Միջերկրական ծովում, սակայն հենց 1250-ականների վերջից էր, որ Կիլիկյան մավահանգիստներում առեւտրի ծավալները սկսում են կտրուկ աճել: Այսան աստիճանաբար դառնում էր Արեւելյան Միջերկրականի խոշորագույն մավահանգիստներից, որտեղ, ինչպես եւ Կիլիկիայի մյուս քաղաքներում, անմախաղեպ կերպով աճում էր այլազգի բնակչության քանակը:

Ինչպե՞ս էր ներքին եւ միջազգային առեւտուրը կառուցվածքային փոփոխություններ առաջացնում Կիլիկյան Հայաստանի համակեցական տարբեր ձեւաչափերում, քաղաք-գյուղ փոխհարաբերություններում: Այս համատեքստում կարելու է մշտել, որ միջազգային առեւտուրը կտրուկ ավելացնում էր ապրանքների քանակական պահանջարկը, ինչն անխուսափելիորեն մեծացնում էր նաեւ դրանց տեսականին ու որակական չափանիշները: Այս հանգամանքն անդրադառնում էր հատկապես քաղաքի արհեստավորական արտադրանքների վրա: Միջազգային առեւտրային կապերը, ծովային հաղորդակցությունը եւ Կիլիկյան քաղաքներում հաստատված ազգային բազմերանգ համայնքների առկայությունն իր հետ բերում էր տարբեր տեխնոլոգիաների ներհոսք, որը ժամանակի ընթացքում սինթեզվում էր տեղական արտադրական-արհեստավորական հմտությունների: Որպես ցայտուն օրինակներ, կարող ենք մշտել թուրքերը, բամբակը, մետաքսը, որոնց արտադրության տեխնոլոգիաները 13-14-րդ դդ. լայնորեն տարածվել էին Կիլիկյան Հայաստանում: Քաղաքային արհեստավորի համար հումքը մատակարարում էր գյուղացին՝ հողագործներն ու անասնապահները, հետեւաբար միջազգային շուկայում որոշակի ապրանքատեսակների մեծ պահանջարկը մեծացնում էր ոչ միայն քաղաքի արհեստավորի, այլ նաեւ գյուղացու աշխատանքի ծավալները: Ըստ այդմ, գյուղի ու քաղաքի միջեւ կրճատվում էր համակեցական տարածությունը, ինչն իր հետ բերում էր պետության ներքին հասարակական հարաբերությունների խորքային փոփոխությունների: Բազմաթիվ վկայություններ կան միջազգային շուկաներում Կիլիկյան Հայաստանում արտադրված տարբեր ապրանքների մեծ համբավի

⁷ V. Langlois, Le Trésor des chartes d'Arménie, p. 106, 162. L. Balletto, Notai Genovesi in Oltremare, atti rogati a Laiazzo da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277, 1279), Genova, 1989, A. N 34, 79, 80, B. N 12, 19, 22, 30, 33, 55, 58, 59, 76, 68, 116, 119, 130, 131:

մասին, օրինակ՝ հայկական բամբակ, չամիչ, մետաքս, ոսկե եւ արծաթյա թելերով ասեղնագործված մետաքսյա հագուստ (samitti, xamittos et drapos omnes sete ultramarino), ցփսի (կամելոտ, zambellotto կամ ciambellotto, ուղտի կամ այծի բրդից գործվածք), գորգեր եւ այլն⁸:

13-րդ դարից սկսած, Կիլիկյան Հայաստանում սկսեց ավելանալ բնակչության ոչ միայն թիվը, այլ նաեւ ազգային կազմը: Պետության ներսում առեւտրային, կենցաղային ու առօրեական հաղորդակցության ձեւերը դառնում էին ավելի բազմակողմանի, ինչն անխուսափելիորեն մեծացնում էր համակեցական նոր կենսաձեւ ու կանոններ ունենալու պահանջարկը: Դրանք մարտահրավերներ էին պետությանը, ուստի պատահական չէ, որ հենց այդ ժամանակամիջոցում Կիլիկիայի հայկական պետության համար օրակարգային դարձավ նոր օրենսգրքի կազմումը, որն ավելի համարժեք պետք է լիներ փոփոխվող իրողություններին: Այդ մեծ գործը ստանձնեց եւ իրականացրեց Սմբատ Սպարապետը: Բացի այն, որ Կիլիկյան Հայաստանի բնակչությունը խաչտարդետ էր ազգային կազմի տեսանկյունից, որտեղ միմյանց էին հանդիպում տարբեր մշակույթներ, կրոններ, խառնվածքներ, մասնագիտություններ ունեցող ու սոցիալական տարբեր շերտերին պատկանող այլազգի մարդիկ, այն բազմերանգ էր նաեւ ներհայկական տեսանկյունից: Այստեղ հաստատվել էին մեկը մյուսից հազարավոր կիլոմետր հեռավորության վրա գտնվող բուն Հայաստանի բնակավայրերից եկած սոցիալական տարբեր շերտեր ներկայացնող հայեր, որոնք նույնպես միմյանցից տարբերվում էին մշակութապես, խառնվածքով, իրավագիտակցությամբ եւ այլ բաղադրիչներով:

Ծով, միջազգային ու ներքին առևտրի բուռն զարգացում, այլազգի մեծաքանակ բնակչություն, քաղաքների ու քաղաքային բնակչության արագ աճ. այսպիսի գործոնների ներքո ձեւավորվող իրականության պայմաններում Կի-

⁸ **Francesco Balducci Pegolotti**, *La Pratica della Mercatura*, New York, 1970, p. 297, 366-367. **V. Langlois**, *Le Trésor des chartes d'Arménie*, p. 164. **Bondi Sebellico A.**, Felice de Merlis, prete e notaio in Venezia ed Ayas, 1315-1348, V. 1, Venezia, 1973, N 83. **M. Mazzaoui**, *The Italian Cotton Industry in the Later Middle Ages, 1100-1600*, Cambridge University Press, Cambridge, 1981, p. 34. **N. Jong-Kuk**, *Le commerce du coton en Méditerranée à la fin du moyen âge*, Leiden, 2007, p. 98-100. **W. Heyd**, *Histoire du commerce du Levant au moyen âge*, t. II, Amsterdam, 1967 p. 704-705. **Rey E.**, *Les colonies Franques de Syrie aux XII^{me} et XIII^{me} siècles*, A. Picard, Paris, 1883, p. 219. **M. G. Canale**, *Nuova istoria della Repubblica di Genova, del suo commercio e della sua letteratura, dale origini all'anno 1797*, V. 3, Firenze, 1860, p. 246. **D. Jacoby**, "Silk Economics and Cross-Cultural Artistic Interaction", *Byzantium, the Muslim World, and the Christian West*, *Dumbarton Oaks Papers*, 58, 2004, p. 234. **C. Otten-Froux**, "Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie d'après les actes notariés (1270-1320)", *L'Arménie et Byzance*, publications de la Sorbonne, Paris, 1996, p. 171.

լիկյան Հայաստանում ի հայտ էին գալիս քաղաքակրթական երկխոսությունների միկրո եւ մակրո մակարդակների հարթակներ, որոնք սկսում էին առաջ բերել մարդկային հասարակական հարաբերությունների նոր ձեւաչափերի, համակեցական գրված ու չգրված կանոնների, բարոյական ու էթիկական նորմերի փոխակերպումների պահանջ: Փորձենք առանձնացնել քաղաքակրթական երկխոսությունների մի քանի հարթակ. օրինակ, կոսմոպոլիտի եւ ազգային երկխոսությունը, որն արտահայտվում էր Կիլիկիայի հայկական պետության հասարակական կյանքի բացարձակապես բոլոր ոլորտներում՝ քաղաքական, իրավական, տնտեսական, եկեղեցական, մշակութային եւ այլն: Պետության բոլոր այս բնագավառներում ակնհայտորեն դրոշմվում էին ազգային ու կոսմոպոլիտի, ներքինի ու արտաքինի տարբեր համամասնություններ, որոնք արտահայտվում էին նույնիսկ տերմինների ու անվանումների պարագայում: Մասնավորապես, Կիլիկյան Հայաստանի պետական կառավարման օղակների, գործակալությունների անվանումները, որոնց ներքո սինթեզվում էր արեւմտաեվրոպական, բյուզանդական, արեւելյան եւ իհարկե ազգային ավանդույթներով կազմված բովանդակություն: Նույն հայեցակարգին հանդիպում ենք պետության իրավական դաշտում, մասնավորապես՝ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում», որի հիմքում եւս դրված էր մի կողմից՝ հայկական եւ մյուս կողմից՝ խաչակրաց, բյուզանդական ու արաբական իրավական ավանդույթների համաձայն նրբորեն կազմված համամասնություն:

Տարբեր խնդիրների տեսքով կոսմոպոլիտի ու ազգային երկխոսությունը, որն ընթանում էր ե՛ր համադրություններով, ե՛ւ հակադրություններով, տեսնում ենք միջեկեղեցական հարաբերություններում, միջազգային տնտեսական հարաբերություններում, մշակութային, գիտական ու կրթական իրականության մեջ եւ այլն:

Այն, որ պետության կողմից առաջնային նշանակություն էր տրված տնտեսական հարաբերությունների մակրո մակարդակի, այն է՝ միջազգային առեւտրային հարաբերություններին, փաստում են բազմաթիվ պետությունների հետ դեռեւս Լեոն I (II)-ի ժամանակներից կնքված առեւտրային պայմանագրերը: Դրանք առանձնանում են տվյալ ժամանակի համար իրավական ու էթիկական բարձր չափանիշներով, որոնցով կանոնակարգվում էին կողմերի միջեւ բազմակողմանի հարաբերությունները⁹: Միեւնույն ժամանակ, պետական կառավարման փիլիսոփայության հայեցակարգային մոտեցումներն անդրադառնում էին հասարակական հարաբերությունների միկրո մակարդակներին եւս. առօրեականության տարբեր դրվագներում՝ շուկա, կենցաղային սովորական առեւ-

⁹ V. Langlois, Le Trésor des chartes d'Arménie.

տուր, դատական գործընթացներ, այլազգիների հետ ամենօրյա հարաբերություններ եւ այլն: Սմբատի «Դատաստանագրքում» ակնհայտ առանձնանում են հարաբերությունների այնպիսի ձեւաչափեր, ինչպես, օրինակ, կին-տղամարդ, աշխարհիկ-հոգեւոր եւ այլն¹⁰: Իհարկե, երբ նույնիսկ 21-րդ դարի կատարյալ թվացող հաղորդակցության պայմաններում պետության կառավարման ազդակները հաճախ դժվարությամբ են հասնում եւ ազդում մարդկային հարաբերությունների ձեւի վրա, ապա միջնադարյան հաղորդակցական իրականության պարագայում այդ հանգամանքն անհամեմատ ավելի մարտահրավերային էր դառնում: Դրանով հանդերձ, մեծաքանակ աղբյուրներում կարելի է գտնել Կիլիկյան Հայաստանի առօրեականությունը պատկերող մեծ ու փոքր դրվագներ, որոնցում ուղղակիորեն դրոշմված են պետության հայեցակարգային վերոնշյալ մոտեցումները:

Այդ տեսանկյունից աչքի է զարնում Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» հոդվածներից մեկը, որը վերաբերում է մեղվի փեթակի առք ու վաճառքի կանոնակարգմանը. «Եւ որ մեղուք վաճառեն, նա թէ աշունն լինի՝ նա մեղրովն զէր որ կայ ծախեն, կամ կըշոով դնեն պոման, կամ կոթրու: Թէ պոմանն կըշոով լինի, ու թէ պակաս լինի՝ նա ի գնողէն ի վայր երթայ, կամ վճարէ զպակասն. զի խաբէութիւն չպիտի: Ապա թէ աւելի լինիլ կոճակն՝ նա գնաւորին բախտն է, չդառնայ: Թէ ի գարունն լինի ծախն՝ նա քսան ար փորձէ գնաւորն, եւ զվճարն ընկերաւք եւ վկայաւք տայ ի պոմանն՝ զինչ ցեղ զուծն ու զելումուտն տեսնուն զմեղվացն: Եւ թէ գնէ ի հայնց ժամ, կամ ծախէ ծախաւորն, որ չունայ ելումուտ, նա անցած լինի, նա երբ ժամն գայ՝ նա ի ծախաւորն դառնայ. բայց ի վկայքն եւ ի պոմանն է հասել. թէ ի կերակրոյն կամ ի տարոյն պեղծութենէն անցնի՝ նա գնաւորին է»¹¹:

Փաստորեն, պետության ռազմական նախարարը, թագավորի եղբայրը այն աստիճան էր «մանրացնում» ու մասնավորեցնում իրավական հարաբերությունների ձեւաչափը, որ «Դատաստանագրքում» ներառել է նույնիսկ այսպիսի միկրո մակարդակի դրվագ, ինչպիսին ընդամենը մեղվի փեթակի առետուրն էր: Վաճառողի ու գնորդի միջեւ հանգամանորեն նկարագրված իրավական մասն կետերը հենց փաստում են պետության կողմից կենցաղային, մանր

¹⁰ **2. Գեորգյան**, Կիլիկյան Հայաստանում հանգրվանած եւրոպացիների ամուսնություններն ու արտամուսնական պայմանագրերը, Բանբեր Մատենադարանի, № 24, Երեւան, 2017: **Նույնի**, Կնոջ իրավական կարգավիճակը ըստ Կիլիկյան Հայաստանի պատմության աղբյուրների, Նյութեր ակադեմիկոս Լեւոն Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի (28-30 հունիսի 2018 թ.), Երեւան, Մատենադարան, 2019

¹¹ Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստարի), ձեռագրերի համ. Լոյս ընծայեց **Արսէն Վարդապետ Ղազնեան**, Ս. Էջմիածին, 1918, էջ 62. **Սմբատ Սպարապետ (Գունստար)**, Դատաստանագիրք, Երեւան, 2008, էջ 109:

առեւտրային պարագաների հանդեպ ուշադիր լինելու, դրանց քաղաքակրթական ազդակներ ուղղելու հանգամանքի մասին: Թեեւ զուգահեռաբար հարց է առաջանում, թե Կիլիկյան Հայաստանի պետական կառավարման գործիքակազմի միջոցով որքանով էին այդ ազդակները հասնում ու գործարկվում իրական կյանքում: Այս հարցին կարող է պատասխանել հենց «Դատաստանագիրքը». դրանում ներառված կյանքի տարաբնույթ դրվագներին առնչվող իրավական կետերում (կին-տղամարդ հարաբերություններ, ամուսնական կյանք, առեւտուր, ունեցվածքի բաժանում եւ այլն) բերված են խնդիրների լուծման այնպիսի սցենարներ, որոնք ակնհայտորեն հիմնված են Կիլիկիո աօրեական կյանքում հանդիպող հաճախ կրկնվող դեպքերի վերլուծության վրա, հետեւաբար այդ օրենքները կազմվում էին ոչ թե իրավական արտաքին ու հայկական ավանդույթի, օրենսգրքերի արհեստական կոմպիլյացիայի, այլ բնական՝ ներքին իրական կյանքին հարմարեցված համադրման միջոցով: «Դատաստանագրքում» կարելի է գտնել շարժական ու անշարժ գույքի (հողատարածք, տուն, խանութ, ջրաղաց), ընտանի կենդանիների, կահկարասու, մրգատու ծառերի վաճառքին ու վարձակալմանը վերաբերող բազմաթիվ հոդվածներ, որոնցում եւս հանգամանորեն ներկայացված են հնարավոր խնդիրների լուծման իրավական քայլերը¹²:

Առեւտրի իրականացման էթիկական ու բարոյական չափանիշների մասին վկայող անփոխարինելի աղբյուր են հատկապես Այասում ջենովական ու վենետիկյան նոտարական գործակալների կազմած փաստաթղթերը, որոնց ճնշող մեծամասնությունը ապրանքների առք ու վաճառքի պայմանագրեր են¹³: Հատկապես աչքի է զարնում վաճառականական այդ համայնքներում իրենց տնտեսական ու իրավական գործունեությունը փաստաթղթավորելու հանգամանքը, երբ միջնադարում թղթի խիստ սակավության պայմաններում նրանք փաստաթղթավորել են առեւտրային նույնիսկ ամենամանր գործարքները (օրինակ, մի քանի կգ պղպեղ եւ այլն), ապա նավերի տարողունակության սահմանափակության պայմաններում տեղափոխել Ջենովա, Վենետիկ եւ այլ քաղաքներ, որոնց արխիվներում դրանք ցայժմ պահպանվում են: Բացարձակապես բոլոր պայմանագրերում կողմերը սկսում են Աստծո անունով երդվելուց (In nomine Domine, amen¹⁴). ամենայն մանրամասնությամբ ներկայացված են կողմերի պարտավորությունները, թվային տարաբնույթ տվյալներ, դեպքերի

¹² Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստարի), էջ 58-65. **Սմբատ Սպարապետ (Գունստար)**, Դատաստանագիրք, էջ 107-113:

¹³ **L. Balletto**, Notai genovesi in Oltremare. **Bondi Sebellico A.**, Felice de Merlis, prete e notaio in Venezia ed Ayas, 1315-1348, v. 1.

¹⁴ **Նույն տեղում**, Notai genovesi in Oltremare.

Ակարագրություններ, իսկ վերջում Աշվում են պայմանագրի կնքման տեղը, ժամանակը եւ բոլոր վկաների անունները, որոնք հարկ եղած դեպքում վկայելու էին տվյալ գործարքի մասին (Actum Ayacio, in logia Ianuensium, ubi regitur curia cosnulatus, anno dominice Nativitatis MCCLXXIII, indictione prima, die XXXI ianuarii, inter primam et terciam. Testes dominus Filipinus Tartaro, consul Ianuensium in regno Armenie, Nicolosus de Murta et Iacobinus Gervaxius)¹⁵, (կազմված է Այասում, ջենովացիների լոջիայում (լոջիա էր անվանվում ջենովացիների կոնսուլատի՝ հյուպատոսարանի շենքը), որտեղ որոշումներ է կայացնում հյուպատոսարանի դատարանը, Սուրբ ծննդից 1274 թվին, 31 հունվար: Վկաներ՝ պարոն Ֆիլիպինոս Տարտարո, Հայկական թագավորությունում ջենովացիների հյուպատոսը, Նիկոլոսոս Մուրտա եւ Յակոբինոս Գերվասիոս: թարգմ.՝ Զ. Գ.):

Բնականաբար, մեծ առօրեականությամբ ու իրավական նորմերով ապրող այլազգի մեծաքանակ համայնքները, որոնք 13-14-րդ դդ. գրեթե ամբողջ ընթացքում հայերի հետ կողք կողքի ապրում էին Կիլիկյան Հայաստանի բոլոր քաղաքներում, իրենց դրոշմն էին թողնելու պետության համակեցական միջավայրի ձեւավորման վրա: Հատկապես, երբ նրանցից շատերը Կիլիկիա էին ժամանում ոչ միայն կարճատեւ գործարքների նպատակով, այլեւ մշտական բնակություն հաստատում, ամուսնանում էին տեղացի կանանց հետ, ունենում զավակներ¹⁶:

Իրավական եւ էթնական այսպիսի շեշտադրումներով, անշուշտ, պետությունը ձգտում էր ձեւավորել համակեցական համերաշխ միջավայր, ինչը հատկապես արդիական էր 13-14-րդ դդ. Կիլիկյան Հայաստանի ներքին եւ արտաքին ռազմաքաղաքական հարաբերությունների գնալով սաստկացող վայրիվերումների ու անկայունության պարագայում:

Մինչեւ Կիլիկիայում հայկական պետության հաստատումը, հայ իրականությունը դարերով անցել էր համաշխարհայնացման այնպիսի ընթացքներով, ինչպիսին օրինակ Հելլենիզմն էր: Ապրելով մշակութային բազմակողմանի զարգացումների, տեղեկատվական հոսքերի պայմաններում, հայ մարդը տեւական ժամանակ մշակել էր արտաքինի հետ ներքինը համադրելու հոգեբանությունն ու հմտություններ: Զարգացած միջնադարում որպես «առեւտրային հեղափոխություն¹⁷» ձեւակերպված երեւույթի ընթացքը, որն առավել արտահայտվում էր հատկապես միջերկրածովյան Եվրոպայում, ի վերջո, արդեն 14-

¹⁵ Նույն տեղում, A. N 14.

¹⁶ Զ. Գեորգյան, Կիլիկյան Հայաստանում հանգրվանած եւրոպացիների ամուսնություններն ու արտամուսնական պայմանագրերը:

¹⁷ R. S. Lopez, The Commercial Revolution of the Middle Ages, 950-1350, Cambridge University Press, 1976.

րդ դարից հասունացնելու էր եվրոպական Վերածնունդը: Կիլիկյան Հայաստանը եւս դարձել էր քաղաքական, տնտեսական, արվեստի եւ մշակութային համաշխարհային միտումների հանդիպման հարթակ, այլ կերպ ասած՝ քաղաքակրթական յուրահատուկ մի «փորձանոթ»: Հայոց թագավորությունը 10-14-րդ դդ. հայկական մշակութային մեծ վերելքի գլխավոր կենտրոնն էր, ինչն, առանց, ներքին համակեցական միջավայրի հասունացման անհնար կլիներ պատկերացնել: Այդ ներքին համակեցությունը հղկվում էր պետության տնտեսական, քաղաքական, իրավական, մշակութային հարթակներում, ինչն անշուշտ ընթանում էր ե՛ր համադրումներով, ե՛ր հակադրումներով: Ակնհայտ է, որ պետությունը կառավարման տարբեր օղակներով ներգրավված էր այդ համակեցության ձեւավորման մեջ, ինչը ծայրահեղ դժվար էր համահունչ իրականացնել աշխարհաքաղաքական այն միջավայրում որտեղ գտնվում էր Կիլիկիան:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ներքին եւ արտաքին առեւտրի զարգացումը ինչպես միջերկրածովյան ավազանի երկրներում, այնպես էլ Կիլիկյան Հայաստանում կրճատում էր մարդկանց միջեւ համակեցական տարածությունը: Նրանց միջեւ ընթացող առեւտրային, կենցաղային ու առօրեական հաղորդակցության ձեւերը դառնում էին ավելի բազմակողմանի, ինչն անխուսափելիորեն մեծացնում էր համակեցական նոր կենսաձեւ ու կանոններ ունենալու պահանջարկը: Այս իրողությունները հատկապես ակնհայտ դարձան 13-րդ դարից սկսած, երբ Կիլիկյան Հայաստանում սկսեց ավելանալ բնակչության ոչ միայն քանակը, այլ նաեւ ազգային կազմը: Դրանք մարտահրավերներ էին պետության համար, ուստի պատահական չէ, որ հենց այդ ժամանակամիջոցում Կիլիկիայի հայկական պետության համար օրակարգային դարձավ նոր օրենսգրքի կազմումը, որն ավելի համարժեք պետք է լիներ փոփոխվող իրողություններին: Այդ մեծ գործը ստանձնեց եւ իրականացրեց Սմբատ Սպարապետը: Բացի այն, որ Կիլիկյան Հայաստանի բնակչությունը խայտաբղետ էր ազգային կազմի տեսանկյունից, որտեղ միմյանց էին հանդիպում տարբեր մշակույթներ, կրոններ, խառնվածքներ, տարբեր մասնագիտություններ ունեցող ու սոցիալական տարբեր շերտերին պատկանող այլազգի մարդիկ, այն բազմերանգ էր նաեւ ներհայկական տեսանկյունից: Այստեղ հաստատվել էին մեկը մյուսից հազարավոր կիլոմետր հեռավորության վրա գտնվող բուն Հայաստանի բնակավայրերից, սոցիալական տարբեր շերտեր ներկայացնող հայեր, որոնք եւս միմյանցից տարբերվում էին մշակութապես, խառնվածքով, իրավագիտակցությամբ եւ այլ բաղադրիչներով:

Ծով, միջազգային ու ներքին առևտրի բուռն զարգացում, այլազգի մեծաքանակ բնակչություն, քաղաքների ու քաղաքային բնակչության արագ աճ. այսպիսի բաղադրիչներից կազմված իրականության պայմաններում Կիլիկյան Հայաստանում ձեւավորվում էին քաղաքակրթական երկխոսությունների միկրո եւ մակրո մակարդակների տարբեր հարթակներ, որոնք սկսում էին առաջ բերել մարդկային հասարակական հարաբերությունների նոր ձեւաչափերի, համակեցական գրված ու չգրված կանոնների, բարոյական ու էթիկական նորմերի փոխակերպումների պահանջ:

Ինչպե՞ս էին առևտուր անում Կիլիկյան Հայաստանում, ինչպե՞ս էին առևտրային մեծ ու փոքր հարաբերություններում դրսևորվում ժամանակին բնորոշ բարոյական, համակեցական ու էթիկական սահմանները: Արդյոք այդ սահմանները փաստաթղթավորվա՞ծ էին, մասնավորապես՝ օրինակ, արտահայտված իրավական փաստաթղթերում, ձեւակերպումներում, թե առավելապես մնում էին բանավոր, առօրյա պայմանավորվածությունների դաշտում:

ZOHRAB GEVORGYAN

Institute of History of NAS RA

COEXISTENCE, MORALITY AND TRADE IN THE EPISODES OF EVERYDAY LIFE OF CILICIAN ARMENIA

Keywords: Cilician Armenia, medieval, coexistence, medieval trade, everyday life.

The development of internal and foreign trade, both in the Mediterranean countries and in Cilician Armenia, reduced the coexistence space between people. Other forms of commercial, domestic and everyday communication between them became more versatile, which inevitably increased the demand for new coexistent lifestyles and rules. These realities became especially evident from the 13th century, when not only the population but also the ethnic composition of Cilician Armenia was radically changing. These were challenges for the state, so it is no wonder that during that period the creation of a new code of laws became an agenda for the Armenian state of Cilicia, which should have been more in line with the changing realities. That great work was undertaken and carried out by Smbat Sparapet. In addition to the fact that the population of Cilician Armenia was diverse in terms of ethnic composition, where people of different cultures, religions, temperaments, with different professions and belonging to different social strata met, it was also diverse from the Armenian point of view. Armenians, who differed from each other in terms of social strata,

Հանսկեցությունը, բարոյականությունը եւ սոցեկոտրը..

culture, temperament, legal awareness, and other components, settled here from different parts of the Armenian Highland located thousands of kilometers away from each other.

The sea, rapid development of international and domestic trade, the growth of foreign population, cities and urban population – were the factors under which in the reality of Cilician Armenia were developing different platforms of micro and macro levels of civilisational dialogues, which began to demand new dimensions of human social relations, written and unwritten rules, moral and ethical norms.

How did they trade in Cilician Armenia, how did the moral, coexistence, and ethical boundaries emerge in the big and small trade relations? Were these boundaries documented particularly in legal documents or did they mostly remain in the field of verbal, everyday agreements?

GÉRARD DÉDÉYAN

*Professeur émérite d' Histoire à l'université
Pau-Valéry Montpellier III*

LOUIS IX, « SAINT ROI », LE ROYAUME D'ARMÉNIE ET LE ROYAUME DE FRANCE

Mots-clé: Saint roi, canoniser, Het'oum, troubadour, pèlerin, Chypre, Cilicie, Mongols, Maronites.

Faut-il, avant d'aborder notre sujet, rappeler que l'ouvrage fondamental de Lévon Ter Pétroussian *Les Croisés et les Arméniens* (en arménien) publié en deux volumes, à Erevan, dans la « Bibliothèque arménienne » de la Fondation Calouste Gulbenkian (volume 1, 2005, anthologie historiographique, volume 2, 2007, étude historique et publications de sources nouvelles), fournit un éclairage extrêmement riche sur les relations entre les Croisés et le royaume d'Arménie Cilicienne (des origines à sa chute) et, plus largement, les Arméniens à l'époque des Croisades.

En lisant *l'Histoire de Saint Louis de Joinville*, admirablement éditée et traduite par le regretté Jacques Monfrin, nous nous sommes demandé — de manière un peu provocatrice — si Saint Louis n'avait pas été canonisé avant l'heure par les Arméniens, non pas ceux du « royaume d'Arménie (en Cilicie) en communion avec Rome, semble-t-il, depuis 1198, mais ceux de la Grande Arménie, dont l'attitude était plus distante.

Saint Louis, après l'échec militaire de la Septième Croisade (1248-1254), séjourna à Jaffa, dans le royaume latin de Jérusalem, d'avril 1252 à la fin juin 1253, période pendant laquelle il rebâtit l'enceinte de la ville, comme il avait fait précédemment pour Césarée. Il y reçut la visite du prince d'Antioche, Bohémond VI, futur gendre du roi d'Arménie cilicienne Hét'oum I^{er} (1226-1269), qui eut encore pour gendre Simon Mansel, connétable d'Antioche. Le jeune homme fit lever par le roi la lourde tutelle qu'exerçait sur lui sa mère, « écartela ses armes, qui sont vermeilles, des armes du roi de France, parce que le roi l'avait fait chevalier », comme le rapporte Joinville dans sa *Vie de Saint Louis*¹. Bohémond

¹ *Vie de Saint Louis*, édition, trad. et notes de Jacques MONFRIN. DUNOT, Classiques Garnier, Paris, 1995, 524, p. 260-261. Sur le contexte de cette visite, cf. Jean RICHARD, *Saint Louis, roi d'une France féodale, soutien de la Terre sainte*, Fayard, 1983, p. 249-250. Du même, « Joinville à la Croisade », dans Jean DUFOURNET et Laurence HARF (dir.), *Le prince et son historien. La vie de Saint Louis de Joinville*, Éditions Honoré Champion, Paris, 1997, p. 23-24.

VI, pour charmer le roi, avait emmené avec lui trois ménestrels de la « Grande Arménie », qui étaient frères et qui allaient en pèlerinage à Jérusalem². « Quand ils commençaient à jouer du cor, vous auriez dit que c'étaient les voix des cygnes qui partent de l'étang ; et ils faisaient les mélodies les plus douces et les plus gracieuses, et c'était merveille de l'entendre »³. L'un des trois frères, exécutant un saut périlleux - comme les deux autres -, « faisait le signe de la croix, car il avait peur de se briser le cou en sautant », si c'était un saut la tête en avant⁴.

Cette présence de pèlerins arméniens auprès de Saint Louis, dans une ambiance joyeuse qui prélude au mariage - ménagé par Saint Louis en 1254- de Sibylle, fille de Hét'oum I^{er}, avec Bohémond VI, doit sans doute être replacée, plus largement, dans le cadre des relations arméno- mongoles : la Grande Arménie, précédemment partagée en principautés - la plus importante étant celle des princes Zak'arian, maîtres d'Ani, l'ancienne capitale des rois bagratides d'Arménie -, sous la suzeraineté des souverains bagratides de Géorgie, se trouvait alors, par ce biais, sous autorité mongole⁵.

Le frère de Hét'oum I^{er}, le connétable Sembat, traducteur des *Assises d'Antioche* - et inspirateur d'une chronique royale cilicienne -, avait effectué, de 1247 à 1250, l'aventureux voyage jusqu'en Mongolie, dont il nous rapporte certains détails dans sa lettre adressée de Samarkande, en septembre 1248, à Henri I^{er} de Lusignan, roi de Chypre (1218-1253)⁶, précisément lorsque Saint Louis séjournait dans l'île ; Hét'oum I^{er} l'avait suivi en 1254, année de son arrivée à la cour mongole (peu de temps, d'ailleurs, après le franciscain Guillaume de Rubrouck, envoyé de Saint Louis), et avait obtenu du Grand Khan, en échange de la reconnaissance de la suzeraineté de celui-ci sur le royaume d'Arménie cilicienne, son alliance et sa protection contre ses ennemis, en l'occurrence les sultans seldjoûkides de Roûm et les sultans mamloûks d'Égypte⁷.

² JOINVILLE, 525, p. 260-261. Sur les pèlerinages arméniens à Jérusalem, voir Kévork HINTLIAN, *The Armenians in the Holy Land*, Jérusalem, Monastère des Saints-Jacques, s. d., et les nombreuses études de Michael STONE sur les inscriptions des pèlerins arméniens en Terre sainte.

³ Id., 525, p. 260-261.

⁴ Id., *ibid.*

⁵ Cf. G. DÉDÉYAN, « Le temps de la Croisade », dans *id.*, (dir.), *Histoire du peuple arménien*, Toulouse, Éditions Privat, 2007-2008, p. 353.

⁶ J. RICHARD, *Saint Louis*, p. 212-213 et *id.*, « La lettre du Connétable Smbat et les rapports entre Chrétiens et Mongols au milieu du XIII^e siècle », in D. KOUYMJAN (éd.), *Études arméniennes in Memoriam Haïg Berbérian*, Bibliothèque arménienne de la Fondation Calouste Gulbenkian, Lisbonne, 1986, p. 683-686.

⁷ Cf. Jean RICHARD, *Saint Louis*, p. 501-507, *id.*, *Histoire des Croisades*, Paris, Paris, 1996, p. 377-378, 433-434, et Claude MUTAFIAN, « Le siècle mongol (1220-1320), planche de salut ou coup de grâce », in Raymond KEVORKIAN (dir.), *L'Arménie entre Orient et Occident*, Catalogue de l'exposition, Paris, BnF, 1996, p. 177-178.

À la différence du Capétien, pour qui les prétentions du Grand Khan à la domination universelle et ses exigences de vassalité apparaissaient inadmissibles, Hét'oum I^{er}, confronté directement à une double menace musulmane, devait accepter - entraînant bientôt son gendre Bohémond VI dans sa politique mongole - de reconnaître la suzeraineté du descendant de Gengis Khan⁸ et ménager ainsi les succès - dus à la coopération des Francs d'Antioche, des Arméniens de Cilicie et des Arméniens de Grande Arménie intégrés à l'armée géorgienne, avec les Mongols - des années 1258-1260 ; cette période de victoires commença, en 1258, de manière particulièrement brutale, par le sac de Bagdad, capitale califale, et fut marquée, en 1260, par l'occupation temporaire d'Alep et de Damas.

On ne doit pas s'étonner dès lors, dans ce contexte de rapprochement des Mongols avec les chrétiens - Arméniens ou Latins - de voir d'autres Arméniens, de la Grande Arménie cette fois, rendre visite à Saint Louis qui, tout à son œuvre de restauration du réseau défensif de la Terre sainte, avait quitté Jaffa en juin 1253 pour gagner Sidon, s'arrêtant en chemin à hauteur d'Acre. À ce moment, le roi - qu'accompagnait Joinville - et son armée campaient sur « les sables d'Acre »⁹. L'historiographe de Louis IX précise : « En ce lieu vint à moi une grande troupe de gens de la Grande Arménie, qui allaient en pèlerinage à Jérusalem, en payant un grand tribut aux Sarrasins qui les conduisaient »¹⁰. On peut remarquer ici que le rétablissement de l'autorité mamloûke (relayant celle des Ayyoûbides) sur Jérusalem - qui avait été de nouveau totalement accessible aux chrétiens de 1229 à 1244, puisque replacée sous leur domination politique, à la suite de la Croisade de Frédéric II, roi de Sicile et empereur germanique - ne paraît pas avoir refroidi le zèle des Arméniens pour le pèlerinage. Cette troupe, ayant eu vent de la renommée du roi de France, avait, pour l'heure, recours aux services d'un compatriote de Cilicie ou de Syrie franque (le plus célèbre d'entre eux étant Jean l'Hermin - c'est-à-dire l'Arménien - maître des armements du roi de France) : en effet, nous dit Joinville, « par un interprète qui savait leur langue et la nôtre, ils me firent prier de leur montrer le saint roi »¹¹.

Les pèlerins de Grande Arménie ne sont pas les seuls Arméniens à avoir été touchés par la sainteté du roi. Un important personnage de l'armée royale, Jean l'Hermin - ou Jean l'Arménien -, susmentionné, y fait écho. Lui-même semble,

⁸ Id., *ibid.*

⁹ JOINVILLE, 565, p. 280-281.

¹⁰ Id., *ibid.*

¹¹ 11 Sur cet épisode, cf. Jacques LE GOFF, *Saint Louis*, Paris, Bibliothèque des histoires. Galilimard, 1996, p. 483-484

d'ailleurs, avoir été un chrétien fervent. Nous en avons deux exemples. Une première fois, se rendant à Damas - alors sous domination ayyoûbide – « pour acheter des cornes et de la glu pour faire des arbalètes »¹², il engage une conversation avec un vieux musulman assis sur les étals de Damas, ancien combattant de Montgisard (où Baudouin IV, le roi lépreux, battit Saladin en 1177, malgré une nette infériorité numérique) ; ce dernier lui ayant affirmé que le recul des chrétiens était dû à leurs péchés, Jean l'Arménien lui réplique hardiment « qu'il devait bien se taire à propos des péchés des chrétiens, à cause des péchés que commettaient les Sarrasins, qui sont beaucoup plus grands »¹³.

Le vieux musulman reconnaît ensuite que les chrétiens ont « des maîtres qui leur permettent de discerner le bien du mal, et que c'est là la cause de la plus grande sévérité de Dieu à l'égard des chrétiens, et que les musulmans, quant à eux, ne disposent point d'un tel secours et sont aveugles « au point de nous croire quittes de tous nos péchés si nous pouvons nous laver dans l'eau avant de mourir »¹⁴.

Joinville nous rapporte encore, à propos de Jean l'Arménien, que, « après son retour d'outre-mer», alors qu'il s'était arrêté sur la route de Paris et qu'il mangeait en compagnie du maître des armements, ce dernier empêcha l'un de leurs hommes de chasser « une grande troupe de pauvres gens qui demandaient l'aumône », se faisant le défenseur de la pauvreté en véritable disciple de Saint Louis et affirmant que, si ce dernier leur avait envoyé « cent marcs d'argent à chacun », ils ne chasseraient pas ces indigents¹⁵.

Et de faire ce beau discours, digne de l'éloquence et de la charité de son maître : « Et vous chassez ces envoyés qui vous offrent de vous donner tout ce qu'on peut vous donner, à savoir qu'ils vous demandent de leur donner pour l'amour de Dieu ; il faut comprendre : que vous leur donniez du vôtre, et ils vous donneront Dieu. Et Dieu le dit de sa bouche, qu'ils ont le pouvoir de nous faire don de lui ; et les saints disent que les pauvres peuvent nous mettre d'accord avec Dieu, de telle manière qu'aussi bien que l'eau éteint le feu, l'aumône éteint le péché »¹⁶.

L'expression employée par les pèlerins de Grande Arménie pour désigner le roi de France, « le saint roi », est celle même qui était employée à la cour arménienne de Cilicie et par les sujets du royaume pour désigner leur souverain,

¹² JOINVILLE, 446, p. 219.

¹³ Id, *ibid.*, p. 221

¹⁴ Id., *ibid.*

¹⁵ JOINVILLE, 450, p. 220-221.

¹⁶ Id, *ibid.*, p. 222-223. Sur Saint Louis et les pauvres cf. Jacques LE GOFF, *Saint Louis*, *passim*, Jean RICHARD, *Saint Louis*, p. 422-428.

à savoir, en arménien, *sourb t'agawor*. C'est celle qu'a entendue le chanoine allemand Willebrand d'Oldenbourg, qui visita la Cilicie en 1211-1212, lors de son séjour à la cour de Sis, auprès du roi Lewon le Magnifique (prince Lewon II de 1187 à 1198, roi Lewon I^{er} de 1198-1219), couronné et sacré dans l'obédience du Saint-Empire romain germanique et de l'Église de Rome, en 1198. Assistant à la grandiose fête de l'Épiphanie, Willebrand entend la foule acclamer le vieux roi - chevauchant à la tête d'un grand concours de nobles et suivi du cortège des gens d'Église - au nom de *subtacfol* (*sourb t'akawor*), que le narrateur traduit - se référant au sacre effectué par le Catholicos - par « roi sacré »¹⁷.

Il faut, ici, se reporter au récit du chroniqueur arménien Matthieu d'Edesse (vers 1070-1144), relatant, dans son *Histoire de l'Arménie*, la vengeance que le troisième prince de la dynastie roubénienne de Cilicie, T'oros I^{er} (1100-1129), tira, en 1111, des seigneurs byzantins, les « fils de Mandalès », qui avaient, en 1073, traîtreusement assassiné le dernier roi bagratide d'Ani, Gagik II, relégué en Cappadoce par le basileus. Répondant aux menaces de représailles de l'un des fils, soumis à la torture, T'oros s'écrie : « Et qui êtes-vous, vous-mêmes, qui avez assassiné [cet homme], vaillant guerrier et roi des Arméniens marqué par l'onction, et quelle réponse donnerez-vous à la nation arménienne ? »¹⁸.

Précédemment, Matthieu qualifiait les meurtriers d'*astouatzaspan*, « déicides »¹⁹. De fait, revendiquant une origine juive, voire davidique, les Bagratides, comme les Carolingiens, puis les Capétiens, étaient non seulement couronnés, mais sacrés, et recevaient, à cet effet, une onction d'huile sainte. L'appellation de « saint roi » que les pèlerins de Grande Arménie réservent à Louis IX est assurément utilisée d'abord comme une forme d'assimilation du roi franc au roi arménien, ce qui est déjà, de la part de ces visiteurs, la marque d'une particulière distinction ; mais il nous semble que l'on peut discerner aussi, dans l'expression utilisée, et au-delà de son aspect formel, comme une réceptivité des Arméniens – non seulement de la « Petite Arménie », mais aussi de la Grande Arménie – au rayonnement du roi croisé, s'exprimant en quelque sorte, par une canonisation avant l'heure, sous une forme populaire. C'est dans ce sens que Joinville a compris les propos des Arméniens. Étant entré sous la tente du roi - où il trouve celui-ci assis à même le sable et adossé contre le poteau central -, le sénéchal de Champagne s'adresse à lui en ces termes : « Sire, il y a là dehors, une grande troupe de gens de la Grande Arménie qui vont à Jérusalem, et ils me

¹⁷ *Itinerarium Terrae Sanctae*, in SABINO de SANDOLI, *Itinera Hierosolymatana cruce signatorum* (saec. XII-XIII), Jérusalem, 1983, p. 223-225

¹⁸ Édition de Jérusalem, 1869, p. 400, trad. Édouard DULAURIER, Paris, 1858, p. 278.

¹⁹ *ibid.*, p. 265, p. 184.

prient, sire, de leur faire voir le saint roi ; mais je ne souhaite pas encore baiser vos os»²⁰. Le roi, ayant ri, à cette sortie, « d'un rire très clair », précise Joinville²¹, prie celui-ci d'aller chercher la troupe de pèlerins. « Et quand ils eurent vu le roi, ils le recommandèrent à Dieu, et le roi en fit autant pour eux »²².

Appréhendé, de son vivant, comme un saint, sur les rives de la Méditerranée orientale, par les chrétiens arméniens, Louis IX, après sa mort, le 25 août 1270, consécutive à l'épidémie qui ravageait l'armée campant dans les dunes de Carthage, à l'autre extrémité de la Méditerranée, semble avoir été intégré aux cultes musulmans locaux : fait exceptionnel, le rayonnement personnel du roi de France aurait été « capté » (ici en tous les sens du terme) - et bien qu'il vînt en initiateur et chef de la huitième croisade (1269-1270), dirigée contre l'émir hafside de Tunis - par la piété des musulmans d'Ifrîkiya.

Mais, malgré l'importance de l'événement, la croisade de Saint Louis n'a pas laissé d'échos dans les sources hafside. Par contre, une légende est née de cet événement. Saint Louis, que les textes arabes désignent par *Rey da France*, ce qui veut dire, évidemment, « roi de France », ou encore par al-Faransîs, ce qui signifie, tout simplement, « le Français », aurait été adopté par une tradition locale qui a vu en lui un roi chrétien converti à l'islam et qui l'a transformé en un saint musulman, Sidi Bou Saïd pour les uns, Sidi Dhrif pour les autres, deux saints dont les sanctuaires sont situés à quelques centaines de mètres l'un de l'autre, dans la région de Cap Carthage²³.

Pour revenir au séjour de Saint Louis au Levant, Joinville, qui avait rejoint le roi de France à Chypre en juillet 1248, donne un témoignage intéressant, sur l'attraction qu'exerçait le « royaume d'Arménie » - le royaume d'Arménie cilicienne -, sur certains combattants francs. Joinville commence par évoquer la prospérité matérielle du sultan seldjôkide de Roûm, résidant à Konya : « Au moment où nous arrivâmes à Chypre, le sultan d'Iconium était le roi le plus riche de tous les pays païens [...] ». « Sa grande richesse apparut à propos d'une tente

²⁰ JOINVILLE, 566, p. 280-281.

²¹ Sur le rire de Saint Louis, cf. Jacques LE GOFF, Saint Louis, p. 488. Du même, « Saint Louis et la parole royale », in *Le prince et son historien*, p. 7-22

²² JOINVILLE, 566, p. 280-281. Sur le rayonnement de la figure royale, cf. Françoise LAURENT, Laurence MATHEY-MAILLE, Michelle SZKILNIK, *Des saints et des rois : l'hagiographie au service de l'histoire*, Paris, Honoré Champion, 2014

²³ Nous devons cette importante mise au point à l'érudition de notre regretté collègue Tahar MANSOURI, Professeur d'histoire médiévale et d'histoire byzantine à l'Université de la Mannouba (Tunis). Claude CAHEN a abordé la question de « Saint Louis et l'islam » in *Journal asiatique*, 258, Paris, 1970, p. 3-12.

que le roi d'Arménie envoya au roi de France, qui valait bien cinq cents livres ; et le roi d'Arménie fit savoir au roi de France qu'un ferrais du sultan d'Iconium la lui avait donnée. Ferrais est celui qui s'occupe des tentes du sultan et lui tient propres ses habitations »²⁴. Joinville évoque ensuite le voyage (1253-1255) du roi Hét'oum I^{er} (1226-1269), à la cour du Grand Khan Möngke - faisant suite à celui de son frère Sembat auprès de Güyük - qui le reçoit à Karakorum en 1254 et son retour – après qu'il se fût déclaré vassal – avec un important contingent mongol, qui lui permit de remporter une victoire éclatante sur les Turcs : « Et il amena une si grande quantité de gens d'armes qu'il eut la possibilité de faire la guerre au sultan d'Iconium. Et la bataille dura fort longtemps, et les Tartares tuèrent au sultan tant de ses hommes que depuis l'on entendit aucune nouvelle de là »²⁵. Joinville a pu mélanger les deux voyages, car Sembat avait déjà reconnu la suzeraineté mongole en 1247 et, par ailleurs, c'est plutôt pendant le séjour du souverain français à Chypre, en 1248, ou après l'hivernage en 1248-1249, que les « sergents » de l'armée royale passèrent en Asie Mineure, donc à la fin du règne de Kay Khusraw ou au début de celui de 'Izz al-dîn Kay-Kâûs²⁶. À la suite de la bataille susmentionnée, nous dit Joinville, « À cause du grand bruit fait à Chypre autour de la bataille qui allait avoir lieu, certains de nos hommes, des sergents²⁷ à nous, passèrent, en Arménie [cilicienne] pour faire du butin²⁸ et pour se trouver à cette bataille ; et jamais aucun d'eux n'en revint »²⁹. Si ce n'était l'obstacle chronologique, on penserait à la bataille du Köse Dag (dans la région pontique), qui eut lieu en 1243 entre le sultan seldjoukide Kay Khusraw II, appuyé principalement par un détachement grec de l'Empire de Trébizonde, et l'armée mongole, placée sous le commandement effectif de Baydjû, et grossie de contingents du royaume de Géorgie³⁰.

La présence de Saint Louis/Louis IX au Levant fut marquante pour les Arméniens. Pendant le séjour de ce dernier à Chypre - qu'il quitta le 13 mai 1249,

²⁴ Texte, p. 68, 70, trad., p. 69, 71.

²⁵ Texte, p. 70, trad., p. 71.

²⁶ Voir Claude CAHEN, *La Turquie pré-ottomane*, Institut Français d'Études Anatoliennes, Istanbul, 1988, p. 227-234

²⁷ *Serjans*, dans le texte original : ces « sergents » sont des « hommes d'armes à pied », cf. *Sergant, sergent*, in R. GRANDSAIGNES D'HAUTERIVES, *Dictionnaire d'ancien français. Moyen Âge et Renaissance*, Paris, Librairie Larousse, 1947, p. 536.

²⁸ Dans le texte original, gaaigner, « piller », « faire du butin », cf. gaaigner, in id., *ibid.*, p. 311

²⁹ Texte, p. 70, trad. p. 71, soit tués dans la bataille, soit passés au service de Hét'oum I^{er}, sinon à celui de Kay Khusraw, qui recrutait des mercenaires francs.

³⁰ Claude CAHEN, *op. cit.*, p. 96-97.

embarquant à Limassol -, Hét'oum I^{er} lui envoya une ambassade par la voix de laquelle il reconnaissait la suzeraineté du roi de France³¹.

D'après le *Chronicon* de Guillaume de Nangis, moine bénédictin de l'abbaye royale de Saint-Denis, qui écrit dans la deuxième moitié du XIII^e siècle, saint Louis intervint pour effacer les discordes qui pouvaient subsister entre le royaume d'Arménie et la principauté franque d'Antioche-Tripoli depuis la tentative de Lewon le Magnifique, au début du XIII^e siècle, pour placer cet État sous sa suzeraineté³². À l'époque du retour de Saint Louis (il aborda en Provence en juillet 1254), Hét'oum I^{er} maria sa fille Sibylle avec Bohémond VI, « faisant de la principauté d'Antioche une sorte d'État vassal du royaume d'Arménie »³³.

Capitaine dans la Légion arménienne, créée par le commandant Louis Romieu en 1916, et intégrée à l'armée française en charge du mandat sur la Cilicie (1918-1921), Paul du Véou, dans son ouvrage *La passion de la Cilicie. 1919- 1922*, témoigne de la persistance du souvenir du passage du roi de France chez les Arméniens, même après la signature de l'accord d'Angora, négocié en 1921 entre le gouvernement français, qui renonçait alors à la Cilicie, et le gouvernement rebelle de Mustafa Kemal : « L'accord d'Angora ayant enfin achevé leur dispersion, ils [les Arméniens] confondent encore le Christ et la France en mémoire de Saint Louis, et ils ne changeront pas d'habitude ; mais leur mission est devenue d'échanger les produits des cinq parties du monde »³⁴.

Le séjour du « saint roi » au Levant n'a pas marqué les seuls Arméniens. Une autre chrétienté combattante, la « nation maronite » - selon l'appellation des auteurs francs de l'époque -, retranchée dans les monts du Liban et de l'Anti-Liban, et placée sous l'autorité de chefs militaires appelés *moukaddam* [commandants] et sous la juridiction d'un tout-puissant patriarche, a été assurément en relations avec Louis IX et ce, d'autant plus que, à son échelle - beaucoup plus modeste que celle des Arméniens -, elle avait contribué à l'installation des Croisés en Orient. Guillaume de Tyr - archevêque latin de cette ville -, illustre historien des Croisades dans la deuxième moitié du XII^e siècle, dit à propos des Maronites : « C'étaient des hommes courageux, vaillants au combat, qui avaient été très utiles aux nôtres dans les grandes affaires qui les opposaient très souvent à l'ennemi »³⁵.

³¹ 31 Claude MUTAFIAN, *L'Arménie du Levant*, 2 vol., Paris, Les Belles-Lettres, 2012, t. 1, p. 131.

³² Id., *ibid.*

³³ Id., *ibid.*

³⁴ Nouvelle édition revue, Paris, Librairie orientaliste Paul Geuthner, 1954, p. 52

³⁵ Cité par Jean RICHARD, « 7. Le temps des croisades », in Boutros Dib, *Histoire du Liban des origines au XX^e siècle*, Paris, Éditions Philippe Rey, 2006, p. 240.

Un document, mis postérieurement mis au jour – peut-être au XVII^e siècle –, mais dont la substance a certainement été puisée dans un texte authentique, pourrait attester la réalité et la qualité des relations entre Saint Louis et les Maronites, comme le suggère fortement l'illustre historien des Croisades, Jean Richard, membre de l'Institut de France, récemment disparu : « Cette estime a trouvé son écho dans la célèbre « lettre de Saint Louis à l'émir des Maronites du Mont-Liban ainsi qu'au patriarche et aux évêques de cette nation », datée du 21 mai 1250. Faisant allusion au renfort de 25 000 hommes que ceux-ci lui avaient envoyé, le saint roi y proclame que la « nation de saint Maron » fait corps avec la nation française, cela entraînant l'accès des Maronites aux mêmes emplois que les Français. Sous cette forme tout au moins, ce texte paraît porter la marque d'une époque plus récente où de telles préoccupations pouvaient intervenir. Mais la tradition dans laquelle il s'insère fait état de cette fraternité d'armes que l'archevêque de Tyr a relevée »³⁶.

ԺԻՐԱՅԻՐ ԳԵՂԵՅԱՆ

Պոլ Վալերիի Մոնպելյե 3 համալսարանի պատմավոր պրոֆեսոր

«ՍՈՒՐԲ ԱՐՔԱ» ԼՅՈՒՂՈՎԻԿՈՍ Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Սուրբ արքա, սրբադասել, Հեթում, գուսան, ուխտավոր, Կիպրոս, Կիլիկիա, մոնղոլներ, մարոնիտներ:

Լյուդովիկոս Թ.-ը (Սուրբ Լուի) անձնական կապեր է ունեցել հայերի հետ. 1252-1253 թվականներին գտնվելով Յաֆֆայում՝ նրան այցելել է Անտիոքի իշխանը՝ Մեծ Հայքից եկող երեք տաղանդավոր շրջիկ երգասացների ուղեկցությամբ, ովքեր վերադարձել էին Երուսաղեմ կատարած ուխտագնացությունից:

1253 թ. ամռանը՝ Յաֆայից մեկնելով Սիդոն եւ ճամբար խփելով Ակրայի մոտ՝ Ֆրանսիայի թագավորը հյուրընկալեց Մեծ Հայքից եկած ուխտավորների մի մեծ բազմության, որն ուղեորվում էր Սուրբ քաղաք: Վերջիններս, օգտվելով հայերեն եւ ֆրանսերեն իմացող հայրենակցի (գուցե բարեպաշտ ժան Հերմիմի (Հովհաննես Հայի)՝ թագավորական բանակի աղեղնագեղի վարպետի) ծառայություններից, ցանկություն հայտնեցին, որ ուզում են տեսնել «Սուրբ արքային»՝ արտահայտություն, որը կիրառել է Ս. Լյուդովիկոսի կենսագիր Ժուանվիլը:

³⁶ Ibid., p. 240.

Այս արտահայտությունը կարող է ունենալ կրկնակի իմաստ. նախ՝ Ֆրանսիայի թագավորը սուրբ է, քանի որ, ինչպես Հայաստանի թագավորներին, նրան եւս օծում են սրբացված մյուռոնով, եւ այսպիսով, նա դառնում է սրբազան միապետ: Երկրորդ՝ նա բարեգործ է եւ պայքարում է արդարության եւ խաղաղության համար: Այսպիսով, կարելի է ասել, որ Լյուդովիկոս Թ-ը հայերի կողմից ոչ պաշտոնապես սրբադասվել է դեռեւս իր կենդանության օրոք: Ի դեպ, Լյուդովիկոսը եւ Հեթում Ա-ը միմյանց հետ կապեր են հաստատել նաեւ դեսպանությունների փոխանակման միջոցով:

Սոնդղյների օժանդակությամբ, Հեթում Ա-ի կողմից Իկոնիայի թյուրքական սուլթանի նկատմամբ տարած հաղթանակը, դեպի Կիլիկիա գրավեց Ս. Լյուդովիկոսի զինվորներին:

Վերջինս գնահատում էր հալերի օժանդակությունը եւ դարերի ընթացքում նրանց խաղացած պատմական դերը, սակայն միեւնույնն է, կարծես, նախապատվությունը տալիս էր Լիբանանի մարոնիներին, ինչպես դա փաստում է հետագայում՝ 1250 թ. թվագրված «Ս. Լյուդովիկոսի անմակի» բովանդակությունը՝ ուղղված մարոնիներին:

GÉRARD DÉDÉYAN

Professor Emeritus of Paul Valéry University, Montpellier 3

LOUIS IX, “HOLY KING”, THE KINGDOM OF ARMENIA AND THE KINGDOM OF FRANCE

Keywords: Holy king, canonize, Hethum, troubadour, pilgrim, Cyprus, Cilicia, Mongols, Maronites.

Louis IX / Saint Louis had personal contacts with the Armenians: being in Jaffa in 1252-1253, he received a visit from the Prince of Antioch accompanied by three talented troubadours from Greater Armenia, who made the pilgrimage to Jerusalem. Leaving Jaffa for Sidon in the summer of 1253, and camping near Acre, the King of France welcomed a large crowd of pilgrims from Greater Armenia on their way to the Holy City. These, using the services of a compatriot knowing Armenian and French (perhaps the pious “Jean l’Hermin” / John the Armenian, the master of crossbowmen in the royal army), made it clear that they wanted to see the “holy king”, an expression used by the biographer of Saint Louis, Joinville. This expression can have a double meaning: first of all, the king of France is holy, because, like the kings of Armenia, he receives the biblical anointing with holy oil; he is therefore a sacred

sovereign; second, he is charitable and strives for justice and peace. Louis IX thus seems to be unofficially canonized during his lifetime by the Armenians. In addition, Saint Louis and Hethum I are in contact by exchanges of embassies. The victories won by Hethum I over the Turkish sultan of Konya, thanks to the support of the Mongols, attracted soldiers of Saint Louis to Cilicia. If the latter appreciated the assistance of the Armenians and marked their memory through the centuries, it was the same, it seems for the Maronites of Lebanon, as attested by its wording, revised subsequently, a "letter of Saint Louis" addressed to Maronite leaders, dated 1250.

Հ. ԼԵՒՈՆ ԶԷՔԻԵԱՆ

*Առաջնորդ Իսթանպուլի եւ Թուրքիոյ Կաթողիկէ Հայոց,
Քահանայապետական Պատուիրակ Միփթարեան Միաբանութեան*

ԸՆԴՀԱՆՐԱՊԿԱՆԻ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ/ՄԱՍՆԱՒՈՐԻ ՏՐԱՄԱՍՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆՈՒԿԱՆ ՉԳԱՅՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԿԱԼՄԱՆ ՄԷՉ

Պրակներ Հայ աստուածաբանութեան եւ հոգեւորութեան տոմարներէ

*Բանալի բառեր՝ Ընդհանրական, Տեղական/մասնատր, «Ազգ»/Էթնոս, Փրկարար
Տնօրէնութիւն, Աստուածաբանութիւն, Եկեղեցաբանութիւն, Աս-
տուածաբանական մարդաբանութիւն:*

Եկեղեցւոյ հազարամեայ պատմութեան մէջ, առաջին իսկ օրերէն, երեսն
եկած են մերքին տրամասութիւններ (դիպլեկտիկաներ), որոնք ընկերակցած
են, եւ պիտի անպայման ընկերակցին, այդ բոլորովին իրատիպ, աստուածա-
մարդկային (թեանդրիկ) Հաստատութեան կեանքին, այս երկրի վրայ իր ան-
ժամկետ, յաւերժադէմ ուղեգնացութեան երկայնքին, որ նաեւ նրա ուխտագնա-
ցութիւնն է դէպի իր անդրաշխարհեան, յաւիտեանական վախճանը:

Եկեղեցւոյ նուրբնքն աստուածամարդկային էութիւնը, իբր հետեւանք՝
մարդացած Աստուծոյ, մերմարդացեալ Բանին, եւ անոր անճառ Տնօրէնու-
թեան հետ իր առանձնաշնորհեալ աղերսին, կնքուած՝ իր քրիստոսադիր ծա-
գումով, կարելի է նկատել իբրեւ առաջինը եւ ակնադբիրը այդ տրամասութիւն-
ներուն, որոնք մեկնելով հակադիր, յաճախ յարակարծօրէն մերհակային, նոյ-
նիսկ հակասական թուող եզրերէ, կը յանգին հուսկ՝ Եկեղեցւոյ կեանքին եւ
Խորհուրդին մէջ՝ ո՛չ միայն հակադրութիւնն ու հակօրինութիւնները անդրան-
ցող, այլ հակաբեւեռները հրաշալիօրէն մերդաշնող համադրումներու, որոնց-
մէ՝ իրենց կարգին՝ կը ծնին նոր բեւեռումներ, պատմութեան անսպառ հերթա-
փոխութիւններուն միջով, յլի եւ սելեռուն՝ դէպի աստուածաբանական մտքի,
դէպի քրիստոնէական հոգեւորութեան տեսութեան եւ ապրումին նոր կերտում-
ներ եւ անընդհատ վերակերտումներ:

Թուենք մի քանին այդ տրամասական հակաբեւեռումներէն:

Սրբութեան եւ մեղքի տրամասութիւնը, որով Եկեղեցին, սուրբ եւ սրբագ-
նասուրբ՝ իր քրիստոսադիր էութեամբ եւ կարգերով, Հոգեպարգեւ շնորհներով,
սրբարար խորհուրդներով, միաժամանակ շաղախուած է մեղքով ու եմբակալ

Է ապաշխարութեան՝ իր անդամներուն, այսինքն մեր՝ մարդոց պատճառով: Ուստի, Եկեղեցւոյ Հայր մը, անանուն՝ ըստ ժամանակակից բանասիրութեան, զոր ամենաբնական յուշահիշատակն է Ամբրոսիոսի հետ, չէ վարանած մինչեւ իսկ՝ առ երեւոյթ գայթակղական թուող յարակարծութեան մը դիմելու, պարզելու համար՝ իր անքօղ մերկութեան մէջ՝ Եկեղեցւոյ համատեղ թէ՛ սրբութեան եւ թէ՛ մեղապարտութեան ակնխայթ խորհուրդը, կոչելով զայն *sancta meretrix*, «սրբուհի պոռնիկ»:

Յարակարծութիւնը, զոր վերակոչեցինք, գուցէ ամենէն ուժեղն է, ամենէն ուժեղներէն մէկը՝ անկասկած, Եկեղեցւոյ կեանքն ու Խորհուրդը ներթափանցողօրէն արտայայտելու ձգտող բոլոր նման յարակարծութիւններուն միջեւ: Յիշենք նաեւ, օրինակի համար, Եկեղեցւոյ կեանքին մէջ, բովանդակ պատմութեան ընթացքին, մէկ կողմէ պարզեաւորութեան, այսինքն *χάρισμα*-ի, միւս կողմէ հաստատակարգի, որ է *institutio*-ի, *θεσμοθεσία*-ի, մէկ կողմէ իշխանութեան, *potestas*-ի, *ἐξουσία*-ի, միւս կողմէ ծառայութեան, սպասարկութեան, պաշտօնարկութեան, *servitium*-ի, *ministerium*-ի, *διακονία*-ի միջեւ յարակայ, յարատեւ ընդդիմակարկումները, հակաբեւեռումները, մաքառումները:

Նիւթը, որուն կ'ուզեմ մերձեցալ ներկայիս, թէկուզ սուկ նախնական, ընդհանուր ակնարկով մը միայն, կ'ընծայէ, կը խորհիմ, Եկեղեցւոյ կեանքին ու Խորհուրդին մէկ այլ ակնառու յարակարծութեան – մէկ կողմէ՝ ընդհանրականին, «կաթողիկէ»ին, եւ միւս կողմէ՝ մասնատրին, մէկ կողմէ՝ տիեզերականին, եւ միւս կողմէ՝ տեղականին միջեւ բեւեռայնութեան, կարծեցեալ կամ իսկական ընդդիմակարգութիւններուն բազմաթիւ եւ յոյժ նշանակակից օրինակներէն մէկը:

Այս տրամասութեան մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ կողմէ ցուցաբերուած համադրումի ճիգը դարերու ընթացքին, նոյնիսկ գիտական անաչառ հայեացքով եւ առանց զիջելու որեւէ տիպի անտեղի, փուն ինքնափայփայումի կամ ազգայնափառաբանքի, կը հանդիսանայ համաքրիստոնէական պատմութեան ընծայած՝ համեմատաբար ամենէն զուսպ եւ հաւասարակշիռ, նաեւ ամենէն ինքնատիպ փորձընկալումներէն մէկը: Սակայն, որպէս հայ հոգեւորականի խօսք՝ իմ այս հաւաստումն կարելի է, թերեւս, կասկածանքի ենթարկել իբրեւ արդիւնք ծուարում, ենթագիտակից, գուցէ եւ անգիտակից ազգայնամեծարեան, չըսելու համար ազգայնամոլական միտումի մը: Փարատելու համար ամեն վարանում, կ'ուզէի յիշել այստեղ քրիստոնէայ արեւելագիտութեան, եւ ինչո՛ւ չէ, նաեւ արեւմտագիտութեան լաւագոյն մասնագէտներէն, Ի. դարու երկրորդ կեսին ակնառու ծիսագէտներէն Հ. Ռոբերտ Տաֆթի վկայութիւնը, արտաբերուած 1997ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնանուէր կամարներուն ներքեւ, Երջանկայիշատակ Գարեգին Ա. ի հրաւերով, երեք այլ Յիսուսեան ուխտակիցներու եւ ստորագրեալիս ընկերակցութեամբ, Մայր Աթոռ կատա-

րած մեր այցելութեան առթիւ: Սկսելով Ծեմարանի ժառանգատրներուն ուղղուած իր դասախօսութիւնը, Գարեգին Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ներկայութեան, Հ. Տաֆթ կ'ըսէր. Հայ Եկեղեցին ես կը նկատեմ քրիստոնէութեան պատմութեան մէջ, ընդհանուր առմամբ, ուրիշ Եկեղեցիներու հանդէպ ամէնէն լայնախոհ վերաբերումը ցուցաբերած Եկեղեցին, ներառելով այս հաւաստումիս մէջ նաեւ Հոռոմի Կաթողիկէ Եկեղեցին: Նոյնը կրկնեց յաջորդաբար Երեւանի Պետական Համալսարանի Աստուածաբանութեան Ֆակուլտետի ուսանողութեան կատարած դասախօսութեան ընթացքին: Բացառուած կը նկատեմ՝ որ Հ. Տաֆթի գիտական մակարդակով եւ անշողորդ նկարագրով հոգեւորական մը մասն խօսքեր արտաբերած ըլլայ լոկ հանդիսախօսական դիտումներով: Իր այս վկայութիւնը կը մնայ, կը խորհիմ, ոչ հայազգի գիտնականի մը անկեղծ, վաւեր համոզումը Հայ Եկեղեցւոյ մասին, ընդունելով զայն բնականաբար՝ առանց մատնուելու անտեղի իդէալականացումներու կամ ընդհանրացումներու փորձութեան եւ ասոր հետեւող խեղաթիւրման:

Կարելի է թերեւս առարկել, որ յիշեալ վկայութիւնը հուսկ չի զանցեր պարագայական արտայայտութեան մը եզրերը: Մ'էջբերենք, ուրեմն, ուրիշ հեղինակատր տեսութիւն մը: Հոռոմի Առաքելական Նուիրակ՝ Հայաստան, Բելառուս, Ուկրանիա ու ներկայիս Մեծն Բրիտանիա, Գերպ. Կլաուդիոյ Գուշերոտտիի գնահատանքը՝ ԺԲ. դարու Կիլիկեան հայ Էկումենական մտքի մասին, Հոռոմի Արեւելագիտութեան Քահանայապետական Ինստիտուտի մօտ պաշտպանած իր դոկտորական ատենախօսութեան եզրակացութեանը մէջ: Կը գրէ Գերպ. Գուշերոտտի. «Սակայն, միշտ աւելի վտանգուած (քրիստոնէաներու միջեւ) այդ միութեան վերակերտումի հեռանկարին մէջ, ԺԲ. դարու երկրորդ կէսին հայ մտքին կողմէ արտայայտուած հարցադրումն ու բանարկումը եւ ասոնց պարունակները կը կազմեն յստակատեսութեան, մեծանձնութեան եւ հեռատեսութեան մեծագոյն օրինակներէն մէկը՝ զոր այդ ժամանակաշրջանը արտադրած ըլլայ»¹: Բնականաբար կը մնայ միշտ տարակարծելու հնարատրութիւնը եւ իրաւունքը, եթէ արտայայտուած տեսութիւնը մէկուն համոզիչ չի թուիր:

Պիտի հարցուի, անշուշտ, թէ հուսկ ի՞նչ նպատակներով կը վկայակոչեմ մասն միտքեր կամ ինչո՞ւ կը շեշտեմ յստակապէս ընդհանրականի եւ մասնատրի քրիստոնէական տրամատութեան մէջ Հայ Եկեղեցւոյ համեմատաբար լայնախոհ վարքընթացը: Դարձեալ սին պարծենկոտութեան մը մարմաջէ՞ն արդեօք: Փութամ իսկոյն յստակել՝ քա՛ւ լիցի: Ափսո՛ւս կը լինէր: Ինչո՞ւ ուրեմն:

¹ **Claudio Gugerotti**, La liturgia armena delle ordinazioni e l'epoca ciliciana. Esiti rituali di una teologia di comunione tra le Chiese [Զեմնատրութեանց հայկական ծիսակատարութիւնը եւ Կիլիկեան շրջանը. Եկեղեցիներու միջեւ հարդրութեան աստուածաբանութեան մը արդիւնքները], (Orientalia Chrtistiana Analecta, 264), Pontificio Istituto Orientale, Roma, 2001, էջ 328:

Մարդկային, հոգեկան խորագոյն պահանջի մը եւ համապատասխան պարտականութեան մը համար. այն՝ զոր կը պատգամէ վաղեմի իմաստութիւնը. *Ծանհի՛ր զքեզ*: Ինքնաճանաչման, ուղիղ ինքնաճանաչման անհրաժեշտութիւնն ու բարոյական ստիպողութիւնը: Արդարեւ, ինչպէս անհատներու, նոյնպէս նաեւ հաւաքականութիւններու համար ինքնաճանաչման անհրաժարելի, հիմնական չափանիշը չի՛ կարող ուրիշ բան լինել՝ բայց եթէ ճանաչման ճշմարտացիութիւնը, համընկնումը իրականութեան հետ՝ բարիին ու զէշին, լաւին ու վատին նկատմամբ: Ընդհանրապէս՝ ինչպէս իրաւ խոնարհութիւնը, թե՛ սոսկ մարդկային-բնական եւ թէ նաեւ քրիստոնէական-գերբնական մերձեցումով, չի՛ կրնար ուրիշ հիմք ունենալ՝ եթէ ոչ իրականութիւնը. իրաքանչիւր անհատի, ինչպէս իրաքանչիւր հաւաքականութեան մէջ առաւելութեան ու թերութեան, լաւին ու զէշին, առաքիճութեան ու մեղքին ճանաչումն ու խոստովանութիւնը, վերագրելով ամէն բարին *առ Հայրն յուսոյ, յորմէ ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք*, եւ ամէն թերին՝ միայն ու միայն մերս ներքնաբնակ ընդոծին ապիկարութեան: Եւ այս նոյնը չէ՞ միթէ մերս մշտամրմունջ Հակողին հոգեխորհուրդ պատգամը.

*Եւ արդ, ո՛չ յաստուածուստ ամենաբարի զանձուցդ չարիս,
եւ ո՛չ ի յուսոյդ նշողից խաւար,
եւ ո՛չ յապաւիճութենէդ գայթակղութիւն,
այլ ես ինձէ՛ն՝ կորստեան որդիս գտի զայստսիկ՝:*

Ստուգիւ անշրջանցելի անհրաժեշտութիւն է ինքնաճանաչումը, նաեւ ուղիղ կողմնորոշուելու համար ներկայի խառնաբաւիղ լաբիրինթոսներուն մէջ, ճանաչելու՝ իմաստութիւնն ու խրատը, ջոկելու՝ հարազատն ու անվաւերը, խուսափելու՝ փակուղիներու շպարուն թակարդներէն:

Տամ մի քանի օրինակ: Ի տարբերութիւն բիզնեսական-սլաւոնական, ինչպէս եւ դպտիական աւանդութեան պատկանող Օրթոդոքս/Ուղղափառ Եկեղեցիներու ընթացակարգէն, Հայաստանեայց Եկեղեցւոյ աւանդութեան մէջ երբեք կանոնականացած գործարկում ունեցած չէ վերամկրտութիւնը: Չայն բացայայտօրէն կը հերքէ նոյնիմքն Ս. Գրիգոր Տաթեւացի³, եթէ նոյնիսկ, այսօր, կարելի է մերթ լսել շշուկներ՝ թէ կրկնամկրտութիւնը հմալքէ բոլորովին զուրկ չէ որոշ հայ շրջանակներու մէջ:

Նաեւ այլ հարցերու նկատմամբ, անկարելի չէ լսել կարծիքներ՝ թէ Հայոց Եկեղեցին իր վերաբերումներուն, դիրքորոշումներուն մէջ ելն. հետեւելու է այս

² Նարեկ, ԺԳ դ.:

³ **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք Հարցմանց, հտ. Թ, պր. իթ, Տպ. Սբ. ոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1993, էջ 29/590: Յաւալի է որ մերթ սոգէտ եկեղեցականներ, ըստ երեւոյթին, դիմած են այս գործարքին: Բարեբախտաբար յիշուող դէպքերը կը մնան սահմանափակ տարողութեամբ:

կամ այդ մեծ, ազդեցիկ Եկեղեցւոյ ուղեգիծին, փոխանակ իբրեւ նախակորիզ հիմք ընդունելու, ամէն բանէ առաջ, նոյնիման իր բնիկ աւանդութիւնը, երբ կայ միահամուռ, աներեր աւանդագիծ, կամ գոնէ ինչ որ այդ աւանդութեան մէջ յատկապէս կ'արտափայլի նախնականութեան, առաւել ընդհանրականութեան եւ նման չափանիշերով՝ զորս պետք է ուսումնասիրել, ճշդել եւ սահմանել՝ պատմական ու գիտական հիմքերու յենդով:

Հուսկ, վերջին օրինակ մը: Խաչկալներու սանձազերծ կանգնոււմը հայրենի տարածքում, յետ Անկախութեան կամ Երրորդ Հանրապետութեան տարիներուն, մեր միջնադարեան տաճարներուն սուրբ սեղաններուն վրայ: Խաչկալի ընդհանրացման դէմ՝ հին պատմական տաճարներուն մէջ, իբրեւ հաւաստեօք օտարամուտ եւ մեր տաճարներու վաղեմի ճարտարապետութեան ու կառուցային բնանիշերուն հետ անյարիր սովորութիւն, իր օրերուն ուժեղ պայքար կը մղէր արդէն նոյնիման Խրիմեան Հայրիկ: Ահա իր սրտաբէկ ողբը՝ իր իսկ նոյնատիպ բառերով. «Ափտ՝ս, հազա՛ր ափտս, որ այդ հնութեան տաճարներուն մնացորդներ հետզհետէ կը քանդուին եւ օտար ձեւերով եկեղեցիներ կը շինուին եւ սեղաններ կը կազմուին անվայելուչ ու անճաշակ խաչկալներով»⁴: Դժուար, նոյնիսկ անելի դժուար, պիտի ըսէի, նոյն զգացումները չկիսել, երբ՝ մանաւանդ՝ ծիսագիտական եւ արուեստաբանական հետազօտութիւնները վիթխարի յառաջդիմութիւններ են նշել Խրիմեան Հայրիկի օրերէն ի վեր, ի տես՝ թէ ի՛նչպէս փոխակերպուած ու կերպարանափոխուած են, վերջին երեսուն տարիներու ընթացքին, Գեղարդի, Սիսիանի եւ այլ բազում հնամեայ, միջնադարեան վանքերու պարզ, մեկին վիմակառոյց սեղանները, յաւելուկ, օտարամուտ խաչկալներով, որոնք ո՛չ միայն կը ստուերոտեն ճարտարապետական այդ համաքրիստոնէական, համամարդկային, բացարձակ գլուխ գործոցներուն գեղարուեստական յղացքին նախնականութիւնը եւ կառուցային ինքնատիպ, կարեւոր մէկ յատկանիշը, այլ կը չքացնեն նաեւ ծիսական գետնի վրայ անոնց նախնականութեան անզուգական բոյրն ու արժէքը⁵:

⁴ **Խրիմեան Հայրիկ**, Պապ եւ Թոռնիկ, ԺԹ, «Գիւղական. Եկեղեցի եւ քահանայ», Երկեր, Երեւանի Համալսարանի հրատրեչ., 1992, էջ 116-117:

⁵ Զմոռանանք՝ որ Անատոլի Բակրսոնի մակարդակով՝ համաքրիստոնէական արուեստի մասնագէտ մը հայ միջնադարեան ճարտարապետութիւնը նկատած է որպէս «համաշխարհային քաղաքակրթութեան ամենէն ցնցիչ եւ բեղուն երևոյթներէն մին» (**A. L. Jakobson**, գրախօսութիւն՝ G. P. Tchubinašvili, Razyskanija po armjanskoj arxitekture, Tbilisi, 1967, Revue des études Arméniennesի մէջ, nouvelle série, V, 1968, էջ 463 (463-468). այստեղ ֆրանսերէն թարգմանութեամբ հրատարակուած գրախօսականին ռուսերէն սկզբնագիրը լոյս տեսած է Sovjetskaja arxeologija հանդէսին մէջ, 1968, թ. 3):

Սոյն վիթխարի ժառանգութեան անաղարտ եւ անխաթար պահպանումը, այքի բբի նման, Հայերուս վրայ ծանրացող՝ նախ եւ առաջ որդիական եւ ազգային պատասխանատուութիւն մ'է, թելետեւ նուազ ծանրակշիռ չէ անոր մարդկային եւ համամարդկային

Ահա՛ թե՛ ի՛նչ կը մշակակէ եւ ինչպիսի՛ դեր պետք է կատարէ մեր առօրեայ մերկային մէջ հարազատ, ճշգրիտ ինքնաճանաչումը, որու վրայ խարսխուած է Սոկրատեան մտածումի բովանդակ ասանդը, որու վրայ կառուցին՝ մատն Ոսկե-դարու մեր Հայրերն ու անոնց շատաիղները հայ մտածողութեան միջնաբերդը:

Քրիստոնէութեան մէջ, ընդհանրականի եւ մասնատրի, տիեզերականի եւ տեղականի միջեւ տրամասութեան մկատմամբ Հայ Եկեղեցւոյ իրաչառունկ մերձեցումը միւթ կրնայ կազմել մէկէ աւելի հատորներու: Այսու հանդերձ պիտի ջանամ մերկայացնել այստեղ, քաղելով եւ վերահամադրելով մախընթաց ուսումնասիրութիւններէս տուեալներ, հարցին մերձեցման մկատմամբ Հայաստանեայց Եկեղեցւոյ իրաչառունկ հիմնահայեացքներէն մէկը, որ ուրոյն կարեւորութիւն մը կը զգենու, ըստ իս, մկատի առած՝ Ի. դարու եւ մերօրեայ աստուածաբանութեան որոշ մայր ուղղութիւնները եւ ասոնց տեղը Էկումենական տրամախօսութեան մէջ: Այս հիմնահայեացքը կրնանք մէկ խօսքով «ազգ»ի աստուածաբանութիւն կոչել, այն իմաստով՝ զոր պիտի ջանամ բացայայտել յաջորդող տողերուն մէջ:

Հայաստանեայց Եկեղեցւոյ «ազգ»ի աստուածաբանութիւնը

Ընդհանրականին եւ մասնատրին Եկեղեցւոյ ծոցին մէջ փոխառնչութեան իմացումին հաշկական բնորդի մասին որեւէ խօսք պետք է սկսի՝ մկատի ունենալով Հայ Եկեղեցւոյ «ազգային»/էթնիկ Եկեղեցի մը ըլլալու հանգամանքը, «ազգ» յցացքին *սուրբգրական*, եւ ի մասնատրի *աւետարանական* առումով, որու բաղկարար էական տարրերը Ե. դարու Սահակ-Մաշտոցեան գաղափարաբանութեան եւ քրիստոնէական աշխարհընկալման մէջ արդէն լրիւ հաստատուած են:

Բայց հոս մասնատր ուշադրութիւն հարկատր է: «Ազգային Եկեղեցի» բացատրութիւնը մեր մօտ յաճախ գործածուած է եւ կը գործածուի գրեթէ ֆոլկլորային առումով, մերթ առանց մոյնիսկ զերծ մնալու, որոշ չափով, ազգայնամէտ կամ գրեթէ ազգայնամոլ դրդումներէ, առանց զետեղուելու «ազգ»/էթնոսի

տարողութիւնը, որու համար ամենայն իրաւամբ պահանջատր կը կանգնինք ուրիշներու նկատմամբ: Երեսնի Մայր Տաճարին կառուցման ծառայող քարերու հայթայթման գործին մէջ ցուցաբերուած անգիտակից, դժբախտ անփութութիւնը Անիի արդէն իսկ կիսաւեր կոթողներուն նկատմամբ, բարեբախտաբար գտած է իր արժանի պարսաւը, նաեւ հեղինակատր ձայներու կողմէ: Բոլորիս ականջներուն մէջ կը հնչէ անխափան, զերդ մշտախթան ազդարար, վաստակաշատ հոգելոյս Մեսրոպ Սրբգ. Աշճեանի սրտակեղիք ճիչը՝ «Ամօ՛թ է, մե՛ղք է» (Կամք, Ուր. 15 Մեպտ. 2000, էջ 2):

աւետարանական-փրկչաբանական-եկեղեցաբանական այն խոր հասկացողութեան ծիրին ու համագրին մէջ, որ անտարակոյս Սահակ-Մաշտոցեան իմացութեան անկիւնաքարը կազմած է⁶:

Ըստ իս, ազգ/*էթնոսի* աստուածաբանութեան հիմքը Քրիստոսի վերջին խօսքերն են, իր Համբարձումէն առաջ, վերջին պատուէրը՝ յարուցեալ Տիրոջ, որոնք անատի ունին ուղղակիօրէն ու բացայայտօրէն բոլոր ազգերը, «զամե-նայն հեթանոսս», ուր մեր մտերոպեան թարգմանութեան «հեթանոս» բառը ո՛չ այլ ինչ է՝ քան յունարէն *էթնոս* (*էթնոս*), այսինքն «ազգ» բառին թեթեւօրէն ձեւափոխուած հնչադարձութիւնը: Այդտեղ, այդ ամենահամդիսաւոր պահուն, Քրիստոսի փրկարար պատգամը ուղղուած չէ մարդուն՝ իբր սոսկ անհատի, ե՛ւս աւելի՛ կղզիացած անհատի, այլ իբրեւ անձի՛ որ աներդրուած է հասարակութեանային եւ ընկերային բազմակի փոխառնչութիւններու կենսական համոլորտի մը մէջ, համաշխարհի տարածքով: Պատմութեան ընթացքին, ազգի իրականութիւնը, այն իմաստով՝ որով զայն ընկալած է Սահակ-Մաշտոցեան հասկացողութիւնը,

⁶ Այս հատուածին մէջ շօշափուած զաղափարներուն եւ արտայայտուած տեսութիւններուն համար կը յղեմ յատկապէս հետեւեալ գրութեանս. «Ընդկովկասեան տարածաշրջանին մէջ քրիստոնէական ներմշակութայնացման հայկական բնորոշ. Նախատարրեր ազգային ինքնութեան աստուածաբանութեան մը մշակման համար», Հասկ Հայագիտական Տարեգիրք, Նոր շրջան, Թ. (1997-2001), էջ 53-69: Տես նաեւ՝ **Boghos Levon Zekiyán**, “Riflessioni preliminari sulla spiritualità armena. Una cristianità di ‘frontiera’: martiria ed apertura all’oikumene” [Նախնական նկատողութիւններ հայ հոգեւորութեան մասին. «Սահմանագծային» քրիստոնէութիւն մը՝ վկայութիւն եւ բացուածք դէպի էկումենէ], *Orientalia Christiana Periodica*, LXI (1995), էջ 337-341, 346-355. Նոյն, “Vangelo, Chiese e culture” [Աւետարանը, Եկեղեցին, մշակոյթները], *Presenza pastorale*, LXV (1995), էջ 15 [1047]-23 [1055]. Նոյն, “Un singolare itinerario di spiritualità dalla frontiera all’oikumene. Riflessioni sulla spiritualità/ armena” [Հոգեւորութեան մասնատր ուղեգնացութիւն մը՝ սահմանագիծէն դէպի էկումենէ], *Chiese cristiane d’Oriente. Religioni e Sette del Mondo*, Rivista trimestrale di cultura religiosa, I (1996), № 4, dicembre 1995, էջ 48-53. Նոյն, “Das Verhältnis zwischen Sprache und Identität in der Entwicklung des armenischen Nationalbewusstseins. Versuch einer begrifflicher Formulierung aus geschichtlicher Erfahrung” [Լեզուի եւ ինքնութեան յարաբերութիւնը հայ ազգային ինքնագիտակցութեան զարգացման մէջ. Փորձ մը՝ պատմական փորձառութեան հիման վրայ յղացական բանաձեւումի մը ի խնդիր], *Über Muttersprachen und Vaterländer. Zur Entwicklung von Standardsprachen und Nationen in Europa*, Gerd Hentschel (Hrsg.), Peter Lang, Frankfurt am Main, 1997, pp. 277-297. Նոյն, “Die Christianisierung und die Alphabetisierung Armeniens als Vorbilder kultureller Incarnation, besonders im subkaukasischen Gebiet” [Հայաստանի քրիստոնէացումը եւ դէպի գրական մշակոյթ անցումը որպէս ներմշակութայնացման բնորոշներ, յատկապէս ընդկովկասեան տարածաշրջանին մէջ], *Die Christianisierung des Kaukasus/The Christianisation of Caucasus (Armenia, Georgia, Albania). Referate des Internationalen Symposions (Wien, 9.-12. Dezember 1999*”, hersg. von Werner Seibt, Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften, Wien, 2002, էջ 189-198:

կը կազմէ սոյն համադրոսի բարձրադիրը՝ իր ամենալայն տարածականութեամբ եւ ամենախոր, բարդ ու բազմակի ներառում եւ ներփակումներով⁷:

Հոս կը ծագի սակայն դժուարութիւն մը. Քրիստոսի Աւետարանը, իր քարոզութեան առաջին քայլերէն սկսեալ եւ իր պատգամին էութեամբ, առանց այլեւայլի, տիեզերական կրօնքի մը մօթճաբերն է: Աւելի քան ակնյայտ է այս կէտը նոյնիմքն Յարուցեալին վերոյիշեալ պատգամին մէջ. «աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս / աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը»: Ուրեմն ի՞նչ կապ ունի իւրաքանչիւր ուրոյն ազգութիւն Քրիստոսի պատգամին հետ, ի՞նչ է ասոնց տեղը եւ դերը քրիստոսաբեր փրկութեան կարգին մէջ:

Ամփիջականօրէն մեկին չէ հարցումներուն պատասխանը: Մանաւանդ թէ տիեզերականին ու մասնատրին բեւեռայնութիւնը ելքի ուրիշ ճար չունի, կարծէք, քան մասնատրին կլուզումը ընդհանուրին մէջ: Մասնապաշտութիւններու եւ յատկապէս ազգայնապաշտութիւններու ոխակը եւ ասոր հետեւող վախը շատ ուժեղ զապակներ եղած են առ հասարակ արեւմտեան – թէ՛ կաթողիկէ եւ թէ՛ բողոքական – եւ, որոշ չափով, նաեւ արեւելեան, յատկապէս բիզանդական աստուածաբանութեան մէջ, յատուկ ուշադրութեամբ չսեւեռելու համար «ազգ»/էթնոսի իրականութիւնը:

Բայց չկայ, կը կարծեն, երկրաւոր ու մարդկային որեւէ իրականութիւն, որ ոչ մէկ ոխակ ներկայացնէ փրկութեան Տնօրէնութեան առնչութեամբ: Սա ակնյայտ ճշմարտութիւն է քրիստոնէային համար, որ կը հաւատայ՝ թէ մահը, աշխարհի վրայ, արդիւնքն է նախածնողներու մեղքին: Եթէ տարերքը համայն կը հեծեն, ըստ Առաքեալին, իրենց փրկութեան ակնկալութեամբ, կը նշանակէ ուրեմն՝ թէ ոչի՛նչ, բացարձակապէս ոչի՛նչ, գերծ է ամենեւին յաւիտենական փրկութեան նկատմամբ ամէն ոխակէ: Բայց այս չի նշանակեր միանգամայն, թէ

⁷ Անհրաժեշտ ընդգծում մը պէտք է այստեղ: Հայկական ապրումին ու գաղափարախօսութեան թելադրած «ազգ» հասկացութիւնը չէ՛ բացարձակապէս այն՝ ինչ որ կը թելադրէ մեզի արեւմտեան, յատկապէս ֆրանսական մտածումին մէջ յառաջացած «ազգ-պետութիւն» յղացքը, որ զարգացած է լուսաւորապաշտ փիլիսոփայութեան ներշնչանքով, ֆրանսական Յեղափոխութիւնը պատրաստող, անոր ընկերակցող եւ յաջորդող գաղափարային ու գաղափարախօսական խմորումներու ծիրին մէջ: «Ազգ»ի հայկական գաղափարը, որուն աւելի կամ նուազ չափերով եւ իւրաքանչիւրին ուրոյն նրբերանգներով կը մօտենան առ հասարակ միջին արեւելեան մշակոյթներուն մէջ «ազգ»ի իմացումները, հիմնականում, է նոյնիմքն էթնոսը՝ որ, տուեալ ընկերամշակութային ու եկեղեցային ապրումի պարունակին մէջ, է պարզապէս ու լիիրաւօրէն «ազգ»: «Ազգ»՝ նաեւ իբրեւ հասցեագրեալն ու խօսակիցը Նազովրեցի Յիսուսի փրկարար պատգամին, քանի որ ազգի պատմական համագրին մէջ կ'իրանայ հուսկ՝ մարդուն նաեւ յաւիտենական փրկութիւնը: Կանխելու համար ամէն շփոթութիւն եւ թիրիմացութիւն, ըսենք որ, եթէ բացայայտօրէն հակառակը նշուած չէ, «ազգ» բառը կը գործածենք ներկայ գրութեան ընթացքին, սկզբունքայնօրէն, իր այս հայեցի, մարդաբանօրէն՝ էթնոսամշակութային նշանակութեամբ, եւ ո՛չ արեւմտեան ազգ-պետութենական լուսաւորապաշտ իմաստով:

կարելի է կամ թէ հարկ է վտարել աստուածաբանական մտածողութեան տեսադաշտէն երկրաւոր ու մարդկային իրականութիւնները՝ իրենց ներկայացուցած ռիսկերուն պատճառով, եթէ կ'ուզենք հասկնալ եւ արժեւորել զանոց՝ իրենց իրաւ լոյսին ներքեւ՝ փրկարար Տնօրէնութեան կարգին մէջ: Աստուածաբանական գիտութեան առաջնահերթ պարտականութիւններէն մէկն է, ստուգիւ, ժխտականին ու դրականին զատորոշումը եւ, միեւնոյն ատեն, զնահատումը՝ փրկութեան կարգին առնչութեամբ՝ երկրաւոր ու մարդկային ամէն իրականութեան:

Զենք կրնար մոռնալ միանգամայն հետեւեալ կէտը: Եթէ ճիշդ է որ ազգի իրականութիւնը կը կրէ իր մէջ մասնապաշտութեան եւ ազգայնապաշտութեան ռիսկեր, սակայն բնաւ ճիշդ չէ, միւս կողմէ, որ ընդհանրապաշտութիւնը զերծ կը մնայ ամէն ռիսկէ: Պատմութիւնը ինքնին կը վկայէ՝ թէ, ո'րքան յաճախակիօրէն եւ ինչպիսի՝ ուժգնութեամբ ու սաստկութեամբ, միւսէն իսկ ծայրայեղութիւններով, գրեթէ «կայսերապաշտական» միտումներով սոգորուած եղած է հոռմէական ընդհանրապաշտութիւնը: «Հոռմէական» ըսելով նկատի ունիմ այստեղ ըլլա՛յ արեւմտեան, ըլլա՛յ արեւելեան, այսինքն թէ՛ հին եւ թէ՛ նոր Հոռմները, խօսքերնիս սահմանափակելով Եկեղեցւոյ եւ «քրիստոնէայ «Էկումենէ»ի կալուածին: Հակամարտ վարկածներու լուծման բանալին չենք գտներ՝ երկու չափ, երկու կշիռի վրայ հիմնուած «թաբու»ներ սարքելով, այլ միայն գիտակցելով՝ թէ ինչպիսի՝ բարոյութիւն ու բազմարժողութիւններ կը ծուարին տուեալ իրականութեան մէջ, եւ ջանալով հասկնալ ըստ այնմ այդ իրականութեան ներքին ներուժականութիւնները եւ ընդլատակեալ տրամասութիւնը՝ անոր զարգացումներուն, ինչպէս նաեւ ներհակաբանութիւններուն անդրազանցման:

Ըստ իս այս կէտին է որ կը յայտնուի հայ քրիստոնէական մտքին Ե. դարէն սկսեալ մշակած եւ, շնորհիւ Մեսրոպի ու Սահակի հաւատքին եւ հանճարին, համեմատաբար շատ կարճ ժամանակի ընթացքին աւարտուն տեսութեան մը յանգեցուցած ազգութեան աստուածաբանութիւնը, որ՝ իր խորապէս աւետարանական ներշնչումով ու փրկչաբանական դիտահայեացքով՝ ընդհանրի եւ մասնատրի տրամասութեան համադրումի պահուն բանալի գործառոյթ մը կը ստանձնէ, կարող՝ ընդդիմարկումի հանգոյցը քակելու:

Հայ քրիստոնէութեան՝ սուրբգրական, փրկչաբանական առումով իր «ազգային Եկեղեցի» բնութագրին վերջնական կնիքը դրոշմող եղելութիւնը, կասկած չկայ, Գրոց գիտը հանդիսացաւ: Այս վերջինս խոր յարաբերութիւն մը կը ներփակէ Հայոց հողին վրայ նոր կրօնքին արմատացման յառաջընթացքին հետ: Պարզ է որ առաքելական հոգը, իր քարոզչական եւ ուսուցողական պահանջներով, հիմնական ու հիմնարար դեր մը ունեցած է Մեսրոպ Մաշտոց

Վարդապետի գործունէութեան մէջ: Պիտի դժուարինք սակայն համակողմանիօրէն բացատրել այդ գիտը իր պատմական համաբուն գերութեան հետեւի եւ թափանցել անոր նշանակութեան բազմաձայլ շերտերէն ներս, եթէ զայն չնկատենք իր պատմական կոնկրետ համոլորտին եւ այդ համոլորտը ենթալարող ըմբռնումին մէջ, որով կը բնորոշուի փոխարարութիւնը ընդմէջ կրօնական եւ արտաքին աշխարհներուն, ընդմէջ թէ՛ անհատին եւ թէ՛ ընկերութեան՝ մէկ կողմէ կրօնական, միւս կողմէ էթնիկ, քաղաքական եւ մշակութային տարածքներուն:

Ինչ որ կ'ուզեմ մատնանշել, կարելի է հակադարձ փաստարկութեան (argumentum ab inverso) օրինակով մը ջանալ արելի յստակել: Եթէ տեղական լեզուներն ու ծէսերը հազիւ թէ ջնջին տեղ մը ունեցած են արեւմտեան քրիստոնէութեան մօտ մինչեւ Լութերական Բարեկարգման շարժումը, ու դե՛ռ արելի քիչ բան մնացած է անոնցմէ վերապրած, այս երեւոյթին պատճառը փնտռելու է անկասկած այդ նոյն քրիստոնէութեան մօտ տիրող ըմբռնումին մէջ՝ նկատմամբ կրօնքի, ինքնութեան եւ լեզուի փոխառնչութիւններուն:

Պետութեան եւ կրօնքի կայսերական գաղափարախօսութեան մը ծիրին մէջ, ինչպէս առկայ կը տեսնենք «հոռմէական» քրիստոնէութեան մէջ, պիտի դժուարէր տեղ գտնել ազգային-կրօնական ինքնութիւն մը՝ իր ուրոյն սեպհական լեզուով ու ծէսով: Այս շէր սակայն պարագան՝ արեւմտեան եւ արեւելեան հոռմէականութեան սահմաններէն դուրս ծաղկող համեմատաբար փոքրածաւալ քրիստոնէութիւններուն: Անցողաբար արելցանք՝ թէ վերաբերումի որոշ տարբերութիւններ նշելի են նաեւ հոռմէական յիշեալ զոյգ իրականութիւններուն միջեւ՝ նկատմամբ ընդհանրականի եւ մասնատրի տրամասութեան: Այդ տարբերութիւնները սակայն դուրս կը մնան առ այժմ մեր դիտարկումի ծիրէն: Այսքանը միայն նշենք՝ որ առաջինին վերաբերումը հուսկ համայնագրաւ հանդիսացած է ո՛չ միայն ծէսի, այլ նաեւ լեզուի նկատմամբ: Վերապրած միակ զգալիօրէն շօշափելի բացառութիւնն է Ամբրոսեան ծէսը, որու վերապրումին ընկերամշակութային ու եկեղեցական-քաղաքական համագրերը կու գան, սակայն, վերահաստատելու կանոնը, ըստ ծանօթ առածին: Ընդհակառակն, արեւելեան հոռմէականութիւնը արելի բաց վերաբերում մը ունեցած է, զոնէ լեզուի նկատմամբ, ընդունելով լեզուներու բազմազանութիւնը միեւնոյն ծէսի ծիրին մէջ, տուեալ դէպքում՝ բիզանդականին:

Վերադառնալով հոռմէականութեան սահմաններէն դուրս մնացող քրիստոնէայ ժողովուրդներուն, գործնականօրէն՝ Բիզանդական Կայսրութեան շրջակայքի քրիստոնէութիւններուն, կարելի չէ չնշել՝ որ պատմականօրէն գերակշռած է ասոնց ազգային-ծիսական դիմագիծը: Ինչ որ կ'ըսենք՝ որոշ չափով կը զօրէ նոյնիսկ այն պարագային՝ երբ անոնցմէ մէկը, ինչպէս վրացականը, յարած է լեւոնական բիզանդական ուղղափառութեան. բայց ե՛ւս արելի

ակներեւ կը դառնայ ու կը շեշտուի այն Եկեղեցիներու պարագային, որոնք վերջնականօրէն անջատուած են բիզանդական ոլորտէն, թէպէտեւ միշտ ալ պահած են անոր հետ բաւական սերտ շփումներ եւ ամճախ չեն ցկատած բացուիլ միմէն իսկ անկէ եկող նոր ազդեցութիւններու: Ա՛յս է եղած անկասկած Հայ Եկեղեցւոյ կացութիւնը, առանց որ նախագոյ կամ յետագայ ազդեցութիւնները ստուեր ածէին իր շատ բնորոշ ազգային-մշակութային-ծիսական առանձնայատկութիւններուն:

Անտարակոյս, Դ. -Ե. դարերու եկեղեցամշակութային ընդհանուր շրջապատը, մասնաւոր Ասորիքի եւ Միջագետքի տարածքին, բաւական պատեհի հող մը կ'ընծայէր Մաշտոցեան յղացքի բոցափայլումին⁸: Բայց Մեսրոպի յղացքին ու գործին մէջ կա՛յն էական նորութիւն մը, կա՛յն որակական ուստում մը, որ զայն կը զանազանէ եւ կ'առանձնացնէ բոլոր միւս՝ քիչ թէ շատ նման պարագաներէն:

Ինչ որ նոր է այդ գործին եւ յղացքին մէջ՝ այն է որ դրանք մուտք կը գործեն պատմութեան մէջ իբրեւ բովանդակիչները, իբրեւ կրողները *փրկութեան ծրագրի մը, որ կ'ընդգրկէ ժողովուրդը եւ «ազգը», այսինքն էթնոսը, ո՛չ միայն հոգիներու յաւիտենական փրկութեան կարգով, այլ նաեւ – առանց նուազարկիչ, ե՛ւս աւելի արժանազորկիչ արժեւորումներու – անոնց ներաշխարհեան ապրումին եւ վերապրումին կարգով. ինչ որ կը ներփակէ էթնոսին, ազգին վերապրումը՝ իր ինքնութեամբ ու մշակոյթով, նաեւ եկեղեցային ու եկեղեցաբանական հարթակին վրայ եւ այդ տարածքին մէջ: Այսպէս, Մեսրոպ Մաշտոցի գործը բովանդակ հարցին անատոմութեան հարթակին եւ ստեղծաշարին վերաբերմամբ հիմնական փոխակերպում մը կը մոծէ թէ՛ մշակոյթներու եւ թէ՛ նոյնինքն Եկեղեցւոյ պատմութեան մէջ: Ստուգիւ, Մեսրոպի եւ իր անմիջական գործակիցներուն բովանդակ ճիգը լարուած էր սա հարցի լուծումին ի տես՝ թէ ի՛նչպէս կարելի էր փրկել ու պահպանել ժողովուրդին ինքնութիւնը, այդ լուծումը որոնելով ազգային գրական լեզուի մը, ազգային գրականութեան եւ մշակոյթի մը կազմաւորման եւ բանակարգումին ընդմէջէն: Նման ծրագիր մը կը ներփակէր խորքային տեղաշարժ մը Հայ ժողովուրդի վերապրումի ճիգին բնոյթին եւ կողմնորոշման մէջ. տեղաշարժը վերապրումի երաշխիքին՝ պետական-քաղաքական հարթակէն դէպի գերակշռօրէն մշակութային հարթակ: Այդ թուականներէն սկսեալ ինքնութեան հարցը, Հայերուն համար, պիտի կայանայ առաւելաբար մշակութային՝ քան թէ քաղաքական խնդրարկութեան մը մէջ: Մշակոյթ, որու մէջ կրօնական գործօնը տիրական դիրքով ու գործառոյթով պիտի յայտնուի, փաստելով իր խորապէս մարդաբանական տարածքը, առանց որ կրօնքին գերանցական եւ անդրաշխարհեան տարածքը անտեսուէր եւ կամ,*

⁸ Այս մասին աւելի լայն տեղեկութեան եւ յարակից մատենագիտութեան համար, տես ծն. 6ի մէջ յիշուած գրականութիւնը:

ընդհակառակն, այդ տարածքը արժեզրկելը կամ ճնշելը մարդկայինն ու ներմ-
նայունը⁹:

Ժամանակակից աստուածաբանությունը վաւեր գործիք մը կը դնէ մեր տրամադրութեան՝ աստուածաբանօրէն կարենալ քննարկելու եւ մշակելու հա-
մար ազգային իրականութիւնը: Այդ գործիքը վերայայտնաբերումն է «տեղա-
կան Եկեղեցի» ու «մասնաւոր Եկեղեցի»¹⁰ հասկացութիւններուն: Վերայայտնա-
բերում՝ որ անտարակոյս մեծագոյն նուաճումներէն մէկը եղած է Ի. դարու կա-
թողիկէ «նորարար» աստուածաբանութեան, թէ՛ ինչ կը վերաբերի այս յղացք-
ներու աստուածաբանական-եկեղեցաբանական տեսական արժէքին եւ թէ,
միաժամանակ, այն նախախնամական դերին՝ զոր անոնք կատարեցին մեր-
ձանցեալ տասնամեակներու ընթացքին, ու կը շարունակեն կատարել, Էկումե-
նական տրամախօսութեան մէջ:

Հայաստանեայց Եկեղեցին, իր գրեթէ ակունքներէն սկսեալ, մասամբ՝
բերմամբ իր աշխարհագրապատմական դիրքին, մասամբ՝ իբրեւ արդիւնքը
երկնառաք Հայրապետներու հոգեհանձնարին աստուածատուր լուսաւորու-
թեան, բանաձեւած է ազգային իրականութեան աստուածաբանութիւն մը եւ
աստուածաբանական մարդաբանութիւն մը, Քրիստոսի Փրկագործութեան

⁹ Չափազանցած չենք ըլլար, եթէ ըսենք որ Մետրոյ, գոնէ մեր միջերկրականեան քաղա-
քակրթութեան աշխարհին մէջ, մեծագոյն ուղեղներէն մէկն է՝ որ ժողովուրդի մը վերապ-
րումին հարցը տեղափոխած է կլանին, ցեղին, թագաւորութեան – մէկ խօսքով՝ նախ-
նական կամ զարգացած վարչական-պետական կորիզի մը – միութեան հարթակէն դէպի
մշակոյթի, մշակոյթի կազմակերպման, ուստի անոր միարարող արդիւնքներուն հե-
տապնդման հարթակին վրայ: Մինչ այդ, ժողովուրդի մը միութեան սկզբունքներուն
վերաբերեալ՝ քաղաքականէն դէպի հոգեւոր, տուեալ պարագային՝ դէպի կրօնական
հաւատքի հարթակ անցումի նման տեղաշարժ մը տեղի ունեցեր էր միայն հրեայ
ժողովուրդի կեանքին մէջ, յետ սրա քաղաքական գերիշխանութեան կորուստին:
Սկզբնաբար ընդունարուած եւ հաստատուած՝ Բաբելոնի գերութեան շրջանին մեծ
Մարգարէներէն, այն տեղաշարժը ապա տեսականօրէն մշակուեցաւ աղեքսանդրեան
դարոցի հրեայ մեծ միտքերուն՝ ի մասնաւորի Փիլոնի Երբայեցիի կամ Աղեքսանդրացիի
կողմէ, իբրեւ ժողովուրդին միութեան խարսխային սկզբունքը տուեալ իրադրութեան
մէջ, որ էապէս սփիւռքային, այսինքն ցրուածութեան իրադրութիւն մ'էր:

¹⁰ «Տեղական Եկեղեցի» ու «մասնաւոր Եկեղեցի» հասկացութիւնները, թէպէտեւ սեր-
տօրէն շաղկապուած իրարու եւ ներքնապէս ընդերուզուած, այնու ամենայնիւ չեն նոյ-
նանար: Բնականաբար այս չէ յարմար վայրը յամելու այն յղացքներու բովանդակու-
թեան եւ ատոնց փոխադարձ յարաբերակցութիւններուն ու ներառումներուն վրայ:
Կ'ուզէի սա կէտը միայն ընդգծել. «ազգ»ը՝ Եկեղեցւոյ մէջ կամ, աւելի ճշգրիտ արտայայ-
տութեամբ, «ազգային Եկեղեցի»ն՝ Տիեզերական կամ Ընդհանրական Եկեղեցւոյ
կազմին մէջ՝ կը ներկայացնեն ամենաբարձր եւ ամենատարածուն արտայայտութիւն-
ներէն մէկը թէ՛ «տեղական» եւ թէ՛ «մասնաւոր Եկեղեցի»ի զոյգ յղացքներուն: «Մասնա-
ւոր Եկեղեցի»ի (Eglise particuliere) տեսութիւնը մշակուած է առաւելաբար ֆրանսացի
աստուածաբաններէ՝ գլխաւորութեամբ Իվ Կոնգարի (Yves Congar, 1904-1995), իսկ
«տեղական Եկեղեցի»ի (Lokalkirche) տեսութիւնը մշակուած է առաւելաբար գերման
աստուածաբաններէ՝ գլխաւորութեամբ Կարլ Ռաների (Karl Rahner, 1904-1984):

տիեզերածառայ Տնօրէնութեան կարգին մէջ, որով ուրոյնը, մասնատրը, տեղականը կը հաստատուին, իրենց գոյութիւնը եւ ինքնութիւնը կը հաստատեն, առանց պոկուելու ընդհանուրէն եւ տիեզերականէն, մասնատրը թէ առանց ո՛չ իսկ հակադրուելու անոնց:

Նոյնիքն Սահակ ու Մեսրոպ եւ իրենց աշակերտները ո՛չ միայն սնած ու դարբնուած էին յոյն եւ ասորի մշակոյթներով, բացի անշուշտ պարսկականէն, այլ կը տածէին նաեւ լաւագոյն յարաբերութիւններ թէ՛ Յոյներուն եւ թէ՛ Ասորիներուն հետ¹¹:

Մինչեւ իսկ Զ. դարու սկիզբները, Դուինի Ա. Ժողովի տարիներուն (506-508), Բարզէն Որթնեցի Կաթողիկոսի օրոք, ի հեճուկս Վարդանանց հերոսամարտի շրջանին Բիզանդիոնի դաւադիր կողմնորոշման, Հայերու համար անխնդրարկելի սկզբունք էր, հաւատքի հարցերուն մէջ, համաձայնութիւնը՝ «Հոռոմ»ներուն եւ ասոնց «բարեբանելոյ Թագաւորին» հետ: Իրադրութիւնը տրամագծօրէն կը փոխուէր, ինչպէս ջանացած են այլուր ապացուցնել, միայն Զ. դարու կէսերուն, ամենայն հաւանականութեամբ Յուստինիանոս Կայսեր հայկական քաղաքականութեան բերմամբ, զոր աւելի ճիշդ պիտի ըլլար «հակահայ» քաղաքականութիւն որակել: Այդ տարիներէն սկսեալ, բիզանդական աշխարհին անատմամբ հակադրութիւնը պիտի գործէ իբր հայ լինելու բնորոշիչ մէկ բաղկարարը: Պատմական հանգէտ համագրի մը մէջ է, բնականաբար հակընթաց զարգացումներու իբր արդիւնք, որ վրացական ինքնութեան հաստատումն ալ իր լրումին պիտի յանգի, հակադրուելով հայութեան¹²:

¹¹ Բաւ է յիշել՝ թէ ինչպիսի՛ բարեացակամութեամբ ընդունուած է Մեսրոպ Միջագետքի ասորի կղերէն ու ժողովուրդէն եւ ինչպիսի՛ պատիւներով, Կոստանդնուպոլսոյ մէջ, նոյնիքն Կայսրէն: Թէ ինչպէս դիմած է Ասորիներուն եւ Յոյներուն, խնդրելով անոնց աջակցութիւնը իր գաղափարի իրագործման համար, եւ թէ ինչպիսի՛ փոյթ ցուցաբերած է, Սահակ Կաթողիկոսի հետ համաշունչ եւ համախորհուրդ, ապահովելու համար իր աշակերտներուն՝ նոյնիքն տեղւոյն վրայ, ամուր կրթութիւն մը ասորական եւ յունական դպրութիւններուն մէջ: Այս ամէնը հաւաստի է ո՛չ միայն Կորիւնի իսկ վկայութիւններէն, այլ եւ բոլոր յետագայ փաստաթուղթերէն՝ որոնք կը խօսին Մեսրոպի եւ իր գործի մասին: Ինչ կը վերաբերի Պարսիկներուն, Սասանեան Կայսրութեան հետ ճգնաժամային տագնապը, պարզ է, որ արդիւնք էր սոսկ այս վերջինիս, յատկապէս Յագկերտ Բ. ի մոլի քաղաքականութեան՝ բռնի պարտադրելու Հայերուն Չրադաշտական կրօնքը:

¹² Որոշ մասնագէտներ խզումը կը կանխեն մինչեւ Զ. դարու առաջին տասնամեակը կամ նոյնիսկ Ե. դարու վերջերը: Աւելի քիչ թիւով մասնագէտներ զայն կը յետաձգեն մինչեւ Է. դարու սկիզբները: Յամենայն դէպս, քաղկեդոնական բաւական զօրեղ հոսանք մը, թէպէտեւ ընդհանրապէս փոքրամասնային, բաւական երկար ժամանակ ապրած է Մեծ Հայքի, մանաւանդ Մեծ Հայքի որոշ շրջաններուն մէջ: Քաղկեդոնի նկատմամբ Հայաստանեայց Եկեղեցւոյ որդեգրած պաշտօնական դիրքորոշումներուն եւ պտմական համագիրներուն, նաեւ անհատներու կամ մասնաւոր խմբաւորումներու դիրքերուն մասին, տես՝ **K. Sarkissian**, *The Council of Chalcedon and the Armenian Church*, London 1965, New York 1975². **B. L. Zekiyan**, “La rupture entre les Eglises Géorgienne et Arménienne au début du VII^e siècle. Essai d’une vue d’ensemble de l’arrière-plan historique,

Պատմութեան այս հանգրուանին, այսինքն՝ Զ. դարու երկրորդ կեսին եւ յաջորդաբար, կը գտնուինք դէմ յանդիման տխուր շրջադարձի մը հետ, ազգային, կրօնական ու եկեղեցային ինքնութիւններու բանաձեւման ու հաստատման գործընթացներուն մէջ, տարբեր այն մէկէն՝ զոր տեսանք Ե. դարու Հայքին մէջ: Այդ թուականներէն սկսեալ, Բիզանդական Կայսրութեան ամբողջ շրջակայքի տարածքին, իրաքանչիւր ինքնութեան հաստատումը պիտի իր հետ բերէ ճակատագրորէն պահանջը կամ կարիքը ներհակադիր հանդիպադրութեան մը: Կարելի չէ սակայն, կը խորհիմ, պարկեշտօրէն համաձայն չգտնուիլ՝ որ այդ պարուրածն մազլցումը շղթայազերծուած է նախ եւ առաջ նոյն այդ Բիզանդական Կայսրութեան մենաստիրական ձգտումներէն, որ այլեւս հասած էր իր ոյժերուն եւ յաակնութիւններուն լիայեղձ գիտակցութեան: Յաակնութիւններ՝ բանաձեւուած արդէն, բացայայտ եւ ակնբախ եզրերով, 451ի Քաղկեդոնի Ժողովի ընթացքին, այս ժողովին դարերով մշանաւոր մնացած եւ, – հարկ է խոստովանիլ, – նախնական Եկեղեցոյ կարգուսարքին հետ զգալիօրէն անյարիր 28րդ կանոնին մէջ: Աւելցնենք որ, նոյնինքն հին կամ արեւմտեան Հռոմը սկզբունքայնօրէն չէ ընդունած այդ կանոնը: Դարերու ընթացքին, յատկապէս

dans Revue des études Arméniennes, n. s., XVI (1982), էջ 155-174. Նոյն, “Les relations arméno-byzantines après la mort de St Nersēs Šnorhali, XVI Internationaler Byzantinistenkongress. Akten, II/4: Jahrbuch der Österreichischen Byzantinistik, 32/4, էջ 331-337. Նոյն, “The Armenian Community of Philippopolis and the Bishop Ioannes Atmanos Imperial Legate to Cilicia”, Between the Danube and the Caucasus. Oriental Sources on the History of the Peoples of Central and South-Eastern Europe, ed. by G. Kara, Budapest, 1987, p. 363-373. **N. Garsoian**, “Some Preliminary Precisions on the Separation of the Armenian and Imperial Churches: 1. The Presence of «Armenian Bishops at the First Five Oecumenical Councils”, KATHEGETRIA. Essays Presented to John Hussey, Porphyrogenitus, 1988, էջ 249-285. Նոյն, “Quelques précisions préliminaires sur le schisme entre les églises byzantine et arménienne au sujet du concile de Chalcedoine. II. La date et les circonstances de la rupture”, L’Arménie et Byzance. Histoire et culture, (Byzantina Sorbonensia, 12), Paris, 1996, էջ 99-112. Նոյն, L’église arménienne et le grand schisme d’Orient, dans CSCO, 574: Subs. 100, 1998 (հաստափոր հատոր մը՝ ամբողջութեամբ Քաղկեդոնի հարցին նուիրուած). **K. Maksoudian**, “The Chalcedonian Issue and the Early Bagratids: The Council of Shirakawan”, Revue des études Arméniennes, n. s., XXI (1988-89), էջ 333-344. **V. A. Arutjunova-Fidanjan**, “The Ethno-confessional Self-Awareness of Armenian Chalcedonians”, անդ, էջ 345-363. A. Schmidt, “Die Refutatio des Timotheus Aelurus gegen das Konzil von Chalcedon. Ihre Bedeutung für die Bekenntnisentwicklung der armenischen Kirche Persiens im 6. Jahrhundert”, Oriens Christianus, 73 (1989), էջ 149-165. Հ.Պ. Անանեան, Քննութիւն Հայ Եկեղեցոյ պատմութեան (Ե. եւ Զ. դար), Ս. Ղազար – Վենետիկ, 1991. Նոյն, «Չարարիա Հայոց Կաթողիկոսի եւ Աշոտ Իշխանաց Իշխանի թղթակցութիւնը Փոս Պատրիարքի եւ Նիկողայոս Ա. Պապի հետ», («Բազալէպ» Մատենաշար, 35), Ս. Ղազար – Վենետիկ, 1992: A. Lidov, “L’art des Arméniens chalcédoniens”, Atti del V Simposio Internazionale di Arte Armena (Venezia 30 maggio - 3 giugno), San Lazzaro -Venezia, 1992, էջ 479-495. **Arsen Sapareli**, Sur la separation des Géorgiens et des Arméniens, par Z. Alexidze et J.-P. Mahe, Revue des études Arméniennes, n. s., XXXII (2010), էջ 59-132:

ժամանակակից Էկումենական տրամախօսութեան ծիրին մէջ ընդունած է զայն ըստ արդեանց (de facto): Այդ կանոնին պատճառով, նոնիքն Լեոն Ա. Պապը շուրջ երկու տարի չէ ուզած վաւերացնել նոյնիքն Քաղկեդոնի Ժողովը, զոր հուսկ վաւերացուցած է իրեն հասած պնդումներուն պատճառով՝ թէ այդ վաւերացումը կը նպաստէր ետիքական շարժումին զօրացման¹³:

Սա կէտին վրայ եւս հարկ է ուշադրութիւն հրաւիրել, ի խնդիր պատմական իրաւադատութեան, որ արեւմտեան քրիստոնէայ Հոմեականութիւնն ալ, ինչ կը վերաբերի գոնէ Հայերոս, բայց ո՛չ միայն, չէ կարողացած ինքզինքը զերծ պահել՝ բիզանդականին նման կայսերապաշտ յաւակնութիւններէ, որոնք որեւէ հարկադիր պատճառաբանութիւն չունէին, նոյնիսկ եթէ ուզենք մնալ՝ Հոմեական կաթողիկէութեան համար դասանանքի միջ կազմող Պետրոս Առաքելի եւ յաջորդներուն առաջնատրութեան տեսութեան սեղմ սահմաններուն մէջ: Այդ յաւակնութիւնները, Հայերոս նկատմամբ, յայտնուեցան յարաճուն ուժգնութեամբ Կիլիկեան շրջանին, երբ երկու Եկեղեցիները ունեցան, շատ յաճախ, սերտ շփման առիթներ: Այդ կասերապաշտ յաւակնութիւններուն արդիւնքը եղաւ հուսկ, որ Կիլիկեան շրջանին ալ եւ յետոյ, հայ ինքնութեան հաստատումը շարունակուեցաւ, թէւ ոչ գերակշռօրէն՝ բայց գոնէ յաճախակիօրէն, հակադրութեան յառաջխաղացքով, ուղղուած այս անգամ՝ լատին, հոմեական, «ֆրենկ/ֆրանկ» կամ «կաթոլիկ» հակապատկերներուն:

Եզրափակելէ առաջ մեր այս վերլուծումը, ու վերադառնալով մասնատրի, տեղականի, ազգայնի՝ ընդհանուրին եւ տիեզերականին հետ տրամասութեան նախնական, սկզբնահերթ բանաձեւումին, որ չի ներփակեր, ընդհակառակն կը վանէ անոնց անյարիր հակադրումը, պիտի համարձակէի նոյնիսկ հաստատել՝ թէ ժամանակակից աստուածաբանութիւնը հաւանօրէն դեռ չէ պեղած ըստ արժանուն՝ կլանային, ցեղախմբային, ազգային, մէկ խօսքով որեւէ տիպի տեղական, մասնատր մշակոյթներու տեղը եւ դերը Փրկագործութեան

¹³ Stu` Ch. J. Héfélé - H. Leclercq, Histoire des Conciles d'après les documents originaux, t. II/2, Paris, 1908, էջ 815-826. T. Jalland, The Life and Times of St. Leo the Great, London - New York, 1941, էջ 303-349. V. Monachino, "Genesi storica del can. 28 di Calcedonia. Il can. 28 e S. Leone Magno", Gregorianum, 33 (1952), էջ 261-291, 531-565. R. V. Sellers, The Council of Chalcedon. A Historical and Doctrinal Survey, London, 1953, էջ 125-128, 275, n. 1, 294. Das Konzil von Chalkedon. Geschichte und Gegenwart, hrsg. v. A. Grillmeier u. H. Bucht, vol. II, V^e partie, C. Chalkedon und die Beziehungen zwischen Rom und Byzanz, Würzburg, 1953, էջ 433-562. A. Fliche - V. Martin, Storia della Chiesa dalle origini ai giorni nostri, t. IV/3, 3^a ed. ital. a cura di C. Capizzi, Torino, 1972, ch. IX, էջ 297-300, ch. X, 332-333, II^e partie, ch. I, էջ 342-343. W. de Vries, Rom und die Patriarchate des Ostens, Freiburg-München, 1963, էջ 20-21. Նոյն, Ortodossia e cattolicesimo, Brescia, 1983, 1992², էջ 38-41. Histoire du Christianisme des origines de nos jours, sous la dir. de J.-M. Mayeur..., t. III, Paris, 1998, էջ 102-104, 149-153, 160-163:

Խորհուրդին մէջ այնպէս՝ ինչպէս զայն փորձուած կը տեսնենք Հայաստանեայց Եկեղեցույ կեանքին մէջ, եւ մշակուած՝ մաշտոցակերտ այդ յղացքը աստուածաբանօրէն մեկնաբանող, տեսաբան Հայրերու գրչին տակ, որպիսիք եղան յատկապէս ու գերազանցօրէն՝ Կորիւնը, Եղիշէն, Խորենացին: Ահա՛ թէ ինչո՛ւ Ե դարը – նաեւ մինչեւ Է. դարը, եթէ մէկը ուզէ մինչեւ Է. դար տեղադրել Աւարայրի Բլբուլն ու Պատմաբանը¹⁴ – կը կազմէ ո՛չ միայն Հայ հոգեւոր մշակոյթի ոսկեդարը, այլ նաեւ այն մեծ դարաշրջանը՝ երբ մարմին ու ձեւ կը զգենու Հայ քրիստոնէայ ինքնութեան լրիւ, բիրեղայնացած բանաձեւումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հեղինակը կը փորձէ ներհայեացք մը դէպի հարցի մը ընդերքը, որ կենսական կարեւորութիւն ունեցած է Եկեղեցիներու կեանքին մէջ դարերու ընթացքին, որ սակայն հազուադէպօրէն առարկայ դարձած է բացայայտ ու խորացող աստուածաբանական անդրադարձութեան մը. այն է՝ թէ ի՛նչպէս կարելի է հաշտեցնել Քրիստոսի ընդհանրական, տիեզերական պատգամը բոլոր այն

¹⁴ Յատկապէս Եղիշէի յարակից բանասիրական հարցերը հանգամանօրէն քննած եմ հետեւեալ գրութեանս մէջ՝ *Quelques observations critiques sur le «Corpus Elisaeum»*, The Armenian Christian Tradition. Scholarly Symposium in Honor of the Visif to the Pontifical Oriental Institute, Rome of His Holiness Karekin I Supreme Patriarch and Catholicos of All Armenians, December 12, 1996, ed. by R. F. Taft, S. J., (Orientalia Christiana Analecta, 254), Pontif. Ist. Orientale, Roma 1997, էջ 71-123: Խորենացիի մասին տես՝ ի միջի այլոց՝ **B. L. Zekiyán**, “L’ idéologie” nationale de Movsēs Xorenac’i et sa conception de l’histoire”, Հանդէս Ամսօրեայ, ՃԱ (1987), էջ 471-485. **G. Traina**, Il complesso di Trimalcione. Movsēs Xorenac’i e le origini del pensiero storico armeno, (Eurasistica. Quaderni del Dipartimento di Studi Eurasiatici, Università degli Studi di Venezia, 27), Casa Ed. ce Armena, Venezia, 1991. Նոյն, “Materiali per un commento a Movsēs Xorenac’i, Patmut’iwn Hayoc’ I, Le Muséon, 108 (1995), էջ 279-333, II, Le Muséon, 111 (1998), էջ 95-138. J.-P. Mahé, “Entre Moïse et Mahomet: réflexions sur l’historiographie arménienne”, Revue des études Arméniennes, n. s., XXIII (1992), p. 121-153. A. et J.-P. Mahé, Histoire de l’Arménie par Moïse de Khorène. Nouvelle traduction de l’arménien classique ... (d’après Victor Langlois) avec une introduction et des notes, Gallimard, Paris 1993, “Introduction”, էջ 9-91:

Յիշեալ գրութիւններուս մէջ յաճախ դիտել տուած եմ, այլ փաստարկներու կարգին, թէ ի՛նչպէս Խորենացիի ու Եղիշէի շնչած մշակութային-գաղափարախօսական-աստուածաբանական մթնոլորտը չափազանց դժուարաւ յարիր տեղադրում մը կրնայ գտնել ուշ դարու մը մէջ: Այս տիպի փաստերուն կու գայ անելնալ մեր ներկայ նկատողութիւնը ազգային-եկեղեցական ինքնագիտակցութեան բանաձեւումին եւ սպարումին նկատմամբ: Մերէտս, որ Է. դարու հեղինակ է, մեծ պատմաբան եւ մանաւանդ պատմութեան աստուածաբան, ըստ Ե. դարէն եկող եւ արդէն Կորիւնով կատար հասնող հայկական լատագոյն, խորարմատ աւանդութեան, արդէն կը կրէ սակայն իր դարաշրջանին կնիքը, այնու որ հայ եկեղեցական ինքնութիւնը, իր մօտ, կը ներփակէ որոշ զատորոշում, մանաւանդ թէ որոշ բախում յոյն կամ բիւզանդական ինքնութեան հետ: Նման հակադրումի հետքն իսկ չկայ Պատմախոր կամ Եղիշէի մօտ, հարկ չկայ յիշել Կորիւնը:

տեղական ու մասնական առանձնաչատկություններուն եւ տարբերություններուն հետ, որոնք գործնական գետնի վրայ առկայ եղած են միշտ Եկեղեցույ կեանքին մէջ:

Այս հարցին լուծման բանալին հեղինակը կը տեսնէ Համբարձումէն առաջ Փրկչին վերջին խօսքերուն մէջ, որոնք մեր գրաբար ոսկեդարեան թարգմանութեան մէջ կը հնչեն՝ «աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս» (Մատթ. ԻԸ19), ուր «հեթանոս» բառը պէտք է հասկնալ իր ծագումնային յունարէն առումով՝ իբրեւ ազգ, էթնոս/եթնոս (έθνος), քանի որ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը «ազգ/ազգեր» որակումով կը բնորոշէր բոլոր անոնք՝ որ իր կազմին չէին պատկաներ: Նշանակալից է որ Տէր Յիսուս չ'ըսեր՝ «զամենայն մարդիկ/բոլոր մարդիկը», այլ կ'ըսէ «բոլոր ազգերը /զամենայն հեթանոսս»:

Քրիստոսի պատգամը չէ ուղղուած մարդոց իբրեւ սոսկ անհատներ, այլ իբրեւ մասնիկներն ընկերային կազմի մը, որ այս պարագային է «ազգ»-ը: Այսպէս, ազգային իրականութիւնը, իր բովանդակ մարդաբանական եւ ընկերաբանական բաղկարարներով եւ յարացոյցներով կը բարձրանայ Քրիստոսի փրկագործութեան Խորհուրդի մակարդակին, ամբողջութեամբ կը համալրուի անոր մէջ: «Ազգ»-ը կամ «ազգութիւն»-ն ալ պէտք է փրկանաւորուին ու փրկուին Քրիստոսի փրկչական արարքով, ինչպէս բովանդակ մարդկային իրականութիւնը:

BOGHOS LEVON ZEKIYAN

*Archeparch of Catholic Armenians of Istanbul and Turkey;
Pontifical Delegate for the Mekhitarist Congregation*

THE DIALECTICS BETWEEN UNIVERSAL AND THE LOCAL/PARTICULAR IN THE PERCEPTION AND THEOLOGICAL SENSITIVENESS OF THE ARMENIAN CHURCH

Reflections on some basic trends of Armenian theology and spirituality

Keywords: Universal, local/particular, “Azg”/ethnos, economy of salvation, Theology, Ecclesiology, theological, anthropology.

The author tries an insight into a problem which has been topical in the life of the Churches along their centuries long history, which however rarely has been made the object of an open and deepening theological reflection: the question how to conciliate Christ's universal message with all those local varieties and peculiarities which de facto existed in the life of the Church. In other words, this is the problem of the dialectics between the universal and what unavoidably is local or particular in the

life of a Church. The author sees the key of solution of this problem in the last words of the Saviour, his last message to his pupils before ascending to Heavens: “make disciples of *panta ta ethnē*” (Mt., 28, 19). Jesus does not say “all men”, He speaks of all “nations”. His message is addressed to humans not just as simple individuals, but as parts of a social belonging, of a social structure. Thus ethnic identity is elevated, with all its anthropological and cultural indicators, up to the order of Christian redemption. It is also to be redeemed and saved by Christ as whole human reality.

Before facing the question of the meaning of ethnos (ուզգ, nation) in Christ’s plan of human salvation, the author gives some examples of the dialectical relationship between universal and local/particular.

The expression «ուզգային Եկեղեցի» (Ethnic/national Church) occurs in the current vulgata of ecclesiastical academese of the Armenian Church, of its homiletics, communitarian education, etc. The use of this expression often doesn’t go beyond the limits of a folkloric concept, sometimes sliding even in somehow nationalistic rhetorics. Author submits to analysis the Evangelical concept of ethnos/azg (ուզգ) trying to put in light its specificity and importance in God’s salvation plan. Ethnos becomes in this perspective the widest and highest anthropological/sociological expression of what recent theology, developed in the course of the 20th century, specially in the francophone and germanophone areas indicated as the living experience of the *local/particular* Church in the frame of the unique, universal Christian Church.

ԿԱՐԵՆ ՄԱՐԹԵՒՈՍՅԱՆ

Մեարույ Մաշտոցի անվան Մատենադարան

ԺԳ ԴԱՐԻ ՎԻՄԱԳԻՐԱԿԱՆ ՈՐՈՇ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԱՆԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր՝ Անի, վիմագիր, եպիսկոպոսանիստ, հարկահան, Արցախ, Հոռոմոս, Ուրան, Պապրան:

Միջնադարյան Հայաստանի պատմության մեջ Անին բացառիկ դեր է կատարել ոչ միայն որպես երկրի քաղաքական ու հոգևոր կենտրոն, Բագրատունյաց շրջանում՝ թագավորանիստ եւ կաթողիկոսանիստ, այլեւ քաղաքային կյանքի, տնտեսության, արհեստների ու առևտրի, մշակույթի եւ արվեստի զարգացման առաջնակարգ վայր: Քաղաքի պատմությունն ու մշակութային ժառանգությունը՝ հատկապես ճարտարապետությունը, բազմաթիվ ուսումնասիրությունների առարկա են դարձել, վերջին շուրջ 150 տարվա ընթացքում այդ մասին ստեղծվել է մեծածավալ գրականություն¹: Սակայն, որոշ իմաստով, թերի է մնացել Անիի քաղաքացիների կամ անեցիների պատմությունը, որի ուսումնասիրության համար, բարեբախտաբար, բավական շատ նյութեր կան:

Անիում էր ապրում հաշ հասարակության վերնախավը՝ թագավորներից ու նրանց ընտանիքների անդամներից սկսած, մինչև ե ազնվականական տներ, բարձրաստիճան հոգևորականներ՝ կաթողիկոսներ, եպիսկոպոսներ, վարդապետներ, երեցներ, մեծաթիվ քաղաքային դասը, որը բաղկացած էր հիմնականում արհեստավորներից ու առևտրականներից, նաեւ այլ փոքր խմբերից: Անիի բնակչության մասին պատմիչների երկերում, վիմագրերում եւ ձեռագրերի հիշատակարաններում պահպանվել է պատմական ու ժողովրդագրական բավականաչափ հարուստ նյութ, որի մասնը մեզ հայտնի չէ ԺԱ-ԺԴ դդ. հայկական որևէ այլ բնակավայրից:

Սույն թեմային մենք մասամբ անդրադարձել ենք 1997 թ. լույս տեսած՝ Անիի եկեղեցական կյանքին եւ ձեռագրական ժառանգությանը նվիրված գրքում, որտեղ բազմաթիվ տեղեկություններ են հավաքված

¹ **Ս. Գեջյան**, Անի մատենագիտություն, Երևան, 2006 (գրքում թվարկված է Անիի պատմության եւ մշակութային ժառանգության մասին մինչև 1995 թ. հայերեն եւ այլ լեզուներով հրատարակված 1300 անուն աշխատություն), Sezai Yazici, Ani Bibliography, Ankara, 2017 (գիրքն ընդգրկում է 2029 անուն հրատարակություն):

Անհի հոգեւորականության, ինչպես նաեւ ձեռագրական մշակութիւն առնչված եւ հիշատակարաններում նշված անձանց վերաբերյալ²: Վերջերս մի նոր հրապարակում ունեցանք, նվիրված քաղաքային տոհմերին կամ գերդաստաններին, որոնք հիշատակվում են առանձին տոհմանուններով՝ ինչպես Բեխենց, Հոնենց (Տիգրանանց), Չեչկանց, Հոգեւորեաց, Հոռոմեանց, Խորենց, Օեխենց, Ծիլենց, Թորոսոնց եւ այլն³: Այս ուղղությամբ ուսումնասիրությունն ամբողջաճառու է սկզբնաղբյուրների տեղեկությունների հիման վրա կազմված՝ յուրաքանչյուր մարդու մասին հակիրճ տվյալներ պարունակող «Անեցիների եւ քաղաքին առնչված անձանց անվանացանկի» առաջիկա հրատարակությամբ:

Պատմիչների երկերում Անհի ԺԳ դարի պատմության մասին եղած տեղեկությունները սակավաթիվ են, չնայած, որ դարասկիզբը քաղաքի երկրորդ խոշոր ծաղկման շրջանն է: Դրանք հիմնականում վերաբերում են պատմական խոշոր անցքերին, ինչպես օրինակ՝ 1236 թ. մոնղոլների կողմից քաղաքի գրավմանը, սակայն վիմագրերը, հաճախ նաեւ ձեռագրերի հիշատակարանները, պահպանել են այս ժամանակաշրջանում քաղաքային կյանքին եւ անեցիներին վերաբերող արժեքավոր եւ հետաքրքրական բազմաթիվ տեղեկություններ: Ստորեւ ներկայացնում ենք նշված դարի վիմագրական նյութերի ուսումնասիրության ժամանակ կատարված՝ անեցիներին վերաբերող մի քանի ճշգրտում, ինչպես նաեւ, հավանաբար Արցախից Անի տեղափոխված երկու եղբայրների վերաբերող տվյալները՝ համապատասխան վերլուծությամբ:

**Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ 1276 Թ.
ՎԻՄԱԳՐԻ ՆՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄ**


Անհի վիմագրական ժառանգության մեջ ամենամեծ թիվը կազմում են եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու ու նրա գավթի արձանագրությունները, որոնք պարունակում են զանազան պաշտոնական գրություններ, հարկերի թեթեւացման մասին հրամաններ եւ այլն: Դրանք հրատարակված են Հ. Օրբելու կազմած հատորում, «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի առաջին պրակում: Այստեղ 1276 թվականի արձանագրության մի հատվածը եւ նրա մեջ հիշատակված անձնանունները սրբագրման կարիք ունեն:

² Կ. Մաթևոսյան, Անի. եկեղեցական կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 103-147, 241-319:

³ Կ. Մաթևոսյան, Անհի քաղաքացիները (քաղաքային տոհմեր), «Էջմիածին», 2020, Չ, էջ 51-68:

Վիմագիրն այն մասին է, որ Սահիբ Դիվանի (Շամս աղ-Դին Ջուվեյնի)⁴ պարոնության, կամ Անիի կապալառու եղած ժամանակ Անիի մի քանի հարկահաններ (դադմաչի կամ տադմաճի) քաղաքում ուռնացված հարկային բեռը թեթեացրել են. մասնավորապես, նշում են, որ չբեռնված գրաստից (խոսքը քաղաք մտնողների մասին է) կես սպիտակ (արծաթ դրամ) են գանձել, ինչն իրենք վերացնում են: Բայց, ցավոք, վիմագրի վերջնամասն անավարտ է, ոչ թե չի պահպանվել, այլ չի գրվել, եւ այն ավարտվում է հարկը թողնելու մասին հիմնական բառի կիսատ գրությամբ՝ ԹՈՂ(Ա.Բ):⁵

Արձանագրությունը գտնվում է եկեղեցու գավթի արեւելյան՝ գլխավոր ճակատի շքամուտքի ձախ կողմում, խորշերից առաջինի երկու թեք մասերի վրա (նկ. 1):



Նկ. 1. Ս. Առաքելոց եկեղեցու ու նրա գավթի ճակատը (լուսանկարը Կ. Մաթեւոսյանի, 2012 թ.)

Գրությունը բավական բարձր դիրքում է եւ անհարմար՝ ներքեւից ընթերցելու տեսակետից: Նրա մի առանձնահատկությունն այն է, որ

⁴ Սահիբ Դիվանի մասին տե՛ս Հ. Մարգարյան, 11-14-րդ դարերում հայ-իրանական կապերի պատմությունից (Սահիբ Դիվան Շամս աղ-Դին Ջուվեյնին եւ Հայաստանը), «Արեւելագիտական ժողովածու», հտ. V, Երեւան, 2004, էջ 111-125:

⁵ Դիվանի հայ վիմագրության, պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երեւան, 1966, էջ 22:

տառերը լցված են ծեփով: Դա կարող էր լինել երկու դեպքում, կամ վիմագիրն ինչ-ինչ պատճառներով ժամանակին ծածկել են ծեփի շերտով, բայց հետագայում բնության աներգործությամբ (ձյուն, անձրև, քամի) այն թափվել-վերացել է, եւ ծեփը մնացել է միայն տառերի փոսիկների մեջ, կամ հենց սկզբից գրությունն ավելի ընթեռնելի դարձնելու համար տառերը լցրել են ծեփով: Ամեն դեպքում, այս հանգամանքն այժմ որոշակիորեն հեշտացնում է վիմագրի ընթերցումը:

Սույն արձանագրությանն անդրադառնալու պատճառը նրա բովանդակության որոշ արհեստականությունն ու անունների տարօրինակությունն է՝ միջնամասում, որտեղ նշվում են Անիի դաղմաչիները: Ըստ հրատարակության, այն հետեւյալն է. «...մեք Անո դաղմաչիքս Հնդուչախս պարոն դատավորին ու Գինէզատին ու Սուփան ու Ամտին Գորգ եւ Բաան ապրիշմագործ եւ Փոանգ Ծրիկ զայս գիր տվաք Անո մուտերկերուն...» (Ակ. 2)⁶: Անունների մասն անհամեմատ լավ է ընթերցել Կարապետ Բասմաջյանը, սակայն իմաստային առումով հատվածը հատակ չէ անել նրա հրատարակության մեջ⁷:

Ինչպես տեսնում ենք, գրության շարահյուսությունն անհարթ է, անհասկանալի է դատավորի պարագան, տարօրինակ անուններ են

| | | |
|--|---|---|
| ԹՎԻ ՉԻԵ | Է Լ Ղ Ա ՆԻՆ | |
| ՎԱՍՆՅԵՐԿԱՐԿ ՌՇԱՅԻՆԵՍԱԻ ՆՈՒԱՂԱՉՉԻՔԱՅ ՈՆԴԱՍԱՎՈՐԻՆՈՒ ՈՒՍՈՒՓԱՆՈՒԱԸ ԱԻՆԱՊՐԻՇԱԳ ՇՐԻԿՁԱՅՍԳԻՐ ԷՐԿԵՐՈՒՆԵՍԱՔ ՆԻՐԱԻ ԴԱՂԱՃԻՑ ՍՏԷՆԿԷՍՊԱՌՆՈՒ ԵԱԼԴԱՂԱՃԻՔՍ ԵՆԴԱՆՈՒԹԵՓ | ԵՆԴԱՆՈՒԹԵՓԱ ՊԴԻԻԱՆԻՆՄԵՔԱ ՆԴՈՒՉԱԻՍՊԱՐ ԳԻՆ ԷՋԱՏ - ԻՆ ՏԻՆ ԳՈՐԳԵԻՔԱ ՈՐԾԵԻՓՐԱՆԳ ՏՎԱՔԱՆՈՄՈՒՏ ՈՐՈՒՅԷՆԱՐԱՍԱ ՈՒԵԴԱՐՏԱԿՐԱ ԻՆՄԵՔՎԵՐԱԳՐ ՎԱՍՆՅԵՐԿԱՐԿ ԱՌՇԱՅԻՆԹՈՂ | ԹՎԻՆ/ ՉԻԵ/ ԷԼՂԱ/ՆԻՆ/ ՎԱՍՆ ՅԵՐԿԱՐ ԿԵՆԴԱՆՈՒԹԵՓԱՆ ՓԱԹՇԱՆԻՆ ԵՆ ՍԱԻՊԴԻՆԱՆԻՆ ՄԵՔ Ա/ՆՈ ԴԱՂԱՄԱ- ՉԻՔՍ ՀՆԴՈՒՅԱՆՍ ՊԱՐ/ՈՆ ԴԱՍԱՎՈ- ՐԻՆ ՈՒ ԳԻՆԵՋԱՏԻՆ/ ՈՒ ՍՈՒՓԱՆ ՈՒ ԱՄՏԻՆ ԳՈՐԳ ԵՆ ԲԱ/ԱՆԻ ՍՊՐԻՇՄԱ- ԴՈՐՇ ԵՆ ՓՈՒՆԳ/ ՇՐԻԿ ՋԱՅՍ ԳԻՐ ՏՎԱՔ ԱՆՈ ՄՈՒՏ/ԵՐԿԵՐՈՒՆ. ՏԵՍԱՔ ՈՐ ՈՒՅ ԷՆ ՍՊԱՍ ԵՆ/ՆԻՐԱԻ ԴԱՂԱՄԱ- ՃԻՑ ՈՒՆԻ (ՈՒ ՄԻ՞?) ԴԱՐՏԱԿ ԳՐԱՍ/ՏԵՆ ԿԷՍ ՍՊԻՏԱԿ ՍՈՒՆՈՒՆ: ՄԵՔ ՎԵՐԱ- ԳՐ/ԵԱԼ ԴԱՂԱՄԱՃԻՔՍ ՎԱՍՆ ՅԵՐԿԱՐ Կ/ԵՆԴԱՆՈՒԹԵՓԱՆ ՓԱԹՇԱՆԻՆ ԹՈՂ ԱՔ... |

Նկ. 2. Արձանագրության գրչանկարը եւ տեքստը (Դիվան, I, էջ 22)

⁶ Նույն տեղում:
⁷ «...մեք՝ Անոյ դաղմաչիքս, Հնդուչախս, (որ) պարոն դատավորին որդին (է), Չաա[ա]լին Ուսուփս, Նուստին Գորգ եւ Բապէն ապրիշմ(ա)գործ, եւ փռան գորիկ, զայս գիր...» (Կ. Բասմաջյան, Հայերէն արձանագրութիւնք Անոյ, Բագնայրի եւ Մարմաշինու, Պարիս, 1931, էջ 90):



Նկ. 3. Արձանագրության միջնամասը (լուսանկարը Ս. Կարապետյանի)

Գիճեզատը եւ հատկապես Բաաւը: Բարեբախտաբար, այս վիճագիրը պահպանվել է, եւ Աճի գնացած շատերն են այն տեսել ու լուսանկարել (այդ թվում մենք): Հենց լուսանկարների շնորհիվ⁸ հնարավոր է դառնում վերընթերցել վիճագիրն ու ճշգրտումներ կատարել բնագրի նշված մասում: Պարզվում է, որ այնտեղ անունների միջեւ «ու» շաղկապ ընդհանրապես չի օգտագործված, մի քանի անուն՝ Գիճեզատ, Սուփան, Ամտին, Բաաւ, Օրիկ, պարզապես դուրս են գալիս⁹ եւ դրանց փոխարեն ավելանում են նորերը:

⁸ Վիճագրի առավել որակյալ լուսանկարը՝ երջանկահիշատակ Սամվել Կարապետյանի արխիվից, մեզ է տրամադրել նրա այրին՝ Էմմա Աբրահամյանը, որին խորին շնորհակալություն ենք հայտնում: Նրան ենք պարտական նաեւ երկրորդ վիճագրի լուսանկարի (նկ. 4) համար:

⁹ Արձանագրության հրատարակության տեքստի հիման վրա որոշ անուններ նաեւ մեկնաբանության են արժանացել, օրինակ՝ «Փռանկ Շրիկ» անվան մասին (շրիկ - ձիթագործ) բացատրություն է տալիս Հ. Բեգլարյանը (Հ. Բեգլարյան, Ձիթագործությունը միջնադարյան Հայաստանում, Պատմա-բանասիրական հանդես, 2008, N 3, էջ

Ցավոք արձանագրության հրատարակված գրչանկարը նույնպես ճիշտ չի արտահայտում նրա գծագրական տեսքը, մինչդեռ բոլոր մանրամասները երևում են լուսանկարում (նկ. 3): Ներկայացնում ենք վիմագրի ամբողջական վերծանությունը, տողերի պատից-պատ անցումը նշելով շեղ գծիկով.

ԹՎՆ ԷԼՂԱՆ
ՉԻԵ ՆԻՆ
ՎԱՍՆ ՅԵՐԿԱՐԿ/ԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ՓԱ
ԹՇԱՀԻՆ ԵՒ ՍԱԽ/ՊԴԻՎԱՆԻՆ ՄԵՔ Ա
ՆՈ ԴԱՂՄԱԶԻՔՍ Հ/Ն ԴՈՒՉԱԽՍ ՊԱՐ
ՈՆ ԴԱՏԱՎՈՐԻՆ ՈՐ/ԴԻՆ, ԷԶԱՏ[Դ]ԻՆ¹⁰
ՈՒՍՈՒՓՍ, ՆՈՒՐԱ/ՏԻՆ ԳՈՐԳ ԵՒ ԲԱ
ԻԼԷՆ ԱՊՐԻՇՄԱԳ/ՈՐԾ ԵՒ ՓՌԱՆԳ
ԴՐԻԿ ԶԱՅՍ ԳԻՐ/ ՏՎԱՔ ԱՆՈ ՄՈՒՔ
ԷՐԿԵՐՈՒՆ. ՏԵՍԱՔ/ ՈՐ ՈՒԺ ԷՐ ԱՐԱԾ Ա
ՆԻՐԱԻ ԴԱՂՄԱԾԵ(Ա)Ց/ ՈՒ ՆԻ ԴԱՐՏԱԿ ԳՐԱ
ՍՏԷՆ ԿԷՍ (Ս)Պ(ԻՏԱԿ) ԱՌՆՈՒ/ԻՆ ՄԵՔ ՎԵՐԱԳՐ
ԵՍԼ ԴԱՂՄԱԾԻՔՍ/ ՎԱՍՆ ՅԵՐԿԱՐ Կ
ԵՆԴԱՆՈՒԹԵ(ԱՆ) Փ/ԱԹՇԱՀԻՆ, ԹՈՂ (ԱՔ):

Ի նչպես տեսնում ենք արձանագրությունը սահուն շարադրանք ունի եւ անունների մասում նույնպես տեքստը հստակ է: Սրբագրված հատվածը հետեւյալն է՝ «...մեք Անո դաղմաչիքս Հնդուչախս՝ պարոն դատավորին որդին, Էզատ[դ]ին Ուսուփս, Նուրատին Գորգ եւ Բալէն ապրիշ-մագործ եւ Փռանգ Դրիկ, զայս գիր տվաք Անո մութրկերուն...»: Ըստ այդմ, վիմագրում նշվող հարկահաններն են՝

Հնդուչախը՝ պարոն դատավորի որդին, իսկ անվան սկզբնական ձեւը հնարավոր է Հնդուչահն է:

Էզատդին Ուսուփ, երկանուն է՝ Իզատդին եւ Ուսուփ (Ուսեփ-Հովսեփ) բաղադրիչներով:

162), «Ամտին» անվան մասին (Ամինադին)՝ Ա. Քյոչկերյանը (Ա. Քյոչկերյան, Գանձասաց Սարգիս Անեցի, Պատմա-բանասիրական հանդես, 1971, N 2, էջ 204): Հնարավոր է, որ կան նաեւ ուրիշ մեկնաբանություններ:

¹⁰ Վիմագրի լուսանկարից (ինչպես եւ գրչանկարից) երևում է, որ անվան վերջին երկու տառից առաջ բացատ կա, քարն այդտեղ վնասված է: Մակայն որոշ հետքեր, մասնավորապես վերին կորը եւ կարճ ելուստը հիմք են տալիս այն կարդալու «Դ»:

Նուրատին Գորգ, դարձյալ երկանուն է: Նման անուն Անիում հիշվում է 1280-ի՝ Նուրադին Քոթթիթ, որը նույնպես տաղմաչի էր եւ իր ընկերների հետ վերացրել է քաղաքի երեցանու (հոգեւորականների) վրա ապօրինի դրված հարկը (արձանագրություն է թողել Ս. Առաքելոց եկեղեցում)¹¹: Անվան երկրորդ մասը հավանաբար Գորգ-Գէորգ անունն է: Չի բացառվում, որ այն կարող է նաեւ գորգագործական արհեստ մատնանշող մականուն լինել, ինչպիսին որ դա տեսնում ենք հաջորդ մարդու անվան դեպքում (Բալէ Ապրիշմագործ): Միաժամանակ, Նուրատին Գորգի անվանը նմանվող Նուրադին Քոթթիթ անվան երկրորդ մասը նույնպես հավանաբար մականուն է, թերեւս «Քոթթիթ» իմաստով:

Բալէ ապրիշմագործ, այդ ժամանակի համար անսովոր անվանաձեւ է, որը թերեւս Պավլեն է (Պաւղոս-Պավել), իսկ այնուհետեւ նշվում է նրա ապրիշումագործ՝ մետաքսագործ լինելու մասին:

Փոսնգ Դրիկ, այս դեպքում թերեւս, առաջին բառը մականունն է, մարդու դավանական՝ կաթոլիկ պատկանելությունը ցույց տվող կամ գուցե Եվրոպայում եղած լինելու պատճառով առաջացած, իսկ Դրիկ անունը հայտնի է Արեւմուտքում եւ ծագում է Թեոդորիկ անունից¹²:

Վիճագրում նշված անունների ավելի մանրակրկիտ քննությունը մնում է անձնանուններով զբաղվող մասնագետներին, մենք միայն նախնական դիտարկում ենք կատարել: Այս վիճագիրը վկայում է, որ քաղաքում հարկահանության գործով զբաղվողների մեջ եղել են նաեւ արհեստավորական խավի ներկայացուցիչներ:

Անդրադառնանք Ս. Առաքելոցի գավթի վիճագրերում նշված եւս մեկ անվան: Անիի դաղմաչիներից Պապկանի որդի Գեշը, ԺԴ դ. սկզբներին պարոն Զազայի (Զաքարյան) հոգու համար քաղաքում թողել է «քասանիկ» կոչվող հարկը, որի մասին արձանագրությունն ըստ «Դիվանի» հրատարակության (նաեւ գրչանկարում) ավարտվում է հետեւյալ բառերով՝ «ԱՅՍ ԲԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՈՒՂԱԷՏԷՆ ԵՒ ԲՐԻՍՏՈՍԱՏՈՒՐ ԵՂԵՆ»¹³:

¹¹ Դիվան հայ վիճագրության, պր. I, էջ 23:

¹² Անվան ընթերցումը եւ բացատրությունը կատարել է Մատենադարանի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Լուսինե Թումանյանը, որին շնորհակալություն ենք հայտնում:

¹³ Դիվան հայ վիճագրության, պր. I, էջ 30:



Նկ. 4. Գեշի արձանագրության վերջին երկու տողը (լուսանկարը Ս. Կարապետյանի)

Սակայն վիմագրի լուսանկարից երեւում է, որ առաջին անվան մեջ միայն մեկ «Է» տառ կա, որի գրությունը հստակ առանձնանում է նաև ստորին գծիկի ցած թեքված ծայրով (նկ. 4): Ըստ էության, վիմագրում նշված է ոչ թե «Մուղալտէն», այլ «Մուղալտէն», որը ճիշտ է ընթերցել նաև Կ. Բասմաջյանը¹⁴: Անվան ուղիղ ձեւը կարող է լինել Մուղալտէ, բայց ավելի հավանական է թվում հենց Մուղալտէ՝ Մուղալտիս/Մուղալդիս, «դիս» վերջավորությամբ մի անվանաձեւ, որը բավական տարածված էր Անիում մոնղոլների տիրապետության շրջանում: Ի դեպ, մեր աղբյուրներում վերջիններս հենց «մուղալ» են կոչվում, եւ հնարավոր է, որ վերը նշված անունը այդ բառից է ծագում, մասնավորապէս որ, ավելի ուշ շրջանից ունենք Մուղալ անձնանունը (ավելի հաճախ՝ իգական)¹⁵: Մուղալտէն կամ Մուղալտիս/Մուղալդիս անվան այլ հիշատակություն առայժմ հայտնի չէ:

ՈՒՐԱՆ ԲԱՐԻՍՏԱԳԻՆ ԵՒ ՊԱՊՔԱՆ ՎԱԽՐԱԳԻՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Անիի ու մերձակա վանքերի վիմագրերում հիշատակվող այս ընտանիքի անդամների անուններն առաջին անգամ տեսնում ենք 1252 թ. Արցախի հնագույն վանքերից Մեծիրանից Ս. Հակոբի մի վիմագրում՝ «ես Ուքան ու Պապքան՝ որդիք Սարգսի՝ Հոգո որդոյն, միաբանեցաք ս(ուր)բ նշանիս՝ ընծայիք...»¹⁶, որի վերջում նշվում է նաև նրանց մյուս եղբայրը՝

¹⁴ Կ. Բասմաջյան, նշվ. աշխ., էջ 82:

¹⁵ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 3, Երևան, 1946, էջ 452-453:

¹⁶ Դիվան հայ վիմագրության, այր. V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 15: 1211 թ. Սեբաստիայում գրված մի հիշատակարանում նշվում են «պարոն Ուքան եւ Պապքան, այր իմաստունք, բարերարք եւ բարեմիտք...» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 75), սակայն նրանց հնարավոր չէ նույնացնել Արցախում եւ Անիում հիշված նույնանուն եղբայրների հետ, քանի որ վերջիններիս ակտիվ գործունեության հայտնի տարիներն ավելի ուշ շրջանի՝

Մերչո կամ Մերչի անունով: Վերջինս, արձանագրության ենթատեքստից դատելով, այդ ժամանակ արդեն մահացած էր, քանի որ Ուքանն ու Պապքանը 10 ժամ պատարագ են ստացել նրա համար՝ «Ժ (10) ժամ տվին մեր եղբարն Մերչո մեծին...»¹⁷: Ինչպես տեսնում ենք, այստեղ հիշվում է նաև նրանց պապը՝ Հոգի անունով: Սույն արձանագրությունից ելնելով, հավանական է կարծելու, որ այս ընտանիքը ծագումով Արցախից է եղել, որը որոշ ժամանակ անց տեղափոխվել է Անի:

Երկրորդ անգամ եղբայրները հիշվում են 1268-ին՝ Հայաստանի հյուսիսում գտնվող Խորակերտի վանքում, որին միաբանելով «աշխարհալոյս» Վարդան վարդապետի (Արեւելցո) հրամանով, ստացել են Հոգեգալստյան տոնի պատարագը: Վիմագրում նշում են. «Մեք՝ Ուքանս եւ Պապքանս՝ որդիք Սարգսի, թոռն Հոգոյն, միաբանեցաք ս(ուր)բ ուխտիս...»¹⁸: Վերջում ասվում է՝ «... միաբանքս ետուն մեզ զՀոգոյն գալստեան արն յամէն եկեղեցիքս ժամն է Ամէնտիկնա եւ յետ մեր մահուանն՝ մեզ առնեն անխափան»¹⁹: Այստեղ նշված «Ամէնտիկն» անունը վիմագրության դիվանում առաջին չորս տառի փակագրով գրված լինելու պատճառով սխալ է կարդացվել՝ «ԷՄԷՆ ՏԻԿՆԱ», որը պարզ է դառնում զրչանկարից: Հարկ է նշել, որ սա այս անվան ամենավաղ հիշատակություններից է, քանի որ Հ. Աճառյանի անձնանունների բառարանում բերված նրա առաջին վկայակոչումը 1327 թվականից է²⁰: Չնայած վիմագրում հստակ չի նշվում, բայց ենթատեքստից կարելի է ենթադրել, որ Ամենտիկինը Ուքանի եւ Պապքանի մայրն է եղել:

Մեկ տարի անց՝ 1269 թ., Ուքանին արդեն տեսնում ենք Անիում, որպես քաղաքի տերերից (կամ կապալառուներից) մեկը՝ Սահիբ Դիվանի (Մուհամեդ Ծամս Էդ-դին) եւ Սահմադինի հետ: Այդ մասին վկայող վիմագրում նա նշվում է միայն Քարիմադին անունով, ինչպես ստորեւ

1252-1274 թվականներին են վերաբերում: Հիշատակարանի 1211 թվականը կասած չի հարուցում, քանզի գրիչը նաև նշում է, որ չգիտի թե ժամանակի՝ իրար հակառակ երեք կաթողիկոսներից որի՞ն հիշատակի՝ Հովհաննեսին (Հովհաննես Չ Սսեցի՝ 1203-1221), Անանին (նա Ռուսի սուլթանության տարածքում էր իրեն կաթողիկոս հռչակել), թե՞ Դավթին: Վերջինս Դավիթ Արքակաղնեցին է, որը մահացել է 1212 թ.: Հոգու որդի Ուքանի եւ Պապքանի հետ կապ չունի նաև 1220 եւ 1243 թթ. Հաղբատում հիշատակված՝ Քրդի որդի Ուքանը (եղբայրը՝ Սմբատ) եւ Ուքանանց տոհմը (**Կ. Ղաֆադարյան**, Հաղբատ, Երեւան, 1963, էջ 206, 230):

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ, կազմեցին **Ս. Քարխուդարյան**, **Կ. Ղաֆադարյան**, **Ս. Սաղունյան**, Երեւան, 2012, էջ 265:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Երեւան, 1942, էջ 118:

կտեսնենք, հետագայում նա հիշատակվում է երկանունով՝ Ուքան Քարիմադին: Անհի եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու՝ քաղաքի երեցանին բաժ հարկից ազատող արձանագրության մեջ Անհի հարկահանները գրում են. «... մեք՝ տաղմաճիքս... վասն պատրոճաց մերոց Սահիպ Դիվանին եւ Քարիմադինին եւ Սահմադինին, բարձաք ի յԱնո իրիցանու գրաժն...»²¹: Քարիմադինի ունեցած նման բարձր դիրքով պետք է բացատրել նրա ընտանիքի հետագա բարգավաճումն Անիում:

վերջոյ, յաջողութեամբ չպատկուած այս առաքելութեանն ենք պարտական «684 թ. պատմութեան» մի հատուածում («Պատմութիւն Աղուանից»-ում արտագրուած վիճակով՝ սկզբում) հոգների մի խմբի՝ անելի վաղ ժամանակներում, այն է՝ Մաշտոցի մահուանը յաջորդած տարիներին, քրիստոնեութեանը յարելու առասպելախառն պատմութեան առկայութեամբ¹⁸:

Սակայն հետագայում հոգների այդ «Ռոմոսոքեան թագաւորի» եւ «Թորբելեան գնդի» մասին պատմութեան մէջ 441 թուականի մի արշաւանքի հետ կապուած պատմական հաւաստի իրողութիւններն առանձնացնելու շատ ուշագրաւ փորձ է կատարել դադատանցի աղբիւրագէտ Իգոր Սեմեօնովը¹⁹: Նա ցոյց է տալիս, որ հայկական աղբիւրի պատմութեան հաւաստիութիւնն ընդունելու դէպքում հոգական խնդրոյ առարկայ ասպատակութիւնը պէտք է վերագրել ոչ թէ 440 թ. Փետրուարի 7-ին վախճանուած Մաշտոցի մահուան տարուան, այլ դրա յաջորդին, քանի որ վարդապետի աշակերտները չէին հասցնի Երուսաղէմից Արցախ վերադառնալ մինչեւ Ս. Զատիկը, որը 440-ին Ապրիլի 7-ին էր (ուղեորութիւնը Ս. Երկիր այն ժամանակներում տեւում էր երկու ամսից ոչ պակաս): Հետեւաբար աշակերտների խմբի վերադարձը պէտք է վերագրել 441 թ. Ս. Զատիկի՝ Մարտի 21-ի նախօրեակին: Իսկ դա համընկնում է հոգների տէրութեան նշանաւոր տիրակալ Աթիլայի զօրավարներ Բասիխի եւ Կուրսիխի այսրկովկասեան արշաւանքի ժամանակին, որի մասին յայտնում է Ե դարի հոմեալեացի յունագիր ականջաւոր պատմիչ Պրիսկոս Պանիացին (պատառիկ 8)²⁰: Ըստ նրա պատմութեան՝ հոգների այդ զօրքը ներխուժել էր Դարիալի լեռնանցքով, աւարառութեան մատնել պարսկական շրջակայ երկրամասերը, ապա հեռացել ւորիջ՝ ծովափնեայ ճանապարհով, այսինքն Չող-Դերբենդով²¹:

Ի. Սեմեօնովը ցոյց է տալիս, որ, ամենայն հաւանականութեամբ, նոյն ար-

¹⁸ **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 199-200. Նշենք, որ Դախուրանցու Ա գրքի՝ վերջին չորս գլուխներում բաժանուած այդ հատուածի գլխագրերից առաջինը («Յաղագս սրբոյն Մերովպայ եւ ընկերաց նորա պատմութիւն վիպասանաբար») եւ երկրորդը («Շարագրած յաղագս աշակերտացն Մաշտոցի ընդ ներգոյս զրոյցատրաբար»), զոնէ մասամբ, է դարի բնագրին յանգելու տպաւորութիւն են թողնում: Բ. իթ գլխի մի տեղեկութիւնից (նախ. 11) երեւում է, որ այդ հատուածը պարզապէս Իսրայէլ – Աբաս քահանայի տեսիլն է («... զարմացեալ ընդ զրոյցատրութիւն եպիսկոպոսին, որ պատմէր զտեսիլ Աբասուն»):

¹⁹ **И. Г. Семенов**, Генеалогия Карглийских царей: от Мириана III до Вахтанга Горгасала, Махачкала, 2007, с. 41-49.

²⁰ Անդ, էջ 41-42: Հմմ. **Priscus Panites**, Historia Byzantina (Fragmenta). In: **C. Müller**, Fragmenta Historicorum Graecorum, Paris, 1868, vol. IV, Frag. 8, p. 62-64:

²¹ Նշենք, որ, ցաւօք, ծանօթ չլինելով Ի. Սեմեօնովի աշխատանքին, Ռուբէն Մանասերեանը իր անկախ ամենից խիստ օգտակար մենագրութեան մէջ (**Р. Л. Манасерян**, Европейские гунны и Ближний Восток, Ереван, 2011) Բասիխի եւ Կուրսիխի այսրկովկասեան արշաւանքի ժամանակը անհաւանական ձեւով հասցնում է մինչեւ Դ դարի վերջերը (տե՛ս յատկապէս էջ 26-34):

շաւանքին է վերաբերում նաեւ պատմիչ Եղիշէի Աշունը հոգների Հեռան գօրավարի աւարառութեան մասին²². «... զի բարեկամացեալ էր նա ընդ Հեռանայ Հոնի միաբանութեամբ Բաղասական արքային, ի ժամանակին՝ զի կոտորեաց Հեռանն այն զգաւրսն Պարսից յԱղուանս եւ ասպատակաւ եհաս յերկիրն Յունաց եւ բազում գերի եւ աւար խաղացոյց ի Հոռոմոց եւ ի Հայոց եւ ի Վրաց եւ յԱղուանից. որպէս զի ի վերայ իսկ եհաս խորհրդոցն ինքն իսկ թագաւորն եւ սպան զԲաղասական արքայ: Եւ Վասակ մարզպան էր Հայոց ի ժամանակին եւ թշնամեացն արքունի խորհրդակից գտաւ»²³: Ուսումնասիրողը որոշ հնարատրութիւն է տեսնում նաեւ՝ Հեռան անունը համադրելու Աթիլայի կրտսեր որդի Էռնակի անունն հետ²⁴: Ընդ սմին, Ռերբեմի անցքով հոգների հեռանալուց եւ, ըստ Մարցելիոս Կոմեն ժամանակագրի՝ նոյն 441-ին կնքուած պարսկա-հռոմէական մէկամեայ զինադադարից յետոյ էր (դրա յաջորդ տարում կնքուեց նաեւ հերթական հաշտութեան պայմանագիրը)²⁵, որ Յազկերտ Բ արքայից արքան ձեռնամուխ եղաւ Թեոդոս Բ կայսրից պահանջած ու կրկին ստացած գումարով Չողի կաւաղիւսէ պարիսպների շինարարութեանը²⁶:

Հարկ է նկատել, որ Ի. Սեմեոնովի վերոբերեալ ուշագրաւ պարզաբանումներից յետոյ էապէս աւելի է մեծանում նաեւ Մաշտոցի աշակերտների քարոզչական գործունէութեան մասին եզակի պատմութիւններից մէկի հաւաստիութեան աստիճանը: Իր հերթին՝ դա աւելացնում է դէպի Հիւսիսային Կովկաս Մաշտոցի սաների աշակերտների առաքելական գործունէութեան մասին Լ. Տէր-Պետրոսեանի կոահման իրաւացիութիւնը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Իր «Մաշտոցյան ավանդները եւ Հայոց առաքելութիւնը Հոնաց աշխարհում» յօդուածում (ՊԲՀ, 1981, հ^տ 1) Լեւոն Տէր-Պետրոսեանը նորովի մեկնաբանեց Կեղծ Զաքարիա Հոնտորի ասորական «Ժամանակագրութեան» այն դրուագը, որը պատմում է VI դարում Առանի հայ եպիսկոպոս Կարդոստի աշակերտների առաքելական գործունէութեան մասին Հոնաց երկրում (Հիւսիսային Կովկաս): Նա ցոյց տուեց, որ այդ առաքելութիւնը իրականացրել են Հայոց մեծ վարդապետ Մաշտոցի անմիջական աշակերտների սաները, իսկ Կեղծ Զաքարիայի երկրում հանդէս եկող առասպելական անձնատրութիւնը հէնց նոյն Մաշտոցն է, որի անունն աղաւաղուելով վերածուել է Կարդոստի (QARDOST = MAZDOST):

²² **И. Г. Семенов**, Генеалогия Картийских царей, с. 46-47.

²³ **Եղիշէի** Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ՝ **Ե. Տէր-Մինասեան**, Երեւան, 1957, Յեղանակ 2, էջ 134:

²⁴ **И. Г. Семенов**, Генеалогия Картийских царей, с. 46.

²⁵ **Marcellini V. C. Comitis Chronicon / Monumenta Germaniae Historica. Auctores Antiquissimorum**, t. XI, vol. II, Berlin, 1961, II, 80.

²⁶ **И. Г. Семенов**, Генеалогия Картийских царей, с. 48-49.

Հոների մի զօրագնդի մէջ Մաշտոցի աշակերտների քարոզչական գործունէութեան մասին եզակի տեղեկութիւններ է հաղորդում «684 թուականի պատմութիւն» անունով երկը (արտագրուած՝ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ում), որոնց հաւաստիութեան մասին 2007 թուականին ուշագրաւ պարզաբանումներ է կատարել Իգոր Սեմեօնովը: Նա համադրում է այդ դէպքը հոների Բասիխ եւ Կուրսիխ զօրավարների 441 թ. այսրկովկասեան արշաւանքի հետ, որի մասին գիտէր հոռմէացի պատմիչ Պրիսկոս Պանիացին: Այդ պարզաբանումներն էապէս հաստատում են դէպի Հիւսիսային Կովկաս Մաշտոցի աշակերտների առաքելական գործունէութեան մասին Լ. Տէր-Պետրոսեանի կոսմոսան իրաւացիութիւնը:

ALEKSAN HAKOBYAN

IOS NAS RA

THE ARMENIAN CHRISTIAN MISSIONS TO THE NORTH CAUCASUS IN THE FIFTH CENTURY (MASHTOTS AND PUPILS)

Keywords: Mashtots, Qardost, Movses Daskhurantsi, History of 684, Levon Ter-Petrossian, Igor Semyonov, Bishop Israel of Mets Kogh-mank, the Land of the Huns, Zacharias of Mytilene.

In his article, *The Traditions of Mashtots and the Armenian Mission to the Land of the Huns* (HPJ, 1981, № 1), Levon Ter-Petrossian reinterpreted the episode of the Syriac *Chronicle* by Pseudo-Zacharias Rhetor which tells about the mission of the disciples of the Armenian Bishop Qardost of Aran to the land of the Huns (North Caucasus) in the sixth century. He demonstrated that this mission was carried out by the disciples of the proximate students of the great Armenian *vardapet* Mashtots and that the mythical person in Pseudo-Zacharias' writing was the same Mashtots whose name was confused and turned into Qardost (QARDOST = MAZDOST).

In a work titled *History of 684* (copied in Movses Daskhurantsi's *History of the Aghvank*), one can find unique information about the preaching activity of Mashtots' pupils in one of the Huns' detachments. In 2007, Igor Semyonov made remarkable clarifications concerning their reliability. He combined this event with the invasion of Transcaucasia by the Huns in 441 led by the commanders Basikh and Kursikh about which knew the Roman historian Priscus Panites. These clarifications essentially confirm the rightness of Ter-Petrossian's presumption about the mission of Mashtots' pupils to the North Caucasus.

ԷՌՆԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆՅԱՆ

Մեարոյ Մաշտոցի անվան Մասնաճյուղ

«ԶՎԱՐԹՆՈՑ» ԱՆՎԱՆՄԱՆ ՇՈՒՐՉ՝

Բանալի բառեր՝ Զվարթնոց, Գրիգոր Լուսավորիչ, «զուարթուն», արթուն, «հրեշտակակրօն», աստուածաբանակ, Է՛ դար, հայկական ճարտարապետություն, Կոմիտաս Աղցեցի, Ներսես Գ Շիրազար, կաթողիկոս, Երկնային Երուսաղեմ, Սիոն:

1. «Զվարթնոց» անվանումը

«Հրեշտակային» Զվարթնոց տաճարի ավերակները, թեև բավականաչափ ուսումնասիրվել են (որքան որ դա հնարավոր էր անել նման խաթարված վիճակում), սակայն դեռևս առաջադրում են մի շարք խնդիրներ, որոնք բացատրության կարիք ունեն: Այդ հարցերը հիմնականում առնչվում են այն խորհրդաբանությանը, որն առկա է Զվարթնոցի թե՛ գաղափարի, թե՛ անվանման եւ թե՛ կառուցման, այսինքն՝ յուրահատուկ շինության մեջ: Դրանք խիստ շաղկապված են, քանզի հայտնի է, որ միջնադարում՝ հատկապես վաղ շրջանում, ինչպես մշակույթի մյուս ոլորտները, այնպես էլ հայկական միջնադարյան ճարտարապետությունը, սերտորեն կապված էր ժամանակի խորհրդաբանական եւ կրոնափիլիսոփայական մտայնության հետ:

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում են Զվարթնոց անվանմանն առնչվող հարցերը, մասնավորապես, թե ինչո՞ւ հրաշակերտ այդ տաճարը պահպանվել է հենց այդ անունով եւ ոչ թե Գրիգոր Լուսավորչի, որովհետեւ հայտնի է, որ տաճարը նվիրված էր նաեւ վերջինիս: Խորհրդաբանական մեկնության եւ պարզաբանման կարիք ունի նաեւ Սեբեոսի (կամ Սեբիոսի) կողմից վկայված «երկնաւոր զուարթնոցն» արտահայտությունը, որի շնորհիվ էլ, թերեւս, այս տաճարն ստացել է «Զվարթնոց» անվանումը.

Յայնմ ժամանակի արկ ի միտս իր կաթողիկոսն Հայոց Ներսէս շինել իր

¹ Ներկայացվող հոդվածը տարիներ առաջ ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ու Արեւելագիտության ինստիտուտների կազմակերպած՝ Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում (հոկտեմբեր 13-16, 2012 թ., Երեւան-Ծաղկաձոր) կարդացած զեկուցմանս վերամշակված տարբերակն է: Այն պատշաճ համարեցի ներկայացնել Հայաստանի Հանրապետության առաջին նախագահին եւ, ինձ թույլ կտամ ասել՝ իմ լավ ընկերոջը ձոնված Տոնագրում, քանզի այստեղ արժարժված են աստրագիտության ոլորտին վերաբերող մի շարք գաղափարներ եւ եզրեր, որոնց հմուտ եւ առայսօր մեզանում չգերազանցված մասնագետն է Լեւոն Տեր-Պետրոսյանը:

բնակություն մերձ առ սուրբ եկեղեցեացն, որ ի Վաղարշապատ քաղաքին՝ ի վերայ ճանապարհին, յորում, ասեն, ընդ յառաջ եղև թագաւորն Տրդատ արբոյն Գրիգորի: Օրհնեաց անդ եւ եկեղեցի մի յանուն երկնատր գուարթնոցն, որոց երեւեալ ի տեսեան արբոյն Գրիգորի բազմութիւն երկնատր զաւրացն: Եւ շինեաց եկեղեցին բարձր շինուածովք եւ չքնաղ զարմանալեալք, արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն: Ած ջուր եւ երբեր զգետոյն եւ արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տնկեաց այգիս եւ ծառատունկս, եւ շուրջանակի պատուարեաց զբնակութեամբն գեղեցկադիր յարիճուածով բարձր պարսպաւ ի փասու Աստուծոյ: ²

Սեբեոսի այս տեղեկությունից պարզ է, որ այս արտասովոր տաճարի կառուցման տեղի ընտրությունը պայմանավորված է Գրիգոր Լուսավորչի *Տեսիլք*-ում նկարագրված հրեշտակների զորքի հայտնվելու վայրով: Հետագա հեղինակները՝ անդրադառնալով տաճարի շինությանը, նշում են միայն, որ այն նվիրված էր Գրիգոր Լուսավորչին, օրհնակ՝ Մովսէս Դասխուրանցու վկայությունը տաճարի կառուցման վերաբերյալ.

Եւ ի նորին ժԹ ամին նստի կաթողիկոս Հայոց տէր Ներսէս ամս Ի. եւ հայ թուականն ԸԺ եւ մին էր: Սա էր հայրագիր նորին Կոստանդնի եւ զանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարսխն բանատր հաւտից ի Քաղաքիդաշտի՝ զսուրբն Գրիգոր, եւ ի նաւակատիս կոչեաց զթագաւորն Հոռոմոց, որ յաւելծ հիացեալ ընդ շինուածն՝ ետ հրաման շինողացն գնալ զկնի իւր, զի զնոյնաձեւն յարմարեցէ ի պաղատանն: Եւ ոչ ժամանեալ գաղատուն՝ ի ճանապարհին վախճանիր: ³

Բացի հիշված երկու հեղինակներից, Զվարթնոցի մասին տեղեկություններ են հայտնում նաև Դեոնդը, Հովհաննէս Դրասխանակերտցին, Ասողիկը, Թովմա Արծրունին, Սամուել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին, Վարդան Բարձրբերդցին: Հետաքրքրական է, որ այս պատմիչներից եւ ոչ մեկը չի հիշատակում տաճարը որպէս Զվարթնոց, այլ՝ Առապարի Սուրբ Գրիգոր կամ Վաղարշապատի Սուրբ Գրիգոր անուններով: Բոլոր այս վկայությունները մեջբերված եւ լավագույնս քննարկված են ե՛ւ Դևոնդ Ալիշանի ⁴, ե՛ւ Թորոս Թորամանյանի ⁵ ուսումնասիրություններում: Ի դեպ, Ալիշանը

² Պատմություն Սեբեոսի, աշխ. Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 147:

³ Մովսէս Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը եւ ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 317:

⁴ **Ղ. Ալիշան**, Այրաբատ, Վենետիկ-Սբ. Ղազար, Առապարի Ս. Գրիգոր, 1890, էջ 244-246, 120.

⁵ **Թ. Թորամանյան**, Զվարթնոց, Գազկաշեն, Երևան, 1984, էջ 25-28:

եզակի հեղինակներից է, որ անդրադառնում է տաճարի անվան անորոշ լինելու հարցին:⁶ Փաստորեն, «Զվարթանց» անվանումը հանդիպում է բացառապես Սեբեոսի երկում (ընդ որում, սխալ է կարծել, թե Սեբեոսն է անվանել տաճարն այդպես) եւ գարմանալիորեն, ինչպես ասացինք, տաճարի համար հենց այդ անվանումն է ամրագրվել եւ ավելի հայտնի դարձել, քան Գրիգոր Լուսավորչի անունը:

Զվարթանց անվանման եւ տաճարի Գրիգոր Լուսավորչին նվիրված լինելու պարագան եւս պայմանավորված է որոշ խորհրդաբանությամբ եւ միահյուսված է, քանի որ Գրիգոր անունը հունարեն *ἐγρηγόροσ*-ի (*γρηγορεῖν*) տառադարձումն է, որը նշանակում է «զգոն», «զգաստ», «աչալուրջ», եւ որի հայերեն համարժեքն ու թարգմանությունը կարող են լինել նաեւ «զուարթուն», «զարթուն», «զգաստ» բառերը: Ե՛վ ասորերենում, ե՛ւ հունարենում, ե՛ւ հայերենում դրանք ունեն նաեւ «հրեշտակ» իմաստը: Պարզ է, որ «զուարթուն»-ը (մասնավորապես, երբ այն օգտագործված է «երկնից» բառի հետ), հիմնականում փոխանցում է «հրեշտակ» իմաստը: Սակայն, այն հաճախ վերաբերում է նաեւ որոշակի բնութագիր ունեցող մարդկանց՝ նրանց, ովքեր խորասուզված են աղոթքների մեջ (քանի որ արթնությունն անմիջականորեն կապված է աղոթքի հետ) եւ «արթուն», «զգաստ», «ժիր» ու «կայտառ» են մնում այդ ընթացքում:⁷ Ի դեպ, նույնը կիրառելի է նաեւ *ἐγρηγόροσ*-ի վերաբերյալ: Հունարեն բնագրերում բազմաթիվ են մնան օրինակները, սակայն այստեղ կխուսափենք մեջբերել դրանք՝ շարադրանքը չծանրաբեռնելու համար:⁹

Բերված վկայություններից կարելի է եզրակացնել, որ «զուարթանց» բառն արդեն իսկ փոխանցում է տաճարի՝ Գրիգոր Լուսավորչին նվիրված լինելու գաղափարը եւ հանգամանքը, բայց միեւնույն ժամանակ այն նշված է հոգնակի թվով, ինչը թույլ է տալիս այս բառը հասկանալու եւ թարգմանելու որպես «արթուն հրեշտակների» տաճար: Արդ, մեր հարցերը հետեւյալն են. ա) ինչո՞ւ են այս տաճարին տարբեր անվանումներ տրվել, բ) ինչպե՞ս է ստացվել, որ առավել նախընտրելի է դարձել Զվարթանց անվանումը, գ) արդյոք «զուարթանց» բառը կարելի՞ է կապել միայն Գրիգոր Լուսավորչի *Տեսիլք*-ի հրեշտակների գործի հետ եւ դ) արդյոք այս տաճարը միայն նրա՞նց էր ձևավորված, եթե գիտենք,

⁶ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 245, 120:

⁷ ՆՀԲ, հ. Ա, էջ 744, մասնավորապես այն օրինակը, երբ մի նախադասության մեջ երկու իմաստն էլ արտացոլված են:

⁸ A Patristic Greek Lexicon, ed. G. W. H. Lampe, Oxford, 1968, s. v. *ἐγρηγόροσ*; հմմտ. նաեւ ասորերեն 'ira-ն:

⁹ Տե՛ս օրինակ՝ **Clemens Alexandrinus**, Paedagogus; Eusebius, Commentaria in Psalmos; Macarius, Homiliae; Origenes, Fragmenta in Lamentationes; Hippolytus, Commentarium in Danielelem եւ այլն:

որ այն նվիրված էր Գրիգոր Լուսավորչին, որի անունը եւս հրեշտակ է խորհրդանշում, ե) արդյոք չի կարելի մտածել, որ «Զվարթնոց»-ը մի տեսակ երկակի իմաստ ունի. այսինքն՝ որ անվանումը վերաբերում է ե՛ւ երկնային, ե՛ւ երկրային «գուարթուն»-ներին, գ) ո՞ւմ են պատկերում զարդագոտու 32 բարձրաքանդակները է) ինչո՞վ է պայմանավորված 32 թիվը: Եվ վերջին երկու հարցերն են. եթե ընդունենք առաջարկվող մոտեցումը, ապա ովքե՞ր էին այդ «գուարթունք»-ները եւ արդյոք Ներսես կաթողիկոսը (641– 661) ունեցե՞լ է «Զվարթնոց» անվանելու նախագաղափարը:

2. «Զուարթունք», «արթունք», «մանկունք»

Մինչ այս հարցերին պատասխանելը, բերենք մի քանի օրինակ, հասկանալու համար «գուարթունք» բառով բնութագրվող անձանց առանձնահատկությունները եւ, թերեւս, անգամ այն գաղափարաբանությունը, որը ներառված է այս բառի իմաստի մեջ: Արթուն եւ զվարթ լինելը ոչ միայն սոսկ ֆիզիկական վիճակի նկարագրություն է, այլեւ հոգեւոր կյանքի վարդապետություն, որը մեծապես կիրառվում էր ժուժկալ մարդկանց, մասնավորապես, վանականների կողմից, ինչը, ի դեպ, իր տեղն է գտել Նոր Կտակարանում: Նախ եւ առաջ, այն կապված է Հիսուս Քրիստոսի գալստյան հետ եւ բազմիցս ներկայացված է Աստվածաշնչում. «Զոր ձեզդ ասեմ՝ ամենեցուն ասեմ՝ արթուն կացեք, եւ դարձեալ արթուն կացեք, զի ոչ գիտեք՝ երբ ժամանակն իցէ» (Մարկ. ԺԳ 35), «Արթուն կացեք եւ յամենայն ժամ աղաթս արարեք, զի, յորում ժամու ոչ ակն ունիք, գայ Որդի մարդոյ» (Մատթ. ԻԴ, 42, ԻԶ 41) կամ՝ «... եւ լերուք գուարթունք յաղօթս» (Ա Պետ. Դ 7), կամ այս եւ նախորդ մեջբերումների միախառնումը հետեւյալ հատվածում. «Արթուն կացեք եւ յաղօթս կացեք, զի մի՛ մտչիք ի փորձութիւն. ոգին յօժար է, բայց մարմինս տկար» (Մարկ. ԺԴ 38, հմմտ. նաեւ Դով. ԻԲ 40՝ «Յաղօթս կացեք չմտանել ի փորձութիւն») եւ «Ապա մի՛ զքնով անկանիցիմք որպէս եւ այլքն, այլ արթունք եւ գուարթունք եղիցուք» (Ա Թեա. Ե 6) եւ այլն: Օրինակներ կարելի է բերել նաեւ Աստվածաշնչի մեկնություններից կամ նախակրթություններից: Այսպես «Գիրք պատճառաց»-ում կարդում ենք.

Այր մի էր յերկիր Յաւձ եւ անուն նորա Յոբ եւ, ընդէր ասէ գիր, երկիր յերկրէ էր այրն, որ նմանող էր վարուքն գուարթնոց որդոցն բարձանց:¹⁰

Նույն աղբյուրում՝ «Նախադրութիւն թղթոյն Յուդայի» նախակրթութեան մեջ ասվում է.

¹⁰ ՄՄ 1879, 68բ-69ա:

Պատուիրէ եւ ի տկարութիւնս՝ արիութիւն եւ յանձանց փրկութիւնս՝ զուարթութիւն:¹¹

«Արթուն եւ զուարթուն կալ»-ի գաղափարաբանությունը հայկական իրականության մեջ պարզ տեսանելի է Ռ. դարի հեղինակ Հակոբ Մծբնացուն վերագրվող 23 ճառերից բաղկացած «Գիրք, որ կոչի Զգօն» գրվածքում, որը Ե դարում թարգմանվել է հայերեն, իսկ հետագայում՝ հայերենից վրացերեն¹²: Այս գիրքը միջազգային գիտության մեջ վերագրվում է Ափրահատին, իսկ երկն ընդունված է անվանել «Ճառեր» կամ «Երկխոսություններ»: Հայերեն թարգմանության ամբողջական վերնագիրն է. «Գիրք, որ կոչի Զգօն» արարեալ Սրբոյն Յակոբայ երիցս երանեալ Հայրապետին Մըծբին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակս մանկանց նորոյս Սիովնի»: Գրվածքի վերնագրի եւ հեղինակի անվան վերաբերյալ այս շփոթը շատ հետաքրքրական է թվում եւ ցայսօր սպառնիչ ուսումնասիրված եւ բացատրված չէ: Հայերեն վերնագրում առկա «զգօն» բառը եւս մեկնաբանման կարիք ունի: Ի միջի այլոց, այն երկակի կարելի է հասկանալ՝ ե՛ւ որպէս «իմաստուն», ե՛ւ որպէս «զգաստ», «արթուն», «զվարթ»:¹³ Նկատենք նաեւ, որ հայ հեղինակները հենց այս վերջին իմաստն են առավել որդեգրել՝ երկը վերագրելով Հակոբ Մծբնացուն: Բացի այդ, խնդրո առարկա վերնագիրը չափազանց կարեւոր է, քանի որ այդտեղ ներկայացված են մեզ հետաքրքրող եզրերը եւ գաղափարները միասին, դրանք են «զգօն» ու «մանկունք նորոյս Սիովնի»: Վերջին արտահայտությունը փաստորեն պետք է ընկալել որպէս «մանկանց եկեղեցւոյ» տարբերակ, քանի որ պարզ է, որ Սիովնը՝ մասնավորապէս «նոր Սիովնը», խորհրդանշում է Եկեղեցին: Հատկապէս ուշագրավ է գրվածքի Զ գլուխը, որն սկսվում է հենց «արթնանալու» հորդորով.

Յիրաւի է բանս այս, զոր ասեմ եւ ամենայն ընդունելութեան արժանի է **զարթնուլ ի քնոյ** յայսմ ժամանակի եւ առնուլ զսիրտս մեր ի վերս բազկաց մերոց առ Աստուած յերկինս, **զուցե յանկարծակի գայցէ տանուտէրն**, զի յորժամ եկեսցէ, զոցէ զմեզ **ի զարթնութեան**: Պահեսցուք զժամանակ փեսային, զի մտցուք ընդ նմա յառագաստն:¹⁴

¹¹ Նույն տեղում, 376բ:

¹² Victoria Jugeli. Homilies of Aphrahat the Persian Sage and their Georgian Translations. Phasis 18, 2015.

¹³ ՆՀԲ, հ. Ա, էջ 729, տե՛ս նաեւ՝ Նար. Մծբ. - «Սբ. Յակոբ ... կոչեցաւ Զգօն, այսինքն է հանդարտ, իբր թէ հեզ, որ է հաստատուն, այս է անփոփոխ»: Ուշագրավ է նաեւ բառարանի հեղինակների հետեւյալ բացատրությունը. «Իսկ Զգօն՝ ըստ որում իմաստուն՝ յոյնք եւ լատինք զտուրքն Յակոբ Մծբնացի կոչեն»:

¹⁴ **Հակոբ Մծբնացի**, Գիրք, որ կոչի Զգօն, ԿՊ, 1824, այսուհետ՝ Ափրահատ-Զգօն, էջ 106: Կա նաեւ Գի Լաֆոնտենի արժեքավոր հրատարակությունը՝ **Guy Lafontaine**, ed. 1977, 1979, 1980. “La version arménienne des œuvres d'Aphraate le syrien.” CSCO 382-83, 405-06,

Այստեղ արթնությունը դիտվում է ոչ միայն որպես գիշերային հսկողություն, այլև ավելի լայն իմաստով՝ հղում անելով քրիստոնյայի ներքին կյանքին, այսինքն՝ հոգեւոր սթափությանը, որը պարտադրում է վերահսկել մտքերը եւ բառերը, զերծ մնալ նախանձից, զայրույթից, շողոքորթությունից եւ այլն:

Հակոբ Մծբնացու «Զգօն» կամ Ափրահատի «Ճառեր» գրվածքի այս գլուխը՝ «Օրինակ ուխտաւորաց» խորագրի ներքո, սահմանում է «ուխտի մանկանց» (bar Q'yâmâ-h) նկարագիրը, հատկանիշները, նրանց ուղղված թե՛ սրբակենցաղ, մաքուր կյանքով ապրելու անհրաժեշտ պատգամները եւ թե՛ անընդունելի, պախարակելի կենցաղավարության դրույթները:¹⁵ Մասնավորապես ուշագրավ են հրեշտակային կյանքով¹⁶ ապրելու վերաբերյալ հետեւյալ հատվածները.

Որ առնու զանձն իր ի մամանութիւն հրեշտակաց, օտարացի նա ի մարդկանցէ աստի:¹⁷

... եւ առ նա յանձն իր զմամանութիւն զուարթանց երկնից. նոքա իսկ զուարթունք հաց եւ ջուր բերէին նմա»:¹⁸

Եւ իբրեւ բանան զուարթունք զդրոմն երկնից առաջի արքային, ապա փող հարկանի եւ արիքն ստիպէ եւ ընկղմի հոգին երկնատր ի մարմինն երկրատր:¹⁹

... այսուհետեւ սիրեա՛ դու զկուսութիւն զմասն երկնատր զխառնումն զուարթանց երկնից:²⁰

Նույն համատեքստում պետք է ընկալել նաեւ այն դրվագները, որոնցում հիշատակվում են երկնավոր եւ երկրավոր, հոգեւոր եւ շնչավոր մարմինները, որոնք հաճախ բաղդատվում են Քրիստոսի, ինչպես նաեւ «հին» ու «նոր» Ադամի հետ.

423-24, Arm. 7, 9-10, 11-12. Louvain: Louvain Secretariat du CorpusSCO, որը ցավոք անհասանելի էր:

¹⁵ Ըստ իս, «մանկունք» բաղադրիչով կազմված արտահայտությունները կապված են ասորական եզրի՝ bar Q'yâmâ-ի հետ, որին առաջին անգամ՝ 1904 թ. ուշադրություն է դարձրել եւ որպես կարեւոր եզր արժեւորել Է. Բուրկիտը: Ավելի մանրամասն տե՛ս՝ Է. Մ. Ծիրինյան, «Մանկունք» եզրն այլալեզու աղբյուրներում, Էջմիածին, Չ, 2005, էջ 67-86 (մասնավորապես՝ էջ 68-70):

¹⁶ Կարելի է անգամ մատնանշել հողվածներ, որոնք նվիրված են ասորագիտության մեջ (հատկապես Զգօն գրքում) լայնորեն քննարկվող այս հարցին (օրինակ՝ **A. Salvesen**, *Imitating the watchers: restoring the Angelic life of Adam in early Syriac thought*, *Parole de l'Orient*, 2020, vol. 46, pp. 315-339; **B. G. Bucur**, *Early Christian Angelomorphic Pneumatology: Aphrahat the Persian Sage*, *Hugoye: Journal of Syriac Studies*, vol. 11, pp. 161-206):

¹⁷ Ափրահատ-Զգօն, էջ 110:

¹⁸ Նույն տեղում, էջ 116՝ Եղիա մարգարեի մասին:

¹⁹ Նույն տեղում, էջ 129:

²⁰ Նույն տեղում, էջ 135:

Եւ այս է՝ որք նորոգին, նոքա զգեանոն գմարմին Ադամայ երկնաւորին եւ լինին հոգեւորք: Իսկ որ ոչն նորոգին, մնան շնչաւորք ի բնութիւն արարածոյն Ադամայ հողեղենի՝ եւ կան ի բունն առաջին, ապա յափշտակին երկնաւորքն յերկինս, եւ թողցանէ գնոսս հոգին՝ զոր զգեանոն: Եւ շնչաւորքն աստէն յերկրի մնան ըստ ծանրութեան մարմնոց իրեանց²¹:

Կամ.

Բաղխեսցուք զդուռն երկնից, զի բացցէ առաջի մեր, եւ մտցուք ընդ մնա²²:
Թաղի մարմինն շնչաւոր եւ յառնէ մարմին հոգեւոր²³:

Բազում են նաեւ այն օրինակները, որտեղ հենց Հիսուսն է անվանվում «արթուն, զուարթուն», եւ կոչ է արվում մնանվել Քրիստոսին, ինչը հրեշտակային կյանքը ընդօրինակելու ուղերձի եւ նրանց ուղղված այլ հորդորների հետ ժուժկալության եւ ճգնափորության ներշնչելու նպատակ էր հետապնդում, որոնցով առաջնորդվում էին ուխտի ուսուրերն ու դասուրերը: Ափրահատը շեշտում է, որ «ուխտի որդիները» հրեշտակների մնան պետք է իրենց աչքերն ու սրտերը դեպի վեր ուղղված պահեն՝ դեպի իրենց երկնային Հայրը:

Վաղ քրիստոնեության գաղափարախոսության համար կարեւոր՝ «հրեշտակ», «զուարթուն», «արթուն», «երկնաւոր» եւ «երկրաւոր» հասկացությունները լավագոյնս ուսումնասիրված են ասորագետների կողմից: Համարվում է, որ սերտորեն կապված են մասնավորապէս «հրեշտակային կյանքի» եւ «արթուն մնալու» գաղափարները, ինչը առնչվում է «հրեշտակ», «արթուն» կամ «զուարթուն» բառերի՝ նույն իմաստը կրող ասորերէն *'ira* բառի հետ: Այսպէս՝ Սեբաստիան Բրոկը, խոսելով «արթուն լինելու» մասին, նշում է, որ «Հրեշտակային կյանքի հայեցակետը նույնչափ տարածված էր ասորական նախնական վանականության մեջ, որքան եւ ավելի ուշ շրջանի վանական շրջանակներում»:²⁴

Քրիստոսին եւ հրեշտակներին մնանվելու, դեպի վեր ձգտելու գաղափարների առումով հայ մատենագրության մեջ հետաքրքրական են նաեւ Եղիշեի *Արարածոց* մեկնության մեջ արձանագրված օրինակները.

Իսկ եթէ ոք գտեղեաց կամ գկայենից հոգւոց կամեսցի գիտել, զհետ եկեսցէ բանից մերոց. մի՛ գետնաքարշ գնացիք եւ մի՛ ծովական ճանապարհորդու-

²¹ Նույն տեղում, էջ 134-135:

²² Նույն տեղում, էջ 108-109:

²³ Նույն տեղում, էջ 128: Հմմտ. նաեւ 133-134 էջերը, որոնք զրեթե ամբողջությամբ նվիրված են «շնչաւոր», «հոգեւոր», «երկրաւոր» եւ «երկնաւոր» հասկացություններին եւ դրանց բաղդատմանը Ադամի եւ Քրիստոսի հետ:

²⁴ Brock S. The Luminous Eye. The Spiritual World Vision of St. Ephrem (Cistercian Studies, 124). Kalamazoo, 1992, p. 140.

թեամբ եւ մի՛ առասպելական բարբաճմամբ, այլ ճշմարիտ վարդապետութեամբ վկայութեամբք սուրբ գրոց, ուր առաքեալն յափշտակեցաւ, ուր պարզելքն պատրաստեալ են, զոր մարմնաւոր զգայութեամբքս թարգմանել ոչ կարենք, զանչաւոյ տեղեացն՝ վերնոց քաղաք ասենք, **վերին Երուսաղէմ** անուանենք նմա, այլ ազատ բանակետոյ: Անդ բիրաւորք հրեշտակաց, բանաւոր իմանալի, եւ ոչ զգալի հոգիք են անդ մարդկան: Այլ զարդարոցն կատարելոց կամիցիս գիտել, թանձրագոյն ասացից. յորմէ միւթոյ առաւ, ի նմին եւ չոգաւ դադարեաց:²⁵

Սկզբնատպին՝ Աստծուն մերձեցալու եւ վերին Երուսաղէմի հաճույքները վայելելու համար մարդն, ըստ Եղիշէի, միաստիկական հափշտակութեամբ, ճգնութեամբ պետք է հասնի բարոյական կատարելութեան:²⁶ Այս մեկնութեան հավանական կառուցվածքը վերականգնած եւ մանրամասնորեն այն ուսումնասիրած Լ. Խաչիկյանը՝ վերլուծելով տեքստում առկա հոգի-մարմին հարաբերակցությունը, այսպէս է ներկայացնում Եղիշէի մեկնաբանումը սոյն խնդրի վերաբերյալ.

Ծգնութեամբ, պահքով, աղոթքներով սպանելով թանձր ու ապականացու մարմնի պահանջները, հոգին երազի միջոցով եւ հայեցողութեամբ կարողանում է կապվել սկզբնատպի հետ, զգալ իրեն ոչ «ի մարմնի, այլ յերկինս», որովհետեւ մարդու միտքը, որ հոգու մասն է կազմում, ի վիճակի է տեսնելու անտեսանելին եւ լսելու անլսելին:²⁷

Ի դեպ, կարելոր է ճշել, որ Եղիշէի այս նկարագրություններում, հատկապէս, երբ նա բնութագրում է Աստծուն կամ հրեշտակների, ²⁸ պարզորոշ երեւում է, որ նա ծանոթ է Արիստոտելի *Ստորոգությունների*²⁹ եւ այն այստեղ օգտագործել է որպէս աղբյուր:

²⁵ Եղիշէի Արարածոց մեկնությունը, աշխ. Լ. Խաչիկյան, խմբ. Լ. Տեր-Պետրոսյան, Երեւան 1992, էջ 267:

²⁶ Նույն տեղում, էջ 174:

²⁷ Նույն տեղում, էջ 175:

²⁸ «Քանզի **զերբն** եւ **զուրն** եւ **զորպէսն** աշխարհի չասաց Մովսէս. այլ թե ի սկզբանէ արար Աստուած, զի մարթ էր մասամբ նման զոյ արարածոցս Արարչին, զի որպէս Աստուած յինքեան է եւ չիք նմա **տեղի**, նոյնպէս եւ աշխարհս յինքեան է: 11 Եւ որպէս Աստուած **աներբ** եւ **անժամանակ** է. եւ աշխարհի արարչութեանն **երբ** ոչ գրեցաւ»: Մատենագիրք Հայոց, Ա հտ., Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, Եղիշէի «Մեկնութիւն արարածոց»-ը, էջ 770, **Լ. Խաչիկյան**, նշվ. աշխ., էջ 232, «Հոգիք հրեշտակաց պարզ բնութիւն, անմարմին, անյաւոյ, **անորակ**, **անքանակ**, անձն կատարեալ, եւ կատարելութիւն անձին ոչ յումեթէ, այլ ինքնակատար էութիւն, կատարեալ գոյացութիւն», **Լ. Խաչիկյան**, նշվ. աշխ., էջ 265:

²⁹ Հմմտ. օրինակ՝ «զերբն», «զուրն», «զորպէսն», «անորակ», «անքանակ» եւ այլն:

Վերն ասվածին շատ համահունչ են նաև ս. Սահակ Պարթևի պատգամները, որոնք մեզ են հասել նրա կանոններում: Մասնավորապես՝ «Սրբոյն Սահակայ Հայրապետին յաղագս քորեպիսկոպոսաց, թէ որպէս պարտ է զկանոնական կարգն հաստատուն պահել ի սուրբ եկեղեցի. գլուխս ԾԵ» կանոնախմբում ասվում է.

ԼԵ. Յիշեցուցանեն եւ ձեզ կրահատրք վանական ամենեցուն վասն զի հրաժարեալ էք ի կենաց երկրատրաց, եւ պարապեալ Աստուծոյ եւ աստուածայնոցն, զի նմանեցէ աւանդ խոստովանութեան, եւ գործքդ եղիցի ձեզ սիրելի, պարկեշտութիւն, արթնութիւն պաշտանասիրութիւն, նմանութիւն բերել յանձինս հրեշտակական վարուց, ատարսիրութիւն եւ եղբայրսիրութիւն:³⁰

«Արթուն» եւ «զուարթուն» եզրերն օգտագործված են նաև վաղ շրջանի մյուս հեղինակների՝ օրինակ Ագաթանգեղոսի³¹ եւ Ղազար Փարպեցու երկերում: Մասնավորապես հետաքրքրական են Փարպեցու օրինակները.

Եւ տրտմութիւն ընդէ՞ր իսկ բնաւ ծնանցի ի սիրտս ուրուք, որք արժանի եղաք ցանկ զծնողս մեր եւ զհոգեւոր վարդապետս ի կենդանութեան մերում ի մարմնի իբրեւ զհրեշտակս տեսանել, եւ ի վախճանի իբրեւ զզուարթունս:³²

Կամ՝

Եւ ժողովեալք այնուհետեւ մատ առ զարսն Պարսից բանակէին, մինչ եղեալ սահմանն ընթացից տուրնջեանն կատարէր: Եւ հասեալք ի ժամ երեկոյին եւ զկանոն պաշտաման ժամու աղաթիցն ըստ սովորութեանն լցեալ՝ զուարճանային չափաւոր ուրախութեամբ կերակրովքն: Եւ կատարեալ զամենայն՝ առնուին հրամանի սուրբ քահանայիցն՝ արթուն խնդրուածովք կատարել զգիշերն յաղաթս:³³

Խնդրո առարկա եզրերի մասն գործածությունն առկա է նաև Սարգիս Ծնորհալու «Մեկնություն եօթանց թղթոց Կաթողիկեայց. Արարեալ երանելոյն Սարգսի շնորհալից Վարդապետի՝ հայոց իմաստասիրի եւ քաջ հոռետորի» երկում, որի նախաբանում կարդում ենք.

³⁰ Կանոնագիրք Հայոց, հ. Ա, աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 386:

³¹ Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, աշխ. Գ. Տեր-Մկրտչեան եւ Ս. Կանաեանց, Տփղիս, 1909, 850, էջ 443, մեջբերված է վերոնշյալ աստվածաշնչային օրինակներից մեկը՝ Սարկ. ԺԳ 38:

³² Ղազար Փարպեցի, Հայոց Պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982, էջ 214:

³³ Նույն տեղում, էջ 162, հմմտ. նաև էջ 190. «գոր արթուն եւ քաջ նահատակն Վարդան»:

Բայց **արթնություն** թուի ինձ աստանօր ոչ մարմնականն պահանջել ի նոցանէ (զաչացն բացութիւն), այլ **ըգհօւոցն եւ զմտացն (զգաստութիւն)**: Վասն զի են բազումք եւ մանաւանդ յեկեղեցոյ մանկանց, որ թէպէտ եւ մարմնով **արթունք են եւ սթափք**, եւ ի հսկման (կան) զօրն ողջոյն, քան զայնոսիկ՝ որ ի **խոր քուն թանձրութեան** խորդան, եւս առաւել դանդաղեն՝ հոգովք աշխարհականօք զբաղեալք:³⁴

Սարգիս Ընորհալու՝ Սեւ Լեռների վանքերի ընկերակից Իգնատիոս Սեւեռնցի՝ «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու» երկի ԻԱ գլխում, մանրամասն մեկնաբանելով «արթո՛ւն կացէք եւ աղաթս արարէ՛ք» արտահայտությունը, ասում է.

Արհաիրս արկանէ. «Եւ արդ, յի՞նչ հային այս ամենայն **արթնութեան** պէտք, զի արժանի լինիցիք գերծանել յայնմ ամենայնէ, որ լինելոցն է»: **Արթնութիւնս** այս կրկին է, որ զարանայ գերծուցանել յանտի վտանգիցն: Նա՛ եւ քուն կրկին է, որ ըմբռնէ զոգիս հեղգացելոցն՝ քուն է այն ոգւոց, յորժամ յիմարեալ ոք աշխարհի ցանգութեամբ՝ ի վերինսն հայել ոչ կարէ եւ ոչ քան զմերձակայս այլ ինչ տեսանել: Քուն է դարձեալ եւ այն, յորժամ ի հոգեւորսն ոք տարտամ իցէ եւ անկեալ դնիցի եւ ոչ բերիցէ զմաղթանս ճգնութեան: Վասն որոյ պէտք են երկուց **արթնութեանց՝** զքուն ցանգութեանց թաթափել յանձանց եւ մարմնով զգաստանալ եւ աղաթից ստէպ կալ, զի արժանի լիցուք գերծանել յայնմ ամենայնէ, որ լինելոցն է:³⁵

Նշված վերջին երկու հեղինակներին ժամանակակից Սարգիս Կունդը «Մեկնութիւն Կաթողիկեայ թղթոց»-ում եւս անդրադառնում է այս հարցերին՝ մեկնաբանելով «զուարթունք յաղաթս» առածը.

Քանզի մերձեցաւ ճշմարտապէս վախճան ամենեցուն յաիտենիս այսորիկ եւ եհաս ժամանակ՝ առնուլ իւրաքանչիւր ումէք ըստ գործոց իւրոց: Այլ է **արթունն** եւ ոչ ի գործս բարիս, եւ աստ ասէ **զուարթունս՝** համակ գալստեան Տեառն սպասել, թէպէտ յաւորս քո ոչ եկեցէ, **սգաստութիւն** քո մնա հատուցման Տեառն, որպէս ասէ առաքեալ. «Ոչ թէ անիրաւ ինչ իցէ Աստուած մոռանալ զգործս ձեր բարիս» (Եբր. Զ 10), այսինքն՝ դադարել ի մեղաց եւ

³⁴ Մեկնութիւն եօթանց թղթոց Կաթողիկեայց. Արարեալ երանելոյն Սարգսի շնորհալից Վարդապետի՝ հայոց իմաստասիրի եւ քաջ հռետորի: Կոստանդինուպօլիս, 1828, էջ 384:

³⁵ Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու: Արարեալ սուրբ Վարդապետին Իգնատիոսի, Կ. Պոլիս, 1824, էջ 162:

զուարթուն լինել յաղաթս՝ խնդրելով զթողութիւն մեղուցելոց եւ զաւրութեամբ գործել զբարիս:³⁶

Կամ՝

Արթուն կացէք եւ հսկեցէք, զի աստիսն ձեր աստանայ (Ե 8ա):

Արթուն եւ **զուարթուն** հսկութեամբ հրամայեաց առաքեալն, իսկ Տէրն, «**Արթուն կացէք** եւ յամենայն ժամ աղաթս արարէք, զի, յորում ժամու ոչ ակն ունիք, զայ Որդի մարդոյ» (Մատթ. ԻԴ, 42, ԻԶ 41): Զգուշացուցանէ Քրիստոս ի գալստեանն երկրորդ, եւ Պետրոս զհաւատացեալսն ի Քրիստոս քաջապիմոյս կազմել՝ պատերազմիլ ընդդէմ աստանայի, զի յանցանել մարտին՝ ի Քրիստոսէ պսակեցցին յիրում գալստեանն, զի մի՛ ինչ ակն հոգեւորական կամ մարմնական ըմբռնմամբ՝ անվճարելի մնալ ի աստանայէ, զի մի՛ տիրիցէ նոցա չար ցանկութեամբ, գործովք կամ բանիւք կորուսցէ զնոսա իբր ննջելով նոցա ի կենցաղս, քաղցր եւ ի վայելուչ կերպարանս ըմբռնեցցին, այլ միայն սիրեցցեն զյոյսն հանդերձեալ յաւիտեանի եւ զանձինս պահեցցեն յաներեւոյթ թշնամույն:³⁷

Թերեւս ամենաուշագրավն այն է, որ Գրիգոր Լուսավորիչը հաճախ բնութագրված է հենց այս եզրերով, օրինակ.

Միահոմեալ մանկունք Սիոնի տաւնն ցընծութեամբ զար քո յիշատակի,
Ով Տէր քահանայապետ սուրբ եւ անբիծ եւ հաճոյ Աստուծոյ,
Գրիգորիոս զըւարթուն հըսկաւղ եւ հրեշտակդ երկրաւոր,
Մըշակ հոգեւոր եւ հովիւ բարի գնեալ արեամբ հաւտին Քրիստոսի...³⁸

Այստեղ Լուսավորիչը ոչ միայն բնութագրված է «զուարթուն» եւ «հսկաւղ» բառերով, այլեւ պարզորոշ անվանված է «երկրաւոր հրեշտակ», այսինքն՝ վերոնշյալ բնութագրումները, ներառյալ «հրեշտակ» բառը, կարող են վերաբերել նաեւ մարդկանց: Մեզ հետաքրքրող եզրերի վերաբերյալ նշանակալի տեղեկություններ է հայտնում նաեւ Գրիգոր Տաթեւացին.

Զայս իմացեալ մանկունք եկեղեցւոյ, ըստ կարի իրեանց զարդարեն զսօն

³⁶ **Սարգիս Կունդ**, Մեկնութիւն կաթողիկեայ թղթոց, աշխ. Հ. Քյոսեյանի, Էջմիածին, 2003, էջ 112-113:

³⁷ Նույն տեղում:

³⁸ Քարոզ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի Մովսիսէ Վարդապետէ ասացեալ, Գանձարան գիրք Ա, Մատենագիրք հայոց, ԺԳ հատոր, Անթիլիաս 2005, էջ 500: Հմմտ. նաեւ «Եւ որ մերն է Լուսաւորիչ զուարթուն անուն հայրն հոգեւոր», ԻԴ. Կանոն Ղեւոնդեանց քահանայից քարոզ Ղեւոնդեանց քահանայից, նույն տեղում, էջ 366:

հանդիսի սորա քան զայլոցն գիշերային հսկմամբ՝ խաչիւք եւ խնկօք, կանթեղօք եւ մոնեղիւնօք՝ պայծառացուցեալ զպատիւ աւուրս: Զի սա հրեշտականման զուարթութեամբ բարձօղ եղեւ խաչին Քրիստոսի. եւ իրով անուշահոտ վարուք՝ ուրախացուցեալ զուարճացոյց զերկինս եւ զերկիր:³⁹

Գրիգոր Տաթեւացի, որն արիստոտելյան ոճով սիրում է ամեն ինչ դասակարգել եւ բաժանել տարբեր պատճառների՝ հաճախ համարակալելով դրանք, հետաքրքրական պարզաբանումներ է անում առ այն, թե ինչն^օ է մեր Լուսավորիչը Գրիգոր անվանվել, ինչը եւ ներկայացնում է տասը պատճառներով.

Տեսցուք զչորրորդ զուլխն թէ, վասն Է՞ր կոչեցաւ անուն մորա Գրիգոր, զի ոչ ոք էր յազգէ սորա որոյ անունն Գրիգոր կոչիր: Ասեմք թէ՛ վասն բազում պատճառի: Նախ ի խնամոցն Աստուծոյ, զի թէ կոչէին զնա յանուն նախնեացն, գտանէին զնա լինիլ յազգէն Անակայ եւ սպանանէին, եւ խաւարածէին ազգիս հալոց: Երկրորդ՝ զի ազգայինք մորա մի գտցեն զնա անուամբ նախնեացն, եւ բռնի տարեալ մեծարեալ դիցեն յիշխանութիւն, եւ դարձուցեն ի կոռս իւրեանց: Երրորդ՝ եղեւ այս հրեշտակաց միջնորդութեամբ, զի դայեակ մորա յորժամ տարաւ զնա ի կեսարի Աստուծոյ, եւ ի մերձեանս ի քաղաքն, նստաւ ի ներքոյ ծառոյ ինչ հանգչիլ, եւ եկեալ հաւ մի նստաւ ի վերայ ծառոյն, զոր ոմանք գուրգուր եւ ոմանք դոռն կոչեն, եւ ձայնեաց գուրգուր: Իսկ իմացաւ դայեակն եթէ՛ հոգին սուրբ է ձեւակերպեալ ի տիպ հաւո՛ր որ ունի զմտանութիւն աղաւնոյ, եւ անուանեաց զմանուկն Գրիգոր, եւ ապա մտեալ ի քաղաքն՝ մկրտել եւ անուանեաց Գրիգոր: Չորրորդ՝ զի գրկեալ զգուեալ եղեւ ի Հոգւոյն Սրբոյ ի յերանուրի արգանդն ոգուհեայ, որ գրկեաց եւ ծնան զմեզ աւագանան յորդէգրութիւն հօրն երկնաւորի, վասն որոյ կոչեցաւ Գրիգոր: Հինգերորդ՝ զի Գրիգորն՝ վեց գիր է, եւ սա զկնի վեցից յիսունից ազատարար թուոց ազատողին բոլորից՝ ազատեաց զմեզ ի դիւամոլ կոսպաշտութեանց եւ ի ծառայութենէ մեղացն, (զի որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղաց): Վեցերորդ՝ զի մեք վեց շարժմամբ խոտորեալ էաք ի չարն, այս է՝ յաջ եւ յահեակ՝ որ է հոգեկան եւ մարմնական մեղք՝ յետ եւ յառաջ՝ յառաջանալով ի չարն, եւ յետ փախչելով ի բարւոյն եւ ի պատուիրանցն Աստուծոյ: Ի վեր եւ ի վայր՝ խորհելով զերկրաւորս եւ հպարտանալով քան զյոքունս: Իսկ սուրբն Գրիգորիոս ուղղեաց զվեց շարժումն մեր ի բարին ասելով. «Նմանօրք ինձ եղերուք՝ որպէս եւ ես Քրիստոսի»: Եօթներորդ՝ զի վեցիքս այս՝ նմանեցաւ

³⁹ **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք Քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, Գրիգորի Եռամեծի բանիբուն վարդապետի քաջ հռետորի՝ ճշմարտասէր իմաստասիրի, ճգնագեաց անձին եւ անյաղք փիլիսոփայի, աշակերտի Յօհաննու Որոտնեցւոյ, Կոստանդնուպօլիս, 1741, էջ 676:

վեց թեւեան սերովբեիցն, թեպէտ զկնի վեց ասոր ստեղծաւ, Աստուծոյ համադասեալ ընդ նոսին զուարթուն անունն, փառաւոր զԵրրորդութիւնն Սուրբ: Ութներորդ՝ **Գրիգորն արթուն** լսի, զի մարմնով ոչ անջեաց գերեքսասան ամ ի մէջ բազմութեան թունաւորաց, վասն զի **հրեշտակք պաշտօնակից** էին մնա, եւ ասէր. «ոչ տաց քուն աչաց, եւ ոչ անջ արտեւանաց իմոց, մինչեւ զսոց զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակօբայ»: Իններորդ՝ զի **արթուն** էր միշտ **հոգւովն առ Աստուած**, զի ոչ անջեաց ամենեւին զքուն մեղաց ասելով. «լոյս տուր Տէր աչաց իմոց, զի մի երբէք անջեցից ի մահ»: Տասներորդ՝ զի **արթուն** էր ի վերակացութիւն եւ ի պաշտպանութիւն բանաւոր հօտին **Քրիստոսի**, յառնել եւ յուսուցանել ի տուէ եւ ի գիշերի, խրատելով յօրէնս Տեառն, եւ յուսաւորելով ի հաւատս ճշմարիտս: Եւ զայս վասն Տեառն բանին որ ասէ: «**Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք երբ Տէր տանն գայցէ**, լերեկօրեայ ի մէջ գիշերի» եւ այլն: Եւ իբրեւ զիմաստուն տանուտէր՝ զիտաց զգալ գողոյն՝ եւ պատրաստ եւ **արթուն** եղէ, եւ ոչ ետ ակն հատանել զտան իւրոյ ասելով. «անձիմք մեր ասրեցան որպէս անձողիք յորոգայթ որսողաց»: Այսքան վասն անուանն:⁴⁰

Ի միջի այլոց, այս հատվածը⁴¹, ինչպէս նաեւ անմիջապէս սրանից հետո քննարկվող Հովհաննէս Երզնկացու *Խրատք*, տեքստաբանական բազում ընդհանրություններ են ցուցաբերում «Զգօն» գրքի հետ, ինչն առանձին ուսումնասիրության խնդիր է: Նշենք միայն, որ այստեղ Գրիգոր Տաթեւացին, բնութագրելով Գրիգոր Լուսավորչին, հիմնականում, արծարծում է «մանուկ» հասկացության գրեթե բոլոր հատկանիշները: Հիշեցնենք, որ «մանկունք» եզրով կարելի է բնութագրել սրբակենցաղ, հատուկ կանոններով եւ, գուցէ, համայնքով ապրող քրիստոնյաներին,⁴² որոնք, ըստ Հովհաննէս Երզնկացու՝ «Նորին Յոհաննէս վարդապետի Երզնկացոյ կրկին կանոնք եւ խրատք տղայահասակ մանկանց աշխարհականաց, որք մարմնաւոր եւ երկրաւոր խորհրդով վարեն զկեանս աշխարհիս, զորս եւ մեք յաստուածային արիւնացն եւ ի սուրբ գրոց

⁴⁰ **Գրիգոր Տաթեւացի**, Ամառան հատոր, էջ 421:

⁴¹ Օրինակ՝ «մինչեւ զսոց զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակօբայ» արտահայտությունը:

⁴² **M. E. Shirinian**, Reflections of the "Sons and Daughters of the Covenant" in Armenian Sources, *Revue des Études Arméniennes*, t. 28, Paris 2001-2002, pp. 261-285, **Մ. Է. Ծիրինյան**, 'Ուխտի մանկունք' եւ 'մանկունք եկեղեցւոյ', Էջմիածին, Ը, 2002, էջ 90-110, **M. E. Shirinian**, A Comparative Analysis of some technical terms in Armenian Sources, *Xristianskij Vostok 4 (X)*, S. Petersburg-Moscow 2006, pp. 268-316, **Մ. Է. Ծիրինյան**, «Մանկունք» եզրն այլալեզու աղբյուրներում, Էջմիածին, Չ, 2005, էջ 67-86, **Մ. Է. Ծիրինյան**, Քրիստոնէական վարդապետության անտիկ եւ հելլենիստական տարրերը (հայկական եւ հունական դասական եւ բյուզանդական աղբյուրների բաղդատությամբ), Երևան, 2005, էջ 301-302:

ուղղենք զայնպիսիսն ի հոգեւորն շնորհաւքն Աստուծոյ՝ խորագիրը կրող խրատի, բաժանվում էին հինգ խմբերի՝ ըստ «արբաւէր մանկանց» տրվող հինգ տեսակ գոտիների:⁴³ Սրանցից պետք է զատորոշել երկու՝ «ուխտի մանկունք» եւ «ուխտի մանկունք եկեղեցւոյ» (կամ «մանկունք եկեղեցւոյ») խմբերը: Առաջին խմբում ընդգրկվում էին ինչպէս աշխարհական, այնպէս էլ հոգեւորական անձինք, որոնք ապրում եւ գործում էին համաձայն «մանկանց» պատգամների: Մինչդեռ երկրորդ արտահայտությունը կիրառվում է բացառապէս հոգեւորականների հատուկ դասի մատմամբ: Տարբերակումն ակնհայտ է նախ եկեղեցական կանոններում, որտեղ այս խմբերը հիշատակվում են առանձին: Այդ են վկայում նաեւ «Ռաբուլայի հրահանգներ»-ը⁴⁴:

Բերենք մեկ օրինակ եւս, որտեղ այս երկու եզրերը հանդես են գալիս միասին եւ գրեթէ հոմանիշներ են. Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 4514 ձեռագրի, 161բ թերթի հիշատակարանում, կարդում ենք.

Ո՛վ **հսկողք արթնութեան եւ մարմնաւոր հրեշտակք**, սուրբ եւ անբիծ քահանայք եւ ուսմիկք, եւ **մանկունք մարմ մերոյ Սիոնի**, որք արբէք յաստուածաբոլս անձրեւէս եւ լիանայք ի հայրական գանձարանէս, յիշեսջիք ի սուրբ եւ ի մաքուր յաղաթս ձեր զհաւատարիմ ծառայն Աստուծոյ՝ զՏուրքիկ զիմաստուն վաճառականն...⁴⁵:

Ակնհայտ է, որ այս բոլոր եզրերը՝ «զուարթունք»-ը, «արթունք»-ը եւ «մանկունք»-ը, շաղկապված են եւ միեւնույն գաղափարաբանության, եթէ չասենք վարդապետության, կրողներն են: Այստեղ պարզորոշ մշակվում է, որ անմարմին հրեշտակներից բացի՝ զոյություն ունեն նաեւ մարմնավոր հրեշտակներ, որոնք մատնանշում են մարդկանց այն տեսակը, որոնք վարում են մաքուր, ժիր, արթուն կյանք: Թվում է (ինչը եւ կփորձենք հետագա շարադրանքի ընթացքում ապացուցել), որ հենց այդ մարդկանց էր ձոնել իր վայելույշ շինությունը Ներսէս Գ Տայեցի կաթողիկոսը, որի համար երկրային «զուարթունք»-ների շարքում թերեւս ամենագլխավորն ու կարեւորն էր Գրիգոր Լուսավորիչը:

⁴³ **Հովհաննէս Երզնկացի**. Մատենագրութիւն. Ճառեր եւ քարոզներ, քն. պատր. ՝ Ա. Երզնկացի-Տէր-Սրապյանը եւ Է. Բաղդասարյանը, հ. Ա, Երեւան, 2013, 406-416:

⁴⁴ **F. C. Burkitt**, Early Eastern Christianity, London, 1904, p. 143-148, A. Vööbus, Syriac and Arabic Documents, I (CSCO 184, subs. 14), Stockholm, 1960, pp. 34-50.

⁴⁵ Մատենադարանի թիվ 4514, 161բ-162ա, ՉՀԲ. (1323), հմմտ. նաեւ Բ յետագայի ստացող՝ Տուրքիկ վաճառական, որն ինքն իրեն բնութագրում որպէս «... զՏուրքիկ զիմաստուն վաճառականն»: Եվ իրոք, կարելի է վստահորեն համաձայնել այս վաճառականի «իմաստուն» լինելու փաստի հետ, քանի որ նա շատ լավ տարբերակում է ե՛ւ «**մարմնաւոր հրեշտակք**» (հմմտ. նաեւ ՆՀԲ՝ մարմնեղէն հրեշտակ), ե՛ւ «**մանկունք եկեղեցւոյ**» (որոնք այստեղ ներկայացված են որպէս «**մանկունք մարմն մերոյ Սիոնի**») գաղափարները: Ի դեպ, հայերեն ձեռագրերում, մասնավորապէս հիշատակարաններում շատ են նման հիշատակումներ, որոնք փաստում են բազում հայ վաճառականների բավական խորը կրթվածության մասին:

3. Վերին Երուսաղեմի գաղափարը հայ ճարտարապետության մեջ

Մեջբերված օրինակներում առկա է Զվարթնոց տաճարի հետ սերտորեն կապված եւս մի թեմա՝ Զվարթնոցը համեմատվում է Երկնային կամ Վերին Երուսաղեմի հետ: Ըստ ճարտարապետության պատմության մասնագետների⁴⁶ սույն գաղափարը մեզանում սկզբնավորվել է Է դարի առաջին կեսին, շնորհիվ հայ մշակույթի կարկառուն մերկայացուցիչներից մեկի՝ Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի (613-628): Նա գործեց ե՛ր որպես աստվածաբան, ե՛ր որպես շարականագիր, ե՛ր որպես եկեղեցիների հայտնի շինարար, վերականգնող ու վերանորոգող, որի պատճառով հայտնի է նաև «Օիմող» պատվանվամբ: Ի թիվս զանազան հանգամանքների եւ անձերի, թերեւս առավելապես նրան եւ Ներսես Տայեցուն (որը նույնպես հայտնի էր «Օիմող» պատվանվամբ բազում եկեղեցիներ կառուցելու եւ վերականգնելու պատճառով, մասնավորապես Տայքում⁴⁷) ենք պարտական, որ Է դարը դարձավ մեզանում ճարտարապետության «ոսկեդար»: Իրավամբ, կարելի է ասել, որ հենց այս երկու կաթողիկոսները, դասական կատարելության հասցնելով հայկական ճարտարապետությունը, առավել խարսխեցին այն աստվածաբանության հետ՝ ներմուծելով նաև որոշակի ազգային տարրեր:

Խոսելով ճարտարապետության զարգացմանը նպաստող հանգամանքների եւ նշված կաթողիկոսների գործունեության մասին՝ հարկ է նշել, որ այս ամենը պայմանավորված էր ուշագրավ մի դարաշրջանի (Զ դարի երկրորդ կեսից Ը դարի առաջին կես) առանձնահատկություններով: Զ դարի վերջը եւ Է դարի սկիզբը շատ հարցերում ճգնաժամային էին եւ, կարելի է ասել անգամ, որ որոշ ոլորտներում զգալի փոփոխություններ մտցրեցին: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Հայաստանում, ի հեճուկս է՛լ ավելի ծանրացող քաղաքական վիճակի (Բյուզանդիայի եւ Պարսկաստանի շարունակվող կոիվները, 591 թ. Հայաստանի նոր բաժանումը Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ, իսկ Է դարի կեսից էլ արաբական արշավանքները, Վրաստանի հետ ծագած բարդ

⁴⁶ **А. Ю. Казарян**, Ротонда Воскресения и иконография раннесредневековых храмов Армении. Восточнохристианский храм. Литургия и искусство. СПб., 1994; **А. Ю. Казарян**, «Новый Иерусалим» в пространственных концепциях и архитектурных формах средневековой Армении // Новые Иерусалимы. Иеротопия и иконография сакральных пространств. М., 2009; **З. А. Акопян**, Символический образ Небесного Иерусалима в рельефных изображениях **Звартноца** // ИХМ. — 2009. — Вып. XI. — С. 101–109; **А. Ю. Казарян**, Архитектура стран Закавказья VII в.: формирование и развитие традиции. В 4-х томах, М., 2012.

⁴⁷ Տայքի ճարտարապետական հուշարձանները, Երեւան, «Հայաստան» հրատարակչություն, 1972:

հարցերը, որի արդյունքում տեղի ունեցավ այս եկեղեցիների պատակտումը⁴⁸ եւ ներքին դավանաբանական խնդիրների՝ (քաղկեդոնիկ հայերի հետ կապված վեճերը՝ համեմված տարբեր տեսակի աղանդավորական շարժումներով՝ անտորականներ, պավլիկյաններ, պարականոն գրականության եւ պատկերամարտության վերաբերող հարցեր եւ այլն) մտավոր, գիտական եւ ընդհանրապես մշակութային գործունեությունը մեծ վերելք ապրեց: Զարմանալի է նաեւ, որ ի տարբերություն Բյուզանդիայում արձանագրված այսպես կոչված «մութ դարերի», որտեղ արգելվեց անգամ փիլիսոփայությունը, Հայաստանում ոչ միայն այն ծաղկեց Հունաբան դպրոցով եւ բազմաթիվ փիլիսոփայական թարգմանություններով, այլեւ սրընթաց վերելք նկատվեց մի շարք այլ ոլորտներում եւս, մասնավորապես՝ ճարտարապետություն, մատենագրություն, աստվածաբանություն, մեկնություն, երաժշտագիտություն (շարականագիտություն), մաթեմատիկա, տոմարագիտություն, աստղագիտություն, աշխարհագրություն, չափագիտություն, բժշկություն, մանկավարժություն եւ այլն:⁴⁹ Ավելին, է դարի կեսերից առաջընթաց նկատվեց նաեւ տնտեսության բնագավառում, ինչը եւս ունի իր բացատրությունները, որոնցից որպես առաջինը եւ կարեւորագույնը, թերեւս, պետք է համարել քաղաքական գործոնը: Պարզ է, որ յոթերորդ դարի մշակույթի բուռն ծաղկումը, հատկապես ճարտարապետության բնագավառում, պետք է պատշաճ տնտեսական հիմք ունենար: Այս հարցը լավագույնս լուսաբանել է Ա. Տեր-Ղեւոնդյանը: Նա գրում է.

591 թվականի դաշնագիրը մի նոր ժամանակաշրջանի սկիզբը դրեց Հայ ժողովրդի պատմության մեջ: ... Պայմանագիրը նշանավորում էր քսանամյա պատերազմի ավարտը եւ երկարատեւ խաղաղության սկիզբը Հայաստանում: Սակայն ամենակարեւորն այն էր, որ դրանից հետո սկսում էր մի հարյուրամյա ժամանակաշրջան, որի ընթացքում Հայաստանը կառավարվում էր միայն հայ տիրակալների կողմից:⁵⁰

Նշելով, որ արաբական խալիֆայության վերելքը ժամանակավորապես օգնեց ազատվել Սասանյան Պարսկաստանի եւ Բյուզանդիայի՝ Հայաստանի

⁴⁸ Իրականում, վրացիների քաղկեդոնամետ դառնալը (ինչը թերեւս շատ հայերի կողմից որպես դավանանքություն ընկալվեց) ավելի սրեց եւ անհանդուրժելի դարձրեց քաղկեդոնական լինելու կամ չլինելու հարցը Հայոց մեջ:

⁴⁹ Նշված դարաշրջանի առանձնահատկությունների մասին ավելի մանրամասն տե՛ս **Մ. Է. Shirinian**, *Intellectual and Scientific Activities in 7th-8th centuries Armenia*, 2021 (տպագրության ընթացքում է):

⁵⁰ **Ա. Տեր-Ղեւոնդյան**, Առեւտուրը եւ տնտեսական բարգավաճումը յոթերորդ դարի Հայաստանում, ԲՄ (30), 2020, էջ 156: Հմմտ. նաեւ՝ **Ա. Ն. Тер-Гевондян**. *Армения и Арабский халифат*, Ереван, 1977, գլխավորապես՝ էջ 26-31:

համար ճնշող հարկերից, հետազոտողը շեշտում է, որ «յոթերորդ դարի երկրորդ կեսին Հայաստանը հարկատու չէր»⁵¹, ինչը, ի թիվս մի քանի այլ պատճառների, եւս նպաստեց Հայաստանի բարգավաճմանն այդ շրջանում: Հետազոտողը շեշտում է, որ Հայաստանի բարգավաճումը է դարի երկրորդ կեսին պայմանավորված էր նաեւ հարեւան հզոր պետությունների թուլացումով. Սասանյան Պարսկաստանը ծայրաստիճան ավերված էր, Բյուզանդիան կորցրել էր իր գավառների մեծ մասը եւ հիմնականում ջախջախվել էր Փոքր Ասիայում, իսկ Արաբական խալիֆայությունը դեռեւս կազմավորման շրջանում էր:⁵² Ի դեպ, արաբների պառակտվածության վերաբերյալ հետաքրքրական տեղեկություններ է հայտնում Սեբեոսը.

Արդ՝ առաքեաց Աստուած խոովութիւն ի մէջ բանակացն որդւոցն Իսմայելի, եւ պատսոեցաւ միաբանութիւն անցա, եւ խառնեցան ընդ միմեանս, եւ բաժանեցան ի չորս մասունս:⁵³

Չպետք է մոռանալ նաեւ մեկ այլ կարեւոր եւ այստեղ քննարկվող զարգացմանը մեծապէս նպաստող հանգամանքի մասին, այն է՝ դեռեւս Ե դարից առկա Վոանշապուրհ արքայի, Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի ջանքերով ստեղծված ու կյանքի կոչված մշակութային, մտավոր եւ հոգեւոր զարգացման ծրագիրը⁵⁴: Այն լայնորեն դրսևորվեց ամբողջ էլ դարի ընթացքում եւ կարծես իր գագաթնակետին հասավ Ը դարի սկզբում՝ Սողոմոն Մաքեճացու, Հովհաննես Օձնեցու, Խոսրով Թարգմանչի, Ստեփանոս Սյունեցու եւ այլոց շնորհիվ: Հարկ է նաեւ շեշտել, որ փաստորեն այս նույն դարերի ընթացքում ստեղծվել կամ վերամշակվել են (եւ գուցե, կարելի է ասել՝ ազգայնացվել են) մեզանում առկա գրեթե բոլոր կարեւոր ժողովածուները, ինչպիսիք են՝ «Գիրք թղթոց»-ը, «Կանոնագիրք»-ը, «Կնիք հավատո»-ն, ծիսական որոշ ժողովածուներ, օրինակ՝ Ծարակնոցը, Ծառընտիրը եւ այլն: Այս տարաբնույթ հավաքածուները, հիմնականում, անհրաժեշտ էին Հայոց եկեղեցու վարդապետական

⁵¹ Ա. Տեր-Ղեւոնդյան, Առեւտուրը եւ տնտեսական բարգավաճումը, էջ 164:

⁵² Նույն տեղում, էջ 165: Հետաքրքրական է նաեւ Արամ Տեր-Ղեւոնդյանի մոտեցումն առ այն, որ Է դարը արժանի է հատուկ անվանակոչման. «Մա մեր մշակույթի պատմության մեջ մի յուրահատուկ ժամանակաշրջան է, որը սակայն հատուկ անուն չունի: Նախորդող շրջանը հաճախ կոչվում է մարգպանական Հայաստան՝ կառավարող մարգպանների անունով»: Նույն տեղում:

⁵³ Պատմություն Սեբեոսի, Երեւան., 1979, էջ 175-176:

⁵⁴ Նման ծրագրի գոյության վերաբերյալ տե՛ս. FN Finck, Die armenische Literatur.- Die orientalische Literaturen, E. Schmidt, A. Erman, Berlin-Leipzig, 1906, S. 285, Ա. Տեր-Ղեւոնդյան, Հայ հին թարգմանական գրականություն, Նիւ Եորք, 1992, էջ 61, Մ. Է. Ծիրինյան, Քրիստոնեական վարդապետության անտիկ եւ հելլենիստական տարրերը, էջ 6, 101-104, 113, 116-117, 121-122, 295-296, 302.

աստվածաբանության հիմքերն ամրապնդելու, երբեմն էլ՝ ճշմարտացիությունն ապացուցելու համար: Նման զարգացումը, թերեւս, պայմանավորված էր վերը արծարծված բարդ իրավիճակով, որում հայտնվել էր Հայաստանը նշված դարաշրջանում: Պարզ է, որ հարաբերությունները հարեւան երկրների հետ, ինչպես նաեւ լարված իրավիճակն ունեին նաեւ դրական կողմեր. դրանք ստեղծեցին գաղափարների փոխանակում, առաջընթաց, աճ եւ զարգացում շատ ոլորտներում: Դժվար ժամանակները հարկադրում են մեծ ճիգեր պահանջող գործողությունների (քանզի ցանկացած ճնշում, առաջացնում է հակաճնշում), որոնք եւ խթանում են զարգացումը:

Վերադառնալով է դարի հայկական ճարտարապետությանը եւ դրա առանձնահատկություններին՝ հարկ է անդրադառնալ յուրատիպ (այսպես կոչված՝ հոփսիսիմետաիսի), խաչաձեւ կենտրոնագմբեթ տաճարներին: Դրանցում ներքին խաչաձեւությունն ստացվում էր կիսաշրջան չորս խորաններով, որոնք տեղադրված էին փոխողակահայաց երկու առանցքներով եւ, բացի եկեղեցաշինությանն ընդ կերտվածքներ ստեղծելու միտումից, հիմնականում, պարունակում էին նաեւ աստվածաբանական խորհուրդներ:⁵⁵ Այդ խորհուրդներից ամենահիմնականն ու կարեւորը վերոնշյալ՝ Վերին Երուսաղեմի գաղափարն էր:

Մեզ հետաքրքրող առումով հատկանշական են Կոմիտաս կաթողիկոսի վերանորոգած Էջմիածնի Մայր տաճարը եւ նրա կառուցած Սուրբ Հոփսիսիմեի եկեղեցին: Երկու այս կառույցները վկայում են Նոր Երուսաղեմի, ինչպես նաեւ երկնային եւ երկրային եկեղեցու միասնության մասին հայկական ճարտարապետության մեջ: Ինչպես նշվեց, այս գաղափարների օգտագործումն ու իրա-

⁵⁵ Ես հակված եմ ենթադրել, որ այդ ժամանակ մեծ տարածում ստացած խաչաձեւ կենտրոնագմբեթ եկեղեցիները եւ չորս խորշերի տեղադրումը չորս անկյուններում, որի արդյունքում ստացվում էր խաչաձեւ հատակագիծ, կարող է կապված լինել առաքելական այթոռների քառիչխանության տեսության հետ (տե՛ս **Մ. Ծիրինյան**, «Տետրարխիա»-ի (քառիչխանության) տեսությունն ըստ մի շարք հայկական աղբյուրների, «Էջմիածին», Գ, 2009, էջ 84-97: Նույնի, Ընդհանրական Եկեղեցու Առաքելական այթոռների վարդապետության ձեւավորումը եւ զարգացումը, Մաշտոցի անվ. Մատենադարանի հիմնադիր տնօրեն Լեւոն Խաչիկյանի 90-ամյա տարելիցին նվիրված գիտական նստաշրջանի (հոկտեմբեր 9-11, Երեւան, 2008) ժողովածու, Երեւան, 2010, էջ 90-99: Eadem, Byzantine Policy Concerning the Government of Christendom by Patriarchal Sees: “Tetrarchy” and Pentarchy, The 23rd International Congress of Byzantine Studies, Belgrad, 22-27, August 2016, p. 8; Eadem, Vita beati Silvestri: status quaestionis, Армянский Гуманитарный Вестник, Москва/Ереван 2020, сс. 100-135 (in English, in print); Eadem, Parallel Aligned Text and Bilingual Concordance of the Armenian and Greek Versions of the Vita Silvestri, Louvain: CSCO 2022, in print) հետ: Մակայն սա առանձին հետազոտության կարիք ունեցող հարց է, որը թերեւս հետագայում կարող է լուսաբանվել ճարտարապետության պատմությամբ զբաղվող որեւէ մասնագետի օգնությամբ:

կանացումը ճարտարապետական ձեւերում արդարացիորեն կապվում են Կոմիտաս կաթողիկոսի անվան հետ:⁵⁶ Սրա մասին է փաստում նաեւ Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» հայտնի շարականը՝ բաղկացած 36 տողից՝ ըստ հայոց այբուբենի:⁵⁷ Եվ իրոք, Հոիփսիմյանց կույսերին ձոնված այս շարականում կարելի է գտնել այստեղ քննարկվող համահունչ թեմաներ, հատկապես հետեւյալ տողերում. «Երկնաւոր նահատակք եւ կուսանք իմաստունք» կամ՝ «Ընտրեալ ի յերկրի եւ դասեալ ընդ հրեշտակքս», «Տարփացեալ գուարթունքն ընդ մարդկան տօնեցին», «Այլ արթունք եւ պատրաստք մընալով երկնաւոր հարսանեացըն, Զի մըտցեն ի յառագաստ անմահ փեսային»:

Է դարի միջավայրի ու մթնոլորտի ծնունդ հանդիսացող ճարտարապետության գլուխգործոց դարձած Զվարթնոցի տաճարը (641–652 թթ.) մասնագետները դասում են վերը քննարկված տիպի կառույցների շարքում, որում ոչ միայն առկա է վերին Երուսաղեմի⁵⁸ կամ Դրախտի գաղափարը, այլեւ ակներեւ է նմանությունը քրիստոնեական աշխարհի կարեւոր սրբավայրերից մեկի՝ Երուսաղեմի Ս. Հարության տաճարի հետ:⁵⁹ Դրա կառուցումը Քրիստոսի խաչելության եւ հարության պատմական տարածքում արդեն իսկ վաղ Բյուզանդական շրջանում մեկնաբանվել է որպէս Երկնային Երուսաղեմի տեսանելի պատկեր⁶⁰, ինչի մասին է վկայում առաջին եկեղեցական պատմիչ եւ Կոստանդինյան Մեծի վարքագիր Եվսեբիոս Կեսարացի⁶¹:

⁵⁶ **А. Ю. Казарян**, «Новый Иерусалим», С. 521.

⁵⁷ Նույն տեղում, էջ 521- 522. Հմմտ, նաեւ՝ **Г. А. Налбандян, А. Ю. Казарян**, О первоначальном посвящении и символике декоративного убранства храма Св. Рипсима // Архитектура и градостроительство южных городов с учетом местных условий. Межвузовский сборник научн. трудов. Ереван, 1991, с. 64–73.

⁵⁸ Հարկ է նշել, որ մեզանում կան այս նույն գաղափարները կրող այլ եկեղեցիներ եւս, հմմտ. օրինակ՝ **Е. Vardanyan**, Le symbolisme dans l'architecture et l'iconographie du žamatun du monastère de Hor'omos (1038) et les écrits théologiques d'Anania Širakac'i. In: **Sciences and Learning in Armenia between Anania Širakac'i and Grigor Magistros**, *Orientalia Christiana Periodica*, Roma, Nr. 1, Vol. 86 (2020), pp. 155, 159, 162, որտեղ հեղինակը նշում է, որ «Հոռոմոսի ժամատան ութանիստ գմբեթն արտահայտում է Քրիստոսի երկրորդ գալստյան եւ Երկնային Երուսաղեմի հաստատման գաղափարը», ինչպէս նաեւ որ «Երկնային Երուսաղեմի եզրի մարմնավորմանն են կոչված նաեւ գմբեթի՝ օրնամենտով հարդարված սալաքարերը, որոնց հիմնական մոտիվը սվաստիկան է»:

⁵⁹ **С. Х. Мнацаканян**, Звартноц. Памятник армянского зодчества VI-VII веков, М., 1971, С. 45, **Л. А. Дурново**, Стенная живопись в Аруче, «Вестник общественных наук». 1952, No1, С. 54, **А. Ю. Казарян**, Ротонда Воскресения, С. 105-107, 62, էջ 530-531, **Չ. Ա. Հակոբյան**, Հայկական վաղ միջնադարյան քանդակը (4-7-րդ դարեր), Երեւան, «ԵՊՀ հրատարակչություն», 2016, էջ 136-137:

⁶⁰ Kuhnelt B. From the Earthly to the Heavenly Jerusalem: Representations of the Holy City in Christian art of the First Millennium. Freiburg, 1987, p. 81-89, **А. М. Лидов**, Образ Небесного Иерусалима в восточнохристианской иконографии. <http://rusarch.ru/lidov1.htm>.

⁶¹ «Փրկագործական տառապանքների տեղում նոր Երուսաղեմ կանգնեցվեց ... եւ գուցե սա հենց այն տաճարն է, որն ըստ մարգարեական ասացվածքի Նոր եւ Երիտասարդ

Ընդհանրապես, քրիստոնեական մատենագրության մեջ Երուսաղեմը եւ Սիոնը սուկ պատմական վայրեր չեն ներկայացնում, այլ գրեթե նույն իմաստները կրող կարեւորագույն գաղափարներ են եւ, կարելի է ասել, միաձուլված են: Իսրայելի⁶² հետ դրանք Աստծո գերագույն սիրուն արժանացած հիմնական հասկացություններն են: Երուսաղեմ քաղաքի ընտրությունը կապված է մի շարք հանգամանքներով, որոնց թվում, թերեւս ամենակարեւորն է, որ այն մշտապես եղել է կրոնական կամ հոգեւոր կենտրոն: Սիոն լեռան դեպքում դա կապված է այն փաստի հետ, որ Երուսաղեմի հենց այդ բլրի վրա է կառուցվել Տաճարը: Թեւ Սիոն անունը Նոր Կտակարանում հազվադեպ է հանդիպում, սակայն քրիստոնեական գրվածքներում, եւ մասնավորապես շարականներում, այն Երուսաղեմի հետ օգտագործվել է որպես կատարյալ տեղի ու կյանքի, երկնայինի, ոսկե քաղաքի, դրախտի (որին նրանք հասնելու են մահից հետո) փոխաբերություն: Այսինքն՝ Վերին Երուսաղեմն ու Սիոնը հիմնականում խորհրդանշում են Աստծո արքայությունը⁶³, եւ դրա լավագույն բացատրությունն արտահայտված է Նոր Կտակարանում. «Քրիստոնեայն չունի քաղաք ի վերայ երկրի, այլ գվերինն Երուսաղեմ: Քանզի վերինն Երուսաղեմ, ասէ, ազատ է, որ է մայր մեր ամենեցուն» (հմմտ. Գաղ. Դ 26):

Հայ պատմափիլիսոփայական եւ պատմաաստվածաբանական մտքի համար Երկնային, Վերին կամ Նոր Երուսաղեմի ու Սիոնի գաղափարը յուրահատուկ նշանակություն ունի եւ ավելի շատ է վկայված մեր աղբյուրներում, ինչը հանգեցնում է բազում պատճառա-հետեւանքային հարցերի, որն առանձին ուսումնասիրման առարկա է: Բացի այդ, Սիոնը (ինչպես եւ Երուսաղեմը) խորհրդանշում է երկնային եկեղեցու գաղափարը եւ հաճախ օգտագործվում է հետեւյալ արտահայտություններում. «մանկունք Սիոնի», «ուստերք եւ դատերք Սիոնի», «համբակս Սիոնի», «որդիք լուսոյ մար Սիոնի» եւ այլն, որոնք փաստորեն հոմանիշ են «մանկունք եկեղեցույ» դարձվածքին: Այս առումով ուշագրավ

Երուսաղեմ է անվանվում, եւ որի փառքի համար, Սուրբ Հոգու ներշնչմամբ, այդքան շատ է խոսվում Սուրբ Գրքում», Eusebius. Vita Constantini. Ed. F. W. Winkelmann. Berlin, 1975, III, 25. Հմմտ. նաեւ՝ **Беневич Григорий Исаакович**, Евсевий Кесарийский. Святые места и апология храма Гроба Господня, fn. 23, <https://bogoslov.ru/article/4507567>. Հետաքրքրական այս աշխատանքը նվիրված է սուրբ վայրերի նկատմամբ Եվսեբիոս Կեսարացու վերաբերմունքին եւ վաղ քրիստոնեական հեղինակների կողմից (օրինակ՝ գնոստիկներ, Կղեմես Աղեքսանդրացի, Որոզինես եւ այլոք) Երուսաղեմին հատկացվող փոխաբերական իմաստներին եւ նշանակությանը:

⁶² Ըստ որում՝ ընդունված է Իսրայելն ընկալել արական սեռով, իսկ Երուսաղեմը/Սիոնը՝ իգականով:

⁶³ Թեւ առկա են այլ փոխաբերական իմաստներ եւս, օրինակ Որոզինեսը «Երուսաղեմ» բառով է փոխանցում հավերժություն, Աստծո հետ մտերմություն, հայրենիք, մայր, եկեղեցի եւ այլ հասկացությունները (Cels, VI, 25; sel Ps, 115, PG. 12. 1577. 46, Cels, VIII, 75; de Or, XV, 3): Հմմտ. նաեւ **J. Bruce**, Malina The New Jerusalem in the Revelation of John: The City as Symbol of Life with God, Liturgical Press in Collegeville, Minn, 2000, pp. 20-21.

արտահայտություններն այնքան շատ են մեր մատենագրության մեջ, որ դժվար է ընտրություն կատարել: Սահմանափակվենք միայն մի քանի՝ մեզ հետաքրքրող օրինակներով: Այսպես՝ Ներսես Լամբրոնացու երկերում առկա Վերին Երուսաղեմն արժարժող հատվածները.

Որպե՞ս եւ ո՞ր աղագաւ մերս եկեղեցի անուանի դուստր **Վերին Սիոնի եւ Երուսաղէմի. Սիոն վերին եւ Երուսաղէմ՝** ուսուցանեն մեզ գիրք սուրբք խորհրդականապէս առաքելոց եւ մարգարէից՝ գծողովս սրբոցն որ առ Աստուծոյ. ըստ այնմ, զոր գրէ առաքեալ. «**Վերինն Երուսաղէմի՝**» առ եկեղեցիս հեթանոսաց ասելով: Քանզի զսա ծնան դասք մարգարէիցն հնոյ օրինացն աշակերտք. եւ նոր օրէնքս եւ վարժեալք սովաւ ՚ի նախ եղելոցն՝ դուստր կոչեցան, զի նովա ծնան: Իսկ այժմ անուանինք դուստր ոչ **ներքին Երուսաղէմի՝** այլ **վերնոյն:** Ըստ Պօղոսի. «Մատուցեալ էք ՚ի Սիոն լեառն եւ ՚ի քաղաք Աստուծոյ կենդանոյ **յԵրուսաղէմ յերկինս:**»⁶⁴

Վերին Երուսաղեմի գաղափարը շատ պարզ բացատրված է նաև «Գիրք պատճառաց»-ում.

Իսկ Տէր մեր ի հովանատր լերանցն նահապետաց եւ մարգարէից ի մեզ երեւեցաւ եւ ի բազմախիտ մարդկային բնութենէս, եւ հանէ զմեզ **փոխանակ այս Երուսաղէմի ի վերինն Երուսաղէմ:**⁶⁵

Կամ.

Այս ամենայն ի Տէր մեր հայի, որ յազատութիւնս, որ ի նմանէ, զի նա գդոխս

⁶⁴ **Ներսես Լամբրոնացի.** Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 123: Հմմտ. նաև էջ 125. «Եւ այն ժողովն նոցա՝ **վերին Սիոն եւ Երուսաղէմ** անուանի՝ այսմ **եկեղեցւոյս մայր,** զի սա ՚ի նոցանէ ծնաւ՝ եւ **դուստր** է նոցա՝ որք հոգեւոր երկամբքն ծանան ըստ Պօղոսի. «Որդեակք իմ, զորս դարձեալ երկնեն». եւ որպէս ծնունդքն միշտ յառաջանալով ծնանին յայլոց, եւ ինքեանք զայս ծնանին, որ յետոյ՝ գնախն ունի **մայր,** այսպէս առաքեալքն ծնան զհետեւողսն իւրեանց եւ գնացին. որք մնացին՝ գնոսա **մայր** կոչէին. եւ յետ նոցա մի ըստ միոջէ ծնանին սուրբք **զմանկունս եկեղեցւոյ՝** եւ մեռանին եւ գնան ՚ի մի ժողովն. եւ սա հանապազ գնոցա ժողովն իւր **մայր** անուանէ. զորոց յիշատակն կատարելով հանապազ, որպէս որդին զի համարձակաբար ընդ **մայրն** խօսի քան ընդ հայրն՝ երկնչելով ՚ի նորա իշխանական սաստէն, այսպէս եւ **մանկունք եկեղեցւոյ** համարձակաբար խօսին ընդ **մայրն** իւրեանց ընդ **վերինն Երուսաղէմ** ՚ի ժողովս սրբոցն, եւ թախանձեն գնոսա բարեխօսել առ Քրիստոս Հայրն եւ Աստուած վասն ինքեանց. իսկ նոքա ընդունին սիրով, եւ **մայրենի** գաթովն մաղթեն առ նա. զորոց պտուղ աղօթիցն բազումք պէսպէս սքանչելեօք ճշակեցին՝ **մայր** անուանել մեզ **զվերինն Սիոն եւ Երուսաղէմ:**»

<https://digilib. aua. am/book/1483/1787/15037>

⁶⁵ ՄՄ 1879, 99բ:

քակեաց, եւ գաստանա[յ] կապեաց, եւ գմահու բոնութիւն ելոյծ, եւ **գկաթողիկէ Եկեղեցի** անուանեաց ծնունդ վերինն **Երուսաղէմի՝** ի փասու մշտնջեմատր՝ ի Քրիստոս Յիսուս, Որ է արհմեալ յաւիտե{*անս}:⁶⁶

Մանավանդ հետաքրքրական է հետեւյալ մեջբերումը.

Զորդիութիւնն, զքահանայութիւնն այլովքն փախան **Երուսաղէմի գվերինն Երուսաղէմ՝** փոխանակ տաճարին՝ գերկինս, փոխանակ ժողովրդեանն՝ զբանակս հրեշտակաց եւ գեկեղեցիսն արդարոց⁶⁷:

Նույն այս բնագրում առկա են նաեւ երկնային Երուսաղէմի եւ դրախտի նույնականացումը.

Իսկ Եփրատէս՝ ոչ սահմանեցաւ տեղեաւ, այլ ասացաւ գետն չորրորդ Եփրատէս, որ նշանակէ գերանելի անտարանիչս, որ առանց սահմանի գրեցաւ, զոր արինակ գետս այս եւ զտեղիսն, ընդ որ երթա[յ] ոչ գրեաց Մովսէս, սակայն անձամբ ամենեցուն ճանաչի:⁶⁸

Այստեղ ակնարկվում է այն փաստը, որ «Գիրք Ծննդոց»-ում դրախտի տարածքը ստույգ նշված է չորս գետերով, այսինքն՝ նշված են այն երկրները, որոնց տարածքով հոսում էին այդ գետերը, բացառությամբ չորրորդ երկրի, որի տարածքով հոսում էր Եփրատէսը, բայց երկրի անունը չի նշված: Սրանից ելնելով, որոշ մեկնիչներ Եղեմը գետեղում են Հայաստանի տարածքում, ինչի մասին խոսում են նաեւ Մովսէս Խորենացին եւ Ղազար Փարպեցին⁶⁹:

Այսպիսով՝ Երկնային Երուսաղէմի գաղափարն այստեղ լավագույնս համապատասխանում է առաջարկված համատեքստին, որովհետեւ հենց Վերին Երուսաղէմում պետք է ապրեին «արթուն եւ զուարթ մանկունք»-ը: Այսինքն՝

⁶⁶ ՄՄ 1879, 101ա: Հմմտ. նաեւ «Վերինն Երուսաղէմ»-ի այլ օրինակներ. «Եւ երանէ մարգարէս զագգս մարդկան յասելն. «Երանի, որ ունիցի զաւակ ի Սիոն՝ գՔրիստոս եւ ընտանի ի վերինն Երուսաղէմ» (հմմտ. Ես. ԼԱ 9), զի թագաւոր արդար Քրիստոս է, եւ իշխանք, որ իրաւամբք տիրեն առաքեալքն», ՄՄ 1879, 115ա, 143ա, 272ա, 311ա, ինչպէս նաեւ նոր Սիոն, նոր Երուսաղէմ՝ 91բ, 100բ, 101ա, 115բ, 116ա-բ եւ այլն:

⁶⁷ ՄՄ 1879, 349ա: Հմմտ. նաեւ. «... նոր Երուսաղէմ ... տուն բնակութեան սրբոյ Երրորդութեանն», ՄՄ 1879, 179ա:

⁶⁸ ՄՄ 1879, 294բ: Հմմտ. նաեւ. III. 2. 40. «Ոմանք չորից անկեանց արարածոց նմանեցուցանեն, որ համասփի{*Լ}ք բարբառի, իսկ վասն Արածանի, որ է Եփրատէս՝ երկանուն արդարութեան արինակ է եւ մայր առողջութեանն, եւ պսակ բարի գործոց, քանզի գետն այն սնուցանող է եւ անեցուցանող, եւ մայր ամենայն պտղոյ» (ՄՄ 1879, 295ա):

⁶⁹ Ի դեպ, Ղազար Փարպեցին եւս բազմիցս անդրադառնում է Երկնային, Վերին, Նոր Երուսաղէմ/Սիոն թեմային, տե՛ս **Ղազար Փարպեցի**, Հայոց Պատմություն, էջ 164-166, էջ 440:

Զվարթնոց տաճարն այս պարագայում պետք է ընկալվի ոչ միայն որպես «Երկնային Եկեղեցի», այլև հենց «Երկնային Եկեղեցի» երկրի վրա եւ համապատասխանորեն՝ հրեշտակները, «զուարթունքը» ոչ թե երկնային հրեշտակներն են, այլ դրանց՝ սրբակենցաղ, մաքուր՝ անբասիր վարքուբարք ունեցող համարժեքները երկրի վրա: Չպետք է մոռանալ նաեւ, որ Զվարթնոցի տաճարը փաստորեն կառուցվել է հիմնվելով հենց այն նույն գաղափարախոսության վրա, որը դրված էր Էջմիածնի տաճարի շինության դեպքում, այսինքն՝ ըստ Գրիգոր Լուսավորչի տեսիլի, որում եւս առկա են ուղղորդող հրեշտակները:

4. ԼԲ «զուարթունք»

Արդյոք հնարավո՞ր է ավելի ստույգ մատնանշել այդ «զուարթուն» եւ «արթուն» սրբակենցաղ անձանց, որոնց, բացի Գրիգոր Լուսավորչից, Ներսես Տալեցին նվիրել է այս «երկնային» Զվարթնոցը: Արդյոք ովքե՞ր են պատկերված առաջին ծավալային աստիճանի խորանաշարի հանդիպման անկյուններում: Հայտնի է, որ այդտեղ տեղադրված է եղել 32 բարձրաքանդակ, որոնցից պահպանվել են միայն 9-ը՝ ոչ այնքան բարվոք վիճակում: Ընդունված է համարել, որ դրանք կարող են վերաբերել հոգեւոր եւ աշխարհիկ (քարագործ վարպետների) անձանց: Լ. Դուրնովն համարում է, որ սրանք շինարարների քանդակներն էին, իսկ Ս. Մնացականյանը՝ մեկենասների⁷⁰: Երկու կարծիքներն էլ վիճելի են.⁷¹ թեկուզ միայն հենց 32 թվի պատճառով՝ այդքան շատ թվով ճարտարապետ կամ պատվիրատու դժվար ունենար մի եկեղեցին, իսկ շինարարի քանդակի վերաբերյալ, ինչպես տրամաբանորեն նշում է Ս. Մնացականյանը, նման նախադեպ չկա: Այս բարձրաքանդակներից միայն մեկն ունի արձանագրություն՝ «Հովհաննէս», որը թվում է անվարժ ձեռքով գրված, ինչը զարմանալի է եւ դժվար է բացատրել քանդակագարդ գոտու վրա նման արհեստավարժ փորագրված նոնագարդ ճյուղերի եւ խաղողի որթերի քանդակների կողքին, երբ անգամ խաղողի որթերը միտումնավոր քանդակված են տարբեր չափերի, որոնք, ըստ Ս. Մնացականյանի⁷², կարող էին փոխանցել խաղողի տեսակները: Թվում է, որ այստեղ անտեսված է քանդակների խորհրդաբանությունը թե՛ դրանց թվի եւ թե՛ յուրահատուկ շինարարական գործիքների առումով, ինչը եւ հանգեցրել է սխալ եզրահանգումների: Նախ եւ առաջ, 32 թիվը յուրահատուկ խորհրդաբանություն ունի. ըստ այդպիսի քանդակների, այս թիվը հանդիսանում է արդարադատության եւ արդարության խորհրդանիշ, բուդդայական

⁷⁰ Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները 4-7-րդ դարերում, Երեւան, 1949, էջ 73, Լ. Ա. Дурново, Стенная живопись в Аруче, с. 54, Мнацаканян, Звартноц, с. 52-54:

⁷¹ Հմմտ. օրինակ՝ Չ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 140-143:

⁷² Мнацаканян, Звартноц, с. 54.

ավանդության համաձայն՝ Բուդդայի մայրը 32 ամիս ժուժկալության մեջ մնաց, որպեսզի օժտվի 32 առանձնահատկություններով, եւ այդ պատճառով Բուդդան ուներ 32 առաքինություն: Բերանը սովորաբար պարունակում է 32 ատամ: 32 թիվը բազմաթիվ խորհրդանիշներ ունի քրիստոնեության մեջ եւս. օրինակ՝ խորհրդանշում է ուխտի գաղափարը, այն այբուբենի տառերի քանակն է, որոնք Աստված սովորեցրեց Ադամին, սակայն դրանցից որոշները կորան, Աստծո ղեմքը պետք է որ կազմված լինի 32 տառից, որոնք բոլորը չեն հայտնաբերվել եւ վերծանվել: Ինչ վերաբերում է ատամներին, ապա եկեղեցու (ինչպես ընդհանրական, այնպես էլ հայոց) հայրերը համարում են (հատկապես *Երգ երգոցի* մեկնիչները, օրինակ՝ Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Նարեկացի), որ դրանք խորհրդանշում են եկեղեցու վարդապետներին, որոնք «մանրում» եւ «նրբում» են հոգեւոր ուտելիքը, որպեսզի այն չվնասի մանկան ստամոքսը:

Օհնարարական գործիքների դեպքում այստեղ պատկերվածները եւս քրիստոնեական տարածված խորհրդանիշներ են: Խորհրդաբանությունը քրիստոնեության մեջ օգտագործվել է հենց վաղ շրջանից: Յուրաքանչյուր սուրբ ունի իր պատմությունը եւ պատճառը, թե ինչու է ապրել օրինակելի կյանքով: Այս պատմությունները փոխանցելու համար տարաբնույթ խորհրդանիշներն օգտագործվել են Եկեղեցու ողջ պատմության ընթացքում: Մի շարք քրիստոնյա սրբեր ավանդաբար ներկայացվել են իրենց կյանքի հետ կապված խորհրդանիշներով, որպեսզի ճանաչելի լինեն եւ հնարավոր լինի նույնականացնել նրանց տարբեր տեղերում հանդիպելիս: Որպես կանոն՝ սրբերի անհատականություն մատնանշող խորհրդանիշները պատկերվում են նրանց ձեռքերում: Պետք է նաեւ շեշտել, որ միանշանակ խորհրդանիշներ չեն լինում:

Մեզ հետաքրքրող գործիքներից անդրադառնանք նախ մուրճին (ուռն), որը, թերեւս, կարելուք է այս շարքում: Այն համարվում է խաչի մի տեսակ եւ կրում նույն խորը իմաստը. մուրճը սոսկ գործիք չէ, այլ Արարչի գործիք, ուստի այն խորհրդանշում է նաեւ արարման լիարժեք իշխանություն: Որպես քարի վրա ազդող եւ քարը ջարդող գործիք՝ մուրճը նաեւ կրում է քառու կարգավորության, կանոնավորության վերածող, այսինքն՝ ստեղծագործական սկզբունք ունեցող իմաստ: Մուրճը հանդիսանում է նաեւ որպես հավատ հանդիսացող խորհրդանիշ եւ այսու բաղդատվում է Մակաբայեցիների՝ գլխավորապես «Հուդա Մուրճի» հետ, որոնք նահատակվեցին իրենց կրոնը հաստատելու համար: Բահը խորհրդանշում է ներողամտություն, հանդուրժողականություն՝ մարդկանց թուլությունների նկատմամբ եւ խստություն՝ սեփական անձի հանդեպ: Սայրն (կտրիչը, հատիչը) ու մուրճը խորհրդանշում են ինքնակատարելագործման գաղափարը: Միեւնույն ժամանակ, աղյուսագործի արհեստի բոլոր այս գործիքները կրում էին աշխատանքի սրբության գաղափարը: Այս խորհրդանիշները հատկորոշված են նաեւ Աստվածաշնչում.

Ո՛չ ապաքէն բանք իմ իբրեւ զհոր եմ, ասէ Տէր, եւ իբրեւ զմորճ որ հատանէ զվէմ» (Երեմ. ԻԳ 29): Զիա իդ խորտակեցաւ եւ մանրեցաւ ուռնն ամենայն երկրի, զիա իդ եղէ Բաբելոն յապականութիւն ի մէջ ազգաց» (Երեմ. Մ 23): «Զի թեքեաց հիւսն զգործի իւր, ուրագ սրեաց եւ կոփեաց նովաւ. դրով գործեաց... » (Եսայի ԽԴ 12):⁷³

Հավելենք, որ ծիսական կոճը, մուրճը, կրակը եւ արքցանը հաճախ օգտագործվել են նաեւ սատանայի դէմ պայքարի գործում: Այս պատճառով է, որ նշված գործիքները շատ սրբերի համար որպէս խորհրդանիշ են հանդիսանում եւ հանդիպում են նրանց պատկերագրություններում: Որպէս այդպիսին, կարելի է մատնանշել 304 թ. նահատակված սարգարիտի (հայտնի է որպէս Անտիոքի Մարգարետ կամ ս. Մարինե) օրինակը: 494 թ. Գելասիոս Ա պապը նրան կանոնից դուրս հռչակեց, սակայն Արեւմուտքում խաչակրաց արշավանքների ժամանակ նրա պաշտամունքը կրկին տարածվեց: Կարելի է հիշել նաեւ Նոյնի եպիսկոպոս Եղիգիուսի (մոտ 588-660) պատկերագրությունը, որտեղ միշտ առկա են մուրճը, արքցանը, կոճը եւ փութը: Այս դեպքում իհարկէ, խորհրդանիշները կարելի է բացատրել նաեւ այն հանգամանքով, որ Եղիգիուսը ոսկեգործների եւ արծաթագործների հովանավորն էր հանդիսանում եւ ժամանակին՝ Լիոնոսն ինքն էլ էր եղել այդ գործի հմուտ վարպետ: Սակայն ո՛չ ս. Մարինեի դեպքում, ո՛չ էլ մեկ այլ օրինակի՝ ս. Դուստանի⁷⁴ (909-988) պարագայում, նշված գործիքները կապ չունեն նրանց անմիջական գործունեության հետ, այլ խորհրդանշում են սատանայի դէմ պայքարը: Խնդրո առարկա գործիքները որպէս խորհրդանիշ հանդիպում են նաեւ հայկական պատկերագրության մէջ: Այսպէս օրինակ, 1790 թ. Նոր Նախիջեւանում տպագրված գրքում, որտեղ ներկայացված է Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի Սբ. Կաթողիկէն» պոէմը, նկար 15-ում պատկերված է «երկրային եւ երկնային ոլորտները միավորող Էջմիածնի տաճարը: ... Վերելում անկյունագծային ուղղությամբ Սբ. Երրորդությունն է պատկերված՝ ներկայացնելով Հայր Աստծո, աղավնակերպ Սուրբ Հոգու եւ հրեշտակների բազմությամբ ուղեկցվող մուրճը ձեռքին Միածնի էջքը»:⁷⁵

Արդ, համեմատելով 32 բարձրաքանդակներն ասվածի հետ, այլեւս այդ գործիքների առկայությունը զարմանք չպետք է հարուցի: Նշենք նաեւ, որ այդ բարձրաքանդակները զեղչված են ներքեւի մասում եւ, կարծես թէ, վերանում

⁷³ Հմմտ. նաեւ՝ Եսայի ԻԲ 16, Հովի. ԺՁ 33, Մատթ. ԻԱ 44 (այստեղ առկա է մուրճի փշրող գաղափարը) եւ այլն:

⁷⁴ Անգլիայում վանական կյանքը վերականգնելու եւ անգլիական եկեղեցում բարեփոխումներ կատարելու սբ. Դուստանի ջանքերն անգնահատելի են համարվում:

⁷⁵ Ա. Ենոքյան, Ռուսահայ առաջին տպարանի հրատարակությունները եւ դրանց նկարագրումն առանձնահատկությունները, «Բանբեր Մատենադարանի», №25, Երեւան 2018, էջ115:

են այսան միջից՝ շարունակելով այն եւ փաստորեն դառնալով այսան մի մասը: Այսինքն՝ այս առումով քանդակված անձերին կարելի է ընկալել որպէս եկեղեցու պուներ ե՛ւ ուղիղ (ճարտարապետական տեսանկյունից), ե՛ւ փոխաբերական իմաստով: Հետաքրքրական է նաեւ, որ դրանք սերտանած են խաղողի որթերի ու նոնազարդ ճյուղերի հետ՝ կարծես թէ ապահովելով իրենց սերտ կապը քրիստոնյա ժողովրդի հետ (հիշենք, որ խաղողի որթը ու նոնազարդ ճյուղերը խորհրդանշում են քրիստոնյաներին, հավատացյալներին): Հաշվի առնելով, որ այս բարձրաքանդակները պետք է խորհրդանշեին սրբակեցաղ մարդկանց, որոնցից մեկի անձն արդէն իսկ պարզ է՝ դա Գրիգոր Լուսավորիչն է, եւ այն հանգամանքը, որ մինչեւ Ներսէսը եղած կաթողիկոսների թիվը 32 էր, կարելի է առաջադրել այն վարկածը, որ հենց նրանք էին այստեղ պատկերված:

Եւ իրոք, թերեւս հենց Հայոց կաթողիկոսներին, որոնք հանդիսացել են մեր եկեղեցու «շինարարներն» ու «պուները», կարելի է նույնացնել այն «հրեշտակների» հետ, որոնք բնակվում էին Զվարթնոց երկնային եկեղեցում, որն այս դեպքում խորհրդանշում է նաեւ Հայոց եկեղեցին: Կարելի է նաեւ ասել, որ այդպիսով Զվարթնոցը դառնում «համբաւատենչ եւ մեծաքանչ հանդիսարանն, ի հրեշտակերսմ կրոնաստանն սուրբ եւ յաստուածաբանկ առաքինարանն»՝ օգտագործելով Մաքենեսոսի վանքի բնութագրման համար գրված Սյունյաց պատմիչի բառերը:⁷⁶

Ներսես Գ Շինարար

Վերջում հարկ է անդրադառնալ նաեւ Ներսես Տաչեցու անձին որպէս Զվարթնոցի (եւ ոչ միայն) հեղինակի՝ նշելով այս կաթողիկոսի գործունեությանը բնորոշ որոշ առանձնահատկություններ: «Շինարար» պատվանունը պատահաբար չի տրվել նրան, եւ, բացի Զվարթնոցի տաճարից, նա հղացել է իրագործել է մի շարք այլ բարձրաճաշակ եկեղեցիների կառուցումը:⁷⁷ Դրանց թվում է, օրինակ, Իշխանի Ս. Աստվածածին խաչածէ գմբեթավոր եկեղեցին, որը կառուցվել է մինչեւ Զվարթնոցի տաճարը (630-աններին, այսինքն՝ երբ Ներսես Իշխանցին դեռեւս կաթողիկոս չէր): Հետագայում՝ արաբական արշավանքների ընթացքում, այն ավերվել է: Իշխանի վանքի մասին մանրամասնում է Ն. Մառը⁷⁸ նշելով, որ վանքի Մայր տաճարը է դարձում կառուցել է Ներսես

⁷⁶ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, Պատմութիւն Տանն Սիսական, Մ. Էմին, Մոսկվա, 1861, էջ 96:

⁷⁷ Հավելենք նաեւ, որ, բացի Տայքում կառուցած եկեղեցիներից, Ներսէսը հայտնի էր նաեւ բազմաթիվ եկեղեցիների վերակառուցման աշխատանքներով (Դվինում, Վաղարշապատում, Վասպուրականում, Խոր Վիրապում եւ այլուր):

⁷⁸ **Н. Я. Марр**, Аркаун, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах, Византийский современник, СПб., 1905, Т. 12. Вып. 1-2, С. 22, հմմտ.

կաթողիկոսը եւ, ինչպէս տեղեկանում ենք Գրիգոր Խանձտեցու (Խանձտելի, 759-861) վրացերէն վարքից, այդ շրջանում հայկական այս վանքը ծաղկում է ապրել: Լինելով «երանելի Ներսէս» կաթողիկոսի նստավայրը, ըստ նույն վրաց վարքագրի, վանքն այնուհետ երկար տարիներ լքված է մնացել, մինչեւ Ը-Թ դարերում վերանորոգվել է ս. Սաբբասի կողմից, բայց արդեն որպէս վրացական վանք, իսկ հետագայում էլ դարձել է վրաց եպիսկոպոսի նստավայր: Հայ մասնագետները համարում են, որ Է դարի կառուցը լրիվ չի քանդվել եւ պահպանվել է ոչ միայն հիմնական կառուցի մեծ մասը, այլեւ խորանում գետեղված հիասքանչ որմնանկարներից շատերը⁷⁹: Բացի այդ, Զվարթնոցի կառուցումը հիմք է հանդիսացել հայկական ճարտարապետության մեջ նոր ոճ ստեղծելու այսպէս կոչված զվարթնոցատիպ տաճարների համար:

Բոլոր դէպքերում, ակնհայտ է Ներսէս Գ Օրինար կաթողիկոսի առաջադեմ, կիրթ եւ այլ առաքինություններով օժտված լինելը, ինչպէս դրա մասին վկայում է Սեբեոսը: Հետաքրքրական է, որ վերջինս, թեեւ որոշ չափով քննադատում է Ներսէս Տայեցուն քաղկեդոնականությանը հարելու պատճառով, սակայն միեւնույն ժամանակ անաչառ եւ անկողմնակալ կերպով է բնութագրում նրան.

Եւ սնեալ ի մանկութենէ յաշխարհին Յունաց եւ ունեալ զլեզուս եւ զդպրութիւն Հոռոմին, եւ շրջեալ ընդ աշխարհս զարու կարգաք զհնուորութեան. եւ հաստատեալ զմիտ իւր ի վերայ ժողովոյն Քաղկեդոնի եւ ի վերայ տումարին Լեւոնի: Եւ ոչ ունէք ի վեր հաներ զխորհուրդս ամբարշտութեանն, մինչեւ եհաս յեպիսկոպոսութիւն յաշխարհին, եւ անտի կոչեցաւ յաթոռ կաթողիկոսութեան: Եւ էր այր առաքինի վարուք, պահաւք եւ աղաւթիք⁸⁰:

Հարկ է նաեւ նշել, որ մասնագետները վերոհիշյալ բարձրաքանդակները քննարկելիս նշել են, որ խորանաշարի հանդիպման անկյուններում (այսպէս կոչված՝ արխիվոլտերում կամ անտրեւոլտերում) մեծ քանդակների տեղադրումը արդեն վկայված է եղել Ասորիքում (Հատրայում՝ Պարթեական թագավորության հնագույն քաղաքում) եւ Պաղեստինում (Լեպտիս Մագնայում՝ Հռոմեական Կայսրության հայտնի քաղաքում): Այս հուշարձաններում պատկերված են կարեւոր աստվածների կամ թագավորների զլուխների բարձրաքանդակները, ի տարբերություն Զվարթնոցի, որտեղ դրանք ներկայացված են

«Արքաուն». քրիստոնյաների մոնոլիթերն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ, Երևան, 2016, էջ 32-33:

⁷⁹ http://www.tiranmarutyan.am/New%20Folder/publications_books_monographs_1.htm. **Տ. Հ. Մարության**, Զվարթնոց եւ զվարթնոցատիպ տաճարներ: Ճարտարապետական քննական ակնարկ, Երևան 1963:

⁸⁰ Պատմություն Սեբեոսի, աշխ. Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 174:

մինչև գոտկատեղը: Սակայն դրանց տեղադրումը, այսինքն՝ խորանաշարի միացման մասում գետեղելը, ինչպես նաև ընդհանուր ոճը, իրոք մասնություն է ցուցաբերում:⁸¹

Ավելին, թվում է, որ որոշ համեմատություն կարելի է անել Ներսիս լեռան (բարձունք Տավրոսի լեռնաշղթայում, հնագույն Կոմմագենե երկրում) վրա հայտնաբերված բարձրաքանդակների հետ: Դրանք տեղադրված էին Կոմմագենեի Անտիոքոս Ա Երվանդունի թագավորի (մ. թ. ա. 69 - 34) կառուցած դամբարանաբլուր-սրբավայրի արեւելյան եւ արեւմտյան կողմերում՝ արհեստական հարթակների վրա: Ուշագրավն այն է, որ դրանց մեջ առկա են նաև առյուծի⁸² եւ արծվի պահապան արձանները, որոնք կան նաև Զվարթնոցում եւ, թերեւս, նույն նշանակությունն ունեն: Բացի այդ, Անտիոքոս Ա թագավորի գլխանոցը, որը համարվում է հայկական եւ տարբերվում է մյուսներից, շատ մեծ է «Հովհաննէս» արձանագրությունը կրող Զվարթնոցի բարձրաքանդակի՝ խույրի մեծ գլխանոցին:

Այս ամբողջը մի նոր ենթադրության հիմք կարող է հանդիսանալ. արդյոք Ներսես Տայեցին չէ՞ր եղել այս տեղերում եւ անձամբ չէ՞ր տեսել այդ քանդակները եւ տաճարները: Այլնայնս ինչպես բացատրել այդ մասնությունները եւ անգամ որոշ գաղափարային զուգահեռները, որտեղի՞ց կարող էր նա տեղեկանալ դրանց մասին (մանավանդ Լեպտիս Մագնայի պարագայում, երբ քանդակների տեղադրումը ճիշտ այնպես է, ինչպես Զվարթնոցում): Հաշվի առնելով Սեբեոսի վերոբերյալ տեղեկությունն առ այն, որ Ներսեսը զինվոր եղած ժամանակ շրջել էր աշխարհը, ինչպես նաև այս բոլոր տեղերի մատչելիությունը՝ տարածքային առումով, մեծ կանխավարկածը զարմանք չպետք է հարուցի: Գրեթե բոլոր այս հուշարձանները հիմնովին քանդվել են Է դարի երկրորդ կեսին՝ արաբների արշավանքների հետեւանքով⁸³, այնպես որ Ներսես Տայեցին հնարավորություն ունեցել է այցելել եւ ոգեզնչվել ճարտարապետական այս մարգարիտներով:

Թերեւս, երկու խոսք պետք է ասել Ներսես Գ կաթողիկոսի դավանաբանական կողմնորոշման մասին, քանզի դավանաբանական խնդիրներն իրոք այնքան կարեւոր են եղել միջնադարյան Հայաստանում, որ այդ շրջանի բազմաթիվ հարցեր (ներառյալ ճարտարապետական, ինչպես այս դեպքում) անհնար է լուծել առանց տվյալ ժամանակի դավանաբանական եւ քաղաքական խնդիրների վերլուծության: Ներսես Գ Օհնարարը, թեւս ընդունեց միակամության դավանանքը, այնուամենայնիվ նա մնաց նախնական քրիստոնեության

⁸¹ Ավելին, որքանով որ կարելի է հաշվել այսօր Լեպտիս Մագնայի քանդակները եւս 32-ն են, բայց սա կարող է եւ պատահականություն լինել:

⁸² **Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 85:

⁸³ Օրինակ հայտնի է, որ Ներսուրթը գրեթե հիմնովին ավերվել է 647 թ.:

մաքուր գաղափարների եւ վանական ժուժկայության ջատագով (ինչը, պետք է խոստովանել, բնորոշ է շատ քաղկեդոնական հայերի, որոնք, թերեւս, երագում էին այն ժամանակների մասին, երբ հայ քրիստոնյաների միջեւ չկար խզման եւ ոչ մի խնդիր): Նա իր ստեղծած կառույցներով, մասնավորապես՝ Իշխան, Զվարթնոց եւ Բանակ (որը կառուցվել էր 652-658 թթ.) տաճարների միջոցով կարծես թե ցանկացել է փոխանցել իր մտահոգությունները, երագանքները, ծածուկ մտքերը, եւ, թերեւս, այդ է պատճառը, որ առեղծվածային ինչ-որ բան կա այդ տաճարների շինության մեջ:

Ինչեւէ, միակամության գաղափարները շուտով մերժվեցին ինչպես բյուզանդական, այնպես էլ հայ եկեղեցիների կողմից: 652 թ. Ներսես կաթողիկոսի ռիտերիմ թշնամի դարձած Թեոդորոս Ռշտունին արաբական զորքերի օգնությամբ Հայաստանը վերադարձրեց իր նախկին կարգավիճակին: Փորձելով խուսափել արաբամետ նախարարների հետ բախումից՝ Ներսես Տալեցի մեկնում է Կոստանդնուպոլիս՝ հույսը դնելով կայսեր պաշտպանության վրա, սակայն նույն թվականին նա հուսալքված վերադառնում է Հայաստան: Նրա հարաբերությունները Թեոդորոսի եւ շատ նախարարների հետ խիստ սրվում են հատկապես Կ. Պոլիս կատարած ուղեորությունից հետո, ինչի արդյունքում 652-658 թթ. Ներսեսը ստիպված է լինում թողնել կաթողիկոսական աթոռը եւ մեկնել Տայք՝ հայրենի Իշխան գյուղ, որտեղ ապրում է ճգնավորական կյանքով (653-659):

Այստեղ սկսվում է նրա գործունեության կարեւոր ոլորտներից մեկը, որն ավելի շատ լուսաբանված է վրացական աղբյուրներում (մասնավորապես Գրիգոր Խանձտեցու⁸⁴ վրացերեն վարքում⁸⁵, Ժ դար), այն է՝ վանական շարժման մեջ նրա ունեցած ներդրումը, որը հսկայական դեր խաղաց ամբողջ տարածքի (մասնավորապես Վրաստանի) վանական շարժման զարգացման եւ տարածման համար:

Դ-Է դարերում Վրաստանին հարող Տայքի շրջանը Մամիկոնյանների իշխանական տան սեփականությունն էր եւ վաղ միջնադարի ամենակարեւոր մշակութային կենտրոններից մեկը: Միգուցե Ներսեսը նախընտրեց ապրել Տայքում ոչ միայն այն պատճառով, որ դա իր ծննդավայրն էր, այլ նաեւ որովհետեւ այստեղ ապրող հայերը հիմնականում քաղկեդոնական էին: Ավելին, երբ քաղկեդոնական եւ ոչ քաղկեդոնական վեճերն ու բռնաճնշումները սաստ-

⁸⁴ Գրիգոր Խանձտեցին շարունակեց Ներսես Իշխանցու սկսած գործը եւ այսօր ինքն է համարվում վրաց վանականության հիմնադիր:

⁸⁵ **Георгий Мерчул**, Жизнь св. Григория Хандзетийского (грузинский текст и русский перевод Н. Я. Марра). «Тексты и разыскания по армяно-грузинской филологии», кн. VII. СПб., 1911, с. 107.

կացան, ավելի շատ քաղկեդոնական հալեր կենտրոնական եւ արեւմտյան Հայաստանից փախան Տալք եւ սկսեցին ապրել այստեղ անկազմակերպ վանական կյանքով: Կարելի է մտածել, որ իր հանդուրժող բնավորության եւ կազմակերպչական ունակությունների, միաժամանակ վանական իդեալների եւ կյանքի հանդեպ խստապահանջ լինելու շնորհիվ, Ներսեսին հաջողվեց Տալքում ստեղծել վանական ինստիտուտ⁸⁶ եւ եկեղեցիներ կառուցել: Ավելին, թվում է, որ վրացիները նույնպես ներգրավված էին այս գործընթացում, եւ Ներսես Գ կաթողիկոսը սերտորեն կապված էր Տալքի վրացի հոգեւորականության հետ՝ ուսուցանելով նրանց քրիստոնեական վանականություն, ինչի մասին վկայում է վրաց հեղինակների վերաբերմունքը նրա անձի նկատմամբ: Ըստ վրաց աղբյուրների՝ նա հայտնի էր իր սրբակենցաղ կյանքով եւ կատարած հրաշքներով, ինչի համար էլ դասվում է վրաց ուղղափառ եկեղեցու սրբերի շարքում:⁸⁷ Թվում է, որ Ներսեսը սրբադասվել է վրաց եկեղեցու կողմից ոչ միայն վանականության գաղափարները եւ միայնակեցության կանոնները արմատավորելու եւ գործադրելու պատճառով, այլեւ իր քաղկեդոնական հայացքների, ինչպես նաեւ եկեղեցաշինության մեջ նոր ոճ մտցնելու⁸⁸ եւ այն կիրառելու համար:

Ներսես Գ Ծիսարարի կաթողիկոսությունը բնութագրվում է շատ այլ կարեւոր իրադարձություններով. օրինակ՝ նրա անվան հետ է կապված Վարազի Սուրբ Խաչի հայկական կարեւոր տոնի հիմնադրումը: 653 թ. նա նաեւ կա-

⁸⁶ Հայ վանականությունը գործել է առնվազն Դ դարից սկսած եւ շատ հայտնի անուններ են կապված հենց հայ վանականության հետ, օրինակ՝ սբ. Եվթիմիոս Մեծը (377-473), Եվստաթիոս Սեբաստացին (մոտ 300-377 կամ 380) եւ այլք: Հմմտ. նաեւ **A. Terian**, *Monastic Turmoil in Sixth-century Jerusalem and the South Caucasus: The Letter of Patriarch John IV to Catholicos Abas of the Caucasian Albanians*, *Dumbarton Oaks Papers* (vol. 74, 2020); **A. Terian**, *An Overview of Early Armenian Monasticism*, [⁸⁷ Ավելի մանրամասն այս մասին տե՛ս «Արքաուն». քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը, էջ XXX-XXXI:](http://webcache.googleusercontent.com/search?q=cache:Ac41BHSE9IkJ:fmwww.bc.edu/SL-R/Bossey/%255BbosseyFrodo%255D/Terian.doc+%&cd=14&hl=en&ct=clnk&gl=us;G.KAZAPIAN, OI ELLHNEΣ AGIOI THΣ ARMENIAS, https://uoa.academia.edu/GevorgKazaryan; Г. Казарян, Сведения Кирилла Скифопольского об армянских монахах Палестины V-VI вв., Армения и Восточнохристианская цивилизация -III. Доклады и тезисы докладов. Ереван, 2018, p. 153-161 (սբ. Եվթիմիոս Մեծին վերաբերող էջերն են 154-157): Եվազր Պոնտացու գրեթե բոլոր գործերի Չ դարի հայերեն թարգմանությունները (որոնցից շատերը մեզ հասել են միայն ասորերեն եւ հայերեն տարբերակներով) հայերի՝ վանականության նկատմամբ հետաքրքրության լավագույն վկայությունն են:</p></div><div data-bbox=)

⁸⁸ Ն. Մառը հետաքրքրական տեղեկություններ է հայտնում Ներսես Տալքցի կաթողիկոսի շինարարական գործունեության վերաբերյալ, մասնավորապես Իշխան, Շատրեբդ, Միջնաձոր եւ այլ վանքերի մասին, տե՛ս **Н. Я. Март**, *Аркауи, монгольское название христиан*, с. 22, «Արքաուն». քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը, էջ 33:

նուցեց Սուրբ Նշան եկեղեցին այն վայրում, որտեղ հայտնաբերվել էր կենսարար խաչափայտի մասունքը (որը ս. Հռիփսիմեն Գ դարի վերջին կրում էր իր պարանոցին): Նրա կաթողիկոսության օրոք Դվինում գումարվեց երկու ժողով՝ 645 թ. եւ 648 թ.: Առաջին ժողովում ընդունվեց տասներկու կանոն, որոնք հետագայում մտան *Կանոնագրքի* մեջ: Ըստ այս կանոնների, ժողովին, բացի Ներսեսից մասնակցել էին եւս 16 եպիսկոպոսներ: Ներսես Գ կաթողիկոսը թաղված է Զվարթնոց տաճարի հյուսիսային մասում, որը նախանշված էր դեռեւս նրա կենդանության օրոք:⁸⁹

Եզրակացություն

Սույն հոդվածով, Զվարթնոց անվանման եւ մի շարք այլ խնդիրներից բացի, աշխատեցինք ցույց տալ նաեւ ճարտարապետության եւ աստվածաբանության միջեւ եղած սերտ կապը՝ մեկ անգամ եւս համոզվելով, որ ճարտարապետությունը մշտապես արտահայտել է տվյալ ժամանակի գաղափարաբանությունը եւ փոխանցել տվյալ շրջանի մտահոգությունները, բարքերը, ճաշակը եւ այլն:

Զվարթնոց անվանման (որը, ինչպես նշվեց վերը, հայտնի է նաեւ վաղարշապատի Սուրբ Գրիգոր եկեղեցի եւ Առապարի Սուրբ Գրիգոր եկեղեցի անուններով), հետ կապված մեկ այլ կարեւոր հարց եւս կարող է ծագել: Այն է՝ ոմանք կարող են հակաճառել, որ մեզանում չկա նման ավանդություն այս կամ այն եկեղեցին հրեշտակների, «գուարթունների» կամ նմանատիպ հասկացությունների անունով անվանել:

Պատասխանելով այս մտահոգությանը, կարելի է ասել, որ այս դեպքն արտառոց չէ, որովհետեւ մեզանում եղել են եկեղեցիներ եւ վանքեր, որոնց անվանումները կապված են վկա, նահատակ կամ սրբակենցաղ մարդկանց անվան հետ: Այսպես բազում եկեղեցիներ եւ վանքեր են նվիրվել Դ դարի սկզբին նահատակված 40 վկաներին, օրինակ՝ «Քառասուն մանկանց» վանքը Դեբեդի կիրճի ստորին հարթակում, նույնանուն եկեղեցին Մարաշում, «Սրբոց Քառասուն մանկանց» Ալեքսանդրեթ քաղաքում (Թուրքիա), Հալեպի «Քառասուն մանկանց» առաքելական եկեղեցին, կամ Երից մանկանց նվիրված եկեղեցիներն ու վանքերը, Կուսանաց վանքերը (Անապատը) Շուշի քաղաքում եւ Ախուրյան գետի կիրճի թեք լանջին (Անի), Կուսանաց Ս. Ստեփանոս վանքը (հայկական վանքային համալիրը Թբիլիսիում), Աղջոց Ս. Ստեփանոս վանքը

⁸⁹ Ներսես Գ կաթողիկոսի վերաբերյալ հակիրճ տեղեկություններ կարելի է գտնել նաեւ՝ **М. Э. С. Ширинян**, *Нерсес III Строитель*, Православная Энциклопедия, Москва, 2018, т. XLIX, С. 51-53:

(ՀՀ Արարատի մարզում, Գեղարդավանքից 7 կմ հարավ-արեւելք, լեռան լանջին)⁹⁰, Խոտակերաց վանքը՝ առավել հայտնի է Քարկոփի վանք անունով (ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկ գյուղի մոտ, բարձրադիր վայրում), Զորաց Սուրբ Աստվածածին եկեղեցին կամ Զորաց տաճարը (ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս գյուղի արեւելյան եզրին):

Այսինքն՝ դատելով անանօրինակ անվանումներից, կարելի է անգամ ենթադրել, որ Զվարթանցը, թերեւս, կոչվել է «Զուարթանց Սուրբ Գրիգոր եկեղեցի», ինչպես օրինակ «Կուսանաց Սուրբ Ստեփանոս վանք»-ը:

Նշենք նաեւ, որ «Զուարթանց» բառը կարելի է ընկալել ոչ միայն որպէս «գուարթունք» բառի հոգնակի թվի սեռական հոլովով արտահայտված ձեւ, այլեւ տեղ մատնանշող՝ -նոց ածանցով բաղադրություն: Այս դեպքում այն կարելի է մեկնաբանել որպէս զվարթունքների, հրեշտակների բնակության վայր: Հետաքրքրական է նաեւ, որ համարվում է, որ -նոց տարբերակով բաղադրություններն ընդհանրապէս ժողովրդական, խոսակցական, երբեմն էլ բարբառային ծագում ունեն, ինչը, թերեւս թույլ է տալիս մտածել, որ այս անվանումը պահպանվել է դարեդար, շնորհիվ ժողովրդական բանահյուսության: Ենթադրել, որ անվանումը կարող էր ստեղծված լինել այս կամ այն հետազոտողի կողմից փոքր-ինչ անհավանական է թվում այն պատճառով, որ զվարթուն բառը յուրահատուկ իմաստ ունի՝ այն հատուկ եզր է, ինչպէս մանրամասնորեն խոսվեց վերը, ուստի եթէ այն ավելի ուշ հորինվածք լիներ, ապա սպասելի էր, որ անվանումն առնչվեր հրեշտակ բառի հետ:

Զվարթանցի անվանման վկայություններն ավելի ուշ դարերի աղբյուրներում մեծապէս օգտակար կլինեին խնդրո առարկա հարցի պարզաբանման համար, սակայն ինձ չհաջողվեց գտնել այդպիսի տեղեկություններ, բացի մեկերկու Սեբեոսի տեղեկությունը կրկնող, նորություն չպարունակող հիշատակումների:

Բոլոր դեպքերում պարզ է, որ զարմանահրաշ Զվարթանցի շինարարության մեջ Ներսէս Գ Օհնարար կաթողիկոսը ներդրել է հատուկ նշանակություն էւ դեռեւս կան որոշ չբացահայտված հանելուկներ՝ ներառյալ նաեւ տաճարի անվանման մեկնաբանությունից մինչեւ բարձրաքանդակների էւ դրանցում առկա խորհրդանիշների նշանակությունը, որոնց փորձ արվեց անդրադառնալ այս հոդվածում:

Հուսանք, որ այս բոլոր վկայությունները թույլ են տալիս ավելի լավ հաս-

⁹⁰ Ըստ ավանդության՝ այս վանքը հիմնադրել է Գրիգոր Ա Լուսավորիչը Դ դ. սկզբին՝ որպէս կուսանաց վանք, Տրդատ Գ արքայի հայածանքներից փախած էւ այստեղ ապաստանած Ստեփանոս քահանայի նահատակության վայրում:

կանալ մի շարք հարցեր, կապված տաճարի ճարտարապետական, արվեստաբանական, ինչպես նաև գաղափարախոսական ոլորտների հետ, եւ անգամ որոշ եզրահանգումներ առաջարկել Ներսես Գ Շինող կաթողիկոսի գործունեության վերաբերյալ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է այն հարցին, թե ինչպես պետք է հասկանալ Է դարի հանրահայտ Զվարթնոց տաճարի անվանումը, ինչպես նաև դրանում ընդգրկված գաղափարները: Այստեղ եւ առաջարկում եմ «հրեշտակ» բառի հայտնի հոմանիշներ հանդիսացող «զուարթուն», «արթուն» եւ «գրեգորոս» եզրերը կիրառել այն անձանց նկատմամբ, ովքեր՝ լինելով «Երկնային (Վերին, Նոր) Երուսաղեմի եւ Սիոնի քաղաքացիներ, սրբակենցաղ, հրեշտակային կյանք էին վարում: Ավելին, թվում է, որ այդ անձինք կարող են լինել 32 հայ այն կաթողիկոսները, որոնք ապրել են մինչ այս տաճարի կառուցումը, եւ որ տաճարի խորանաշարի վերին մասում, որմնակամարների հանդիպման անկյուններում տեղադրված 32 բարձրաքանդակները հենց նրանց են խորհրդանշում:

ERNA MANEA SHIRINIAN

Mesrop Mashtots Matenadaran

ON THE NAME ZVART'NOC'

Keywords: Zvart'noc', Gregory the Illuminator, “watchers”, “vigiliants”, angelic, God-dwelling, 7th century, Armenian architecture, Komitas I Aghc'ec'i, Nerses III the Builder, catholicos, Heavenly Jerusalem, Sion.

This article concerns the matter how the name of the famous 7th century temple Zvart'noc' should be understood, as well the idea and symbolism included in it. I suggested to apply *termini technici* “zuart'unk” (=“watchers”, “vigiliants”) and “gregoros”, which are well known synonyms to the word “angel”, to the persons who lived angelic life, being “citizens of the Heavenly (Upper, New) Jerusalem and Sion. Moreover, it seems that those persons could be 32 Armenian catholicoses that lived before this temple was erected and that 32 sculptures placed on the antevolts of the temple could symbolize them.

ԶԱՐՈՒՀԻ ԴՈՂՈՍՅԱՆ

Ֆրոնտիստիկ համալսարան

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑՈՒ «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ» ՄՈՆՂՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԴՐԱ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ վարդան Արեւելցի, հիշատակարաններ, Միքայել Աստրի, մոնղոլներ, սելջուկներ, վախճանաբանություն, մոնղոլների կրոնական հավատալիքներ:

Առաջարան

1220-1221 թթ. ձմռանը Հայաստան եւ Վրաստան արշաված մոնղոլական առաջին զորախմբերը եվրասիական տափաստանի ժողովուրդներից առաջինը չէին, որ ոտք դրեցին Կովկասյան լեռներից հարավ: Դարերի ընթացքում հայերը (եւ վրացիները) բխվել են հոների, հեփթաղների, քուշանների, խազարների, իսկ մոնղոլներից ոչ շատ առաջ՝ սելջուկների հետ: Արդյունքում, հայ մատենագիրներն արձանագրել են այդ ժողովուրդների ոչ միայն քաղաքական եւ ուղղափառական նվաճումները, հատկապես, երբ դրանք վերաբերում էին հայոց պատմությանը, այլ նաեւ՝ նրանց սովորույթները, կրոնը եւ նրանց բնակության վայրերին վերաբերող աշխարհագրական տվյալներ:¹ Տափաստանային քոչվոր այս տար-

¹ Հայկական աղբյուրները պարունակում են օգտակար շատ տեղեկություններ եւ պարբերաբար օգտագործվում են թուրքական ժողովուրդների պատմությամբ զբաղվող գիտնականների ուսումնասիրություններում, որոնց շարքում կարելի է նշել **Peter Golden**, Introduction to the History of the Turkic Peoples. Ethnogenesis and State-Formation in Medieval and Early Modern Eurasia and the Middle East, Wiesbaden, Harrassowitz, 1992: Հատկապես արժեքավոր են հյուսիսկովկասյան հոների եւ խազարների վերաբերյալ հայկական աղբյուրները. հմմտ. օրինակ՝ **Constantin Zuckerman**, “The Khazars and Byzantium: The First Encounter”, The World of the Khazars. New Perspectives. Selected Papers from the Jerusalem 1999 International Khazar Colloquium hosted by Ben Zvi Institute, eds. **P. Golden, H. Ben-Shammai, A. Róna-Tas**, Leiden-Boston, Brill, 2007, էջ 399-432 եւ **Dan Shapira**, “Armenian and Georgian Sources on the Khazars: A Re-Evaluation”, նույն տեղում, էջ 307-52: Եվրասիական տափաստանի թուրքական ժողովուրդները միակ քոչվորները չէին, որոնց հանդիպել են հայերն իրենց պատմության ընթացքում: Է. դարում իսլամական արշավանքներն ու նվաճումները Հայաստան բերեցին նաեւ հարավային անապատի քոչվորներին: Սույն աշխատանքում չենք անդրառանա երկու տարբեր քոչվոր մշակույթների համեմատությանը եւ Հայաստանի վրա դրանց ազդեցությանը, քանի որ այն դուրս է հոդվածի բուն թեմայից: Քոչվորության տարբեր տեսակների՝ անապատային եւ տափաստանային, եւ նստակյաց հասարակությունների հետ դրանց

բեր ժողովուրդների մասին հայ մատենագիրների աղբյուրները հիմք հանդիսացան ավելի ուշ եւ այլ պատմական իրավիճակում ապրած հեղինակների համար, որոնք ձեռնամուխ եղան Ակարագրելու Ավանդների մի Աոր խմբի՝ մոնղոլների: Այդուհանդերձ, չնայած հին եւ թերեւս ավանդական դարձած գրավոր աղբյուրների օգտագործմանը եւ քոչվորական այլ ժողովուրդների հետ հայերի ծանոթութեանը, մոնղոլները, նրանց ապրելակերպը եւ ուսմանական ձիրքերը հաճախ բնութագրվում էին որպես միանգամայն անծանոթ մի երեւույթ հայ հեղինակների կողմից: Սա վերաբերում է նաեւ խնդրո առարկա *Հիշատակարանին* եւ նրանում մոնղոլների Ակարագրությանը:

Վարդան Արեւելցու *Հիշատակարանը* հիանալի հնարավորություն է ընձեռում քննելու, թե ինչպես է ստեղծվել Ավանդ մի «Աոր» ժողովուրդի կերպարը եւ «ազգագրությունը» գրական այս աղբյուրում, թե ինչ եղանակով եւ կիրառվել ավելի վաղ հայկական աղբյուրներից քաղված տեղեկությունները, ինչպես եւ դրանք համադրվել Մերձավոր Արեւելքի բազմալեզու մտավորական շրջանակներում տարածված գաղափարներին եւ հենց հեղինակի անձնական դիտարկումներին: 1248 թ. հայ ակնավոր աստվածաբանի գրած *Հիշատակարանը* ամենավաղ փորձերից մեկն է, ուր նրա նպատակն է տարբեր տեսանկյուններից բացատրել այսպես կոչված «մոնղոլ երեւույթը»՝ նրանց ենթադրյալ աստվածաշնչյան ծննդաբանությունը, աշխարհագրությունը, իրենց հայրենիքից հեռանալու պատճառները եւ Ավանդների կրոնական գաղափարախոսությունը:²

փոխգործակցության եղանակների մասին տե՛ս. **Joseph Fletcher**, “The Mongols: Ecological and Social Perspectives”, *Harvard Journal of Asiatic Studies*, 46/1, 1986, էջ 11-50: Նրանց աշխարհակալական գաղափարախոսությունների համեմատության վերաբերյալ տե՛ս **Anatoly Khazanov**, “Muhammad and Jenghiz Khan Compared: The Religious Factor in World Empire Building”, *Comparative Studies in Society and History*, 35/3, 1993, էջ 461-79:

² Հիշատակարանը հրատարակվել է մի քանի անգամ: Սույն հոդվածում գործածվել են 3 հրատարակությունները՝ անհրաժեշտության դեպքում համեմատելով դրանց բնագրերը. **Ղեւոնդ Ալիշան**, Հայապատում, պատմիչք եւ պատմութիւնք հայոց, հ. 1, Վենետիկ, 1901, էջ 452-454, **Գարեգին Յովսէփեան**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. 1, Անթիլեաս, 1951, սիւնք 985-997 (հիմնված է Նոր Չուղայում պահվող 1302 թ. ընդօրինակված ձեռագրի վրա), Տեառն **Միխայէլի պատրիարքի Ասորոց**, Ժամանակակարգութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 609-622, սույնը վերահրատարակվել է՝ **Արտաշէս Մաթեոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, Երեւան, 1984, էջ 243-248: Հիշատակարանի ֆրանսերեն թարգմանությունը՝ *Chronique de Michel le Grand, Patriarche des Syriens Jacobites*, trans. **V. Langlois**, Venice, 1868, էջ 374-8: Վերջերս Աննա Ծիրինյանն այն թարգմանել է իտալերեն. տե՛ս **Anna Sirinian**, “I Mongoli nei colofoni dei manoscritti armeni”, *Atti del Seminario Internazionale I Mongoli in Armenia: storia e immaginario*, Bologna, Dipartimento di Paleografia e Medievistica, 27-28 novembre, 2009, eds **M. Bais - A. Sirinian**, Բազմալեզ. 3-4, 2010, էջ 498-505:

Պատմաքաղաքական իրավիճակը

Հիշատակարանի գրության ժամանակ մոնղոլները տիրում էին ողջ պատմական Հայաստանին ու Փոքր Ասիայում այլ տարածքների եւ կարծես թէ մտադիր չէին դադարեցնելու դեպի Արեւմուտք իրենց առաջխաղացումը: Առաջին մոնղոլական զորքերը Աղվանք, Հայաստան եւ Վրաստան ներխուժեցին 1220-1221 թթ. ձմռանը՝ հանդիպելով հայ-վրացական զինված ուժերին՝ աթաբեկ Իվանե Զաքարյանի (Մխարգրձեղի) գլխավորությամբ:³ Վերջինս պարտություն կրեց երկու անգամ՝ 1220 թ. դեկտեմբերին եւ 1221 թ. հունվարին: Այս ճակատամարտերից հետո, սակայն, մոնղոլներն իրենց նվաճողական ծրագրերից դուրս թողեցին Այսրկովկասը, քանի որ զբաղված էին խորեզմշահ Զալալ ալ-Դինին հետապնդելով, մինչեւ վերջինիս մահը՝ 1231 թ.: 1232 թ. մոնղոլներն իրագործեցին իրենց նվաճողական ծրագիրը Փոքր Ասիայում եւ Այսրկովկասում՝ Բաչուի, Սուբադայի եւ Չարմաղանի հրամանատարությամբ: 1232-1242 թթ. մեկը մյուսի ետեւից նվաճվեցին կարեւորագույն քաղաքներ Գանձակը, Լոռեն, Անին, Կարսը, Խլաթը, Սեբաստիան, Կեսարիան եւ այլն:⁴ Փոքր Ասիայի գրավումն ավարտվեց 1243 թ. Քյուսեդաղի ճակատամարտով՝ Իկոնիայի սելջուկյան սուլթան

³ Հայաստանում մոնղոլական նվաճումների պատմությանը նվիրված են բազմաթիվ ուսումնասիրություններ: Դրանցից նշենք դասական աշխատություններից հետեւյալները, որոնք չեն կորցրել իրենց արդիականությունը. **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Մելջուկյան շրջանից մինչեւ Սեֆյանների հաստատումն Իրանում (XI-XV դդ.), Լիակատար երկեր, հտ. 3, Երեւան, 1977, էջ 192-219, **Bernhard Limper**, Die Mongolen und die christlichen Völker des Kaukasus: Eine Untersuchung zur politischen Geschichte Kaukasiens im 13. und beginnenden 14. Jahrhundert. Ph. D. Dissertation, Universität zu Köln, Köln, 1980, **Robert Bedrosian**, The Turco-Mongol Invasions and the Lords of Armenia in the 13-14th Centuries, Ph. D. Dissertation, Columbia University, New York, 1979, էջ [65]-[119] (օգտագործված է այս աշխատության առցանց տարբերակը <http://rbedrosian.com/dissert.html>), նույնի՝ “Armenia during the Seljuq and Mongol Periods”, The Armenian People from Ancient to Modern Times, vol. 1, ed. **R. Hovannisian**, New York, 1997, էջ 241-71, **P. Golden**, An Introduction to the History of the Turkic Peoples, էջ 287-91. Ավելի նոր ուսումնասիրություններից տե՛ս հետեւյալ ժողովածուի հոդվածները. Caucasus during the Mongol Period/Der Kaukasus in der Mongolenzeit, eds **J. Tubach**, **S. G. Vashalomidze**, **M. Zimmer**, Wiesbaden, Reichert Verlag, 2012: Այսրկովկասի ու Փոքր Ասիայի վերաբերյալ հասկապես կարեւոր են սույն ժողովածուի հետեւյալ հոդվածները՝ **Bayarsaikhan Dashdondog**, “The Mongol Conquerors of Armenia”, նույն տեղում, էջ 53-82, **Timothy May**, “The Conquest and Rule of Transcaucasia: The Era of Chormaqan”, նույն տեղում, էջ 129-51, **Bayarsaikhan Dashdondog**, The Mongols and the Armenians (1220-1335), Leiden-Boston, Brill, 2011: Տե՛ս նաեւ Բազմավեպ, 3-4, 2010 (հմմտ. հղում 3):

⁴ **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն, էջ 208-219, **R. Bedrosian**, The Turco-Mongol Invasions, էջ [94]-[108], **B. Limper**, Die Mongolen, էջ 118-32, **B. Dashdondog**, The Mongols and the Armenians, էջ 50-64.

Ղիսա ադ-Ռիմ Քել Խոսրով Բ. -ի գորքի ոչնչացմամբ:⁵ Մոնղոլական հսկայական տերության հեռավոր արեւմտյան սահմաններում գտնվող Կիլիկիայի հայոց թագավորությունը շահեկան համարեց հպատակվել Մեծ խանին՝ հուսալով խուսափել իր սահմանների վրա ուղղակի հարձակումից: 1247-1249/50 թթ. Հեթում Ա արքայի (թագ. 1221-1269 թթ., մահ. 1270 թ.) եղբայր Սմբատ Գունդատաբլը ուղեորվեց Կարակորում՝ այս կարգավիճակը հաստատելու նպատակով:⁶ Շատ չանցած՝ 1254-1255 թթ., Հեթում Ա-ն անձամբ գնաց մոնղոլների մայրաքաղաք՝ վավերացնելու Կիլիկյան թագավորության դաշինքը Մոնղոլական կայսրության հետ:

Վարդան Արեւելցու Հիշատակարանի տարեթիվը եւ ձեռագրի համատեքստը

Հիշատակարանը գրված է Միքայել Ասորու *Ժամանակագրության* թարգմանության վերջում, որ միասնաբար իրականացրել են Վարդան Արեւելցին եւ ասորի վարդապետ, մատենագիր Իշոխը:⁷ Ձեռագրի սույն համատեքստը շատ

⁵ Փոքր Ասիայում սելջուկների պատմության համար այս ճակատամարտի նշանակության մասին տե՛ս **Charles Melville**, “Anatolia under the Mongols”, Cambridge History of Turkey: From Byzantium to Turkey, 1071-1453, vol 1, ed. **K. Fleet**, Cambridge, 2009, էջ 53-54: Հաշվի առնելով այս հատորի մի շարք հոդվածների բարձր որակը եւ գիտականությունը, գրքի ոչ գիտական վերնագրի ընտրությունը բավական անհաջող է: Այն սխալ տպավորություն է առաջանում, թե 1071-1453 թթ. ընթացքում տեղի է ունեցել քաղաքական իշխանության անցում Բյուզանդիայից քաղաքական մեկ այլ ամբողջականության՝ հայտնի որպես «Թուրքիա», ինչն առնվազն անախրոնիզմ է, եթե ոչ միտումնավոր մոլորեցում:

⁶ **Ա. Գալստյան**, «Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները», ՊԲՀ, 1964, № 1, էջ 91-106՝ հաստատում է, որ Սմբատը Կիլիկիայից դեպի Գույուկ խանի արքունիք ուղևորվել է 1246 թ: Համենայն դեպս, Սմբատի նամակը Կիպրոսի թագավոր Հենրի I Լուսինյանին նա թվագրում է 1246 թ., ինչը ճիշտ չէ: Այս նամակի մասին տե՛ս ստորեւ: Սմբատը մեկնել է Մոնղոլիա 1247 թ. եւ վերադարձել է 1249 թ. վերջին կամ 1250 թ. սկզբին:

⁷ Միքայել Ասորու հայերեն թարգմանությունների, ինչպես նաեւ այդ գործում Իշոխի ու Վարդան Արեւելցու դերի մասին տե՛ս **Andrea B. Schmidt**, “Die Zweifache armenische Rezension der syrischen Chronik Michaels des Großen”, Le Muséon, 106, 1996, էջ 299-319, լրամշակված անգլերեն տարբերակը նույնի՝ “The Armenian Versions I and II of Michael the Syrian”, Hugoye: Journal of Syriac Studies, 16/1, 2013, էջ 93-128: Շմիդտը շեշտում է, որ կա Միքայել Ասորու Ժամանակագրության հայերեն 2 տարբերակ, որոնցից ոչ մեկը չի կարող առաջնահերթ ի համարվել՝ հաշվի առնելով այս պահին մեր ունեցած գիտելիքը: Ավելին՝ սրանք պարզ թարգմանություններ չեն, այլ ներառում են կարեւոր լրամշակումներ եւ փոփոխություններ: Այսպիսով, հայերեն թարգմանությունները չեն կարող դիտարկվել ասորերեն բնագրին զուգահեռ, այլ տարբեր հարցերի առումով պետք է համարվեն անկախ աղբյուրներ: Ես հետեւում եմ Ա. Շմիդտի հղման անվանակարգին՝ վկայակոչելով Ա և Բ խմբագրությունները՝ համապատասխանաբար Երուսաղեմի 1870 եւ 1871 թթ. հրատարակությունները. Տեառն **Միխայելի պատրիարքի Ասորուց** Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, եւ Ժամանակագրութիւն Տեառն **Միխայելի պատրիարքի**

կարելու է, ինչպես կտեսնենք ստորև: Դրա գրության թվականը նույնպես նշանակալի է: Նույն տարում՝ դեպի Կարակորում ճամփորդելու ընթացքում, Սմբատ Գունդատաբլը *Նամակ* է հղել Կիպրոսի թագավոր Հենրիխ Ա Լուսինյանին. այն թվագրվում է 1248 թ. փետրվարի 7-ին, Կիպրոս է հասել 1248 թ. սեպտեմբերին:⁸ Իր *Նամակում* Սմբատն ընդգծում է քրիստոնեական տարրի առկայությունը մոնղոլների շարքերում, վերջիններիս քրիստոնեամետ վերաբերմունքը եւ քաղաքականությունը, ինչպես նաեւ պարզորոշ ակնարկում է Հովհաննես երեցի եւ Հնդկաստանի Դավիթ թագավորի մասին ավանդազրույցները՝ նրանց համարելով հնարավոր արեւելյան դաշնակիցներ ընդդեմ մահմեդականների: Մոնղոլներին՝ որպես քրիստոնյաների կամ քրիստոնեություն ընդունելու շեմին կանգնածների ներկայացնելը, ինչպես նաեւ համատեղ արեւմտամոնղոլական խաչակրաց արշավանքի կոչը, ի վերջո, դառնալու էր ԺԳ. դարի երկրորդ կեսի Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության առանցքը: Քաղաքական այս կողմնորոշման ամենահայտնի արտահայտությունը «Ծաղիկ պատմութեանց Արեւելից աշխարհի» երկն է, որը 1307 թ. հեղինակել է Հեթում/Հայթոն Կոռիկոսցին՝ Հեթում Ա թագավորի զարմիկը:⁹ Արեւելցու *Հիշատակարանը* գրվել է նախքան նման միտումնավոր գաղափարների եւ մոնղոլներին դրական լուսի ներքո

Ասորյոց, Երուսաղեմ, 1871: Սույն հոդվածում Միքայել Ասորու Ժամանակագրության հայերեն տարբերակները կվկայակոչվեն Միքայել Ասորի I եւ Միքայել Ասորի II համառոտագրությամբ:

⁸ **Jean Richard**, “La Lettre du Connétable Smbat et les Rapports entre Chrétiens et Mongols au Milieu du XIIIème Siècle”, *Armenian Studies/Études Arméniennes In Memoriam Haig Bérberian*, ed. **D. Kouymjian**, Lisbon, Caloust Gulbenkian Foundation, 1986, էջ 683-95 (նամակի թվագրման վերաբերյալ՝ էջ 684): Ա. Օսիպյանը պնդում է, որ Սմբատը եւ այդք Կիլիկիայում ոչ միայն տեղյակ էին Հովհաննես երեցի եւ Հնդկաստանի Դավիթ թագավորի ավանդազրույցներին, այլեւ նեստորական քրիստոնյաների հետ համատեղ դրանք շահագործում էին՝ ամրապնդելու քրիստոնեամոնղոլական համագործակցությանն ուղղված եւրոպական աջակցությունը. տե՛ս **Alexandr Osipian**, “Baptised Mongol Rulers, Prester John and the Magi: Armenian Image of the Mongols Produced for the Western Readers in the Mid-Thirteenth – Early Fourteenth Centuries”, *Caucasus during the Mongol Period/Der Kaukasus in der Mongolenzeit*, էջ 153-67: Այնուամենայնիվ, հայերի շրջանում այս պատմությունները երբեք տարածված չեն եղել:

⁹ Խնդրի վերաբերյալ որոշ անդրադարձներ կան՝ **A. Osipian**, “Baptised Mongol Rulers”. Առհասարակ նվաճված ժողովուրդների, եւ հատկապես, այսպես կոչված՝ “համաշխարհային կրոնների” հետևորդների՝ մոնղոլների կրոնի ընկալումների մասին տե՛ս **Peter Jackson**, “The Mongols and the Faith of the Conquered”, *Mongols, Turks and Others: Eurasian Nomads and the Sedentary World*, eds **R. Amitai - M. Biran**, Leiden-Boston, Brill, 2005, էջ 245-90, Հեթումի երկի քննական հրատարակությունը՝ **C. Köhler** “La Flor des estoire de la terre d’Orient”, *Recueil des Histoires des Croisades. Documents arméniens*, vol II, Paris: Imprimerie Nationale, 1906, էջ 110-363: Այս հրատարակության հետ կապված խնդիրների, ինչպես նաեւ Հեթումի նշյալ երկի ձեռագրական ավանդության, դրանց տարբեր թարգմանությունների խորագրին ուսումնասիրություն եւ լեզվաբանական վերլուծություն է

պատկերելու շարունակական ջանքերի օրինաչափ դառնալը եւ հայկական՝ հատկապես Կիլիկիայում գրված աղբյուրներում մոնղոլների գնահատման մեջ ներառվելը: Հետաքրքրական է, որ այս միտումը բնորոշ է նաև Վարդան Արեւելցու «Հաւաքումն պատմութեան» երկին, որը նա ավարտել է շուրջ 1266 թ.: Այստեղ մոնղոլները, հատկապես որոշ իշխանական առաջնորդներ, որոնցից Հուլավուհն Վարդանն անձամբ է հանդիպել 1264 թ. -ին, ներկայացված են որոշակի չափազանցությամբ: Վարդան Արեւելցին նրանց գովաբանում է հատկապես քրիստոնյաներին հովանավորելու համար եւ արտահայտում իր ակնկալիքները նրանց մոտալուտ քրիստոնեության դարձի առիթով:¹⁰ Այսպիսով՝ *Հիշատակարանում* արտացոլված է ավելի վաղ մեկնաբանական եղանակ՝ նախքան գործնական քաղաքականության մեջ (Realpolitik) կապահանջվեին այլ հարացույցներ, եւ մոնղոլների հետ համագործակցությունը կամ նրանց հպատակությունը կարդարացվեր, եւ նույնիսկ կգովաբանվեր: Արեւելցու *Հիշատակարանը եւ Սմբատի Նամակը* ամենավաղ մշակման են, ըստ որոնց մոնղոլների հանդեպ բացասականից դեպի չեզոք եւ նույնիսկ դրական վերաբերմունքը ձեւավորվում էր արդեն նրանց մվաճումների սկզբնական ժամանակաշրջանում, գոնե Կիլիկյան Հայաստանում իշխող վերնախավում:

Ինչպես քաջ հայտնի է, Վարդանը ծագումով Մեծ Հայքից էր եւ Կիրակոս Գանձակեցու հետ միասին աշակերտել էր ականավոր գիտնական, ռաբունապետ Վանական Վարդապետին: Ի դեպ, Վանական Վարդապետը հայ առաջին մատենագիրն էր, որ գրել է մոնղոլների *Պատմություն*, որը դժբախտաբար մեզ չի հասել:¹¹ Վարդան Արեւելցին կարող էր լինել մոնղոլական առաջին արշավանքների ականատեսը, մինչ իր հայրենիքում էր: Կիրակոս Գանձակեցու վկայությունից գիտենք, որ նա ուխտագնացության է մեկնել Երուսաղեմ 1236 թ., հավանաբար Կիրակոսի եւ իրենց ուսուցիչ Վանական Վարդապետի՝ մոնղոլների կողմից գերեվարվելուց ոչ շատ առաջ:¹² 1239 թ. Վարդանը Երուսաղեմից մեկնում է Կիլիկիա, որտեղ մնում է 5 տարի: 1243 թ. նա վերադառնում է Հայաստան՝

իրականացրել Քրիստիանո Լեոնեն. **Cristiano Leone**, *La Tradizione manoscritta de La Flor des ystoire de la terre d'Orient di Het'um con saggio di edizione del I libro e trascrizione del ramo a*. Ph. D. Dissertation, University of Siena, 2012: Շնորհակալ եմ դոկտոր Ք. Լեոնենին՝ իր անոխյատենախոսությունը տրամադրելու համար:

¹⁰ Արեւելցու կարծիքի փոփոխության մասին տե՛ս **Zaroui Pogossian**, “Armenians, Mongols and the End of Times: An Overview of 13th Century Sources”, *Caucasus during the Mongol Period*, էջ 182-5:

¹¹ **Համազասպ Ոսկեան**, Յովհաննէս Վանական եւ իւր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 21-25:

¹² Վարդանը Կիլիկյան Հայաստանի Միս մայրաքաղաքով ուխտագնացությունից վերադարձել է 1239 թ., որտեղ մնացել է 5 տարի: Լ. Խաչիկյանը համարում է, որ Մեծ Հայքից նա հեռացել է 1236 թ. տե՛ս **L. Խաչիկյան**, «Վարդան Արեւելցու Վասն Բանին մասանց

իր հետ բերելով Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսի (1221-1267) *Շրջաբերական թուղթը*¹³՝ նույն տարում տեղի ունեցած Սսի եկեղեցական ժողովից:¹³ Այսպիսով, Վարդանն ուներ բազմաթիվ առիթներ՝ զննելու եւ գնահատելու մոնոլոներին, նրանց մշակույթը եւ, հավանաբար, անձնապես քննելու եւ տեղեկանալու նրանց պատմության ու կրոնի մասին: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ կաթողիկոսական *Թուղթը* հաջ հոգեւոր առաջնորդներին հանձնելուց հետո, Վարդանը հաստատվում է Կայենաբերդի Սուրբ Անդրե վանքում՝ զբաղվելով ուսուցչությամբ:¹⁴ Վարդանի մանկավարժական գործունեությունը կարելու է հիշել, քանի որ սա ենթադրում է նրա լսարանի եւ գաղափարների տարածման լայն շրջանակ: Արեւելցին կրկին մեկնում է Կիլիկիա, *Հիշատակարանի* գրության տարեթվից՝ 1248 թ. -ից առաջ, որտեղ մասնակցում է Միքայել Ասորու *Ժամանակագրության* հայերեն թարգմանությանը՝ ինչպես նշվեց վերելում, սակայն կարճ ժամանակ անց վերադառնում է Հայաստան՝ ծավալելով ուսումնագիտական, հոգեւոր-կրթական, եկեղեցական գործունեություն, մինչ իր մահը՝ 1271 թ.:

Հիշատակարանի աղբյուրները

Ինչպես բնորոշ է գրական այս ժանրին, *Հիշատակարանի* սկզբում Վարդան Արեւելցին հաղորդում է պատմական տեղեկություններ Միքայել Ասորու *Ժամանակագրության* թարգմանության ժամանակի, հանգամանքների եւ դրա օգտակարության վերաբերյալ: Նա ընթերցողին տեղեկացնում է Կիլիկիայի Հայկական թագավորության կրոնական եւ աշխարհիկ առաջնորդների՝ Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսի, Հեթում Ա արքայի եւ Զաբել թագուհու մասին, թվարկում է նրանց զավակների անունները, քննարկում միջազգային քաղաքական իրադրությունը եւ, վերջապես, նկարագրում է մոնոլոների արշավանքը Հայոց աշխարհ: Մոնոլոներին նվիրված այս հատվածում Արեւելցին

աշխատությունը», ՄՍՌՄ ԳՎ հայկական ֆիլիալի տեղեկագիր. Հասարակական գիտություններ, 2, 1943, էջ 81-89, վերահրատ. նույնի՝ Աշխատություններ, հտ. 1, Երևան, Գանձասար, 1995, էջ 193-199 (Վարդանի կյանքի մասին՝ էջ 193-194): Նույնի՝ «Կոստանդին Բարձրաբերդցու իրատական թուղթը՝ առաքված Արեւելյան Հայաստան 1251 թվականին», Բանբեր Մատենադարանի, 4, 1958, էջ 267-284, վերահրատ. նույնի՝ Աշխատություններ, հտ. 1, էջ 156-172: Երկու դեպքում էլ սույն հոդվածում նշվում են 1995 թ. վերահրատարակության էջահամարները: Վարդան Արեւելցու ամփոփ կենսագրությունը տե՛ս նաև **Robert Thomson**, “Historical Compilation of Vardan Arewelic’i”, Dumbarton Oaks Papers, 43, 1989, էջ 125-266 (մասնավորապես՝ էջ 127-8):

¹³ **Լ. Խաչիկյան**, Վասն բանին մասանց, էջ 193-194: Շրջաբերականը թուղթը՝ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, հրատ. ՝ **Կ. Մելիք-Օհանջանյան**, Երևան, 1961, էջ 295-310:

¹⁴ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն, էջ 311:

ներկայացնում է նրանց ծագումը՝ համաձայն աստվածաշնչյան ծննդաբանության եւ աշխարհագրության, որոշ կրոնական սովորույթներ, նրանց ընկալումն իրենց «աստվածատուր ճակատագրի» մասին, որը խթանում էր նրանց ուզմական ակրտումները եւ, ըստ իրենց, ապահովում նրանց ավաճողական քաղաքականության հաջողությունները: Համառոտակի նշվում է Հայոց իշխանների՝ սոնդոլներին հնազանդվելու, վերջիններիս կողմից պարտադրվող հարկահավաքության, ինչպես նաեւ՝ եկեղեցականների հարկազերծության մասին: *Հիշատակարանը* եզրափակվում է Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակի վերաբերյալ որքասացությամբ եւ ժամանակակիցների մեղքերի թվարկմամբ:

Մոնղոլների արշավանքը ներկայացվում է որպես Աստծո պատիժ անթիվ մեղքերի համար. «քանզի սակա քան զչափն մերոցն մեղացն արբոյց մեզ Տէր արտասուս», իսկ այս «օտար եւ անընտել» ազգը դիտարկվում է վախճանաբանական տեսակետից: Ինչպես իր գործակից Կիրակոս Գանձակեցին՝ 1241-1265/66 թթ. գրված մեծարժեք եւ ծավալուն «Պատմութիւն Հայոց»-ի հեղինակը,¹⁵ Վարդանը նույնպես մոնղոլներին համարում էր «ազգ անտողաց»՝ կործանարար վախճանաբանական մի ուժ, որի մասին կանխատեսվել էր Սուրբ Ներսեսի *Տեսչիւմ*:¹⁶ Սակայն, երբ Գրիգոր Ակնեցի քահանան շուրջ 1273 թ. գրեց իր «Պատ-

¹⁵ Կիրակոս Գանձակեցու Պատմության հրատարակության «Առաջաբանում» Կ. Մելիք-Օհանջանյանը հստակեցնում է, որ պատմագիրն սկսել է գրել 1241 թ. մայիսի 19-ին (տե՛ս էջ XXV): Վերջին իրողությունը վերաբերում է 1265/1266 թվականին, սակայն որպես terminus ante quem պետք է ընդունել հեղինակի մահվան տարեթիվը՝ 1271 թ.:

¹⁶ Արժե նշել, որ Սուրբ Ներսեսի Տեսչի ԺԱ. դարի խմբագրության մեջ եւ ԺԱ.-ԺԲ. դդ. ապոկալիպտիկ այլ բնագրերում «ազգ անտողաց» արտահայտությունը կիրառվել է սելջուկների համար՝ հավանաբար վերջիններիս հմուտ նետաձիգ լինելու պատճառով. տե՛ս Ա. Հովհաննիսյան, Գրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հտ. 1, Երեւան, 1957, էջ 21-29, **Z. Pogossian**, “Armenians, Mongols”, էջ 169-70: Թուրքերի կերպարը՝ որպես գերազանց հեծյալներ արտացոլված է նաեւ արաբական մատենագրության մեջ. տե՛ս **Ernst Mainz**, “Die Türken in der klassischen arabischen Literatur”, Zeitschrift für Geschichte und Kultur des Islamischen Orients, 1, 1933, էջ 279-85. Հայ մատենագրության մեջ այս «տեղի»-ն կարող էր ունենալ բազմաշերտ նշանակություն: Մի կողմից այն հիշեցնում է Իսմայելի՝ անապատում մեծանալու եւ «աղեղնավոր» դառնալու մասին. «Եւ էր Աստուած ընդ մանկանն, եւ անեաց եւ եղեւ աղեղնաւոր» (Ծննդ. Ի 21): Մյուս կողմից՝ այս արտահայտությունը միանգամայն համապատասխանում է տափաստանային հեծյալ քոչվորների ամբողջական կերպարին: Սուրբ Ներսեսի Տեսչի վերջին հրատարակությունը տե՛ս **Մեսրոպ երիցու Վայցճորեցույ** Պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի, հրատ. **Գ. Տէր-Վարդանեան**, (ՄՀ, ԺԱ հ., Ժ. դար), Անթիլիաս, 2010, էջ 631-741: Ավելի վաղ հրատարակությունը, որը պարունակում է Վարքի եւ Տեսչի համառոտ տարբերակները, տե՛ս «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց հայրապետի (Սովերբ հայկականք, Չ. հ.), Վենետիկ, 1835: Տե՛ս նաեւ՝ **Z. Pogossian**, “Jews in Armenian Apocalyptic Traditions of the 12th century: a Fictional Community or New Encounters”, Völker der Endzeit. Apokalyptische Vorstellungen und politische Szenarien/ Peoples of the

մութիւն ազգին Անտողաց» երկը, այդ եզրն արդեն կորցրել էր իր վախճանաբանական գաղափարները: Ավելին, Ակնեքցին միտումնավոր ապավախճանաբանական իմաստ է հաղորդում իր *Պատմությանը*՝ ի տարբերություն *Հիշատակարանի* կամ Գանձակեցու *Պատմության*, թեև քաջաժանոթ է եղել Արեւելցու սույն գրվածքին:¹⁷ Ակնեքցու *Պատմության* մասին կխոսվի ստորև:

Արեւելցին սկսում է մոնոլոգների նկարագրությունը՝ պնդելով, որ նրանք «օտար ազգ» են, այրուհանդերձ, նպատակահարմար է համարում նրանց ներստել հայտնի աշխարհում՝ ծանոթ կամ ճանաչելի անցյալի եւ տարածության մեջ: Քրիստոնյա ցանկացած մատենագրի համար դա նշանակում էր վերհանել մոնոլոգների աստվածաշնչյան ծագումը, եւ դրա հիման վրա՝ աշխարհագրական այն տեղանքը, որտեղից սվլալ ժողովուրդը սերում էր: Այսպես՝ Արեւելցին հաստատում է, որ նրանք Թորգոմի ցեղից են եւ Հագարի սերնդից. «Թորգոմագունք զարմէն Հագարու»:¹⁸ Այս նախնական նկարագրությունից հետո, նա բացատրում է «տաթար» ցեղանունը, ընդ որում փոփոխելով ցեղանվան «թ» սկզբնատառը «տ»-ով՝ այսպիսով մի այլ հնարավորություն ստեղծելով այդ բառը յուրովի մեկնաբանելու համար: Նա վկայակոչում է նաեւ Սուրբ Ներսեսին.

... զորոց զանուանս կոչէ սուր եւ թեթեւ, զի թերեւս Թաթարն սուր եւ թեթեւ սսի ըստ լծորդաց փոփոխման եւ կամ տուր եւ տար, որ է տաթար քան զի հարին անյագասէս եւ տարան աներկիւղասէս զորդիսն Սիոնի ի ստրկութիւն գերութեան¹⁹:

Այս պատկերավոր ստուգաբանությունը կոչված էր հաստատելու մոնոլոգների,

Apocalypse, Eschatological Beliefs and Political Scenarios, eds. **R. Voss, W. Brandes, F. Schmieder**, Berlin, Akademie-Verlag, 2016, էջ 147-192, ուր քննարկվում է Տեսիլի եւ ԺԲ. դարի այլ ապոկալիպտիկ բնագրերի կապը: Սուրբ Ներսեսի *Տեսիլի* քննական հրատարակությունն ղեռնուս չկա:

¹⁷ Ապավախճանաբանացման (de-eschatologisation) գործընթացը, որն ակնհայտ է գրավոր աղբյուրներում, եւ այսպիսով արտահայտում է առնվազն հասարակական ուսյալ խավի տեսակետը, տեղի է ունեցել մոտավորապես ԺԳ. դարի կեսերից սկսած: Այդ ժամանակ մոնոլոգները ձեռնամուխ եղան ամրապնդելու տարածքային ղեկավարման համակարգն իրենց արեւմտյան տիրույթներում՝ ավարտին հասցնելով Իշխանության հաստատումը: Փոքր Ասիայի եւ Այսրկովկասի վերնախավը՝ անկախ իրենց կրոնական եւ ազգային ակունքներից, ստիպված էր հաշտվել նոր տիրակալների հետ եւ գտնել *modus vivendi*. Այս համատեքստում պետք է վերանայվեր վախճանաբանական մեկնաբանական հարացույցը: Այս առնչությամբ տե՛ս **Z. Pogossian**, “Armenians, Mongols,” *passim*.

¹⁸ Նշյալ բոլոր հրատարակություններում հանդիպում է «զարմին» ձեւը, բայց Գ. Հովսեփյանը գիտական ապարատում բերում է նաեւ «ի զարմէն» տարբերակը:

¹⁹ **Ղ. Ալիջան**, Հայաստանում, էջ 451, **Գ. Յովսեփեան**, Յիշատակարանք, էջ 990, **Ա. Մաթեւոսյան**, Հիշատակարաններ, էջ 245:

ավելի ճիշտ՝ «տաթարների» վայրագ բնույթը. նրանց անվանումն իսկ բացահայտում էր իրենց վարքագծի էությունը: Ինչ վերաբերում է Սուրբ Ներսեսի *Տեսիլին*, ապա այն պահպանվել է մի քանի խմբագրություններով, եւ Վարդանի *Հիշատակարանն* անուղղակիորեն վկայում է ԺԲ. դարասկզբի ձեռագրում (Մ1912 ժողովածուի մի մասը) պահպանված մի տարբերակի փոխանցման մասին:²⁰ Ներսեսի *Տեսիլում* «սուր եւ թեթեւ եւ սգաստ» անունը տրվում է ռազմիկ մի թագավորի, որը վախճանաբանական ապագայում հայտնվելու է Արեւելքից, եւ ով այսպէս է նկարագրվում.

... յարուսցէ յարեւելից կողմանէ յայսմ աթոռոյ Ծապուհոյ²¹ արքայի, որ այժմս է ի տան խորասանաց, թագաւոր այդադէմ եւ այդալեզու,²² անուն նորս սուր եւ թեթեւ եւ սգաստ. ոչ յազգեն Արշակա Պարթեւի կամ ի Կիրոսի յառաջին

²⁰ Ավելի քան կես դար առաջ Ա. Հովհաննիսյանը մատնանշել է իր թվագրմամբ՝ 1220 թ. ընդօրինակված ՄՄ 1912 ձեռագիրը, որը պարունակում է Ներսեսի Տեսիլի միանգամայն այլ՝ հրատարակվածներից տարբեր մի բնագիր: Երեւանի Մետրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի արտոնությամբ հնարավորություն ունեցա օգտվելու այդ բնագրի թվային տարբերակից, որը բարյացկամորեն տրամադրվեց ինստիտուտի կողմից: Ընդհակառակը եմ հայտնում նաեւ Մատենադարանի գիտաշխատող Գառնիկ Հարությունյանին՝ ձեռագրի հետ կապված որոշ հարցերի պարզաբանմանը աջակցելու համար: Սուրբ Ներսեսի Տեսիլի ՄՄ 1912-ում առկա ընդօրինակության ուսումնասիրությունը հնարավորություն տվեց ինձ հաստատելու որոշ կարեւոր փաստեր Վարդանի Արեւելցու՝ հենց այս բնագրի վրա հիմնվելու եւ իր Հիշատակարանի գրության ընթացքում ավելի վաղ աղբյուրներ գործածելու եղանակի վերաբերյալ: ՄՄ 1912-ի մանրամասն նկարագրության մեջ նշվում է, որ ձեռագրի երկրորդ մասը, որտեղ ընդգրկված է Սուրբ Ներսեսի Տեսիլը, ընդօրինակված է ԺԱ. դարում. տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Չ., խմբ. **Գեորգ Տեր-Վարդանեանի**, Երեւան, 2012, էջ 497-506: Այնուամենայնիվ, կասկածից վեր է, որ այս ձեռագրում ընդօրինակված Սուրբ Ներսեսի Տեսիլը խմբագրվել է 1099 թ. խաչակիրների՝ Երուսաղեմը գրավելուց հետո. թերթ 316 աբ՝ կան ակնհայտ վկայություններ այս իրադարձության, ինչպէս նաեւ դրանից առաջ Անտիոքի գրավման վերաբերյալ: Մրանք չափազանց ճշգրիտ են, եւ, հետեւաբար, հանդիսանում են vaticinia ex eventu, եւ ոչ «իրական» մարգարեություններ: Այսպիսով, ՄՄ 1912 ձեռագիրը կարող է գրված լինել ԺԲ. դարասկզբին, բայց ոչ ԺԱ. դարում:

²¹ Ծապուհ Բ (309-379) թագավորի հիշատակումն անհրաժեշտ էր, քանզի սբ. Ներսեսն ապրել է Դ. դարում: Այսպիսով, նրան վերագրված, բայց իրականում առնվազն Ժ. դարից ի վեր գրված մարգարեության մեջ անհրաժեշտ էր վկայակոչել ժամանակակից (Դ. դարի) թագավորներին՝ մարգարեությանը ճշմարտապատում կադապար տալու համար:

²² Նկատենք, որ մոնղոլները հաճախ բնութագրվում էին՝ որպէս «այլ» ինչ-որ բանի կրող, օրինակ՝ «այլադէմ», «այլալեզու» եւ այլն: «Այլ» սկզբնարմատով կազմված բառերը սովորաբար օգտագործվում էին հակաճանաչական իմաստով՝ շեշտելու հայերի համար որեւէ օտար գաղափար կամ երեւույթ: Այս սկզբունքի կիրառումը մոնղոլների բնութագրության մեջ քննել է Ա. Ծիրինյանը. տե՛ս «I Mongoli nei Colofoni», էջ 497:

թագաւորէն պարսից. այդ ի մնացորդաց Իսմաելեան, ի ծնընդոցն Հագարու. եւ ի զաւակէ Եղամայ յառաջին տոհմից. ահեղատես եւ զարմանալի. ժպիրն եւ սեգ, լիրբ եւ երկայնահեր.²³

Ավելի ընդարձակ համատեքստը, որտեղից քաղված է այս հատվածը, հատակորեն ակնարկում է ԺԱ. դարի սելջուկյան նվաճումները Հայկական բարձրավանդակում եւ Փոքր Ասիայում, ինչպես նաեւ՝ նրանց ներխուժումներին դիմակայելու բյուզանդացիների անկարողությունը: Խորասանի արեւելքից եկող չար թագավորին՝ հակահերոսին նկարագրելու համար կիրառվում է անորոշ եւ այլաբանական լեզու եւ բառապաշար, ուր ընդգրկված է ինքնության ցուցիչների մի շարք, որ կապված է քոչվոր տափաստանային «բարբարոս»-ի հետ: Հատկապես ուշագրավ է, օրինակ՝ «երկայնահեր» լինելու հիշատակումն այս համատեքստում, քանի որ Հյուսիսային Կովկասի կամ Եվրասիական տափաստանների թուրքական ժողովուրդներին նկարագրելիս այս «տեղի»-ն գործածվել է նաեւ այլ աղբյուրներում:²⁴ Ուն էլ որ *Ներսեսի Տեսիրը* վերաբերեք, Վարդան Արեւելցին համատեքստից հանել է Արեւելյան թագավորի՝ «սուր եւ թեթեւ եւ սգաստ» անվանումը, ինչպես նաեւ նրա ծագումնաբանությունը եւ դրանք վերագրել մի ամբողջ ժողովրդի՝ անուղակիորեն հաստատելով, որ նրանք «եկել են Հյուսիս-Արեւելքից»: Վարդանն, այսպիսով, ենթադրյալ կապ է ստեղծում սելջուկների, կամ առհասարակ, թուրքերի եւ մոնղոլների միջեւ՝ ապոկալիպտիկ պատկերները փոխանցելով մի քոչվոր տափաստանային ժողովրդից մյուսին:²⁵

Այս ժողովուրդների լռելյայն զուգադրումը Վարդան Արեւելցու կարեւոր մեկնաբանական եղանակներից էր, ինչը կտեսնենք նաեւ ստորեւ: Բացի դրա-

²³ ՄՄ 1912, թ. 303բ:

²⁴ **Մովսէս Գասխուրանցի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, հրատ. **Վ. Առաքեյան**, Երեւան, 1983, էջ 141՝ 625-626 թթ. Պարսից Խոսարով Բ արքայի դեմ ուղղված պայքարում Հերակլ կայսեր դաշնակից «հյուսիսի ժողովուրդը» ներկայացվում է՝ որպես «ոսկեւեր գիսավոր ազգ», **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, քննական բնագիրը՝ **Մ. Մելիք-Աղանյանի եւ Ն. Տեր Միքայելյանի**, աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները **Հ. Բարթիկյանի**, Երեւան, 1991, էջ 54՝ խոսվում է սելջուկների անսովոր արտաքինի մասին, որոնք «աղեղնավորներ էին եւ հերարձակ՝ ինչպես կանայք», **C. Zuckerman**, “The Khazars and Byzantium”, էջ 399-432՝ նույնացնում է Հերակլի հյուսիսային դաշնակիցներին թուրքերի հետ:

²⁵ Հայկական աղբյուրները հազվադեպ են տարբերակում ցեղախմբերը կամ արքայատոհմերը եւ սովորաբար գործածում են «թուրքեր» ընդհանուր եզրը: Մակայն, ԺԳ. դարի պատմիչ Մխիթար Այրիվանեցին իր՝ քահանաների, մարգարենների, թագավորների եւ տարբեր ժողովուրդների ցանկում փորձում է սելջուկների հիմնադրին նույնականացնել «Սալջուկ Թուրքման»-ի հետ, իսկ նրա սերունդներին՝ «սալջուկ»-ների. տե՛ս **Մխիթարայ Այրիվանեցու** Պատմութիւն Հայոց, հրատ., **Մ. Էմին**, Մոսկվա, 1860, էջ 21-22: Այս հոդվածում օգտագործվում են «թուրք» ազգանվանումը, ինչպես անում էին միջնադարյան հեղինակները, թուրքական (բայց ոչ մոնղոլական) որեւէ ժողովրդի կամ ցեղի մատնանշելու համար:

նից, այս ստեղծագործական գործընթացի արտահայտություններից է մոնղոլներին վերագրված աստվածաշնչյան ծագումնաբանությունը եւս: Վերջինս ապացուցելու համար Վարդանը կրկին վկայակոչում է Սբ. Ներսեսին, սակայն այնուհետեւ ներառում է նաեւ տեղեկություններ այլ, իր իսկ խոսքով՝ ասորական աղբյուրներից՝ հատակեցներով նրանց «բուն հայրենիքի» աշխարհագրական տեղանքը: Արեւելյին մոնղոլներին նույնացնում է «Թուղարք» կոչված ազգի հետ.

Եւ ասէ զնոսայ սուրբն Ներսէս ի մնացորդացն [...] Հագարու եւ **Ասորիք** ասեն զ[նո]խա²⁶ Թորգոմեանս, յայտ է՝ խառնեալ ազգին **Գովգայ**, որ ի **Թորգոմայ՝** ընդ զարմն **Հագարու**,²⁷ որք ունին զԱկոյթիայ մասն աշխարհի, որ սկսանի յԱթլ²⁸ գետոյ եւ ձգի առ Եմաւոն²⁹ լեռամբն, ուր բնակեալ են ազգ ԽԳ, որք Խուժական անուամբ կոչին յիրեանց լեզուս եւ գլխատրն սոցայ Բուշխ³⁰ անուանի եւ անուն միոյ ազգին Թուղարք ասի, զոր կարծես այս են Թաթարքս...³¹

Սուրբ Ներսեսի *Տեսիլից* վերոնշյալ մեջբերումը կասկած չի թողնում, որ Արեւելյին հիմնվել է այս աղբյուրի վրա: *Տեսիլում*, սակայն, «սուր եւ թեթեւ եւ սգաստ»

²⁶ **Ա. Մաթեոսյան**, Հիշատակարաններ, էջ 245՝ «զնա» փխ «զնոսա»:

²⁷ Թավ հատվածը ոչ բոլոր ձեռագրերում է առկա, ինչպես՝ Նոր Ջուղայի 243 ձեռագիրը, որը Գ. Հովսեփյանը գործածել է իր հրատարակության համար. տե՛ս **Գ. Յովսեփեան**, Յիշատակարանք, էջ 991: Այնուամենայիվ, այն հանդիպում է տարբեր ձեռագրերում եւ տպագիր օրինակներում, ինչպես՝ **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 452-453 եւ **Ա. Մաթեոսյան**, Հիշատակարաններ, էջ 245:

²⁸ Ակնհայտ է, որ հայերեն Աթլ տարբերակը գրությամբ իրար նման 1 եւ 2 տառերի միջեւ շփոթի արդյունք է: Անանիա Ծիրակացու Աշխարհացույցը, որի վրա հիմնված է այս տեղեկությունը, ունի Աթլ տարբերակը: Աթլ գետը վերաբերում է Վոլգային: Ծիրակացու Աշխարհացույցը տե՛ս **Ա. Աբրահամյան**, Անանիա Ծիրակացու մատենագրությունը, Երեւան, 1944, էջ 353:

²⁹ Ենթադրաբար՝ Հիմալայները: Իր «Հաւաքումն պատմութեան» երկում Վարդան Արեւելյին նշում է, որ Հաբեթը ստացել է աշխարհի այն հատվածը, որը ձգվում էր Եվրոպայի Արեւելքում, «յարեւելից յԵմավոն լեռնէ» (տե՛ս Հաւաքումն պատմութեան **Վարդանայ Վարդապետի**, Վենետիկ, 1862, էջ 9): Այստեղ Եմավոն լեռան նույնացումը Հիմալայների հետ այնքան էլ հստակ չէ, այն կարող է անգամ մեկնաբանվել՝ որպես Կարպատյան լեռներ:

³⁰ **Գ. Յովսեփեան**, Յիշատակարանք, էջ 991, **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 453 (այստեղ հանդիպում է «Փուշխ» ձեւը, որն ակնհայտորեն բխում է արեւմտահայերեն արտասանությունից), **Ա. Մաթեոսյան**, Հիշատակարաններ, էջ 245: «Բուշխ» ցեղանվան, ինչպես նաեւ՝ Անանիա Ծիրակացու Աշխարհացույցի ընդարձակ տարբերակի (որտեղ նրանք հիշատակվում են) եւ Վոլգա գետի Սամարայի Աղեղի հատվածում «Բուշխք» ժողովուրդների տեղակայման վերաբերյալ տե՛ս **C. Zuckerman**, “The Khazars and Byzantium,” էջ 422-5: Պարզ չէ, թե ինչու է Արեւելյին պահպանել այս անկարևոր թվացող տեղին իր Հիշատակարանում:

³¹ **Գ. Յովսեփեան**, Յիշատակարանք, էջ 991, **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 452-453, **Ա. Մաթեոսյան**, Հիշատակարաններ, էջ 245:

թագավորը մի սելջուկ տիրակալի է վերագրված, որը Հագարի սերնդից էր եւ իսմայելացի: Հիշատակարանում ծագումնաբանության շրջայի իսմայելական օղակը բաց է թողնված, քանի որ այն հայ ընթերցողի մտքում ինքնըստիմքյան կապվում էր իսլամն ընդունած արաբների հետ, եւ այսպիսով հակասում էր 1248 թվականի մոնոլոգների՝ կրոնական հավատալիքների մասին տեղեկություններին: Փոխարենը կատարվել է ուշագրավ մի հավելում. ըստ *Հիշատակարանի*՝ Հագարից սերող մոնոլոգների Թորգոմյան գիծը խառնված էր Գոգի սերունդների հետ:³² Արեւելցին չի նշում այս տեղեկության իր ասորական աղբյուրը, սակայն ծագումնաբանական այս կառուցվածքը նա որդեգրել է իր եւ Իշոխի՝ Միքայել Ասորու *Ժամանակագրության* թարգմանությունից: Հիշատակարանի համեմատությունը Ժամանակագրության ասորերեն բնագրի եւ հայերեն երկու խմագրությունների հետ ցույց է տալիս, որ Արեւելցին հիմնվում է հայերեն թարգմանությունների վրա, թեեւ հնարավոր չէ որոշել, թե երկու տարբերակներից որն է օգտագործել: Վարդան Արեւելցին թուրքերի հաբեթյան/թորգոմյան ծագման Միքայել Ասորու բնորոշումը փոխանցել է մոնոլոգներին՝ գործարկելով երկու ժողովուրդներին գուգորդելու նույն սկզբունքը, ինչ «սուր եւ թեթեւ եւ սգաստ» կամ «ազգ նետողաց» տիտղոսները սելջուկ «թագավորից» մոնոլոգներին վերագրելիս: Հետաքրքրական է, որ եթե *Ժամանակագրության* ասորերեն բնագրում նշվում է թուրքերի հաբեթյան ծագումը Մագոգի միջոցով,³³ ապա երկու հայկական խմբագրություններում հասկորոշվում է, որ ճշգրիտ ցեղական գիծն անցել է Թորգոմի միջոցով: Ստորեւ ներկայացնում ենք ծագումնաբանության վերաբերյալ տեղիները՝ Միքայել Ասորու *Ժամանակագրության* ասորերեն բնագրից եւ հայերեն երկու խմբագրություններից.

³² Հաշվի առնելով, որ Վարդան Արեւելցին չի նշում իսմայելացիների ծագումնաբանությունը, բավականին տարօրինակ է, որ նա պահպանել է Հագարի, այսինքն՝ Իսմայելի մոր մասին հիշատակումը: Հնարավոր է, որ Իսմայելի շառավիղների մասին նշելը բացասական ստվեր պիտի զցեր մոնոլոգների ծագման վրա՝ հայ ընթերցողների մտքում: Այնուամենայնիվ, այս տեղեկությունը կարող էր ժամանակակիցների համար շփոթեցնող լինել, քանի որ ամենատարածված կարծիքն այն էր, որ արաբներն էին սերում Հագարից՝ իր եւ Աբրահամի որդի Իսմայելի գծով: Ուշագրավ է, որ իսլամական որոշ ավանդույթներում ենթադրվում էր թուրքերի արաբահամյան ծագումը, սակայն նրա Քետուրա կնոջ միջոցով. տե՛ս **Yehoshua Frenkel**, “The Turks of the Eurasian Steppes in Medieval Arabic Writing”, *Mongols, Turks and Others. Eurasian Nomads and the Sedentary World*, eds **R. Amitai - M. Biran**, Leiden-Boston, Brill, 2005, էջ 225-6:

³³ *Chronique de Michel le Syrien*, ed. et trad. **J.-P. Chabot**. Vol. 3, Paris, Ernest Leroux Éditeur, 1905, [այսուհետ՝ MSS], էջ 149.

MSS³⁴

Թուրքերի այս ազգը ... պարզվում է [սերում է] Հաբեթի որդիներից, քանի որ նրանք Մագոգի որդիներն են: Նույնիսկ մեծն Մովսեսն է գրել, որ Մագոգը Նոյի որդու՝ Հաբեթի որդին է:

Միքայել Ասորի I³⁵

Գուլխն մարգարէից սուրբն Մովսէս ասէ ի գիրս իրում այսպէս՝ «Յաբէթ ծնաւ զԹի-րաս եւ նա զԹորգոմ եւ զԳովք եւ զայլս ընդ նմա»:³⁶ Ուստի յայտ է թէ յազգէ Թորգոմայ են, վասն որոյ եւ Թուրք ասի. Յորմէ Գովք եւ Մագովք, որ է ազգ ամբոյսական.

Միքայել Ասորի II³⁷

Ասէ սուրբն Մովսէս ի գիրս արարածոցն, թէ «Թորգոմ ծնաւ զԳովգ եւ զայլս ընդ նմա». յայտ է՝ զի յազգէ Յաբեթի է Թուրքը, որ է Գովգ եւ Մագովգ: Եւ Թուրք վասն Թորգոմայ ասին...³⁸

Միքայելն Ասորին առաջին ասորի հեղինակն էր, որը թուրքերին համարել է Հաբեթի որդիներ՝ Մագոգի գծով:³⁹ Սակայն, թուրքերի (կամ որոշակի թուրքական ցեղի) հաբեթյան ծագումը բավական տարածված կարծիք էր հրեական, քրիստոնեական եւ իսլամական միջնադարյան աղբյուրներում, ինչպես նաև որոշ բուն թուրքական ավանդություններում: Սա նշանակում էր, որ թուրքերի հայրենիքը համարվում էր այն, որը Ջրհեղեղից հետո տրվեց Հաբեթին:⁴⁰ Տարատեսակ աղբյուրները թուրքերին այսպիսի ծագումնաբանություն վերագրելիս

³⁴ Թարգմանությունը կատարվել է անգլերենի հիման վրա. **Mark Dickens**, *Medieval Syriac Historians' Perceptions of the Turks*. M. Phil. Dissertation, University of Cambridge, 2004, էջ 29: Ասորերենում այն դրված է XIV գրքի սկզբում, գլ. I, MSS, էջ 149: Հայերեն խմբագրություններում կրճատված են XIV գրքի տարբեր գլուխներ, բացակայում են ասորերեն բնագրի թեմատիկ բաժանումները:

³⁵ **Միքայել Ասորի I**, էջ 394:

³⁶ Վարդան Արեւելցու «Հաւարքումն Պատմութեան» երկում կարդում ենք, որ Հայկ նահապետը «Նոյի որդի Հաբեթի որդու՝ Գամիրի (Գոմեր) որդու՝ Թիրասի որդու՝ Թորգոմի որդին էր»։ «Էր որդի Թորգոմայ, որդւոյ Թիրասայ, որդւոյ Գամիրայ, որդւոյ Յաբեթի, որդւոյ Նոյի» (տե՛ս Հաւարքումն պատմութեան **Վարդանայ Վարդապետի**, էջ 13): Ու. Թոմսոնը համարում է, որ Վարդան Արեւելցու աղբյուրը Մովսես Խորենացու Պատմության Ա գրքի 5-րդ գլուխն է. տե՛ս **R. Thomson**, *Historical Compilation*, էջ 148, ծնթ. 3: Այս բոլոր ծագումնաբանությունների անմիջական աղբյուրը եղել է Ծննդ Ժ. 2-3-ը:

³⁷ **Միքայել Ասորի, II**, էջ 387:

³⁸ Ղևնոն Այիշանն Արեւելցու Հիշատակարանի հրատարակության մեջ ունի հետևյալ ծանոթագրությունը. «Թուրք եւ Թորգոմ անուանց նմանութենէն ոմանք ի Թորգոմայ համարին զԹուրքս... բայց չեն ստոյգ». տե՛ս Հայապատում, էջ 452 ծնթ.: Նա չի վկայակոչում իր մեկնաբանության աղբյուրը, սակայն այն պետք է որ լինի Միքայել Ասորու հայերեն տարբերակը:

³⁹ **M. Dickens**, *Medieval Syriac Historians*, էջ 28-31.

⁴⁰ **Y. Frenkel**, «The Turks of the Eurasian Steppe», էջ 219 (ալ-Գարդիզիի վկայությունը թուրքերի աշխարհագրական ծագման վերաբերյալ), էջ 225 ծնթ. 133 (տարբեր գիտնականների կարծիքների ամփոփումը ալ-Մասուդիի այն տեղեկության վերաբերյալ, թե թուրքերն

ունեին իրենց օրակարգերը, ինչն այս հոդվածի առանցքային խնդիրը չէ:⁴¹ Պատճառը, թե ինչու Վարդանը եւ Իշոխը Միքայել Ասորու *ժամանակագրության* մեջ ավելացրեցին թուրքերի ծագման թորգոմյան գիծը, նույնպես դուրս է սույն հոդվածի շրջանակից:⁴² Այս դրվագն, անշուշտ, հետաքրքրական է՝ նկատի ունենալով Թորգոմի ցեղից հայերի սերելու հնագույն ավանդությունը: Հաբեթյան ծննդաբանությունը թուրքերից մոնոլոգներին փոխանցելով՝ Արեւելցին այս նորեկ ժողովրդին հատկացրել է եվրասիական քոչվորի հետ կապված մի շարք այլ բնութագրումներ եւ կանխակալ պատկերացումներ: Ավելին, Վարդանի ժամանակակից այլ հեղինակներ նույնպես կատարել են նման զուգորդումներ:

Այս ժողովուրդների վերաբերյալ նման մոտեցում ակնհայտ է ասորի մատենագիր Բար Հեբրեոսի *ժամանակագրության* մեջ:⁴³ Մուսուլման հեղինակները նույնպես մոնոլոգներին համարում են թուրքերի մի մասը:⁴⁴ Սակայն, ԺԳ. դարի Մերձավոր Արեւելքի ուշալ վերնախավային մշակույթներում, որոնց մասնակից

ունեն հաբեթյան ծագում), էջ 216 (հրեա հեղինակների մասին, ովքեր Սեւ Ծովի տափաստանի թուրքական ժողովուրդներին կապում են Հաբեթի հետ), էջ 228 (ալ-Կաշգարիի տեղեկությունը բուն թուրքական ավանդությունների մասին): Խազարների թորգոմյան/հաբեթյան ծագման, բայցեւ ընդհանուր առմամբ թուրքական ժողովուրդների վերաբերյալ արաբական աղբյուրների համառոտ ուրվագիծը տե՛ս **T. M. Kalinina**, “Al-Khazara and Aş-Şaqâliba: Contacts. Conflicts?”, *The World of Khazars*, էջ 195-206:

⁴¹ **Y. Frenkel**, “The Turks of the Eurasian Steppe”, էջ 225՝ առաջարկում է, որ հաբեթյան աստվածաշնչյան ծննդաբանությունն ի վերջո թուրքերին կապել է Աբրահամի հետ (իր երրորդ կնոջ՝ Քետուրայի միջոցով) եւ կապ ստեղծել արաբների եւ թուրքերի միջեւ: **M. Dickens**, *Medieval Syriac Historians*, էջ 37-40 եւ այլուր՝ ցույց է տալիս, թե ինչպես է Միքայել Ասորին փորձել բացատրել թուրքերի ծագումը՝ նրանց վերագրելով հաբեթյան/թորգոմյան ծագումնաբանություն: Ավելին, Միքայել Ասորին կիրառել է նկարագրական տարբեր հմտություններ թուրքերի հետ առնչվող «Գոգի եւ Մազգոգի» «տեղի»-ն ապավանհանաբանական դարձնելու եւ Եգեկիեյի մարգարեության 38-39 գլուխների բացասական նշանակությունը մեղմելու համար: Նրա նպատակը կարծես թե եղել է Միջագետքում թուրքական իշխանության ջատագովությունը: Միքայել Ասորու ժամանակագրության Վարդանի Արեւելցու եւ Իշոխի կատարած թարգմանություններում թուրքերի նկարագրության մեջ փոփոխությունները չափազանց ուշագրավ են եւ կարիք ունեն առանձին ուսումնասիրության եւ վերլուծության:

⁴² Հնարավոր է, որ Արեւելցու ընտրությունը թելադրված էր «Ռուրք» եւ «Ռորգոմ» անունների նմանությամբ, ինչպես նկատել է Ալիշանը: Տե՛ս ծնթ. 37:

⁴³ **M. Dickens**, *Medieval Syriac Historians*, էջ 33. Բար Հեբրեոսն իր ժամանակագրության մեջ ներկայացրել է սելջուկներին՝ մեջբերելով Միքայել Ասորուն. «Սրանք Նոյի որդի Հաբեթի որդու՝ Մազգոգի զավակներն են», սակայն ավելի ուշ նա մոնոլոգներին է բնորոշում որպես «Մազգոգի տուն»: Եվրոպական պատմագրության մեջ մոնոլոգներին Գոգի եւ Մազգոգի ժողովրդի հետ նույնացնելու առնչությամբ տե՛ս **Felicitas Schmieder**, *Europa und die Fremden. Die Mongolen im Urteil des Abendlandes vom 13. bis in das 15. Jahrhundert*, Sigmaringen, Thorbecke Verlag, 1994.

⁴⁴ **Reuven Amitai-Preiss**, *Mongols and Mamluks: The Mamluk-İlkhanid War 1260-1281*, Cambridge, Cambridge University Press, 1995, էջ 220 (մեջբերումը՝ Իբն ալ-Աթիրից):

Էր անաւ Վարդան Արեւելցի, տարածված համընդհանուր միտումներից եւ շարժառիթներից բացի, նրա կողմից թուրքերին եւ մոնղոլներին միեւնույն դասի մեջ կարգելը կարող էր ունենալ անաւ այլ պատճառներ: Նախեւառաջ, Վարդանի շարադրման եղանակը՝ օտար մի ժողովրդին վերագրվող բնորոշ գծերը կիրառելը մյուսին անկարագրելու համար, ընդունված էր հայ պատմագրության մեջ:⁴⁵ Երկրորդ՝ դա կարող էր լինել երկու ժողովուրդների մշակութային ընդհանրությունների սեփական գնահատման արդյունքը, որը հիմնված էր անձնական փորձառության եւ դիտարկումների վրա: Նշենք, օրինակ, հեծյալ նետաձիգների վատ կերպարը, որը համապատասխանում էր երկու ժողովուրդներին եւ դյուրացնում «նետողաց ազգ» տիտղոսի փոխանցումը մեկից մյուսին:⁴⁶ Երրորդ՝ մոնղոլների հայրենիքի մասին աշխարհագրական աղոտ տեղեկությունը՝ ինչ-որ տեղ հեռավոր Հյուսիս-Արեւելքում գտնվող մի հսկայական տարածք, որը ձգվում էր Վոլգայից մինչեւ Հիմալայներ, անկասկած համընկնում էր տափաստանի թուրքական քոչվոր ժողովուրդների հայրենիքի մասին նախկին գիտելիքներին՝ անկախ նրանից, թե որն էր նրանց ստույգ ցեղային ծագումը կամ ավելի ճշգրիտ տեղանքը Եվրասիայում:

Թուրքերի մասին անման տեղեկություններ կարելի է գտնել ոչ միայն Միքայել Ասորու *Ժամանակագրության* մեջ, այլեւ ավելի վաղ հայկական աղբյուրներում, ինչպէս՝ Անանիա Շիրակացուն, կամ որոշ բանասերների կողմից Մովսէս Խորենացուն վերագրվող *Աշխարհացոյցում*, որի վրա հիմնվել է Վարդան Արեւելցի՝ կրկնելով վաղուց անհետացած ժողովուրդների կամ ցեղերի անունները: Այսպիսով, սույն աղբյուրի հիման վրա ձեւավորված նախնական պատկերացումները միանգամայն օրինաչափ էին դարձնում անձայրածիր Եվրասիայի տարածքում ծագած երկու քոչվոր ժողովուրդների՝ թուրքերի ու մոնղոլների զուգորդումը միջնադարյան հեղինակի համար: Եթե Արեւելցի ցանկանար ստուգել մատյաններից քաղված տեղեկությունների իսկությունը փաստական հետազոտության միջոցով, ինչպէս օրինակ՝ հենց իրենց՝ մոնղոլներին քննելով, ապա նրա նախկին գաղափարներից շատերն անպայման կհաստատվէին: Այսպիսով, Վարդան Արեւելցու ջանքերը՝ պարզել մոնղոլների աշխարհագրական եւ

⁴⁵ **Robert Thomson**, “Christian Perception of History – the Armenian Perspective”, *Redefining Christian Identity: Cultural Interaction in the Middle East since the Rise of Islam*, eds **J. J. Van Ginkel, H. L. Murre – van den Berg, T. M. van Lint**, Leuven-Paris-Dudely, MA, Brill, 2005, էջ 35-44, **Sergio La Porta**, “Conflicted Coexistence: Christian-Muslim interaction and its representation in medieval Armenia”, *Contextualizing the Muslim Other in Medieval Judeo-Christian Discourses*, ed. **J. Frakes**, New York, 2011, էջ 103-24.

⁴⁶ Սելջուկ թուրքերի մեջ քոչվորական ավանդույթների նշանակության մասին տե՛ս **Andrew C. S. Peacock**, “Nomadic Society and the Seljuq Campaigns in Caucasia,” *Iran and the Caucasus*, 9/2, 2005, էջ 205-30 (ուսումնասիրությունը վերաբերում է ԺԱ. դարին եւ ԺԲ. դարասկզբին):

ազգային ծագումը՝ նրանց տեղակայելով հայտնի եւ հասկանալի մի տարածքում, որն աստվածաշնչյան անցյալում բաժանվել էր Նոյի զավակներին, եւ որը նկարագրվել էր իր սեփական կամ հարեւան ժողովուրդների հեղինակավոր գիտնականների կողմից, ընդգրկում էր փաստական տեղեկությունների հավաքում եւ դրանց համադրումը նախկին գիտելիքների կամ կարծրատիպերի հետ: Ժամանակակից պատմագրության եւ բանասիրության տեսակետից, իհարկե, այս տարբեր աղբյուրները չէին կարող բոլորն էլ «հավաստի» լինել, սակայն միջնադարյան հեղինակն իր տրամադրության տակ եղած աղբյուրները գնահատելիս հազիվ թե դրանք տարբերակեր այնպես, ինչպես մենք այսօր:

Խնդրո առարկա *Հշատակարանից* մի փոքր հատվածի հանգամանակի քննությունն արդեն ցույց է տալիս, որ այս համառոտ գրվածքը բազմաշերտ եւ քաղվածո գրական մի նմուշ է, որում մեկտեղված են իրական եւ մտացածին տեղեկություններ՝ մոնոլոգներին եւ նրանց կայծակնային նվաճումները նկարագրելու եւ այս երեւույթներին բացատրական հարացույց տրամադրելու համար: Սույն *Հշատակարանի* շարադրության ոճն, ի դեպ, վաղ վկայությունն է Վարդան Արեւելցու պատմագրական գործընթացի վերաբերյալ, ինչն ակներե է նաեւ նրա «Հաւաքումն պատմութեան» երկում. քաղելով տեղեկություններ մի շարք տարբեր աղբյուրներից եւ համադրելով դրանք՝ նա ստեղծել է «նոր» պատմություն:⁴⁷ *Հշատակարանը* գրելիս դա իրագործվել է զուգահեռ գործընթացների միջոցով, որոնք էին՝ նոր տեղեկության հավաքումը եւ դրանց վերամշակումը միջնադարյան հեղինակի (եւ նրա ենթադրյալ լսարանի) ակնկալիքներին համապատասխան: Տվյալ դեպքում հեղինակը չէր վարանում եվրասիական քոչվորների վերաբերյալ նախկին իմացուցումը հարմարեցնել մի նոր ժողովրդի՝ մոնոլոգներին: Վարդան Արեւելցու ուսումնասիրելու եւ գրելու մեթոդը կարող է հանգեցնել նոր ուշագրավ տեղեկությունների, սակայն նրա հեղինակած *Հշատակարանի* պատմական արժեքը պետք է ընդունվի նույն պատշաճ զգուշավորությամբ, ինչպես մոնոլոգների վերաբերյալ միջնադարյան շատ այլ հեղինակների վկայությունները:⁴⁸

⁴⁷ Վարդանի «Հաւաքումն պատմութեան» երկի քննարկումն այս տեսանկյունից տե՛ս **R. Thomson**, “The Historical Compilation”, էջ 133:

⁴⁸ Հետաքրքրական է, որ քոչվորների եւ նրանց նյութական մշակույթի հետ կապված վաղեմի կարծրատիպերն ազդել են մոնոլոգների մասին անգամ ականատեսների վկայությունների վրա, ինչպես օրինակ՝ ֆլամանդացի ճանապարհորդ, ֆրանցիսկյան միաբանության անդամ Գիյոմ դը Ռուբրուքի (ԺԳ. դարի կեսեր) եւ շարունակվել է մինչեւ մեր օրերը. հմմտ. **Michael Gervers and Wayne A. Schlepp**, “Felt and “Tent Carts” in “The Secret History of the Mongols,” *Journal of the Royal Asiatic Society*, Third Series, 7/1, 1997, էջ 93-116:

Մոնոլոների «Ելքը» ըստ Հիշատակարանի

Բացի Միքայել Ասորու հայերեն խմբագրության ուղղակի փոխառություններից՝ մոնոլոների աստվածաշնչյան ծագումնաբանությունը սահմանելիս Վարդան Արեւելցին իր *Հիշատակարանի* այլ դրույթներ նույնպես կառուցել է ասորի ականավոր պատմագրի՝ թուրքերի վերաբերյալ գլխի հիման վրա: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Միքայել Ասորուց կախված լինելու ակնհայտ այլ օրինակներ, բացի վերոնշյալներից, չկան: Փոխարենը, գոյություն ունեն որոշակի մանություններ հիմնական թեմաների եւ պատմողական մոտիվների միջեւ, որոնք երևում են մոնոլոների՝ իրենց նախահայրենիքից ելքի Վարդան Արեւելցու նկարագրության եւ թուրքերի՝ իրենց բնօրրանից հեռանալու Միքայել Ասորու բնութագրության մեջ:⁴⁹ Ըստ Միքայել Ասորու՝ Հաբեթի շառավիղները հանդիսացող եւ այսպիսով Հյուսիս-Արեւելքում (վերջիններին ենթադրյալ հետջրհեղեղյան տեղավայրը) հաստատված թուրքերի զանգվածային տեղաշարժը դեպի Արեւմուտք արգելափակված էր երկու դարպասներով: Նրանցից մեկը՝ «Ճորա պահակը», գտնվում էր երկու լեռների միջեւ՝ Վիրքում, եւ կառուցվել էր Ալեքսանդր Մակեդոնացու կողմից, իսկ երկրորդը՝ Պարսկաստանի սահմանների մոտ:⁵⁰ Վարդանը նույնպես մոնոլոների բնիկ հայրենիքը համարում է Հյուսիս-Արեւելքը, սակայն նա չի գործածում Ալեքսանդրի դարպասների մոտիվը:⁵¹

Հիշատակարանն այնպիսի տպավորություն է թողնում, որ Վարդանը խորհել է տարբեր հնարավորությունների շուրջ՝ փորձելով նույնացնել մոնոլոների *Աշխարհացույցում* նշված քառասուներեք բարբարոս ցեղերից մեկի հետ, եւ եզրակացրել, որ ամենահավանական թեկնածուները թուրքներն են («Թուրքարք»): Ինչ-որ մի անորոշ պահի, այս «սուաջին» կամ «բուն» մոնոլոները «Թուրքաստան»-ից շարժվեցին դեպի Արեւելք՝ «որպէս լուսաք յոմանց ի օղացանէ»:⁵² Միքայել Ասորին թուրքերի ելքը կապում էր նրանց սուաջնորդող «սպիտակ կենդա-

⁴⁹ Թուրքերի տեղաշարժն իրենց հայրենիքից դեպի Փոքր Ասիա եւ Միջագետք նկարագրելու համար «ելք» եզրը փոխառել են **M. Dickens**, *Medieval Syriac Historians*, էջ 61:

⁵⁰ MSS, էջ 151, **Միքայել Ասորի I**, էջ 388; **Միքայել Ասորի II**, էջ 395: Այս հաղորդումն ավելի ընդարձակ է ասորերեն բնագրում. մանրամասն վերլուծությունը տե՛ս **M. Dickens**, *Medieval Syriac Historians*, էջ 54-64: Այս ավանդագրույցի եւ «Ճորա պահակ»-ի՝ որպէս բարբարոսներից քաղաքակիրթ աշխարհը պահպանող սահմանագծի զաղափարի ստեղծման համար հիմք հանդիսացած բնագրերի մասին տե՛ս **Andrea B. Schmidt**, “Die “Brüste des Nordens” und Alexanders Mauer gegen Gog und Magog”, *Endzeiten: Eschatologie in den monotheistischen Weltreligionen*, eds **W. Brandes** and **F. Schmieder**, Berlin-New York, W. de Gruyter, 2008, էջ 89-99:

⁵¹ Դա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ Ալեքսանդրի դարպասների մասին հայկական ավանդությունները զգալիորեն տարբերվում էին ասորականից. հարցի քննարկումը տե՛ս **A. Schmidt**, “Die “Brüste des Nordens””:

⁵² **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 453, **Գ. Յովսէփեան**, Յիշատակարանք, էջ 991, **Ա. Մաթենոսյան**, Հիշատակարաններ, էջ 246:

նու» (հավանաբար տոտեմական մոխրագույն գալլի) մասին ազգային առասպելների հետ, եւ այս պատումն օգտագործում է նրանց նվաճումներն ու Միջագետքում տիրակալությունը արդարացնելու նպատակով՝ դրանք համարելով աստվածային ծրագրի իրականացում:⁵³ Վարդան Արեւելցին այլ կերպ է մեկնաբանում մոնոլոգների «Ելք»-ի պարագաները եւ հետեւանքները՝ շեշտելով նրանց «քաղաքակրթացման» գործոնն այս ընթացում, ուր Աստծու հայտնությունները քիչ դեր չեն խաղացել: Վերջիններս ե՛ւ նախորդում էին մոնոլոգների գաղթին, ե՛ւ շարունակվում նրանց տեղաշարժի ժամանակ: Միքայել Ասորին սերտ կապ է ստեղծում թուրքերի՝ Աստակյաց Պարսկաստանի (որտեղ նրանք ծառայել են որպէս վարձկաններ) հարստությանը տիրանալու եւ Ծորա պահակից այն կողմ գտնվող իրենց հայրենիքից դուրս գալու ցանկության միջեւ:⁵⁴ Վարդանը նույնպէս անուղղակի պատճառահետեւանքային կապ է ստեղծում կողոպուտով զբաղվող մոնոլոգների չքավոր գոյության եւ նրանց գաղթի միջեւ՝ որպէս իրենց կենսական սոսկալի պայմաններից դուրս գալու միջոց:

Իհարկէ, եւ՛ Միքայել Ասորու եւ՛ Վարդան Արեւելցու ենթադրությունները հիմնված են կանխակալ պատկերացումների, ինչպէս նաեւ՝ քոչվոր եւ Աստակյաց մշակույթների ներկայացուցիչների դարավոր փոխգործակցության իրական եղանակների վրա, հատկապէս սահմանամերձ շրջաններում: Այսպէս, տափաստանային քոչվորների՝ որպէս աղքատ ավազակների եւ բարբարոսների նկարագրելը տարածված կարծրատիպ էր, որ կրկնում էին Աստակյաց մշակույթների մատենագիրները բոլոր ժամանակներում եւ ամենուրեք:⁵⁵ Բնարկվող երկու հեղինակներն ունեն նաեւ այլ ընդհանրություններ՝ յուրաքանչյուր

⁵³ Միքայել Ասորին նշում է թուրքերի երկու «խուժումների» մասին, առաջինը նա թվագրում է Ք. Ա. 510 թ., իսկ երկրորդն, ըստ նրա, տեղի է ունեցել ավելի մոտ ժամանակներում, այսինքն խոսքը վերաբերում է ԺԱ. դարի սելջուկյան արշավանքներին (**MSS**, էջ 150): Հետո նա ասում է, որ եղել են նաեւ այլ դեպքեր (**MSS**, էջ 152): Այնուհետեւ նա նկարագրում է թուրքերի աստիճանական տեղաշարժը դեպի Պարսկաստան, որը նա թվագրում է Սասանյան կայսրության անկումից հարյուր տարի առաջ (հմմտ. **MSS**, էջ 153): Հնարավոր պատմական դրվագների վերլուծությունը, որոնք կարող են արտացոլվել այս օրինակներում տե՛ւ **M. Dickens**, *Medieval Syriac Historians*, էջ 54-5: Միքայելի Ասորին վերապատմել է նաեւ բուն թուրքական ավանդություններ եւ առասպելներ, որոնց օգտագործման նպատակների մասին տե՛ւ նույն տեղում, էջ 60-61: Սույն պատումի հայերեն տարբերակներն ավելի համառոտ են. Հմմտ. **Միքայել Ասորի I**, էջ 396-399 եւ **Միքայել Ասորի II**, էջ 389-390:

⁵⁴ **MSS**, էջ 153, **Միքայել Ասորի I**, էջ 396-6, **Միքայել Ասորի II**, էջ 389-90:

⁵⁵ Դարերի ըթացքում եւրասիական տափաստանային քոչվորների եւ Աստակյաց Չինաստանի միջեւ տնտեսական, քաղաքական եւ ռազմական փոխհարաբերություններն ունեցել են կարեւորագույն նշանակություն համաշխարհային պատմության մակարդակով. Այս մասին, տե՛ւ **Thomas Barfield**, *The Perilous Frontier: Nomadic Empires and China*, Oxford, Blackwell, 1989, նույնի՝ “Inner Asia and Cycles of Power in China’s Imperial Dynastic History”, *Rulers from the Steppe: State Formation on the Eurasian Periphery*, eds **G. Seaman** and **D. Marks**, Los Angeles, University of Southern California Ethnographics Press, 1991, էջ

խմբի գաղթի եղանակների նկարագրությունում: Ըստ Միքայել Ասորու՝ թուրքերի մի առաջապահ (avant-garde) խումբ կազմված էր պարսիկների վարձկաններից, որոնց ամեն անգամ՝ ինչ-որ ռազմական ծառայության ավարտից հետո, պարբերաբար ուղեկցում էին հետ դեպի Դարպասների ետևում գտնվող իրենց բուն հայրենիքը: Սակայն գալիս է մի պահ, երբ նրանք հարձակվելով պարսկական պահակախմբերի վրա՝ նվաճում են մի ամրոց, որտեղից էլ օգնություն են խնդրում մյուս կողմում մնացած իրենց հայրենակիցներից: Վերջինների զորակցությամբ թուրքերն, ի վերջո, ընդլայնում են իրենց իշխանության տակ գտնվող տարածքները մինչև Մարգիանա:⁵⁶

Վարդան Արեւելցու՝ մոնղոլների «Ելք»-ի վերաբերյալ շարադրանքի կառուցվածքը նման է այս պատումին, թեպետ ոչ նույնական: Ըստ նրա՝ մոնղոլներից ոմանք, հոգնելով իրենց թշվառ կյանքից եւ «երկնավոր Աստծու» օգնությունն աղերսելով, նախ հարձակվեցին եւ գրավեցին մի փոքր քաղաք, այնուհետեւ օգնություն խնդրեցին «իրենց երկրում» մնացածներից. «կոչեցին երկրէն իւրեանց թիկունս»: Ի վերջո, նրանք հասան Պարսկաստան եւ նվաճեցին այն:⁵⁷ Երկու հեղինակներն էլ խոսում են թուրքերի (Միքայել Ասորի) կամ մոնղոլների (Վարդան Արեւելցի)՝ իրենց հայրենիքից դուրս գալուց հետո երեք ուղղություններով բաժանման մասին: Մի խումբը գնաց Հնդկաստան՝ դեպի հարավ, երկրորդը՝ դեպի հյուսիս-արեւմուտք՝ Թրակիայի մոտ (Միքայել Ասորի) կամ դեպի հյուսիսի անապատները (Վարդան Արեւելցի), իսկ երրորդը՝ Պարսկաստան:⁵⁸ Ըստ այս հեղինակների՝ երկու դեպքում էլ սովյալ քոչվոր ժողովրդի բախումը նստակյաց մշակույթի ներկայացուցիչների հետ էական ազդեցություն է թողել նրանց կրոնական համոզմունքների վրա: Մինչ մոնղոլների կրոնի՝ Վարդան Արեւելցու վերլուծությանն անցնելը, փորձենք ամփոփել Միքայել Ասորու *Ժամանակագրության*՝ Վարդան Արեւելցու *Հիշատակարանի* վրա ազդեցության վերաբերյալ մեր հիմնական եզրակացությունները:

21-62 եւ **Sechin Jagchid**, “The Historical Interaction between the Nomadic People in Mongolia and the Sedentary Chinese”, նույն տեղում, էջ 63-91: «Տափաստանն ընդդեմ մշակահողի» երեւույթի վերաբերյալ մանրամասն քննարկումը՝ **J. Fletcher**, “The Mongols”: Բնորոշ օրինակ է նաեւ հեփթաղների եւ Սասանյան կայսրության միջեւ միջ-մշակութային, քաղաքական եւ ռազմական կապերը, բայցեւ հանախակի բախումները, որի մասին. տե՛ս **P. Golden**, Introduction, էջ 82:

⁵⁶ **MSS**, էջ 153, **Միքայել Ասորի I**, էջ 397 եւ **Միքայել Ասորի II**, էջ 390. Ասորերեն տարբերակում այս իրադարձությունը թվագրվում է «Պարսկական վերջին կայսրության» վերջին շրջանով, մինչդեռ հայերեն խմբագրությունները հաստատում են, որ սա տեղի է ունեցել Հիսուս Քրիստոսից 510 կամ 511 տարի առաջ. տե՛ս **Միքայել Ասորի I**, էջ 396, **Միքայել Ասորի II**, էջ 389:

⁵⁷ **Ղ. Ալիջան**, Հայապատում, էջ 453, **Գ. Յովսեփեան**, Յիշատակարանք, էջ 991, **Ա. Մաթեոսյան**, Հիշատակարաններ, էջ 246:

⁵⁸ **MSS**, էջ 155, **Միքայել Ասորի I**, էջ 398, **Միքայել Ասորի II**, էջ 390, **Ղ. Ալիջան**, Հայապատում, էջ 453, **Գ. Յովսեփեան**, Յիշատակարանք, էջ 992, **Ա. Մաթեոսյան**, Հիշատակարաններ, էջ 246:

Ակնհայտ է, որ երկու աղբյուրներն ունեն բազում ընդհանրություններ: Ծատ դեպքերում Վարդան Արեւելցին օգտվել է ոչ թե ուղղակիորեն *Ժամանակագրության* ասորերեն բնագրից, այլ դրա հայերեն թարգմանությունից եւ խմբագրությունից: Թուրքերի, դեպի Արեւմուտք նրանց տեղաշարժի եւ նվաճումների վերաբերյալ Միքայել Ասորու նկարագրությունն օգտագործվել է Վարդան Արեւելցու կողմից որպես մի ընդհանուր ուրվագիծ, որի հիման վրա էլ նա շարադրել է մոնոլոգների մասին իր պատումը: Սա a priori չի նշանակում, թէ Արեւելցին միտումնավոր փոխել է իրական դեպքերի վերաբերյալ «ավելի հավաստի» տեղեկությունները՝ դրանք իր կաղապարին հարմարեցնելու համար: Արեւելցու *Հիշատակարանը* հեռու է Միքայել Ասորուն ստրկորեն ընդօրինակելուց, քանի որ նա հավելում է մոնոլոգների մասին նշանակալի նոր տվյալներ՝ քաղված այլ աղբյուրներից, ներառյալ անմիջական բանավոր տեղեկությունները: Ավելի հավանական է պատկերացնել, որ Արեւելցու սերտ ծանոթությունը Միքայել Ասորու բնագրի հետ նրան թելադրեց որոշակի մասնություն թուրքերի եւ մոնոլոգների, ինչպես նաեւ՝ «Հեռավոր Արեւելքում» (որքան էլ որ այս եզրը լայն եւ անորոշ է) սկզբնավորված եւ մինչեւ Արեւմուտք՝ ներառյալ Հայաստան եւ Փոքր Ասիա, հասնող նրանց ռազմական նվաճումների պատմության միջեւ:

Կրոն եւ աշխարհակալություն

Ինչպես վերը տեսանք, Վարդան Արեւելցու (կամ նրա աղբյուրների) պատկերացմամբ առաջին մոնոլոգները հաստատվել են ինչ-որ տեղ Թուրքաստանի արեւելքում: Ասվում է, որ այս «առաջին» մոնոլոգները չունեին կրոնական «պաշտուն»: Սակայն նրանք որոշ գաղափար ունեին Գերբնականի մասին, քանի որ սքանչանում էին արեւով եւ հմայության նպատակներով ունեին թաղիքե հատուկ պատկերներ, որ կրում էին իրենց վրա.⁵⁹ «ընդ արեգակն զարմանալին եւ ի պատճառս հմայութեան ունեին պատկերս ինչ թաղեայ, զոր տակաւին կրեն ընդ ինքեան»: Այս պատումը վերաբերում է գրեթե առասպելական մի ժամանակի՝ illo tempore քանի որ այս մանրամասները հայտնվում են անմիջապես այն նախադասությունից հետո, որն ընթերցողին տեղեկացնում է մոնոլոգների աստվածաշնչյան ծագումնաբանության եւ նրանց աշխարհագրության մասին՝ երկուսն էլ զետեղված աշխարհի հետջրհեղեղյան «գաղութացման» համատեքստում: Այսօրինակ շարադրումն այնպիսի տպավորություն է ստեղծում, թե աստվածաշնչյան ժամանակներում էր, երբ մոնոլոգները չունեին «կրոնական պաշտոն», այլ երկրպագում էին արեւին: Ուշադրություն դարձնենք նաեւ բառերի տարբերակմանը. եթե «պաշտուն» ընդունված եզր էր նաեւ քրիստոնեական պաշտամուն-

⁵⁹ Դ. Ալիշան, Հայապատում, էջ 453, Գ. Յովսեփեան, Յիշատակարանք, էջ 991, Ա. Մաթեոսյան, Հիշատակարաններ, էջ 246:

քի համար, ապա «ընդ արեգակն գարմանային» արտահայտության մեջ կիրառված «գարմանային» բառը չունի ակնհայտ կրոնական նշանակություն: Հնարավոր է, որ բառերի նման ընտրության նպատակն էր շեշտել, թե սովյալ ժողովուրդն այնքան պարզամիտ եւ քաղաքակրթությունից հեռու էր, որ նույնիսկ նրա հավատալիքներն ու սովորույթները հնարավոր չէր նկարագրել համապատասխան կրոնական տերմինաբանությամբ: Այսպիսով, Վարդանը ստեղծում է բառային դասակարգություն, որն ամենայն հավանականությամբ արտացոլում էր կրոնական դասակարգման տարբեր աստիճաններն՝ ըստ միջնադարյան հեղինակի: Իհարկե, թալանով եւ կողոպուտով զբաղվող առաջին մոնղոլների վարքագիծը գալիս էր լրացնելու առանց կրոնի վայրագ ժողովրդի կերպարը:

Այն, որ քոչվորները չունեին «ոչ կրոն» եւ «ոչ կրոնական պաշտամունք», տարբեր աղբյուրներում եվրասիական քոչվոր ժողովուրդների մասին մի կողմնակալ կարծիք էր: Վկայակոչենք մի քանի օրինակ. Դ. դարի հռոմեացի պատմիչ Ամմիանոս Մարկելիանոսը կարծում էր, որ հոները չէին պաշտում կամ հավատում որեւէ բանի:⁶⁰ Վրացական *Սուրբ Աբդի Վարքում* խազարները նկարագրված են որպես «վայրի մարդիկ, զարհուրելի դեմքով, դաժան բնավորությամբ, արյունաբերու, առանց կրոնի, բացառությամբ այն բանի, որ նրանք ճանաչում էին արարիչ Աստծուն»:⁶¹ Հատկանշական է նաեւ, որ իսլամական հեղինակները նախաիսլամական թուրքերին նկարագրում էին որպես «կրոն չունեցող»:⁶² Կիրակոս Գանձակեցին մոնղոլներին բնութագրելիս կիրառում է գրեթե նույն լեզուն՝ պնդելով, որ նրանք չունեն «կրոնական պաշտոն», բայց այնուհետեւ շարունակում է նկարագրել Տանգրիի հանդեպ նրանց մեծարանքը:

Արեւի երկրպագության վերաբերյալ Վարդան Արեւելցու հիշատակումը կարող էր ունենալ նաեւ այլ ենթմաստներ: Դա «սուտ պաշտամունք» էր, որում հայ մատենագիրները մեղադրում էին զրադաշտականներին՝ նրանց կոչելով արեւապաշտ:⁶³ Սրանից ոչ շատ առաջ՝ ԺԲ. դարում, Միջագետքում ի հայտ

⁶⁰ **Jean-Paul Roux**, “Tängri. Essai sur le ciel-dieu des peuples altaïque”, *Revue de l’Histoire des Religions*, 149/1, 1956, էջ 49-82 (I), 149/2, 1956, էջ 197-230 (II), 150/1, 1956, էջ 27-54 (III). Այս ուշագրավ վկայակոչումը՝ **J.-P. Roux**, “Tängri”, II, էջ 198-9.

⁶¹ Մեջբերումն ըստ՝ **P. Golden**, “The Conversion of the Khazars”, *The World of the Khazars*, էջ 135 (ընդգծումը մերն է):

⁶² **Y. Frenkel**, “The Turks of the Eurasian Steppes”, էջ 218.

⁶³ Այսպես օրինակ, Փավստոս Բյուզանդի (IV. 59) բնութագրմամբ՝ հավատուրաց իշխան Մերուժան Արծրունին (Դ. դար) պաշտում էր «արեւին եւ կրակին»: Մովսես Խորենացին խոսում է զրադաշտական թագավոր Վաղարշակի տանարաշինության, այդ թվում՝ արեւին նվիրված տանարների կառուցման մասին: Այս օրինակները վերցված են՝ **James Russell**, *Zoroastrianism in Armenia*, Cambridge, MA, Harvard University Press, 1987, էջ 53, 493. Սույն ուսումնասիրության համար կարելի է այն, որ ԺԳ. դարի հայ հեղինակը արեւի պաշտամունքը կապում էր զրադաշտականության հետ, դա համարելով անհավատության նշան:

եկած Արեւորդիների հայ համայնքը դատապարտվել էր Ներսես Ծնորհալի կաթողիկոսի կողմից՝ ի թիվս այլոց արեւին երկրպագելու համար:⁶⁴ Այսպիսով, Վարդան Արեւելցին իր պատումին ավելացրել է մեկ այլ վիճաբանական շերտ: Բայց այս դեպքում եւս նրա հաղորդած տեղեկությունները համապատասխանում են բազում այլ միջնադարյան հեղինակների տվյալներին, որոնք հավաստում էին, թե եվրասիական քոչվորների շրջանում արեւի պաշտամունքը տարածված էր: Իսլամական աղբյուրներից մեկը Ժ. դարում ստեղծված Հուրուդ ալ-Ալլամ աշխարհագրական գիրքը, որտեղ խոսվում է թուրքերի մեջ տարածված արեւապաշտության մասին:⁶⁵ Խազարների թագավորության տարածքում հնագետների հայտնաբերած արեւի բազմաթիվ թափսմանները վկայում են թուրքական այս ժողովուրդների մեջ եթե ոչ արեւապաշտության (Գուրդեմի մեկնաբանությամբ՝ դրանք ներկայացնում են Տանգրիի պաշտամունքը), ապա գոնե այնպիսի կրոնական պատկերագրության մասին, որն արտաքնապես կարող էր դիտվել որպես արեւի պաշտամունքի ապացույց:⁶⁶ Ժամանակագրորեն Վարդան Արեւելցուն ավելի մոտ՝ ԺԲ. դարի իտալացի ճանապարհորդ Զիովաննի դա Պիան դել Կարպինեն նույնպես ներկայացրել է մոնոլոգների հավատալիքները՝ կապված արեւի եւ լուսնի հետ:⁶⁷ Այն, որ սա ոչ միայն կարծրատիպ էր, այլեւ ուներ իրական հիմքեր, հաստատվում է «Մոնոլոգների Գաղտնի պատմություն» գրվածքում: Այստեղ նկարագրված են այնպիսի դրվագներ, ուր ակնհայտ է արեւի երկրպագությունը: Օրինակ, պատումը ներկայացնում է կրոնական պաշտամունքի հետ կապված գործողություններ (դեպի արեւը խոնարհ-

⁶⁴ **Ներսես Ծնորհալի**, Ընդհանրական թուղթ, Երուսաղեմ, 1871, էջ 223-229, **James Russell**, “The Credal Poem Hawatov Xostovanim (“I Confess in Faith”) of St. Nersēs the Graceful”, *Redefining Christian Identity*, էջ 185-236.

⁶⁵ **Y. Frenkel**, “The Turks of the Eurasian Steppes”, էջ 118-220.

⁶⁶ **P. Golden**, “Khazar Conversion to Judaism”, էջ 132.

⁶⁷ Այս մասին տե՛ս **J.-P. Roux**, “Tängri”, II, էջ 215: Այս ժողովուրդների շրջանում կրակապաշտության վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս նույնի՝ “Fonctions chamaniques et valeurs du feu chez les peuples altaïques”, *Revue de l'Histoire des Religions*, 189/1, 1976, էջ 67-101, **J. Fletcher**, “The Mongols”, էջ 30՝ կարծում է, որ ոչ միայն կրակի պաշտամունքը, այլ նաեւ տիեզերական իշխանության գաղափարը եկել է արիացիներից, «որոնցից որոշներն ի վերջո գաղթել են Իրան եւ Հնդկաստան, իսկ որոշները մնացել են տափաստանում»: Նախախլամական թուրքերի մեջ զրադաշտական կրակապաշտության մասին հաղորդում է ԺԲ. դարի արաբ աշխարհագրագետ, քարտեզագիր ալ-Իդրիսին, մինչդեռ Հուրուդ ալ-ալամ-ում խոսվում է նրանց արեւապաշտության մասին. տե՛ս **J. Frenkel**, “The Turks of the Eurasian Steppes”, էջ 220: Թուրք-մոնղոլական որոշ ցեղերի մեջ մագդեականության տարածման մասին տե՛ս **J.-P. Roux**, “Les Religions dans les sociétés turco-mongols”, *Revue de l'Histoire des Religions*, 201/4, 1984, էջ 400: Թուրք-մոնղոլական կրոնների վրա զրադաշտականության հավանական ազդեցության մասին, տե՛ս **P. Golden**, *Introduction*, էջ 150: Սա կարող էր, վերջին հաշվով, արդարացնել Վարդանի փաստարկը:

վելը կամ ծնկի գալը), որոնք դրսից դիտողին կարող էին թվալ արեւի պաշտամունքի արտահայտություններ:⁶⁸ Արեւելցիս Աշուր է Աաեւ, որ մոնղոլներն ունեին «թաղիքե ինչ-որ պատկերներ՝ հմայության Ապատակով, որ դեռեւս կրում էին իրենց հետ»։ «ի պատճառս հմայութեան ունէին պատկերս ինչ թաղեայ, գոր տակաին կային ընդ ինքեանս»:⁶⁹ Նա չի մանրամասնում, թե թաղիքե պատկերներն ինչ էին ներկայացնում, բայց թաղիքի ծիսական կարեւորությունը եվրասիական քոչվորների շրջանում քաջ հայտնի է:⁷⁰

Ինչպես Աշվեց վերելում՝ մոնղոլների գաղթն իրենց հայրենիքից ներկայացված է որպես «քաղաքակրթացման» գործընթաց, որի հիմնաքարը դարձն է դեպի միաստվածություն: Ըստ Վարդան Արեւելցու՝ այս «քաղաքակրթացումը» սկիզբ առավ այն ժամանակ, երբ որոշ ողջամիտ մոնղոլներ ճանաչեցին «երկնային Աստծուն՝ ամեն ինչի Արարչին»: Հետագայում նրանց նվաճումների հաջողությունները կապվում են այս «նորահայտ» Աստծուն իրենց տված ուխտի հետ.

... կոչեցին գերկնաւորն Աստուած, որ զամենայն ինչ արար՝ յօգնութիւն անձանց, եւ ուխտեցին անս ուխտ եւ ելին ի վերայ քաղաքի միոյ փոքու եւ յափշտակեցին զնա ի տերանցն ...⁷¹

Վերոնշյալ քաղաքի գրավումն արագացրեց մոնղոլների հետագա նվաճումների շղթան՝ մինչեւ Պարսկաստան հասնելը: Ներկայացնենք եւս մի համեմատություն Միքայել Ասորու եւ Վարդան Արեւելցու միջեւ: Ըստ Միքայել Ասորու՝ «բուն» թուրքերը, այսինքն նրանք, ովքեր ապրում էին Դարպասներից այն կողմ, հոչակում էին մեկ Աստծու՝ Կոկ Տանգրիին, բայց անձանոթ էին աստվածաշնչյան կրոններին:⁷² Ասորերեն բնագիրն արծարծում է միայն թուրքերի՝ իսլամի

⁶⁸ The Secret History of the Mongols: A Mongolian Epic Chronicle of the Thirteenth Century. Translation with historical and philological comments by **Igor de Rachewiltz**. 2 vols, Leiden-Boston, Brill, 2006, էջ 33՝ ասվում է, որ Թեմուջինը (ապագա Չինգիզ Խանը) «բունցքով հարվածեց կրծքին եւ ինը անգամ ծնկի գալով դեպի արեւը, ընծայեց գինեձոն եւ աղոթք»:

⁶⁹ **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 453, **Գ. Յովսէփեան**, Յիշատակարանք, էջ 991, **Ա. Մաթեոսյան**, Հիշատակարաններ, էջ 246:

⁷⁰ Տես օրինակ՝ **P. Golden**, Introduction, էջ 147՝ նորընտիր Խանի՝ թաղիքե գորգի վրա բարձրանալու ծեսի մասին, թաղիքի վերաբերյալ տե՛ս նաեւ՝ **M. Gervers-W. A. Schlepp**, “Felt and “Tent Carts”՝ մոնղոլների ամօրյա կյանքում դրա կարեւորության մասին:

⁷¹ **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 453, **Գ. Յովսէփեան**, Յիշատակարանք, էջ 991, **Ա. Մաթեոսյան**, Հիշատակարաններ, էջ 246: Այս արտահայտության Ա. Ծիրինյանի թարգմանությունը՝ «dio terreno» [երկրային աստված] (տե՛ս նույնի “I Mongoli nei colofoni”, էջ 503) չի հիմնավորվում աղբյուրով:

⁷² **MSS**, էջ 152. **M. Dickens**, Medieval Syriac Historians, էջ 51՝ այսպես է թարգմանում. «Նրանք չունեն բանական գիտություն եւ իմաստության կրթության շտեմարան, եւ նրանք տեղյակ չեն Մովսեսի կամ մարգարեներից որեւէ մեկի մասին, ոչ էլ մեր Փրկչի, Կենարարի, Քրիստոս Աստծու զալստյան մասին: Հետեւաբար կարելի է կարծել, որ ոչ

կրոնափոխությունը, մինչդեռ հայերեն խմբագրությունները հավելում են, որ որոշ թուրքեր, ովքեր տեղաշարժվել են աշխարհի տարբեր կողմերը, ինչպես՝ Հնդկաստան, Հայաստան, Վրաստան կամ դեպի «Արեւմուտք» ընդունել են այլ կրոններ, օրինակ՝ Քրիստոնեություն կամ «կուապաշտություն»:⁷³ Կրկին, այս պատումներում կա ճշմարտության կորիզ: Բայց նրանք նաև փոխանցում են այն գաղափարը, թե քոչվորները, նստակյաց մշակույթների հետ շփման արդյունքում, ընդունեցին նոր, այն է՝ նստակյաց ժողովրդի կրոնը՝ այսպիսով մտնելով «քաղաքակիրթ» ազգերի շարքը: Հենց այս կրոնական սկզբունքային փոփոխությունն է, որ ընկած է նրանց ուսուցանող հաջողության հետևում՝ ըստ մեր հեղինակների: Վարդան Արեւելցին հատուկ չի հիշատակում Տանգրիի պաշտամունքը՝ կապված մոնղոլների «երկնային Աստծու» հետ: Այնուամենայնիվ, նրա գործածած «երկնային Աստված» արտահայտությունը «Կոկ Տանգրի»-ի (“Kök Tängri”) հայերեն լիարժեք թարգմանությունն է, եթե «կոկ»-ը (“kök”) հասկանա՞նք իր «երկնային», այլ ոչ թե «կապույտ» իմաստով:⁷⁴ Ի տարբերություն Միքայել Ասորու, ով թուրքերի հավատալիքները որակում է կրոնական ուսմունքի մասին իր սեփական ընկալման տեսանկյունից, Արեւելցին որևէ կերպ չի քննարկում մոնղոլների երկնային Աստծուն՝ այդպիսով բաց թողնելով էական մի հարց: Ո՞րն էր այդ Աստծու կապը Վարդան Արեւելցու եւ իր համայնքի Աստծու հետ: Հավանաբար, նա նկատի ուներ նույն Տանգրիի պաշտամունքը, որն, իհարկե, բնորոշ էր բազմաթիվ թուրք եւ մոնղոլական ցեղերի:

Արեւելցին ոչ միայն հավաստում է մոնղոլների մեջ միաստվածության առկայության մասին, այլև տեղյակ է աստվածային մանդատով աշխարհը նվաճելու եւ իշխելու մոնղոլական գաղափարախոսությանը:⁷⁵ Թեև նա չի քննարկում

մի առաքյալ կամ ավետարանիչ նրանց մոտ չի գնացել»: Տե՛ս նաև Դիկենսի վերլուծությունը եւ մեկնաբանությունները Միքայել Ասորու հավանական աղբյուրների մասին, հատկապես՝ հայկական, նույն տեղում, էջ 49-53: Հայերեն խմբագրությունները պարունակում են նույն առանցքային տեղեկությունը. հմմտ. **Միքայել Ասորի I**, էջ 395՝ նշված է «Կօքտանգրի», **Միքայել Ասորի II** «Կօն տանգրի»: Երկու տարբերակներում էլ այն բացատրվում է՝ որպես «կապույտ Աստված»: Մրանք, բոլորն էլ իհարկե վերաբերում են Ալթայական ժողովուրդների մեջ լայնորեն տարածված երկնային Աստված Տանգրիի պաշտամունքին: Այս հավատալիքների քննարկումը տե՛ս **J.-P. Roux**, “Tängri”, I, II եւ **P. Golden**, Introduction, էջ 149-51:

⁷³ **MSS**, էջ 156-7՝ թուրքերի իսլամադավան դառնալու մասին՝ արաբներին մատուցած ռազմական ծառայության պատճառով: Հմմտ. **Միքայել Ասորի I**, էջ 399 եւ **Միքայել Ասորի II**, էջ 392:

⁷⁴ «Կօկ» (kök) բառի տարբեր իմաստների, ինչպես նաև «Տանգրի» («Tängri») բառի հետ՝ որպես ածական դրա գործածման մասին տե՛ս **J.-P. Roux**, “Tängri” II, էջ 202-6:

⁷⁵ Մոնղոլների մեջ այս գաղափարախոսության մասին տե՛ս **Igor de Rachewiltz**, “Some Remarks on the Ideological Foundations of Chingis Khan's Empire”, Papers on Far Eastern History, 7, 1973, էջ 21-36, **Thomas T. Allsen**, “Changing Forms of Legitimation in Mongol Iran”, Rulers from the Steppe, էջ 223-41, **A. Khazanov**, “Muhammad and Jenghiz Khan”:

Աստծու՝ մոնղոլների հասկացողությունը, սակայն կատարում է սուր եւ շրջա-
դարձային մի հավելում այն մասին, թե ինչպես է նրանց բացահայտվել աշխար-
հին տիրելու աստվածատուր ճակատագիրը: Երբ մոնղոլները նվաճում են
Պարսկաստանը, ահա թե ինչ է տեղի ունենում.

...ուսան եւ ի մոզաց անտի կախարդութիւնս, եւ տուեալ հրամանս ի դիպաց
անտի, եթէ տուեալ է նոցա յԱստուծոյ զաշխարհ ամենայն, ելցեն վստահու-
թեամբ եւ ժառանգեացեն զնա:⁷⁶

Այս գաղափարը կարող է որոշ չափով հիմնված լինել Միքայել Ասորու՝ վերը
քննարկված նկարագրության վրա, թե ինչպես քոչվոր թուրքերն իրենց նախա-
հայրենիքից դուրս բախվեցին նստակյաց մշակույթների հետ՝ ընդունելով վեր-
ջիններիս կրոնները: Ինչեւէ, Վարդանը խոսում է ոչ թե կրոնափոխության, այլ
ավելի շուտ՝ հայտնության մասին: Իհարկե, մոզերը չէին եւ ո՛չ էլ պարսիկները,
որ Չինգիզ խանին եւ նրա հետնորդներին ավանդեցին աշխարհը նվաճելու
աստվածային ճակատագրի մասին, այլ սա տախտակային մշակույթի մեջ
հին արմատներ ունեցող մի գաղափար էր:⁷⁷ Միանգամայն հնարավոր է, որ մոն-
ղոլների մեջ իրենց աստվածատուր նվաճողական ճակատագրի գաղափարնե-
րի վերաբերյալ Վարդանն ուներ առաջնային՝ հենց մոնղոլական, գուցե բանա-
վոր աղբյուրներ, որոնք նա պարուրում է իր լսարանի համար հասկանալի հա-
կանառական երանգներով: Այսպիսով, հազիվ թե արժե որոնել իրական մոզերի,
որոնք Արեւելցու գրչի տակ պետք է որ վերաբերեն առհասարակ զրադաշտա-
կաններին, ովքեր պատասխանատու էին մոնղոլներին իրենց աստվածային ճա-
կատագրի հայտնության համար: Մոզերի կամ կախարդների հիշատակումը՝
Արեւելցու հակաճառական մոտեցման հետեւանք պիտի համարել:

Վերոնշյալ օրինակները ցույց են տալիս, որ մոնղոլների եւ նրանց կրոնի՝
Վարդան Արեւելցու նկարագրությունը ճշգրիտ տեղեկությունների եւ ավանդա-
կան «գրքային» գիտելիքների մի դիմամիկ խառնուրդ է: Այն համեմատելի է այլ
բազմալեզու հեղինակների վկայությունների եւ Եվրասիայի քոչվոր ժողովուրդ-
ների մասին հին կարծրատիպերի հետ: Այն, ամենայն հավանականությամբ,
պարունակում է նաեւ Արեւելցու սեփական դիտարկումները եւ առաջնային, նե-
րառյալ բանավոր աղբյուրներից հավաքագրած տեղեկություններ: Մոնղոլների
շրջանում «մոզերի եւ կախարդների» մասին Վարդանի ակնարկը մի տարր է, որն
այս բոլոր երեք շերտերի համադրման արդյունքն է: Այսպիսով՝ թուրքական եւ

⁷⁶ **Գ. Ալիշան**, Հայապատում, էջ 453, **Գ. Յովսեփեան**, Յիշատակարանք, էջ 991-992՝ ծնթ. 111 առաջին «տուեալ»-ի համար նշվում է «առեալ» տարրնթերցումը, ինչն ավելի ընկա-
լելի է, սակայն անհրաժեշտ է ուսումնասիրել ձեռագրական ավանդությունը, **Ա. Մաթե-
ուսյան**, Հիշատակարաններ, էջ 246:

⁷⁷ Տե՛ս վերը, ծնթ. 66:

մոնոդական ժողովուրդները հաճախ մեղադրվում, կամ պարզապես բնութագրվում էին որպես հմայությանը կամ կախարհությանը զբաղվողներ: Սրանք կարծրատիպային հիշատակումներ են այդ ժողովուրդների մեջ տարածված «շամանական» սովորույթների վերաբերյալ:⁷⁸ Նմանապես Կիրակոս Գանձակեցու նկարագրությանը՝ մոնոդները «չունեին կրոնական պաշտամունք» / «եւ պաշտօն ինչ ոչ գոյր առ նոսա», բայց կատարում էին հմայություն եւ կախարհություն:⁷⁹ Եթե դիտարկենք ավելի լայն՝ Մերձավոր Արեւելքի համատեքստում, Վարդան Արեւելցին եւ Կիրակոս Գանձակեցին եվրասիական քոչվորներին նման կրոնական սովորույթներ վերագրող միակ հեղինակները չեն: Ինչպես արեւապաշտության վերաբերյալ վկայակոչումը, այնպես էլ նրանց վերագրված հմայության կամ այսպես կոչված կախարհության վերաբերյալ անկախ աղբյուրների տեղեկությունների համընկնումը կարող է ճիշդ հանդիսանալ եզրակացնելու, որ նկարագրվում էին նման կամ միեւնույն երեւույթները: Մյուս կողմից, այս փաստը կարող է ապացուցել միայն այն, որ որոշակի կարծրատիպերի եւ ավանդույթների ընդհանուր շտեմարաններ, որոնց կարելի է կոչել «գրքային գիտելիքներ», հասանելի էին մատակցաց հասարակությունների հեղինակներին՝ անկախ նրանց լեզվական եւ կրոնական տարբերություններից: Սա ինքնին նշանակալի է:

Աշխարհին տիրելու աստվածային մանդատը

Թվում է՝ Վարդան Արեւելցին ոչ միայն տեղյակ էր, այլեւ դժկամությամբ ընդունում էր աստվածային հրամանով աշխարհը նվաճելու մոնոդների հավակնությունը: Զարմանալիս այն է, որ նա անվանապես չի նշում Չինգիզ խանին կամ խաներից որեւէ մեկին, այլ ակնարկում է, որ աստվածային մանդատը տրվել է առհասարակ մոնոդներին, եւ ոչ միայն չինգիզյան ճյուղին: Այս գաղափարի դեմ հեղինակը ներմուծում է նուրբ հակաճառություն՝ առաջադրելով մոզերին, կախարհներին կամ գուշակներին՝ որպես այս պատգամը ստացողներ եւ փոխանցողներ: Ակնհայտ է, որ Արեւելցու կամ ցանկացած քրիստոնյա ընթերցողի տեսանկյունից դրանք ստորադաս կարգավիճակ ունեցող կրոնական հեղինակություններ էին: Միեւնույն ժամանակ, սակայն, Վարդանը փորձում է մատուցել

⁷⁸ **John Andrew Boyle**, “Turkish and Mongol Shamanism in the Middle Ages”, *Folklore*, 83/3, 1972, էջ 177-93, **J.-P. Roux**, “Les Religions dans les sociétés turco-mongols”, *Revue de l’Histoire des Religions*, 201/4, 1984, էջ 393-420: Խազարների՝ հուդայականություն ընդունելուց հետո խազարական արքունիքից վտարված «կախարհների ու կռապաշտների» մասին տե՛ս **P. Golden**, “The Conversion of the Khazars to Judaism”, *The World of the Khazars*, էջ 132:

⁷⁹ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, էջ 271: Տե՛ս նաեւ **John Andrew Boyle**, “Kirakos of Ganjak on the Mongols”, *Central Asiatic Journal*, 8, 1963, էջ 199-214:

աստվածային այդ հրամանի կարգադրությունն իր սեփական Ս. Գրքի կատեգորիաներով: Նա բերում է սուրբգրային օրինակներ՝ մատնանշելով, որ Աստվածն անցյալում էլ է իր կամքն իրացրել ոչ այնքան «հարմար» կամ դրական տիրակալների միջոցով, ինչպիսիք են՝ Նաբուգոդոնոսորը կամ Պարսկաստանի Կյուրոս արքան: Այսպիսով, նա զուգահեռներ է անցկացնում մոնոլոլների եւ աստվածաշնչյան ժամանակներում նվաճող հին ժողովուրդների միջեւ՝ առաջադրելով այն միտքը, որ աստվածաշնչյան անցյալը կարող է եւ պետք է ուսումնասիրվի որպես ուղեցույց՝ ներկա ճգնաժամային պայմաններում Աստծու ծրագրի բացահայտման համար:⁸⁰

Եւ չէ ինչ զարմանալի, զի Նաբուգոդոնոսոր արքայ Բաբելացուց հմայիւք ել յերուսաղէմ, եւ մատնեաց տէր ի ձեռս նորա, եւ զԿիրոս Պարսիցն արքայ՝ ամեալ իւր կոչէր Աստուած եւ հրաւիրէր ի վերայ Բաբելոնի: Նաեւ ինքեանք իսկ խոստովանին զամենայն ինչ Աստուծոյ առնել եւ զինքեանս նորին հրամանաւ ասեն եկեալ:⁸¹

Վարդանի ստեղծագործության մեջ կա որոշակի հակասություն: Մի կողմից, նա բացեփրաց ընդունում է աստվածային մանդատով աշխարհը նվաճելու եւ տիրելու մոնոլոլների հավակնությունը: Մյուս կողմից, նա նվազեցնում է այդ հրահանգի «աստվածային»-ի աստիճանը՝ առաջադրելով մոգերին, կախարհներին եւ գուշակներին՝ որպես միջնորդ Աստծու եւ մոնոլոլների միջեւ: Բացեալնայեւ, մոնոլոլական նվաճումներն այլեւս իրականություն էին, որ պետք էր բացատրել: Այսպիսով, Վարդանը բուն նյութից շեղվում է դեպի Սուրբ Գիրքը՝ փոխանցելով այն միտքը, որ իր Աստվածը եւ սուրբգրային նախադեպերի պատմությունը լավագույն հարացույցն են ընթացիկ իրադարձություններն ըմբռնելու համար:⁸² Աստված տվել է մեզն հրամաններ Նաբուգոդոնոսորին եւ Կյուրոսին, եւ

⁸⁰ **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 453, **Գ. Յովսէփեան**, Յիշատակարանք, էջ 992, **Ա. Մաթեոսյան**, Հիշատակարաններ, էջ 246:

⁸¹ Նման տեղեկություն է հաղորդել 1237 թ. Մոնոլոլիայում Մոնգի պատվիրակ Պենգ Դայան. «Ինչ վերաբերում է նրանց ամենօրյա արտահայտություններին, նրանք միշտ ասում են. «Վատահեղով հավերժական երկնքի գործությանը եւ կայսեր պաշտպանողական բարեբախտությանը», մեջբերումն ըստ՝ **Thomas T. Allsen**, “Changing Forms”, էջ 223: Ըստ Ալսենի՝ սա ենթադրում է, որ մոնոլոլական կայսերական գաղափարախոսությունը խորապես թափանցել էր շարքային զինվորների մեջ:

⁸² Վարդան Արեւելցին հեղինակել է սուրբգրային մեկնություններ, ինչպես՝ «Մեկնութիւն Երզոց երգոյն», «Մեկնութիւն Սաղմոսաց» եւ «Մեկնութիւն Դանիէլի»: Շուրջ 1244-1246 թթ. նա Հեթում Ա արքայի պատվերով գրել է «Լուծմունք ի Սուրբ Գրոց» («Ժողանք») աշխատությունը. տե՛ս **R. Thomson**, “Historical Compilation”, էջ 127-8, Փ. **Անթապյան**, Վարդան Արեւելցի. կյանքն ու գործունեությունը, գիրք Ա, Երեւան, 1987, գիրք Բ, Երեւան, 1989: Այս հոդվածը գրելիս «Ժղանք»-ից օգտվելու հնարավորություն

չպետք է զարմանալ, եթե ներկա ժամանակներում այդպիսի հրահանգ տրվում է մոնղոլների:

Չարմաղանը եւ մոնղոլական պրոպագանդան

Հեռավոր ժամանակների եւ վայրերի պատմական անցքերից, որտեղ աստվածաշնչյան պատմության եւ մոտակա անցյալի միջեւ սահմանազատումն աղոտանում է, Արեւելցին սահուն կերպով անցնում է մոնղոլների կողմից Հայաստանի նվաճման իրական նկարագրությանը: Այստեղ եւս փաստական տեղեկությունը եւ վիպային տարրը միահյուսված են: Նա նշում է, որ մոնղոլներին գլխավորել են երեք առաջնորդներ, որոնցից տալիս է միայն Չարմաղանի անունը:⁸³ Ըստ Վարդանի՝ վերջինս կոչ է անում իր հայրենակիցներին վարել խաղաղ քաղաքականություն՝ մեծ ավերածություններից հետո. «գի մի բարկացի Աստուած», մինչդեռ նրա հակառակորդներն առարկում էին՝ պնդելով, որ թշնամիներից որեւէ մեկը չպետք է ողջ մնա, որովհետեւ «յաջող է մեզ Աստուած»:⁸⁴ Արդյունքում, հաջորդ գիշեր երկու ռազմատենչ առաջնորդները, որոնց Գրիգոր Ակներցին կոչում է Բենալ եւ Մուլար անուններով,⁸⁵ մահանում են քնած ժամանակ, իսկ Չարմաղանն արթնանում է ողջ-առողջ, եւ այսպիսով՝ նրա քաղաքական գիծը հաղթում է: Նա հրաման է ստանում «Խանից» (որի անունը նույնպես չի նշվում, բայց ենթադրաբար Ուզեդեյն է) այդ քաղաքականությունն իրագործել հարկահավաքությանը, եւ հաստատվում է՝ որպես մոնղոլների միանձնյա առաջնորդ: Վարդանն այս որոշումն արդարացնում է որպես «Աստծու կամք»՝ այսպիսով ընդունելով Չարմաղանի ղեկավարության կրոնական աստղծր:

Ակնհայտ է, որ Արեւելցին հենվում է չարմաղանամետ ինչ-որ աղբյուրի կամ աղբյուրների վրա, որոնք հայտնի են եղել նաեւ Կիրակոս Գանձակեցուն եւ Գրիգոր Ակներցուն, եթե իհարկե վերջինս չի օգտվել Արեւելցուց: Կարելի է ենթադրել Վանական Վարդապետի կորած *Պատմությունը*՝ որպես հնարավոր

չունեի: Ցանկալի կլիներ բացահայտել վերջինիս եւ Հիշատակարանի հնարավոր ընդհանրությունները:

⁸³ Հայաստանի նվաճման մեջ Չարմաղանի ունեցած դերի մասին տե՛ս **B. Dashdondog**, *The Mongols and the Armenians*, էջ 50-5, եւ **T. May**, “The Conquest and Rule of Transcaucasia,” հատկ.՝ էջ 137-9: Մեյը տարակուսանք է հայտնում Չարմաղանին այդչափ դրական նկարագրելու շարժառիթների վերաբերյալ, սակայն չի անդրադառնում Գրիգորի աղբյուրներին, որոնց շարքում է նաեւ Վարդանի Հիշատակարանը:

⁸⁴ **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 453, **Գ. Յովսեփեան**, Յիշատակարանք, էջ 993, **Ա. Մաթեոսյան**, Հիշատակարաններ, էջ 246:

⁸⁵ **Գրիգոր վրդ. Ակներցի**, Պատմութիւն թաթարաց, հրատ.՝ Նորայր Պողոսյան, Երուսաղէմ, 1974, էջ 23: Հիշատակարանի եւ «Պատմութիւն ազգին նետողաց»ի միջեւ ընդհանրությունների մասին տե՛ս **Ն. Ակինեան**, «Գրիգոր քահանայ Ակներցի պատմագիր Թայթարաց պատմութեան», Հանդէս ամսօրեայ, 72, 1948, էջ 387-403: Որոշ էական տարբերություններ երկու տեքստերի միջեւ մատնանշվում են՝ **Z. Pogossian**, “Armenians, Mongols”, էջ 186-8:

ընդհանուր աղբյուր նրանց բոլորի համար:⁸⁶ Վարդան Արեւելցի (եւ նրա աղբյուրը) հավանորեն պատմում էին Փոքր Ասիայի նվաճմանը մասնակցող մոնղոլ ռազմական առաջնորդների միջեւ իրական տարակարծության մասին, բայց այս դրվագի եւ նրանում առկա հրաշային տարրի հիմնական նպատակը Չարմաղանին գովաբանելն է ու նրա հաջողություններն Աստծուն վերագրելու միջոցով Հայաստանի նվաճումն արդարացնելը: Ավելին, ըստ Արեւելցու, Չարմաղանի՝ «հարկեր հանուն խաղաղության» քաղաքականությունը վավերացվել է Աստծու կողմից: Հետագայում՝ նույն ձեռով էլ կարելի էր արդարացնել հայ իշխանների հպատակությունը եւ հարկատվությունը մոնղոլներին՝ որպես ո՛չ թե թուլության նշան, այլ Աստծու ավելի մեծ ծրագրի հետ համակերպվելու հնար:

Այս բազմաշերտ, բազմաբովանդակ բնագրի բարդությունը սրանով չի ավարտվում. հեղինակը վերադառնում է վախճանաբանական տեսակետին, որով սկսել էր մոնղոլների մասին իր պատմությունը, երբ վկայակոչում է նրանց արշավանքների թվականը՝ այն հաշվարկելով ըստ Սուրբ Ներսեսի *տեսիլի*՝ ի վնաս ճշգրիտ ժամանակագրության:⁸⁷ Այնուհետեւ հաջորդում են պատմականորեն հավաստի տեղեկություններ մոնղոլական արշավանքների իրական ժամանակի, «երկրի իշխանների»՝ նրանց հնազանդվելու եւ հարկային պարտավորությունների մասին: Արեւելցի չի մոռանում նշել, որ հոգեւորականներն ազատված էին հարկերից: Ստեղծագործությունն ավարտվում է երկարաշունչ ողբով: Այս վերջին հատվածում բերվում են խորհրդանշական զուգահեռներ Աստվածաշնչից, ինչպես՝ Երեմիայի ողբը Երուսաղեմի գրավման համար՝ համալրելու ժամանակի պատմության Վարդան Արեւելցու պատկերացումը՝ որպես սուրբգրային պատմությունների շարունակություն:

Վարդան Արեւելցու Հիշատակարանը եւ Գրիգոր Ակներցի

Հիշատակարանը մեծ ազդեցություն է թողել Գրիգոր Ակներցու «Պատմութիւն ազգիս նետողաց» աշխատության վրա:⁸⁸ Իր *Պատմության* առաջին գլխում

⁸⁶ Վանական Վարդապետի՝ կորած համարվող Պատմության եւ հետագա հեղինակների կողմից դրա գործածման մասին տե՛ս Հ. Ռսկեան, Յովհաննէս Վանական եւ իւր դպրոցը (Վարդան Արեւելցու՝ «Հաւաքումն պատմութեան» երկը գրելիս դրա վրա հիմնվելու մասին՝ էջ 55): Ն. Ակինյանը ենթադրում է, որ Գրիգոր Ակներցին նույնպես կարող էր օգտված լինել Վանականի Պատմությունից. տե՛ս «Գրիգոր քահանայ Ակներցի», էջ 403՝ նա հորդորում է ավելի խորը ուսումնասիրել այս խնդիրը:

⁸⁷ Վարդանը կրկին վկայակոչում է Սուրբ Ներսեսի *Տեսիլի* այն նույն տարբերակը, համաձայն որի այս իրողությունները տեղի էին ունենալու Ներսեսի մահից «700 տարի անց». տե՛ս ՄՄ 1912, թ. 313բ: Եթե սուրբ Ներսեսը մահացել է մոտ 373 թ., ապա *Տեսիլը* պետք է խմբագրված լինի մոտ 1073 թ. եւ, այսպիսով, հնարավոր է՝ որպես հակազդեցություն Մանազկերտի ճակատամարտին: Այս բնագիրն, իհարկե, հետագա ուսումնասիրման կարիք ունի:

⁸⁸ Մոնղոլների աշխարհագրության Ակներցու նկարագրությունը բառացիորեն հետեւում է Արեւելցուն, ի վերջո երկուսն էլ հիմնված են Անանիա Ծիրակացու Աշխարհացույցի վրա.

Ակներցին գրեթե բառացիորեն զետեղել է մոնոլոգների ծագումնաբանության, աշխարհագրության եւ բնօրրանի տեղակայման վերաբերյալ Արեւելցու նկարագրությունը: Նա հետեւում է Արեւելցուն նաեւ մոնոլոգների «նախնական» կրոնը նկարագրելիս՝ ներառյալ հետագայում միակ Աստծու ճանաչումը: *Հիշատակարանի* մյուս մասերը սահունորեն ընդգրկված են Ակներցու *Պատմության* մեջ, երբ դրանք համապատասխանում են ընդհանուր շարադրանքին: Օրինակ՝ մոնոլոգական առաջապահների պատմությունը, եւ թե ինչպես են նվաճում պարսկական մի փոքր քաղաք ու այնուհետեւ օգնական զորք խնդրում հետեւում մնացած իրենց ազգակիցներից, ներառված է երրորդ գլխում՝ Վրաստանում եւ Հայաստանում մոնոլոգական արշավանքների վերաբերյալ պատմական այլ տվյալների հավելմամբ:⁸⁹ Չարմաղանի եւ Արա երկու գիւնակիցների միջեւ տեղի ունցած հակառակությունը զետեղված է չորրորդ գլխում, բայց կրկին ավելացված են որոշ մանրամասներ: Այս հավելումները կարող են լինել Ակներցունը, կամ էլ վերցված են ավելի հին ընդհանուր աղբյուրից, օրինակ՝ Վանական Վարդապետի կորած *Պատմությունից*: Այնուամենայնիվ, այս վերջին ենթադրությունը դժվար է ապացուցել: Ասվում է, որ Չարմաղանը մեկնել է Չինգիզ խանի արքունիք՝ դեպքի մասին զեկուցելու: Խանը դրվատում է Արա խաղաղարար քաղաքականությունը՝ համարելով «Աստծու կամքի» իրագործում: Ավելին, Չինգիզը Չարմաղանին է «նվիրաբերում» իր «բարեսեր եւ շնորհալի կնոջը՝ Ալթանա խաթունին»:⁹⁰

Վարդան Արեւելցու եւ Գրիգոր Ակներցու խնդրո առարկա գրվածքներում կան այլ ուշագրավ տարբերություններ: Դրանցից որոշները պայմանավորված են Ակներցու՝ ճոր տեղեկությունների հավաքմամբ եւ մշակմամբ, ինչպես վերոբերյալ օրինակներում, մյուսները ենթադրում են մոտեցման փոփոխություն: Շատ դեպքերում Գրիգորը Ակներցին, որն իր երկն ավարտել է 1273թ. Կիլիկյան Հայաստանի նշանավոր Ակների վանքում,⁹¹ Վարդանի տեղեկությանն ավելացնում է դրական բեկում, ինչպես երեւում է Չարմաղանի մասին դիպվածի նկարագրությունից: Իհարկե, մոնոլոգների բովանդակության ու թալանի դրվագները նույնպես մաս են կազմում այս աշխատության:⁹² Երկու աղբյուրների ավելի խորը համեմատությունն, անշուշտ, ի հայտ կբերի խոսում մանրամասներ այն մասին, թե

տե՛ս **Գրիգոր վրդ. Ակներցի**, Պատմություն թաթարաց, էջ 18-19: Գրիգոր Ակներցու՝ Վարդանի Հիշատակարանի վրա հիմնվելու մասին տե՛ս **Հ. Ոսկեան**, Յովհաննես Վանական, էջ 118-119:

⁸⁹ **Գրիգոր վրդ. Ակներցի**, Պատմություն, էջ 20-21:

⁹⁰ Նույն տեղում, էջ 25-26:

⁹¹ **Ն. Ակինեան**, «Գրիգոր քահանայ Ակներցի», էջ 389: Նշանակալի է, որ ձեռագիրը բովանդակում է նաեւ Միքայել Ասորու *Ժամանակագրությունը*, որին հաջորդում է 1219-1246 թթ. հայոց պատմության համառոտ ժամանակագրություն, այնուհետեւ սկսվում է Գրիգոր Ակներցու երկը:

⁹² **Գրիգոր վրդ. Ակներցի**, Պատմություն, էջ 26-27, էջ 38-39 (Գերեթնի վանքի վանահայր Ստեփաննոսի նահատակությունը):

ինչպես է մոնղոլների կերպարը զարգացել հավակյան աղբյուրներում եւ թե՛ ինչպես է ազդվել քաղաքական եւ ուսման շահերի փոփոխությանը զուգընթաց: Այդ խնդրի իրագործումը դուրս է սույն հոդվածի սահմաններից, սակայն հետեւյալ մի քանի օրինակներն ամրապնդում են այս երեւոյթի վերաբերյալ մեր գնահատականը: Վարդան Արեւելցիին առանց որեւէ հետագա մեկնաբանութեան ճշում է, որ մոնղոլներն «ընդ արեգակն զարմանային»: Ակնեցին չի բավարարվում այսպիսի սեղմ ծանուցմամբ եւ հավելում է. «Բայց ընդ արեգակն զարմանային, որպէս ընդ զարութիւն ինչ Աստուածային» (ընդգծումը մերն է. Զ. Պ.), այսպիսով, «առարկայապաշտ» մոնղոլներին վերածելով այնպիսի մի ժողովրդի, որն առարկայի հետեւում պաշտում է «աստվածային զորութունը»:⁹³

Մոնղոլների՝ Աստծուն ճանաչելը ներկայացված է որպէս շատ ավելի դրամատիկ/նշանակալի իրողութուն՝ ներգրավելով ամբողջ ժողովրդին, այլ ոչ միայն նրանց միջից մի քանի խելամիտ մարդկանց: Ավելին, նրանց Աստվածը նկարագրվում է առավել քրիստոնեացված եզրերով. «Եւ ապա յանկարծակի ուշաբերեալք, յոյժ նեղեալք ի թշուառական եւ աղքատ կենացն, կոչեցին յօգնութիւն զԱստուած՝ զարարիչն երկնի եւ երկրի, եւ ուխտեցին մտա ուխտ մեծ կալ ի հրամանս նորա»:⁹⁴ Սակայն, Գրիգոր Ակներցու հաղորդած ամենատպալորիչ դրվագն այն է, որ նկարագրված է, թե Չինգիզ խանն ինչպէս է ստացել եւ հաստատել «Յասախը»՝ մոնղոլների ավանդական օրենքը:⁹⁵ Աստծու հրեշտակը ուկեփետտոր արծվի կերպարանքով հայտնվում է Չինգիզ խանին, ով նետաձիգի հեռավորութեամբ կանգնում է «արծվանման հրեշտակի» առջեւ՝ ստանալով Աստծու հրամաններն իր սեփական լեզվով. «Եւ ապա արծիւն ըստ նոցա լեզուին ասաց զամենայն հրամայեալսն Աստուծոյ: Եւ այս է արեւնքն Աստուծոյ, որ եղեալ է ի նոսայ, զոր անուանեալ են իրեւ[ա]նքն իասախ»:⁹⁶ Ակներցու պատմութեան մեջ Չինգիզ խանը հանդես է գալիս որպէս մի մարգարե, ով ստացավ «Յասախը»՝ աստվածային օրենքը, անմիջապէս Աստծուց:

Այս նկարագրութունը կարող էր նրա ընթերցողների մտքում միտումնավոր կերպով արթնացնել Օրենքը ստացող Մովսէսի կերպարը: Բայց կասկած չկա,

⁹³ Նույն տեղում, Պատմութիւն, էջ 21:

⁹⁴ Նույն տեղում, էջ 19:

⁹⁵ Այն հարցերը, թե «Յասախ»ը («Բասախ») կոնկրետ ինչին է վերաբերում, այսինքն՝ ամբողջական օրենսգրքին, այսպէս կոչված Մեծ Յասախին կամ Յասախին, կամ ինչ տեսակի օրենք է եւ այլն, դուրս են այս հոդվածի շրջանակներից: Իմ նպատակն է քննել հայ հեղինակի տեղեկութունն այն մասին, թե ինչպէս էին մոնղոլները ստացել այս օրենքը եւ թե՛ դա ինչ կրօնական կամ այլ տիպի նշանակություն ունէր նրանց համար: Յասախի քննարկումը, ինչպէս նաեւ՝ Գրիգոր Ակներցու վկայութեան համադրումն այլ աղբյուրների հետ տե՛ս **Denise Aigle**, “Le grand jasaq de Genghis-Khan, l’empire, la culture mongole et la sharī‘a”, *Journal of the Economic and Social History of the Orient*, 47/1, 2004, էջ 31-79, **David O. Morgan**, “The ‘Great “yāsā” of Chingiz Khān’ and Mongol Law in the Ilkhānate”, *Bulletin of the Oriental and African Studies*, 49/1, 1986, էջ 163-176:

⁹⁶ Գրիգոր վրդ. Ակներցի, Պատմութիւն, էջ 19:

որ Ակներցին ակնարկում է նաև Մուհամեդին և հակաճառում այն իսլամական ավանդությանը, ըստ որի աստվածային հայտնությանն է օրենքին արժանացած վերջին մարգարեն Մուհամմեդն էր, որը ստացավ Ղուրանը Աստծու հրեշտակից: Այս միտումնավոր շարադրանքը հատկապես կարևոր էր մամլուքների և մոնղոլների միջև գաղափարական պատերազմի պայմաններում, որի ընթացքում հայերն ակնհայտորեն մոնղոլների կողմնակիցներն էին: Գրիգորի հակաճառությունն ուղղված էր ինչպես Մուհամմեդի, այնպես էլ մուսուլմանների Օրենքի՝ Ծարիաթի դեմ՝ հակադրելով այն աստվածային հայտնությամբ մոնղոլներին տրված Յասախին:⁹⁷

Իր Պատմության մեջ Ակներցին ընդգծում է նաև մոնղոլների ինքնագիտակցությունն՝ աստվածային կամքի վրա հիմնված իրենց անվանների վերաբերյալ: Այս փաստը նրան հնարավորություն է ընձեռում՝ արդարացնելու հայ և վրաց իշխանների հպատկությունը մոնղոլներին. «յորժամ իմացան իմաստուն իշխանքն Հայոց և Վրաց, թէ Աստուած է տուեալ զարութիւն և յաղթութիւն անցայ առնուլ զաշխարհս մեր, ապա գործ է սեր կապեալ գնացին ի հնազանդութիւն Տաթարիւն, և խոստացան տալ հարկս»:⁹⁸ Այդուհանդերձ, ըստ Ակներցու՝ մոնղոլներին տրված աստվածային իշխանության պատճառը ժամանակակիցների մեղքերն էին, ինչպես տասնամյակներ առաջ համարում էին Վարդան Արեւելցին, կաթողիկոս Կոստանդին Բարձրաբերդցին և այլք:⁹⁹

Եզրակացություններ

Սույն հոդվածի հիմնական նպատակն էր վերլուծել մոնղոլների մասին ամենավաղ նկարագրություններից մեկը՝ պատմագիր, աստվածաբան, ուսուցիչ և ազդեցիկ կրոնական գործիչ Վարդան Արեւելցու՝ 1248 թ. գրված *Հիշատակարանը*: Այն մոնղոլներին Հայաստանի և համաշխարհային պատմության շրջա-

⁹⁷ Մոնղոլների և մամլուքների միջև գաղափարական պատերազմը, որն իրականացավ հատկապես Այն-Ջալութի 1261 թ. և Աբուլուստայնի (Էլբիստան) 1277 թ. ճակատամարտերի միջև ընկած ժամանակահատվածում, մանրամասն վերլուծված է՝ **Reuven Amitai-Preiss**, *Mongols and Mamluks: The Mamluk-Ilkhanid War 1260-1281*, Cambridge, Cambridge University Press, 1995: Հատկապես կարևոր է, թե այս ընթացքում առնականման հոգեբանական և գաղափարական առանձնահատկությունները ինչպես շահարկվեցին երկու կողմերում: Մոնղոլական կողմը Բեյբարսին դիմում էր արհամարհանքով որպես «Մերաստիայում գնված» մի ստրուկի, ով ապստամբել էր ընդդեմ աշխարհի տիրակալի՝ դուրս գալով իլխան Աբաղայի դեմ (նույն տեղում, էջ 121): Սուլթանն իր հերթին վկայակոչում էր մուսուլմանական օրենքը՝ կոչելով այն «մեր Յասա», որը նա հռչակում էր ավելի մեծ, քան Չիգիզ խանի Յասան (նույն տեղում, էջ 122): Ծարիաթի և Յասայի հակադրության/համեմատության մասին տե՛ս **D. Aigle**, “Le grand jasaq”, էջ 36-8:

⁹⁸ **Գրիգոր վրդ. Ակներցի**, Պատմություն, էջ 23:

⁹⁹ Նույն տեղում, էջ 20:

նակներում դիտարկելու եւ մեկնաբանելու վաղագույն փորձերից մեկն է: Արեւել-ցին ձգտել է պարզաբանել նրանց ծագումնաբանությունն ու աշխարհագրու-թյունը, կրոնը, իրենց հայրենիքից զանգվածային տեղաշարժի դրդապատճառ-ները եւ ուսումնական հաջողությունների հիմքը: Այս նպատակին հասնելու հա-մար, մատենագիրն օգտվել է տարաբնույթ մի շարք աղբյուրներից՝ սկսած Սուրբ Ներսեսին վերագրվող վախճանաբանական/ապոկալիպտիկ տեսիլներից մին-չեւ Միքայել Ասորու *Ժամանակագրությունը* եւ Անանիա Թիրակացու *Աշխար-հացույցը*: Հնարավոր է, որ նա ազդվել է իր ուսուցիչ Վանական Վարդապետի՝ ցայժմ կորած համարվող *Պատմությունից*, սակայն այս առումով *Հիշատակա-րանը* կարիք ունի հետագա ուսումնասիրման: Ավելի քան հավանական է, որ հե-ղինակը հիմնվել է նաեւ մեզ անհայտ բնագրերի, ինչպես նաեւ՝ բանավոր հա-ղորդումների եւ իր սեփական դիտարկումների վրա:

Հիշատակարանի հետազոտությունից բխում են հետեւյալ եզրակացու-թյունները. Վարդան Արեւելցին օգտագործել է համալիր պատկերներ, որոնք ավելի վաղ աղբյուրներում առնչվում էին Ասիախալսմական թուրքերի, երբեմն էլ՝ սելջուկների հետ: Դրանք ներառում են մոնղոլների աստվածաշնչյան ծննդա-բանությունն ու աշխարհագրությունը, «նետողաց ազգ» անվանումը, ելքը Հյու-սիս-Արեւելքում գտնվող իրենց հեռավոր «բուն» հայրենիքից, նրանց մեջ արեւա-պաշտության ինչ-որ տեսակի առկայությունը, մեկ Աստծու՝ հավանաբար Տանգ-րիի պաշտամունքը, ինչպես նաեւ՝ շամանների դերը, որոնք Վարդանի գրչի տակ դարձել են կախարդներ եւ մոգեր: Ավելին, այդ կանխակալ պատկերացում-ներից որոշները հանդիպում են ոչ միայն հայկական բնագրերում՝ ամենամատ-չելի աղբյուրները, որոնք ըստ երեւույթին գործածել է Արեւելցին, այլեւ լայնորեն տարածված կարծրատիպեր էին Եվրասիական տափաստանի քոչվորներին նկարագրող Մերձավոր Արեւելքի հեղինակների, այսինքն՝ նատակյաց մշա-կույթների ներկայացուցիչների շրջանում՝ անկախ այդ հեղինակների կրոնական եւ լեզվական պատկանելիությունից: Հետեւաբար սա նշանակում է, որ Վարդա-նը, եւ հավանաբար նրա մյուս ժամանակակիցները կարող են լավագույնս ըն-կալվել ավելի լայն համատեքստում, այլ ոչ միայն բուն հայկական ավանդության մեջ: Հանդիպելով քիչ հայտնի կրոն ունեցող նոր ժողովրդի, որի արշավանքներն ավերածություններ գործեցին իր հայրենի երկրում եւ այլուր, Արեւելցին դիմում է նաեւ վախճանաբանական սցենարի, որի դրդապատճառը նա համարում է ժա-մանակակիցների մեղքերը: Այնուամենայնիվ, նա տեղյակ էր նաեւ մոնղոլների աստվածատուր աշխարհակալության գաղափարախոսությանը, որով նրանք բացատրում էին իրենց՝ անհավատալի արագությամբ իրագործած նվաճումնե-րը: Արեւելցին ո՛չ հերքում, ո՛չ էլ անտեսում է այս հանգամանքը, այլ օգտագոր-ծում է՝ մոնղոլների նվաճումները եւ հայոց իշխանների հպատակությունն արդա-րացնելու համար: Այսպիսով, խնդրո առարկա *Հիշատակարանը* վկայում է, որ նվաճված ժողովուրդները, տվյալ դեպքում՝ հայերը, յուրացրել եւ զարգացրել են

քաղաքական գերիշխանության եւ աշխարհակալության մոնոլոգական գաղափարները՝ դրանք օգտագործելով իրենց օրակարգերի պահանջներին համապատասխան:

Այսպիսով, Վարդան Արևելցու այս սեղմ *Հիշատակարանը* պարունակում է բազմատեսակ եւ խիստ ուշագրավ տեղեկություններ միջնադարյան հեղինակների եւ նրանց ընթերցողների աշխարհայացքի, ինչպես նաեւ Կիլիկյան Հայաստանի միջմշակութային կապերի եւ փոխհարաբերությունների մասին, բացի ռազմաքաղաքական կամ զուտ պատմական տվյալներից: Կասկածից վեր է, որ այն մոնոլոգների վերաբերյալ մի կարեւոր աղբյուր է եւ արժանի է պատմաբանների կողմից արդյունավետ օգտագործման:

ԱՄՓՈՓՈՒՄ

Լեւոն Տեր-Պետրոսյանը մեծ ավանդ ունի հայ եւ ասորական բանասիրության ու պատմության բազմաթիվ բնագավառներում, մասնավորապես՝ հայ-ասորական փոխառնչությունների ուսումնասիրման մեջ: Կիլիկյան շրջանի հայ-ասորական գրական աղերսների վերաբերյալ նրա մեծագրությունը մնում է հիմնարար աշխատություն այս գիտակարգում:¹⁰⁰ Սույն հոդվածով ցանկանում եմ հարգանքի տուրք մատուցել նրան՝ որպես Կիլիկյան Հայաստանի պատմության եւ հայ-ասորական հարաբերությունների հետազոտողի, քննելով այս ոլորտներին առնչվող առանձնահատուկ մի թեմա: Ներկա ուսումնասիրության ուշադրության կենտրոնում է կարճատև, սակայն համալիր մի աղբյուր՝ ԺԳ. դարի սկանավոր հայ աստվածաբան, պատմագիր եւ մանկավարժ Վարդան վարդապետ Արևելցու *Հիշատակարանը* մոնոլոգների մասին, որը գրվել է 1248 թ., երբ Արևելցին գտնվում էր Կիլիկիայում եւ մասնակցում էր Միքայել Ասորու *Ժամանակագրության* հայերեն թարգմանությանը:

ZARUHI POGOSSIAN

University of Florence

VARDAN AREWELC‘I’S COLOPHON ON THE MONGOLS AND ITS SOURCES

Keywords: Vardan Arewelc‘i, colophons, Michale the Syrian, Mongols, Seljuqs, eschatology, Mongol religion.

Levon Ter-Petrosian has contributed to numerous fields within Armenian and

¹⁰⁰ **L. Տեր-Պետրոսյան**, Ասորիների դերը Հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԲ–ԺԳ դարերում, Վենետիկ–Ս. Ղազար, 1989:

Syriac philology and history, with an emphasis on Armeno-Syriac interactions. Ter-Petrossian's book on Armeno-Syriac literary connections during the Cilician period remains fundamental for this area of enquiry. In this paper I wish to make a tribute to his scholarship both on the Armenian Cilician history and Armeno-Syriac connections by examining a specific source relevant to these areas of study. This article will draw attention to a short but complex text – a *Colophon* – written by the thirteenth-century renowned Armenian theologian, historian and monastic teacher Vardan Vardapet Arewelc'i on the Mongols. It was penned in 1248 while Vardan resided in Cilicia and was involved in the translation of the *Chronicle* of Michael the Syrian to Armenian. The *Colophon* was, indeed, appended to that translation. The article will trace how Michael the Syrian's representation of the Seljuqs was used by Vardan Arewelc'i to describe the Mongols. It will also explore a thirteenth-century version of the *Vision of St. Nersēs the Great* as another important source of inspiration for Vardan Arewelc'i's *Colophon*.

ERICH RENHART

Universität Graz

**DIE SYRISCHE HANDSCHRIFT NR. 9 DES MESROP
MASCHTOTS INSTITUTS**

Eine kodikologische Übung zum Studium syrischer Handschriften

Schlüsselwörter: Syrische Studien, Manuskripte, Kodikologie, Wasserzeichen, Fragmente.

Einleitung

Das schlicht als eine »Einführung« bezeichnete Handbuch »Comparative Oriental Manuscript Studies« (COMSt)¹ muss hinsichtlich der Kataloge syrischer Handschriften noch in seinem Erscheinungsjahr 2015 festhalten: »many of these catalogues are mere inventories, which list the main texts with minimal information on the manuscripts themselves, and they only rarely meet the standards of cataloguing as far as identification of texts, codicology and paleography are concerned«.² Als demgegenüber herausragend werden die jüngsten Handschriftenbeschreibungen von Sebastian Brock und Lucas van Rompay³ oder von Françoise Briquel-Chatonnet und Muriel Debié⁴ hervorgehoben. Ihr Proprium liegt »in the attention paid to the history of the manuscript, as it takes into account the material aspects of the manuscripts, both palaeographical and codicological«.⁵ Freilich hat es auch schon zuvor Kataloge mit ähnlicher Ausrichtung gegeben, jedoch nur sehr vereinzelt und kaum in einer umfassenden Systematik angelegt.

¹ A. BAUSI et alii (Ed.), *Comparative Oriental Manuscript Studies. An Introduction*. Hamburg 2015 [= COMSt Handbook]. Siehe dazu auch meine Rezension in: *Orientalistische Literaturzeitung* 112,1 (2017) 93-99.

² A. BINGGELI, *Catalogues of Syriac manuscripts*, in: *COMSt Handbook* 502-504, hier 503.

³ S. P. BROCK – L. VAN ROMPAY, *Catalogue of the Syriac Manuscripts and Fragments in the Library of Deir al-Surian, Wadi al-Natrun (Egypt)*. Louvain: Peeters (*Orientalia Lovanensia Analecta* 227), 2014; S. P. BROCK, *Catalogue of Syriac Fragments (New Finds) in the Library of the Monastery of Saint Catherine, Mount Sinai*. Athens: Mount Sinai Foundation, 1995.

⁴ F. BRIQUEL-CHATONNET – M. DEBIÉ (Ed.), *Manuscripta Syriaca. Des sources de première main*. Paris: Geuthner (*Cahiers d'études syriaques* 4), 2015; F. BRIQUEL-CHATONNET, *Manuscrits syriaques de la Bibliothèque nationale de France (nos 356-435, entrés depuis 1911), de la bibliothèque Méjanes d'Aix-en-Provence, de la Bibliothèque municipale de Lyon et de la Bibliothèque nationale et universitaire de Strasbourg. Catalogue*. Paris: Bibliothèque nationale de France, 1997.

⁵ BINGGELI, *COMSt Handbook* 503.

Wenn wir darangegangen sind, einen Katalog der Syriaca des Matenadaran zu erstellen,⁶ so kann dies nur unter Berücksichtigung der international sich abzeichnenden Standards geschehen, wie sie etwa im *COMSt-Handbuch* diskutiert und dargelegt sind. Dazu gehört somit nicht nur die sorgfältige Erfassung des Textes, sondern auch das Wahrnehmen des Buches (oder auch nur eines Fragmentes) als kulturelle Äußerung. Denn ein handgeschriebenes und damit in der Regel auch altes Buch trägt die Spuren der historischen Stunde seines Entstehens und seines späteren Geschickes an sich, die es so gut und umfassend wie möglich zu erkennen gilt.

Selbstverständlich kann das auf unterschiedlichem Wege erfolgen. Die Beschreibung innerhalb eines Kataloges kann nicht alle denkbaren Aspekte in derselben Tiefe erschließen. Für gewöhnlich ist das Besondere eines Buches, sein Proprium, jedoch gut erkennbar. Und manchen Aspekten, die in der einen Handschrift »formal« zu erledigen sind, kommen in einer anderen Handschrift besonders aussagefähiges Gewicht zu (etwa wenn diese illuminiert sind oder mit einem besonderen Einband versehen oder eigene Buchstabenformen aufweisen etc.). Neben einer ganz allgemeinen Beschreibung dessen, was mit einem Buch vor uns liegt, gilt es, dessen »individuellen Charakter«, vielleicht gar seinen »Charme« oder seine »Poetik«⁷ zu entdecken, jedenfalls dessen vereinnehmendes oder eher abweisendes Couleur.⁸

Die folgende Darstellung bietet einen Einblick in die Werkstätte des Handschriftenbeschreibers. Dabei wird auf ein paar grundlegende kodikologische Aspekte hingewiesen, die erläutern sollen, »wie wir es machen« – ein Weg innerhalb des weiten Spektrums der Möglichkeiten.⁹ Als Anschauungsbeis-

⁶ Die Arbeiten zum Katalog haben vor nunmehr zehn Jahren begonnen, sie wurden aber immer nur kurzzeitig und en passant durchgeführt. Erst seit 2019 können wir etwas konzentrierter an der Fertigstellung des Kataloges arbeiten, wobei wir im Matenadaran sehr behilfliche und entgegenkommende Partner gefunden haben. Am Ende wird eine deutschsprachige Version des Kataloges stehen: E. A. ISHAC – E. RENHART – A. B. SCHMIDT, Die syrischen Handschriften und -fragmente des Mesrop Mashtots Instituts für Alte Handschriften »Matenadaran«, Yerevan. Katalog [Louvain] und eine armenisch-sprachige Version, welche in Yerevan erscheint.

⁷ Vgl. dazu K. S. HEAL, Catalogues and the poetics of Syriac manuscript cultures, in: Hugoye. Journal of Syriac Studies 20 (2017) 375-417 [= Rezensionsartikel zu BROCK – VAN ROMPAY, Catalogue Deir al-Surian].

⁸ Es gibt ja nicht nur die ästhetisch ansprechenden und »schönen« Handschriften, es sind ja auch jene sorgfältig zu beschreiben, die verschmutzt sind, teilweise verbrannt, verstümmelt, die unangenehm riechen usw.

⁹ Der Verfasser arbeitet gegenwärtig auch an einem anderen Katalog von Syriaca, welche in der selben Weise die Handschriften des Syrisch-Orthodoxen Patriarchates von Damaskus (gegenwärtig in Atchaneh/Beirut) beschreibt. Jenes Projekt wird vom Österreichischen

piel habe ich die Handschrift *MM syr. 9* ausgewählt, weil man an ihr manch Spezifisches der Handschriftenbeschreibung sehr gut exemplifizieren kann. Für die umfassende und auch inhaltliche Beschreibung verweise ich auf den oben angeführten Katalog (siehe Anm. 6), der sich *in statu nascendi* befindet.

Mit großer Freude sei dieser bescheidene Beitrag Herrn Levon Ter-Petrossian gewidmet, dem Doyen der Syrologie in Armenien. Auf seine bisweilen entlegenen Spuren stoße ich allenthalben im handschriftenkundlichen Schrifttum seiner Heimat.

Die gewählte Systematik der Darstellung

Mit dem Blick auf andere als trefflich erachtete Handschriftenbeschreibungen habe ich mich entschieden, die Beschreibungen in zwei Kategorien anzulegen: Inhalt und Kodikologie.¹⁰ Der letztere Begriff, von dem in diesem Kapitel die Rede sein soll, ist unscharf und keineswegs eng gefasst. Unter diesem Schlagwort wird alles subsummiert, was nicht unmittelbar dem textlich-inhaltlichen Bereich zuzuordnen ist. Ob im gedruckten und gegebenenfalls in einem Online-Katalog das eine oder das andere voransteht, ist eine Frage der Präsentation und scheint mir nicht erheblich zu sein. Tatsächlich sind beide Kategorien miteinander verwoben. Der Arbeitsvorgang, wie ich ihn bevorzuge, hebt jedenfalls nicht sogleich mit der inhaltlichen Analyse an.

Die kodikologische Beschreibung

Diese erfolgt vom allgemein Größeren zum spezifisch Kleineren hin. Zunächst steht das *Buch als Ganzes* im Blick. Dann richtet sich das Augenmerk auf *Einband und Hefung*. Im darauffolgenden Schritt wird der *Buchblock* in Augenschein genommen, hernach das *Blatt* bzw. die *Seite*. Von besonderem Gewicht ist dann der Blick auf die Schrift (*Paläographie*) und die *dekorative Gestaltung* des Inhalts. Manchmal ist darüber hinaus auf weitere *Besonderheiten* zu verweisen. Einige Aspekte daraus sind im Folgenden hervorhebend aufzuzeigen.

Forschungsförderungsfonds (FWF) finanziert: »Syriac Manuscript Treasures« (P 32427) [R. AKHRASS, E. A. ISHAC, Th. KLAMPFL, S. WINSLOW, E. RENHART/Projektleiter, Th. ZAMMIT-LUPI].

¹⁰ Françoise BRIQUEL-CHATONNET hat mir vor geraumer Zeit auch ein paar unveröffentlichte Beschreibungen von Handschriften aus dem Syrisch-Katholischen Patriarchat von Sharfê (Libanon) zukommen lassen, wofür ich ihr herzlich danke. Jene weisen eine ähnliche Zweiteilung auf.

1. Der konservatorische Befund

Der allererste kritische Blick gilt wie selbstverständlich dem konservatorischen Zustand des Buches. Das geschieht bereits in dem Moment, da die Handschrift vorgelegt wird. Die erste Autopsie ist jene von außen. Sie setzt sich dann mit gezieltem Blick beim Durchblättern und beim wiederholten Gang durch das Buch fort. Konservatorische und restauratorische Gegebenheiten werden zu jeder Zeit notiert und am Ende konzise zusammengefasst (*MM syr.* 9):

»Die Handschrift wurde jüngst restauriert. Blattränder wurden angefasert und ergänzt, einzelne zuvor abgelöste Blätter eingebunden. Das innen am vorderen Einbanddeckel aufgeklebte Blatt hingegen wurde abgelöst und mit dem Buchblock verhaftet. Die Neuheftung und die Verklebungen machen es an manchen Stellen schwierig, die Zusammengehörigkeit der Blätter (Bifolien) festzustellen. Das ist insbesondere relevant bei Lagen mit einer ungeraden Anzahl von Blättern. Auch der Einband wurde restauriert.«

Das Erheben des konservatorischen Sachverhalts kann die gesamte weitere Arbeit mit einer Handschrift konditionieren, weil manches möglich ist und anderes wiederum nicht. Mit dem Feststellen von historischen Reparaturen und Ausbesserungen legen wir bereits einen Teil der Geschichte des Buches und seiner Benützung frei und tauchen damit ein in die »Archäologie des Buches«¹¹.

2. Die Seitenanzahl

Ein grundlegendes erstes Studium gilt der Frage nach der Anzahl der Blätter. Es ist herauszufinden, ob von dem ursprünglichen Buch noch alle Teile vorhanden sind, ob etwa fehlende Teile im Laufe der Geschichte ergänzt wurden oder anderes passiert ist.

Man sollte meinen, die Anzahl der Blätter festzustellen, ist eine simple Aufgabe. Oft genug begegnen uns in syrischen Handschriften jedoch mehrere, nicht harmonisierbare Blattzählungen (Folierungen) oder Seitenzählungen (Paginierungen): Zahlreiche alte syrische Handschriften weisen gar keine originäre Blattzählung auf (a). Manche Bücher haben eine Blattzählung in syrischen Zahlenbuchstaben (b). Häufig kommen Zählungen in arabischen Zahlenzeichen vor (c). In jüngerer Zeit taucht vielleicht noch eine lateinische Blattzählung auf, die die Blätter nach westlichem Usus in verkehrter Richtung nummeriert (d). Dann gibt es noch die richtige lateinische Blattzählung (e). Letztlich aber kann sich die gegenwärtig vorfindbare Anzahl der Seiten von allen

¹¹ Der Ausdruck wird in Anlehnung an J. A. SZIRMAI, *The Archaeology of Medieval Bookbinding*. Aldershot: Ashgate, 1999 verwendet.

im Buch eingetragenen Nummerierungen unterscheiden. Die aktuelle Anzahl der Seiten ist jedenfalls zu verifizieren (f). Wie auch immer, die Varianten (b) bis (f) suchen das Inventar des Buches, also dessen Anzahl der Blätter, in einem historischen Augenblick festzuhalten.

Bisweilen finden wir in ein und demselben Kodex drei oder vier Zählweisen nebeneinander. Das ist vor allem dann aufschlussreich, wenn diese Zahlen nicht übereinstimmen, was oft genug der Fall ist. Den Zählungen liegen ja häufig unterschiedliche Vorstellungen zugrunde: Einmal werden unbeschriebene Blätter gezählt, ein anderes Mal werden sie nicht gezählt oder nur manche von ihnen. Zudem sind Zählungen auch inkonsistent: Blätter werden bei der Zählung übersehen, Blattnummern werden doppelt vergeben, Blätter gehen verloren oder werden hinzugefügt etc. Hinsichtlich der Handschrift *MM syr: 9* sind zwei Zählungen zu vermerken (d und e), hinzu kommt das ursprüngliche Stadium ohne Folienzählung (a) und die aktuelle Erhebung der Blätter, die den gegenwärtigen Blattbestand angibt (f):

»Blattzählung: mit Bleistift in lateinischer Nummerierung jeweils recto mittig am unteren Blattrand: »1-103«. Eine ältere unrichtige weil gegenläufige Paginierung, am unteren Blattrand der Verso-Seiten in Bleistift von anderer Hand ausgeführt, ist durchgestrichen.«

Die Anzahl der 103 Seiten konnte verifiziert werden. Spannend ist jedoch die Frage, wie diese Zahl zustande kommt (s. u.).

3. Der Lagenaufbau

Ist die aktuelle Anzahl der Seiten einmal vergewissert, so liegt der nächste Schritt darin, festzustellen, inwiefern der Ist-Zustand dem ursprünglichen Buch entspricht. Dazu ist der Aufbau des Buches nach den Lagen zu prüfen. Unsere Handschrift *MM syr: 9* bietet dafür zwei hilfreiche Anhaltspunkte: zum einen die Lagenzahlen und zum anderen die Wasserzeichen im Papier.

3.1. Die Lagenzahlen.

Sie geben nicht zuletzt dem Buchbinder die Reihenfolge der Lagen vor, um Irrtümer hintanzuhalten. *MM syr: 9* hat(te) solche Zahlen auf dem ersten und dem letzten Blatt der Lage. Vorwegnehmend kann festgehalten werden, dass die fehlenden Lagenzahlen heute auf fehlende Blätter hinweisen. Die Lagenzeichen in unserer Handschrift:

»Fol. 10r \varnothing , fol. 19v \varnothing , fol. 20r \sphericalangle , fol. 29v \sphericalangle , fol. 30r \mathfrak{r} , fol. 39v \mathfrak{r} , fol. 40r ∞ , fol. 48v ∞ , fol. 65v \mathfrak{r} , fol. 66r ∞ , fol. 75v ∞ , fol. 76r \sphericalangle , fol. 85v \sphericalangle , fol. 86r \mathfrak{r} , fol. 95v \mathfrak{r} . Die Reihe der Lagenzahlen ist unvollständig aber in aufsteigender Reihenfolge.«




Abb. 1: Die dekorativ ausgeführte Lagenzahl »5«, fol. 48v. Darunter steht die unrichtige, weil gegen die Leserichtung eingetragene lateinische Blattzählung. Sie wurde später durchgestrichen.

Aus dem Befund der Lagenzahlen (und dem weiteren Studium des Buches) ergibt sich der folgende Lagenaufbau:

»Lagenstruktur: Lage I: fol. 2-9,¹² Lage II: fol. 10-19, Lage III: fol. 20-29, Lage IV: fol. 30-39, Lage V: fol. 40-48,¹³ Lage VI: fol. 49-56,¹⁴ Lage VII: fol. 58-65,¹⁵ Lage VIII: fol. 66-75, Lage IX: fol. 76-85, Lage X: fol. 86-95, Lage XI: fol. 96-103¹⁶. Der Lagenaufbau des Buches, so wie es heute vor uns liegt, ist unregelmäßig. Die Anzahl der Blätter nach den Lagen ist: 8 – 10 – 10 – 9 – 8 – 9 – 10 – 10 – 10 – 8, hinzu kommt das als fol. 1 mitgezählte ehemals vordere Spiegelblatt, in Summe 103 Blätter.«

Allein das Blatinventar der Handschrift *MM syr. 9* deutet zusammen mit dem Lagenaufbau auf eine dramatische Geschichte des Buches hin: Drei Doppelblätter fehlen (die Bifolien 1*/9*, 48*/57*, 95*/103*), ebenso zwei Einzelblätter (47*, 57**). Ein Blatt wurde hinzugefügt (fol. 1), ein anderes Blatt befindet sich heute an falscher Stelle im Korpus des Buches (fol. 57) [siehe unten die Graphik = Abb. 4].

¹² DIESER LAGE FEHLT DAS ERSTE UND DAS LETZTE BLATT (= vor fol. 2 und nach fol. 9). Ein auf dem Einbanddeckel innen eingeklebt Blatt wurde abgelöst und als Blatt »1« in die nunmehrige Blattzählung aufgenommen (siehe dazu weiter unten).

¹³ ZWISCHEN FOL. 47V UND 48R FEHLT EIN BLATT.

¹⁴ DAS ERSTE UND DAS LETZTE BLATT DER LAGE VI FEHLT (= vor fol. 49 und nach fol. 56), das ist das Gegenstück zu Blatt 57, welches ein Wasserzeichen des Typs »B« aufweist (s. u.).

¹⁵ VOR FOL. 58 FEHLT EIN BLATT. Das ehemals lose Blatt 57 gehört nicht zur Lage VI, sondern zur Lage VII und folgt auf fol. 58. Die organische Blattfolge ist: fol. 58 – 57 – 59.

¹⁶ DER LETZTEN LAGE FEHLT EIN DOPPELBLATT: ein Blatt zwischen fol. 95v und 96r (Textfluss gestört) und ein Blatt nach fol. 103 (der Text des Kolophons bricht jäh ab).

3.2. Die Wasserzeichen

Es ist geradezu ein Glücksfall, dass das Papier von *MM syr. 9* Wasserzeichen aufweist. Diese zu untersuchen, zieht wohl ein gutes Maß an Mehrarbeit nach sich, aber es hilft uns auch, den eben benannten Sachverhalt zu verifizieren. An erster Stelle steht deren Dokumentation, woraufhin ihre Auswertung erfolgt. So können wir für unsere Handschrift *MM syr. 9* im Katalogisat das Folgende festhalten:

»Wasserzeichen: Im Papier dieser Handschrift finden sich zwei Motive, das Trifolium mit den Buchstaben ›T‹ und ›Z‹ sowie die drei Mondsicheln im Falz.

Typ A (Trifolium, ›T‹ und ›Z‹): fol. 3, 4, 9, 13, 25, 26, 28, 34, 37, 38, 40, 44, 46, 50, 52, 62, 64, 66, 69, 70, 76, 80, 87, 99, 101, 103«. [Abb. 2]

»*Typ B* (drei Mondsicheln), im Falz: fol. 5, 6, 10, 11, 12, 14, 15, 17, 18, 19, 20, 22, 27, 29, 30, 33, 36, 39, 41, 42, 47, 49, 51, 54, 56, 57, 60, 61, 63, 65, 67, 68, 73, 74, 77, 78, 79, 82, 83, 84, 86, 88, 89, 90, 91, 92, 93, 95, 97, 102«. [Abb. 3]

Die Motive und ihr Vorkommen im Buch penibel zu verzeichnen, mag als fade Übung betrachtet werden. Diese erlaubt uns jedoch, die Zusammengehörigkeit von Blättern festzustellen – und zwar auch dort, wo das sonst durch die Verklebungen im Falz nicht möglich wäre.

Vorausgesetzt das ursprüngliche Buch ist aus Doppelblättern zusammengesetzt, was zumeist und auch hier der Fall ist, wird die Systematik rasch klar: Das Blatt mit dem Motiv A (Trifolium, »T« und »Z«) hat als Gegenblatt (das ist die zweite Hälfte des gefalteten Bogens) ein Blatt ohne Wasserzeichen. Das Blatt mit dem Motiv B (die drei Mondsicheln) hat sein Wasserzeichen immer im Falz, wo es zur Hälfte sichtbar ist. Die andere Hälfte muss zwingend im Falz des Gegenblattes erkennbar sein. Woimmer diese Systematik gestört ist, erhebt sich die Frage, ob denn hier nicht ein Blatt ausgefallen sei. Ergo, nach dem Studium der Lagenstruktur erhalten wir Hinweise auf fehlende Blätter nun auch aus dem Studium der Wasserzeichen, lange bevor wir das inhaltlich am Textfluss zu erweisen haben. In *MM syr. 9* sind es zwei Stellen, die zufolge der Wasserzeichensystematik auf die Textkontinuität hin zu prüfen sind: rund um die fehlenden Blätter 47* und 57**.

Abb. 2: Wasserzeichen A: Trifolium, Buchstaben »Z« (?) und »T«.
Abstand der Stege: 28,5 mm, Abstand Motiv (Kopf bis Blattende):
6cm.
Maßstab 1:1





Abb. 3: Wasserzeichen B, im Falz: die drei Halbmonde, Abstand der
Stege 28,5 mm, Gesamtabstand Halbmonde: 9,4 cm.
Maßstab 1:1




Die genaue Erfassung der Wasserzeichen ist überdies höchst wünschenswert, umso mehr als es sich hier um eine datierte Handschrift handelt. Die eingehende Suche in den Wasserzeichendatenbanken hat indes ergeben, dass die Motive noch nicht erfasst worden sind, was für solche relativ späte Papiere nicht verwundert.¹⁷ Umso mehr sollten die Wasserzeichen nach den geltenden Standards erfasst und beschrieben werden. Nur so können sie in die Datenbanken nutzbringend eingespeist werden. Doch es gibt in Bezug auf unsere Wasserzeichen weiterführende Indizien an unerwarteter Stelle: William Wright († 1889) erwähnt in seinem Katalog der syrischen Handschriften der Universität Cambridge gelegentlich auch Wasserzeichen.¹⁸ Insbesondere die unserer Handschrift zeitlich wie örtlich nahestehenden wären zum Vergleich einzusehen. Vielleicht ergibt sich daraus ein besseres Bild über die in der Region verwendeten Papiere.

¹⁷ Siehe dazu: <https://www.wzma.at/wzonlinekataloge.php>.


¹⁸ A Catalogue of the Syriac Manuscripts Preserved in the Library of the University of Cambridge. By W. WRIGHT with an Introduction and Appendix by S. A. COOK. 2 vols. Cambridge: University Press, 1901 [repr. Piscataway NJ: Gorgias Press, 2002]: e. g. »three crescents« in Add. 1970, 1973, 1976, 1992, 1996, 2002 etc.

Abb. 4: Schematische Darstellung des Lagenaufbaus mit der Typologie der Wasserzeichen und den Lagenzahlen. Alles, was im Fettdruck liniert ist, fehlt in der heute vorliegenden Gestalt von MM syr. 9. Die fehlenden Blattnummern sind durch einen Asteriskus gekennzeichnet.


Lage I:




Lage II:




Lage III:




Lage IV:




Lage V:




Lage VI:




Lage VII:




Lage VIII:




Lage IX:



Lage X:



Lage XI:



»*MM syr. 9*: Von dem ursprünglichen Buch fehlen acht Blätter: 1*, 9*, 47*, 48*, 57*, 57**, 95* und 103*. Fol. 1 ist eine spätere Hinzuzählung. Das originale Buch bestand aus 11 Lagen zu je 10 Blättern, das heißt aus jeweils 5 Doppelblättern und bildete damit *Quinionen*.«

4. Einband und Heftung

Die Beschreibung des Einbands einer Handschrift ist zumeist eher leicht zu bewerkstelligen. Manchmal ist aufgrund des konservatorischen Zustands darüber hinaus etwas von der Heftung erkennbar: etwa die Art, wie Buchblock und Buchdeckel miteinander verbunden sind oder die Heftung der einzelnen Lagen, wenn der Buchrücken freigelegt ist wie z. B. in *MM syr. 203*. Hinsichtlich *MM syr. 9* können wir im Katalog festhalten:

»Starke hölzerne Einbanddeckel, mit schwarzem Leder überzogen, die Ecken abgerundet. Lederprägung, am vorderen Deckel mittig ein Kreuz aufgeprägt, diverse Dekorstempel, drei Bünde am Buchrücken als Wulst sichtbar. Die Verheftung des Buchblocks mit den Buchdeckeln ist heute, nach der Restaurierung, unsichtbar weil überklebt. Der Dorn für die Buchschließe mittig auf der Stirnseite des vorderen Einbanddeckels ist noch *in situ* (Abb. 5), das korrespondierende Lederband nicht mehr vorhanden. In der linken oberen Ecke des hinteren Einbanddeckels ist die Inventarnummer aufgeklebt (Abb. 6).«




Abb. 5: Der Dorn an seinem ursprünglichen Ort. Auf der Stirnseite des Einbanddeckels ist die feine Lederprägung noch gut sichtbar.



Abb. 6: Das Inventarschild ist auf dem rückwärtigen Einbanddeckel des Buches – nach der Manier westlicher Bücher – angebracht.

Vor der jüngst erfolgten Restaurierung des Buches war die Verbindung von Einband und Buchkorpus noch sichtbar.¹⁹ Das geht aus Aufnahmen aus dem Jahre 2007 hervor. Ein beschriebenes Blatt war innen auf den vorderen Einbanddeckel geklebt gewesen (siehe dazu unten unter Punkt 6).




Abb. 7: Mitte der zweiten Lage, fol. 14v/15r, mit den Abständen der Heftfäden im Falz (in Millimeter, von unten nach oben gemessen)

5. Blatt- und Seitenmarken

Zahlreiche syrische Handschriften weisen im Bereich der ersten Zeile einer Seite (*recto*, *verso* oder auf beiden Seiten) sonderbare Zeichen auf. Für derartige Zeichen gibt es bislang keinen Fachbegriff. Sie werden hier auch sehr allgemein

¹⁹ Vgl. dazu Y. DERGHAM – F. VINOURE, Les reliures syriaques: essai de caractérisation par comparaison avec les reliures byzantines et arméniennes, in: *Manuscripta syriaca* 271-304, bes. 281-283: »disposition des forages ... en ligne droite«; SZIRMAI, *Medieval Bookbinding* 73: »straight-line type«.

als »Marke« benannt. Ihr Vorkommen ist nicht systematisch untersucht, die Bedeutung nicht hinreichend geklärt.²⁰ Oft genug werden sie auch in den Katalogen nicht erwähnt. Zu dem in *MM syr.* 9 aufscheinenden Zeichen können wir das Folgende festhalten:

»Auf beinahe allen Seiten, deren Blattrand noch hinreichend vorhanden ist, findet sich rechts oberhalb der ersten Zeile ein Zeichen in schwarzer bzw. roter Tinte. Es fehlt lediglich auf jenen Seiten, deren oberste Zeile graphisch-dekorativ gestaltet ist: fol. 3v (*Kisachoran*)²¹, 45r (Zierleiste) und 51r (Zierleiste), weiters fehlt es auf fol. 1v (siehe dazu den folgenden Absatz). Das Zeichen besteht aus vier Punkten mit einer geschwungenen Linie dazwischen. Sie könnten in stilisierter Weise auf den Gottesnamen hinweisen.²²«

Wiewohl diese Zeichen bisweilen einen dekorativen Eindruck erwecken, bin ich nicht geneigt, ihren Sinn und Zweck allein darin zu sehen. Während den Lagenzahlen mit ihrem schlichten bis opulenten Dekor der untere Blattrand zukommt, scheint für unsere Marken ein Bereich am oberen Blattrand, außerhalb des Textblocks reserviert gewesen zu sein. In den weiteren Handschriftenbeschreibungen wird vermehrt auf diese Zeichen zu achten sein, denn es gibt hier Variationen, deren Beachtung möglicherweise zu weiteren Erkenntnissen führt.²³




Abb. 8: Seitenmarke, wie sie sich auf beinahe allen Seiten von *MM syr.* 9 rechts oberhalb der ersten Zeile findet.

²⁰ Vgl. P. G. BORBONE – F. BRIQUEL-CHATONNET, 11. 3 The making of the codex, in: COMSt-Handbuch 255-257 [im Abschnitt Syriac Codicology, 252-266], hier 257: »... one may suggest that the mark was written by the copyist when making the copy. [...] In the East Syrian tradition the three upper dots of the lozenge are separated by a serpentine stroke: this element reveals that the marker is a stylized abbreviation of the divine name ܝܗ (yh).«

²¹ Կիսախորան ist der armenische Ausdruck für die schmuck gestaltete Titelseite, die sich in etwa über eine halbe Seite erstreckt.

²² Dieselbe Art des Zeichens findet sich auch in *MM syr.* 10.

²³ In der Handschrift 39 des Syrisch-Orthodoxen Patriarchates (SOP 039) etwa sind dreierlei solcher Zeichen von derselben Hand auszumachen: 2 × 3 Punkte verbunden, 2 × 4 Punkte verbunden und 3 × 3 Punkte unverbunden.

6. Besonderes

Unter diesem Punkt ist eine Gegebenheit zu verzeichnen, welche kodikologisch als »Singularität«, jedenfalls als hervorzuhebende Besonderheit aufgefasst werden muss. In diesem Sinne ist bei *MM syr. 9* fol. 1 hervorzuheben (Abb. 9). Der Eintrag in den Katalog könnte lauten:

»Fol. 1, das vormals eingeklebte Spiegelblatt, ist nunmehr abgelöst. Damit ist sichtbar geworden, dass es nur auf einer Seite beschrieben ist. Es trägt die durchgestrichene weil irriige lateinische Blattzahl »103«, diese wurde armenisch mit *Iṗ* [»1b«] überschrieben. Das Blatt ist – wie bereits vor der Restaurierung der Handschrift – wieder in die Seitenzählung aufgenommen.«

Bezüglich dieses Folioms können wir denkwürdige Gegebenheiten vermerken:

- (a) Der Text dieser Seite ist zweifelsfrei von ein und der selben Hand wie jener der übrigen Seiten zu Papier gebracht worden.
- (b) Der Text ist beinahe identisch mit dem auf fol. 80r. In Zeile 9 war dem Kopisten allerdings ein Abschreibebefehler passiert (er hat die Wörter im Satz durcheinander gebracht).²⁴
- (c) Nachdem nur eine Seite des Blattes beschrieben wurde – mit einem fortlaufenden Text, zudem mitten im Buch –, müsste dieser auf einer Recto-Seite gestanden haben. Andernfalls hätte der Schreiber mitten im Buch eine Leerseite produziert.²⁵
- (d) Da die Seite zu Ende geschrieben wurde, wird der erste Fehler bei der Kontrolle danach entdeckt worden sein.
- (e) Ganz offensichtlich wurde das Blatt wegen dessen Fehlerhaftigkeit ausgeschieden. Es muss als Ausschuss gelten.
- (f) Das aussortierte Blatt wurde folglich innen auf den vorderen Einbanddeckel geklebt.
- (g) Die Fäden, welche den Einbanddeckel mit dem Buchblock verbinden, laufen *über* den beklebten Deckel. Der Einband wurde also *nach* dem Aufkleben des fehlerhaften Blattes appliziert.

²⁴ Wohl hat er den Fehler bemerkt und auf die richtige Reihenfolge der Wörter hingewiesen, indem er sie gegenläufig mit \simeq und \simeq nummerierte.

²⁵ Wenn der Schreiber aber *par erreur* auf einer Verso-Seite fortgesetzt hat – was nicht mehr feststellbar ist –, dann wäre der Verschreiber in Zeile 9 der weitaus geringere Fehler gewesen.

- (h) Schließlich ist bemerkenswert, dass auf fol. 1 keine Seitenmarke (siehe oben unter 5.) zu erkennen ist.

Bei alledem, was hier festgestellt wurde, sind mit diesem Blatt Ungewissheiten und Unwägbarkeiten verbunden. Mit Blick auf (g) erhebt sich die Frage, warum man ein Blatt auf den Einbanddeckel geklebt hat und zwar *vor* dem Binden des Buches. Eine Erklärung könnte darin liegen, dass das Blatt einfach als Deckelkaschierung (»board lining«²⁶) benützt wurde, um dem eventuellen Verziehen des Deckelholzes entgegenzuwirken.

Mit Blick auf (h) taucht die Idee auf, ob die Seitenmarke nicht auch die Funktion gehabt haben könnte, zu kennzeichnen, wenn die Seite nach der Kontrolle als gut befunden, also »approbiert« worden ist. Sie erfüllte demnach zugleich die Funktion einer Kontrollmarke. Das muss ohne systematische Phänomenologie dieser Zeichen noch eine Konjektur bleiben. Wie auch immer, mit diesen kleinen Zeichen blicken wir dem Schreiber ein ganz klein wenig über die Schulter, denn er führt diese Zeichen oft nicht ganz konsequent aus. Und mit dem Fehler schauen wir gar in seine persönliche Welt ein, in seine sich durch das mühselige Abschreiben verbrauchende Konzentration, in seine Fahrigkeit.

Als Faktum bleibt jedenfalls bestehen, dass mit fol. 1 ein Blatt in den Buchblock gefunden hat aus dem es einst ausgeschieden worden war – lange vor der jüngsten Restaurierung. Es war aber offenbar niemals daran gedacht gewesen, das fehlerhafte Blatt ganz wegzuwerfen. Die Sekundärverwendung des verworfenen Blattes lag wohl in seiner Funktion als »board lining«.

²⁶ Siehe dazu N. PICKWOD: <https://www.ligatus.org.uk/lob/concept/1219>. »Pieces of sheet material adhered to one or other, or both, surfaces of a board before the book is covered, and either before or after the board is attached to the bookblock. Linings on the inside of the board may have been intended to counteract the tendency of the covering material to pull the board outwards as it shrank on drying, but in other cases the purpose may have been to consolidate or neaten up the board surface.« – Ich danke Theresa ZAMMIT LUPI, Chefrestauratorin in den Notarial Archives von La Valletta/Malta sehr für die Diskussion und die klärenden Hinweise.




Abb. 9: Das auf der Innenseite des vorderen Einbanddeckels aufgeklebte Blatt (fol. 1v). Aufnahme aus dem Jahre 2007, vor der Restaurierung des Buches.

Resumée

Dieses kurze Exposé konnte keinen umfassenden Diskurs bieten. Vielmehr wurden ein paar Aspekte erörtert, wie sie für die kodikologische Beschreibung von syrischen Handschriften von Gewicht sein mögen.

Als Untersuchungsobjekt wurde die eher unscheinbare Handschrift *MM syr. 9* aus der Yerevaner Sammlung ausgewählt, keineswegs ein besonders altes Stück (datiert 1705) und auch kein dem Inhalt nach besonders seltenes Buch. Auf die Darstellung des Inhalts dieser Handschrift wurde hier gänzlich verzichtet.²⁷ Das Studium dieses in jüngster Zeit restaurierten und nun schön hergerichteten Buches hat dessen Struktur und darüber hinaus manch Bemerkenswertes offengelegt. Das Allermeiste von dem, was beobachtet wurde, trägt die Spuren der Geschichte dieses Buches an sich, von seiner Entstehung bis in die Gegenwart.

Wenn auf die Blatt- und Seitenzählung geachtet wurde und auf die Lagenstruktur, dann diene das dazu, das Buch in seiner Genese »verstehen« zu wollen. Dass in den verwendeten Papieren Wasserzeichen aufscheinen, war dabei überaus behilflich. Das Ergebnis wurde zusammenfassend in einer Graphik veranschaulicht.²⁸

An Einband und Heftung wurde besonders deutlich, dass eine notwendige Restaurierung manches verstecken kann und anderes zugleich sichtbar macht. Hier zeigt sich die elementare Notwendigkeit, den Zustand *vor* dem Eingriff zu dokumentieren, um historische Informationen, die aus dem Buch sprechen, nicht zu kaschieren.

Der Blick wurde auch auf die Kleinigkeit jener Zeichen gerichtet, welche sich auf beinahe allen Seiten des Buches befinden. Sie stellen ein *bis dato* viel zu wenig beachtetes Detail dar, das des weiteren systematischen Studiums bedarf, denn eine abschließende Phänomenologie und ihre Interpretation scheint mir noch nicht vorzuliegen.

Zuletzt wurde versucht darauf zu hören, welche Geschichte uns ein früher auf den Einbanddeckel geklebt Blatt erzählen kann, was uns in die Entstehungsgeschichte und den Kopisten des Buches zurückverweist. So erfassen wir sogar, für einen Augenblick nur, etwas von der Persönlichkeit des Schreibers, aus dessen Feder diese Handschrift vor mehr als 300 Jahren geflossen ist.

Ich danke Levon Ter-Petrossian herzlich, er ist gewissermaßen mein *Prodromos*, in dessen Fußstapfen ich für ein Stück des Weges trete. *Ad multos annos!*

²⁷ Es handelt sich um ein Buch der Turgame und anderer Hymnen der Assyrischen Kirche des Ostens. Die inhaltliche Beschreibung weist über 80 Abschnitte aus. All das ist im Katalog festgehalten.

²⁸ Es ist überdies eine gewichtige Frage, wie denn Ergebnisse darzustellen seien und ob man sie überhaupt veranschaulichen müsse. Vor allem, wenn der Sachverhalt nicht ganz einfach ist, bietet sich neben der verbalen Beschreibung zusätzlich eine visuelle Präsentation an.

ԷՐԻԽ ՌԵՆՀԱՐՏ

Գրացի համալսարան

**ԵՐԵՒԱՆԻ ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀՄՐ 9 ԱՍՈՐԵՐԵՆ
ՁԵՌԱԳԻՐԸ. ԱՍՈՐԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ
ՁԵՌԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԱՐԺԱՆՔ**

Բանալի բառեր՝ Ասորագիտություն, ձեռագրեր, ձեռագրագիտություն, դրոշմակնիքներ, պատասիկներ

Ասորերեն Հ^Մ 9 ձեռագիրը այսօր Մաշտոցյան Մատենադարանում պահվող մի քանի տասնյակ ասորերեն ձեռագրերից եւ պատասիկներից մեկն է: Արեւելա-ասորական ծագում ունեցող այս ձեռագիրը, որ, վստահաբար, հավաքածուում գտնվողների մեջ ամենատպավորիչը չէ, գրվել է 1705 թ.: Ձեռագրում տեղ գտած տեքստերը (*turgame*) մեզ են հասել մի քանի այլ ձեռագրերով եւս, կան դրանց արդի տպագիր հրատարակությունները: ՄՄ ասոր. Հ^Մ 9 ձեռագրի վերանորոգման ժամանակաշրջանն անհայտ է, սակայն այն արհեստավարժորեն վերականգնվել է մեր օրերում: Ձեռագիրը պակասավոր է. բացակայում է ութ թերթ: Տվյալ հոդվածը ձեռագրերի պրակների քանակի եւ կազմության, էջակալման համակարգերի, դրոշմակնիքների եւ այլ հատկանիշների վերաբերյալ ձեռագրագիտական ուսումնասիրություն է: Այն պատկերացում է տալիս «Ցուցակ Մատենադարանում պահվող ասորերեն ձեռագրեր եւ պատասիկներ»-ի մասին, որը լույս է տեսնելու Էֆրեմ Ա. Իսհակի, Էրիխ Ռենհարտի եւ Անդրեա Բ. Շմիդթի աշխատասիրությամբ:

ERICH RENHART

University of Graz

**THE SYRIAC MANUSCRIPT NO. 9 AT THE MESROP MASHTOTS
INSTITUTE, MATENADARAN, YEREVAN**

AN EXERCISE IN SYRIAC CODICOLOGICAL STUDIES

The Syriac manuscript No. 9 is one of some dozens of Syriac manuscripts and fragments hold in the Matenadaran. And it is by far not the most spectacular one. The manuscript is dated to 1705 and of East Syrian origin. The texts (*turgame*) put in the book are known from several other manuscripts and there are modern print editions available, too. MM syr. 9 has been repaired at an unknown historical date and restored professionally in our days. Today eight folios are missing from the original. – The present chapter offers a study in codicology and deals with quire numbers, quire structures, systems of page counting, watermarks etc. All this gives an idea of the *Catalogue of Syriac Manuscripts and Fragments* hold in the Matenadaran which is going to be elaborated by Ephrem A. Ishac, Erich Renhart and Andrea B. Schmidt.

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Մեարդույ Մաշտոցի անվան Մատենադարան

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻԾԽԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԸՆԿԱՆՈՒՄԸ

Բանալի բառեր՝ Հետհայաց քաղաքագիտություն, գահաժառանգում, օրինակարգ իշխանություն, մահապետական իշխանություն, թագավորական իշխանության, անկախ պետականություն, Հայկազունիների թագավորություն, Արշակունիների թագավորություն, թագավորության կարգավիճակ:

Հայոց պատմության ուսումնասիրման վրա, որպես պատմական իրադարձությունների մեկնաբանման կամ գնահատման հիմք, քաղաքական իմաստով ներգործել է երկու օբյեկտիվ հանգամանք՝ երկուսն էլ գաղափարախոսական: Միջնադարից եկող եկեղեցիական-դավանաբանականը, հարյուրամյակներ շարունակ մեծապես ազդելով պատմագրության վրա, ինքնուրույն ուժով իր որոշակի ազդեցությունն է թողել նաև նոր ժամանակներում: Խորհրդային շրջանում պատմագիտության հիմքում որպես ելակետ դրվել է պատմական մատերիալիզմի տեսությունը՝ արտադրողական ուժերի եւ արտադրական հարաբերությունների դիալեկտիկան, որպես պատմության շարժիչ ուժ, համարվել է դասակարգային պայքարը: Երկուսն էլ, գաղափարախոսական կաշկանդիչ շրջանակներով ունեցել են իրենց բացասական ազդեցությունը¹: Գիտությունը, այդուամենայնիվ, զարգացել է եւ տվել նաև իր դրական արդյունքները: Այդ արդյունքները կրկնապատկվել են այն հետազոտություններով, որոնց հեղինակները, մասնագիտական արժանապատվության մղումով, շեղվել, դուրս են եկել կամ ինչ-որ կերպ շրջանցել են գաղափարախոսական սահմանափա-

¹ Խորհրդային շրջանում պատմագիտության վրա կոմունիստական գաղափարախոսության ունեցած ներգործության մասին 20-րդ դարի լավագույն պատմաբաններից Գագիկ Սարգսյանը գրում է. «**Իշխող քաղաքական դոկտրինայի թույնը**, հոսելով հին պատմությունից դեպի նորը, հետզհետե ուժեղանում էր, իսկ հասնելով նորագույնին, պարզապես կազմալուծում այն: Բայց միայն սա չէր դրա վտանգը: Այն իր օրինակով սովորեցնում էր բոլոր պատմաշրջաններին մերձեցողներին **պատմական փաստերի ազավադման, նենգափոխման թույլատրելիությունը**, նաև այնպիսի դեպքերում, երբ այդ արվում էր ոչ թե իշխող դոկտրինայի հունով, այլ ցանկացած «բարձր» քաղաքական, կեղծ հայրենասիրական, ազգային, խմբակային կամ որեւէ այլ նպատակով (**Գ. Սարգսյան**, Մեր օրերի իմ ընկալումները, «Հայաստանի Հանրապետություն», 14. 08 – 15. 08. 1992):

կումները: Ընդ որում՝ նման «շեղումները» հատուկ են ոչ միայն նոր շրջանի գիտական ստեղծագործություններին, այլ երբեմն նաեւ միջնադարյան պատմագրական երկերին, ինչի լավագույն օրինակներից է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»²:

Պատմագիտությունը հասել է մի մակարդակի, երբ նրա աղբյուրագիտական բազան հիմնականում հայտնի է, եւ լուրջ համալրումներ, գեթ ձեռագրական հուշարձանների տեսքով, չեն սպասվում: Ուստի որեւէ պատմաշրջանի ուսումնասիրություն առավել ամբողջական եւ առավել օբյեկտիվ դարձնելու հիմնական ռեսուրսը մնում են այդ բազայի նյութերի նոր դիտանկյուններից կատարված գիտական հետազոտությունները, արդեն եղածի հետ դրանց արդյունքների համադրության-համրագումարի բերելը: Եւ, կարելու է մասնավորապես, ուսումնասիրման այն դիտանկյունները կամ մեթոդները, որոնք կա՛մ վերոհիշյալ գաղափարախոսությունների շրջանակներին հարազատ չլինելու հետեւանքով, կա՛մ առարկայական այլ պատճառներով³ ժամանակին պատշաճ տեղ չեն զբաղեցրել:

Հայոց պատմության որոշակի մի պատմաշրջան, նոր մի դիտանկյունով ուսումնասիրելու արդյունք է, օրինակ, Լեւոն Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները եւ հայերը» սովորաբար սովորաբար հետազոտությունը⁴: Աշխատության երկրորդ հատորի (բուն ուսումնասիրության) վերնագրին ունի «**պատմա-քաղաքագիտական հետազոտություն**» լրացումը, իսկ Առաջաբանը սկսվում է հետեւյալ

² Մեկ անգամ չէ, որ հանուն պատմության հավաստիության (այսօրվա խոսքով՝ գիտականության) Խորենացին ընդդիմանում է իր մեկենաս Սահակ Բագրատունու հորդորներին կամ խնդրանքներին: Մի օրինակ. «Եւ գրեզ, որպէս բազում անգամ, եւ այժմ աղաչեմ, մի՛ յաւելորդսն հարկաւորեալ զմեզ, եւ սակաւ եւ կամ յոլով բանիւք՝ զմեծ եւ զհաւաստի բովանդակ աշխատութիւնս մեր ընդ վայր եւ աւելորդ ցուցանել գործ. զի նմանագոյնս որպէս ինձ՝ եւ քեզ գործէ վտանգս» (**Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ Ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, նմանահանութիւն, Լրացումները՝ Ա. Բ. Սարգսեանի, Երեւան, 1991, Բ. ԿԴ, էջ 198: Այս հրատարակությանը հղումներն այսուհետ կդնենք տեքստում՝ նշելով Գիրքը, Գլուխը եւ էջը): Նույն կերպ նա, ըստ հնարավորի, շրջանցել է նաեւ քրիստոնեական գաղափարախոսության արդեն իսկ գծած «շրջանակները» եւ «հանձնարարականները», ինչով եւ կտրուկ տարբերվում է իր դարաշրջանի մյուս պատմագիրներից:

³ Նկատի ունենք «լայն պրոֆիլի» պատմաբաններից զատ՝ պատմության ուսումնասիրումը խաչվող մասնագիտություններ ունեցող գիտնականների՝ ջազմագետ-պատմաբանների, տնտեսագետ-պատմաբանների, արվեստագետ-պատմաբանների, քաղաքագետ-պատմաբանների, աստվածաբան-պատմաբանների կողմից եւ այլն: Նման դեպքերում, նույն նյութի հիմքի վրա արված ուսումնասիրությունը կարող է տարբեր, երբեմն արմատապես այլ արդյունքների հանգեցնել՝ էականորեն սրբագրելով նաեւ քաղաքական պատմությունը:

⁴ **Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, ուսումնասիրություն եւ թարգմանություններ, Երեւան, 2005; հ. Բ, պատմա-քաղաքագիտական հետազոտություն, Երեւան, 2007:

նախադասությամբ. «11-14-րդ դդ. մերձավորարեւելյան իրադարձությունները **հետհայաց քաղաքագիտության** (ретроспективная политология) տեսակետից դիտարկելիս՝ Կիլիկյան Հայաստանի եւ Արեւելքում հիմնված խաչակրաց պետությունների պատմության տիպաբանական ընդհանրությունն աչքի է զարնում առաջին իսկ հայացքից»⁵:

Պատմաշրջանի հետազոտման պատմա-քաղաքագիտական (կամ՝ պատմա-պետականագիտական) դիտակետ եւ հետհայաց քաղաքագիտական մեթոդ. այս երկու հանգամանքներով է պայմանավորված Կիլիկյան Հայաստանի ավելի քան 300-ամյա պատմությունն ամփոփող սույն ուսումնասիրության յուրահատկությունը եւ գիտական նոր արդյունքը: Աշխատության մասնագետ-գրախոսները, բնականաբար, անմիջապես նկատել եւ արձանագրել են այդ իրողությունը եւ դրա հիմքը, այն է՝ հեղինակի աղբյուրագետ-պատմաբան, միաժամանակ նաեւ՝ «հսկայական փորձ ունեցող քաղաքագետ» լինելու հանգամանքների մեկտեղումը⁶:

Որեւէ պատմաշրջանի համար առանցքայինը նրա քաղաքական պատմությունն է: Բաղաքական պատմության վերհամման ամենավստահելի ճանապարհը հենց հետհայաց քաղաքագիտական մեթոդի կիրառմամբ պատմա-քաղաքագիտական կամ պատմա-պետականագիտական հետազոտությունը կարող է լինել: Այլ խոսքով՝ ժամանակի քաղաքական միտքը, պետականության մասին պատկերացումները ճանաչելը ու աղբյուրների նյութը «խոսեցնելիս» դրանք որպես հիմք ընդունելը: Ինչպես հիմա, այնպես էլ հնում, դրա վրա է խարսխվել, դրանով է պայմանավորվել պատմական իրադարձությունների շղթան: Եւ այս դեպքում առաջին պլան է գալիս ու դառնում գլխավոր՝ իշխանության, դրա օրինակարգության հարցը, ինչպես եւ վերնագրված է Լեւոն Տեր-Պետրոսյանի հիշյալ աշխատության՝ Առաջաբանին հետետող բուն հետազոտությունը. «**Փահաժառանգության իրավունքը եւ իշխանության «լեգիտիմությունը»**⁷ Կիլիկյան Հայաստանում»:

* * *

Կարելի⁸ է նույն կամ այսօրինակ հարցադրումներ անել Հայոց պատմության՝ Արշակունյաց եւ Բագրատունյաց թագավորությունների դարաշրջաններ-

⁵ Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 5:

⁶ Ա. Բոզոյան, Լեւոն Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, ուսումնասիրություն եւ թարգմանություններ, հ. Ա, Երեւան, 2005, 552 էջ, հ. Բ, Երեւան, 2007, 672 էջ, Բանբեր Մատենադարանի, հ. 18, էջ 340:

⁷ Ավելի ուշ, իր հանրահավաքային ելույթներից մեկի ժամանակ, լեզվաբանական մի էքսկուրսով, Լեւոն Տեր-Պետրոսյանը «լեգիտիմություն» օտար եզրույթի փոխարեն առաջարկեց **օրինակարգություն** բառը, ինչը եւ հաջողությամբ մտավ շրջանառության մեջ (ելույթի տեքստը տե՛ս «Հայկական ժամանակ», օգոստոսի 2-ին, 2011թ.):

րի համար: Կամ, ընդհանրապես, նույն դիտանկյունով եւ մեթոդով ուսումնասիրման առարկա դարձնել Հայոց պատմության այլ շրջաններ: Այսինքն՝ որեւէ դարաշրջանի քաղաքական միտքը վերհանելով՝ այն դարձնել ծավալված իրադարձությունների շրթայի ճանաչման, մեկնաբանման ու գնահատման առաջնային մեկնակետ:

Ինչպե՞ս է պատկերացրել 5-րդ եւ հաջորդ դարերի հայ քաղաքական միտքը իշխանության, մասնավորապես թագավորական իշխանության էությունը, նրա սկզբնաղբյուրի եւ օրինակարգության խնդիրը, քաղաքական մտքի հիմնական կատեգորիաներ համարվող այլ հարցերը⁸:

Խնդրի ուսումնասիրման համար անհրաժեշտ նյութը կարող է լինել երեք կարգի.

Առաջին՝ հատուկ այդ մասին գրված կամ այդ խնդրին նվիրված մասեր ունեցող, այսօրվա հասկացությամբ՝ «տեսական» աշխատություններ, ինչպիսիք, որ Կիլիկյան Հայաստանի դեպքում են՝ Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը», Վահրամ Բաբունու «Բան ի Յայտնութիւն Տեսուն եւ յօծումն Լեւոնի արքայի Հայոց» եւ Հովհաննէս Երզնկացու «Ի բան Առաքելոյ» գործերը⁹:

Երկրորդ՝ պատմագրական եւ այլ աղբյուրների ուղղակի եւ անուղղակի այլազան վկայություններ, որոնցից կարելի է մակածել, դուրս բերել հարցի պատասխանը (5-րդ եւ հաջորդ դարերի համար սա է հիմնական մեթոդը):

Երրորդ՝ պետք է նաեւ նկատի ունենալ, որ մատենագիրը, պատմիչը, երբ գրում է հին շրջանի մասին, կարող է իր շրջանի քաղաքական իրողություններից, տարածված պատկերացումներից եւ իր ընկալումներից ելնելով, ինքն էլ իր ձեռով, նույն, այսօրվա հասկացությամբ՝ «հետհայաց քաղաքագիտության» սկզբունքով իմաստավորել, մեկնաբանել, գնահատել, «վերականգնել» անցյալը: Այդ պատկերացումները, բնականաբար, պետք է ազդեին նաեւ իր շրջանի իրադարձությունների, գործող անձանց ներկայացման ու գնահատման վրա:

Հասկանալի է, որ քրիստոնյա պատմիչների պատկերացումների հիմքում կարելուք տեղ պիտի ունենար քրիստոնեական վարդապետությունը, Աստվածաշունչը:

⁸ Պատմագրական հուշարձանների հիման վրա հայ քաղաքական մտքի հետ կապված որոշ հարցերի են վերաբերում մեր նախընթաց երեք հոդվածները. «Անցյալի հիշողությունը կամ պատմությունը՝ որպես ակտիվ քաղաքական գործոն. այսօրվանից մինչեւ Մովսէս Խորենացի», Բանբեր Մատենադարանի, հ. 26, 2018, էջ 5-21; «Պետականության ռեսուրսը եւ արժեքային համակարգը՝ արտաքին քաղաքականությունը պայմանավորող գործոններ (մ. թ. ա. 2-րդ – մ. թ. 4-րդ դարեր)», ՊԲՀ, 2019, հ. 2, էջ 233 – 251; «Պետականակենտրոն եւ դավանակենտրոն արժեքային համակարգեր (5-10 դդ. պատմագրության հիմքի վրա), Բանբեր Մատենադարանի, հ. 28, 2020, էջ 133-155»:

⁹ Տե՛ս **Լ. Տեր Պետրոսյան**, Խաչակիրները եւ Հայերը, հ. 2, էջ 39-45:

Հայոց պատմության հնագույն շրջանի համար վերոհիշյալ հարցադրումների հետ կապված տեղեկություններ պարունակող հիմնական աղբյուրը Մովսես Խորենացին է, որն առաջինն է ձեռնարկել Հայոց ամբողջական պատմություն ունենալու խնդրին: Ավելին՝ նրա այդ տեղեկությունները, կարծես թե, քաղաքագիտական մի համակարգ են կազմում, իր Պատմության մի ամբողջ շարք համակարգերից մեկը¹⁰:

Խորենացին հստակ տարբերակում է երկու կարգի կամ մակարդակի իշխանություն՝ **նահապետական** ու ավելի բարձր՝ **թագավորական**:

Նահապետական իշխանություն

Հայաստանում **նահապետական իշխանության** սկիզբը Հայկն է: Բելի բռնանալու փորձին ընդդիմանալուց ու պատերազմում նրան հաղթելուց հետո, բացարձակ անկախ է Հայկի իշխանությունը, որ իր մահից հետո փոխանցվում է հերթականությամբ՝ Արամանյակին, Արամայիսին, Ամասիային, Հարմային, Արամին: «Ռատարկ տեղում» հայկազուն **նահապետների** հաստատվող իշխանությունը չվիճարկվող է **օրինակարգ** է: Նահապետական իշխանության այս շրջանում նրանք տարածվում են Հայկական լեռնաշխարհով մեկ, խաղաղությամբ յուրացնում այն: Արամի ժամանակ սկիզբ են առնում արտաքին ոտնձգություններ, որոնք, սակայն հակահարված են ստանում:

Նոյի երեք որդիներից՝ Սեմից, Քամից եւ Հաբեթից սերող՝ Հրեից, Քաղդեացվոց եւ Հայոց **նահապետների** զուգահեռ ցանկերը Խորենացին հասցնում է մինչեւ, համապատասխանաբար, Դավիթ, Սարդանապալ եւ Սկայորդի (Ա. Ե, էջ 17-19 եւ Ա. ԺԹ(Ի), էջ 58-63), եւ այդ ցանկերը, իշխանական կարգավիճակի առումով, կարծես, համազոր են:

Հայկից սկսած՝ Հայաստանն ինքնիշխան է՝ նրա սերունդների տիրապետության տակ: Ոչ մի տեղ չի ասվում, թե Ասորեստանը նվաճել է Հայաստանը: Սակայն իրադարձությունների բուն շարադրանքից այլ բան է պարզվում, այն է՝ Ասորեստանի տիրակալները (Քաղդեացվոց ցանկ) իշխանության ավելի բարձր՝ **թագավորական կարգավիճակ** ունեն: Հղելով իր աղբյուրին՝ Խորենացին այդ բառն օգտագործում է հենց Բելի համար. «*Եւ յառաջ մատուցեալ զքանս իւր ասէ, թէ ի հաստատել Տիտանեանն Բէլայ զթագաւորութիւնն իւր առ ամենեսեանն՝ առաքէ...*» (Ա. ԺԱ, էջ 34): Ընդգծված «թագաւորություն» բառով այս հիշատակմանը քաղաքական իմաստով կարելի էր երկրորդական

¹⁰ Խորենացու «Հայոց Պատմության» համակարգերի մասին տե՛ս **Գ. Սարգսյան**, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, **նույնի**՝ «Հայագիտական հետազոտություններ», ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2006, էջ 21:

Անհատականություն տալ, եթե չլինեին հայ նահապետների՝ Ասորեստանյան տիրակալների նկատմամբ ստորակա վիճակում գտնվելու մասին վկայությունները: Սակայն այդպիսի առաջին վկայությունը վերաբերում է Արամի ժամանակին, նախորդ նահապետների դեպքում, Հայկից սկսած, ենթադրվում է նրանց լիակատար ազատ ու անկախ կարգավիճակը:

Արամը հայ նահապետների շարքում Հայկից հետո ամենահերոսական կերպարն է, որի «արիության գործերը» ամենաընդարձակն են ներկայացված: Նա արժանի հակահարված է տալիս իր երկրի դեմ ոտնձգություններ անող «ապականիչներին», չորս կողմի վրա ընդարձակում Հայաստանի սահմանները, իր նվաճած ժողովուրդներին պարտադրում «*ուսանել զխօսս եւ զլեզուս հայկական*» (Ա. ԺԴ, էջ 46): Նա հայտնի էր այնքան, որ օտարների համար դառնում է Հայաստանի եւ հայ ժողովրդի երկրորդ անվանադիրը¹¹: Արամը Խորենացու համար Հայոց պատմության հերոսների առաջին եղյակում է. «*Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան – Հայկ, Արամ, Տիգրան, քանզի ըստ քաջացն ազգք քաջ...*» (Ա. ԼԱ, էջ 85):

Հայաստանն Արամի օրոք իր հզորությամբ, ըստ էության, չի զիջում Ասորեստանին, այնքան, որ արտաքին նվաճումների շարքում նա անգամ Ասորեստանից է հողեր գրավում. «... *զմեծ մասն դաշտացն Ասորեստանի կալաւ ի ծառայութեան հարկի Արամ քազում ժամանակս*» (Ա. ԺԴ, էջ 45): Ասորեստանում իշխող նրա ժամանակակից Նինոս թագավորը, որ վաղուց մտքում ուներ լուծելու իր նախնի Բելի սպանության վրեժը, զգուշանում է իր մտադրությունն իրագործելուց՝ մտավախություն ունենալով, որ Արամի դեմ պայքարում կարող է պարզապէս կործանել սեփական թագավորությունը. «*Այլ երկիրդ կասկածանաց խարդաւանակ լինելոյ իւրոյ թագաւորութեանն զայսպիսիս համարեալ իրագործութիւնս՝ ծածկէ զչարութիւնն*» (Ա. ԺԳ, էջ 44):

Եւ, այդուամենայնիվ, իր երկրի լիակատար տերը լինելով, Ասորեստանին եւ նրա թագավոր Նինոսին հզորությամբ ոչնչով չզիջելով հանդերձ՝ Արամը «կախյալ» վիճակում է Ասորեստանի թագավոր Նինոսից, որը՝ «... *հրամայէ նմա զնոյն իշխանութիւն անկասկածաբար ունել. եւ համարձակութիւն տայ նմա վարսակալ ածել մարգարտեայ եւ երկրորդ նորա կոչել*¹²» (Ա. ԺԳ, էջ 44):

¹¹ «... եւ ընդարձակել զսահմանս Հայոց յամենայն կողմանց. յորոյ անուն եւ զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք եւ Ասորիք՝ Արմէնիկք» (Ա. ԺԲ, էջ 42); «Արդ սա այսպէս հօր եւ անուանի եղեալ՝ յանուն սորա մինչեւ ցայսօր, որպէս ամենեցուն յայտնի է, որ շուրջ զմեօք ազգք զաշխարհս մեր անուանեն» (Ա. ԺԴ, էջ 47):

¹² Որպէս իշխանական հիերարխիայի բարձրագույն աստիճանի ցուցիչ՝ մարգարտայ վարսակալ կրելու արտոնությունը Խորենացուն կարող էր ծանոթ լինել Արշականիների

Հայաստանի վրա ասորեստանյան առաջին եւ միակ հարձակումը Շամիրամի արշավանքն է Արամի հաջորդ Արայի դեմ, որը, թերեւս, կարելի է կոչել «սիրային», բայց ոչ մի կերպ նվաճողական՝ այս բառի ռազմական կամ քաղաքական նշանակությամբ: Այդ արշավանքից հետո ոչ միայն Հայաստանի ու նրա իշխանության իրավական կարգավիճակը չի փոխվում, այլեւ «նվաճողը» բազում շինարարական գործերով ծաղկեցնում է երկիրը:

Կա Հայաստանի նկատմամբ Ասորեստանի գերակայության եւս երկու վկայություն. Շամիրամն է Արա Գեղեցիկի մահվանից հետո նրա որդուն՝ Արայան Արային հանձնարարում երկրի կառավարումը. «*Կարգե գնա ի վերակացութիւն աշխարհիս, մտերմութեամբ հաւատացեալ ի նա*» (Ա. Ի, էջ 63): Կախյալ եւ հարկատու վիճակում լինելը շատ ավելի ցայտուն է ներկայանում Արայան Արայի հաջորդ Անուշավանի դեպքում, որն սկզբում ընդհանրապէս զրկված լինելով իր երկրում իշխելու իրավունքից՝ դժվարությամբ է այն վերականգնում. «*Այս Անուշաւան բաւական ժամանակս արհամարհութիւն կրեալ ի Զամեսեայ՝ տուայտի ի դրանն արքունի. իսկ օգնեալ ի բարեկամաց՝ շահի գմասն ինչ աշխարհիս, հարկահանութեամբ խնամել, զկնի ապա եւ զբոլորս*» (Ա. Ի, էջ 64): Եւ վերջապէս, կարծես թէ, նկատի ունենալով բոլոր հայ նահապետների, Պատմահայրն այսպիսի բան է ասում. «*Ապա եթէ սսիցես, ուստի՞ մեզ եւ գնախնեացն մերոց գիտել զանուանս այսպէս, իսկ զբազմաց եւ զգործս՝ ասես. ի հնոցն դիւանաց Քաղդէացոց, Ասորեստանեայց եւ Պարսից, վասն մտելոց անուանց եւ գործոց նոցա ի քարտէս արքունի, իբրեւ գործակալաց եւ վերակացուաց աշխարհիս ի նոցանէ կացելոց եւ մեծաց կողմնակալաց*» (Ա. ԻԱ, էջ 66):

Բոլոր դեպքերում, չկա այն հստակ սահմանագիծ-իրադարձության արձանագրումը, որով Հայկից հետո Հայաստանում իշխող նահապետների լիակատար ինքնիշխան կարգավիճակը փոխվել է:

Այսպիսով՝

Խորենացու մոտ ակնհայտորեն հարց չի առաջանում, թե ինչպե՞ս է եղել, որ Ասորեստանն ուներ իշխանության թագավորական կարգավիճակ, իսկ Հայաստանը ոչ, եւ դա այն դեպքում, երբ Հայկը ապստամբում է Ասորեստանի թագավոր Բելի դեմ, նրան հաղթում, սպանում եւ հաստատվում է բոլորովին ազատ մի տարածքում: Կամ՝ թե ինչո՞ւ, ասենք, հսկայական ռազմական եւ այլ հաջողությունների հասած, հզորությամբ Ասորեստանին հավասարված Արամն իրեն թագավոր չի հռչակում, իսկ իր երկրին տիրում է միայն Նինոսի «հրամանով» ու նրա բարեհաճությամբ թագավորության «երկրորդը» լինելու

շրջանից. առաջին Արշակունի Վաղարշակը, որպէս բարձրագույն պատիվ, Բագրատունիների տոհմի հիմնադիր Բագարատին նույնն է արտնոււմ. «... եւ առանց ոսկւոյ եւ ականց, զկրտսեր մարգարիտն երեքտակեան վարսակալ ածել... » (էջ 110):

պատվին արժանանում: Եւ, այնքանով, որքանով Խորենացին իրերի այդ դրու-
թյունը բնական է համարում, Աշխատանք է, թե իրեն հայտնի է «իրավական»
այն հիմքը, ինչի շնորհիվ Նիհոսը կարող էր թագավոր լինել Ասորեստանում,
իսկ Արամը չէր կարող թագավոր լինել Հայաստանում: Նույն հիմքով առաջի-
նի՝ գերակայի եւ երկրորդի՝ ստորակայի այդ վիճակը համարում է ոչ թե պա-
տերազմի ու նվաճման արդյունք, այլ պարզապես՝ «տրված», բնական ու անվի-
ճարկելի:

Այդ հիմքը աստվածաշնչային համառոտ մի վկայությունն է. «*Եւ Քուշ ծնաւ
զ Նեբրովթ. նա սկսաւ լինել սկայ ի վերայ երկրի. եւ նա էր սկայ որսորդ առաջի
Տեառն Աստուծոյ. վասն այնորիկ ասեն, իբրեւ զ Նեբրովթ սկայ առաջի Տեառն
Աստուծոյ: Եւ եղև սկիզբն թագաւորութեան նորա Բաբելոն...*»¹³: Սա ընկալ-
վել է որպէս երկրի վրա առաջին թագավորության մասին վկայություն, եու-
րեմն՝ Աստծու կամքով հաստատված (որ եթէ անգամ այդ իմաստով չի գրված,
սակայն այդպէս է մեկնաբանվել): Իսկ թագավորությունը իշխանության ամե-
նաբարձր մակարդակն է, այդպէս է ընկալվել Խորենացու դարաշրջանում: Այդ
ընկալումն ունի նաեւ Սեբեոսի Պատմության հեղինակը, որ հնագույն շրջանի
համար օգտվել է նույն աղբյուրից, եւ ավելի հստակ է ձեւակերպում այս միտքը.
«... ի վերայ առն ընկերի առնոյր սուրն Տիտանն. յորում առաջին թագաւորեաց
ի վերայ երկրի»¹⁴: Նույնը նաեւ նրա հաջորդ Բելի համար. «Յայնմ ժամանակի
թագաւորեաց ի Բաբելոն որսորդ հսկայ Բէլն Տիտանեան...»¹⁵:

Կարելոր է, թե ինչպէս է հաստատվել այդ թագավորությունը. **Աստվա-
ծաշնչային արձանագրմամբ առաջինը լինելու հանգամանքով** այն օրինա-
կարգ է: Եւ հենց որպէս այդպիսին էլ կարող է այլոց համար լինել գերակա իշ-
խանության իրավունքի աղբյուր: Այդպիսի ընկալմանը որեւէ կերպ չի խանգա-
րել Սեմից սերվող Հրեից նահապետներից Աբրահամին ուղղված աստվա-
ծաշնչային մի այլ՝ «Թագաւորք ի քէն ելցեն» խոսքը¹⁶, որը դրան հաջորդող
շրջանի համար է ընկալվել որպէս թագորական իշխանության օրինակարգու-
թյան խնդիրն ապահովող հիմք:

¹³ Ծն. Ժ. 8-12:

¹⁴ Պատմություն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 48:
Առաջին թագավորության մասին նույն պատկերացումներն ունեն նաեւ հետագա պատ-
միչները (տե՛ս **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ**, Պատմություն տիեզերական — Մատե-
նագիրք Հայոց, ԺԵ, Երևան, 2011, էջ 652, **Ուխտանէս** եպիսկոպոս, Պատմություն Հայոց
— Մատենագիրք Հայոց, ԺԵ, էջ 458):

¹⁵ Պատմություն Սեբեոսի, էջ 49:

¹⁶ Ծննդ. ԺԷ, 7:

Հայկազունիների թագավորություն

Խորենացու համար Հայոց պատմության մեջ քաղաքական իմաստով բարձրակետը հաշվառվածներից մեկի թագավոր դառնալու փաստի արձանագրումն է: Ընթերցողի հետ հաճախ հաղորդակցվող ու իր զգացումները չթաքցնող Պատմահայրն այստեղ իր ոգետրության եւ երանության գագաթնակետում է.

«Եւ այժմ ահա զուարճացայց, ոչ փոքր ինչ կրելով խնդրութիւն, հասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախնոյն սերունդք ի թագաւորութեան հասանեն յաստիճան: Վասն որոյ արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել, եւ բազումս ասել առարկութիւնս ճատից...» (Ա. ԻԱ, էջ 64-65): *«Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք եւ իմոյ արեան առուք եւ հաւաստի հարազատք: Եւ սիրելի էր ինձ՝ յայնժամ գալ Փրկչին եւ զիս գնել, եւ առ նոքօք յաշխարհ զմոտսն իմ լինել եւ նոցա տէրութեամբն խրախճանալ, եւ յարդեացս ապրել վտանգիցս»* (Ա. ԻԲ, էջ 66-67):

Խոսքը վերաբերում է Հայկի սերնդի նախնային Պարույրի թագավորության աստիճանի հասնելուն: Եւ, թվում է, թե միայն ազգային զգացումներ են դրա հիմքում. որ իր արյունակիցների թագավորության աստիճանի հասնելն է նրա ցնծության եւ գերագույն հրճվանքի ամբողջական պատճառը (բերված տեքստերը հենց այդպիսի ընկալում են թելադրում): Սակայն այդ ոգետրությունը երկրորդ՝ պետական մտածողության հիմք ունի, այն է՝ Հայաստանն է թագավորության՝ անկախ պետականության կարգավիճակ ստանում: Եւ դա իր քաղաքական տարողությամբ, որպէս հեղինակի ցնծության հիմք, շատ ավելի ծանրակշիռ եւ վճռորոշ է, ինչը երեւում է, եթե բերված խոսքը դիտարկում ենք ամբողջ Պատմության ենթատեքստում:

Պատմահայրն անմիջապէս շարունակում է՝ աստվածաշնչային մի վկայությամբ ամրապնդելով իր համար շատ կարեւոր այն փաստը, որ այդ ժամանակներում Հայաստանն, իրոք, թագավորության կարգավիճակ ունէր. *«Եւ զի արդարեւ զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն՝ վկայէ եւ Երեմիա մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. «Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն եւ Ասքանազեան գնդին»:* *Եւ այս հաւաստի գոյոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ»* (Ա. ԻԲ, էջ 67):

Կարող է թվալ, թե այս երկու՝ Հայկի սերնդի նախնային թագավորության աստիճանի հասնելու եւ Հայաստանի թագավորություն դառնալու հիմքերը նույնական են, անբաժանելի, եւ Խորենացու ընկալումներում չկա նման առանձնացում: Կարծում ենք՝ կա «լակմուսի թուղթ» դա ստուգելու համար. բարձրագույն ոգետրության ու ցնծության առիթ այս երկու հանգամանքներից

որի⁶ կորուստն է, որ Պատմահորը զգացմունքային առումով հակառակ՝ մեծագույն ցավի ու հուսահատություն բեւեռ է տեղափոխում: Դա Հայկազունիների թագավորական հարստության ավարտը չէ. վերջին Հայկազուն թագավորը՝ Վահեն մեռնում է Ալեքսանդր Մակեդոնացու դեմ ապստամբելով: Դրանից հետո անիշխանության կամ խառը մի շրջան է, մինչեւ Հայաստանում հաստատվում է նոր, ոչ հայկական՝ Պարթեւ Արշակունիների թագավորական հարստությունը:

«... Վահե. սա ընդվզեալ՝ մեռանի յԱղեքսանդրէ Մակեդոնացոյ: Յայսմ հետէ, մինչեւ ցթագատորութիւնն Վաղարշակայ ի Հայս՝ ոչ ինչ ճշմարտագոյն ունիմ պատմել քեզ. քանզի շփոթ իմն ամբոխից լեալ՝ այր զարամբ ելանէիմ տիրել աշխարհիս. եւ վասն այտորիկ դիրամուտ ի Հայս լեալ Արշակ Մեծ՝ թագատրեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց» (Ս. ԼԱ, էջ 87):

Պատմահայրն, այո, նույն ոգեւորությամբ չի արձանագրում Արշակունիների հարստության հաստատումը Հայաստանում, բայց նաեւ՝ չի ողբում Հայկազունների թագավորության ավարտը, մի բան, ինչը սպասելի էր որպէս նրանց թագավորության սկզբնավորման առթիվ բուռն խանդավառության բնական «հակակշիռ»: **Չի ողբում, քանի որ պահպանվում է առաջնայինը՝ Հայաստանի պետականությունը՝ թագավորական կարգավիճակը:** Իսկ առաջին Արշակունի թագավոր Վաղարշակի պետականաստեղծ գործունեության շքեղ նկարագրությունը եւ ամենաբարձր գնահատականն ամբողջությամբ ծածկում է նրա զահակալության փաստի արձանագրման հետ կապված երեւութական սառնությունը¹⁷:

Մինչդեռ, Խորենացին զգացմունքային առումով հակառակ՝ մեծագույն ցավի ու հուսահատություն բեւեռում է հայտնվում Հայաստանում Արշակունյաց թագավորության վախճանի առիթով: Դրան է նվիրված նրա հոչակավոր «Ողբը», որ, նույնպէս, տեքստային իմաստով հասկացվում է, թե Արշակունիների հարստության ավարտին է վերաբերում, իրականում՝ Հայաստանի՝ թագավորության կարգավիճակը կորցնելուն: Ծատ լավ է, եթե այդ թագավորությունը, պետականությունը ղեկավարում է «մերագնյա» թագավորական հարստություն, սակայն ընդունելի է նաեւ ծագումով օտար թագավորական հարստությունը. կարելորն այն է, որ պահպանվում է թագավորությունը՝ անկախ պետականությունը: Այսինքն՝ **Խորենացու ընկալումներում նույնական են թա-**

¹⁷ Այդ սառնությունն արտահայտված է մասնավորաբար, «դիրամուտ» բառով. ստացվում է, որ եթե Հայաստանում ամեն ինչ կարգին լիներ եւ Վահեից հետո շարունակվեր Հայկազունների թագավորությունը, ապա Պարթեւ Արշակը չէր կարող («ոյրությանմբ») մտնել Հայաստան, եւ դա ակնհայտորեն ավելի գերադասելի է թվում հեղինակի համար:

գավորությունն է միջազգայնորեն ճանաչված պետականություն քաղաքական հասկացությունները, եւ դա նրա համար ազգային գոյության եւ հարատեւման երաշխիքն է¹⁸:

Դատանք, սակայն, Հայկազուն Պարույրի թագավորության հանգամանքներին եւ հիմքերին: Իրավական ի՞նչ հիմքով Հայաստանը դարձավ թագավորություն, կամ, այսօրվա խոսքով՝ «միջազգայնորեն ճանաչվեց» որպէս անկախ պետություն:

Ասորեստանի թագավորության պաշտոնյաներից մեկը՝ «գաւառաւ մեղացի» Վարբակեսը, խորամանկ, բայց նաեւ քաջ, օգտվելով իշխող գահակալի թուլություններից, կարողանում է զանազան միջոցներով իր կողմը գրավել տերության կարեւոր մարդկանց, այդ թվում նաեւ Հայաստանի «նախարար» Պարույրին: Նրանց օգնությամբ երկրում կատարում է պետական հեղաշրջում. «Եւ այսպէս զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ յինքն առեալ՝ տիրէ Ասորեստանի եւ Նինուէի: Բայց վերակացու զայլս թողլով Ասորեստանի՝ փոխէ թագաւորութիւնն ի Մարս» (Ա. ԻԱ, էջ 65): Ու քանի որ այդ ամենում Պարույրի դերակատարությունը առանցքային էր լինելու, նրան նախապէս թագավորական կարգավիճակ է խոստանում. «Յինքն եւ զքաջն մեր նախարար յանգուցանէ զՊարոյր, թագաւորութեան շուք եւ ձեւ նմա խոստանալով (Ա. ԻԱ, էջ 65):

Պետական հեղաշրջումը հաջողվում է, եւ Պարույրին տված խոստումը Վարբակեսը կատարում է. Հայաստանը դառնում է թագավորություն, Պարույրով սկիզբ է առնում Հայկազունների թագավորական հարստությունը: Հայկազուն թագավորների շարքը շարունակվում է մինչեւ Վահե: Սա ապաստամբելով Ալեքսանդր Մակեդոնացու դեմ՝ մահանում է:

Միջանկյալ ամփոփում.

Ստացվում է, որ, ըստ պատմագրական նյութով ներկայացող հայ քաղաքական մտքի պատկերացումների՝

- Հնագույն շրջանի համար ճանաչվում է պետական իշխանության երկու մակարդակ՝ նախապետական եւ, ավելի բարձր՝ թագավորական:
- Թագավորությունը, որպէս քաղաքական հասկացություն, հավասարազոր է «միջազգայնորեն ճանաչված» անկախ պետականության:
- Աստվածաշնչային մի արձանագրման հիման վրա Ասորեստանն է համարվել աշխարհում առաջին օրինակարգ թագավորությունը: Այդ

¹⁸ Ա. Բ. Սարգսյան, Պետականակենտրոն եւ դավանակենտրոն արժեքային համակարգեր (5-10 դդ. պատմագրության հիմքի վրա), Բանբեր Մատենադարանի, հ. 28, 2020, էջ 144-145: Անգամ այն դեպքում, երբ խախտելով Արշակունիների գահակալության շուրջ 600-ամյա ավանդույթը, Հազկերտը Հայաստանում թագավոր է նշանակում իր որդուն, դեռ այդ պետականության համար վտանգ չի համարվում, եւ փաստն արձանագրվում է առանց զգացմունքային դրսևորումների (տե՛ս **Խորենացի**, Գ. ԾԵ, էջ 330):

հանգամանքով նա ուներ «միջազգայնորեն ճանաչված» կարգավիճակը, կամ, որպես առաջին թագավորություն, ինքն էր մամնավորում «միջազգային իրավունքը»:

- Թագավորական իշխանություն ունեցողի նկատմամբ մյուս երկրների կամ ժողովուրդների (Հայաստանը, Մեդիան եւ այլք) ստորակա, կախյալ վիճակը պայմանավորված է ոչ թե նրանց թույլ կամ նվաճված լինելու, այլ ի սկզբանե նույն կարգավիճակը չունենալու հանգամանքով:
- Թագավորական իշխող հարստությունը տապալած ու նրա փոխարեն իշխանության եկած ուժը, կամ ազգը, ստանում էր նույն օրինակարգ թագավորական իշխանությունը՝ տվյալ երկրի՝ արդեն իսկ թագավորություն լինելու հանգամանքով:
- Վարքակետը, Ասորեստանի գավառներից մեկի՝ Մարաստանի «վերակացուն» կամ «կողմնակալը», չէր կարող տեղում՝ Մարաստանում, իրեն թագավոր հռչակել, ապա պատերազմելով պարտության մատնել Ասորեստանի թագավորին: **Թագավորությունը Նիսվեում էր.** օրինակարգ թագավոր լինելու համար նա պետք է հասներ Նիսվե, տիրեր այդ թագավորությունը, ինչից հետո կարող էր նաեւ այն (թագավորությունը) տեղափոխել Մարաստան:
- «Ճանաչված» թագավորության կամ «միջազգային իրավունքը» մարմնավորող երկրի գահակալը կարող էր թագավորության կարգավիճակ շնորհել որեւէ երկրի ու նրա տիրակալի: Դա, այսօրվա ընկալմամբ, հավասարազոր էր երկրի անկախության ճանաչման: Այդ իրավունքով Վարքակետն Ասորեստանի գահին տիրելուց հետո թագավորության կարգավիճակ շնորհեց Հայաստանին:
- Իշխանությունը նույն հարստության ներսում փոխանցվում էր ժառանգաբար՝ անդրանկության սկզբունքով¹⁹:

Փահաժառանգման «սահմանադրական կարգը» Արշակունյաց Հայաստանում

Պարթեւ Արշակունիների թագավորությունը հաստատվում է Մակեդոնացու հաջորդների դեմ նրանց հաղթական ապստամբության շնորհիվ. «... *սպստամբեն Պարթեւք ի ծառայութենէ Մակեդոնացոցն: Ուստի եւ թագաորեաց*

¹⁹ Խորենացու մոտ, հատկապես նահապետական իշխանության շրջանում, նույնպես ակնհայտ է իշխանության փոխանցման այդ սկզբունքը, Սերբոսի Պատմությունը դա հատուկ շեշտում է (տե՛ս Պատմություն Սերբոսի, էջ 48):

Արշակ Քաջ, որ էր ի գաւաղէ Աբրահամու, ի Քենտուրական ծննդոց, առ ի հաստատել բանին Տեառն առ Աբրահամ, թէ «թագաւորք ազգաց ի քէն ելցեն» (Բ. Ա, էջ 102): Այսինքն՝ Պարթեւ Արշակունիների թագավորական հարստության օրինակարգությունը արդեն կապվում է աստվածաշնչային, որպես այդպիսին մեկնաբանվող հիմնական «դրույթի» հետ²⁰:

Հայկազուն վերջին թագավոր Վահեի՝ Ալեքսանդր Մակեդոնացու դեմ ապստամբելուց եւ զոհվելուց հետո մինչեւ Հայաստանում առաջին Արշակունու թագավորելու «խառը» միջակայքը ավելի քան մեկ դար է. «Յայսմ յետէ մինչեւ ցթագաւորութիւնն Վաղարշակայ ի Հայս՝ ոչ ինչ ճշմարտագոյն ունիմ պատմել քեզ. քանզի շփոթ իմն ամբոյսից լեալ՝ այր զարասբ ելանէին տիրել աշխարհիս. վասն այսորիկ դիւրամուտ ի Հայս լեալ Արշակ Մեծ՝ թագաւորեցուցանէ զեղբայր իր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց» (Ա. ԼԱ, էջ 87): Տեաական «շփոթի» այդ ընթացքում Հայաստանը եթէ անգամ չունի թագավորներ, սակայն չի կորցրել թագավորություն լինելու «միջազգայնորեն ճանաչված» կարգավիճակը: Ուստիեւ, Մակեդոնացու հետնորդների դեմ պայքարում հաջողությունների հասնելուց եւ Հայաստան մտնելուց հետո Պարթեւ Արշակ Մեծը Հայաստանում ոչ թէ «կողմնակալ» կամ «վերակացու», այլ թագավոր է կարգում՝ ըստ երկրի արդեն իսկ ունեցած թագավորության կարգավիճակի՝ որպես լիակատար անկախ երկիր. «Սա թագաւորեցուցանէ զեղբայր իր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց, պատե՛հ համարեալ այսպէս իմն անշարժ իւրոյ թագաւորութեանն մնալ: Եւ քաղաք թագաւորութեան տայ մմա զՄծրբին եւ սահմանս հատանէ մմա... «եւ այլ որչափ միտք քո եւ քաջութիւն հասանիցեն. զի սահմանք քաջաց, աւէ, զէնն իրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի» (Ա. Ը, էջ 28-29): Պատկերավոր ասած՝ Պարթեւ Արշակ Մեծ թագավորը իր կրտսեր եղբայր Վաղարշակին ուղարկում է «թագավոր աշխատելու» Հայաստանում - այսպիսին է պատմիչի ընկալումը:

Պատմագրության, մասնավորապես Խորենացու տվյալներով դատելով, հայ քաղաքական միտքը Հայաստանում ճանաչում է թագավորական իշխանության ծագման երկու սկիզբ եւ երկու թագավորական հարստություն: Առաջինը Հայկազուն թագավորական հարստությունն է, որի օրինակարգության հիմքը երկրի վրա առաջին՝ Ասորեստանյան թագավորության իրավահաջորդ գահակալներից մեկի՝ Վարբակեսի կողմից Հայաստանը թագավորություն եւ Հայկի սերնդի նահապետ Պարույրին թագավոր «ճանաչելն» էր: Երկրորդ՝ Արշակունիների թագավորական հարստություն է, որի օրինակարգության հիմքը Աբրահամից սերված լինելն էր:

²⁰ Հայտնի է, որ Պարթեւական Արշակունի հարստությունը, ապահովելու համար իր օրինակարգությունը, իրեն կապել է նախորդ՝ Աքեմենյան թագավորական հարստության հետ (տե՛ս **Գ. Մարգարյան**, Հելենիստական դարաշրջանի Հայաստանը եւ Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 71):

Ինչպես հիմա, այնպես էլ միշտ՝ պետության ներքին կայունության եւ ընդհանուր անվտանգության ապահովման առումով ամենակարեւոր խնդիրը իշխանության փոխանցման հարցի կարգավորումն է, դրա օրինակարգության ապահովումը: Սա է եղել բոլոր պետությունների գրված ու չգրված «սահմանադրությունների» առանցքային հարցը, ու բնականաբար, մանրամասն կարգավորվել է համապատասխան «հողվածներով»: Ինչպիսի՞նք է եղել այդ կարգավորումը Արշակունյաց Հայաստանում:

Ասացի՛ք վերելում, որ հին՝ Արշակունյաց շրջանի համար չունենք այնպիսի գրավոր «տեսական» աշխատություններ, որոնք կարելի էր դիտարկել որպես տվյալ դարաշրջանում գործող «սահմանադրություն»: Սակայն դրա փոխարեն Խորենացու Պատմությունը, Արշակունիների հարստության հաստատման հետ կապված, ունի ընդարձակ մի գլուխ, որ, ըստ էության, հենց այդ «սահմանադրությունն» է: Այն Վաղարշակ թագավորին վերաբերող՝ *«Յօրինուած թագաորութեանն, եւ թէ ուստի՛ զնախարարութիւնսն կարգեաց, ո՛րպէս եւ զիա՛րդ կենցաղավարել հրամայեաց»* վերնագրով գլուխն է²¹:

Մի կողմ թողնելով այլ ոլորտների կարգավորումների մասին նյութերը, ստորեւ կանդրադառնանք միայն գահաժառանգման կարգի, իշխանության օրինակարգության ու դրա ապահովման մեխանիզմների հետ կապված «դրույթներին»:

Իշխանության փոխանցման գուցե ոչ ամենապատկառման, սակայն երկիրը ներքին ցնցումներից հեռու պահելու ամենապարզ եւ ամենաապահով

²¹ Այս գլուխը նախապես իր մեջ ներառել է նաեւ տպագրում «Երկրորդ թագաւորութեան լինել ի գաւակէ Աժդահակայ Մարաց թագաւորին» վերնագրով առանձնացված Ը գլխը: Նախնական վիճակը պահպանել են մի մեծ խումբ ձեռագրեր (տե՛ս **Խորենացի**, էջ 112, տող 12):

Ստ. Մալխասյանը վերնագիրը թարգմանել է «Թագաւորութեան կազմակերպությունը, եւ թէ որտեղից հիմնեց նախարարությունները եւ ինչպէս հրամայեց կենցաղավարել» (**Մովսէս Խորենացի**, Հայոց պատմություն, թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1940, էջ 70): Գագիկ Սարգսյանը ռուսերն թարգմանել է «Об устройстве государства и о том, откуда он образовал нахарарства и какие предписал правила жизни» (**Мовсес Хоренаци**, История Армении, перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Е, 1990, ст. 62), ինչն ավելի ճշգրիտ է՝ քաղաքական իմաստով հավասարազոր «սահմանադրություն» եզրի այսօրվա ընկալմանը: Հօգուտ բովանդակային ճշգրտության փոքր-ինչ ազատ թարգմանությամբ, նկատի ունենալով նաեւ այս գլխում ներկայացված նյութը, կլինի. «Պետության կառուցվածքի, եւ այն մասին, թէ ինչպէս կազմավորեց նախարարությունները եւ հասարակական կյանքի ինչ կանոններ սահմանեց», այսինքն՝ այն, ինչ պարունակում է ամեն մի սահմանադրություն:

ձեր թագավորական գահի փոխանցումն էր ավագ որդուն²²: Այս դեպքում անգամ թագավորի կամքը կամ նախընտրությունը չէր կարող դեր խաղալ, խնդիրը վճռված էր՝ երբ ծնվում էր թագավորի առաջին որդին: Վերելում ասացինք, որ Հայկազունների, ինչպես նահապետական, այնպես էլ թագավորական շրջանում իշխանությունը, ըստ առկա նյութի, նույնպես այս կերպ է փոխանցվել: Որպես «սահմանադրական նորմ» նույն կարգն է դրել նաև Արշակունյաց հարստության հիմնադիր Վաղարշակը: Սակայն միայն կարգը դնելը բավարար չէր պետության անխաթարությունն ու կայունությունը ապահովելու համար: Անհրաժեշտ էին որոշակի մեխանիզմներ՝ ինչպես այդ նորմի անխաթարությունն ապահովելու, այնպես էլ՝ ոչ ստանդարտ (օրինակ՝ թագավորի անժառանգության եւ այլ) դեպքերում լուծումներ սահմանելու համար:

Նախ՝ պետք էր ապահովել գահը հնարավոր ոտնձգություններից: Նման հավակնություններ, առաջին հերթին կարող էին ունենալ գահ բարձրացած թագավորի եղբայրները, քույրերը եւ ավելի հեռու ազգականները՝ հիմք ունենալով իրենց՝ նույն թագավորական տոհմից սերելու հանգամանքը: Նման հավակնություններ կարող էին դրսևորել նաև այլ թագավորական տոհմերից սերող, ինչպես նաև անկախ իրենց ծագման հանգամանքից, բարձր դիրքի եւ ազդեցության հասած նախարարներ:

Տրամաբանական է թվում, որ Հայաստանում թագավորական գահի հավակնելու իմաստով պետք էր զգուշանալ առաջին հերթին Հայկազուններից, որոնք տեւական ժամանակ ունեցել էին այդ իրավունքը: Ըստ Խորենացու՝ ճիշտ հակառակ պատկերն է. Վաղարշակը հենց նրանց է վստահում ամենաբարձր ու պատասխանատու պետական գործակալությունները. «... եւ նախարարութիւնս եւ նոցին նախարարութեանցն նահապետութիւնս հաստատեաց զարս պիտանիս, որք ի զաւակաց նախնոյն մերոյ Հայկայ եւ յայլոց» (Բ. Գ, էջ 104): «Եւ թիկնապահս իւր, զինու հանդերձ, ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ, արս ընտիրս եւ քաջս, նիզակաւորս եւ սուսերաւորս» (Բ. Է, էջ 110), «Իսկ զԴատ ի զաւակէ Գառնկայ, որ ի Գեղամայ՝ ի վերայ որսոց արքունականաց կարգէ» (Բ. Է, էջ 110), «Եւ գունդս եւ պահապանս դրան արքունի կարգէ զչորս, զմի մի իւրաքանչիւր բիրովք վառելովք ի նոյն ի հին ի զարմից թագաւորացն՝ որք ի մերոյն նախնոյն ի Հայկայ... » (Բ. Է, էջ 111), «Այլ առաջինն հաստատ ի զարմից թագաւորացն առաջնոց... Նա եւ ներքինիս հրամայէ ի նոյն ազգէ խզել» (Բ. Է, էջ 112): Քրմապետությունը հանձնարարում է Հայկազուն Վահունիների, մեկական բյուր զորքով երկու կողմնակալ իշխաններ է նշանակում Սիսակյաններ:

²² Նկատի ունենք գահը թագավորի ավելի արժանավոր ժառանգին փոխանցելու հնարավորությունը, ինչը, սակայն իր հետ հաճախ բերում է զանազան ապակայունացնող վիճակներ:

րից եւ Կադմոսի սերունդներից եւ այլն: Պատմահայրը բազմիցս է շեշտում Հայկազուն գործիչների դրական գործերը, եւ ոչ մի տեղ նրանք չեն հիշատակվում բացասական ենթատեքստով: Ոչ մի ակնարկ չկա նաեւ իրենց կորցրած թագավորական իշխանությանը տիրելու սպասելի հավակնության մասին, ինչի բացատրությունը Խորենացու Պատմությունից դժվար է ենթադրել:

Համարվել է, որ գահի օրինակարգությանն սպառնացող հիմնական վտանգը կարող է գալ նույն Արշակունի տոհմից:

Գահաժառանգման կարգի ապահովման մեխանիզմները

Ըստ Խորենացու՝ Վաղարշակ Արշակունին թագաժառանգման կարգը սահմանելուց հետո, ամենայն մանրամասնությամբ եւ բժախնդրությամբ կարգավորել է Արշակունի տոհմի այլ ներկայացուցիչների կողմից գահին տիրելու հնարավորության չեզոքացման հարցը: Այլ խոսքով՝ դրվել է այն մեխանիզմը, որը պետք է ապահովեր երկրի ներքին կայունությունն ամենահնարավոր սպառնալիքից: Իր քաղաքական կարեւորությամբ նույնքան առանցքային երկրորդ այս նորմը շատ կոշտ սահմանափակմամբ գահաժառանգի եղբայրներից ու քույրերին ոչ միայն արգելում էր արքունիքում մնալ, այլեւ՝ ընդհանրապես արքունի կալվածք համարվող Այրարատ նահանգի սահմաններում բնակվել: Ավելին՝ նրանց բնակության համար որոշակի տարածք էր առանձնացվում: Այդ ամենը շատ նման էր «պատվավոր արքունի»:

Ահա այս հարցի՝ Վաղարշակ Արշակունու կարգավորումը իր գահակալությունից անմիջապես հետո.

«Եւ քանզի բազում ունէր ուստերս՝ պատշաճ վարկաւ ոչ ամենեցուն առ իւր կալ ի Մծբին. վասն որոյ առաքէ զնոսա բնակել ի գաւառն Հաշտենից, եւ ի ձորն նորին սահմանակալ... Եւ միայն զառաջին որդին իւր, որ կոչէր Արշակ, պահէ առ իւր՝ ի համար թագաւորութեան, եւ զնորին ուստր, զոր անուանեաց Արտաշէս... Եւ եղեւ այս յայսմ հետէ եւ առ յայայ օրէնք ի մէջ Արշակունեաց – միոյ որդւոյ բնակել ընդ արքայի՝ փոխանորդ լինել թագաւորութեանն, եւ այլոց ուստերաց եւ դստերաց զնալ ի կողմանս Հաշտենից՝ յազգին ժառանգութիւն» (Բ. Թ, էջ 118):

Գահի ժառանգման կամ թագավորական իշխանության օրինակարգության խնդրին տված մեծ կարեւորության մասին է վկայում այն փաստը, որ Խորենացին դրան անդրադառնում է մի քանի անգամ: Դեռ մինչեւ վերոբերյալ հիմնական իրավական նորմի՝ իր տեղում արձանագրումը, նա այդ կարգի մասին խոսում է արդեն իսկ իր Պատմության Երկրորդ գրքի (որ սկսվում է Արշակունիների գահակալությամբ) ներածական Ա գլխի հենց սկսվածքում.

«Գրեմքեզ այժմ էլ որ ինչ առանձին մերոյ աշխարհիս գործք, երկրորդ առնելով զգիրս... որք յարքայէն Պարսից յԱրշակայ էլ ի վաղարշակայ եղբորէն որա, զոր մերոյ ազգիս թագաւորեցոյց. էլ որ ինչ որք յետն որա եղէն թագաւորք աշխարհիս մերոյ ի նորին սերմանէ, որդի ի հօրէ առնով զտէրութիւնն՝ անուանեցան Արշակունիք յԱրշակայ. աւելորդքն յազգ էլ ի բազմութիւն անեցեալք, էլ միակն ըստ կարգի հետեւանայ ի թագաւորութիւն» (Բ. Ա, էջ 101):

Երբ Հաշտեանք գաւառում թագաւորական կալվածքները սպառվում են, այդ նպատակի համար հատկացվում են եւս երկու՝ Աղիովտի եւ Առքերանի գաւառները.

«Հայոց թագաւորէ Արտաւազդ որդի Տիգրանայ: Սա ժառանգեցուցանէ զեղբարս իւր էլ զքորս ի գաւառս **Աղւոյ ովտի էլ Առքերանոյ**, թողլով ի նոսա զմասն արքունի որ ի շէնսն յայնց գաւառաց, հանդերձ առանձինն մտից էլ ոռնկաց, ըստ օրինակի ազգականացն որ ի կողմանս Հաշտեանից. որպէս զի լինել նոցա պատուականագոյն էլ առաւել թագաւորագն քան զայնս Արշակունիս. **միայն օրինադրէ ոչ կեալ յԱյրարատ ի բնակութիւնս արքայի**» (Բ. ԻԲ, էջ 137):

Նույն բանը (ավելի կոշտ՝ «հալածել» բառի օգտագործմամբ), Խորենացին շեշտում է նաեւ Արշակունի մի այլ գահակալի, այս անգամ Արտաշեսի որդի Արտավազդի համար.

«Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա, էլ **հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ էլ Առքերանոյ, զի մի՛ բնակեացն յԱյրարատ ի կալուածս արքայի**» (Բ. Կ, էջ 191):

Կարելի էր ենթադրել, որ թագաւորի հարազատները, Արշակունի տոհմի մյուս ներկայացուցիչները երկրի հասարակական-քաղաքական կյանքում առաջնային կշիռ, դիրք պետք է ունենային (ներքեւում կտեսնենք, որ հենց այդպէս էր Պարսկաստանում տիրող Արշակունիների դեպքում): Խորենացու վկայություններից դատելով, Հայաստանում բոլորովին հակառակ պատկերն է²³: Ծիշտ է, «աքտորվածները» հիշյալ գաւառներում ոչ մեծ կալվածքներ են ստանում էլ արքունիքից՝ «թոշակ», սակայն, ըստ էության, որոշակիորեն սահմանափակված էր նրանց՝ նոր կալվածքներ ձեռք բերելու եւ ազատ տեղաշարժի իրավունքը: Արդեն իսկ բերված վկայություններից երեւում է նույնիսկ նրանց նկատմամբ արքունիքի ընդհուպ քամահրական վերաբերմունքը եւ զսպիչ գործելակերպը: Դրա ուղղակի վկայություն կարելի է համարել Խորենացու Պատմության հետեւյալ դրվագը: Տիրանի մոտ են գալիս Հաշտեանքում ապրող իր ազգականները եւ խնդրում.

²³ Միայն մի դեպքում է, երբ Արտաշեսի ավագ որդի, գահաժառանգ Արտավազդից զատ, արքունիքում են կամ բարձր պաշտոնների են նաեւ նրա եղբայրները: Սակայն գահ բարձրանալուց անմիջապէս հետո Արտավազդը նրանց քշում է նույն «աքտորվայր» գավառները:

«Ընդարձակեա՛ մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք յոյժ» : Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիոպոտի եւ Առքերանոյ : Իսկ սոցա առաւել եւս բողոք կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեղ է մեզ՝ ոչ ինչ ունկնդիր յինի Տիրան. այլ հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէինն՝ հաւասար տրոհել յինքեանս» : Զոր բաժանեալ ըստ մարդաթոյի՝ զտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաւառն Աղիոպոտի եւ Առքերանոյ» (Բ. ԿԲ, էջ 193):

Իրենց հատկացված վերոհիշյալ երեք գավառներից դուրս, եւ հատկապես արքայանիստ Այրարատ նահանգում բնակվելը, կարող էր դիտվել պետական հեղաշրջման, «սահմանադրական կարգի» տապալման, իշխանության յուրացման փորձի հավասար, մահապատժի արժանի ծանր հանցանք: Դրա համար ցայտուն օրինակ կարող է ծառայել Արշակունի տոհմից Գնելի հետ կապված հետեւյալ պատմությունը: Գնելի հայրը՝ Տիրան թագավորի երրորդ որդի Տրդատը, Բյուզանդական կայսեր արքունիքում պատանդ էր: Տիրանը կուրացվելուց հետո գահը զիջել էր իր երկրորդ²⁴ որդուն՝ Արշակին: Կայսր Վաղենտիանոսը, ինչ-որ առիթով զայրույթի պահին, ստանալով Արշակի կողմից իր նկատմամբ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու լուրը, հրամայում է սպանել նրա եղբայր Տրդատին, ապա զորքեր ուղարկում դեպի Հայաստան: Սրված իրավիճակը Ներսես կաթողիկոսի միջնորդական ջանքերով հարթվում է: Կայսրը, զղջալով շղայնության պահին Տրդատին սպանելու հրամանի համար, որպես փոխհատուցում, նրա որդի Գնելին «հյուպատոսության» պատիվ է շնորհում եւ գանձեր նվիրում: Իր հերթին՝ կուրության պատճառով գահից հեռացած, Այրարատ նահանգի Արագածոտն գավառի Կուաշ ավանում բնակվող Տիրանը, համարելով, որ նաեւ ինքն է մեղավոր Գնելի հոր մահվան մեջ, թոռանը որպես մխիթարանք, հրամայում է ապրել նույն Կուաշ ավանում. «... տայ Գնելոյ զամենայն ինչս իւր, եւ զկալուածս գիւղից եւ դաստակերտաց. եւ ի նմին աւանի Կուաշ հրամայէ բնակել» (Գ. ԻԲ, էջ 282):

«Մեղմացուցիչ» այս հանգամանքները, սակայն բավարար չեն լինում դրված «սահմանադրական» կարգավորման խախտման փաստը հանդուրժելու համար: Մի կողմ դնելով գեղարվեստականացված պատումի՝ Գնելի դրական եւ Արշակի բացասական կերպարավորումը, վերջինիս հարցադրում-պահանջը, ավելի ճիշտ՝ սպառնալիքը եղբորորդուն, ամբողջությամբ բխում էր արդեն շուրջ կես հազարամյակ գործող «սահմանադրության» առանցքային այդ դրույթներից, ամբողջությամբ իրավական էր.

«Ընդէ՞ր բնակեցար յԱյրարատ եւ լուծեր զկարգ հայրենեաց : (Քանզի սովորութիւն էր՝ արքայի միայն բնակել յԱյրարատ եւ միոյ որդոյն նորա, զոր փոխանորդ թագաւորի պահէին, եւ այլոց Արշակունեաց բնակել ի գաւառս

²⁴ Տիրանի անդրանիկ որդին՝ Արտաշեսը վաղաժամ մահացել էր (տե՛ս էջ 271):

Հաշտենից եւ Աղիովտի եւ Առքերանոյ, հանդերձ ոռճկօք եւ մտիւք յարքունուստ): Եւ արդ՝ ընտրելի է քեզ, կա՛մ ընդունել զմահ, կամ զճալ յԱյրարատայ...» (Գ. ԻԲ, էջ 282-283):

Ստացվում է, որ Արշակունյաց թագավորության մեջ ի սկզբանե դրված «սահմանադրական կարգի» խախտմամբ իշխանության հավակնելու համար, մահապատիժ էր սահմանված: Իմիջիայլոց նկատենք, որ այսօր էլ շատ սահմանադրություններում սահմանադրական կարգի տապալումը, իշխանության յուրացումը համարվում է այն միակ ամենածանր հանցագործությունը, որ հարկ է համարվում հիշատակել հենց սահմանադրություններում:

Ընդ որում՝ Գնելին այդ հանցանքը չի ներվում նաեւ այն բանից հետո, երբ նա, ըստ ստացած հրամանի, անմիջապես հեռանում է Այրարատից: Հատուկ կազմակերպված որսի ժամանակ նա սպանվում է թագավորի հրահանգով: Ավելին, Արշակը չի ներում նաեւ իր հորը՝ Տիրանին, ըստ պատմի՝ Արշակին նախատելու, իրականում՝ «սահմանադրական կարգը» խախտող հրաման տալու համար. Արշակի հրահանգով նա խեղդամահ է արվում Կուաշ ավանում (Գ. ԻԲ, էջ 183-184): Դարձյալ մի կողմ դնելով Խորենացուն հասած պատմի գեղարվեստականացման հետեւանքով գործող անձանց դրական ու բացասական կերպարավորմամբ առաջացած զգացական ֆոնը, Արշակ թագավորը վարվել է «գործող սահմանադրության» եթե, անգամ, ոչ տառիւն, ապա՝ ոգուն համապատասխան:

Թվում է՝ թագավորական հարստության իշխանության անխաթարության պահպանման համար ավելի տրամաբանական կարող էր լինել հակառակ մոտեցումը. կառավարման առանցքային օղակներում նույն տոհմի ներկայացուցիչների ընդգրկումը, երկրի իշխանական եւ ազնվականական հիերարխիայում նրանց գերապատիվ դիրքի ապահովումը, առանցքային պաշտոններում նրանց նշանակումը: Սա նույնպես տրամաբանական մոտեցում է²⁵: Ինչպես ասացինք, ըստ Խորենացու, կարծես թե, այդպես էր նաեւ Պարսկաստանում: Ահա այդ մասին Հայոց Աբգար թագավորի կողմից Պարսկաստանում իշխող իր տոհմակիցների մի դրվագ, ինչն այլ բան չէ, քան այլ երկրի «ներքին գործերին միջամտելու» փաստ, եւ ինչին պատմիչն անդրադառնում է երկիցս.

«Երթեալ Աբգարու յարեւելս՝ գտանէ թագաորեալ Պարսից զԱրտաշէս որդի Արշարի, եւ ընդդիմացեալ նմա զեղբարս իւր. քանզի նա խորհէր ազգաւ

²⁵ Բազրատունյաց թագավորությունում եւ Կիլիկյան Հայաստանում թագավորական տոհմի այլ ներկայացուցիչների նկատմամբ նման սահմանափակումներ չեն եղել: Սակայն որպէս գահի ապահովության մեխանիզմ, թագավորների այլ ազգականներին «մեկուսացնելը» (Արշակունիների օրինակով) սահմանված է նաեւ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» (տե՛ս **L. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները եւ հայերը, Բ, էջ 470):

ի վերայն անց թագաւորել, եւ անքա ոչ առնուին յանձն... Իսկ Աբգարու համոզեալ զնոսա խաղաղանալ, ի մէջ ամենեցուն հաստատե զայս ինչ սահմանելով. **թագաւորել Արտաշիսի հանդերձ ծննդովք իւրովք՝ որպէս եւ խորհեցան, եւ զեղբարսն անուանեալ Պահլաւս՝ յանուն քաղաքին իրեանց եւ աշխարհին մեծի եւ քաջաբերոյ. որպէս զի լինել անցա պատուականագոյն եւ առաջին, քան զամենայն անխարարութիւնս Պարսից, որպէս արդարեւ զարմս թագաւորաց: Եւ դաշինս, եւ երդմունս ի միջի հաստատեալ, զի թէ լիցի սպառել զարմից Արտաշիսի ի պատանեաց՝ անքա մատիցեն ի թագաւորութիւնն» (Բ. ԻԸ, էջ 145-146):**

Ի՞նչ է նշանակում «ազգաւ ի վերայ եղբարցն թագաւորել»: Երկրորդ վկայության մէջ այս հարցի պատասխանը, կարծես, ավելի հստակ տրված է.

«Արդ՝ յետ հօրն վախճանելոյ, կամ եղեւ Արտաշիսի ազգաւ ի վերայ եղբարցն թագաւորել. զոր յանձն առեալ եղբարցն, ոչ առաւել ողորական բանիք եւ պատրոհօք, քան թէ սաստիւ անաճեալ անքա: Եւ Աբգարու պայման ուխտի եւ դաշինս ի միջի հաստատեալ – թագաւորել Արտաշիսի ծննդովք իւրովք. իսկ եթե հատցին զարմք անքա՝ եղբարցն մատչել ի թագաւորութիւն ըստ կարգի աւագութեան: Եւ Արտաշիսի զայս ի անցանէ գտեալ՝ գաւառս պարգեւէ, ազգ զնոսա սերելով յանուն իւրաքանչիւր. եւ ի վերոյ քան զամենայն անխարարութիւնս կարգէ, զնախնականն ի վերայ պահելով զանուն ազգին, զի կոչեցցինս այսպէս. **Կարենի Պահլաւ, Սուրենի Պահլաւ եւ զքոյրն՝ Ասպահապետի Պահլաւ, քանզի ի վերա գօրաց էր այր անքա** » (Բ. ԿԸ, էջ 204):

Այսինքն, եթե թագաւորն արական գծով ժառանգներ չունի, ապա նրանից հետո գահն անցնում է եղբայրներին՝ ըստ ավագության: Բնական է մտածել, որ Աբգարն այս կարգը հաստատում է Հայաստանի օրինակով: Ժառանգների բացակայության հիմքով նման լուծման մի քանի փաստ արձանագրված կա նաեւ Հայ Արշակունիների դեպքում: Այդ կարգի ամենատղիկի վկայությունը հետեւյալն է. Արտաշեսից հետո թագավորած Արտավազդն Աղիովիտ եւ Առբերան է «հալածում» իր եղբայրներին ու քույրերին (քաղվածքը տե՛ս վերելում)՝ «բայց միայն զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր անքա» (Բ. ԿԱ, էջ 191):

Աբգարը Պարսից Արշակունիների արքունիքում, ըստ էության, հենց այս կարգն է հաստատում: Այսինքն՝ «ազգաւ թագաւորելը», ինչին ընդդիմանում, ապա Աբգարի միջամտությամբ եւ ուժի գործադրմամբ («սաստիւ») դրա հետ համակերպվում են Պարսից թագավոր Արտաշեսի եղբայրները եւ քույրը, ի սկզբանէ գործում էր Հայաստանում: Այն, ինչպէս հստակվում է, նշանակում էր թագաժառանգում ուղիղ գծով՝ անդրանկության սկզբունքով, քանի դեռ այդ գիծը չի ընդհատվում թագավորի՝ արական գծով անժառանգ լինելու հանգամանքով: Այս դեպքում գահն անցնում է նրա, ըստ ավագության, հաջորդ եղբորը, ապա շարունակվում նույն կերպ՝ արդեն վերջինիս անդրանկի որդու գծով: Մի խնդիր Պարսկաստանում հնարավոր չի լինում լուծել այնպէս, ինչպէս որ

այն կար Հայաստանում. Արտաշեսը «ազգաւ թագավորելու» իրավունքի դիմաց իր երկու եղբայրներին եւ քրոջը զիջում է անում. նրանց շնորհում է ամենաբարձր կարգավիճակով նախարարական տոհմեր հիմնելու իրավունք. «որպէս զի լինել անցա պատուականագոյն եւ տուաջին, քան զամենայն նախարարութիւնս Պարսից, որպէս արդարեւ զարմս թագաւորաց» : Հայաստանում, ինչպէս տեսանք, նման բան չկար, եթէ չասենք՝ հակառակ պատկերն էր՝ բոլոր Արշակունիները, բացի անմիջական թագաժառանգից, պետք է բնակվէին Հաշտենից, Աղիովտի եւ Առքերանի գավառներում²⁶: Եւ եթէ անգամ նրանք բազմանում էին ու տեղը «նեղանում» էր, եղածը պիտի հավասար բաժանելին սիմյանց մեջ:

Թեւ Խորենացին դա ուղղակիորեն չի ասում, սակայն Պարսից թագավոր Արտաշեսի եղբայրներին ու քրոջն արված հենց այս զիջումն է հետագայում դառնում Պարսկաստանում Արշակունիների հարստության կործանման պատճառը: Տրված արտոնությունների եւ բարձր դիրքի շնորհիվ մեծ ազդեցություն ձեռք բերած այս երեք տոհմերից երկուսի՝ Սուրենի Պահլավի եւ Ասպահապետի Պահլավի օժանդակությունն է վճողորշ դառնում, որ Սասանյան Արտաշիորը կարողանում է տապալել Պարթեւ Արշակունիներին եւ գրավել գահը (Բ. ԿԷ, էջ 202), ինչով եւ սկսվում է Սասանյան հարստությունը: Այս պատմությունը, կարծես, Հայաստանում թագավորի ազգականների համար «զսպաշապիկի» դեր խաղացող վերոհիշյալ կարգի յուրատեսակ հիմնավորում-արդարացում է:

Եւ այնուամենայնիվ, Արշակունի ծագումը Հայաստանում, չնայած զահի ապահովության նկատառումներով նրանց համար դրված սահմանափակումներին, համարվել է պատիվ, իսկ որոշ դեպքերում՝ ապահովություն: Հետեւյալ օրինակները դրա ապացույցն են.

Տրդատը Հայաստանում թագավորելով, իր հարսնացուին՝ Աշխադարի դուստր Աշխենին, որպէս պատիվ, նախապէս Արշակունի է «գրում». «Եւ հրամայէ գրել զնա Արշակունի եւ զգեցուցանել ծիրանիս եւ թագ կապել, զի հարսնասցի արքայի» (Բ. ԶԳ, էջ 225-226): Արշակ թագավորը կոտորում է իր հիմնած Արշակավան քաղաքն ավերած նախարարներին, հատկապէս անխնա՝ Կամսարականներին. «Եւ ոչ ոք ի անցանէ ապրեցաւ, բայց Սպանդարատ որդի Արշարի, քանզի ունէր կին Արշակունի» (էջ Գ. ԼԱ, 295): Խոսքով թագավորը այս նույն տոհմի ժառանգին, որպէս բացառիկ պատիվ, խոստանում է հանել նրա Կամսարական տոհմից եւ գրել Արշակունի. «... հանեալ զքեզ ի հայրենեաց քոց

²⁶ Խորենացին Սանատրուկի անչափահաս որդու մասին, որին Սմբատ Բագրատունին փախցրել էր Պարկաստան, ասում է, թե երեխան ապրում էր «ընդ որդիս թագաւորին, տեղի բնակութեան առել զԲատ եւ զՈգոմն կոչեցեալ գաւառ» (էջ 163): Սակայն դժվար է այս հիման վրա ասել, թե այդ գավառները, քննարկվող հարցի առումով, նույն կարգավիճակն ունեին, ինչ Հայաստանի հիշյալ գավառները:

Կամսարականաց, եւ ի մայրենիս քո յիմս առեալ ազգ՝ Արշակունի անուամբ պատուեցից» (Գ. ԽԸ, 319): Թագավորական գահը բռնազավթած Երվանդից այդքան տուժած Արտաշէսը, նրան հաղթելուց եւ սպանելուց հետո, այնուամենայնիվ, հիշելով, թէ նա «խատնուած Արշակունւոյ է», հրամայում է «գդի նորա թաղել մահարձանօք» (Բ. ԽԶ, էջ 173): Ավելին՝ թագավորական տոհմը բժայնդիր է եղել, որպէսզի տոհմանունը ավելորդ տարածում չգտնի, անշուշտ, նկատի ունենալով գահի անվտանգության հանգամանքը: Այսպէս, Տիգրան Վերջին Արշակունիս հանգամանքների թելադրանքով ամուսնանում է իրեն գերությունից ազատած Ղուկիանոս կեսարի «մերձավոր կույս» Ռոփիի հետ եւ չորս զավակ ունենում: Երբ դա հնարավոր է լինում, նա բաժանվում է Ռոփիից եւ՝ «զլեալ ի նմանէ պատանիս չորս՝ ազգ սերէ յանուն մօրն իրեանց Ռոփեայ՝ Ռոփսեան. եւ առաջին մանկանցն՝ զգլուխ նահապետ կացուցանէ, եւ կարգէ ընդ այլ նահապարտութիւնս, զի մի՛ անուանեսցին Արշակունիք» (էջ Բ. ԿԴ, 197):

«Սահմանադրական դատարանը»

Վաղարշակ Արշակունու հաստատած «սահմանադրությամբ» կար գահաժառանգման կարգի եւ իշխանության օրինակարգության ապահովման եւս մի ինստիտուտ՝ ի դէմս «Թագադիր ասպետի» գործակալության: Որպէս տոհմական պաշտոն՝ այն հանձնարարվում է «Հրեից Բագարատին»: Մեկնելով Խորենացու պատմության հետեւյալ դրվագից, այն յուրատեսակ մի «Սահմանադրական դատարան» էր, որը ոչ միայն թագավորի թագադրման արարողությունը կատարելու եւ օրինակարգության վավերացման ծիսական գործառույթ ունէր, այլեւ թագավորի օրինակարգության ապահովման գործնական պարտավորություն:

Խորենացու Պատմության հետեւյալ դրվագը թագադիր ասպետի ինստիտուտի հիշյալ գործառույթից բացի, միաժամանակ ցուցադրում է, որ իզուր չի եղել իշխանության օրինական փոխանցման եւ օրինակարգության ապահովման այն նորմը, որը խստորեն պահանջում էր առանձնացված տարածքում մեկուսացնել Արշակունի տոհմից սերող մնացած մարդկանց՝ այստեղ տեսնելով գահին սպառնացող առաջին վտանգը: Եւ, իրոք, նրանցից մեկին հաջողվում է պետական հեղաշրջման ճանապարհով իշխանության հասնել: Խոսքը վերաբերում է մայրական գծով Արշակունի Երվանդին.

«Յետ մահուանն Սանատրկոյ արքայի շփոթի իմն թագաւորութիւնն: Երուանդ ոմն, որդի կնոջ Արշակունւոյ, թագաւորէ յութերորդ ամի Դարեհի վերջնոյ» (Բ. ԼԷ, էջ 161-162):

Ո՞վ էր այս Երվանդը: Ըստ «գրույցի»՝ «Կին ոմն յազգէ Արշակունեաց, ան-

ձամբ հարստի եւ խոշորագեղ, վարար, զոր ոչ ոք դիմագրաւեաց առնուլ կնութեան, ծնանի երկուս մանկունս յանկարգ խառնակութենէ... եւ ի զարգանալ մանկանցն կոչեն զանուանս Երուանդ եւ Երուագ: Եւ ի չափ հասեալ Երուանդայ՝ լինի սրտեայ եւ անդամովք յաղթ: Սա ի բազում իրս վերակացու առաջնորդութեամբ առաքեալ ի Սանատրկոյ, գտանի երեւելի, մինչեւ ամենայն անխարարացն Հայոց առաջին լինել» (Բ. ԼԷ, էջ 162):

Այս ակարագրութեան մեջ արդեն շեղում կա սահմանված կարգից: Երվանդը պետք է ապրեր Արշակունիների համար հատկացված գավառներում եւ հնարավորություն չուներ ար իշխանական էլիտայում հասնելու «նախարարների մեջ առաջինը լինելու» դիրքի: Կա՛մ նա լիարժեք Արշակունի չի համարվել (նկատի ունենալով ծննդյան վերոհիշյալ հանգամանքները) եւ դուրս է մնացել այս պարտադրանքից, կա՛մ Սանատրուկ թագավորը նրա դեպքում հետետողական չի եղել այդ կարգը պահպանելու հարցում: Օգտվելով Սանատրուկի անակնկալ մահվան հանգամանքից, նա գրավում է գահը: Ընդ որում՝ դրա նախապատրաստությունը նա վաղուց էր տեսել՝ կաշառքներով իր կողմը գրավելով նախարարներին. «եւ խոնարհութեամբ եւ առատաձեռնութեամբ զամենայն ոք յանգուցեալ յինքն յարեցոյց: Եւ ի մեռանելն Սանատրկոյ՝ միաբանեալ թագաւորեցուցին զնա», բնականաբար՝ «առանց արանց յազգէն Բագրատունեաց լինել թագադիր» (Գ. ԼԷ, էջ 162):

Սա պետական հեղաշրջում էր, «սահմանադրական կարգի» խախտում: Բագրատունի իշխան Սմբատը ոչ միայն չի մասնակցում դրան, այլեւ մինչեւ վերջ կատարում է թագաժառանգման սահմանված կարգի ապահովման՝ թագադիր ասպետության գործակալության իր առաքելությունը: Նրան մեծ դժվարությամբ հաջողվում է փրկել Սանատրուկի մանկահասակ որդիներից մեկին՝ Արտաշեսին, նրան փախցնել Պարսկաստան, այնտեղ մեծացնել, նրա հետ միասին ետ գալ, եւ վերականգնել օրինակարգ թագավորական իշխանությունը: Այս անգամ Երվանդին չի փրկում իր առատաձեռնությունը նախարարների ակատմամբ, նրանք անցնում են օրինական թագաժառանգի կողմը: Երվանդը պարտվում եւ արժանանում է անպատիվ մահվան. «Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ եհար վաղերք զգլուխն Երուանդայ, եւ ցրուեաց զուղիղն ի յատակս տանն. եւ այսպիսի ջախմամբ վախճանեցաւ, կալեալ թագաւորութիւնն ամս քսան» (Բ. ԽԶ, էջ 173):

Խորենացին իր Պատմության մեջ 12 գլուխ է նվիրում Երվանդի հետ կապված դրվագին (էջ 161-176): Սա նշանակում է, որ հեղինակը դրան մեծ կարեւորություն է տվել: Ընդ որում՝ չորս գլուխներում մանրամասն ներկայացվում են Երվանդի շինարարական գործերը՝ Երվանդաշատ, Բագարան, Երվանդակերտ քաղաքների կառուցումը եւ Ծննդոց անտառի հիմնումը, գործեր, որոնք

կարող էին բնութագրական լինել դրական կերպարով ամեն մի գահակալի համար: Ինչպես նկատում է Մանուկ Աբեղյանը՝ «Վիպասանը Երվանդին էլ օժտել է բազմակողմանի հարուստ բնավորությամբ եւ մարդկային լավ կողմերով... նա հաղթանակ է, սրտոտ, խոնարհ, առատաձեռն, շինարար, խելոք կտավարիչ, աշխարհի համար հոգացող: Նա նույնիսկ վեհանձն ու պատվավոր է այն աստիճանի, որ իր թշնամի Սմբատի դուստրներին գերելով՝ «պահէ յամրոցին յԱնի ոչ վատթարապէս»²⁷: Երվանդը, դրանով հանդերձ, քաղաքական իմաստով ոչ միայն դրական կերպար չէ, այլ ճիշտ հակառակը: Կարծես թէ, այս պատմությանը մեծ կարեւորություն տալու եւ, ըստ այդմ, ընդարձակ ու մանրամասն ներկայացնելու հիմքում առաջին հերթին հենց քաղաքական «դաս» տալու խնդիր է լուծել Խորենացին:

Իսկ քաղաքական այդ դասը հետեւյալն է.

- Երկրի հիմնական օրենքը խախտելը, «սահմանադրական կարգը» տապալելը եւ իշխանությանն ապօրինի տիրելը ծանր հանցագործություն է:
- Ոչ օրինակարգ թագավորը, եթե անգամ իր գործունեության ընթացքում բազմաթիվ դրական գործեր է անում, չի դադարում հանցագործ լինելուց:
- Իր ոչ օրինակարգության դիմաց երկրի ղեկավարը ստիպված է լինում վճարել նաեւ երկրի, պետության հաշվին. այս դեպքում՝ տարածքներով (Երվանդը Հայկական Միջագետքը զիջում է Հռոմեացիներին) եւ ինքնիշխանության սահմանափակմամբ (ավելի շատ հարկ է վճարում)²⁸:
- Անկախ ամեն ինչից, նույնիսկ դրական գործերից, «սահմանադրական կարգը տապալած», ապօրինի իշխանության հասած թագավորը, որպես ամենածանր հանցանք գործած անձ, արժանի է դաժան ու անպատիվ մահվան:

Կարգավորումներ ոչ ստանդարտ իրավիճակներում եւ այլ շեղումներ

Առաջին ոչ ստանդարտ իրավիճակն առաջանում է Աբգար թագավորի մահվանից հետո. «Յետ մահուանն Աբգարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս. քանզի Անանուն որդի նորա կապեաց թագ՝ թագաւորել յԵդեսիս, եւ քեորդի նորա Սանատրուկ ի Հայս» (Բ. ԼԴ, 157):

²⁷ Մ. Աբեղյան, Երկեր, Գ, Երևան 1968, էջ 66-67:

²⁸ Այդ մասին Խորենացին ցավով գրում է. «Բայց թիկունս ամենով Երուանդայ զՀռոմայեցիս՝ ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն Վեսայիանու եւ Տիտոսի, թողով ի նոսա զՄիջագետս: Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց ի Միջագետաց. եւ հարկս եւս առաւելագոյնս տայր ի Հայոց Երուանդ» (Բ. ԼԸ, էջ 164):

Խորենացին հայտնում է, որ այս դրվագն արդեն ուրիշներից պատմվել է, եւ ինքը համառոտ կլինի: Իսկ դրվագը կապված է քրիստոնեության հետ առաջին ծանոթությանը: Աբգարի Անանուն որդին դեմ է գնում քրիստոնեությանը, վերականգնում է հեթանոսությունը, սպանում է Թադեոս առաքյալի կողմից նշանակված Ադդեին: Չի ասվում, բայց հասկացվում է, թե հենց այս պատճառով թագավորական իշխանության օրինակարգության վրա հսկող թագադիր Բագրատունիները, նրանց հետ մատչելի Արծրունիները, ոչ թե օրինական գահաժառանգ Աբգարի Անանուն որդու, այլ Աբգարի «քեռորդի» Սանատրուկի կողքին են. *«Սանատրուկ թագաւորեալ՝ զօրս ժողովէ ի ձեռն քաջացն Բագրատունեաց եւ Արծրունեաց դայեկաց իւրոց, իջանել տալ պատերազմ ընդ որդիսն Աբգարու»* (Բ. ԼԷ, էջ 159): Սակայն մինչեւ ընդհարումը Աբգարի որդին «աստվածային պատիժ» է կրում. Եդեսիայում տաճարի շինարարության ժամանակ այդն է ընկնում վրան, մահանում է:

Սանատրուկը, գահն անխաթար պահելու տրամաբանությամբ ու այդ ժամանակ ընդունված գործելակերպով, կոտորում է Աբգարի որդիներին, բայց խնայում է դուստրերին՝ արտաքսելով Հաշտեանք. *«Նա եւ զամենայն զաւակ տանն Աբգարու մաշեաց սրով, բայց յաղջկանց, զորս եհան ի քաղաքէն բնակել ի կողմանս Հաշտեանից»*: Իսկ Աբգարի տիկնոջն անգամ պատվում է՝ թողնելով Միջագետքի «Տիկնությունը» (Բ. ԼԷ, էջ 159): Օրինակարգ թագավորն այլեւս Սանատրուկն էր, եւ գահաժառանգությունը պետք է շարունակվեր նրա գծով:

Երկրորդ ոչ ստանդարտ իրավիճակն ստեղծվում է հենց այս Սանատրուկի մահվանից հետո, երբ գահ է բարձրանում մայրական գծով Արշակունի, հայրական գծով՝ անհայտ, Երվանդը: Սա համարվում է ոչ օրինակարգ գահակալություն. այս մասը վերելում արդեն ներկայացվեց:

Երրորդ ոչ ստանդարտ իրավիճակը Տրդատ Մեծից հետո է առաջանում: Օգտվելով խառը վիճակից, դարձյալ Սանատրուկ անունով մի այլ Արշակունի փորձում է գրավել գահը. *«Իսկ Սանատրուկոյ թագ կապեալ ինքեան՝ ունի զքաղաքն Փայտակարան. զօրութեամբ օտար ազգաց խորհէր տիրել բոլորումս Հայոց»* (Գ. Գ, էջ 260): Այս փորձը չի հաջողվում, եւ քիչ հետո Սանատրուկը հայկական զորքերից հալածվում է:

Նույն խառը վիճակի հետ կապված կա մի այլ դեպքի արձանագրում, ինչի մեկնաբանությունը չափազանց կարեւոր է եւ բացահայտում է ժամանակի քաղաքական պատկերացումների առանցքային դրույթներից եւս մեկը. *«Քանզի ի վախճանել էրանելոյն Տրդատայ՝ մեծ իշխանն Բակուր, որ բղէաշխն Ադձնեաց կոչէր, տեսեալ զՍանատրուկ թագաւորեալ ի Փայտակարան՝ զնոյն խորհեցաւ եւ ինքն. թէպէտ եւ ոչ թագաւորել, զի ոչ էր Արշակունի, այլ տիրազլոյխ կամեցաւ լինել»* (Գ. Գ, էջ 260): Ըստ այսմ, պատկերավոր խոսքով կարելի է ասել, որ

Արշակունիների շրջանում գործող «սահմանադրության» առաջին «անփոփոխելի» հոդվածը եղել է՝ «Հայաստանում թագավորական իշխանությունը պատկանում է Արշակունյաց տոհմին»: Ահա թե ինչու, հիշյալ բղեշխը չի համարձակվել իրեն թագավոր հայտարարել, ինչպես տոհմով Արշակունի Սանատրուկը Փայտակարանում, այլ առավելագույնը՝ «տիրազլուխ լինել»:

Արշակունիների ամբողջ Պատմության մեջ, եզակի դեպքը, երբ այլ տոհմից մեկն է հավակնում թագավորական գահին՝ Մեհրուժան Արծրունին է: Ընդ որում, ոչ թե ինքն է մտածում, այլ դա նրան խոստանում է Պարսից թագավորը, իսկ ինքը ընդունում է. «Յետ մահուանն Արշակայ գումարեաց Ծապոն գօր բազում ի ձեռն Մեհրուժանայ, եւ արձակեաց ի Հայս... եւ խոստացաւ տալ նմա զՀայոց թագավորութիւնն, միայն թէ զնախարարսն նուանելով՝ ի դէն մագդեզանց զաշխարհս դարձուցէ» (Գ. ԼԶ, էջ 301): Որպես վեցդարյա «սահմանադրական կարգը» խախտող արարք, սա շատ ավելի ծանր հանցագործություն էր, քան եթե նման բան աներ գահին տիրելու իրավունք չունեցող, բայց տոհմով Արշակունի որեւէ մեկը, ինչպիսիք եղել էին Երվանդը կամ Սանատրուկը: Բնականաբար, ըստ իր հանցանքի, շատ ավելի ծանր պետք է լիներ Մեհրուժանի պատիժը: Իսկ պատժողն էլ պետք է լիներ (ինչպես Երվանդի դեպքում) հենց գահաժառանգման օրինականության վրա հսկող Թագադիր ասպետի ինստիտուտը: Սմբատ Բագրատունի իշխանը նրան գերի վերցնելուց հետո շիկացած երկաթաձողը «... կրկնեաց բոլորակ որպէս պսակ, եւ յոյժ արտաշէկ արարեալ, ասէ. «Պսակեմ զքեզ Մեհրուժան, քանզի ի խնդիր էիր թագաւորել Հայոց. եւ ինձ ասպետիս պարտ է զքեզ պսակել ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց» (Գ. ԼԷ, 305): Բնորոշ է նաեւ Խորենացու վերաբերմունքն արտահայտող արձագանքը. «Եւ այսպէս սատակեցաւ չարն»: Ընդ որում՝ Արշակունի Երվանդի սպանության փաստի առիթով նա նման վերաբերմունք չի արտահայտում:

Արշակունիների շուրջ վեցդարյա (ըստ Խորենացու) թագավորության ընթացքում գահաժառանգման ամփոփ պատկերն այսպիսին է.

Ա) Անխաթար գործում է գահաժառանգման կարգը անդրանկության սկզբունքով (16 դեպք):

Բ) Թագավորի անժառանգության բերումով գահն անցնում է նրա հաջորդ եղբորը (4 դեպք՝ Արշամ, Տիրան, Տիգրան Վերջին, Վուսնշապուհ):

Գ) Եւ 3 դեպքում գահն անցնում է այլ Արշակունու, եւ դա օրինական է համարվում (Սանատրուկ, Վարազդատ, Խոսրով):

Դ) Գահին ապօրինի տիրելու երկու դեպք է արձանագրվում. մի դեպքում՝ գահին տիրում է ծագումով Արշակունի Երվանդը: Երկրորդը՝ գահին տիրելու

չհաջողված փորձ է. մասնակի մի տարածքում՝ Փայտակարանում իրեն թագավոր է հռչակում Սանատրուկ անունով մի Արշակունի (սա չի մտնում Արշակունի թագավորների ցանկի մեջ):

Անգամ այն բանից հետո, երբ Հայաստանում գահակալման խնդիրը կապվում է նաև Հոռմի կամ Պարսկաստանի ճանաչման հետ (Տրդատ Ա-ից սկսած) վերջիններս իրենց ընտրություններում դուրս չեն գալիս Արշակունիների շրջանակից, Հայաստանում սահմանված կարգից:

Արշակունիների վեցդարյա իշխանության շրջանում նրանց թագավորական իշխանության ընդհատման երկու դեպք կա: Առաջինը՝ Տրդատ Մեծից առաջ Հայաստանը 26 տարի ղեկավարում է Սասանյան Արտաշիրը «պարսիկ գործակալօք», եւ մեկ տարի նրա Ծապուհ անունով որդին՝ որպես Հայաստանում կարգված թագավոր: Երկրորդը՝ 4 տարի Հայաստանի գահին Պարսից Հազկերտի որդի Ծապուհն է (վերջին Արշակունի թագավորից առաջ), որին դարձյալ հայրն է հանձնում Հայաստանի գահը: Խորեհնացու պատմած մի քանի անեկդոտային պատմություններ վկայում են, որ հայ ազնվականությունը չի ընդունում Ծապուհին որպես թագավոր, նրան ատում եւ ոչ երկար թագավորության ամբողջ ընթացքում ծաղր ու ծանակի է ենթարկում²⁹: Եւ սրան հաջորդում է երեք տարվա «անիշխանություն», մինչեւ վերջին Արշակունի թագավոր Արտաշեսի գահ բարձրանալը:

Այսինքն՝ Արշակունիների Հայաստանի գահին տիրելու իրավունքը համարվել է բացառիկ, որեւէ կերպ չի վիճարկվել, եւ դա ամբողջն ասած է եղել երկրի քաղաքական ընտրանու պատկերացումներում, դրա հետ հաշվի է աստել ժամանակի «միջազգային իրավունքը»³⁰:

²⁹ «Վասն որոյ դիրամուտ եղել յաշխարհս Ծապուհ... սակայն ոչ կարաց հանել զմիտս նախարարացն, ամենեցուն ատեցեալ զնա, եւ ոչ արքայօրէն մեծարէին զնա յօրս կամ ի խաղու» (Պ. ԾԵ, 330):

³⁰ Արշակունյաց տոհմից ծագելու հանգամանքը Հայաստանից դուրս դեռ երկար ժամանակ համարվել է որպես թագավորական իշխանության օրինակարգության հիմք: Բյուզանդիայի Վասիլ Ա կայսրը 876 թ. պատվիրակություն է ուղարկում Աշոտ Բագրատունու մոտ, տեղեկացնում է, որ **ինքը ծագում է հայ Արշակունիների տոհմից**, եւ, նկատի ունենալով, որ Բագրատունիները թագադիր ասպետի պարտականություն եւ իրավունք են ունեցել, նրանից թագ է խնդրում (տե՛ս Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի յուսարանեայ. Վենետիկ, 1862, էջ 85): Մինչդեռ, հայ պատմագրության մեջ Արշակունի ծագումը, որպես օրինակարգ թագավորության վերականգնման հիմք, հետագայում, կարծես թե, չի շրջանառվում: Սա, թերեւս, բացատրելի է նրանով, որ մի տեսակ սրբագործվել էր Ներսեսի բերանով Արշակունիների վրա դրված նզովքը. «Եւ կործանումն՝ որ բերանով մարգարէին ածի ի վերայ ձեր, ընկել ազգիդ Արշակունեսաց զհետին բաժակն, արքջիք, արբեսչիք եւ կործանեսչիք, եւ այլ մի՛ եւս կանգնեսչիք» (**Բուզանդ**, Մատենագիրք Հայոց, Ա, էջ 343): Այս տոհմից նաև հայ ազնվականական էլիտայում շատ թե քիչ նշանակալի կշիռ ու դերակատարություն ունեցած իշխանական տան մասին

Խորենացու պատկերացումները թագավորական իշխանության օրինակարգության, մասնավորապես՝ գահաժառանգման կարգի մասին, կարելի է համարել նրա Պատմության հերթական կուռ համակարգերից մեկը: Ակնհայտորեն նա չէր կարող դա այդպես պատրաստի վիճակում ստանալ իր աղբյուրներից: Այդ համակարգը կառուցելու համար Պատմահայրն ունեցել է երկու բաղադրիչ. առաջին՝ աղբյուրների տրամադրած տեղեկությունները, երկրորդ՝ որպես ժամանակակից՝ Արշակունյաց թագավորության «սահմանադրության»՝ իր քաջատեղյակությունը, որը եւ «հետհայաց քաղաքագիտության» սկզբունքով կիրառել է աղբյուրների համապատասխան նյութը «խոսեցնելու» եւ սովյալ համակարգը կառուցելու համար: Դժվար է դնել այդ երկու բաղադրիչների սահմանազատման խնդիր, քանզի նախ՝ մեզ չեն հասել Խորենացու համապատասխան աղբյուրները, մյուս կողմից՝ Պատմահայրը աշխատելու իր հայտնի, այսօրվա հասկացությամբ եւ չափորոշիչներով՝ գիտական մեթոդով³¹ դրանք ոչ թե մեխանիկորեն գումարել, այլ երկուսից սինթեզել է այն, ինչը եւ ներկայացնում է իր Պատմությամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Պատմական իրականության օբյեկտիվ վերհանման գործում կարեւոր ռեսուրս է պարունակում աղբյուրների՝ նոր դիտանկյուններից եւ նոր մեթոդների գործադրմամբ քննությունը: Նման մի ուսումնասիրություն է Կիլիկյան Հայաստանի պատմությանը նվիրված՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները եւ հայերը» ուսումնասիրությունը: Այն իրականացված է պատմա-քաղաքագիտական դիտանկյունից եւ հետհայաց քաղաքագիտության մեթոդով՝ առաջնային խնդիր ունենալով գահաժառանգման կարգի, իշխանության օրինակարգության հարցերի ուսումնասիրումը որպես քաղաքական պատմության հիմք:

Նույնպիսի հայեցակարգով Արշակունյաց դարաշրջանի քննությունը կարելի է սկսել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» համապատասխան վկայությունների ուսումնասիրմամբ:

Ինչպես հայտնի է, Պատմահայրն իր աշխատությունը շարադրել է գործադրելով մեթոդներ, որոնք հատուկ են արդի գիտությանը: Համապատասխան նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա նաեւ համակարգված քաղաքական, քաղաքագիտական պատկերացումներ է ունեցել, որոնք եւ գոր-

չի խոսվում: Մրա բացատրությունն էլ պետք է որ լինի այն հանգամանքը, որ վերելում քննարկված «սահմանադրական նորմը», օբյեկտիվորեն, խանգարել էր Արշակունի տոհմի շառավիղներին նման դիրքի հասնելու հնարավորություն ունենալ կամ ստեղծել:

³¹ Գ. Սարգսյան, Հայագիտական հետազոտություններ, էջ 17:

ծաղրել է իր աշխատությունը շարադրելիս: Խոսքը վերաբերում է իշխանության ծագման եւ մակարդակների, նույն՝ թագածառանգման կարգի, իշխանության օրինակարգության, դրա ապահովման մեխանիզմներին եւ նմանօրինակ այլ հարցերի: Խորենացին ճանաչում է իշխանության երկու մակարդակ՝ նահապետական եւ թագավորական: Թագավորական շրջանը բաժանում է երկու մասի՝ Հայկազունիների հարստության եւ Արշակունիների հարստության: Արշակունյաց թագավորության շրջանի համար նրա բազմաթիվ տեղեկությունները մի հստակ, ներքուստ անթերի համակարգ են կազմում՝ հերթականը նրա Պատմության արդեն հայտնի համակարգերի շարքում: Եւ դա, ըստ էության, այլ բան չէ, քան Արշակունյաց շրջանում գործող «սահմանադրության» վերհանման մի փորձ: Խորենացու ներկայացրած այդ «սահմանադրությունը» սինթեզված է երկու քաղաքիչից՝ իր աղբյուրների տրամադրած նյութից եւ, որպես ժամանակակից, սեփական իմացություններից: Դատելով նրա գործադրած ջանքերից, վստահ կարելի է ասել, որ Պատմահայրը դա կարեւորագույն հանգամանք է համարել ժողովրդի քաղաքական պատմության շարադրման համար, ինչը եւս մեկ անգամ ցուցադրում է նրա, ինչպես պետական, քաղաքական մտածողությունը, այնպես էլ՝ գիտնական-պատմաբանի որակները:

ASHOT SARGSYAN

Mesrop Mashtots Matenadaran

MOVSES KHORENAC’I’S PERCEPTION OF KINGDOM AND LEGITIMACY OF ROYAL POWER/MONARCHY

Keywords: Retrospective politology, legitimate government, patriarchy, monarchy, independent statehood, Haykazuni dynasty, Arshakuni dynasty, status of kingdom, inheritance of the throne.

The examination of sources from new perspectives and the application of new methods are important for the purpose of revealing historical reality in an objective manner. Such a study is Levon Ter-Petrossian's *The Crusaders and the Armenians*, dedicated to the history of Cilician Armenia. The study was carried out from the historical-political point of view that uses the retrospective approach, having as a priority task the elucidation of such issues as the order of succession to the throne and the legitimacy of government as a basis for writing of political history.

The Arsacid era can be examined with the same concept by studying the relevant information offered by *The History of the Armenians* by Movses Khorenac’i.

As is known, the “father of Armenian history” wrote his work using methods that are specific to modern science. The study of his text shows that Khorenac’i also had systematized political and politological notions which he used when writing his work. These notions apply to his treatment of the origin and levels of government, as well as of the order of succession to the throne, the legitimacy of government, the mechanisms to achieve it, and other similar issues. Movses Khorenac’i recognizes two forms of government: patriarchal and royal. He divides the royal phase into two periods defined by the Haykazuni and Arsacid dynasties. His numerous testimonies about the Arsacid period form a clear and internally faultless system, similar to his well-known systems in his *History*. In essence, that faultless system is nothing but an attempt by Khorenac’i to highlight the “constitution” functioning during the Arsacid period. The “constitution” outlined by Khorenac’i is the *synthesis* of two components: the data provided by the sources he used and the information that was available to him as a contemporary. Judging by the efforts he exerted, it can be stated with confidence that the “father of Armenian history” considered that system an important attribute for the writing of the political history of the people. That, in turn, testifies once more both to Khorenac’i’s qualities as a high caliber thinker on state and political affairs as well to his skills as a scholar and historian.

MICHAEL E. STONE

The Hebrew University of Jerusalem

HIDDEN IN CRANNIES IN NOAH'S ARK

Keywords: Noah, Embroidered Bible, raven, Nersēs, corpses of Adam and Eve, cheirograph.

The nooks and crannies of manuscripts may contain hidden treasures. Empty spaces were often left in manuscripts at the end of works when the scribe wished to commence copying the next text on a new page. Other times the scribe would leave wide margins to heighten the sense of luxury conveyed by the artefact. On yet other occasions, at the end of a manuscript, an unwritten page or two remained of the last quire of writing material after the scribe had finished copying the content.

All these and other spaces available after the completion of a manuscript frequently beckoned to later scribes and readers to write something upon them. It was not just *horror vacui* that prompted mediaeval readers, or the relatively high cost of preparing animal skin for parchment or laying paper by hand, but often the idea that making a manuscript was an act of religious piety, and this was certainly so in the Armenian tradition. The Armenians viewed their very alphabet as divinely revealed to St. Mesrop, and sacrality adhered to hand-written books. Thus, quite apart from the common human urge to leave a sign of one's presence,¹ spaces in manuscripts were frequently filled with short texts, pious wishes, brief prayers or intercessory wishes for the person and family of the scribe, the reader, the commissioner, the paper-maker, and so forth. There were even curlicues, scribbles or designs and occasionally sketches by the copyist. Moreover, it was not only scribes who wrote such notes and prayers, but readers too recorded as pious deeds their very perusal of the book. They often added something of their own knowledge or sentiments, the piety of their hearts' desires, in the inviting, empty spaces.²

* It is with great pleasure that I dedicate this article to Levon Ter Petrossian, scholar and statesman. His contributions both to scholarship and to the Armenian people have been of very great significance. *Ad multos annos*.

¹ That urge, of course, led to the writing of graffiti, which are of considerable value for historians, linguists, epigraphers, palaeographers and others.

² Concerning Armenian colophons, see the Introduction to Avedis K. Sanjian. *Colophons of Armenian Manuscripts 1301-1480*, (Harvard Armenian Texts and Studies 2; Cambridge MA: Harvard University Press, 1969).

Matenadaran manuscript no. M1172 was written in the seventeenth century, before the year 1678.³ It is a *Miscellany* (Ժողովածոյ) containing various theological writings including Grigor Tat'ewac'i's *Solutiones* (Լուծմունք) on the *Book of Job* and Nersēs Lambronac'i's *Commentary on the Dormition of John*.⁴ The *Dormition of John* is an apocryphal work often found at the end of Armenian New Testament manuscripts. It is usually designated by its opening phrase: *էր ընդ եղբարս* "he was with his brothers."⁵

The original scribe of M1172 had ended a composition on fol. 108r in the top one third of column ii and the rest of that column on fol. 108r and both columns of fol. 108v were left blank at the time of the original copying. In this blank area that directly follows the preceding work, another scribe later copied a short text that takes up the space remaining on column ii of fol. 108r and most of column i of fol. 108v. In column ii of fol. 108v there is a colophon in a third hand. All three scribes wrote in *notrgir* script. This colophon is succeeded by the first part of yet another colophon, written by the same scribe. Since the text that took up the empty space deals with the Bible, its copying was clearly an act of piety and, furthermore, it conformed in overall theme with the other biblically associated works preserved by the manuscript. The scribe of this "filler", as passages copied into blank spaces are called, is quite other than the one who produced the manuscript and his *notrgir* script is less regular and distinct. His is a regular book hand such as is often found in learned texts. It is somewhat less formal than the main scribe's, but definitely the work of an educated man and also likely of the late seventeenth or early eighteenth century. This filler is an extract from an erotapocritic (Question and Answer) work and preserves several questions and answers relating to Noah's Ark.

Since it bears no title, I have dubbed this short text *Noah and the Cheirograph*. Indeed, quite a number of Armenian apocryphal writings and traditions focus on Noah and the Ark. The following are ten published Armenian apocryphal compositions dedicated to these subjects that I have encountered over the years:⁶

³ See A. Kēoškeryan and Y. K'edšēyan, Մայր Յուդայկ հայերէն ձեռագրաց Մաշտոցի սնուան Մատենադարանի [General Catalogue of Armenian Manuscripts of the Maštoc' Matenadaran], (Erevan: Nairi, 2008), 529-534.

⁴ This commentary was published recently by R. W. Thomson, Nersēs of Lambron: Commentary of the Dormition of St. John, ATS 1 (Leiden: Brill, 2017).

⁵ See Vahan Hovhannessian, "The Repose of the Blessed John in the Armenian Bible," in P. Piovanelli, Tony Burke, and T. Pettipiece eds., *Rediscovering the Apocryphal Continent: New Perspectives on Early Christian and Late Antique Apocryphal Texts and Traditions*, (Tübingen: Mohr Siebeck, 2015), 245-266.

⁶ There are more Noah compositions of this general type still unpublished in manuscripts.

- *Generations of the Sons of Noah*,⁷
- *The Story of Noah in Biblical Paraphrases*⁸
- *Concerning Noah's Ark*,⁹
- *What are the Dimensions of the Ark?*¹⁰
- *The Form and Structure of Noah's Ark*¹¹ This text is formulated as questions with very long answers.
 - The Noah story in *Three Tales — Solomon, Noah, and Satan*.¹²
 - *Sermon Concerning the Flood*,¹³
 - Questions about Noah and the Ark in *Questions and Answers from Holy Books*.¹⁴
 - The Noah section of *Short Story of the Holy Forefathers*.¹⁵
 - *Peoples of the Sons of Noah*.¹⁶

⁷ M. E. Stone, *Signs of the Judgment, Onomastica Sacra and the Generations from Adam*, (UPATS 3; Chico: Scholars Press, 1981).

⁸ M. E. Stone, *Armenian Apocrypha: Relating to Patriarchs and Prophets*, (Jerusalem: Israel Academy of Sciences, 1982), 88-101.

⁹ M8531 (15th century); M4618 (17th century), fols. 53r-v; forthcoming in M. E. Stone, *Armenian Apocrypha: Further Tales of Biblical Heroes*, (SBLEJL; Atlanta: SBL, forthcoming).

¹⁰ M8531 (15th century), fols. 82r-82v; published in M. E. Stone, *Armenian Apocrypha: Relating to Angels and Biblical Heroes*, (SBLEJL 45; Atlanta: SBL, 2016), 16-17; also Galata manuscript no. 154, p. 303, held by the Armenian Patriarchate, Istanbul.

¹¹ M4618 (17th century), fol. 53. In Stone, *Further Biblical Heroes* the complete text is made public. An extract from it has already been published in M. E. Stone, *Armenian Apocrypha: Relating to Biblical Heroes*, (SBLEJL 49; Atlanta: SBL, 2019).

¹² M2188 (15th century), 265r-266v; forthcoming in Stone, *Further Biblical Heroes*. The Noah story in M2188 is paralleled by text no. 789 vii in Aram Łanalanyan, Աւանդապատում [Traditional History], (Erevan: Academy, 1969), 335; in his notes on p. 478 he refers to N. Marr. Сборники Притч Вардана. Материалы Для Истории Средневековой Армянской Литературы. [Collections of Vardan's Parables. Materials to the History of the Armenian Medieval Literature], 3 Vols, (St. Petersburg: Typography of the Imperial Academy of Sciences, 1894), 2. 316-317 as his source. This incident is also embedded in Text no. 42 published by Anushavan Žamkoč'yan in Աստուածաշունչը եւ հայ բանավոր ավանդութիւնը [The Bible and Armenian Oral Tradition], (Erevan: Erevan State University, 2012), 176-179.

¹³ Some excerpts from this text were published in Stone, *Adam and Eve*, on pp. 174-79. The work now needs re-publishing in full.

¹⁴ Stone, *Further Biblical Heroes*, forthcoming: At the end of the present article, an excerpt from the translation of the Noah section of *Questions and Answers from Holy Books* is given for sake of comparison. A secondary, abbreviated version of this document was published earlier in Stone, *Angels and Heroes*, with its Noah questions on p. 98-99.

¹⁵ M2111 (1654-1675), fol. 231r; see Stone, *Angels and Heroes*, 173-74.

¹⁶ M8494 (17th century), fol. 216r; published in M. E. Stone, *Signs of the Judgment*, 224-27 and another copy is in M533 (1660), fol. 234. This document also occurs in the oldest paper manuscript in Armenian, M2679 (981 CE) on fol. 31r and is also embedded in Movsēs Dasxuranc'i,

Noah and the Cheirograph (the short text recorded in the filler) is not familiar to me from any other source. This does not mean that no other copies exist, for they may well, and, indeed, quite a number of such erotapocritic texts are to be found in medieval manuscripts still unpublished.¹⁷

Noah and the Cheirograph

The text asks four questions, three relating to the Flood and the Ark and one, about Adam's cheirograph, that subject perhaps suggested to the author by the reference to Adam's remains in the answer to the second question. The four questions are:

- (1) Did they eat food in the Ark?
- (2) What gave light in the Ark?
- (3) What happened to the raven that Noah sent forth and why did it not return?
- (4) What is the bill of indebtedness (cheirograph) that Christ tore up?¹⁸

Text

1. Հարց: Կերակուր կերա՞ն ի տապանին, թէ ոչ:

Պատասխանի: Թէպէտ ժողովեաց, սակայն ոչ կերան. այլ շնորհօք Աստուծոյ կերան, որպէս մանուկն յարգանդի մաւրն ապրի:

1. Question: Did they eat food in the Ark, or not?

Answer: Although he gathered (food), they did not eat (it), but they ate through God's grace, as an infant lives in its mother's womb.

2. Հարց: Չի՞նչ տայր լոյս ի տապանին:

Պատասխանի: Ոմանք ասեն ձեղ[ու.]ն ապիկու. էր զինեալ. եւ այլքն՝ ակն կայծ կամ բիւրեղ. եւ այլք ասեն նշխարք Ադամայ եւ Եւայի լոյս տայր,¹⁹ զի Աստուծոյ ձեռացն են օրինեալ:

2. Question: What gave light in the Ark?

History of the Caucasian Albanians (tenth century). The existence of this work was noted in noted in Stone, Adam and Eve, 81. A further, still unidentified Noah text occurs in V313, fol. 302ff. as is noted in Stone, Adam and Eve, 81.

¹⁷ I have published several Question and Answer texts on biblical topics. This didactic genre is widespread in biblically associated texts. A striking example is the work called Questions and Answers from Holy Books of which a full edition is in press as I write, in the volume *Further Biblical Heroes*. I have included a discussion of texts of this character in the "Introductory Remarks" to the edition that work.

¹⁸ The Flood also figures in a folk tale published in Stone, *Further Biblical Heroes*, but that text is aetiological and it does not have theological character and import. Coincidentally, although it is quite different in character from the present document, that text is also in a filler copied in hand-writing that is different from that of the scribe of the main text.

¹⁹ j above line, prima manu.

Answer: Some say that the ceiling was provided with glass. And others (say) that (it was) a ruby or beryl stone. And others say that the remains of Adam and Eve gave light, for they were fashioned by the hands of God.

3. Հարց: ազոն զի՞նչ եղև:

Պատասխանի: Ոմանք ասեն թէ ի ջուրն իտեղեցաւ ընդ բերանն յղացեալ գուգակցին կամ ի / fol §198v / գէշ կենդանոյ մնաց, եւ այլք ասեն թէ Ներսէս անուն շինող տապանին ի վերայ տապանակին տուն շինեալ էր առանց հրամանացն Աստուծոյ եւ սատակեցաւ. եւ ազոան գնորա գէշն ուտէր:

3. Question: What happened to the raven?

In the same article, "Our Spiritual Fatherland," he has another perspective into our religious culture or civilization. He relates it to the natural distinction between the ethnic or national churches and the Universal Church. For him it is part of an ecumenical formula, in that the national churches ought to uphold their own religious culture to enrich the Universal Church, of which they are an integral part. They are to make their contribution to the well-being of the Universal Church, the larger body, by bringing their own into it. This he demonstrated through his scholarship on the culture of the Armenian Church, hoping to make it known to the rest of Christendom.

What, then, has the Armenian Church to contribute to the larger, Universal Church? To begin with, her Christology. This is precisely why his early studies were

շղթաների կապակցություն է. նոր օղակը պետք է կապուի հնի հետ եւ այսպէս շարունակուի անընդհատ...: Նոր եւ ժամանակի պահանջների համեմատ քաղաքակրթություն ստեղծելու համար՝ պետք է մեր նախնեաց հոգիները մեզ գործակից լինեն, հայոց հայրապետների եւ վարդապետների հատընտիր շարքերը, հայրենիքի անձնուէր նահատակները պետք է յարություն առնեն մեր հոգու մէջ եւ խրախոյս հանդիսանան վերածնության, մի պայծառ եւ վսեմ քաղաքակրթական կեանքի նորոգման: Հայ կեանքի հետ կապուած գիտությունները՝ ազգային եւ եկեղեցական պատմություններն ու մատենագրությունները, հնախօսությունները հիմնուած են անցեալի ուսումնասիրութեան վերայ: Հայոց նոր արուեստ ու քաղաքակրթություն ծագել եւ ազգային դրոշմ ու գոյն կարող է ստանալ միայն նախնեաց արուեստի եւ քաղաքակրթութեան ուսումնասիրութեամբ: Այստեղից է ծագում ազգային այն բարձր գիտակցությունը, որ գոյութեան պահպանութեան եւ յառաջադիմութեան գրաւականն է» (771–72):

⁴ Garegin Hovsēp'ian, Նիւթեր եւ ուսումնասիրություններ Հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան / Topics and Studies in Armenian Art and History of Civilization (Jerusalem 1935; repr. New York 1944, and with a selection of his other works in Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության / Topics and Studies in Armenian Art History, ed. Manya M. Ghazaryan, 2 vols. (Yerevan 1983–87).

devoted to Khosrovik T'argmanich' (d. ca. 730), culminating in his *vardapetakan avartachar'* or thesis, published in 1899.⁵ The reason he chose to dwell on Khosrovik is simple: this early eighth-century author is the foremost and earliest systematic articulator of the Armenian Church's opposition to the Council of Chalcedon convened in 451. Khosrovik was the leading theologian at the second Council of Manzikert (in Apahunik') convened by Catholicos Hovhan Ödznets'i in 726, at which the Armenian Church rebuffed Chalcedon once more and condemned Monophysite extremism in all its forms: Eutychianism, after Eutychius, archimandrite of a suburban Constantinopolitan monastery (d. ca. 455), who taught that Christ had one nature, only divine; and Julianism, after Julian, bishop of Halicarnassus (d. ca. 530), who likewise taught that Christ had one nature, only divine, and that the body of Christ incarnate was not subject to death or corruptibility, thus leading to the doctrine of Aphthartodocetism (Arm. երեւութականութիւն). These doctrines were opposed by yet another extremist on the opposite end of the spectrum: Severus, patriarch of Antioch (d. 538), a condemned Monophysite, who taught that the doctrine of salvation is meaningless unless Christ's body was thoroughly human.⁶ Khosrovik articulates the Armenian Church's position in condemning both extremes. In the first place, his Christological position is that the non-Chalcedonian emphasis should not be on the one nature of Christ («ըստ բնութեան մի բնութիւն»), since no one could deny that there are two natures in Christ) but rather on the inexplicable union of the two («ըստ անճառ միաւորութեան»), that is to say, the union or merger of the two natures in Christ is a mystery that cannot be explained. As for the condemnation of

⁵ Idem, «Խոսրովիկի Թարգմանիչ. Պատմական-մատենագրական ուսումնասիրություններ» / Khosrovik T'argmanich': *Historico-literary Studies*, Ararat 32 (1899): 211–16, 260–64, 315–20, 408–13, 469–80; included in his monograph, *Խոսրովիկ Թարգմանիչ (Ը. Դար), Պատմական-մատենագրական ուսումնասիրությունը / Khosrovik T'argmanich' (VIII cent.)* (Vagharshapat 1899).

⁶ For the text of Catholicos Hovhan Ödznets'i's treatise *Ընդդէմ երեւութականաց / Against the Phantasiasts*, see *Մատենագիրք Հայոց / Armenian Classical Authors 7:45–66*. The treatise is replete with the Christology of the Cappadocian and Alexandrian fathers of the fourth century, summing up their consensus «Բաժանի անբաժանաբար եւ միաւորի որոշմամբ՝ ոչ զմիաւորութիւն խառնակութիւն գործելով եւ ոչ զբաժանումն՝ օտարութիւն» (§ 152). On the Council of Manzikert, see Hovsep'ian, *Khosrovik T'argmanich'*, 151–53; Yeuand Tēr Minasian, «Մանազկերտի 726-ի ժողովի սաորի եպիսկոպոսները եւ Խոսրովիկ Թարգմանիչի յիշած երկու սաորական վանքերը» / «The Syrian Bishops at the 726 Council of Manzikert and the Two Syrian Monasteries Mentioned by Khosrovik T'argmanich',» Ararat 40 (1907): 75–80.

the Julianists, who are invariably associated with the Aphthartodocetics, he concludes that these heresies and others arise as a result of focusing on one or the other of the two natures in Christ.⁷

When considering Hovsēp'ian's devotion to the arts and the sciences, I would like to draw attention first to his contribution to the study of Armenian miniatures (Հայկական մանրանկարչություն). He was among the first to suggest the importance of literary sources for decipherment in iconography; e. g., the hagiographies in the Armenian *Haysmavurk*' (the *Synaxarion*) could help interpret the portraiture of the saints, especially those of the Twelve Apostles, and the Four Evangelists in particular. For what one might derive from the *Haysmavurk*', I cannot resist quoting a paragraph from this source on the Evangelist Mark:

Saint Mark was of medium height, neither quite tall nor very short or undersized, but rather handsome and of befitting stature, perfect. He was beginning to age, but he was not too old—though bodily he was more worn out than facially. He had a beautiful face; protruding nose (երկայնաքիթ), big nostrils. And he was not inconspicuous because he seemed to be short. He had a large head, but with good features: fine facial hair; beautiful, straight-looking eyes; tightly-knit eyebrows; broad forehead, verging on baldness; thick beard...⁸

Epigraphy (sc. the study of rock inscriptions) was another favorite field of his interests and scholarly pursuits. The famed epigrapher Nicolas Marr had already studied the inscriptions of Ani. Consequently, Catholicos Hovsēp'ian devoted his attention to the inscriptions of Haghbat, Sanahin, and Geghard. He was exceptionally good in reading ligatures and deciphering poorly preserved inscriptions. He then turned his attention to paleography, moving from stone to parchment.⁹ This was also the period when he came to appreciate the historical significance of colophons, those

⁷ For the text of Khosrovik's works, see Մասննագիրք Հայոց / Armenian Classical Authors 6:631–708. Eastern Armenian translation of Khosrovik's opera by Khach'ik Grigoryan, Խոսրովիկ Թարգմանիչ. Դավանական երկեր / Khosrovik T'argmanich': Dogmatic Works (Yerevan 2015). For a Western Armenian translation, see Samuēl Aghoyan, Խոսրովիկ Թարգմանիչ Հայոց (Ը. Դար) / Khosrovik T'argmanich' of Armenia (VIII cent.) (Jerusalem 2011). For short entries on Khosrovik, see Norayr Pogharian, Հայ գրողներ, Ե–ԺԶ Դար / Armenian Authors, V–XVI Century (Jerusalem 1971), 106–7; Poghos Khach'atryan and Hakob K'yoseyan, «Խոսրովիկ Թարգմանիչ», in Christian Armenia, Encyclopedia, 437.

⁸ Cited by Hakob K'yoseyan, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստուածաբանության / Theological Aspects of Medieval Armenian Art (Ējmiatsin 1995) 41–42, referencing Յայսմաւուրք / Synaxarion, 185–86.

⁹ Garegin Hovsēp'ian, Գրչութեան արուեստը հին հայոց մէջ / The Scribal Art Among Armenians of Old (Vagharshapat 1913).

endnotes by medieval scribes giving their names and the names of recipients of manuscripts, those for whom they were copied, with wishes and prayers for those named, both living and dead. Some scribes went on to narrate the circumstances under which they labored, the major events that transpired during their work, often digressing into details. His decades-old interest in this field culminated in his magnum opus, his massive work on Armenian colophons.¹⁰

No one has demonstrated the historical value of colophons as clearly as has Catholicos Hovsēp'ian. His work on colophons was intended to be in four volumes (only one saw the light, in 1951, in Antelias; it covers those from the fifth century to 1250).¹¹ The volume consisted of 1255 columns/pages and contained 472 colophons, with 48 illustrations. It was published just a year before his death. By his own estimation, these colophons are as important as any historical source for the reconstruction of history; in fact, as eye-witness accounts, contemporaneous with the events they describe, they have more value as primary sources than later accounts by historians. He compares them to little pieces of mosaics, which, when grouped together chronologically and geographically, help reconstruct whole chapters of history.

In fact, one of the earliest colophons, no. 2, is on the founding of a monastery in Bagrevand in the sixth century.¹² It is one of our primary pieces of documentary evidence of early Armenian monasticism, and seldom taken into account when considering the history of early coenobitic monasticism in Armenia. This old colophon is preserved in the grand *Homiliary* (J 1a–d, *Ճամբանի*) in four codices, copied in Jerusalem in 1417–1419 and kept there at St. T'oros.¹³ The colophon narrates the founding in Bagrevand, during the catholicosate of Hovhannēs II of Gabegheank' (in office 557–574), of a monastery known as Gt'kay Vank' (Monastery of St. Varas, nicknamed Gtuk for being “discovered” incognito as he was dying) on the remains of his brother, St. T'at'ul, and the latter's successor, T'umas. The colophon thus adds to the historical credibility of the monastic order established by St. T'at'ul, the rule

¹⁰ Idem, *Յիշատակարանք ձեռագրաց / Colophons of Manuscripts* (Antelias 1951).

¹¹ Subsequent collections were published by Avedis K. Sanjian, *Colophons of Armenian Manuscripts 1301–1480: A Source for Middle Eastern History* (Cambridge, MA 1969) and the series published by the Matenadaran under the general editorship of Levon Khach'ikyan, accounting for colophons from the thirteenth through the seventeenth century (1950–1984), culminating with the volume of the earlier colophons edited by Artashes S. Mat'evosyan, *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե–ԺԲ դդ. / Colophons of Armenian Manuscripts, V–XII Centuries* (Yerevan 1988).

¹² Hovsēp'ian, *Colophons*, 3–10.

¹³ (Abp.) Norayr Bogharian [Pogharian], *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց / Grand Catalogue of St. James Manuscripts*, 11 vols. (Jerusalem 1966–1991) 1:1–42; the original was in two codices (1:23).

of which is extant.¹⁴ We also learn from the same colophon that St. Vardan had a son named Zura who was martyred with him. Neither Yeghishē nor Ghazar mention this in their histories of the *War of Vardan*.

Without colophonic information we would not have known of the filial relationship between St. Grigor Tat'evats'i and his mentor St. Hovhannēs Orotnets'i, or that Tat'evats'i was also a professional scribe as well as an illuminator of manuscripts.¹⁵ We know well the names of great illuminators like Sarkis Pitsak and T'oros Roslin; the latter left his signature in the colophons of seven manuscripts—primarily Gospels penned in Hfomklay between 1256 and 1268. But how about the earlier Armenian illuminators of manuscripts? We learn about them from colophons. The two earliest Armenian Gospel illuminators known by name are Grigor Akofets'i (M 311) and Hovhannēs Sandghkavanets'i (M 3793), both from the eleventh century.¹⁶

As we have seen, colophons are valuable sources of historical information and—by and large—they are not sufficiently studied. They are a very intriguing and peculiar literary genre to study, even without extracting historical information from them—simply as a literary genre. No general studies of colophons as a literary genre exist. To encourage scholarly interest in this area, allow me to say a little more about colophons.¹⁷

Not every manuscript contains a colophon, but many contain more than one colophon. Sometimes scribes also copy the colophon of their exemplar; thus, although a manuscript is more recent, the antiquity of the copied colophon is immensely important: it helps track the transmission history of the text (indicating that it descends from an older manuscript which may no longer exist—as is often the case). Colophons also tell whether a certain manuscript was copied by more than one scribe. It is fair to assume that disciples often copied the works of their masters,

¹⁴ Among the manuscripts, see M 2680, a “miscellany” (δμηλοῦς) of the years 1371–78, copied in Ankeghakoyt by the scribe Matt'ēos Yerēts', fol. 256v–58v. For details see Մայր ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի / General Catalogue of Manuscripts of the Mashtots' Matenadaran, Vol. VIII: Manuscripts 2401–2700, ed. Gēorg Tēr-Vardanian (Yerevan 2013), 1131–60. For more on T'at'ul, see Christian Armenia, Encyclopedia, 378, 975, q. v. “T'at'ul” and “Varos” respectively; (Abp.) Shnorhk' Galustian, Հայազգի Սուրբեր / Armenian Saints, 2nd ed. (Istanbul 1998), 127–29; for a Western Armenian translation of T'at'ul's “Rule,” see *ibid.*, 111–15.

¹⁵ Of manuscripts copied by him, now at the Matenadaran: nos. 46, 1659, 2382, 3616, 7151; at Ējmiatsin, no. 96, an elaborate Gospel; M 7482, a Gospel manuscript illuminated by him.

¹⁶ Cited by (Abp.) Norayr Pogharian, Հայ նկարողներ / Armenian Illuminators (Jerusalem 1989), 1–4.

¹⁷ Since the reading of this paper in 2018, we have Khach'ik A. Harut'yunyan's meritorious monograph, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները / The Colophons of Armenian Manuscripts (Yerevan 2019), which addresses the desiderata expressed herein regarding the study of colophons. I thank Haig Utidjian for the reference.

giving dates that are not far removed from the original works; or that authors left us their autographs (such as manuscripts by Mkhit‘ar Ayrivanets‘i, Nersēs Lambro-nats‘i, Hovhannēs Yerzēnkats‘i, and St. Grigor Tat‘evats‘i). The four colophons left by St. Grigor Narekats‘i are the primary biographical sources about him,¹⁸ all else is a myth.

There is more than date and place of copying in colophons. Some of the regional and chronological patterns exhibited by colophons can give a whole history of a given place. There is a whole history there that remains to be written; perhaps under the title «Յիշատակարանապատում Հայոց» / *Hishatakarapanatum Hayots‘*.

Catholicos Hovsēp‘ian was a historian par excellence, and again, his interest was not simply for the love of history. Just consider his great work on the Khagh-bakeans and/or Płosheans.¹⁹ These two medieval princely dynasties, which eventually merged into one, ruled over much of the territory comprising today’s Armenia as of the eleventh century (until the eighteenth): the regions of Kech‘afis, Ayrevank‘ (Geghard), and Gladzor (southward, toward Tat‘ev). Of course, what is left of Gladzor is not the monastic site, the location of which is still debated, but the wealth of manuscripts that were produced there (and of course, their colophons). The reason Catholicos Hovsēp‘ian was interested in their dynastic history was primarily because they were great church builders. Just to give an idea as to how meticulous Garegin Vehap‘ar was as a historian, redefining what it means to be a perfectionist, one has to look at his index of personal names at the end of the book—which appeared in several parts. By one count, there are more than a thousand proper names in the index.²⁰

In conclusion, we have to say that Catholicos Hovsēp‘ian had a systematic view of ecclesiology, which was the very basis of his scholarship. All his pioneering works could be contextualized within his ecclesiology, which in turn systematizes his entire scholarship. As we have seen, even his Christology, or rather the Christology of the

¹⁸ For an English translation, see Abraham Terian, *The Festal Works of St. Gregory of Narek: Annotated Translation of the Odes, Litanies, and Encomia* (Collegeville, MN 2016), 365–72.

¹⁹ Hovsēp‘ian, *Խաղբակեանք եւ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ* / *Khaghbakeans and Płosheans in Armenian History* (Vagharshapat 1928); idem, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, Մաս Բ., Հոգևոր կեդրոններ եւ Գլաձորի բարձր դպրոցը Պոռշեանց իշխանութեան մէջ* / *Khaghbakeans or Płosheans in Armenian History, Part II: Spiritual Centers and the ‘Hochschule’ of Gladzor in the Płoshean Principality* (Jerusalem 1944; repr. Antelias 1969). From the early phase of this work derived his *Մխիթար Այրիվանէցի, նորագիտ արձանագրութիւն եւ երկեր* / *Mkhit‘ar Ayrivanets‘i: Newly-found Inscription and Works* (Jerusalem 1931).

²⁰ Idem, *Khaghbakeans or Płosheans in Armenian History, Part II*, 280–92 (Jerusalem 1944 edition).

Armenian Church, is rooted in his ecclesiology—like everything else that defines his attainments whether in philology, architecture, art history, or codicology. In this sense, we could also say that he was a systematic theologian because of the consistency of his thought and writings. We could also say that he applied his systematic theology in a most unique way, giving a new definition to what is called “applied theology”. We Armenians could say he gave us our best theology of ethnicity. As a churchman par excellence, he did it all for the love of the church: the Armenian Church in particular and the Universal Church in general.

ABSTRACT

The scholarly attainments of Catholicos Garegin Hovsēp‘ian of the Great House of Cilicia (in office 1943–1952) may be contextualized in his ecclesiology. He pursued the study of the arts because of his love for the church which produced that religious art. For him, the study of Armenia’s past civilization provides orientation amidst the evolving world civilization while reinforcing ethnic identity. This too emanates from his ecclesiology, the place of the Armenian Church, her Christology in particular, amidst the Universal Church. His systematic view of ecclesiology became the basis of his scholarship. All his pioneering works could be contextualized within his ecclesiology, which in turn systematizes his entire scholarship, whether in philology, architecture, art history, or codicology. As a systematic theologian, given the consistency of his thought and writings, he gave Armenians a theology of ethnicity, including an applied theology, seen in the religious art of the Armenian Church. As a churchman par excellence, he did it all for the love of the church.

ԱԲՐԱՀԱՄ ՏԵՐԻԱՆ

Սբ. Ներսէս Ըսմայարան

«ՅԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ»

Բանալի բառեր՝ Գարեգին Յովսէփեան, Հայ եկեղեցի, եկեղեցաբանություն, քրիստոսաբանություն, մշակոյթ, արուեստի պատմություն, յիշատակարաններ, էթնիկ պատկանելություն:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Յովսէփեանի (աթոռակալել է 1943–1952 թթ.) գիտական նվաճումները ճիմնականում կարող են տեղավորվել նրա եկեղեցաբանական ուսումնասիրությունների համատեքստում: Նույն-

Ահսկ Հայոց եկեղեցու քրիստոսաբանութիւնը՝ ավելի ստույգ՝ դրա տեղը Տիեզերական եկեղեցու քրիստոսաբանութեան մեջ, ինչպէս նաեւ նրա բանասիրական, ճարտարապետական, արուեստի պատմութեան եւ ձեռագրերի յիշատակարանների ուսումնասիրութեանը նուիրուած երկասիրութիւնները սերտանված են եկեղեցաբանութեան հետ: Նրա մտքի եւ գրուածքների հետեւողականութիւնը, նրա ընդհանուր եւ մասնագիտական մեթոդների հմուտ գործածութիւնը՝ փաստում են, որ նա առաջնակարգ գիտնական էր: Որպէս տեսական աստվածաբան՝ նա հայերիս տուեց ազգային պատկանելութիւն ունեցող աստվածաբանութիւն, ներառելով գործնական աստվածաբանութիւնը, որն ակնյայտ է Հայոց եկեղեցու կրոնական արուեստում: Որպէս բացառիկ հոգեւորական՝ նա այս ամէնն արեց հանուն եկեղեցու հանդէպ ունեցած սիրոյ:

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Մեարույ Մաշտոցի անուան Մատենադարան

ՅԱԿՈՒՔ ՍՍԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

**(«Ժամանակագրական պատմություն Կիլիկիոյ Հայոց».
Գրիգոր Լուսաւորչից մինչեւ ԺԷ. դարի սկիզբ)՝**

Բանալի բառեր՝ Հայ պատմագրություն, Հայկական պատմական սկզբնաղբիւրներ, Կիլիկեան Հայաստանի պատմություն, Յակոբ երէց Սսեցի, Ղեւոնդ վ. Այիշան, Սահակ վ. Ծեմճեմեան:

Յայտնի է, որ մեր հարուստ Պատմագրութեան սկզբնաւորումը գրեթէ ան-
միջապէս յաջորդել է գրերի գիտին: Յայտնի է նաեւ, որ մենք միշտ հպարտա-
ցել ենք մեր մատենագրութեան պատմագրական մասով եւ գիտական հայա-
գիտութեան պատմութեան ամբողջ ընթացքում առանձին գորգորանքով ենք
ձեռնարկել նրա տարբեր միաւորների հրապարակման եւ ուսումնասիրման աշ-
խատանքներին: Սակայն այս ճշմարտութիւնների կողքը ակնյայտ է նաեւ այն,
որ հայ պատմագրութեան թէ՛ մեծածաւալ եւ թէ՛ փոքրածաւալ յուշարձանների
զգալի մասի առկա հրատարակութիւնները չեն բաւարարում ժամանակակից
բնագրագիտութեան եւ պատմագիտութեան պահանջները: Օրինակները շատ
են, բայց յիշենք ԺԹ. դարում մէկ կամ առաւելը երկու ձեռագրի հիման վրայ
հրատարակուած միայն մի քանի պատմութիւն՝ Վարդան Արեւելցու, Մխիթար
Այրիվանցու, Ստեփանոս Օրբելեանի. եւ այլն: Բայց շատ աւելի ցաւալի է այն
իրողութիւնը, որ, երեւի թէ մեր ձեռագրական մեծ հաւաքածոների անբաւա-
րար նկարագրուածութեան կամ ուսումնասիրուածութեան պատճառով, պատ-
մագրական բնոյթի բազմաթիւ երկեր դեռեւս մնում են անտիպ, այսինքն՝ գի-
տութեանն անյայտ եւ անմատչելի: Այստեղ էլ յիշենք միայն մի օրինակ. մատե-
նագիտական անկատար ցանկերի վրայ հիմնուելով, մեծավաստակ աղբիւրա-
գէտ Վազգէն Յակոբեանը զուտ Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերի

¹ Խնդիրը տարբեր տեսանկյուններից դիտարկելով՝ այս բնագրի մասին երիցս զեկուցել ենք գիտաժողովներում (ա. ի Նիւ Եօքք, 1993 թ. նոյեմբերի 12ին, բ. ի Մաշտոցեան Մա-
տենադարան, 1995 թ. փետրուարի 9ին, գ. յԱնթիլիաս, 2007 թ. յունուարի 14ին), սակայն
բնագրիս մասին սա մեր առաջին հրապարակումն է: Այսուհանդերձ, քանի որ այս ծա-
ւալուն սկզբնաղբիւրը դեռեւս կարօտ է շատ մանրամասն ուսումնասիրութեան, որի
զգալի մասը դեռեւս չենք արել, ուստի այս հրապարակումը միայն նախնական հաղոր-
դում է եւ շատ հարցերի պատասխանները տալու խնդիր դեռեւս չունի:

հիման վրայ 1951 եւ 1956 թուականներին հրատարակեց «Մանր ժամանակագրություններ»-ի երկու ստուար հատոր²: Նոյն Մատենադարանի երկհատոր համառօտ ձեռագրացուցակի հիման վրայ 1970 թուականից ի վեր լիովին հնարատոր է Յակոբեանի հրատարակածից գուցէ ավելի միւթ քաղելը եւ նույնպիսի երկու կամ ավելի հատոր հրատարակելը³:

Մենք ունենք նաեւ պատմագրական երկերի ցաւալի կորուստներ. օրինակ՝ Յովհաննէս Սարկաւազ, Վանական Տաւուշեցի վարդապետների եւ այլոց գրած եւ դեռեւս չչայտնաբերուած կամ մեզ չհասած Պատմությունները: Բայց սրա հետ միասին ունենք նաեւ դեռեւս անտիպ մնացող ծաւալուն եւ նշանակալի արժեք ունեցող Պատմություններ: Այստեղ էլ յիշենք երկու օրինակ. ԺԷ. դարի հանրագիտակ մատենագիր Երեմիա Քէօմուրճեանին վերաբերող գրքերի եւ յօդուածների մատենագիտությունը կարող է տասնեակ էջեր զբաղեցնել, բայց նրա հսկայածաւալ «Տարեգրական պատմություն»-ն առ օրս մնում է անտիպ, այսինքն՝ նաեւ բացարձակապէս չուսումնասիրուած: Նոյնն է նաեւ նրա կրտսեր ժամանակակից եւ նրա ձեռագիր ու տպագիր գրքերի գրադարանի ժառանգորդ՝ ԺԸ. դարի հեղինակ Մաղաքիա Ճեվահիրճեանի պատմագրական վաստակի վիճակը:

Միւս կողմից՝ երբ յիշում ենք, որ նոր ժամանակների հայկական պատմագիտությունն սկզբնաւորուել է Միքայէլ վ. Չամչեանի եռահատոր «Պատմություն Հայոց»-ով, եւ միաժամանակ նկատում ենք, որ այս պատմագիտությունն ունի մօտ երկուսուկէս դարի պատմություն, սակայն նաեւ արձանագրում ենք, որ հայկական պատմագիտութեան ընդհանրական-ամբողջական պատմությունը գրելու ուղղութեամբ քայլեր չեն արւում:

Միով բանիւ, մեր այս թերացումներն իսկապէս աններելի են: Ուստի ասուածը, ըստ իս, յանգեցնում է հետեւեալին. արժէ որ Հայաստանի գիտական կենտրոնները վերանայեն իրենց անելիքների առաջնայնությունների խնդիրը եւ ծրագրուած եղանակով սկսեն հալոց պատմագրքերի գիտական՝ իսկապէս քննական բնագրերի պատրաստումը, որպէսզի սկսուած որոշ մատենաշարեր հին տպագրությունների սոսկական վերատպություններ չլինեն:

Նոյնպէս՝ չափազանցություն չի լինի, եթէ ասենք, որ Կիլիկեան Հայաստանի հետազօտական պատմութեան առաջին լուրջ շարադրանքը Հ. Ղեւոնդ վ.

² Մանր ժամանակագրություններ. ԺԳ-ԺԸ. դդ., հտ. Ա-Բ., Կազմեց Վ. Ա. Յակոբեան, Երևան, 1951, 455 էջ եւ 1956, ԺԱ., 685 էջ:

³ Ի դէպ, նոյնպիսի բնագրերի առնուազն մի հատորի չափ նիւթ վստահաբար կայ Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանի ձեռագրացուցակի տասնմէկ հատորների մէջ. Ն. Եպս Պողարեանը շատ շնորհակալ աշխատանք է արել՝ այդտեակ փոքրածաւալ բնագրերը տպագրել է ձեռագրերում եղածի պէս. մնում է դրանք ի մի բերել, ծանօթագրել, ցանկերով օժտել եւ գրքային տեսքով շրջանառութեան մէջ դնել:

Ալիշանի «Սիսուան»⁴ է: Այսպէս ասելու իրաւունք ունենք, որովհետեւ այդ գործի հրապարակումից՝ 1885 թուականից յետոյ տպագրուած ընդհանրացնող որոշ աշխատութիւններ հիմնականում Ալիշանի շրջանառութեան մէջ դրած փաստերի եւ իրողութիւնների վերարտադրութիւն կամ վերաշարադրանք են: Նկատելի է նաեւ, որ «Սիսուան»ի հրապարակումից յետոյ անցած շուրջ տասնչորս տասնամեակի ընթացքում լոյս են տեսել թէ՛ նոր՝ արժէքատու մեծագրութիւններ եւ թէ՛, յատկապէս, նոր աղբիւրներ (հալկական եւ օտարալեզու, յատկապէս՝ խաչակրաց վերաբերող), որոնցից առաւել նշանակալի են ձեռագրական յիշատակարանների եւ փոքրածաւալ ժամանակագրական բնագրերի հրապարակումները (նոր փաստեր, պատմական նորայայտ հաղորդումներ ու յիշատակութիւններ յաճախ են երեւացել նաեւ մասնատու խնդիրների վերաբերող մեծագրութիւնների մէջ): Այս ամէնի հիման վրայ արդէն հասունացել է Կիլիկեան Հայաստանի պատմութեան հետազօտական նոր եւ համապարփակ շարադրանքի ստեղծման խնդիրը:

Սակայն, սրանից առաջ դեռեւս պէտք է տպագրել անտիպ մնացած աղբիւրները, իսկ այս ասպարէզում մեր բնագրագիտութիւնը շատ ունի անելիքներ, որոնց շարքում կարելուք մէկն էլ հրապարակումն է այն արժէքատու աղբիւրի, որ Ղ. Ալիշանը տեսել է, բայց պատշաճ ձեւով ու չափով օգտագործել չի հասցրել: Այսպէս. «Սիսուան»ի «Յառաջաբան»ում՝ իր գործի աղբիւրների տեսութիւն-ակնարկի մէջ, նա առանձին կարելութիւն է տուել երկու աղբիւրի՝ «ըստ մասին լցին զայս իղձ մատենանք երկու՝ ի յետին ամքս հասեալք ի ձեռս իմ, եւ մին՝ մերձ յաւարտ տպագրութեան մատենիս. առաջինն է նման Սմբատայ պատմութեան, յՈւոհայեցոյն քաղուած առնելով եւ շարայարելով զգործս Ռուբինեանց մինչեւ ցերկորդն Լեւոն...»⁵: Առաջին կոչած այս աղբիւրը Սմբատ Սպարապետի Տարեգրքի այն տարբերակն է, որ առկայ է Վենետիկի Մխիթարեան մատենադարանի եզակի՝ Հ^տ 1308/875 ձեռագրով⁶, եւ որը 1956 թ. հրապարակուեց Հ. Սերովբէ վ. Ազըլեանի աշխատասիրութեամբ⁷: Աղբիւրիս հիմք ձեռագիրը «1876 թ. Հոկտեմբերի 8ին Պոլսոյ մէջ» Սերովբէ Մարգար Ալիշանը գնել է Յովհաննէս Ներսիսեանից եւ նուիրել իր եղբորը՝ Հ. Ղեւոնդ Ալիշանին,

⁴ Սիսուան. համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, հաւաքեալ ի Հ. Ղեւոնդեայ վ. Մ. Ալիշան՝ յուխտէն Մխիթարայ, Վենետիկ - Ս. Ղազար, ՌՅԼԵ.- 1885, ԺԵ., 592 էջ (այսուհետեւ՝ Ալիշան, Սիսուան):

⁵ Նոյն տեղում, էջ ԺԱ.:

⁶ Մխիթարեանց Վենետիկի մատենադարանի ձեռագրերի համարները նշանակում ենք կոտորակաձեւ՝ առաջինը ձեռագրի գոյքահամարն է, թեքին՝ / յաջորդող երկրորդը՝ ձեռագրացուցակինը:

⁷ Մատենագրութիւնք նախնեաց. ԽԶ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, [հրատ. պատրաստեց՝ Հ. Սերովբէ վ. Ազըլեան], Հրատարակութիւն Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան Խորէն վ. Լազարեանի հիմնադրամով, Ի Վենետիկ - Ս. Ղազար, 1956, ԺԵ., 272 էջ:

որ նույնն է, թէ՛ Մխիթարեան միաբանութեանը⁸: Իրօք, Սմբատի Տարեգրքի վե-
նետիկեան այս տարբերակն Ալիշանը «Պատմիչ Կիլիկիոյ կամ Արքունի Պատ-
միչ» բնորոշումով ընդարձակագոյնս օգտագործել է իր ամբողջ շարադրանքի
մէջ եւ, լատկապէս, «ի կարգի պատմութեանն Լեւոնի»:

Երկրորդը, որ ներկայ յօդուածի միջին է եւ որի ձեռքբերման ժամանակին
է վերաբերում «եւ մին՝ մերձ յաւարտ տպագրութեան մատենին» խօսքը, ճիշտ
առաջինի պէս, Ալիշանն ստացել էր «երկրի վրայ հնարաւոր չափով իրեն մեր-
ձաւորագոյն», լոկ «Հայ հնահաւաք» անունով ծանօթ լինելու ցանկութիւն ունե-
ցած մի մարդուց, այսինքն՝ կրկին իր եղբայր Սերովբէ Ալիշանից: Մխիթարեան
մատենադարանի գոյքամատեանում եւ նոյն աղբիւրի հիմք Հ^{մր} 1318/923 ձե-
ռագրում Ալիշանն արել է հետեւեալ ճշումը. «Ընծայ Սերովբէ Ալիշանի, առեալ
ի Յովհաննիսէ Ներսիսեան»⁹: Մխիթարեան արդիւնաշատ միաբան՝ մեր լու-
սահոգի բարեկամ Հ. Սահակ Ըմեմնեանը վերջինիս մասին նամակով մեզ
յայտնել է հետեւեալը. «Պոլիսէն գաւառները կ'երթար եւ հետը ձեռագիրներ կը
բերէր՝ մեզի վաճառելու համար: Այս գործը յանձն առած էր ի սէր Հ. Ղեւոնդ
Ալիշանին, որու դարձած էր սիրահար»¹⁰: Նոյն երկու աղբիւրի մասին երկրորդ
անգամ յիշել է նաեւ իր Սերովբէ եղբօրից ստացած այլ օժանդակութիւնների
շարքում. «ի վեր քան զամենայն եւ բնաւից պիտանեգոյն՝ ընձեռելով զերկոսին
նախայիշեալ սոփերս եւ աղբերս բանից, զՊատմիչն եւ զԺամանակագիրն Կի-
լիկիոյ, յորոց՝ թէ որքան օգտեցայ ի տեղագրութեանս եւ ի պատմագրութեանս՝
կանխաւ եւս ծանուցի»¹¹:

Ըիշտ այստեղ պէտք է ասենք, որ Ալիշանի յիշատակած երկրորդ աղբիւրի

⁸ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հա-
տոր 2. Պատմագիրք Հայոց - Կանոնագիրք, Գրիգոր Նարեկացի - Ներսէս Ծնորհայի,
Ներսէս Լամբրոնացի - Աղօթագիրք. Յօրինեց Հ. Սահակ վ. Ըմեմնեան՝ Մխիթարեան
ուխտէն, Վենետիկ - Ս. Ղազար, 1996, էջ 10. ամբողջ նկարագրութիւնը՝ էջ 9-12. (այսու-
հետեւ՝ Վենետիկի ցուցակ 2.):

⁹ Մխիթարեանց Վենետիկի մատենադարանի ձեռ. Հ^{մր} 1318/923, Պիպկն Աա (այսուհետեւ
այս ձեռագրի վկայակոչումներն անելու ենք շարադրանքի մէջ՝ գոյքահամար եւ էջահա-
մար ձեռով):

¹⁰ Նոյն Յովհաննէս Ներսիսեանի եւ Հ^{մր} 1318/923 ձեռագրի մասին է գրաւոր հետեւեալը. Հ.
Սահակ Ըմեմնեան, Ալիշանի «Միտումն»ը.- Բազմավէպ, 1970, ԺԱ-ԺԲ., էջ 332. «խար-
բերոցի Յովհաննէս Ներսիսեանն է, որ անձնապէս հիացող մը եղած է Ալիշանի եւ ջանա-
ցած է իր կարելիութեան սահմաններուն մէջ օգնել իրեն, գլխաւորաբար հայթայթելով
(Սերովբէ Ալիշանի ձեռքով) յիշատակարաններ, եւ երբեմն ձեռագիրներ. անձամբ գացած
է մինչեւ Սիս, եւ օրինակած անթիւ յիշատակարաններ, անտիպ Պատմութիւն Հայոց մը,
որ կը բովանդակէ կիլիկեան շրջանի դրուագներ, եւ կը փափաքի որ «օր առաջ արգու-
թեանդ ձեռքը հասնի», - կը գրէ 24 Դեկտ. 1884ին, - գուցէ խիստ օգտակարութիւն պիտի
ունենայ եւ լաւ պիտի ծառայէ մանաւանդ Կիլիկիոյ թագաւորութեան միջին դարու
պատմութեան». քաղուածքը Սերովբէ Ալիշանի՝ եղբօրն ուղղուած նամակից է:

¹¹ Ալիշան, Միտումն, էջ ԺԴ.:

առումով վերը ներկայացուած թերացումների մեղադրանքը վերաբերում է նաեւ անձնապէս մեզ. տարիներ առաջ¹² սկսել ենք մշակումը այդ աղբիւրի՝ ներկայ յօդուածի նիւթ ժամանակագրութեան, որ կարճ բնորոշումով կարելի է անուանել Գրիգոր Լուսաւորչից մինչեւ ԺԷ. դարի կէտերի ընթացքի «Պատմութիւն Կիլիկիոյ Հայոց»¹³, պարզել ենք նրա հեղինակի ինքնութիւնը, որ մինչ այդ միայն բանասիրական հպանցիկ անդրադարձներով եւ ցաքուցրի մասնական տպագրութիւններով յայտնի էր որպէս ԺԷ. դարի տաղերգու Յակոբ Սսեցի: Բայց տարատեսակ զբաղմունքներ շարունակաբար խանգարել են ժամանակի որոշակի հատուած այս կարեւոր աղբիւրին նուիրելուն եւ բաւարար մշակումով ու անհրաժեշտ ծանօթագրութիւններով այն ի վերջոյ հրատարակելուն, սակայն այս ընթացքում եղել է նաեւ այն դրականը, որ այլ խնդիրների լուծման ճանապարհին հանդիպել ու արձանագրել ենք մեր մատենագրի օգտագործած բազմաթիւ աղբիւրներ եւ աւելին՝ նրա ձեռքն անցած ու նրա կազմած ժամանակագրութեան ատաղձ հանդիսացած որոշակի ձեռագրեր, նրա հեղինակած այլ երկեր: Սրա շնորհիւ մօտակայ ապագայում հրատարակելու ենք Յակոբ երէց Սսեցու ո՛չ թէ միայն ժամանակագրութիւնը, այլե՛ւ նրա մատենագրական ժառանգութիւնն ամփոփող հատորը:

Այժմ համառօտ՝ ընդհանուր գծերով ներկայացնենք այս սկզբնաղբիւրը: Նրա միակ՝ հեղինակի ինքնագրով պահպանուած ձեռագրի Սիսիթարեան միաբանութեան Վենետիկի մատենադարան մտնելու յստակ ժամանակն անյայտ է: Առ այս կրկին յիշենք, որ «Սիսուան»ի առաջաբանում Ալիշանն այս աղբիւրի մասին է գրել, որ իր ձեռքն է հասել «յաւարտ տպագրութեան մատենիս»: Իսկապէս էլ՝ «Ժամանակագիր Կիլիկիոյ» կամ «Ժամանակագիր մեր» բնորոշումներով այս աղբիւրի հաղորդումների վկայակոչումներ եւ գործածութիւն կայ «Սիսուան»ի բուն շարադրանքի միայն վերջին էջերում, իսկ 19 մեծադիր էջ բռնող «Յաւելուած եւ ուղղագրութիւնք» մասի առնուազն 90 տոկոսն «ի կէս ԺԷ»:

¹² Աւելի ճշգրիտ՝ 1987ի աշնանը Ս. Ղազար աշխատանքային առաջին տեսական այցիս ժամանակ Հ. Սահակ վ. Ճեմմեմեանը խօսեց այս ժամանակագրութեան մասին, ասելով որ վանքում քանիցս տարբեր մարդիկ (առաջինը Ս. վ. Ազըլեանը) սկսել են հրատարակութեան պատրաստել այն, անգամ բնագիրը «մատնագրել» (մեքենագրել) են, սակայն առօրեայ գործնական աշխատանքներով ծանրաբեռնուած լինելու պատճառով աւարտի հասցնել չեն կարողացել: Ասացինք, որ պատրաստ ենք սկսուած գործը շարունակել եւ հրապարակելի վիճակի հասցնել, սակայն պատասխանեց. «Լաւագոյնն է՝ ծայրէն սկսես». եւ յաջորդ՝ 1988 թ. կէտերին ստացանք ձեռագրի՝ իր հոգացողութեամբ պատրաստուած մանրաժապաւէն-պատճենը:

¹³ Վենետիկի մեր վանքի ներքին Ազերեան ձեռագրացուցակում Ղ. վ. Ալիշանն այսպէս է գրել. «Պատմութիւն Կիլիկիոյ (ժամանակագրական) ի սկզբանէ փրկչական թուականի մինչեւ ցԺԷ. դար, գրեալ ի սպասաւորէ (քահանայէ) Երեքխորան եկեղեցւոյ Ստյ. 1318 Չ. դ., նօսր»:

դարու» ապրած այս Ժամանակագրի հաղորդումների վերարտադրությունն է¹⁴: «Սիսուան»ի գրաշարությունն սկսուել է 1883 թ. յուլիսի 9ին, իսկ տպագրությունն աւարտուել է 1885 թ. յունիսի սկզբին¹⁵: Սա մտածել է տալիս, որ «Ժամանակագրի» ձեռագիրն Ալիշանը պետք է ստացած լինի 1885 թ. սկզբին կամ գարնանը, որից յետոյ նա կարող էր եւ հասցրել է այս աղբիւրից նուազագոյն՝ մասնակի եւ հպանցիկ չափով օգտուել իր կոթողային «Սիսուան կամ Լեւոն Մեծագործ» հատորի միայն վերջին էջերում: Իսկ ձեռագիրը ստացուել է այսպէս՝ «Պոլիսէն Տիար Յովհաննէս Ներսէսեան ներքին գաւառները երթալով՝ բերած է ձեռագիրս, իսկ Սերովբէ Ալիշան ի հաշիւ Մխիթարեան միաբանութեանս գնելով՝ դրկած է Ս. Ղազար»¹⁶:

Ալիշանն աղբիւրիս մասին, ի դէպ, գրել է նաեւ հետեւեալը. «Անանուն մնայ եւ երկրորդին հեղինակ, այլ միայն վկայէ զանձնէ լինել երէց Երեքխորան եկեղեցւոյ Ստյ¹⁷ ի կէս ԺԷ. դարու. եւ է Ժամանակագրութիւն կամ տարեգրութիւն ոճով Ուռհայեցւոյն, քաղելով յայլեայլ պատմչաց, որպիսիք են Միխայէլ, Վարդան, Կիրակոս, եւ առաւել՝ Սամուէլ Անեցի եւ շարաւարողք նորին. եւ այլք անծանօթք, եւ յիշատակարանք գրոց. ըստ այլեայլ հեղինակաց այլայլի եւ ոճ շարագրութեանն եւ յանգի ի ուսմկականն. բազմասողալ է եւ գրութիւնն. իսկ կարգ պատմութեանն հասանէ մինչեւ ի սկիզբն ԺԷ. դարու. եւ յայտնէ ոչ սակաւ նոր եւ պիտանի գիտելիս, մանաւանդ զվերջնոյ (Գ.) Կոստանդնէ, եւ որ ինչ յետ բարձման Թագաւորութեանն, բայց ոչ յիշէ զօրինակ բարձմանն, եւ բնաւ ոչ զԼիւզինեանս. Ժամանակագիր Կիլիկիոյ կոչեցի զսա ի Յաւելուածին»¹⁸:

Առաւել առարկայական եւ յստակ պատկերացում տալու նպատակով ճիշտ այստեղ բերում ենք ձեռագրի մեր նկարագրութիւնը¹⁹.

¹⁴ Ալիշան, Սիսուան, էջ 517, 520, 521 եւ 531-549:

¹⁵ Ալիշան, Սիսուան, էջ ԺԴ. եւ 549, իսկ ըստ Հ. Սահակ Ճեմնեմեանի (Ալիշանի «Սիսուան»ը.- Բազմավէպ, 1970, ԺԱ-ԺԲ., էջ 234)՝ «Սիսուան»ի տպագրութիւնն սկսուել է 1883 թ. յուլիսին եւ աւարտուել 1885 թ. սեպտեմբերի 27ին:

¹⁶ Վենետիկի ցուցակ Չ., էջ 221 (ամբողջ նկարագրութիւնը՝ էջ 221-226):

¹⁷ Հմմտ. Մխիթարեանց Վենետիկի ձեռ. 1318, 110բ:

¹⁸ Ալիշան, Սիսուան, էջ ԺԱ.:

¹⁹ Բնականաբար, մերինի համեմատ տարբերություններ ունի Հ. Սահակ վ. Ճեմնեմեանի տպագրածը. տե՛ս Յուցակ Վենետիկի, հտ. Չ., էջ 221-226. ցուցակի Հ⁴⁰ 923՝ «Պատմագիրք Հայոց ԾԲ. Պատմ. Կիլիկիոյ», ուր ձեռագիրը նկարագրուած է ըստ էջահամարների, ապա՝ թուագրուած է՝ «ԺԷ-ԺԸ. դար», ապա՝ «Մատեանս Կիլիկիոյ պատմութիւն մըն է, ճոխ բովանդակութեամբ, եզական եւ միակը իր տեսակին մէջ... Ստորեւ կու տանք նմոյշներ զանազան հատուածներու՝ Ձեռագրին բովանդակութեան գաղափար մը կազմելու համար» (էջ 221). շարունակութիւնը ձեռագրի տարբեր էջերից բերուած քաղուածքներ են:

Միսիթարեանց Վեմետիկի մատենադարանի ձեռ. Հ^տ 1318
ՅԱԿՈՐ ԵՐԷՑ ՍՍԵՑԻ, ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ

[ՍԻՍ]

ԺԷ. դար

ԳՐԻԶ եւ ՍՏԱՅՈՂ՝ [Յակոբ քոյ Սսեցի]: ԿԱԶՄՈՂ՝ անյայտ:

ԹԵՐԹ՝ 179 (գրչի էջակալում 1-344, որ է՝ 1ա-168բ. Սերովբէ վ. Ագըլեանի²⁰ ձեռքով մատիտով էջակալում՝ 353-374, որ է՝ 169ա-179բ)²¹. չգրուած՝ պիպ. Ա-Դ., 3բ, 6աբ, 12բ, 14բ-15ա, 17բ-18ա, 20ա, 22բ-23բ, 31բ-32ա, 37աբ, 42ա-44ա, 47բ, 51բ-53բ (էջ 6, 13-4, 26, 30, 31, 36, 37, 41, 46-48, 64, 67, 77-8, 87-91, 98, 108-112. ընդամէնը՝ 27 էջ): ՊՐԱԿ՝ [Ա-ԺԶ]x12 (Ա, Գ, Ե, Զ, ԺԶ՝ 11, ԺԵ՝ 4): ՆԻԻԹ՝ թուղթ. երոպական, լուսադրոշմներով եւ լուսագծերով 3 տեսակ. ա) Պիպ. 1-4, թ. 1-68, 82-91, 93-104՝ եռամասիկ (երեք կիսալուսին), «C», «R» եւ «R I» գրերի հետ, բ) թ. 69-81 եւ 92՝ մատրոնից մի փոքր աւելի սպիտակաւում, լուսագծերի հետ, ծալուածքի վրայ ունի միայն եռամասիկ²², գ) թ. 105-179՝ մատրոններից աւելի սպիտակ եւ հարթ ու կոկ, փայլում, կրկին ունի լուսագծեր եւ ծալուածքի մատում լուսադրոշմ, որից զանազանում են միայն «D» գիրը եւ դէպի վեր ուղղուած սլաք՝ «†»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22,5x16,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (17x11). սահմանագծել է նաեւ աջ եւ ձախ եզրերը, լուսանցագրութիւնների համար արտաքին լուսանցում գծել է նաեւ 1,7 սմ լայնքի մի շերտ, որի վրայ երբեմն նաեւ գրել է: ԳԻՐ՝ մտորգիր (թղթի որակի պատճառով թ. 105-179ի վրայ գրի տպաւորութիւնը մի փոքր տարբեր է, բայց նոյն ձեռքի գործն է): ՏՈՂ՝ 27 (երբեմն՝ աւելի, մինչեւ 30). գծումներ՝ ճնշումով: ԿԱԶՄ՝ թոյլ ստուարաթղթէ միջուկով սեւ կաշի. աստառ՝ դեղնած, անգրել թուղթ (դոնակ եւ կապիչներ չի ունեցել)²³: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 4 թերթ (սկզբ.՝ Ա-Դ), ձեռագրի Ա. տեսակի թղթից, չգրուած:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ՝ չունի: Խորագիրը եւ սկզբնատառք՝ կարմիր (սակաւ). 1ա էջի վերեւում հեղինակ-գրիչը 2 տող թողել է չգրած՝ վերնագիրը գուցէ զարդագրելու համար, որ յետոյ չի լրացրել:

ՅԻԾԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՒ ՀԵՏԱԳԱՅ՝ չունի: ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝ [1885 թ. սկզբին] «Պոլիսէն Տիար Յովհաննէս Ներսէսեան

²⁰ Ըստ վկայութեան Հ. Ս. վ. Ճեմմեմեանի:

²¹ Ձեռագիրը 2002 թ. հոկտեմբերի 5ին մենք ենք թերթակալել՝ 1-179 եւ բնագրի մեր վերծանութեան մէջ նշանակել այդ թերթահամարները, գրչի էջահամարներն ըստ հարկի յիշատակելու ենք միայն ծանօթագրութիւնների մէջ:

²² Յիշենք, որ ձեռագրի նիւթ-թղթի եռամասիկ լուսադրոշմը նշանակում է, որ այն Թուրքիա արտահանելու համար նախատեսուած եւրոպական թուղթ է:

²³ Այս կազմն ըստ ամենայնի գոյութեան ժամանակի չէ, այլ զգալիորէն ուշ, հաւանաբար՝ ԺԸ. դարի վերջերի: Գուցէ նոյն ժամանակ էլ կարուել են ձեռագրի գրուած եւ չգրուած թերթերը:

ներքին գաւառները երթալով՝ բերած է ձեռագիրս, իսկ Սերովբէ Ալիշան ի հաշիւ Մխիթարեան միաբանութեան գնելով՝ դրկած է Ս. Ղազար»²⁴:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշիի մաշուածքը՝ Ա. փեղկի աջ կէտը, մէջքի ստորին 5 սմ երկայնքի մասը՝ փեղկերի վրայ եկող 4ակամ սմ շերտով եւ Բ. փեղկի ստորին անկիւնը բաց դարչնագոյն կաշիով նորոգած (մաշուած հնի վրայ փակցուած նորը): Կտրուած՝ էջ 7-8, 65-66, 99-100, 123-124, 345-352, ընդամենը՝ 16 էջ կամ 8 թերթ (հիմքերը կան)²⁵:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 11ա՝ մանուշակագոյն թանաքով «BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE / VENISE - S. LAZZARE», 34ա՝ մանուշակագոյնով կլոր դրոշմ, շուրջանակի՝ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ BIBLIOTHECAE MECHITARIANA VENETIIS», կենտրոնում հաւասարաթեւ պարզ խաչ, թեւերի միջեւ՝ «Ո Կ Վ Ա» (իմա՝ «Որդեգիր Կուսին, վարդապետ ապաշխարութեան») Մխիթարի եւ իր միաբանութեան նշանաբանը):

ՆՇՈՒՄ՝ մէջքին փակցուած թղթէ պիտակի վրայ՝ «1318 Ջ. դ. Ժամանակագրական պատմութիւն Կիլիկիոյ, մինչեւ ԺԷ. դար» (դարականիշն այժմ է՝ «Դ. գ. »): Ա. կազմաստառի պիտակի վրայ. «1318 Դ. գ. »: Պհպ. Աա, մատիտով՝ «Ընծայ Սերովբէ Ալիշան, առեալ ի Յովհաննիսէ Ներսիսեան. Հ. Ղ. Ալիշան»²⁶:

ԳՐՉԱՓՈՐՁ՝ 1ա վերին լուսանցում ուշ ձեռքով մի տող, շղագիր, ջնջած՝ «Կիլիկիոյ^o///», անընթեռնելի:

Ինչպէս տեսնում ենք, ձեռագրի առաջին 15 պրակի թերթերը գրչութեան գրով՝ գրչի ձեռքով եւ նրա իսկ թանաքով էջակալուած են՝ 1-344 (մեր՝ 1ա-168բ)²⁷, որից յետոյ Սերովբէ վ. Ագըլեանը մատիտով շարունակել է՝ 353-374 (մեր՝ 169ա-179բ): Նաեւ՝ կտրած-համած 16 եւ լիովին չգրուած 27 էջից (տե՛ս

²⁴ Վենետիկի ցուցակ, Չ., էջ 221:

²⁵ Գրուած են եղել էջ 7-8, 99-100, 345-352. չգրուած են եղել էջ 65-66, 123-124 եւ [375-376]. պատճառաբանութիւնները՝ բնագրի հրատարակութեան մէջ:

²⁶ Հոգու պարտք կատարելով՝ բերում ենք լուսահոգի բարեկամիս՝ Հ. Սահակ վ. Ճեմնեմեանի 1993 թ. փետրուարի 17ի՝ այս ձեռագրին վերաբերող ընդարձակ նամակի մի ուշագրաւ հատուածը. «Յիշեալ Կիլիկեան պատմութիւն»ը վանքիս նուիրած է Սերովբէ Ալիշան, որ իր կարգին ստացած է Յովհաննէս Ներսիսեանէ: Սա վերջինս Պոլիսէն գաւառները կ'երթար եւ հետը ձեռագիրներ կը բերէր՝ մեզի վաճառելու համար: Այս գործը յանձն առած էր ի սեր Հ. Ղեւոնդ Ալիշանին, որու դարձած էր սիրահար: Սերովբէ սովորաբար ձեռագիրները գնած է Յովհաննէսէն եւ իր կարգին վաճառած է Միաբանութեանս, քանի աղքատ մարդ եղած է, եւ Պոլիս մեր սեփականութեան մէջ բնակելով՝ պէտք է վարձք ալ տար. անոր փոխարէն ստեղծ ձեռագիրներով վճարած է: Բացառութիւն կը կազմէ «Կիլիկիոյ Պատմութիւն»ը, որ նուիրած է եւ ոչ վաճառած, զիտնալով որ իր եղբոր՝ Հ. Ղեւոնդին հաճելի ընծայ մըն է որ կ'ընէ: Բաց թէ որ տարին տուած է մեզի, պէտք եմ նամակները կարդալ, եւ այդ գործը երկար կ'երթայ, յաջորդաբար պիտի ստուգեմ՝ երբ կարգը գալու ըլլայ, բայց հիմա ժամանակս չի ներեր՝ ստուգումը կատարելու»:

²⁷ Նախավերջին՝ 15րդ պրակի վերջին չորս թերթը կտրելուց առաջ էջաքանակը երեւի եղել է 352:

վերը) բացի, չգրուած են առաջին կէտերը՝ թ. 13ա, 18բ, 20բ, 32բ, 59ա, 104բ (էջք՝ 27, 38, 42, 68, 125, 216), չգրուած են նաեւ երկրորդ կէտերը՝ թ. 5բ, 12ա, 14ա, 17ա, 19բ, 31ա, 36բ, 41բ, 47ա, 51ա, 58բ, 104ա, 118ա (էջք 12, 25, 29, 35, 40, 63, 76, 86, 97, 107, 122, 215, 243), այսինքն՝ եւս 19 էջ գրուած է մասամբ կամ կիսով: Հասկանալի է, որ բոլորովին չգրուած (դատարկ թողած) եւ մասամբ գրուած էջերը պէտք է հետագայում լրացուէին: Ձեռագրին՝ պրակամիջեր (համարներ) չունենալը, չգրուած էջերի եւ մասերի շատութիւնը, բնագրի լեզուական անհարթութիւնները, բազմաթիւ տեղերում թուերը կամ թուականները գրել-լրացնելու համար բաց թողնուած՝ չգրուած տեղերի գոյութիւնը եւ արտաբնագրական մի շարք այլ կոուսաններ մտածել են տալիս, որ ձեռագիրը հեղինակի ինքնագիրն է, միաժամանակ՝ աշխատութիւնն անաւարտ է, այսինքն՝ հեղինակային ո՛չ վերջնական, դեռեւս լրացնելիք մաքրագիր տարբերակ է:

Իսկ կտրուած թերթերի մեծ մասը գրուած են եղել. այսպիսով՝ չգրուած 27, կտրուած՝ 16, միասին՝ 43 էջ պակաս, որ հանելով վերջին՝ 374 էջահամարից, ստանում ենք 331 էջ = 165,5 գրուած թերթ, որ այսօր ունի ձեռագիրը: Լինելիք ծանօթագրութիւններից զատ՝ զուտ բնագրի ծաւալը սովորական միջին չափի գրքի շուրջ 300 էջ կամ հրատարակչական մօտ 19 մամուլ է:

Գործը կառուցուած է պարզ ժամանակագրական-տարեգրական եղանակով. թուականի կարգով յիշատակում է իր աղբիւրներից իրեն յայտնի եւ իր նպատակին յարմարող բոլոր դէպքերը, մի դէպքի նկարագրութիւնից անցնում է յաջորդին՝ «Ի նոյն թուին», «Ի նոյն ամի» կամ գրելով նոր թուականը: Էութեամբ ճշգրիտ նման է միջնադարեան մեր միւս ժամանակագրութիւններին, սակայն ունի մի ընդգծուած միտում. հաչոց եւ հարեւաններին վերաբերող փաստերն արձանագրելու սովորական մտահոգութիւնից աւելի հետամուտ է եղել կիլիկեան ամէն ինչին, կիլիկեցիներին եւ Սսին վերաբերող փաստերի արձանագրմանը:

Ծարադրանքի առանցքը Հաչոց կաթողիկոսների շարն է (գուցէ՛ Կիրակոս Գանձակեցու հետեւողութեամբ). Ա. համարը Թաղէոս եւ Բարթողիմէոս առաքեալներն են, Բ.՝ Գրիգոր Լուսաւորիչը (նշանակում է՝ Հաչոց առաջին կաթողիկոս է համարում առաքեալներին, երկրորդ՝ Լուսաւորիչին): Վրթանէսին պէտք է դներ Դ. համար, բայց չի դրել՝ վրիպմամբ, լուսանցներում համարներ չդնելով՝ կաթողիկոսների շարքում չի հաշուել Սահակի ժամանակի դրածոներ «Բարդիշօ՛ւ ասորի ամ մի, եւ ապա գՕումուէլ՝ Ե. (5) ամ» (3ա): Այժմ կայ Ա-Ժ. (Սահակ), ապա կայ 4ա՝ ԺԵ. Բաբկէն՝ «Ն ՂԷ. Քրիստոսի», յետոյ՝ «ԺԶ. Տէր Սամուէլ», ուրեմն՝ պէտք է ԺԷ. համար դներ՝ «Տէր Մուշէ ի ՕԲ. Քրիստոսի», որ է՝ «Տ. Մուշէ Այլաբերցի 526-534», սակայն սրան համարում է Արծկեցի, որ նրա նախորդի՝ Սամուէլի (516-526) մականունն է (ԺԷ. համարը չի դրել երեւի վրիպ-

մասը՝ տե՛ս 4ա): Էջ 7-8ի (թ. 3-4ի միջեւ) կտրուած թերթի հետ կայ բնագրի պակաս. այժմ այն ունի «Ժ. Սահակ Պարթեւ» եւ «ԺԵ. Տէր Բաբկէն Ոթմսեցի», այսինքն՝ սրանց միջեւ պակասում են կաթողիկոսների ԺԱ-ԺԴ. համարները՝ «11. Տ. Ս. Յովսէփ Ա. Հողոցմեցի 437-452»-ից մինչեւ «15. Տ. Ս. Յովհաննէս Մանուկունի 478-490» (վերջինիս անունը տալիս է յաջորդի՝ «16. Տ. Բաբկէն Ա. Ոթմսեցի 490-516» առիթով): Ըստ կաթողիկոսների անունների պակասում է 437-490 թթ. մասը, ըստ ժամանակագրական պատմութեան ՆԿԷ. -ՆՂԷ.՝ 467-497 թթ. (467ը համարում է Վարդան Մամիկոնեանի մարզպանութեան սկիզբը):

Վերը տեսանք, որ Մխիթարեան մատենադարանի գոյքամատենանում՝ Աւգերեան ցուցակում, Ղ. վ. Ալիշանը գրել է. «Պատմութիւն Կիլիկիոյ (ժամանակագրական) ի սկզբանէ փրկչական թուականի մինչեւ ցԺԷ. դար», բայց այստեղ մի փոքր վրիպում կայ. արդէն ասել ենք, որ սոսկ յիշատակելով Թադէոս եւ Բարթողիմէոս առաքելների անունները, շարադրանքը սկսել է Գրիգոր Լուսատրչից, այսինքն՝ Դ. դարի սկզբից: Ալիշանը նաեւ նկատել է, որ հեղինակն առաւել չափով քաղել է Սամուէլ Անեցուց. պէտք է աւելացնենք, որ հնարար եղած չափով նաեւ հետեւել է նրա գործի ոճին՝ ձեւին, ստեղծելով Անեցու երկի աղիսակաձեւ մասին մնամուղ պարզ շարադրանք (սակայն՝ առանց աղիսակի):

Գերճշգրիտ է Ալիշանի վճիռը, թէ «ըստ այլեւայլ հեղինակացն՝ այլայլի եւ ոճ շարագրութեանն եւ յանգի ի ոսմկականն»²⁸. Վերջում շարադրանքի լեզուն դարձել է գրեթէ ժամանակի աշխարհաբարը, իսկ մինչ այդ համարեա միշտ մասն է օգտագործած աղբիւրի ոճին: Համոզուած ենք, որ այս կացութեան պատճառը գործի անաւարտութիւնն է, որ հաստատում է նաեւ հետեւեալ՝ աւելի էական հանգամանքով. վերը տեսանք, որ գրչի ձեռքով էջակալուած մասն ընդգրկում է առաջին 15 պրակը՝ էջ 1-344, որ եղել է 1-352 (վերջիշենք, որ 15րդ պրակը նախապէս ունեցել է 8 թերթ, որից այժմ կայ 4ը): Համարակիր վերջին՝ 344րդ (168բ) էջում սկսում է 1564 թուականին սուլթան Սուլէյմանի²⁹ սկսած մի արշաւանքի մասին հաղորդումը, որ ընդհատում է պաշարուած բերդի նկարագրութեան կէսին: Այս՝ 1564 թուականն էլ պէտք է համարել գործի պահպանուած մասի վերջին սահմանը:

Բայց ժամանակագրութիւնը սրանով չի աւարտում, որովհետեւ յաջորդ՝ վերջին պրակում, որ գրչի էջահամարներ չունի եւ որը կոչում ենք Յաւելուած կամ Յաւելուածային պրակ, վերսկսում է Տարսոնի Մ'էնչէք (Միչաք) ամիրայի 1367 թուականին Սսի եւ Սսի բերդի վրայ յարձակման նկարագրութեամբ, որից յետոյ արում է ժամանակագրական աւելի զգալի յետդարձ՝ 1278 թ, ապա՝ 1220-1229, 1289, 1293, 1291, կրկին՝ 1293, 1301, 1380, ապա՝ կտրուկ թո՛ւիչք՝ 1641 եւ

²⁸ Ալիշան, Մխուման, էջ ԺԱ.:

²⁹ Սուլէյման Ա.՝ 1520-1566 թթ.:

1642, կրկին ետդարձ՝ 1416ից մինչեւ 1441 (12 հաղորդում), ի վերջոյ՝ 1600 եւ 1601: Ահա սրանք են վերջին պրակի պարունակութեան ժամանակագրական եզրերը: Այս բոլոր հաղորդումները բուն շարադրանքի իրենց պատկան տեղերում դնելուց յետոյ տեսնում ենք, որ Յաւելուածի տեղեկութիւնների մեծ մասը բուն շարադրանքի մէջ իրենց կրկնող հաղորդումներ կամ զուգահեռներ չունեն, բայց կան նաեւ այդպիսիք. եւ սրանց շարքում զգալի են նրանք, որոնց համարժէք հաղորդումները բուն շարադրանքի մէջ հեղինակը գրել էր ըստ հայկական աղբիւրների, իսկ Յաւելուածում՝ «ըստ թուրքաց պատմութեան»: Այս բնորոշումն ունի, օրինակ, «Վասն գալստեան շահ Սուլէմանին ի Հոռոմք» վերնագրով տեղեկութիւնների փոքրիկ շարը (ձեռ. Հ^տ 1318, 171աբ): Յաւելուածում վերջինիս կարգի տեղեկութիւնների գոյութիւնը գրեթէ հաստատում է բուն շարադրանքի ամբողջութիւնից ստացուող այն տպատրութիւնը, որ հեղինակն իր գործի ստեղծման ընթացքի երկրորդ կէտում է ուշք դարձրել թուրքական աղբիւրներին, ապա՝ սրանցից այնչափ շատ է քաղել, որ եթէ ամբողջ գործը կարելի է համարել Կիլիկիայի եւ կիլիկեցիների ժամանակագրութիւն, ապա նրա վերջին հատուածը նման է թուրք սուլթանների նուաճումների պատմութեան շարադրանքի:

Բայց Յաւելուածային մասում արձանագրուած են նաեւ հայոց վերաբերող եւ հայկական աղբիւրներից քաղուած բազմաթիւ իրողութիւններ, ինչպիսիք են՝ 1293 թուականին Հէթում Բ. թագաւորի եղբայր Բարսեղի՝ Ջերմաղբիւրի Ս. Աստուածածին վանքի վանահայր դառնալը, 1293 թուականին թուրքերի յարձակումները Սեբաստիայի վրայ եւ այլն:

Նոյն Յաւելուածի մէջ հեղինակը «Եւ աստ կամիմ դուզնաքեայ բանիք ծանուցանել զդիպուածս վերջինս տանս Կիլիկիոյ՝ քաղաքին Սսայ» սկսուածքով ընդարձակ եւ միայն ականատեսի իմանալիք մանրամասնութիւններով պատմում է Սսի վրայ 1601 թ. փետրուարի 7ին Սատուրճի օղլու անունով մէկի հրոսակի յարձակումը, առումը, աւարումն ու ւերումը, Ազարիս կաթողիկոսի մահը, 5 ամիս անց նրա աշակերտ Յովհաննէս վարդապետ Անթէպցոյ կաթողիկոսանալը, ապա՝ 1605ին Դաիլ անունով մէկի հրոսակի յարձակումը Ադանայի վրայ, ուր ապաստանել էին նաեւ Սսեցիք, որոնք «յետ գնալոյն պղծոյն, հանդերձ սուրբ աջերօքն եւ այլ սրբութեանցն» վերադարձան Սիս (ձեռ. Հ^տ 1318, 176բ-179բ): Այստեղ էլ աւարտում է ձեռագիրը, բայց մինչ այդ, կրկին նոյն Յաւելուածի մէջ, հեղինակն ունի նաեւ 1641 եւ 1642 թուականներին վերաբերող հաղորդումներ, որոնցից առաջինը Սսում պատահած երկրաշարժի մասին համառօտ ծանուցումն է, իսկ միւսները վերաբերում են Սեբաստիային, Կարիճին եւ Ազախի բերդին (ձեռ. Հ^տ 1318, 172բ-173ա): Սրա՛նց հիման վրայ է Ալիշանը ճշգրիտ եզրակացրել, որ ժամանակագրութիւնս կազմուել է ԺԷ. դարի կէսե-

